

ISSN 1829-4340

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐ

XII





9(-11)

Ն-Ֆ 6

հշ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 12

Նվիրվում է պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի ծննդյան  
80-ամյակին

5696

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2016



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

**ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ**

(Периодический сборник научных статей)

№ 12

*Посвящается 80-летию профессора  
Гургена Меликяна*

Ереван  
Издательство ЕГУ  
2016

YEREVAN STATE UNIVERSITY

**PROBLEMS OF ORIENTAL STUDIES**

(serial scholarly journal)

№ 12

*Dedicated to the 80<sup>th</sup> birthday anniversary of professor  
Gurgen Melikyan*

YEREVAN  
YSU PRESS  
2016

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ

Ժողովածուի 12-րդ հատորի հրատարակումը ԵՊՀ  
արևելագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական  
անձնակազմի համեստ նվերն է պրոֆեսոր  
Գուրգեն Մելիքյանի ծննդյան 80-ամյակին

**Խմբագրական խորհուրդ՝**

- Մելիքյան Գուրգեն - Բ. Գ. Թ., պրոֆեսոր (*նախագահ*)  
Ասատրյան Գառնիկ - Բ. Գ. Պ., պրոֆեսոր  
Խաչիկյան Մարգարիտա - Բ. Գ. Պ., պրոֆեսոր  
Խառատյան Ալբերտ - Ա. Գ. Պ., պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ  
Վարաբեկյան Սամվել - Բ. Գ. Թ., դոցենտ  
Հովհաննիսյան Լավրենտի - Բ. Գ. Պ., պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ  
Մելքոնյան Ռուբեն - Բ. Գ. Թ., դոցենտ  
(*համարի պատասխանատու*)  
Ոսկանյան Վարդան - Բ. Գ. Թ., դոցենտ  
Սարգսյան Լևոն - Ա. Գ. Պ., պրոֆեսոր  
Սաֆարյան Ալեքսանդր - Ա. Գ. Թ., պրոֆեսոր  
Սաֆրաստյան Ռուբեն - Ա. Գ. Պ., պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս  
Տոնիկյան Սոնա - Բ. Գ. Թ., դոցենտ


© ԵՊՀ հրատ., 2016

**ԵՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ  
ՈՒՂԵՐՁԸ ՊՐՈՖԵՍՈՐ ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ 80-ԱՄՅԱ  
ՀՈՐԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ**

Իր կյանքի 80-ամյակը բուրեց հայ իրանագիտական մտքի  
ակնառու ներկայացուցիչներից մեկը՝ Երևանի պետական հա-  
մալսարանի արևելագիտության ֆակուլտետի երկարամյա դե-  
կան, բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,  
վաստակավոր մանկավարժ Գուրգեն Վրեժի Մելիքյանը, մարդ,  
ով իր կենսագրությամբ ու կենցաղավարությամբ, գործունեությամբ ու վարքուբարքով իսկական մտավորականի, կոչումով  
Մարդու և ճշմարիտ հայի անզուգական կերպար է հրամցնում  
իր շրջապատին:

Գուրգեն Մելիքյանի կեսդարյա գիտակրթական գործու-  
նեության արգասիքն է գիտական և ուսումնամեթոդական աշ-  
խատանքների այնպիսի մի ցանկ, որը պարունակում է ժամա-  
նակակից պարսկերենի քերականության, պարսից գաղտնալե-  
զուների, հայերենի և պարսկերենի փոխառնչությունների  
խնդիրներին նվիրված մենագրություններ, գիտական հոդված-  
ներ: Նրա գիտական ստեղծագործությունների մեջ իրենց ու-  
րույն տեղն են զբաղեցնում պարսից լեզվի բուհական դասա-  
գրքերը: Պրոֆեսոր Մելիքյանի գիտական ստեղծագործությանը  
փայլուն կերպով զուգորդվում է նաև մանկավարժական գործու-  
նեությունը: Իր բազմազբաղ վարչական-կազմակերպչական ու  
հասարակական գործունեության հետ մեկտեղ նա Երևանի պե-  
տական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում մեծ  
հմտությամբ ու խանդավառությամբ դասավանդում է «պարսից  
լեզու» և «թարգմանության տեսություն» առարկաները:

Արժանին պետք է մատուցել նաև Մայր բուհում կրթական  
գործի կազմակերպման ոլորտում Գուրգեն Մելիքյանի նվիրա-  
կան ջանքերին: Մոտ քառորդ դար՝ 1992 թվականից մինչ օրս,  
նա հանդիսանում է հետխորհրդային ողջ տարածաշրջանում  
մեծ հեղինակություն վայելող արևելագիտության կենտրոննե-



րից մեկի՝ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանը՝ իր ամենօրյա հոգածության ներքո պահելով ֆակուլտետում իրականացվող կրթական և հետազոտական աշխատանքները:

Գուրգեն Մելիքյանին բոլորն են ճանաչում և ճանաչում են ամենուրեք. խոսքը ոչ միայն համալսարանական ու արտահամալսարանական մտավորականների հանրության, այլև մեր հանրապետության ու սփյուռքի հասարակական լայն շրջանակների մասին է: Նրան ճանաչում են ոչ միայն որպես բազմաշնորհ գիտնական-մանկավարժի, այլ նաև որպես ազգային և հասարակական եռանդուն ու նվիրյալ գործչի: Նա անգնահատելի դեր է խաղացել ոչ միայն արցախյան շարժման քաղաքական գործընթացներում Երևանի պետական համալսարանի մասնակցությունն ընդլայնելու և համակարգելու հարցում, այլև պատերազմի դժնդակ տարիներին մարտնչող հայորդիներին զենք-զինամթերքով, կապի միջոցներով, սնունդով ու հագուստով և անհրաժեշտ այլ ապրանքներով ապահովելու գործում:

Թեև յուրաքանչյուր ոք ինքն է միայն լիարժեք տիրապետում սեփական ներաշխարհին, ու դժվար, պատասխանատու բան է այլ մարդու զգացմունքային դաշտի մասին խոսելը, սակայն Գուրգեն Մելիքյանին ես երջանիկ մարդ եմ համարում: 80-ամյա տարիքում նրա խանդավառ կենսակերպը, ձեռնարկվող ռազմահայրենասիրական, մշակութային միջոցառումները, նրա թեթև քայլքն ու աշխույժ պարը, կատակն ու սրախոսությունները այդ երջանկության զուտ արտահայտչաձևերն են: Իրական երջանկության հիմքը նրա նվիրումն է աշխատանքին՝ հանրօգուտ և ազգանպաստ աշխատանքին, երբ նա ականատես է լինում, թե ինչպես են իր սաները հաջողությամբ ներգրավվում գիտամանկավարժական, պետական, հասարակական-քաղաքական, մշակութային գործունեության մեջ, թե ինչպես է իր բարեգործական միջոցառումների շնորհիվ մեղմանում շատ ընտանիքների հոգսը, թե ինչպես սոցիալապես անապահով շատ ուսանողներ բարձրագույն կրթության հնարավորություն են ստանում, թե ինչպես են ծառեր տնկվում և պուրակներ հիմնվում,

պատմամշակութային հուշարձաններ վերականգնվում: Նրա վաստակաշատ կենսագրության մոտ վեց տասնամյակը զուգահեռվել է հայոց Մայր բուհի՝ Երևանի պետական համալսարանի երթին, և ինքը կարևոր ավանդ ունի այդ երթն անկասելի ու առաջընթացային դարձնելու գործում: Հարագատների, գործընկերների և ուսանողների կողմից նրա հանդեպ տածվող մեծ սերն ու հարգանքը ծնվում են այն բանից, որ ինքն է առաջինը քայլ անում դեպի մարդը, սիրում, հարգում, աջակցում: Այսօր այս պայմաններում է աշխատում Գուրգեն Մելիքյանի երջանկության մեխանիկան:

Հարգարժան պրոֆեսոր, սիրելի Գուրգեն Վրեժի, նշանակալի հոբելյանի առթիվ Երևանի պետական համալսարանի ողջ կոլեկտիվի և ուսանողության անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ, հավաստում համալսարանականներիս անկեղծ փափագը՝ Ձեզ առողջ, ամուր, երիտասարդ ու երջանիկ տեսնելու հարցում:

ԵՊՀ ռեկտոր,

ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆեսոր

Ա. Հ. Միմոնյան

## ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԸ 80 ՏԱՐԵԿԱՆ Է

Ճանաչված արևելագետ-իրանագետ, մանկավարժ, արցախյան շարժման առաջամարտիկ, հասարակական գործիչ պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը 80 տարեկան է: Այդ պատկանելի հորեկանը լավ առիթ է մեկ անգամ ևս իմաստավորելու և արժևորելու նրա դերն ու նշանակությունը մեր երկրի գիտական ու հասարակական կյանքում:

Անուրանալի է պրոֆ. Մելիքյանի ավանդը Հայաստանում իրանագիտության զարգացման գործում: Նրա բազմաթիվ արժեքավոր աշխատությունները կարևոր ներդրում են բարեկամ պարսիկ ժողովրդի հարուստ հոգևոր ժառանգության ավելի խորն ուսումնասիրման գործում: Հմուտ արևելագետ-իրանագետի տասնամյակների նպատակասլաց հետազոտական աշխատանքով է պայմանավորված նրա բարձր գիտական հեղինակությունը՝ ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Գուրգեն Մելիքյանը պատկանում է այն գիտնականների թվին, որոնք չեն սահմանափակվում միայն գիտական գործունեությամբ: Նա նաև Ուսուցիչ է՝ այդ հասկացողության ամենաբարձր, ամենավեհ իմաստով. չէ՞ որ օժտված է երիտասարդներին ոչ միայն կրթելու, նրանց գիտելիքներ հաղորդելու, այլ նաև իր օրինակով դաստիարակելու, մարդկային կյանքի ամենաէական ճշմարտություններին հաղորդակից դարձնելու՝ քչերին տրվող հատկությամբ: Պատահական չէ, որ տասնամյակներ շարունակ Արևելագիտության ֆակուլտետի ուսանողների բազմաթիվ սերունդներ ձգտում են հնարավորինս ավելի մոտիկից շփվել Գուրգեն Մելիքյանի հետ, լինել նրա կողքին և զգալ նրա հոգատար վերաբերմունքը՝ հաղորդակից լինելով նրա մասնագիտական ու մարդկային իմաստությանը:

Պրոֆեսոր Մելիքյանի հմուտ ղեկավարության ներքո ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետը, հենվելով հայ արևելագիտության լավագույն ավանդույթների վրա, դարձավ արևելա-

գետ-մասնագետների պատրաստման և գիտահետազոտական աշխատանքի կարևորագույն կենտրոն: Ֆակուլտետի շրջանավարտներն այսօր հաջողությամբ աշխատում են և՛ արևելագիտության, և՛ մարդկային գործունեության այլ ոլորտներում, ազնվորեն և նվիրումով ծառայելով Հայրենիքին՝ այնպես, ինչպես իրենց իր օրինակով ուսանել է սիրելի Ուսուցիչը՝ պարոն Մելիքյանը:

Մեր ժողովրդի նորագույն պատմության մեջ շրջադարձային եղավ Ղարաբաղյան շարժումը, որն ազդարարեց Հայոց Ոգովերածունդը և անկախ պետականություն կերտելու համայն հայության անկոտրուն կամքը: Այդ շարժման առաջամարտիկներից էր Գուրգեն Մելիքյանը: Արդեն իսկ շարժման առաջին օրերից նա նույնացրեց իրեն մեր ժողովրդի այդ կենաց մահու պայքարի հետ, հանուն հաղթանակի ներդնելով իր հարուստ հոգեկերտվածքի ողջ ներուժը: Այսօր էլ պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը անշեղորեն շարունակում է իր նվիրական գործունեությունը, օգնելով արցախահայությանը:

Մաղթում եմ Ձեզ, շատ սիրելի և հարգելի պարոն Մելիքյան, քաջ առողջություն, որ դուք նույն երիտասարդական ավյունով շարունակեք Ձեր հայրենանվեր գործունեությունը և ամենօրյա ծառայությունը հայոց պետականությանը և գիտությանը:

*Ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյան  
ՀՀ ԳԱԱ Արևելագիտական ինստիտուտի տնօրեն*





**Դավիթ Հովհաննիսյան՝**

**ՖԱԹԻՄԱՆ՝ ՈՐՊԵՍ ՇԻԱՅԱԿԱՆ  
ԿՐՈՆԱԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ  
ԿԵՐՊԱՐ**

**Բանալի բառեր՝ Ֆաթիմա, Անհայր գերեզման, մարտիրոսություն, շիայական կրոնադիցարանական համակարգ, Ահլ ալ-Բեյթ**

Մուհամմադ մարգարեի դուստր Ֆաթիման սիրված և հարգված կերպար է բոլոր մուսուլմանների կողմից: Մակայն հենց այս անձնավորության հետ են կապված սուննի և շիա մուսուլմանների միջև գոյություն ունեցող անլուծելի հակասությունները: Այս հողվածը նվիրված է նշված հակասությունների հիմքերի վերլուծությանը, ինչպես նաև այն հարցին, թե ինչ կարևոր նշանակություն ունի Ֆաթիմայի պաշտամունքը շիայական «Ահլ ալ-Բեյթ» և «իմամ»՝ առանցքային հասկացությունների ձևավորման գործում:

Նախ՝ կարճ կենսագրական տվյալներ: Ֆաթիման (605 կամ 609-633թթ.) Մուհամմադ մարգարեի կրտսեր դուստրն էր Խադիջայից՝ իր առաջին և, մինչև վերջինիս մահը (619-620թթ.), միակ կնոջից: Ֆաթիման ամուսնացել էր Մուհամմադի ընտանիքում դաստիարակություն ստացած մարգարեի հորեղբորորդու՝ Ալի իբն Աբի Տալիբի (մահ. 661թ.) հետ: Շնորհիվ այս ամուսնության արդյունքում ծնված զավակների (Հասանի և Հուսեյնի)՝ Մուհամմադ մարգարեի տոհմը չընդհատվեց: Նաև այս պատճառով՝ մարգարեն շատ էր սիրում իր թոռներին: Շիաները համարում են, որ Ֆաթիմայի մասին են Ղուրանի մի շարք հանգատողեր,

\* Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ արաբագիտության ամբիոնի պրոֆեսոր: Էլ. փոստ՝ [dhovhannisyan@ysu.am](mailto:dhovhannisyan@ysu.am)

մատնավորապես՝ 3-րդ սուրայի 193-րդ, 55-րդ սուրայի 19-րդ հանգատողը, 92-րդ սուրայի 3-րդ հանգատողը և այլն<sup>1</sup>:

Միջնադարյան բոլոր աղբյուրների՝ և՛ սուննի, և՛ շիա, հեղինակներն ընդձուգում են, որ Ֆաթիման վայելել է իր ողջ շրջապատի և, ինչն ամենակարևորն է, իր հոր բացառիկ սերն ու հարգանքը: Բազմաթիվ հադիսներ են հաղորդվում Ալի իբն Աբի Տալիբի նկատմամբ իր թշնամական վերաբերմունքով հայտնի Մուհամմադ մարգարեի կնոջ՝ Այիշայի անունից, որոնք նույնպես վկայում են այդ մասին<sup>2</sup>:

Ֆաթիման մի շարք պատվանուններ ուներ, օրինակ՝ Ումմ Աբիհա, այսինքն՝ Իր հոր մայր: Նրան այդպես էր անվանել մարգարեն, քանի որ Ֆաթիման չափազանց ուշադիր և հոգատար էր երա նկատմամբ: Պատվանուններից մյուսը՝ Սեյյիդաթուն-Նիսա (Կանանց տիրուհի) կապված է մեկ այլ հադիսի հետ, որտեղ մարգարեն հայտնում է Ֆաթիմային, որ դրախտում կանանց նա է առաջնորդելու<sup>3</sup>: Մեկ այլ պատվանունի՝ Ջահրա (Փայլուն, Լուսավոր) վերաբերյալ բազմաթիվ ավանդապատումներ կան, որոնք բնորոշում են մարգարեի դասերը որպես լույս և պայծառություն սփռող անձնավորության: «Ֆաթիմային ավանդույթը պատկերում է որպես դժբախտ, տառապող կին: Ալիի հետ ամուսնացած լինելու պատճառով Ֆաթիման առանձնահատուկ սիրելի է Շիաների համար: Բազմաթիվ պատումներ Ֆաթիմայի կրոնասիրության, նվիրվածության ու ողորմածության մասին շիայական կրոնական գրականության մասն են կազմում: Պատմություններ կան այն մասին, որ նա կանխատեսել էր իր որդի-

<sup>1</sup> Այս մասին տես՝ Ե.Քեզվան. Գատիմա. - Իսլամ. Էնցիկլոպեդիկական բառարան. Մ., 1991, շ.253.

<sup>2</sup> Այդ հադիսները պարունակվում են ամենահեղինակավոր սուննիական հադիսների ժողովածուներում, օրինակ ալ-Բուխարիի, Մուսլիմի և այլոց հեղինակած ստեղծագործություններում: Տես, օրինակ՝ Sahih al-Bukhari, al-Qahira, 1986, al-majallad as-sani, p.437.

<sup>3</sup> Fath al-Bari bi sharh Sahih al-Bukhaari li Ibn Hajar Askalani, Damascus, 1974, j. 8, p.474.

ների՝ Հասանի ու Հուսեյնի մարտիրոսությունը: Ֆաթիմայի անունը բազմաթիվ ավանդապատումներում կապված է նաև գերբնական երևույթների հետ. նրա ծնունդը ազդարարում է Երկիրը լուսավորող լույսը, նա ազատված է դաշտանից, նրան շնորհել են Լուսավոր ու Կույս տիտղոսները, և նա առանձնահատուկ դերակատարում պիտի ունենա Ռատաստանի օրը՝ հրեշտակներով շրջապատված, որոնք պիտի պահանջեն վրեժ-խնդիր լինել իր որդիների մարտիրոսության համար և որոնք առանձնահատուկ պիտի դիմավորեն Շիաներին, որոնք հավատարիմ են մնացել նրա սերունդներին»<sup>4</sup>:

Ֆաթիմա Զահրային անվանում են նաև Ավագ Մարիամ, քանի որ նա, ըստ հադիսի, առաջինն է չորս առաքինի տիկնանցից, որոնց թվում է նաև Աստվածածինը<sup>5</sup>:

Ֆաթիման նաև մեկն է այն հինգ մարդկանցից, որոնց անվանում են «Թիկնոցի մարդիկ». Մարգարեն, վերցնելով իր թիկնոցի տակ Ալիին, Ֆաթիմային, Հասանին և Հուսեյնին, նրանց իր տան անդամներ է հայտարարում (Ահլ ալ-Բեյթ)<sup>6</sup>:

Հոր մահվանից վեց ամիս հետո մահանում է նաև Ֆաթիման, սակայն այդ ժամանակահատվածում տեղի են ունենում մի շարք իրադարձություններ, որոնք հետագայում մեծ ազդեցություն են ունենում ումմայի պատմության վրա: Իրն Հիշամի «Մի-

րա Նաբավիյա» («Վարք մարգարեական») ստեղծագործության մեջ եջվում է, որ մարգարեի մահվանից անմիջապես հետո Ֆաթիմայի տանն են հավաքվում Ալին, ազ-Ջուբայր իբն ալ-Աուվանը և Տալիս իբն Ուբայդալլահը<sup>7</sup>, ինչն առաջացնում է Օմար իբն ալ-Խատտաբի կասկածը: Իրն Աբի Շայբան հաղորդում է, որ ազ-Ջուբայրն ու Ալին «բանակցում էին» Ֆաթիմայի տանը: Այս մասին իմանալուց հետո Օմար իբն ալ-Խատտաբը ևս գնում է Ֆաթիմայի մոտ և ասում նրան. «Ո՛վ Ալլահի մարգարեի դուստր: Ալլահը վկա, հորիցդ ավելի սիրելի մարդ մեզ համար գոյություն չունի: Եվ հորիցդ հետո՝ քեզից ավելի սիրելին գոյություն չունի: Մակայն, Ալլահը վկա, եթե այդ մարդիկ շարունակեն հանդիպել քեզ մոտ, այդ ամենը խոչընդոտ չի լինի ինձ համար, որ նրանց անհատապես կրակի տալ այս տունը՝ նրանց հետ միասին»<sup>8</sup>:

Մեկ այլ միջադեպ կապված է Աբու Բաքրի անվան հետ: Ֆաթիման գնում է արդեն խալիֆ դարձած Աբու Բաքրի մոտ, որպեսզի իր հոր ժառանգությունը պահանջի, սակայն խալիֆը, պատճառաբանելով, որ դա «սադակա» է և վկայակոչելով մարգարեի խոսքը, մերժում է նրան: Իրն Քուբեյբան հաղորդում է. «Ֆաթիման ասաց.

- Հանուն Ալլահի, մի՞թե դուք (Աբու Բաքրը և Օմարը - Դ.Հ.) չեք լսել Ալլահի մարգարեի խոսքերը. «Երբ Ֆաթիման գոհ է, ես էլ եմ գոհ, Ֆաթիմայի բարկությունն իմ բարկությունն է: Ով Ֆաթիմային է սիրում, նա ինձ է սիրում, ով նրան գոհացրել է, նա ինձ է գոհացրել, իսկ ով նրան բարկացրել է, նա ինձ էլ է բարկացրել»:

Երանք ասացին. «Այո՛, մենք լսել ենք դա Ալլահի մարգարեից: Ֆաթիման պատասխանեց. «Ես վկայակոչում եմ Ալլահին և նրա հրեշտակներին, որ դուք բարկացրել եք ինձ և չեք գոհացրել: Երբ ես տեսնեմ մարգարեին կգանգատվեմ ձեզանից»: Աբու

<sup>4</sup> Leona M. Anderson, Pamela Dickey Young, "Women and religious traditions", Chapter 7, "Women in Islam", p.201-202.

<sup>5</sup> Այստեղ, անշուշտ, ակնհայտ է քրիստոնեական սյուժեների ազդեցությունը:

<sup>6</sup> Ի տարբերություն շիաների՝ սուննիները «Ահլ ալ-բեյթի» մեջ են ընդգրկում մարգարեի կանանց, ինչպես նաև փորձում են ավելի ընդհանրական հասկանալ այս եզրը, մարգարեի տան անդամների մեջ ներառելով նաև բոլոր տալիֆիներին, այսինքն՝ Մուհամմադի հորեղբայր Աբու Տալիբից սերած բոլոր շառավիղներին: Շիաների համար «Ահլ ալ-բեյթն» ունի խորքային տիեզերական նշանակություն. նրանց ըմբռնմամբ «Ահլ ալ-բեյթի» անդամներին հատուկ է Ալլահի ներշնչված ներքին իմաստներին վերաբերող գիտելիք, անսխալականություն, նրանք կրում են Աստծո օրհնանքը և օժտված են բոլոր բարեմասնություններով: Այս մասին տես՝ С. Прозоров. Ахл ал-Байт. - Ислам. Энциклопедический словарь, с. 27.

<sup>7</sup> Ազ-Ջուբայրը և Տալիսան մարգարեի ամենամտերիմ զինակիցներից էին, որոնք հետագայում դարձան խալիֆ ընտրող շուրայի անդամներ, Ալիի խալիֆ նշանակելուց հետո վերջիններս ապստամբեցին նրա դեմ:

<sup>8</sup> Miswaaq li Abi Bakr ibn Abi Shayba, Kitab al-Magazi, j. 8, 1994, p.572.

Բաքրն ասաց. «Աղաչում եմ Ալլահի փրկությունն իր գայրույթից և քո գայրույթից, ո՛վ Ֆաթիմա» և լաց եղավ»<sup>9</sup>:

Մուննի հեղինակները հաղորդում են, որ այդ ամենից հետո Աբու Բաքրն այցելում է Ֆաթիմային, և վերջինս հաշտվում է նրա հետ: Շիա հեղինակները, սակայն, պնդում են, որ նա այդպես էլ չներեց Աբու Բաքրին և Օմարին և նույնիսկ խնդրեց իր ամուսնուն հուղարկավորել իրեն գիշերը, որպեսզի վերջիններս չմասնակցեն այդ արարողությանը և խալիֆը չաղոթի իր համար: Շիաները համարում են նաև, որ նրա գերեզմանի վայրը հայտնի չէ<sup>10</sup>: Նրանք համոզված են, որ Ֆաթիման մարտիրոս է, սպանվել է Օմարի ձեռքով, երբ վերջինս բռնի ուժով ներխուժելով նրա տուն՝ դուռը բացելիս լուրջ վնասվածք է հասցրել մարգարեի դստերը, ինչի հետևանքով էլ նա մահացել է<sup>11</sup>:

Այս բոլոր մանրամասները չափազանց կարևոր են, քանի որ դրանցով իսկ ձևավորվում են շիայականության կրոնադիցաբանական համակարգի մի քանի սկզբունքային տարրեր: Առաջինը մարտիրոսությունն է. Ֆաթիմայից սկսած Ահլ ալ-Բեյթի բոլոր անդամները նահատակվում են՝ սպանվելով՝ ուխտը դրժած և, լայն իմաստով, ժառանգությունը, այսինքն՝ խալիֆայությունը խլած մարդկանց, ինչպես նաև նրանց հետևորդների ձեռքով:

Երկրորդ սկզբունքային գաղափարը կապված է բոլոր խալիֆների օրինականության ժխտման հետ: Ինչպես հայտնի է առաջին չորս խալիֆները աուննիական ավանդության մեջ համարվում են առաքինի խալիֆներ (ռաշիդուն):

Հաջորդ տարրը նույնպես շատ կարևոր է. այն վերաբերում է Մահաբաների (մարգարեի զինակիցների) հետ կապված բոլոր հաղիսների և այլ տիպի հաղորդումների ճշմարտացի վկայութ-

յուն լինելու ժխտմանը: Դա նշանակում է, որ շիայականությունը ձեռնամուխ պետք է լինի իր կրոնա-դավանաբանական համակարգի տեքստային հիմքի ստեղծման գործին, ինչը և հաջորությամբ կատարում է մի քանի տասնամյակների ընթացքում:

Առանձին իմաստ է ստանում անհայտ գերեզմանի միֆերը: Դա նշանակում է անվերադարձ հեռացում, անհետացում այս հողեղեն աշխարհից: Այս միֆերը կարևորվում է, երբ մենք անդրադառնում ենք շիայական կրոնա-դիցաբանական համակարգում Ֆաթիմայի ընկալմանը: Մեծ Այաթոլլահ Վահիդ Խորասանին, հիմնվելով իմամ Ջաֆար աս-Սադիկից<sup>12</sup> հաղորդվող տեղեկության վրա, ասում է, որ ճանաչել Ֆաթիմային նշանակում է ճանաչել «Լայլաթու-լ-կադարը» (Նախասինամության գիշեր կամ Հզորության գիշեր): Մուսուլմանները հավատում են, որ Ղուրանը տրվել է մարգարեին հենց այդ գիշեր: Այդ գիշեր Ալլահը որոշում է մարդկանց ճակատագրերը, զծում է նրանց ուղիները: Այդ գիշեր հրեշտակները իջնում են երկիր, և աղոթքը հասնում է իր նպատակին: Իմամ Ջաֆար աս-Սադիկն ասել է. «Գիշեր նշանակում է Ֆաթիմա, Հզորություն նշանակում է Ալլահ: Եվ նա, ով ճանաչել է Ֆաթիմային իրական ճանաչմամբ, նա ճանաչել է նաև Հզորության գիշերը: Նա անվանվել է Ֆաթիմա, որովհետև արարածները կտրվել են (ֆուտիմա - արաբ.՝ կտրվել<sup>13</sup>) նրան ճանաչելու հնարավորությունից»<sup>14</sup>:

Փաստորեն, ճանաչել Ֆաթիմային նշանակում է ճանաչել Ալլահի խոսքը, քանի որ Ղուրանը տրվել է Հզորության գիշերվա ընթացքում, իսկ Հզորության գիշերը հենց ինքը Ֆաթիման է, այսինքն՝ Ֆաթիմայի մեջ է Ղուրանը: Քչերին է հասու Ֆաթիմայի

<sup>9</sup> al-Imama wa-s-Siyasa li Ibn Qutayba ad-Dinavari, al-Qahira, j.1, 1982, p. 21.


<sup>10</sup> Սակայն աուննիները համարում են, որ Ֆատիմայի գերեզմանը գտնվում է Մադինայի Բակի գերեզմանոցի մուտքի մոտ և այցելում են այդ վայրը՝ հարգելով Մուհամմադ մարգարեի դստեր հիշատակը:

<sup>11</sup> Sku, օրինակ՝ al-Milal wa-n-Nihal li-sh-Shahrastani. Beyrut, dar al-maarifa, j1, s.57.

<sup>12</sup> Ջաֆար աս-Սադիկը շիաների վեցերորդ իմամն է (մահացել է 765 թ.): Նա համարվում է 12 իմամական շիաների կրոնա-իրավական ուսմունքի (մազհաբի) հիմնադիրը:

<sup>13</sup> Ֆաթիմա անվան այլ բացատրությունը հետևյալն է՝ այն աղջիկները, ում շուտ էին կտրում կրծքից, անվանվում էին Ֆաթիմա:

<sup>14</sup> Фатима Захра – Сердце творения, <http://ahlalbayt.ru/statpage/293.html>, (մուտք 28.11.2016)



իմաստի ընկալումը, քչերը, միայն ընտրյալները կարող են ընկալել Ալլահի խոսքը:

Ֆաթիմայի գերեզմանի անհայտ լինելն ընդգծում է այդ կտրվածությունը. նա անճանաչելի է հասարակ մահկանացուների համար, միայն հատուկ օժտված անձնավորությունները կարող են թափանցել Նախախնամության իմաստների մեջ: Ալլահի խոսքի իմաստը անհայտ է հավատացյալների համար այնպես, ինչպես անհայտ է գերեզմանի վայրը: Այն «կտրված է», թաքցրած, քանի որ միայն ընտրյալը կարող է ճիշտ օգտագործել գիտելիքը:

Աբու Բաքրը և Օմարը մեղք են գործել, նրանք «կտրվել են» գիտելիքի աղբյուրից, այդ պատճառով էլ նրանցից թաքցվել է գերեզմանի վայրը: Աբու Բաքրին թույլ չի տրվել աղոթք անել Ֆաթիմայի գերեզմանին, քանի որ աղոթքն Ալլահի խոսքն է, իսկ Ալլահի խոսքի իմաստները ճանաչելու ունակություն նրան չի տրվել:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Ֆաթիմայի հետ կապված այուժները չափազանց կարևոր դեր են կատարել շիայական կրոնա-դիցաբանական համակարգի ձևավորման գործընթացում: Ահլ ալ-Բեյթի նշանակությունը՝ որպես Ալլահի կողմից ներշնչված և հավատացյալների համայնքի կապը Բարձրյալի հետ ապահովող ընտրյալների, ընդգծվում է Ֆաթիմայի դրախտում կանանց Տիրուհու դերով: Լայլաթու-լ-կադար միֆոլոգեմի ձևավորումն իր հերթին մեծ նշանակություն ունեցավ շիայական դավանաբանական ուսմունքի ձևավորման գործում:

## ФАТИМА - КАК СТЕРЖНЕВОЙ ОБРАЗ ШИИТСКОЙ РЕЛИГИОЗНО-МИФОЛОГИЧЕСКОЙ СИСТЕМЫ

*Давид Оганесян*  
(резюме)

В статье анализируются хадисы о дочери пророка Мухаммада Фатиме, образ которой сыграл весьма значительную роль в развитии религиозно-мифологической системы шиитов-имамитов. Рассматриваются мифема "неизвестное место погребения" и мифологема "лайлату-л-кадар". Статья анализирует и шиитское и суннитское отношение к историческому образу Фатимы-как к дочери пророка и как к доблестной женщине. Статья пытается показать, что мифемы сплоченные с образом Фатимы связаны с центральными мифологическими понятиями шиитского мировоззрения.

## THE PIVOTAL IMAGE OF FATIMA IN THE SHIA RELIGIOUS-MYTHOLOGICAL SYSTEM

*David Hovhannisyan*  
(summary)

The article analyzes the hadiths about the Prophet Muhammad's daughter Fatima, whose figure has played a significant role in the development of religious -mythological system of Shia-Imamiis. It discusses the myth of "the unknown burial place" and the mythologeme of "Lailat al-Qadar". The article analyzes both Shia and Sunni attitudes towards the image of Fatima as the daughter of the prophet and as a pious woman. The aim of the article is to demonstrate that the fables woven around the image of Fatima are linked with the central mythological worldviews of Shias.

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՄԵՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.  
ԻՐՆ ԲԱԶԱ

**Բանալի բառեր՝ Իրն Բաջա, մութավահիդ, թաղբիր, ին-  
տելեկտուալ մենավորություն, Կափարյալ քաղաք, «Գործուն  
բանականություն», նավաբիթ, հասարակություն, երջանկու-  
թյուն**

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել Իրն Բաջայի մո-  
տեցումները «ինտելեկտուալ մենավորությանը» և դրա անկյու-  
նաքարային նշանակությանը հասարակության ապաքինման և  
զարգացման համար: Հետազոտության համար հիմք է ծառայում  
Իրն Բաջայի «Մենավորի վարքագիծը» աշխատությունը<sup>1</sup>:

Արու Բաքր Մուհամմադ իրն ալ-Մայիդը, որը հայտնի է որ-  
պես Իրն Բաջան, արաբախապանական անդալուզյան փիլիսո-  
փայության մտքի պատմության անկյունաքարային կերպարնե-  
րից է: Իրն Բաջան ծնվել է Մարագոսայում, ապա տեղափոխվել  
Սևիլիա ու Գրանադա և մահացել թունավորումից Ֆետում  
1138թ.:<sup>2</sup> Իրն Բաջան լատինական աղբյուրներում հայտնի է  
Ավեմպաս անվամբ:

11-րդ դարի վերջի և 12-րդ դարի սկզբի Պերինեյան թերա-  
կզում ծավալվող իրադարձությունները, երբ կառավարական

<sup>1</sup> Պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ արաբագիտության ամբիոնի  
դոցենտ, արաբագիտության ամբիոնի վարիչի ժ.պ.: Էլ. փոստ՝  
[hkocharyan@ysu.am](mailto:hkocharyan@ysu.am)

<sup>2</sup> Հետազոտության ընթացքում օգտագործվել է Մաջիդ Ֆախրիի կողմից  
պատրաստված Իրն Բաջայի մետաֆիզիկական հայացքների անտալոգիան.  
1968. رسائل ابن باجة الإلهية تحقيق ماجد فخري. دار النهار للنشر.

<sup>3</sup> Fakhry M., A History of Islamic Philosophy, Columbia University Press, NY, 2004,  
p.269.

առիներ էին փոխվում՝ համընկնում են Իրն Բաջայի ակտիվ  
գործունեության հետ և իրենց հետքն են նաև թողնում նրա հա-  
յացքների ձևավորման վրա: Երբեմնի ծաղկում ապրող և տար-  
բեր գիտելիքների գոյության համար հանդուրժող միջավայր ա-  
պահովող Կորդոբայի Օմայան խալիֆայությունը վերանվաճվել  
էր Ալ-Մորավիների կողմից (1040-1147թթ), որոնք սուննիական  
պահպանողական հայացքների կողմնակից էին, ինչի արդյուն-  
քում փիլիսոփաների գործունեությունը իրեն տիրապետության  
ներքո հանդիպում էր լուրջ դիմադրության<sup>3</sup>: Եթե չլինեին նրա  
երկու նշանավոր աշակերտները՝ Իրն Ալ-Իմամը և Իրն Թուֆայ-  
յը<sup>4</sup>, ապա Իրն Բաջայի ստեղծագործությունները կարող էին մո-  
ռացության մատնվել:

Ինչպես նշվեց, հոգևոր, ինտելեկտուալ մենավորության մա-  
սին Իրն Բաջան խոսում է իր «Մենավորի վարքագիծը» (تسيير  
المتوحد) աշխատության մեջ: Այս աշխատության մեջ արտացոլ-  
վում են Իրն Բաջայի անցած ուղին, կյանքն ու մտորումները,  
ինչպես նաև վերջինիս դիրքորոշումն ու մտքերը փիլիսոփայի  
նշանակության, տեղի և դերի վերաբերյալ:

Ամբողջական պատկեր կազմելու համար ինտելեկտուալ  
«մենավորության» վերաբերյալ Իրն Բաջայի հայացքների մա-  
սին, նախ անհրաժեշտ է հասկանալ այն բովանդակությունը և  
իմաստը, որ Իրն Բաջան դնում է «թաղբիր» և «մութավահիդ» եզ-  
րերի մեջ:

«Թաղբիր» հասկացության վերաբերյալ իր գրքի սկզբում Իրն  
Բաջան նշում է, որ այն տարբեր իմաստներ ունի արաբերենում:  
Ամենաընդհանրական իմաստը, որն արտահայտում է այս եզրը,  
կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. կանխորոշված նպատակ-

<sup>3</sup> Ավելի մանրամասն տես՝ Уотт У. М. и Какиа П. Мусульманская Испания.  
Пер. с англ. С. И. Дунаевецкого. Предисл. А. Б. Куделина. М., Главная редакция  
восточной литературы издательства «Наука», 1976, глава VII.

<sup>4</sup> Ի տարբերություն Իրն Բաջայի՝ Իրն Թուֆայյը «մենավորության» գաղափարը  
զարգացնում է եիր հանրահայտ «Հայ իրն Յակզան» ստեղծագործության մեջ  
սկսում է խոսել ֆիզիկական մեկուսացման մասին:

ների ուղղված գործողությունների համադրություն: Մարդու կողմից եզակի գործողության կատարումը, որը միտված է որոշակի նպատակի իրագործմանը, Իբն Բաջան չի համարում թաղբիբ: Ըստ Իբն Բաջայի՝ եզակի գործողությունը չի կարող համարվել թաղբիբ: Համադրումը (թարթիբ) թաղբիբի մի մաս է: Հաճախակի կարելի է տեսնել, որ իր ստեղծագործության մեջ Իբն Բաջան թարթիբ և թաղբիբ եզրերն օգտագործում է որպես հոմանիշներ<sup>5</sup>:

«Թաղբիբ» եզրը օգտագործվում է նաև Աստծո մասին խոսելիս, քանի որ Աստված աշխարհի մուղաբբիրն է՝ կարգավորիչը/տիրակալը: Մարդու մասին խոսելուց՝ թաղբիբ եզրը օգտագործվում է համանմանակության սկզբունքով, քանի որ, իրականում, թաղբիբը Աստծուն է վերաբերում և իսկական թաղբիբը Աստծու թաղբիբն է: Ջարգացնելով «Թաղբիբի» հայեցակարգը Իբն Բաջան մատնանշում է, որ այն կարող է լինել պոտենցիալ և ակտուալ, բայց քանի որ թաղբիբը հաճախակի և բացահայտորեն վերաբերում է պոտենցիալին, ապա այն ենթադրում է ինտելեկտուալ գործունեություն, իսկ վերջինս բնորոշ է միայն մարդուն: Ըստ իբն Բաջայի՝ թաղբիբը օգտագործվում է երկու իմաստով՝ ընդհանուր և մասնավոր: Ընդհանուր իմաստով թաղբիբը բնորոշվում է որպես «քաղաքների կարգավորում», իսկ մասնավոր իմաստով օգտագործվելիս, այն լինում է ճիշտ կամ սխալ<sup>6</sup>:

Ինչպես նշվեց, իր գրքի առաջին իսկ էջերից Իբն Բաջան մանրամասն բացատրում է իր կողմից կիրառվող «թաղբիբ» հասկացության իմաստները: Ընդհանուր առմամբ այս եզրը կիրառվում է «քաղաքների» կառավարումը/կարգավորումը նկարագրելու համար, իսկ մասնավոր կիրառության պարագայում այն վերաբերում է անհատի ինքնակառավարմանը:

<sup>5</sup>Stu Ma'an Ziyadah, Ibn Blijja' s Book Tadbir al-Mutawahid: An Edition, Translation and Commentary, Montreal, 1968, p. 20-21.

<sup>6</sup>Նույն տեղում:

Ընդհանրացնելով, կարելի է ընդգծել թաղբիբի երեք հիմնական բնութագրիչներ.

- թաղբիբը պատկանում է միայն մարդուն,
- թաղբիբը հիմնականում վերաբերում է հնարավոր «կարգավորմանը/կարգին»;
- թաղբիբը լինում է ինչպես ճիշտ, այնպես էլ սխալ:

Մյուս կարևոր հասկացությունը «մութավահիդն» է<sup>7</sup>: «Մութավահիդ» եզրն արաբերենից կարելի է թարգմանել որպես «մենավոր» մարդ, ով մնում է միայնակ, ինքն իր հետ, մեկուսացված միտքներից միայնակ անձ, ով չի ասոցացնում իրեն ուրիշների հետ: Իսլամում «մութավահիդ» եզրը նաև հայտնի է որպես Բարձրյալի անուններից մեկը (Եզակին, Միայնակը, Նա, ով չունի իր նմանը և հավասարը): Արաբերեն թավահադա բայը նշանակում է լինել կամ դառնալ միայնակ, ոչ ոքի հետ չկիսել ոչինչ<sup>8</sup>: Մեր հետազոտության մեջ «մութավահիդ» եզրը կիրառվում է «մենավոր» իմաստով:

Ըստ Իբն Բաջայի՝ մութավահիդները երջանկացածներն էին: Իբն Բաջան «Գործուն բանականության» ճանաչման տեսանկյունից մարդկանց բաժանում էր երեք խմբի՝ «հասարակ մարդիկ» (ջումհուր), «տեսաբաններ» (նուզգար, նազարիյուն) և «երջանկացածներ» (սուադա): Ըստ Իբն Բաջայի՝ ջումհուրի ներկայացուցիչները ճանաչում են մտահասուն միայն նյութական ձևերի միջոցով: Նրանք առաջինը ճանաչում են օբյեկտները/առարկան, ապա նոր դրանց մտահասու հատկությունները՝ հիմնական նպատակ ունենալով օբյեկտն ինքնին, նրա փոփոխությունը կամ անգամ դրա վերաբաժանությունը:

«Տեսաբաններ» կամ «գիտնականներ» են նրանք, ովքեր զբաղվում են տարբեր գիտություններով, նույնպես գործ ունեն նյու-

<sup>7</sup>«Մութավահիդ» եզրը առաջին անգամ օգտագործվում է Ալ-Ֆարաբիի կողմից իր «Առաքին ի քաղաքի բնակիչների հայացքները» ստեղծագործության մեջ (Արա. 151-147, ص 1995, دار ومكتبة الهلال, بيروت).

<sup>8</sup>ابن منظور, لسان العرب, ج 3, ص 459-467.

թական մտահասության հետ, սակայն նրանց տարբերությունը առաջին խմբի մարդկանց հետ այն է, որ նրանց նպատակը ինքնին մտահասություն է<sup>9</sup>:

Ըստ Իբն Բաջայի՝ այս երկու խմբերի ճանաչողությունը միջնորդավորված է: Վերջինս «տեսաբաններին» նմանեցնում է մարդկանց, ովքեր տեսնում են ջրում արտացոլված արևը, իսկ «հասարակ մարդիկ» ավելի միջնորդավորված են ճանաչում, նմանվելով մարդկանց, ովքեր մետաղյա հայելու մեջ տեսնում են արևի արտացոլանքը, որը իր հերթին արտացոլվում է ջրում: Երրորդ խմբի ներկայացուցիչների՝ «երջանկության հասածների» մոտ ճանաչողությունը տեղի է ունենում անմիջականորեն, ասենք այնպես, եթե նրանք անմիջապես նայեին արևին<sup>10</sup>: Պետք է նշել, որ Իբն Բաջայի մոտ երրորդ խմբի երջանկացածներն են, որ կարող են իրենց բանականությամբ ճանաչել «Գործուն բանականությունը» և միավորվել (վահիդ) նրա հետ<sup>11</sup>: Այս մոտեցմամբ Իբն Բաջայի կողմից նկարագրվող մութավահիդը դառնում է «Գործուն բանականության» հետ միավորվածը ստանալով ևս մեկ իմաստ:

### «Մենավորն ու «Կատարյալ քաղաքը»

Իբն Բաջան իր Կատարյալ քաղաքին<sup>12</sup> հակադրում է չորս ոչ կատարյալ քաղաքներ: Այս ավանդույթը գալիս էր դեռ Ալ-Ֆարաբիից, որը նույնպես խոսում էր չորս ոչ կատարյալ/տգիտության քաղաքներից: Ի տարբերություն Ալ-Ֆարաբիի՝ Իբն Բաջան քաղաքի ձևակերպումը օգտագործում է ոչ թե ֆիզիկական տարածք նշելու համար, այլ կարգավիճակ ցույց տալու համար:

<sup>9</sup>رسائل ابن باجة الإلهية تحقيق ماجد فخري، دار النهار للنشر 1968 ص 167

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup>Игнатенко А.А. В поисках счастья: Общественно-политические воззрения арабо-исламских философов средневековья, М.: Мысль, 1989, стр. 171

<sup>12</sup> Իբն Բաջան իր ստեղծագործություններում «Կատարյալ քաղաքի» մասին խոսելիս օգտագործում է մի քանի հասկացություն՝ «Կատարյալ քաղաք» (մադինա քամիլա), «Առաքինի քաղաք» (մադինա ֆադիլա), «Իմամների քաղաք» (մադինա իմամիյա) և «Հոգևոր քաղաք» (մադինա ուուհանիյա):

Նրա մոտ քաղաքները տարածքներ չեն, այլ կացության ձևեր (սիյար):

Ինչպես նշվեց, Իբն Բաջան ոչ կատարյալ քաղաքների չորս տեսակ է առանձնացնում՝ «մարմնական քաղաք», «գարդարանքի քաղաք», «երևակայության քաղաք» և «հիշողության քաղաք»<sup>13</sup>:

«Մարմնական քաղաքում» ապրողների հիմնական նպատակը առաջնություն, մարմնական պահանջները բավարարելն է: Դրանք են՝ քաղցի և ծարավի հագեցում, ինչպես նաև հագուստի ու տանիքի պահանջմունքի բավարարում: Ըստ Իբն Բաջայի՝ այս քաղաքում ապրող մարդկանց ապրելակերպի նպատակը հաճույք ստանալն է բավարարելով մարմնական պահանջները:

Երկրորդ տիպի ոչ կատարյալ քաղաքում՝ «Զարդարանքի քաղաքում», ապրող մարդկանց գործողություններն ունեն հոգևոր ձևեր և ուղղված են համատեղ զգացողության վերապրմանը: Ըստ Իբն Բաջայի՝ այս տեսակի քաղաքում ապրողները որոշակի նմանություն ունեն «Մարմնական քաղաքում» ապրողներին, սակայն նրանց մոտ առավել զարգացած է հոգևորի հանդեպ ձգտումը: Օրինակ՝ եթե «Մարմնական քաղաքում» կարևոր է հագուստը, ապա «Զարդարանքի քաղաքում» կարևոր է հագուստի որակը, գույնը և պատրաստման նյութը:

Երրորդ տեսակի քաղաքը Իբն Բաջան անվանում է «Երևակայության քաղաք», քանի որ այս ապրելակերպով ապրողների համար գլխավոր նպատակ են երևակայության հոգևոր ձևերը: «Երևակայության քաղաքում» գերակայում են այնպիսի գործողություններ, որոնք միտված են ազդելու դիմացինի երևակայության վրա և արթնացնում են դիմացինի մեջ որոշակի կերպարներ ու ձևեր: Այդպիսի գործողությունները կարող են դիմացինի մոտ առաջ բերել կարեկցանք, համակրանք, հարգանք,

<sup>13</sup> Игнатенко А.А. В поисках счастья: Общественно-политические воззрения арабо-исламских философов средневековья, М.: Мысль, 1989, стр. 174.

սեր, վախ, հիացմունք և այլն: Այս քաղաքում մարդը կարող է կատարելագործել իր հոգևոր կերպարը<sup>14</sup>:

Չորրորդ «Հիշողության քաղաքին» բնորոշ են այնպիսի գործողություններ, որոնք օգնում են կատարելագործել մարդու հոգևոր կերպարը՝ հիմնվելով հիշողության վրա: Իրն Բաջանի կարծիքով մարդիկ իրենք են նախընտրում անել այդպիսի գործողություններ՝ համարելով, որ դրանց արդյունքը ինքը երջանկությունն է: Այդ իսկ պատճառով, որպեսզի մարդկանց հիշողության մեջ մնան այդ հոգևոր կերպարները, մարդիկ հետաքրքիր և հոյակապ գործողություններ են կատարում՝ հուշարձաններ են կառուցում, գրքեր են գրում, ստեղծագործում և այլն<sup>15</sup>:

Իրն Բաջան, խոսելով ոչ կատարյալ քաղաքների տեսակների մասին, մատնանշում է, որ իրականում, առանձին վերցված այդ քաղաքները չկան, այլ գոյություն ունեցող բոլոր քաղաքները հանդիսանում են այդ չորս տեսակի քաղաքների բարդ համադրությունը, որոնք խեղաթյուրում են մարդկանց հոգիները<sup>16</sup>: Այդ իսկ պատճառով փրկությունը Իրն Բաջան տեսնում է «Կատարյալ քաղաքի» ստեղծման և գոյության մեջ:

Հասկանալու համար Իրն Բաջանի մոտեցումները «Կատարյալ քաղաքի» վերաբերյալ, պետք է նորից անդրադառնալ վերևում քննարկված «մենավորի» (մութավախի) հայեցակարգին:

«Կատարյալ քաղաքի» համատեքստում Իրն Բաջան «մենավորին» ներկայացնում է որպես անհատի, որի կարծիքը չի կիսում ոչ մի ժողովուրդ և ոչ մի քաղաք: Ոչ առաքինի քաղաքներում պարկեշտ անհատի գոյատևման հարցին Իրն Բաջանից առաջ անդրադարձել է Ալ-Ֆարաբին, որը պարկեշտ անհատին «մենավորին» խորհուրդ է տալիս հեռու մնալ ոչ առաքինի քաղաքներից և բնակություն հաստատել «Առաքինի քաղաքում»,

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 176:  
<sup>15</sup> Նույն տեղում:  
<sup>16</sup> Նույն տեղում:

ինչ էրե իր ժամանակներում նմանը չկա, ապա մահը գերադասելի պետք է լինի ոչ առաքինի քաղաքներում ապրելուց<sup>17</sup>:

Ի տարբերություն Ալ-Ֆարաբին՝ Իրն Բաջան «Մենավորի փարթազիծը» աշխատությունում փորձում է ցույց տալ «մենավորին» այն ճանապարհը, որի միջոցով հնարավոր է հասնել երջանկության՝ չեզոքացնելով հոգում եղած խոչընդոտները<sup>18</sup>:

Մենավորությունը Իրն Բաջան դիտարկում է որպես ինտելեկտուալ/մտածելու հատկություն, քանի որ միայն այդ հատկության առկայության դեպքում հնարավոր է պահպանել ճշմարիտ հայացքներ և մտքեր, որոնք տարբերվում են շրջապատող ոչ կատարյալ քաղաքներում տիրողներից և ոչ ճշմարիտ հայացքներից ու մտքերից:

Ըստ Իրն Բաջանի, «մենավորը» պետք է մեկուսանա հասարակությունից՝ երջանկության հասնելու համար, սակայն վերջինս միևնույն ժամանակ նշում է, որ մեկուսացումը բնորոշ չէ մարդուն, քանի որ մարդը հասարակական էակ է, և այդ մեկուսացումը կարող է վատ անդրադառնալ նրա վրա: Ըստ էության (բի-լ-գաթ) մեկուսացումը չարիք է, բայց էությանը ոչ էական (բի-լ-առադ) կարող է բարիք լինել: Շարունակելով իր միտքը՝ Իրն Բաջան նշում է այն հանգամանքը, որ ոչ կատարյալ քաղաքներում ապրելը ցավ է պատճառում և անբարենպաստ է, ուստի թույլատրելի է մեկուսացումը, որը այլ պարագայում անթույլատրելի կլիներ<sup>19</sup>:

«Մենավորի» համար երջանկության հասնելու ճանապարհը Իրն Բաջան տեսնում է «Գործուն բանականությանը» միաձուլվելու միջոցով, որը պետք է տեղի ունենա «Կատարյալ քաղաքում»: Միաձուլումը Իրն Բաջանի պատկերացմամբ ճանաչողության գործընթաց է, որի արդյունքում «մենավորը» ճանաչում է «Ճշմարտությունը»: Իրն Բաջան մենավորին խորհուրդ է տա-

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 177:

<sup>18</sup> رسائل ابن باجة الإلهية تحقيق ماجد فخري، دار النهار للنشر 1968 ص 43

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 90-91:



լիս շփվել «գիտակ մարդկանց» (սուգար) հետ և մեկուսանալ մնացածից հաղորդակցվելով վերջիններիս հետ միայն ծայրահեղ անհրաժեշտության պարագայում<sup>20</sup>:

Իբն Բաջայի «Կատարյալ քաղաքում» չկա իշխանություն, և քաղաքի ղեկավարը մեկն է, ով չի իրացնում իշխանություն, քանի որ դրա անհրաժեշտությունը չկա, ինչպես չկա անհրաժեշտություն ունենալ բժիշկներ և դատավորներ, քանի որ «Կատարյալ քաղաքում» գերակայում են արդարությունը և առողջ ապրելակերպը:

Իբն Բաջան ասում է, որ ոչ կատարյալ քաղաքները կարող են դառնալ կատարյալ: «Մենավորների» վրա է դրված այդ գործառույթը, քանի որ նրանք ունեն ճշմարիտ հայացքներ և գիտեն թե ինչպես պետք է կազմակերպված լինի կատարյալ համակեցությունը: Այս «մենավորներին» նա նմանեցնում է «ծիլերի» (նավաբիթ), որոնք նոր հասարակության, այն է՝ քաղաքի հիմնադիրներն են<sup>21</sup>:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ «Մենավորի վարքագիծը» ստեղծագործությունը Իբն Բաջայի պատկերացմամբ ինքնակառավարման ուղեցույց է մտածող մարդու համար, որն ապրում է անբարենպաստ պայմաններում, ինչը ստիպում է նրան կամովին ընտրել մենավորություն: Սա փիլիսոփայի (ինտելեկտուալի) վարքագիծ է, որն ապրում է չորս անկատար քաղաքներից մեկում և գտնվում է իր Առաքինի և կատարյալ քաղաքից դուրս: Սա այն վարքագիծն է, որով մտածող անհատը, փիլիսոփան կարող է հասնել իր երջանկությանը և հաճույքին կամ էլ սա այն ճանապարհն է, որով պետք է ընթանա ինտելեկտուալը որպեսզի ինքնամեկուսանալու միջոցով հասնի կատարելության և կարողանա հաղորդակից լինել «Գործուն բանականությանը», ինչն էլ հնարավորություն կընձեռի նրան դառնալու մի «ծիլ» նոր, «կատարյալ» հասարակություն ստեղծելու համար:

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 41-42:

## ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЕ УЕДИНЕНИЕ КАК ВОЗМОЖНОСТЬ ИСЦЕЛЕНИЯ ОБЩЕСТВА: ИБН БАДЖА

Айк Кочарян

(резюме)

Статья исследует вопрос интеллектуального уединения и рассматривает его, как возможность и путь для исцеления общества, основываясь на труде Ибн Баджи «Устроение жизни уединившегося» (Тадбир ал-Мутаваххид). Ибн Баджа рассматривает образ жизни интеллектуально уединившегося, как путь познания и слияния с «Деятельным разумом». Ибн Баджа синтеллектуально уединившегося личностью связывает возможность создания Совершенного Града, как пространства благородных взаимоотношений между людьми с одной стороны, и исцеления уже существующих и не идеальных обществ с другой стороны.

## THE INTELLECTUAL SOLITARY AS AN OPPORTUNITY FOR RECOVERING THE SOCIETY: IBN BAJJAH

Hayk Kocharyan

(summary)

The present article goes along the study of intellectual isolation, viewing it as an opportunity and an effective means of curing the society. This approach is based on Ibn Bajjah's work "The Conduct of the Solitary" (Tadbir al-Mutawahhid). Ibn Bajjah views the way of life of the intellectual solitary as a path to cognition and a means of confluence with the "Active reason". Ibn Bajjah sees a direct connection between the intellectual solitary individual and an opportunity of creating a Perfect City, as a space for the mutuality of human relations on the one hand, and the recovery of already existing but not ideal societies, on the other hand.

**Գ. Գևորգյան  
Է. Ասատրյան՝**

**ՍՈՒԵՉԻ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ  
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆ  
ԱՐԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ**

**Բանալի բառեր՝ Սուեզի ջրանցքի ազգայնացում, «եռյակ ազրեսիա», «Էյզենհաուերի դոկտրին», «Սևրի հռչակագիր», «Քաղեշ» ռազմական գործողություններ, «Հրացանակիր» ռազմական գործողություններ**

1952 թ. «Ազատ սպաների» հեղափոխական հեղաշրջումն Եգիպտոսում ստեղծեց ներքին և արտաքին քաղաքական նոր իրավիճակ, որն իր հերթին տարածաշրջանային նոր զարգացումների հիմք հանդիսացավ:

«Ազատ սպաները»՝ ի դեմս Գամալ Արդել Նասերի ամբողջությամբ խորամուխ լինելով Եգիպտոսում տապալված միապետության վերապրուկների վերացման գործում և ներքաղաքական նոր բարեփոխումներ նախաձեռնելով, իր տեսադաշտում պահում էր նաև արտաքին քաղաքական առանցքային հիմնախնդիրները: Նրանց շարքում ուրույն տեղ էր զբաղեցնում Սուեզի ջրանցքի՝ նկատմամբ եգիպտական վերահսկողություն

հաստատելու հարցը: Սուեզի ջրանցքի հարցը հեղափոխական Եգիպտոսի համար չափազանց մեծ նշանակություն ունեցող խնդիր էր. նրա նկատմամբ եգիպտական նոր իշխանությունների կողմից հավակնությունների հաստատելը Եգիպտոսի ամբողջական անկախության ամփոփման և ամրապնդման գրավականներից էր:

Հարկ է նշել, որ դեռ 1881թ. Արաբի փաշայի ապստամբության և անգլո-եգիպտական պատերազմի արդյունքում Մեծ Բրիտանիան իր գերիշխանությունը հաստատեց Եգիպտոսի նկատմամբ<sup>2</sup>: Ավելին, Եգիպտոսի պարտության արդյունքում, Անգլիան ներթափանցեց երկրի բոլոր ոլորտները, իսկ Սուեզի ջրանցքի նկատմամբ հաստատեց գրեթե միանձնյա ղեկավարում և հսկողություն<sup>3</sup>:

Անգլիան՝ առաջնորդվելով գաղութատիրական իր ավանդական մարտավարությամբ, կարողացավ միապետական Եգիպտոսի արքունիքը դարձնել իր կամակատարը՝ փոխարենը խոստանալով ապահովել նրա անվտանգությունը:

1920-ականներին Եգիպտոսում կուսակցական համակարգի զարգացումը նպաստեց նաև անգլիական գաղութատիրության դեմ պայքարին, որը բավականին դժվարություններ էր ստեղծում գաղութային իշխանությունների գործունեության համար: Ձգտելով զսպել և մեղմել հակաանգլիական տրամադրություններն Եգիպտոսում, պաշտոնական Լոնդոնը որոշեց գնալ «զիջման»՝ եգիպտական թագավորությունը հռչակելով անկախ<sup>4</sup>:

Իրականում պաշտոնական Լոնդոնի կողմից 1922թ. փետրվարին միակողմանի ձևով պրոտեկտորատի վերացումը և

\* Գ. Գևորգյան՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Է. Ասատրյան՝ ԵՊՀ արաբագիտության ամբիոնի հայցորդ:

<sup>1</sup> Սուեզի ջրանցքը պաշտոնապես բացվեց 1869 թ. նոյեմբերի 17-ին: Ջրանցքի կառուցման նախաձեռնությունը պատկանում էր ֆրանսիացի գործարար Ֆերդինանտ Լեեֆսին: Սուեզի ջրանցքի կառուցումն արժեցավ շուրջ 576 մլն. Ոսկե ֆրանկ: 1875 թ. Իսմայիլ փաշան վաճառեց ջրանցքի պարտատոմսերի եգիպտական մասնաբաժինը Անգլիային, և փաստացի ջրանցքի ղեկավարումն անցավ «Սուեզի ջրանցքի համընդհանուր ընկերությանը», այսինքն՝ անգլո-ֆրանսիական կողմին: 1882 թ. Եգիպտոսն ընկավ բրիտանական տիրապետության տակ: Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում ջրանցքն ամբողջությամբ վերահսկվում էր Անգլիայի կողմից: Փաստորեն, Սուեզի ջրանցքը դարձավ Եգիպտոսի «Աքիլլեյան գարշապարը»:

որն ամրապնդեց պաշտոնական Լոնդոնի գերիշխանությունն Եգիպտոսում: Մանրամասն տես՝ Луцкий В. Б., Новая история арабских стран, М., 1966, с.168., նաև՝ Ротштейн Ф. А., Захват и закабаление Египта, М., 1959, с. 20-21.

<sup>2</sup> Մանրամասն տես՝ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Եր., 2004, հ. II, էջ 371-383:

<sup>3</sup> Кошелев В.С., Египет: от Ораби-паши до СаадаЗаглула 1879-1924гг., М., 1992, сс. 82, 110-112.

<sup>4</sup> Кошелев В.С., նշվ. աշխ., էջ 112:

Եգիպտոսի անկախության ճանաչումը կրում էր սուկ ձևական բնույթ<sup>5</sup>:

Բրիտանական գաղութատիրության դեմ եգիպտական նորաթուխ իշխանությունների՝ հանձինս «ազատ սպաների» պայքարն Եգիպտոսում նոր թափ և որակ ստացավ, երբ 1956թ. հուլիսի 26-ին Ալեքսանդրիայում կայացած բազմահազարանոց հանրահավաքում՝ Նասերը Եգիպտոսի բնակչությանը և միջազգային հանրությանը հայտարարեց Սուեզի ջրանցքը ազգայնացնելու իր որոշման մասին<sup>6</sup>:

Նասերի կողմից Սուեզի ջրանցքի ազգայնացման որոշման կայացումը բավականին դժվար տրվեց, քանի որ վերջինիս կողմից գիտակցվում էր դրա հետևանքների ողջ լրջությունը: Այդուամենայնիվ, Եգիպտոսի առաջնորդի նման որոշումը հասկանալու համար հարկավոր է ուշադրություն դարձնել հետևյալին:

Առհասարակ, Նասերի այդ որոշումը հարկավոր է դիտարկել եգիպտական կառավարության կողմից տնտեսական կարևոր բարեփոխումներ իրականացնելու ցանկությամբ, մասնավորապես՝ արտասահմանյան ընկերությունների ազգայնացման և եգիպտական կապիտալի կախվածությունը օտար երկրներից և ընկերություններից ազատելու ռազմավարական քաղաքականության շրջանակներում<sup>7</sup>:

Մինևույն ժամանակ եգիպտական կառավարությունը մինչ այդ որոշում ընդունեց Նեղոսի մի հատվածի վրա՝ Ասուանի մոտ, վիթխարի ամբարտակ կառուցելու մասին<sup>8</sup>: Այդ որոշումը միտված էր եգիպտական ռոզովոդ հողատարածքների ծավալ-

<sup>5</sup> Եգիպտոսի «անկախության» հռչակագրում մի շարք վերապահումներ արվեցին, որոնք իրավունք էին ընձեռում Անգլիային շարունակել Եգիպտոսի ռազմական բռնազավթումը, իսկ երկրում անգլիական գլխավոր կոմիսարը մնում էր երկրի փաստացի ղեկավարը: Եգիպտոսի «անկախության» անգլիական հռչակագրի կետերի մասին մանրամասն տես՝ Ротштейн Ф. А., նշվ. աշխ., էջ 336-337:

<sup>6</sup> Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. III, Եր., 2006, էջ 271:

<sup>7</sup> Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., հ. III, էջ 271:

<sup>8</sup> <http://www.history.com/this-day-in-history/united-states-withdraws-offer-of-aid-for-aswan-dam>

անցի կտրուկ ընդարձակմանը, նոր հողատարածքների յուրացմանն ու մշակմանը, հողագուրկ գյուղացիներին հողատարածքով ապահովելուն, գյուղատնտեսական մթերքների արտադրության աճին և երկրի զարգացող արդյունաբերության համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի արտադրությանը<sup>9</sup>: Ասուանի ամբարտակը լուծելու էր ոչ թե մեկ առանձին հարց, այլ ամբողջ Եգիպտոսի տնտեսական առաջընթացի և տնտեսական բարեփոխումների հանգուցային հիմնախնդիրները: Այդ վիթխարի ծրագրի կենսագործման համար անհրաժեշտ էին համապատասխան միջոցներ, որոնցից գուրկ էր Եգիպտոսը: Եգիպտական կառավարությունը դիմեց ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարություններին:

1955թ. դեկտեմբերի 17-ին ԱՄՆ-ն և Անգլիան հայտարարեցին ջրամբարտակի կառուցման ծրագրում իրենց մասնակցության մասին՝ խոստանալով որպես օգնություն հատկացնել 56 մլն և 14 մլն ԱՄՆ դոլար<sup>10</sup>: Մինևույն ժամանակ անգլո-ամերիկյան կողմը հույս էր տածում, որ բացի իրենցից ոչ մի այլ պետություն Եգիպտոսին չի կարողանա հատկացնել անհրաժեշտ գումարը, և վերջինս կհայտնվի փակուղու առջև<sup>11</sup>: Ըստ էության, Եգիպտոսին Արևմուտքի կողմից տրամադրվող օգնությունը նեոգաղութացման դրսևորման ձևերից մեկն էր, քանի որ վերջիններս կարծում էին, թե նման ճանապարհով կկարողանան Կահիրեին «իրենց դաշնակիցների» շարքում պահել:

Սակայն, շուտով, ԱՄՆ-ը հասկանալով, որ իրենց, այնուամենայնիվ, չի հաջողվի փոխել Եգիպտոսի արտաքին քաղաքական նոր ուղեգիծը<sup>12</sup>, 1956թ. հուլիսի 19-ին պաշտոնապես տեղեկաց-

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Мирский Г.И., Армия и политика в странах Азии и Африки, М., 1970, с. 55.

<sup>11</sup> Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 272:

<sup>12</sup> Հետաքրքիր է այն հանգամանքը, որ ԱՄՆ-ի կողմից Եգիպտոսին խոստացված վարկը չտրամադրելու մտայնությունն ամրապնդվեց, երբ 1956թ. Նասերը պաշտոնապես ճանաչեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության անկախությունը: Стю' Мирский Г.И., նշվ. աշխ., с. 55:

րին Կահիրեին, որ հրաժարվում են վերջինիս տրամադրել խոստացած գումարը<sup>13</sup>: Հաջորդ օրը նույն հայտարարությամբ հանդես եկավ նաև Անգլիան, թեպետև իրականում բրիտանացիները փորձում էին հնարավոր բոլոր ձևերով պահպանել իրենց ներկայությունն Եգիպտոսում<sup>14</sup>:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ 1940-1950-ականներին բրիտանական երբեմնի հզոր գաղութային կայսրությունը սկսեց փլուզվել: Անգլիան կորցրեց իր ազդեցությունն Իրանում<sup>15</sup>, քիչ ավելի ուշ Իրաքում<sup>16</sup>, Հորդանանում<sup>17</sup>, իսկ հետո նաև Եգիպտոսում: Սակայն վերահսկելով Սուեզը, որն այդ տարիներին շարունակում էր դեռ մնալ Արևմուտքի նավթային սնուցման երակներից մեկը, Լոնդոնը իրեն դեռ կարող ուժ էր համարում արաբական աշխարհում:

Այդպիսով, Արևմուտքից մերժումը ստանալուց հետո միայն Նասերը վճռեց պայթեցնել այսպես կոչված «սուեզյան ռումբը»՝ հայտարարելով Սուեզի ջրանցքի ազգայնացման մասին<sup>18</sup>: Թեև ընկերությունն ազգայնացվում էր, Նասերը հայտարարեց, որ ընկերությունում մասնաբաժին ունեցող օտարերկրացիները կստանան համապատասխան փոխհատուցումները: Նասերը երաշխավորեց նաև ջրանցքի երթևեկության ազատությունը՝ համաձայն 1888թ. կնքված միջազգային համաձայնագրի պայմանների<sup>19</sup>:

<sup>13</sup> Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 272:

<sup>14</sup> Новейшая история арабских стран, М. 1968, с. 415.

<sup>15</sup> 1951թ. Իրանի վարչապետ Մոսադիկը ազգայնացրեց իրանական նավթային արդյունաբերությունը և պահանջեց դուրս բերել անգլիական գործերը Իրանից:

<sup>16</sup> 1961թ. Իրաքում փակվեցին անգլիական բոլոր ռազմական բազաները:

<sup>17</sup> 1946թ. Անդրհորդանանը ստացավ անկախություն՝ դուրս գալով բրիտանական մանդատի վերահսկողությունից:

<sup>18</sup> Ուշագրավ է այն հանգամանքը, որ Սուեզի ջրանցքի ազգայնացման որոշումը պահվում էր խիստ գաղտնի, իսկ հրապարակմանն էլ հաջորդեց եգիպտական բանակի ստորաբաժանումների կողմից ջրանցքի կառավարման ընկերության գլխամասի զբաղեցումը: Ամենն այնքան արագ եղավ, որ եգիպտական զինված ուժերը ոչ մի դիմադրության չհանդիպեցին: Մանրամասն տես՝ Мирский էջ 56:

<sup>19</sup> Новейшая история арабских стран, նշվ. աշխ., էջ 415:

Եգիպտոսի նախագահի այս քայլը, փաստորեն, պաշտոնական Կահիրեին կանգնեցրեց Անգլիայի հետ անմիջական ռազմական առձակատման առջև<sup>20</sup>:

1956թ. հոկտեմբերի 22-ին Ֆրանսիայի Սևր քաղաքում կայացավ գաղտնի հանդիպում, որին մասնակցեցին Իսրայելի կողմից վարչապետ Բեն-Գուրիոնը, գլխավոր շտաբի պետ Մոշե Դայանը, պաշտպանության նախարարության գլխավոր տնօրեն Շիմոն Պերեսը, Ֆրանսիայի գլխավոր շտաբի պետ Մորիս Բուրժես-Մոնուրը, արտաքին գործերի նախարար Քրիստիան Փինոն, գլխավոր շտաբի պետ Մորիս Շալլին, Անգլիայի արտաքին գործերի քարտուղար Սելվին Լոյդը և նրա օգնական Փաթրիկ Դինը<sup>21</sup>: 48 ժամ տևած բանակցությունների արդյունքում ստորագրվեց գաղտնի հռչակագիր, որի համաձայն Իսրայելը պետք է հարձակվեր Եգիպտոսի վրա, իսկ Անգլիան և Ֆրանսիան հետևելով նրան՝ ներխուժեին Սուեզի ջրանցքի գոտի՝ հիմնավորելով իրենց քայլը իբրև «ջրանցքի պաշտպանությանը միտված գործողություններ և պատերազմող կողմերին տարանջատելու անհրաժեշտություն»<sup>22</sup>:

Հռչակագրով նախատեսվում էր նաև, որ պատերազմի ավարտին Իսրայելը անեքսիայի կենթարկի ամբողջ Սինայի թե-

<sup>20</sup> Հարկ է նշել, որ Եգիպտոսում միապետական կարգերի տապալումից հետո, բրիտանական կառավարությունը եգիպտական նորաթուխ իշխանությունների հետ 1954թ. հոկտեմբերի 19-ին ստորագրեց 7 տարի ժամկետով պայմանագիր, որի համաձայն բրիտանական զորքերը պետք է դուրս բերվեին Եգիպտոսից մինչև 1956թ. հունիսը, ընդ որում բրիտանական ռազմական բազաները պետք է մնային ջրանցքի գոտում և սպասարկվեին անգլիական և բրիտանական մասնագետների կողմից: Որևէ սպառնալիքի դեպքում, բրիտանական զորքերը կարող էին վերադառնալ ջրանցքի գոտի, իսկ Եգիպտոսն էլ իր հերթին պարտավորվում էր չխոչընդոտել ջրանցքով նավարկությանը՝ այդ թվում նաև անգլիական նավերի համար:

<sup>21</sup> Пелипась М.Я., Суэцкий кризис 1956г., <http://www.usinfo.ru/c2.files/holodnajaovojna15.htm> /

<sup>22</sup> Secrets and lies at the heart of Britain's Middle Eastern folly, <https://www.theguardian.com/uk/2006/jul/11/egypt.past>

րակղզին կամ նրա մի մասը՝ պարտավորվելով չհարձակվել Հորդանանի վրա, իսկ Անգլիան իր հերթին չպետք է սատարեր Հորդանանին, եթե վերջինս հարված հասցներ Իսրայելին<sup>23</sup>:

1956թ. հոկտեմբերի 29-ին իսրայելական զորքերը սկսեցին «Քադեշ» ռազմական գործողությունները՝ գրոհելով եգիպտական բանակային ստորաբաժանումների դիրքերը Սինայում<sup>24</sup>: Իսրայելն իր գործողությունները հիմնավորեց Գազայի գոտուց արաբ ֆիդայիների հարձակումներին վերջ տալու անհրաժեշտությամբ: Արդեն հաջորդ օրը իսրայելական ռազմաօդային ուժերի կործանիչը խոցեց Սիդիայից եգիպտոս վերադարձող եգիպտական սպաների պատվիրակության ինքնաթիռը, որի արդյունքում զոհվեցին եգիպտացի 18-ը բարձրաստիճան սպա<sup>25</sup>:

ՄԱԿ-ի ԱԽ-ն փորձեց Իսրայելին դատապարտող բանաձև ընդունել, սակայն անգլո-ֆրանսիական կողմը հետևելով Սերի գաղտնի հռչակագրին արգելափակեց բանաձև:

Միևնույն ժամանակ, ցանկանալով ստեղծված իրավիճակում նախաձեռնությունների առաջնահերթությունը իրենց ձեռքը վերցնել, անգլո-ֆրանսիական կողմն առաջարկեց, որպեսզի եգիպտա-իսրայելական ղեկավարությունը իրենց զորքերը ջրանցքից ետ քաշեն 30կմ հեռավորության վրա<sup>26</sup>: Սա հնարա-

պարտություն կտար Սերի հռչակագրի անդամներին ժամանակ չտալու և գրավել անպաշտպան եգիպտական տարածքները: Գրոհելով այդ ամենը, եգիպտական կողմը մերժեց այդ առաջարկը, որին հաջորդեցին իսրայելական կողմի ռազմական գործողությունները:

Սկսվեց Սուեզի ճգնաժամը, կամ այսպես կոչված Եգիպտոսի դեմ ուղղված «եռյակ ագրեսիա» կոչվող ռազմական գործողությունները:

1956թ. հոկտեմբերի 31-ին անգլո-ֆրանսիական զինվածուժերը սկսեցին «Հրացանակիր» ռազմական գործողությունները՝ ուժեղացնելով եգիպտոսի միջերկրածովյան ավիամերձ շրջանները: Նրանց հաջողվեց արագ ոչնչացնել եգիպտական մարտական ինքնաթիռների զգալի մասը հենց ցամաքում և կաթվածահարել եգիպտական ռազմական օդուժի հավանական գործողությունները<sup>27</sup>: Հոկտեմբերի 5-ին Պորտ-Սայդի շրջանում անգլո-ֆրանսիական դեսանտ իջեցվեց, իսկ արդեն նոյեմբերի 5-ին իսրայելական զորքերը զբաղեցրին Շարմ ալ-Շեյխը: Արդյունքում Իսրայելի հսկողության տակ հայտնվեցին գրեթե ողջ Սինայի թերակղզին և Գազայի գոտին:

Նոյեմբերի 7-ին Բեն-Գուրիոնը Քնեսետում հայտարարեց, որ իսրայելական զորքերը վերականգնել են պատմական արդարությունը՝ հաստատելով Իսրայելի վերահսկողությունը պատմական Սինայի նկատմամբ, և որ 1949թ. ձեռք բերված զինադադարի սահմանները այլևս չեն գործում<sup>28</sup>:

Եգիպտոսի դեմ «եռյակ ագրեսիան» դատապարտեց ԽՍՀՄ-ը սպառնալով հարձակվողներին անգամ հրթիռային հարվածներ հասցնել<sup>29</sup>: 1956թ. նոյեմբերի 2-ին ՄԱԿ-ի ԳԱ-ն պահանջեց անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները, դուրս բե-

<sup>23</sup> Morris B., Righteous victims: A history of the Zionist-Arab conflict, 1881-2001, Vintage books, 2001, p. 784., Հետաքրքիր է այն հանգամանքը, որ սկզբում Բեն-Գուրիոնը առաջարկեց վերանայել արաբական մի քանի երկրների արդեն իսկ ամրագրված սահմանները, մասնատվորապես՝ բաժանել Հորդանանը Իսրայելի և Իրաքի միջև. Լիբանանի մի մասը մինչև Լիտանի գետը պետք է անցնի Իսրայելին, իսկ Լիբանանը պետք է հրաժարվեր իր իսլամական մեծամասնությամբ բնակչությունից և դառնար քրիստոնեական հանրապետություն՝ դաշնակից Իսրայելին: Սակայն անգլո-ֆրանսիական կողմը չերաշխավորեց այդ ծրագիրը՝ համոզելով Իսրայելին ֆիքսվել միայն Եգիպտոսի վրա:

<sup>24</sup> The Sinai Campaign (Operation Kadesh-1956),

<http://mfa.gov.il/MFA/AboutIsrael/History/Pages/The%20Sinai%20Campaign%20-%201956.aspx>

<sup>25</sup> Операция «Кадеш», [https://knesset.gov.il/lexicon/ru/kadesh\\_ru.htm](https://knesset.gov.il/lexicon/ru/kadesh_ru.htm)

<sup>26</sup> Eisenhower and Israel: U.S.-Israeli Relations 1953-1960, University Press of Florida 1993, p. 246.

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 247:

<sup>28</sup> Alteras I., Eisenhower and Israel, U.S.-Israel Relations 1953-1960, N.Y, 1969, p. 242.

<sup>29</sup> Gaddis J.L., The Cold War: a new history, Boston Globe 2006, p. 70.

րել Եգիպտոսից երեք պետությունների գործերը և բացել Սուեզի ջրանցքը<sup>30</sup>:

ՄԱԿ-ի ԳԱ պահանջները կատարելու համար կանադացի քաղաքական գործիչ Լեսթեր Փիրսոնը առաջարկեց ստեղծել ՄԱԿ-ի հատուկ խաղաղապահ ուժեր, որոնք պետք է տեղաբաշխվեին հակամարտության գոտում<sup>31</sup>:

1956թ. նոյեմբերի 6-ին հայտարարվեց զինադադար, իսկ նոյեմբերի 15-ին ջրանցքի գոտում տեղակայվեցին ՄԱԿ-ի առաջին ստորաբաժանումները<sup>32</sup>: Նոյեմբերի 15-ին ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի առաջին ստորաբաժանումները ժամանեցին հակամարտության գոտի<sup>33</sup>: Անգլո-ֆրանսիական ուժերը Եգիպտոսից դուրս եկան 1956թ. դեկտեմբերի 22-ին<sup>34</sup>, իսկ իսրայելականը՝ 1957թ. մարտին, ԱՄՆ-ի ճնշման արդյունքում<sup>35</sup>:

Բավականին ուշագրավ է պաշտոնական Վաշինգտոնի դիրքորոշումն Սուեզի ճգնաժամի նկատմամբ: «Եռյակ ագրեսիայի» նախապատրաստման ժամանակ և ընթացքում ԱՄՆ-ն զբաղեցրեց երկակի դիրքորոշում. մի կողմից ամերիկյան կառավարությունը արտաքուստ սատարեց Անգլիայի, Ֆրանսիայի և Իսրայելի ռազմական գործողությունների նախապատրաստական գործընթացը<sup>36</sup>, մյուս կողմից փորձեց նաև դիվանագիտական ճնշում գործադրել Եգիպտոսի իշխանությունների վրա՝ ձգտե-

լով պարտադրել վերջինիս Սուեզի ջրանցքի օտարերկրյա կառավարումը, որն ըստ էության զետեղված էր «Դալլեսի ծրագրում»<sup>37</sup>:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում փաստել, որ հակառակ խորհրդային տարիների մասնագիտական գրականության մեջ շրջանառվող պատմության, կապված այն բանի հետ, որ ԱՄՆ-ը իրական դերակատարում չի ունեցել Սուեզի ճգնաժամի դադարեցման գործում, Վաշինգտոնը բավականին լարջ ներգործություն է ունեցել «եռյակ ագրեսիայի» դադարեցման գործում: Մասնավորապես, նոյեմբերի 6-ին ԱՄՆ-ի նախագահ Էյզենհաուերը Սևրի հռչակագրի անդամներից պահանջեց անհապաղ դադարեցնել Եգիպտոսի դեմ ուղղված ռազմական գործողությունները<sup>38</sup>:

Այդպիսով, Սուեզի ճգնաժամը պաշտոնական Կահիրեի համար դարձավ լրջագույն փորձություն և միևնույն ժամանակ այն քաղաքական կամուրջը, որն Եգիպտոսին ապահովեց նոր կարգավիճակ միջազգային հարաբերություններում: Պատերազմի դասական ընկալմամբ Եգիպտոսը «եռյակ ագրեսիայի» արդյունքում պարտվեց<sup>39</sup>, սակայն այդ պարտության բարոյահոգե-

<sup>30</sup> Middle East UNEF Background, <http://www.un.org/en/peacekeeping/missions/past/unef1backgr2.html>

<sup>31</sup> Նույն տեղում:

<sup>32</sup> Ի դեպ՝ սա ՄԱԿ-ի առաջին խաղաղապահ գործողություններն էին:

<sup>33</sup> Суэцкий кризис 1956, մանրամասն տես

[http://www.coldwar.ru/conflicts/middle\\_east/1956.php](http://www.coldwar.ru/conflicts/middle_east/1956.php)

<sup>34</sup> Suez Crisis 1956, <https://www.britannica.com/event/Suez-Crisis>

<sup>35</sup> Ben Gad Y., Politics lies and Videotape, N.Y., 1991, p. 180.

<sup>36</sup> ԱՄՆ-ը եռյակ ագրեսիայի գործողությունների ժամանակ խուսափեց նրա մասնակիցներին բացահայտ սատարելուց, փոխարենը փորձեց ստեղծել ճգնաժամը արագ ավարտելու պատրանքը: Բանն այն էր, որ ԱՄՆ-ը չէր ցանկանում իր դեմ տրամադրել արաբական հանրությանը և մասնավորապես, եգիպտականը:

<sup>37</sup> Политика США на Арабском Востоке, М. 1961, с. 29: Ընդհանուր առմամբ ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Դալլեսը Սուեզի ջրանցքի կարգավորման 2 տարբերակ էր առաջարկել: Ըստ առաջին նախագծի՝ պետք է ստեղծվեր «Սուեզի ջրանցքի օգտվողների ասոցիացիա», որին պետք է վերապահվեր ջրանցքով նավարկության կարգավորումը, ինչպես նաև հարկահանման հսկողությունը: Սակայն սեպտեմբերի 10-ին Նասերը մերժեց այդ առաջարկը: Դալլեսի 2-րդ առաջարկությունը ենթադրում էր եգիպտական տարածքից դուրս ջրանցքի շահագործման ասոցիացիայի ստեղծում, որը ևս պետք է զբաղվեր ջրանցքի վերահսկողության հարցերով, որը ևս մերժվեց: Մանրամասն տես [http://www.hrono.ru/biograf/bio\\_d/dalles\\_d.php](http://www.hrono.ru/biograf/bio_d/dalles_d.php)

<sup>38</sup> The Suez Crisis, 1956, <https://history.state.gov/milestones/1953-1960/suez>

<sup>39</sup> Ըստ տարբեր աղբյուրների, Իսրայելի հետպատերազմական գործողությունների արդյունքում Եգիպտոսը կորցրեց 3000 սպանված, մոտ 4000-8000 զերի, ոչնչացվեցին եգիպտական տանկերի մոտ կեսը: <http://www.famhist.ru/famhist/hal/00351601.htm>

բանական և քաղաքական հետևանքները միանշանակ բնորոշվում էին իբրև հաղթանակ:

Անգլո-ֆրանսիական կողմի հետ պատերազմական գործողություններում Եգիպտոսը կորցրեց մոտ 800 մարդ, 2 ռազմանավ, մարտական ինքնաթիռների գրեթե կեսը, իսկ անգլո-ֆրանսիական մարտական ինքնաթիռների հարվածների արդյունքում զոհվեցին ավելի քան 3000 խաղաղ բնակիչ<sup>40</sup>: Իսրայելը կորցրեց՝ 172 սպանված, և 817 վիրավոր, ևս 20 զերի ընկան, այնուհետև, 30-100 զրահապատ տեխնիկա, ինչպես նաև 12 ինքնաթիռ<sup>41</sup>: Ինչ վերաբերվում է անգլո-ֆրանսիական ուժերին, ապա նրանք կորցրեցին 320 հոգի սպանված, և 5 մարտական ինքնաթիռ<sup>42</sup>:

Ամփոփելով քննարկվող հարցերը կարելի է արձանագրել հետևյալ եզրակացությունները.

1. Նասերի համար Անգլիայի և Ֆրանսիայի դուրս մղումը արաբական աշխարհից կարծես թե պատվի հարց էր. Եգիպտոսի առաջնորդը կարծում էր, որ Իսրայել պետության ստեղծումը Պաղեստինում արևմտյան նեոգաղութատիրության դրսևորում է, իսկ արաբների պարտությունը արաբ-իսրայելական 1948-1949թթ. պատերազմում ամոթալի և դառն իրականություն<sup>43</sup>: Հետևաբար, պայքարելով կայսերապաշտության և նեոգաղութացման դեմ, Նասերը մարտահրավեր էր նետում նաև սիոնիստական շարժմանը արաբական աշխարհում:
2. ԱՄՆ-ն մերձավորարևելյան քաղաքականության և Մուեզի ճգնաժամի համատեքստում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում 1957թ. հունվարին Վաշինգտոնի կողմից հռչակված Էյզենհաուերի դոկտրինը (վարդապետությունը): Էյզենհաուերի վարդապետության տեսական հիմքն այսպես կոչված քաղաքական վակուումի տեսությունն էր,

<sup>40</sup> <http://www.famhist.ru/famhist/hal/00351601.htm>

<sup>41</sup> Նույն տեղում:

<sup>42</sup> Նույն տեղում:

<sup>43</sup> Киссинджер Г., Дипломатия, М., 1997, с. 472.

որի համաձայն Մեծ Բրիտանիայից գաղութային և պրոտեկտորատի կարգավիճակում գտնվող երկրները ի վիճակի չեն ինքնակառավարվել Անգլիայի հեռանալուց հետո, այդ իսկ պատճառով էլ հենց ԱՄՆ-ը պետք է զբաղեցնի այդ վակուումը՝ ստանձնելով նոր պրոտեկտորի դերակատարումը: ԱՄՆ-ի սենատում 1957թ. հունվարի 14-ին Դալլեսն իր ելույթում անդրադառնալով Մերձավոր և Միջին Արևելքում ստեղծված իրավիճակին, նշեց, որ համաձայն նշված դոկտրինի, ԱՄՆ-ի նախագահին պետք է իրավունք շնորհել պաշտպանելու համար Մերձավոր և Միջին Արևելքի երկրներին ու ժողովուրդներին վտանգից, ինչպես նաև տարածել նրանց վրա ռազմական օգնության և համագործակցության ծրագիրը<sup>44</sup>:

3. Եգիպտոսի բարոյահոգեբանական հաղթանակը Մուեզի ճգնաժամում նպաստեց Նասերի հեղինակության սրընթաց աճին, և նասերականության գաղափարախոսության զանգվածային տարածմանը արաբական աշխարհում: Նասերը վերածվեց արաբական աշխարհի յուրօրինակ խորհրդանիշի:
4. 1957թ. երկրորդ կեսին հասկանալի դարձավ, որ Էյզենհաուերի դոկտրինն որևէ ազդեցություն չի ունենա Եգիպտոսի որդեգրած քաղաքական ուղեգծի վրա: ԽՍՀՄ-ի կողմից տրամադրված օգնության շնորհիվ Գահիբեն կարողացավ ձեռքել Եգիպտոսի տնտեսական շրջափակումը: Դալլեսը ստիպված էր շփման նոր եզրեր որոնել Գահիբեի հետ: Մասնավորապես՝ 1957թ. նոյեմբերի 20-ին հանվեց ԱՄՆ-ում եգիպտական շուրջ 10 մլն ակտիվների վրայից արգելափակումը, որոնք սառեցվել էին դեռ ճգնաժամի ժամանակ: Այնուհետև նույն թվականի դեկտեմբերին Վաշինգտոնում Դալլեսը հանդիպեց Եգիպտոսի արտաքին

<sup>44</sup> «Joint congressional resolution on Eisenhower doctrine», 9.III.1957, Middle Eastern affairs, 1957, May, pp.189-190.

գործերի նախարար Ֆավզիի հետ, որին հասկացրեց, որ եթե Եգիպտոսը հրաժարվի իր պրոխորիդային քաղաքականությունից, ապա ԱՄՆ-ն կտրամադրի Կահիրեին անհրաժեշտ ֆինանսական օգնություն<sup>45</sup>:

5. Սուեզի ճգնաժամում Եգիպտոսի քաղաքական հաղթանակի արդյունքում 1958թ. հունվարի վերջին ստորագրվեց խոշոր վարկ տրամադրելու մասին եգիպտա-խորհրդային համաձայնագիրը<sup>46</sup>: Արդեն 1958թ. մայիսի 1-ին, Նասերի Մոսկվա մեկնելու նախօրեին Դալլեսը հայտարարեց, որ ԱՄՆ-ն հույս ունի բարեկամական հարաբերություններ հաստատել Արաբական Միացյալ Հանրապետության հետ<sup>47</sup>:

6. Սուեզի ճգնաժամը և նրա արդյունքները դարձան Նասերի և եգիպտական ժողովրդի քաղաքական խոշորագույն հաղթանակը:

7. Մինչև 1967թ. պատերազմը Սուեզի ջրանցքի շահագործումից ստացված եկամուտը կազմում էր տարեկան մոտ 100 մլն եգիպտական ֆունտ:

8. Սուեզի ճգնաժամի հետևանքներից էր բոլոր օտարերկրյա ձեռնարկությունների եգիպտականացումը, այսինքն՝ ստիպողաբար նրանց վաճառքը եգիպտացիներին: 1957թ. հունվարի 15-ին հրապարակվեցին թիվ 22, 23. և 24. Օրենքներն, որոնք զրկում էին բոլոր օտարերկրացիներին բանկեր, ապահովագրական և առևտրական ընկերություններ ունենալու իրավունքից: Ազգայնացվեցին անզլիական և ֆրանսիական շուրջ 64 ապահովագրական ընկերություններ 17,1 մլն եգիպտական ֆունտ ընդհանուր կապիտալով<sup>48</sup>:

## СУЭЦКИЙ КРИЗИС И ВОЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ НОВАЯ РОЛЬ ЕГИПТА В АРАБСКОМ МИРЕ

Гор Геворгян

Эдита Асатрян

(резюме)

Революционный переворот “Свободных офицеров” в Египте в 1952г. создал в стране качественно новую ситуацию. Революционные власти во главе с Гамаль Абдель Насером не только упразднили монархию но и взяли новый, независимый курс политического развития государства, что в свою очередь привело к непосредственному конфликту между Египтом и Великобританией, под чьим влиянием долгие годы находилась страна. Мотивацией конфликта стала политика национализации в Египте, и в том числе Суэцкого канала. Суэцкий кризис и начавшиеся военные действия против Египта в 1956-1957гг. стали первым серьезным военно-политическим испытанием революционных властей страны.

Благодаря дипломатическим маневрам Насера, Египту удалось избежать окончательного поражения в этой войне, более того, официальный Каир безусловно одержал политическую победу. После “суэцкого кризиса” Египет во главе с Насером стал символом “арабской победы” и локомотивом антиимпериалистической борьбы арабского мира. Постепенное нарастание военной мощи Египта поставили страну в исключительно важное положение в арабском мире, превратив Каир в военно-политический фактор. После поражение в палестинской войне 1948-1949гг., впервые ощутили самоуверенность в себе и важность продолжения борьбы за национальную независимость. Египет стал ключевым игроком не только региона, но и мировой политики.

<sup>45</sup>Middle East Forum vol.XLI, N 2, Beirut 1965, p.66.

<sup>46</sup>Նույն տեղում:

<sup>47</sup>Middle East Forum vol.XLI, N 2, Beirut 1965, p.69.

<sup>48</sup>Мирский, նշվ. աշխ., էջ 58:



THE SUEZ CRISIS AND THE NEW POLITICAL-MILITARY ROLE  
OF EGYPT IN THE ARAB WORLD

Gor Gevorgyan  
Edita Asatryan  
(summary)

The revolution of the "Free Officers" in Egypt in 1952 created a qualitatively new situation in the country. The revolutionary authorities led by Gamal Abdel Nasser not only abolished the monarchy, but also adopted a new, independent course of political development of the state, which led to a direct conflict between Egypt and Britain, under whose influence for many years was the country. The motivation of the conflict was the policy of nationalization in Egypt, including the Suez Canal.

The Suez crisis and the start of military action against Egypt in 1956-1957 became the first serious military and political test of the country's revolutionary authorities.

Thanks to Nasser's diplomatic maneuvers, Egypt was able to avoid the final defeat in the war, moreover, the official Cairo certainly scored a political victory. After the "Suez crisis" Egypt headed by Nasser became a symbol of the "Arab victory" and the locomotive of the anti-imperialist struggle of the Arab world. The gradual build-up increase of military power in Egypt put the country in a very important position in the Arab world, turning making Cairo into a military-political factor.

After the defeat in the Palestinian war 1948-1949 first time they felt confidence in themselves and the importance of continuing the struggle for national independence. Egypt has become a key player not only in the region but also in world politics.

Է. Ասատրյան\*

ՆԱՍԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Բանալի բառեր՝ նասերականություն, ազգայնականություն, ազգ, պանարաբիզմ, համերաշխություն, միասնություն, գաղութափրկություն, սոցիալիզմ, սիոնիզմ, իմպերիալիզմ, ռեգիոնալիզմ:

Եգիպտոսը մերձավորարևելյան և հյուսիսաֆրիկյան տարածաշրջանի ամենահանգուցային երկրներից մեկն է, որը մեծ կշիռ ու հեղինակություն է ունեցել արաբական աշխարհում նաև պատմության նոր և նորագույն շրջանում: Եգիպտոսում տեղի ունեցած սոցիալական, քաղաքական և մշակութային իրադարձություններն իրենց ազդեցությունն են թողել արաբական իսլամական երկրներում տեղի ունեցած գործընթացների վրա: Եգիպտոսն առաջիններից էր, որտեղ 19-րդ դարի սկզբներին մեավորվեց արաբական երկրների նոր շրջանի պատմության ամենանշանակալից իրադարձություններից մեկը՝ արաբական ազգային-մշակութային զարթոնքը՝ Նահդան: 19-րդ դարի վերջերից ընդհուպ մինչև 20-րդ դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում Եգիպտոսն արաբական աշխարհում ակզբնավորված հակազաղութային և հակասիոնիստական շարժումների ամենակարևոր կենտրոններից մեկն էր, որտեղ 1952թ. հուլիսին «Ազատ սպաների» իրականացրած հեղափոխության շնորհիվ տապալվեց միապետությունը: 1953թ. հունիսի 18-ին Եգիպտոսը հռչակվեց անկախ հանրապետություն:

1956-1970թթ. Եգիպտոսի նախագահը «Ազատ սպաների» ամենահանգուցային դեմքերից մեկն էր՝ զինվորական գործիչ Գամալ Աբդել Նասերը, որի անվան հետ են կապված Եգիպտոսի պատմությանն առնչվող մի շարք հանգուցային իրադարձու-

\* ԵՊՀ արաբագիտության ամբիոնի հայցորդ:

յուններ: Արտաքին դաշտում արժանահիշատակ են՝ Եգիպտոսի մերժողական դիրքորոշումը Բաղդադի պակտին, 1958թ. Սուեզի ճգնաժամը և «Եռյակ ազրեսիան», Եգիպտոսի ու Սիրիայի միավորմամբ Արաբական Միացյալ Հանրապետության ստեղծումը (1958-1961թթ.), Եգիպտոսի արտաքին քաղաքականության կողմնորոշումը դեպի ԽՍՀՄ և առճակատումը Արևմուտքի ու արևմտյան կողմնորոշում ունեցող արաբական պետությունների հետ, շարունակական հակազդեցությունը Իսրայելին և այլն: Ներքին քաղաքականության ոլորտում հիշատակման արժանի են՝ սոցիալ-տնտեսական, այդ թվում՝ ագրարային բարեփոխումները, որոնք ուղեկցվեցին օտար, իսկ հետագայում՝ եգիպտական խոշոր կապիտալի ազգայնացմամբ, արաբական սոցիալիզմի եգիպտական ուղղության ձևավորումը, քաղաքական ազատությունների սահմանափակումները, նաև հետևողական պայքարը կրոնաքաղաքական շարժումների, մասնավորապես «Մուսուլման եղբայրների» դեմ:

Հատկանշական է, որ Նասերը մեծ նշանակություն էր տալիս արաբական միասնության և համերաշխության, նաև սոցիալական արդարության գաղափարներին: Նա կայսերապաշտության, գաղութատիրության և սիոնիզմի դեմ կոշտ պայքարի կողմնակից էր: Նրա առաջ քաշած գաղափարները, որոնք իր ժամանակին լայն ժողովրդականություն էին վայելում, հայտնի են նասերականություն անվամբ: Նասերականությունը տարողունակ հասկացողություն է, քանի որ առնչվում է սոցիալական, հասարակական և քաղաքական ոլորտներին: Մեկ այլ խոսքով՝ նասերականությունը ոչ միայն Եգիպտոսի, այլև արաբական ազգի միասնական և արժանապատիվ ապրելու Նասերի բանաձևն էր:

Գալով իշխանության՝ Գամալ Աբդել Նասերը փորձեց գործնականում իրականացնել իր առաջ քաշած թեզերը: Օտար ընկերությունների, առաջին հերթին Սուեզի ջրանցքի անգլոֆրանսիական կազմակերպության ազգայնացմամբ՝ Նասերն ապացուցեց, որ մինչև վերջ պայքարելու է գաղութատիրության

դեմ: Մյուս կողմից, հասարակության բարեկեցությանը և համահավասարությանը միտված սոցիալ-տնտեսական բարեփոխումները նպատակ ունեին ստեղծել հզոր ու մրցունակ եգիպտական պետություն, որը կարող էր ձգտել տարածաշրջանային գերակայության:

1961-1967թթ. Եգիպտոսի զարգացման երկրորդ փուլը միտված էր սոցիալիստական հասարակության կառուցմանը<sup>1</sup>: Նասերի սոցիալիզմն, ի դեպ, աղերսներ չունեց կոմունիզմի հետ, որը դիտվում էր որպես արաբների ավանդույթներին հակասող գաղափարախոսություն: Սոցիալիզմը գաղափարական առումով միանգամայն նոր իրողություն էր Եգիպտոսի համար: Պատահական չէ, որ Նասերն իր ելույթներում փորձում էր հիմնավորել սոցիալիզմի ներդրման անհրաժեշտությունը՝ նշելով, որ այն չի կարող հակասել իսլամին, քանի որ առաջ է քաշում սոցիալական արդարության գաղափարներ, ինչը անում է նաև իսլամը<sup>2</sup>:

Առանձնապես հետաքրքրություն են ներկայացնում արաբական միասնության, համերաշխության և առհասարակ պանաբաբիզմի վերաբերյալ Նասերի գաղափարները, որոնց հիմքում ընկած են արաբական ազգ և արաբական Հայրենիք հասկացողությունները: Գաղափարներ, որոնց մասին արաբները պատկերացում չունեին ընդհուպ մինչև 19-րդ դարը, եթե նկատի ունենանք, որ օսմանյան չորսդարյա տիրապետության շրջանում արաբական ինքնությունը մթազնված էր<sup>3</sup>: Արաբական ազգայ-

<sup>1</sup> Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, Եր., 2006, հ. III, էջ 278-283:

<sup>2</sup> Sté u Anouar Abdel-Malek, Nasserism and Socialism, <http://www.socialistregister.com/index.php/srv/article/viewFile/5927/2823>.

<sup>3</sup> Միայն արաբական գարթոնքի Նահդայի գործիչների քարոզներում է, որ կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ արաբներին միավորում է ընդհանուր պատմությունը, փառահեղ անցյալը, լեզուն, մշակույթը և կրոնը: Նշենք, որ միջնադարում ևս արաբները չեն ունեցել շեշտված արաբական ինքնություն, քանի որ ցեղային ինքնության անմիջապես փոխարինելու եկավ մուսուլմանական ինքնությունը և պատկանելությունը Ումմայյին, իսկ 16-րդ

նականությունը սկիզբ առավ միայն 19-20-րդ դարերում, եվրոպական ազգայնականության անմիջական ազդեցությամբ և կապված էր նաև արաբական ազգային մշակութային զարթոնքի՝ Նահդայի հետ, ինչը նպաստեց արաբական ինքնության վերելքին<sup>4</sup>։ Հետագա տարիներին, ընդհուպ մինչև նասերականության սկիզբ առնելը, արաբական ազգայնական տեսություններն աչքի են ընկնել գաղափարախոսական տարաբնույթ շեշտադրումներով ու աշխարհագրական լայն ընդգրկումներով։ Նրանց գործունեությունը սկզբնական շրջանում կապված է եղել Օսմանյան կայսրության կազմում արաբների ազգային իրավունքների առաջընթացի հետ<sup>5</sup>։

Կայսրության փլուզումից և եվրոպական գաղութատիրության հաստատումից մինչև երկրորդ աշխարհամարտն ընկած ժամանակահատվածը արաբական ազգայնական շարժումները որակական առումով նոր փուլ թևակոխեցին։ Դրանցից ամենահանգուցայինը 1947թ. ստեղծված Բաասն էր՝ Արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցությունը, որը տարիներ անց իշխանության եկավ նախ Միրիայում՝ 1963թ., ապա Իրաքում՝ 1968թ.։ Արդեն քսաներորդ դարի երեսունականներին սկսեց առանձնանալ արաբական ազգային՝ տեղային հայրենասիրությունը (local patriotism, regionalism), որի կողմնակիցները համարում էին, որ յուրաքանչյուր արաբական երկիր պետք է զարգանա ինքնիշխան կերպով՝ ըստ իր առանձնահատկությունների ու ավանդույթների<sup>6</sup>։ Արաբ ազգայնական գործիչների

դարից արաբները հայտնվեցին Օսմանյան կայսրության կազմում՝ հետքայլ կատարելով իրենց քաղաքակրթական ձեռքբերումներից։

<sup>4</sup>Մանրամասն տե՛ս Ե. Նաջարյան, Արաբական ազգային-մշակութային զարթոնքը՝ Նահդան, Եր., 1988։

<sup>5</sup>Տե՛ս Ա. Գասպարյան, Արաբ ազգայնականները և երիտթուրքերը. համագործակցությունից առճակատում, Եր., 2016։

<sup>6</sup>Ռեզիտնալիզմի ակնառու օրինակ է լիբանանցի հասարակական-քաղաքական գործիչ Անտուն Սաադեի Մեծ Միրիայի նախագիծը։ 1932թ. Ա. Սաադեն հիմնում է Միրիական սոցիալ-ազգայնական կուսակցությունը, որի անդամներն ու համախոհները հայտնի էին «դոմի սուրիյուն» (սիրիական ազգայնա-

շրջանում աստիճանաբար սկսվում էր մրցակցություն, նաև պայքար իշխանության գալու և առաջատար դիրքեր գրավելու հարցում։

Մերտորեն կապված լինելով արաբական ազգի միասնության ու համերաշխության գաղափարների հետ՝ նասերականությունը կարելի է դիտարկել թե՛ արաբական ազգայնականության, թե՛ պանարաբիզմի ընդհանուր խորապատկերի մեջ։ Բացի այդ, Նասերի օրակարգում հանգուցային նշանակություն էր տրվում արաբ-իսրայելական հակամարտությանն ու պաղեստինյան հարցին։ Եզիպտոսը Նասերի իշխանության գալուց հետո առանձնանում էր որպես Իսրայելին հակազդող ամենազործուն արաբական երկրներից մեկը<sup>7</sup>։

Նասերականությանը նոր լիցքեր հաղորդեց նաև Արաբական Միացյալ Հանրապետության ստեղծումը՝ 1958թ. Եզիպտոսի և Միրիայի միավորումը, որը Եզիպտոսի նախաձեռնությունն էր<sup>8</sup>։ Հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ Եզիպտոսը Նասերի օրոք նախապատվությունը տվեց երկրի արաբական ինքնությանը՝ ստորադասելով աֆրիկյան և իսլամական բաղկացուցիչները, չնայած որ Նասերը համարվում է նաև Չմիացող երկրների շարժման առաջատար գործիչներից ու հիմնադիրներից մեկը<sup>9</sup>։ Նասերի պատկերացմամբ՝ եզիպտացիներ-

կաններ) անունով։ Մանրամասն տե՛ս Labib Zuwiyya Yamak, The Syrian Social Nationalist Party: An Ideological Analysis. Center for Middle Eastern Studies of Harvard University, 1966.

<sup>7</sup>Նշենք, որ Եզիպտոսն արաբ-իսրայելական հակամարտության գործուն անդամ էր, մասնակցել էր 1948-1949թթ. արաբ-իսրայելական առաջին պատերազմին, որի արդյունքում Եզիպտոսին էր անցել Պաղեստինի Գազայի շրջանը։ Եզիպտոսի դեմ «Եռյակ ագրեսիան» շատ դեպքերում համարվում է արաբ-իսրայելական երկրորդ պատերազմը, երբ Անգլիան և Ֆրանսիան Իսրայելին վերապահեցին առաջինը Եզիպտոսին հարվածելու «պատիվը»։

<sup>8</sup>Տե՛ս Elie Podeh, The Decline of Arab Unity: The Rise and Fall of the United Arab Republic, Sussex Academic Press, 1999.

<sup>9</sup>Non-Aligned Movement and Egypt: The Nasser Era, [http://shodhganga.inflibnet.ac.in/bitstream/10603/17016/8/08\\_chapter%203.pdf](http://shodhganga.inflibnet.ac.in/bitstream/10603/17016/8/08_chapter%203.pdf)

րին արաբական աշխարհի հետ կապում է պատմական ընդհանրությունը, ընդհանուր դավանանքը, շահերը, մյուս կողմից՝ ընդհանուր աղետները: Նրանց առջև ծառայած են նույնանման ինդիքներ, նույնն է նրանց հեռանկարը, անգամ թշնամին՝ թեպետ տարբեր կերպարներով, ի վերջո՝ արաբական երկրները կազմում են աշխարհագրական միասնություն<sup>10</sup>:

Արաբական ժողովուրդների ներկային և հեռանկարին անդրադառնալիս՝ Նասերը կարևորում էր գաղութատիրության վերացումը, քանի որ այն մշտական սպառնալիք էր եգիպտական և արաբական ժողովուրդների նվաճումների: Կայսերապաշտության դեմ պայքարը կանխորոշեց Նասերի մարտավարությունն արևաքին քաղաքականության ոլորտում: Եգիպտոսի հարաբերությունները բավական լարված էին թե՛ ԱՄՆ-ի, թե՛ Արևմուտքի հետ, որոնք փորձում էին տարածաշրջանի իրենց դաշնակիցների, մասնավորապես՝ աստվածապետություն համարվող Սաուդյան Արաբիայի միջոցով աշխարհիկ արաբական ազգայնականությանը հակազդել իսլամական համերաշխության և միասնության գաղափարներով, որին Նասերը դեմ էր արտահայտվում<sup>11</sup>:

Նա կոչ էր անում արաբներին միասնության թե՛ գործողությունները համակարգելու, թե՛ քաղաքական ու տնտեսական ինտեգրման առումով, ինչը պետք է նպաստեր առաջընթացին ու զարգացմանը, արաբների մեկ բռունցք դառնալուն: 1958թ. իր ելույթներից մեկում արաբների համար ամենակարևորը Նասերը համարում է *իջմասն*՝ համաձայնությունը<sup>12</sup>: Կարելի է ասել, որ 1950-ականների վերջերին պանարաբիզմը արաբական աշխարհի ամենալայն հեղինակություն վայելող գաղափարախո-

<sup>10</sup> Գամալ Արդել Նասեր, Հեղափոխության փիլիսոփայությունը, Կահիրե, 1955, էջ 91-110 (արաբերեն):

<sup>11</sup> Ա. Փաշայան, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը Ղարաֆադյան հակամարտության նկատմամբ, Եր., 2003, էջ 32:

<sup>12</sup> 3. Левин, Развитие арабской общественной мысли, М., 1984, с. 46.

ությունն էր, որի անվերապահ առաջնորդ համարվում էր Գամալ Արդել Նասերը<sup>13</sup>:

Պատմական ընթացքը սակայն ցույց տվեց, որ արաբական երկրների միջև գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման անհամաչափություններն ու բևեռացումը անհնար էր հաղթահարել: Արաբական միասնությունը գործնական դաշտում չկարողացավ դիմանալ պատմության քննությանը և բազմաթիվ ձախողումներ ունենալով՝ ապացուցեց իր անկենսունակությունը: Ասվածի ապացույցներից էր նաև 1961թ. Արաբական Միացյալ Հանրապետության փլուզումը: Մեկ տարի անց Նասերն ակտիվորեն ներգրավվեց Եմենի քաղաքացիական պատերազմում (1962-1970թթ.)՝ հակամարտության մեջ մտնելով Սաուդյան Արաբիայի հետ, որը պաշտպանում էր թագավորական ուժերին<sup>14</sup>:

Նասերականությանն ուղղված լրջագույն հարված էր նաև 1967թ. Իսրայելի հետ պատերազմում Եգիպտոսի և արաբների պարտությունը, ոչ միայն հողային, այլև բարոյական կորուստները<sup>15</sup>: Պատերազմն ի ցույց դրեց Եգիպտոսի խոցելի կողմերը: Բացի այդ, իշխանության վերջին տարիներին Նասերը գնալով ավելի ու ավելի էր կախվածության մեջ ընկնում Ծոցի նավթաարդյունահանող արաբական երկրների ֆինանսական հատկացումներից: 1969թ. նա նույնիսկ ընդառաջ գնաց սաուդյան Տահդ թագավորի առաջարկությանը, որպեսզի Եգիպտոսը մասնակցի Իսլամական կոնֆերանս կազմակերպության հիմնադիր համագումարին, որը տեղի ունեցավ Ռաբաթում իսլամական

<sup>13</sup> Dawisha, Adeed, Arab Nationalism in the Twentieth Century: From Triumph to Despair, Princeton: Princeton University Press, 2009, p. 184.

<sup>14</sup> Jesse feris, Nasser's Gamble: How Intervention in Yemen Caused the Six-Day War and the Decline of Egyptian Power, Princeton University Press, 2013.

<sup>15</sup> Եգիպտոսը պատերազմի արդյունքում կորցրեց Սինայը, Իսրայելին հաջողվեց գրավել նաև Գազայի շրջանը, Արևմտյան ափը, Արևելյան Երուսաղեմը, Գոլանի բարձունքները:

համերաշխության շարժման շրջանակներում<sup>16</sup>: Պատահական չէ, որ Նասերի հրամանով Կահիրեում կասեցվեց նաև արաբական ազգայնական արմատական ուղղվածությամբ «Արաբների ձայնը» ուղղիռադիոկայանների հեռարձակումը<sup>17</sup>:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ նասերականությունը սոցիալ-քաղաքական հայեցակարգ էր՝ հիմնված Գամալ Արդել Նասերի գաղափարների ու հայեցակարգային դրույթների վրա: Այն առաջ էր քաշում թե՛ արաբական ազգայնականության, թե՛ պանարաբիզմի աշխարհիկ գաղափարներ, կողմնակից էր սոցիալիզմին և հանրապետական մոդելին, աչքի էր ընկնում շեշտված հակակայսերապաշտական և հակազաղութատիրական ձախակողմյան ուղղվածությամբ: Ի տարբերություն բասսիզմի, որն ուներ մի քանի տեսաբաններ ու հստակ հայեցակարգ, նասերականությունը համակարգված գաղափարախոսություն չէր, այլ ներկայացնում էր Եգիպտոսի արտաքին ու ներքին քաղաքական դաշտում ձևավորված մի շարք խնդիրների ու մարտահրավերների այն պատասխանները, որոնք փորձում էր գտնել Նասերը նորանկախ Եգիպտոսը կառավարելու համար: Շատ դեպքերում, Նասերն ինքն էլ չէր տիրապետում արդյունավետ կառավարման մեխանիզմներին, ինչը սխալների պատճառ էր դառնում: Ամեն պարագայում, նա փորձում էր սոցիալ-տնտեսական և քաղաքական բարեփոխումների միջոցով համախմբել ազգին ընդհանուր գաղափարների շուրջ: Այդ իմաստով նասերականությունը տարբերվում էր Բասսից, որը ձևավորվել ու զարգացել էր նախքան իշխանության գալը որպես կուսակցական կառույց: 1962թ. Նասերը հիմնեց Արաբական սոցիալիստական միություն (ԱՍՄ) անունով մի կուսակցություն, որը դարձավ նրա քաղաքական հենարանը, երկրի միակ քաղաքական ուժը: Փոխարենը, նասերականությունը տարածվեց մի

<sup>16</sup> Ա.Փաշայան, նշվ. աշխ., էջ 38-39:

<sup>17</sup> Adeed Dawisha, Requiem for Arab Nationalism, Middle East Quarterly, Winter 2003, pp. 25-41.

շարք արաբական երկրներում (Սիրիա, Իրաք, Հորդանան, Լիբանան, Սաուդյան Արաբիա, Հյուսիսային Եմեն, Հարավային Եմեն)՝ վերաճելով կուսակցական կառույցի: Արդեն Նասերի մահից մի քանի տարի անց արաբական երկրներում գործող նասերական միությունները սկսեցին աստիճանաբար վերանալ: Բացառություն կազմեց 1950-ականների վերջերին Լիբանանում հիմնված ձախակողմյան անկախ նասերականների շարժումը, որն առավել հայտնի է Մուրաբիտուն անունով<sup>18</sup>: Միայն 1992թ. Եգիպտոսում Նասերի մահից տասնամյակներ անց հիմնվեց ԱՍՄ-ի ժառանգորդ Արաբական դեմոկրատական նասերական կուսակցությունը, որն աչքի չընկնող քաղաքական ուժ է<sup>19</sup>:

Հատկանշական է, որ Նասերին հաջորդած Անվար Սադատը, գալով իշխանության, միանգամայն փոխեց Եգիպտոսի զարգացման ընթացքն ու արտաքին քաղաքական ուղենիշները<sup>20</sup>: Նասերականությունն անցավ պատմության գիրկը:

Ամեն պարագայում, չնայած որոշակի ձախողումներին, Նասերի օրոք հատկապես գաղութատիրության և արաբ-իսրայելական համընդհանուր պայքարի մեջ Եգիպտոսն իր վճռորոշ ներդրումն ունեցավ, որի համար Նասերը թանկ գին վճարեց մշտապես գտնվելով Արևմուտքի ճնշումների տակ: Ոչ պակաս կարևոր էր Նասերի դերն արաբական ազգայնականության, արաբական միասնության և ընդհանրապես պանարաբիզմի գաղափարական դաշտի ձևավորման հարցում: Դրա արդյունքում երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորված արաբական անկախ պետություններն իրենց սահմանադրություններում սկսեցին ամրագրել այն դրույթը, որ արաբական երկրները

<sup>18</sup> Lebanon-Al-Mourabitoun, <https://www.justice.gov/sites/default/files/pages/attachments/2015/09/30/lbn36334.pdf>.

<sup>19</sup> A Partial Guide to the Egyptian Political Parties, <https://connectedincairo.com/2011/11/15/a-partial-guide-to-the-egyptian-political-parties/>.

<sup>20</sup> Ա. Փաշայան, Եգիպտոսը արդի պատմության զիզգազներում, <http://middleorient.com/?p=4465>.

պատկանում են միասնական արաբական հայրենիքին, իսկ նրանց բնակչությունը արաբական ազգի մի մասն է՝ անկախ քաղաքական, տնտեսական, աշխարհագրական, սոցիալական և դավանական տարանջատվածությունից<sup>21</sup>: Փաստորեն, քաներոդ դարում հնարավոր եղավ սահմանել արաբական ազգ հասկացողությունն ու նրա տեսականը, որն աստիճանաբար սկսեց հարստանալ նորանոր գաղափարական լրացումներով:

Նասերի մահից հետո արաբական աշխարհում աստիճանաբար անկում ապրեց նաև աշխարհիկության այն առաջադեմ մթնոլորտը, որին կողմ էին Նասերն ու նրա շատուշատ համախոհներ՝ իր սեղը զիջելով զարգացման կրոնական ուղուն և արաբական հասարակությունների հարաճուն կրոնականացմանը: Ընդհանրապես, արաբական երկրներում աշխարհիկության նահանջը ըստ ամենայնի կապված է արաբական հասարակություններում խոր արմատներ ունեցող պահպանողական ու կրոնական ավանդույթների, ցեղային ու կլանային համակարգի տարրերի, ինչպես նաև կարծրատիպային ու կրոնամոլ աշխարհընկալումների հետ, որոնք փաստացիորեն խոչընդոտում են արդիականացմանը:

## НАССЕРИЗМ: ТЕОРИЯ И ПРАКТИКА

Едита Асатрян

(резюме)

В представленной статье рассматриваются вопросы теории и практики нассеризма, доктрины, основанной на социально-политических воззрениях и идеях президента Египта Гамаль Абдель Нассера (1956-1970гг.). В отличие от Баасизма, нассеризм не имел одного или нескольких идеологов, напротив, он возник как комплекс практических ответов возникших в результате попытки управления и построение Нассером сильного египетского государства, завоевания политической и экономической независимости, у браздов правления которого с 1952г. встали военные. Стартовав как пан-арабский национализм, нассеризм постепенно эволюционировал в арабский социализм. Идеологически направленный против западного капитализма и колониализма, Нассер идеи арабского социализма противопоставлял также и коммунизму, отмечая несовместимость последнего с арабскими традициями. В 1950-60-ые годы нассеризм стал одним из самых популярных и мощных политических идеологий в арабском мире. Он особенно актуализировался после Суэцкого кризиса 1956г., политический исход которого было отмеченно как победа нассеризма над западными империями. Однако, распад ОАР в 1961г., а также поражение арабов в Шестидневной войне нанесли урон как политическому положению Нассера, так и его идеологии нассеризма.

<sup>21</sup> The Arab world: past, present, and future by Izzeddin, Nejla Mustapha, Chicago, H. Regnery Co., 1953, p. 31.

## NASSERISM. THEORY AND PRACTICE

*Edita Asatryan*  
(summary)

The paper deals with the theory and practice of Nasserism, which was a sociopolitical doctrine based on the thoughts and actions of Gamal Abdel Nasser, president of Egypt (1956-1970). Unlike Baathism, Nasserism was not a well-conceived thesis by one or more ideologues, but emerged as an ideology out of a series of practical responses to the problems, domestic and foreign, that Egypt, ruled by military officers from 1952 onward, faced as it tried to consolidate its newly won political and economic independence. Beginning a pan-Arab nationalism, it evolved into Arab socialism. Though opposed ideologically to Western capitalism and colonialism, Nasser's interpretation of Arab socialism developed as a rejection of communism, which was seen as incompatible with Arab traditions. In the 1950s and 1960s, Nasserism was amongst the most popular and potent political ideologies in the Arab world. This was especially true following the Suez Crisis of 1956 the political outcome of which was seen as a validation of Nasserism, and a tremendous defeat for Western imperial powers. The collapse of the United Arab Republic of 1961, as well as the Arab defeat in the Six-Day War of 1967, damaged the standing of Nasser, and the ideology associated with him.

<sup>1</sup> The Arab world: past, present, and future by Ibrahim, Nabil Mustafa, Chicago, IL: Regency Co., 1977, p. 31.

Թ Յ Ո Ւ Ր Ք Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Ե Վ Օ Ս Մ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

<sup>2</sup> The Arab world: past, present, and future by Ibrahim, Nabil Mustafa, Chicago, IL: Regency Co., 1977, p. 31.

**ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ 1961 Թ. ԹՈՒՐՔԻԱ  
ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԻ ՈՐՈՇ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ ՇՈՒՐՋ  
(ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ)**

**Բանալի բառեր՝ պարտաբացություն, Կաթողիկոս, արխի-  
վային փաստաթղթեր, հայ համայնք, Հայ Առաքելական եկե-  
ղեցի**

1923 թ. ստեղծված Թուրքիայի Հանրապետության և Խորհրդային Հայաստանի տարբեր պաշտոնյաների հազվադեպ ու դիպվածային շփումները մեծ մասամբ ունեցել են կամ տեխնիկական-կազմակերպչական, կամ սիմվոլիկ-արարողակարգային բնույթ, ինչը, ըստ էության, օրինաչափ էր գոյություն ունեցած պայմանների պարագայում: Այս առումով 1961 թ. ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի այցը Թուրքիա փաստացիորեն իր մեջ ներառել է ոչ միայն կրոնական, այլև քաղաքական ու արարողակարգային բաղադրիչ: Նախ Կաթողիկոսի անձնական խարիզմատիկ հատկանիշները և երկրորդ՝ նրա կարգավիճակը այդ այցը դարձրել են տվյալ ժամանակաշրջանի համար բավական կենտրոնական և ուշագրավ: Այցի հետ կապված զարգացումները սակայն կամ ներկայացված են հպանցիկ, կամ փորձ է արվել դրա հիման վրա հրապարակ նետել որոշ շահարկումներ, որոնք երբեմն-երբեմն արժարժվում են նաև մեր օրերում: Վեհափառը այցելելով Թուրքիա՝ ստիպված է եղել հարմարվել պետական արարողակարգի որոշ պարտադրանքների, սակայն, միևնույն ժամանակ, իր այցը կարողացել է ծառայեցնել հայ ժողովրդի և Հայ Առաքելական եկեղեցու որոշակի

\* Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դոցենտ: ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ղեկանի տեղակալ: Էլ. փոստ՝ [rubenmelkonyan@ysu.am](mailto:rubenmelkonyan@ysu.am)

շահերին, որոնք իրենց հերթին համընկել են ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների ծրագրերին: Սույն հողվածում ներկայացվում է Վազգեն Առաջին Կաթողիկոսի 1961 թ. հուլիսին Թուրքիա կատարած այցը, և ուսումնասիրությունը խարխսված է ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության և Խորհրդային Հայաստանի Հայ Լուսավորչական եկեղեցու գործերի խորհրդի արխիվային և «գաղտնի» կամ «հույժ գաղտնի» դասիչները կրող փաստաթղթերի հիման վրա:

Այսպես, 1961 թ. հունիսի 22-ին մահացել է Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Գարեգին Խաչատուրյանը, և Վազգեն Վեհափառը պատրաստվել է այցելել Ստամբուլ և ներկա գտնվել հուղարկավորության արարողությանը, սակայն թուրքական իշխանությունները ձգձգել են Կաթողիկոսին մուտքի արտոնագիր տրամադրելու հարցը և զուգահեռ Ստամբուլի նահանգապետարանն ու անվտանգության վարչությունը հայկական համայնքի ղեկավարներից պահանջել են կատարել հուղարկավորությունը առանց սպասելու Վազգեն Առաջինին: Սակայն պոսահայ համայնքին հաջողվել է հետաձգել հուղարկավորությունը և սպասել Վեհափառին<sup>1</sup>, ինչը բավական համարձակ քայլ է եղել: Ի վերջո, որոշ դժվարություններից հետո թուրքական իշխանությունները տվել են մուտքի արտոնագիր Կաթողիկոսին և նրան ուղեկցող պատվիրակությանը:

Վազգեն Վեհափառի այցը Թուրքիա, իրոք, եղել է աննախադեպ, և նա արժանացել է բացառիկ ջերմ ընդունելության հայ համայնքի կողմից: Ստամբուլի Աթաթուրքի անվան օդանավակայանում նրան ընդունելու է ավելի քան 3 հազար հայ, իսկ մի քանի հազար հայ էլ նրան սպասել է Պատրիարքությունում: Ամեն օր հազարավոր հայեր հերթ են կանգնել Վեհափառի աջը համբուրելու և նրա օրհնությունը ստանալու համար<sup>2</sup>: Վազգեն Առաջինի այցի հետ կապված թուրքական ոստիկանությունը

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 179, թ. 32:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 179, թ. 33:



խնդիրներ է ունեցել փողոցային երթևեկությունը և Կաթողիկոսի շարասյան տեղաշարժն ապահովելու հարցում, քանի որ, ինչպես նշվում է ԽՍՀՄ ԱԳՆ-ի արխիվային մի փաստաթղթում, «տասնյակ հազար հայեր տարերայնորեն դուրս էին եկել փողոց»<sup>3</sup>: Կաթողիկոսին տեսնելու համար տարբեր գավառներից նույնպես մեծ թվով հայեր են եկել Ստամբուլ: Այցից հետո Վազգեն Վեհափառը ԽՍՀՄ պետական կառույցների ներկայացուցիչների հետ զրույցի ժամանակ փոխանցել է բավական ուշագրավ մի փաստ. ըստ Կաթողիկոսի՝ հայերից շատերը, ովքեր եկել էին իր աջը համբուրելու հարմար պահի, ցածրաձայն շշնջացել էին. «Կեցցե Երևանը», «Կեցցե Խորհրդային Հայաստանը»<sup>4</sup>:

Վազգեն Առաջինը մասնակցել և հանդիսապետել է լուսահոգի Գարեգին պատրիարքի հուղարկավորության արարողությանը և հետագայում նշել է, որ պատրիարքի թաղմանը «բավական մեծ և թանկարժեք» ծաղկեպսակ է ուղարկել Թուրքիայի նախագահ Ջեմալ Գյուրսելը, ինչպես նաև նախկին նախագահ Իսմեթ Ինյոնյուն<sup>5</sup>:

Բնականաբար, 1961 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի այցը եղել է խորհրդային տարբեր կառույցների ուշադրության կենտրոնում և, հաշվի առնելով լուսահոգի Վեհափառի անքննելի հեղինակությունը՝ խորհրդային իշխանությունները փորձել են որոշակի խնդիրներ լուծել: Վեհափառի այցը, ըստ էության, եղել է պետական, և նա, ինչպես արդեն նշվեց, ստիպված է եղել կատարել որոշ արարողակարգային պարտադիր քայլեր: Այսպես, 1961 թ. հուլիսի 6-ին Վազգեն Վեհափառը ծաղկեպսակ է դրել Ստամբուլի Թաքսիմ հրապարակում «անկախության հուշարձանին» և այցելել Ստամբուլի նահանգապետ Ռեֆիք Թուլգային: Հուլիսի 16-ին Վեհափառի գլխավորած պատվիրակությունը մեկնել է Անկարա և ծաղկեպսակ դրել Քե-

մալ Աթաթուրքի դամբարանին և հենց նույն օրը նրան ընդունել է Թուրքիայի նախագահ Ջեմալ Գյուրսելը<sup>6</sup>: Ի դեպ, հանդիպումից հետո Գյուրսելը մամուլին հայտնել է, թե Վազգեն Վեհափառը «լավ պատրաստված հոգևորական է, ով շատ լավ գիտի իր պարտականությունները»: Ավելին՝ Թուրքիայի նախագահը հայտարարել է. «Ես կուզենայի, որ մեր բոլոր հոգևորականներն էլ այդպիսին լինեին»<sup>7</sup>: Գյուրսելը հանդիպման ժամանակ հեռաքրքրվել է նաև ԽՍՀՄ-ում իսլամի և մզկիթների վիճակով:

Թուրքիա այցի ընթացքում Վազգեն Առաջինը մի քանի անգամ հանդիպել է նաև Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական պատրիարք Աթենագորասի հետ, ով շատ ջերմ է ընդունել Կաթողիկոսին և հայտարարել, որ «իսկական հայր նա է, ով ճանաչում է Էջմիածինը» և որ Հունաց պատրիարքությունը հարգանքով չի վերաբերվի նրան, ով հանդես է գալիս Էջմիածնին դեմ<sup>8</sup>: Առաքելական և ուղղափառ հովվապետերի հանդիպումներից հետո ԽՍՀՄ Ստամբուլի գլխավոր հյուպատոսության պատրաստած տեղեկանքի եզրակացությունների բաժնում փաստվում է, որ այցի շնորհիվ ամրապնդվել են Հայ առաքելական և Հույն ուղղափառ եկեղեցիների կապերը, որը խորհրդային պաշտոնյաները գնահատել են որպես «դրական երևույթ»<sup>9</sup>:

Սակայն Վազգեն Առաջինի Թուրքիա կատարած այցի ամենակարևոր կետը և, ըստ էության, առաքելությունը Կոստանդնուպոլսի Հայոց նոր պատրիարքի ընտրության հարցն է եղել, որը գտնվել է և՛ թուրքական, և՛ ամերիկյան, և՛ խորհրդային հեռաքրքրությունների կիզակետում: Սակայն այդ բարդ իրավիճակում և ուժերի դասավորվածության պարագայում երջանկահիշատակ Վազգեն Վեհափառը առաջնորդվելով հայ ժողովրդի և եկեղեցու շահերով՝ կարողացել է հետամուտ լինել դրանց և ի

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 41, թ. 2:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 41, թ. 2:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 41, թ. 4:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 179, թ. 32:

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 179, թ. 33:

<sup>8</sup> ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 179, թ. 33:

<sup>9</sup> ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 179, թ. 35:

վերջո հասնել հաջողության: Պոլսահայ համայնքի, Հայ Առաքելական եկեղեցու շահերի տեսանկյունից պատրիարքի ցանկալի թեկնածու է համարվել Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, ում իր ոչ բացահայտ աջակցությունն է ցուցաբերել Վազգեն Կաթողիկոսը և ում թեկնածությանը դրական են վերաբերել նաև խորհրդային իշխանությունները: Սակայն Շնորհք արքեպիսկոպոսի թեկնածությանը թուրքական իշխանությունները ոչ միանշանակ են վերաբերել և որոշակի խոչընդոտներ ստեղծել: Այսպես, Շնորհք արքեպիսկոպոսը եղել է այն ժամանակ ԱՄՆ քաղաքացի և 1960 թ. վերադառնալով Թուրքիա դիմել է քաղաքացիություն ստանալու համար, սակայն իշխանությունները շարունակ հետաձգել են այդ հարցը և բերել տարատեսակ պատրվակներ նաև այն, որ Շնորհք Գալուստյանը արդեն մեկ անգամ հրաժարվել է Թուրքիայի քաղաքացիությունից<sup>10</sup>:

Նկատենք, որ 1960 թ. մայիսի 27-ին Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո հայ համայնքում ևս որոշակի խնդիրներ և լարվածություն է ծագել: Ինչպես 1961 թ. մայիսի 29-ի զեկուցագրում նշում է Ստամբուլում ԽՍՀՄ փոխիյուպատոս Ա. Յուսուպովը «Հայերի մի փոքր խումբ, որը ղեկավարում է Կարապետ Աբրահամյանը համախմբված են «Մարմարա» թերթի շուրջ և համարվում են դաշնակցականների կողմնակից»<sup>11</sup>: Իհարկե այստեղ ակնհայտ է ԽՍՀՄ գաղափարական-քարոզչական կարծրատիպերը, քանի որ այդ ժամանակ Թուրքիայում դաշնակցական հայեր կամ նրանց սատարողներ դժվար թե լինեին և մանավանդ համախմբվեին «Մարմարա»-ի պես զգուշավոր և քաղքենի թերթի շուրջ: Այդ խումբը, ըստ փոխիյուպատոսի թշնամաբար էր տրամադրված Գարեգին Խաչատուրյան պատրիարքի նկատմամբ և անձամբ Աբրահամյանը «Մարմարա» թերթին է փոխանցել իր ձեռքն անցած 1960 թ. մայիսի 5-ի թվագիր մի նամակ, որում իբրև թե Հայոց պատրիարքն

իր գորակցությունն է հայտնում այն ժամանակվա վարչապետ Ազիս Մենդերեախին և պաշտպանում կառավարության քայլերն ընդդեմ ուսանողական բողոքի ցույցերի և նաև դրանց դաժան մեթոդներով ցրելու հարցում<sup>12</sup>: Այդ նամակը հրապարակվել է «Մարմարա» թերթում 1960 թ. սեպտեմբերին, այսինքն՝ երբ արդեն տապալված էր նախկին իշխանությունը և դրա գրեթե բոլոր անդամները ձերբակալված էին: Հիշյալ նամակը այնուհետ արտատպվում է նաև թուրքական մամուլում և դառնում մեծ աղմուկի պատճառ, անգամ սկսում են պահանջել Գարեգին պատրիարքի հրաժարականը: Այս ամենի խորքային պատճառներից էր նաև պայքարը պատրիարքական աթոռի համար, քանի որ Գարեգին Խաչատուրյանն արդեն տարեց էր և ակտիվորեն քննարկվում էր նրա հաջորդի հարցը: Ըստ Յուսուպովի, «դաշնակցամետ» խմբավորումը ցանկանում էր այդ աթոռին տեսնել Մահակ Փափազյանին, որի ընտրվելու պարագայում պատրիարքության կարևոր պաշտոնները «կզավթվեն դաշնակցականների կողմնակիցների կողմից»<sup>13</sup>: Այս քայլերը, թերևս ճիշտ կլինի որակել որպես ոչ թե դաշնակցականների, այլ արևմտյան որոշ ուժերի կողմից կազմակերպվող և ուղղորդվող:

Ըստ մեկ այլ արխիվային փաստաթղթի՝ 1961 թ. Ստամբուլում ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսության պատրաստած տեղեկանքի, Հայոց պատրիարքի պաշտոնին թուրքական հասուն ծառայությունները ցանկացել են տեսնել Խորեն եպիսկոպոս Բարոյանին: Սակայն և՛ համայնքի մեծամասնությունը, և՛ հանգուցյալ Գարեգին պատրիարքը, և՛ ԽՍՀՄ-ը, իհարկե ոչ բացահայտ, ցանկացել են, որպեսզի պատրիարք ընտրվի Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը: Ինչպես նշված է Ստամբուլում ԽՍՀՄ դեսպանատնից ուղարկված գաղտնի դասիչով զեկուցագրում. «Գլխավոր հյուպատոսությունը (ԽՍՀՄ-ի Ռ.Մ.) գործում է հայ համայնքում վստահելի անձանց միջոցով, ձեռնար-

<sup>10</sup> ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 179, թ. 34:

<sup>11</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 293, թ. 7:

<sup>12</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 293, թ. 8:

<sup>13</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 293, թ. 8:

կում է միջոցներ, որպեսզի ընտրվի Գալուստյանը»<sup>14</sup>: Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ԽՍՀՄ հյուպատոսությունը արտաքին գործերի նախարարությանն է ներկայացնում առաջարկների մի փաթեթ, որը նպատակ ուներ սերտացնել հարաբերությունները Պոլսո հայ համայնքի և Խորհրդային Հայաստանի միջև, ու մեծացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ազդեցության աճը պատրիարքության հարցերում: Ցոթ կետից բաղկացած առաջարկների հիմնավորումը հետևյալն էր. «Ելնելով այն հանգամանքից, որ հայերը Ստամբուլում կարևոր դեր են խաղում տնտեսական և մշակութային կյանքում, ինչպես նաև էական դեր քաղաքական կյանքում, գլխավոր հյուպատոսությունը իր խնդիրն է համարում ընդլայնել և ակտիվացնել աշխատանքները հայ համայնքում»<sup>15</sup>:

Պատրիարքի թեկնածուների վերաբերյալ արտահայտվել է նաև Վազգեն Վեհափառը, ով հրապարակավ հայտարարել է, թե ով է ընտրվի պատրիարք, նա ընդունելի կլինի իր համար, սակայն համայնքի վրա ազդեցություն ունեցող գործիչների հետ ոչ պաշտոնական հանդիպումների ժամանակ, ինչպես տեղեկացնում են արխիվային փաստաթղթերը, Կաթողիկոսը խորհուրդ է տվել ընտրել հենց Շնորհք արքեպիսկոպոսին<sup>16</sup>: Ի դեպ, ավելի ուշ ԽՍՀՄ պաշտոնյաների հետ իր գաղտնի գրույցի ժամանակ Վազգեն Վեհափառը նշել է, որ «Ստամբուլում զբաղվել է պատրիարքի թեկնածուի հարցով»<sup>17</sup>: Այս հանգամանքը կարծում ենք նաև շատ բնական և օրինակալի պետք է համարել, քանի որ Հայ Առաքելական եկեղեցու չորս նվիրապետական աթոռներից մեկի՝ Պոլսո Հայոց Պատրիարքության խնդիրը գտնվելու էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուշադրության և հոգածության ներքո<sup>18</sup>:

<sup>14</sup> ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 179, թ. 34:

<sup>15</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 293, թ. 9:

<sup>16</sup> ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 179, թ. 34

<sup>17</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 41, թ. 6:

<sup>18</sup> Ավելորդ չենք համարում նշել, որ Պոլսո Հայոց պատրիարքի ընտրության հարցն անգամ ավելի վաղ նույնպես եղել է Ամենայն Հայոց կաթողիկոսների

Ի վերջո, 1961 թ. հոկտեմբերի 11-ին տեղի ունեցած ընտրություններում Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանն ընտրվել է Պոլսո Հայոց պատրիարք: Ի դեպ, մինչև ընտրությունները թուրքական իշխանությունների Շնորհք արքեպիսկոպոսին քաղաքացիություն չտալու և ընտրությունները արտոնելու հարցը քննարկելու պարագայում հայ համայնքը մտադիր է եղել իրականացնել ընտրությունները և իշխանություններին կանգնեցնել փաստի առաջ<sup>19</sup>: Շնորհք արքեպիսկոպոսը դառնում է Պոլսո Հայոց 82-րդ պատրիարքը ու իր գահակալության տարիներին ակտիվ գործունեություն ծավալում, նպաստում համայնքային տարատեսակ խնդիրների լուծմանը և էլ ավելի սերտացնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և անձամբ Վազգեն Առաջինի հետ հարաբերությունները: Նկատենք նաև, որ տարատեսակ համահայկական ծրագրերում, խնդիրներում և՛ Պոլսո պատրիարքությունը, և՛ անձամբ Շնորհք պատրիարքը որդեգրել են ոչ թե կրավորական և զգուշավոր պահվածք, այլ հնարավորության սահմաններում ակտիվորեն ընդգրկվել և նպաստել համահայկական խնդիրների լուծմանը: Այսպիսով, շնորհիվ երջանկահիշատակ Վազգեն Կաթողիկոսի հմուտ, իմաստուն գործունեության, հնարավոր է եղել կոնկրետ հիշատակված դրվագում ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների շահերը համադրել Հայ Առաքելական եկեղեցու և հայ ժողովրդի կոնկրետ շահի հետ և հասնել արդյունքի: Այդ նպատակի համար Վազգեն Առաջինի արած արարողակարգային որոշակի զիջումները արդարացված էին, իսկ դրանց անհարկի շահարկումներն անթույլատրելի:

ուշադրության կենտրոնում: Օրինակ՝ 1925 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Հինգերորդն իր մտահոգությունն է հայտնել Պոլսո Հայոց պատրիարքի ընտրությունը չարտոնելու կապակցությամբ, որի առիթով ստացել է պատրիարքի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանի պարզաբանումները: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3941, թ. 1-2:

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 179, թ. 34:

О НЕКОТОРЫХ ДАННЫХ О ВИЗИТЕ КАТОЛИКОСА  
ВАЗГЕНА ПЕРВОГО В ТУРЦИЮ В 1961

(при свете архивных документов)

*Рубен Мелконян*

(резюме)

Редкие и контингентные общения разных чиновников Турецкой Республики (созданная в 1923) и Советской Армении в большинстве случаев имели либо технические-организационные, или символические-протокольные характеры, что было логично для имеющихся обстоятельств. Визит Вазгена Первого в Турцию в 1961 имела не только религиозный, а ещё политический и протокольный компонент. Личный харизматичный характер Католикоса и его положение сделали этот визит достаточно центральным и примечательным.

ABOUT SOME DETAILS OF CATHOLICOS VAZGEN I'S VISIT  
TO TURKEY IN 1961

(under the light of archival documents)

*Ruben Melkonyan*

(summary)

Turkish Republic's (founded in 1923) and Soviet Armenia's different officials' rare and contingent contacts mainly had either technical-organizational or symbolic-protocologic character, which was really logical in existing conditions. In 1961 Armenian catholicos Vazgen I's visit to turkey contained not only religious, but also political and protocologic components. Catholicos's personal charismatic character and his condition have turned that visit very central and remarkable for that very time.

*Ալեքսանդր Սաֆարյան*

ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԶԻՅԱ ԳՅՈՔԱԼՓԻՑ  
ՀԱՐՅՈՒՐ ՏԱՐԻ ԱՆՑ

*Բանալի բառեր՝ թյուրքականություն, գաղափարախոսություն, Զիյա Գյոքալփ, օսմանիզմ, թուրքերեն, Միջին Ասիա*

Զիյա Գյոքալփի (1876-1923 թթ.)՝ գաղափարախոսական փնտրտուրը, որի գերխտացումն արտացոլված է «Թյուրքականության հիմունքները» աշխատությունում, էությունական-կանխորոշիչ դեր էր ունենալու թուրքական սոցիոլոգիական, քաղաքագիտական, պատմագիտական, տնտեսագիտական, մանկավարժական, լեզվաբանական ու գրականագիտական մտքի պատմության մեջ, այն տեսական հենք էր ձևավորելու Մուսթաֆա Քեմալ-Աթաթուրքի տարբեր ռեֆորմների կենսագործման, քեմալական Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքական գարգացումների համար<sup>1</sup>: Բնականաբար, թե՛ Թուրքիայի Հանրապետությունում, և թե՛ գյոքալփյան բնութագրմամբ «թուրքական աշխարհում» ընթանալու էին և այնպիսի քաղաքական ու մշակութային գործընթացներ, որոնք էականորեն շեղվելու էին Զիյա Գյոքալփի «մարգարեական» կանխատեսումներից: «Թուրք» և «թյուրք» հասկացությունների տարանջատումն իսկ, որը գյոքալփյան ժամանակներից մեկ դար անց բնական ու օրինաչափ

<sup>1</sup> Պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի վարիչ: Էլ. փոստ՝ [alexander-safarian@ysu.am](mailto:alexander-safarian@ysu.am)

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Alexander Safarian, Ziya Gökalp on National Education, "Iran and the Caucasus", Volume 8.2, BRILL, Leiden-Boston, 2004, pp. 219-229, Ալ. Սաֆարյան, Խորհրդային արևելագետները՝ Զիյա Գյոքալփի մասին, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), 11-րդ հատոր, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 512-526, նույնի Թուրքական գյոքալփագիտության պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 2 (647), Երևան, 2016, էջ 86-93:

է դարձել ոչ միայն ռուսաստանյան, այլև նախկին խորհրդային գիտական ավանդույթները շարունակող բոլոր երկրների (այդ թվում՝ Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների) արևելագետների համար, ոչ միշտ է ընդունվում արևմտյան ու հատկապես համաթյուրքական գաղափարների ազդեցությունը կրող թուրք մասնագետների շրջանում. «Türk» բառը հաճախ վերագրվում է ոչ միայն թուրքերին, այլև թյուրքական լեզվաընտանիքի կամ խմբի բոլոր ժողովուրդներին: Այնուամենայնիվ, հատկապես վերջին տարիներին (անշուշտ, նաև նախկին ԽՍՀՄ փլուզումից հետո նոր թյուրքալեզու ինքնիշխան պետությունների գոյության փաստը հաշվի առնելով) նույնիսկ որոշ թուրք հետազոտողներ ու հրապարակախոսներ պարզապես ստիպված են օգտագործել «Türk halkları» («թյուրքական» կամ «թուրքական ժողովուրդներ») գիտաբառը, որն, իհարկե, դեռևս լայն կիրառություն չի ստացել, քանզի, հիրավի, այդ արտաքննապես գուտ եզրաքանակյան հիմնահարցն իրականում ունի որոշակի քաղաքական հիմքեր<sup>2</sup>: Ինչպես ակնհայտ զգուշավորությամբ նշում է ռուսաստանյան առաջատար թյուրքագետ Ս. Ֆ. Օրեշկովան, վերոհիշյալ հարցի քաղաքական արմատները պայմանավորված են այն պատմական իրողությամբ, որ «միջպետական սահմանները արգելք էին հանդիսանում ազգակից ժողովուրդների միջև բնական մշակութային կապերին ու մեկմեկու մասին գիտելիքների կուտակմանը: Ավելին, գոյություն ունեին այնպիսի դոկտրիններ, ինչպես պանթուրքիզմը կամ թուրանիզմը, որոնք փորձում էին էթնիկական կամ մշակութային ընդհանրությունն օգտագործել որպես նվաճումների քաղաքականության ու պետական սահմանների վերաձևման հենք... Պանթուրքիզմի մեջ մեղադրանքները խորհրդային ժամանակաշրջանում օգտագործվում էին որպես ԽՍՀՄ թյուրքական ժողովուրդների ազգա-

<sup>2</sup> St' u С. Ф. Орешкова, Некоторые размышления о развитии тюркологии и османистики. Turcica et Ottomanica: Сборник статей в честь 70-летия М. С. Мейера, Москва, 2006, стр. 15:

յան մտավորականության դեմ բռնաճնշումների և նրա մշակութային նախաձեռնությունների կանխման հիմնական շարժառիթ... Խորհրդային Միության փլուզումից հետո նախկին ԽՍՀՄ թյուրքական ժողովուրդների՝ երբեմնի արգելքների հանգեպ բնական հակազդեցությունը դարձավ իրար, հատկապես՝ արտերկրի թյուրքերի նկատմամբ հարաձուն հետաքրքրություն: Հատկապես գրավիչ էր թվում պետական շինարարության ու մշակութային զարգացման ասպարեզում թուրքական փորձը: Թուրքերի համար նախկին խորհրդային տարածաշրջանի թյուրքական ժողովուրդների հետ առավել սերտ շփումը նույնպես ուսուցողական և օգտակար եղավ: Իհարկե, ի հայտ եկան նաև սեփական էթնիկական խմբում լիդեր և նույնիսկ քաղաքական ղեկավար դառնալու հույսեր: Բայց գլխավորն այն է, որ ընդայնվեց նրանց էթնո-ազգային պատկերացումների հորիզոնը, այդ թվում՝ թյուրքական աշխարհում բազմաձևության և այն ազգակից ժողովուրդների բազմազանության մասին, որոնք ունեին իրենց սեփական ճակատագիրը, մշակույթի և արժեհամակարգի առանձնահատկությունները (ընդգծումն իմն է - Ս. Ս.)<sup>3</sup>:

Թյուրքականության՝ «ցեղային», «աշխարհագրական», «ժողովրդական» ուղղությունների, օսմանիզմի և պանիսլամիզմի ջատագովների «գնահատականների» առաջ քաշած դրույթները մերժող և այսպես կոչված «մշակութային թյուրքականության» դիրքերից հանդես եկող (ազգային ինքնագիտակցության գործոնն առաջնային դասող) գաղափարախոսի համար ազգը լեզվական, կրոնական, բարոյական ու գեղագիտական ընդհանրություն ունեցող, այսինքն՝ մինևույն դաստիարակությունը ստացած անհատներից կազմված մի խումբ (կոլեկտիվ) էր: Թյուրքագետները վաղուց արձանագրել են այն ակնհայտորեն հակասական իրողությունը, որ առաջին պլան մղելով թուրքերի՝ դեռ նոր ձևավորվող ազգային ինքնագիտակցության գործոնը, Զիյա Գյոքալփը փորձում էր այն վերագրել (ավելի ճիշտ՝ նե-

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 15-16:

րարկել կամ պարտադրել) թյուրքալեզու մյուս ժողովուրդներին... Միաժամանակ թյուրքականության գաղափարախոսն ակնհայտորեն ծայրահեղ անհանդուրժողականություն էր պրոպագանդում Օսմանյան կայսրության կողմից նվաճված տարածքներում ապրող բնիկ ազգերի (հույների, հայերի, ասորիների, արաբների) անհամեմատ ավելի վաղ ձևավորված ազգային ինքնագիտակցության նկատմամբ՝ «*Թյուրքականության հիմունքներում*» անթաքույց ու վճռականորեն հայտարարելով, որ պետք է թյուրք համարել բոլոր նրանց, ովքեր ասում են, որ իրենք թյուրք են ու պատժել բոլոր նրանց, ովքեր կրավաճանեն «թերթությանը» ("...Caiz olmadıgından "Türküm" diyen her ferdi Türk tanımaktan, yalnız Türklüğe hiyaneti görülenler varsa, cezalandırmaktan başka çare yoktur.")<sup>4</sup>:

Եթե Օսմանյան կայսրության մայրամուտի, առավել ևս՝ հանրապետական Թուրքիայի կայացման տարիներին լեզվական բարեփոխումները ժամանակի հրամայական պահանջն էին, այսուհանդերձ, թյուրքական լեզուների ազգակցության հիման վրա Թուրքիայի հովանու ներքո թյուրքալեզու ժողովուրդների բռնի միավորման, անգամ բուն Թուրքիայում տվյալ ժամանակաշրջանում դեռևս գրական լեզվի կարգավիճակ չստացած Ստամբուլի խոսակցական թուրքերենը և նրա հենքի վրա ձևավորված գրականությունը՝ որպես «համաթյուրքական լեզու» և «համաթյուրքական գրականություն» բոլոր «թուրքերին» (իմա՝ թյուրքական ժողովուրդներին) պարտադրելու գյոքալփյան և այլոց պանթուրքիստական սխեմատիկ գաղափարները բացարձակապես անիրականանալի էին ոչ միայն այն պատճառով, որ բախվելու էին պանթուրքիզմին թշնամական «ռուսական» կամ «սոցիալիզմի» գործոններին<sup>5</sup>, այլև Գյոքալփի կողմից

<sup>4</sup> "Türkçülüğün Esasları", s. 17.

<sup>5</sup> Թուրքիզմի նկատմամբ նախ «բարյացկամ», ապա «ներողամիտ» կամ «վախվորած», իսկ պանթուրքիզմի նկատմամբ անգիշող դիրքորոշումը «կարմիր թելի» պես է անցնում խորհրդային թուրքագետների տարաբնույթ մենագրություններում և դասագրքերում՝ անկախ նույնիսկ խորհրդաթուրքական հարա-

մտումնավոր կերպով անտեսվող թյուրքական տարբեր ժողովուրդների արդեն ձևավորված ազգային ինքնագիտակցությանը, նրանց գրական լեզուների և ուրույն մշակույթների պատմական զարգացման ակնհայտ իրողություններին...<sup>6</sup>

Խորհրդային Միության փլուզումից հետո էլ Թուրքիան, վերանայելով իր արտաքին քաղաքականությունը, արձագանքելու էր թյուրքալեզու նորանկախ պետություններում արթնացող ազգայնական գաղափարներին ու փորձելու էր օգտագործել կրոնական ու լեզվական ազգակցության ընդհանրությունը, լցնել առեղծված քաղաքական վակուումը: Բնականաբար, այս մթնոլորտում քաղաքական խաղաթղթերի կապուկից նորից դուրս էր եկանվելու «Թուրքիայում երբեք չսպառված, այսպես կոչված «թուրքական միասնության» գաղափարը, որը 1990-ականներից սկսած, առավել ակտիվ քննարկման առարկա է դարձել թուրքական զանգվածային լրատվամիջոցներում, գիտական ու հա-

---

թերությունների «մակընթացություններից ու տեղատվություններից»: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո որոշ ռուսաստանյան, և հատկապես ադրբեջանական արևելագետների աշխատություններում ավանդական քեմալաժետությանը զուգահեռ կարելի է հանդիպել Օսմանյան կայսրության պատմության գունագարդան, մասնավորապես այդ դաժան պետականությունը որպես կրոնական հանդուրժողականության տիպար ներկայացնելու, ինչպես նաև ռուս-թուրքական բազմադարյան երկրաքաղաքական հակամարտությունը «մեղմելու» անփող փորձեր: Մանրամասն տե՛ս Գ. Մելիքյան, Ալ. Սաֆարյան, Ակադեմիկոս Վաղմիսի Գորդլիսկին՝ հայագիտական հիմնահարցերի մասին, «Արևելագիտության հարցեր», VII, Երևան, 2012, էջ 148-165: Գ. Մելիքյան, Ալ. Սաֆարյան, Լոր օսմանականության հիմնահարցերը և հետխորհրդային թյուրքագիտությունը, Հայոց ցեղասպանության ժխտողականությունը Լոր օսմանականության գաղափարախոսության համատեքստում, Երևան, 2016, էջ 56-81:

<sup>6</sup> St' u Tekin Talât M. , Pantürkizm Ülküsü ve Dilde Birlik "İddiası", "Türk Dili"(Ayhık Dil ve Yazın Dergisi), Yıl 27, Cilt XXXVI, Sayı 310, 1 Temmuz 1977, s. 15-18, մանրամասն տե՛ս նաև Ալ. Սաֆարյան, Քեմալականների լեզվական քաղաքականության ակունքներում. Զիյա Գյոքալփի լեզվաբանական հայացքները, «Ժամանակակից Եվրասիա» (խմբ. Ռ. Սաֆրաստյան), Հատոր III (2), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2014, էջ 52-76, նույնի Զիյա Գյոքալփը թուրք բանահյուսության և գրականության մասին, «Արևելագիտության հարցեր», X, Երևան, 2015, էջ 150-174:

սարակական, քաղաքական ժողովներում»<sup>7</sup> : Միաժամանակ փաստ է, որ «համաթյուրքական» արժեքների վերհանումը և տարբեր ոլորտներում «միջթյուրքական» համագործակցության հիքրավի լայնամասշտաբ ծավալումը նորանկախ թյուրքալեզու պետությունների քաղաքական ու մշակութային էլիտաների կողմից մեծամասամբ ընկալվելու էին որպես հսկա հարևանների շրջապատին ադապտացվելու որոշակի մեխանիզմ<sup>8</sup>, սակայն «դասական պանթյուրքիզմի» քաղաքականությունն իրատեսուրեն ու միանշանակ կերպով մերժվելու էր, քանզի ուղղակիորեն հակասում էր թե՛ վերոհիշյալ պետությունների ինքնիշխանությանը, թե՛ դազախական, դրոզական (կիրգիզական), ուզբեկական, թուրքմենական իրական ազգային ինքնագիտակցությա- նը... Այսօր դազախերենը, ուզբեկերենը, կիրգիզերենը (դրոզերե- նը), թուրքմեներենը ոչ միայն հարուստ գրական ավանդույթներ ունեցող, այլև թե՛ դե յուրե, և թե՛ դե ֆակտո ինքնիշխան երկր- ների սահմանադրությամբ ամրագրված պետական լեզուներ են, և նրանց բարբառ, թե լեզու որակելու հարցադրումն իսկ, ան-

<sup>7</sup> Նախկին Խորհրդային Միության փլուզումից հետո Թուրքիայում «թուրքա- կան միասնության» գաղափարի՝ որպես պանթյուրքիզմի նոր դիմակավոր- մամբ աննախադեպ աշխուժացման մասին մասնավորապես տե՛ս Անուշ Հով- հաննիսյան, ԽՍՀՄ-ի փլուզումը, «թուրք միասնության» գաղափարը և դարա- բաղյան հարցը (1990-95-ականների թուրքական հրապարակումների լուսա- բանամամբ), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2001, էջ 74-81:

<sup>8</sup> Մասնավորապես տե՛ս Մ. Բ. Կատիմով, Մ. Մ. Կատիմովա, Глобализация демографии, Центральнo-Азиатский университет, Алматы, 2010. Հիշարժան է, որ սույն ուսումնական ձեռնարկի մեջ (որի համահեղինակը՝ Մակաշ Տա- տիմովը, ամենաճանաչված դազախստանյան հասարակագետներից էր), ստալինյան բռնապետության տարիների մասին գրելիս, հատուկ նշում է, որ «դազախական էթնոցիդը XX դարի նույնպիսի ազգային, իրապես ժողովրդա- կան ողբերգություն է, ինչպես հայտնի հայկական ցեղասպանությունը (քննարկում՝ известный армянский геноцид) կամ հրեական հոլոքոստը»: Տե՛ս նույն տեղում, էջ 111:

շուշտ, անհեթեթ կամ վիրավորական է հնչում Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրներում<sup>9</sup>:

Պանթյուրքիստական գաղափարներն ու հոետորաբանությու- նը հետխորհրդային հանրապետություններից առավել լայն տարածում ունեն Ադրբեջանում, ինչը պայմանավորված է տար- բեր հանգամանքներով<sup>10</sup>: Այսուհանդերձ, նույնիսկ «մեկ ազգ՝ երկու պետություն» կարգախոսով երկրորդ թուրքական պետա- կանություն հռչակվելու հավակնորդ Ադրբեջանի Հանրապե- տության Մահմանադրության մեջ՝ ուլտրապանթյուրքիստների ցանկությամբ ու «կոմպրոմիսային» տարբերակով «ադրբեջա-

<sup>9</sup> Թյուրքական ժողովուրդների լեզվամշակութային առանձնահատկություն- ների, ինչպես նաև հետխորհրդային տարածքի երկրների թյուրքագետների ֆոն ծավալվող համագործակցության առավել արդյունավետ ուղղություն- ների մասին մասնավորապես տե՛ս Ա. Симомян, А. Сафарян, Об изучении вопросов тюркской филологии в Армении, Актуальные вопросы отечественной и зарубежной иранистики международная научно-практическая конференция, Казань, 15-16 мая 2015 года, стр. 244-249, А. Сафарян, Ж. Адилбаев, Об армяно- казахских культурных связях и научном сотрудничестве между Арменией и Казахстаном, Вестник Евразийского национального университета имени Л.Н. Гумилева, (Научный журнал), №1 (110), III, Астана, 2016, стр. 113-118.

<sup>10</sup> Այս թեմատիկայով հսկայածավալ գրականությունից մասնավորապես տե՛ս Դավիդ Բաբայան, Арцахская проблема и идеология пантюркизма, - 21-й век (информационно-аналитический журнал фонда «Нораванк»), №4(20), Ереван, 2011, стр. 67-99, ինչպես նաև մեր համեստ հրապարակումներից հետևյալ- ները՝ Է. Քոթանջյան, Ալ. Սաֆարյան, Հայացք հայ-թուրքական հարաբերու- թյուններին՝ երկրաշրջանի զարգացման կոնտեքստում, «Տարածաշրջանային հետազոտություններ», պրակ 1, (հայերեն, անգլերեն), Երևան, 1996, Haik Kotanjian, Alexander Safarian, Die Isolation veranlaßt Armenien enge Beziehungen zu Georgien zu suchen, «Wostok» (Informationen aus dem Osten für den Westen), Nr. 2/97, 1997, s. 21-23, Alexandre Safarian, Arménie – Turquie: en finir avec le dernier mur de la honte, «France - Arménie». Tout sur l'Arménie. Hors Série, 2006, Paris, p. 284-285, Ար. Սաֆարյան, Ալ. Սաֆարյան, «Ֆուտրոլային դիվանա- գիտության» արտացոլումը Թուրքիայի ԶԼՄ-ներում, «Աշխատանքային տետրեր», հ. 3-4 (7-8), Երևան, 2008, էջ 184-196, A. Safaryan, R. Melkonyan, A View of Armenian-Turkish Relations, Warsaw East European Conference 2010, Where are we?, Post-Communist and Post-Soviet Countries over past twenty years. (Bibliotheca Europae Orientalis, XXXVI), Abstracts, parva 5, Warsaw, 2010, p. 42:

նական թուրքերեն» ձևակերպվելիքն իսկ իրականում որպես պետական լեզու ամրագրված, վաղուց արդեն և անշրջելիորեն նորմավորված - գրականի կարգավիճակ ստացած (հնչյունական, քերականական ու բառապաշարի առումներով ժամանակակից թուրքերենից էականորեն տարբերվող) աղբբեջաներենն է, թեև այն ներկայումս էլ Թուրքիայում առավելապես և ավանդաբար շարունակվում է կոչվել «աղբբեջանական բարբառ» (Azeri lehçesi): Բնականաբար, Աղբբեջանի Հանրապետությունում հավատացյալ մուսուլմանների (այդ թվում ոչ միայն թուրքալեզու աղբբեջանցիների, այլև թալիշների) ճնշող մեծամասնությունն այսօր էլ շիականության հետևորդներ են, և նրանց դավանական ինքնագիտակցությունն ամեննին էլ ստորադասված չէ Զիյա Գյոքալփի երազած «թուրքական» ազգային ինքնագիտակցությանը...

Թեև, ինչպես պարզորոշ երևում է «Թուրքականության հիմունքների» տեքստի կոնկրետ վերլուծությունից, Զիյա Գյոքալփը 20-ական թվականներին էլ համոզված էր, որ թուրքականության՝ իր բնութագրմամբ երկրորդ փուլի՝ օղուզականության (Oğuzculuk), իրականությունն դառնալու գլխավոր խոչընդոտը բացառապես քաղաքական է (Խորհրդային Ռուսաստանն է), այսօր՝ Խորհրդային Միության փլուզումից երկու տասնամյակ անց, ակնհայտ է, որ նույնիսկ «մեկ ազգ՝ երկու պետություն» կարգախոսը հակահայկական, հակառուսական կամ հակաիրանական նպատակներով անհարկի շահարկող աղբբեջանական շրջանակները պրագմատիկորեն փայլուն կերպով են գիտակցում այն սահմանը, որը բաժանում է թուրքական և աղբբեջանական քաղաքական, տնտեսական, կրոնական, մշակութային էլիտաների իրական շահերը:

Թուրքիայի Հանրապետության՝ դե-յուրե ազգայնական հռչակված, բայց դե-ֆակտո ազգայնամոլական, խիստ կենտրոնացված քեմալական պետականության կերտողները կրթության ու դաստիարակության ոլորտներում որդեգրելու էին գյոքալփյան մանկավարժական հայեցակարգի հատկապես այն

ընդլայնները, որոնք հստակորեն նպատակաուղղված էին թուրքազգային (փաստացի նաև՝ իսլամական կրոնական) ինքնութունը պահպանելու պայմանով արևմտյան քաղաքակրթության համակարգին ինտեգրվել ջանացող հասարակության անդամի, ազգային իդեալի անվերապահ գերակայությունն իբրև հիմնաբար սկզբունք ընդունող պետության քաղաքացու ձևավորմանը<sup>11</sup>: Հատկանշական է նաև, որ Զիյա Գյոքալփը ելնում էր թուրքերի՝ ակախում մաթուրիդիական մեզհեբին և ֆիկհում հանիֆիական մեզհեբին հավատարիմ լինելու հավատամքից՝ մինչև շեղամ քաղաքականությունում ժողովրդականությունը և մշակույթում թուրքականությունը համոզմունք ու գործելակերպ դարձնելու կանոն - բանաձևը ձևակերպելիս ու փաստարկելիս<sup>12</sup>:

20-րդ դարում և 21-րդ դարի սկզբին «թուրքական ֆեմինիզմի» կենսագործումը նույնպես կապվելու էր թուրքականությանը, այլ ոչ մշակութային բազմակազմությամբ կամ աշխարհաքաղաքացիության մոդելներին: Ակնհայտ է, որ կանանց իրավահավասարության հաստատմանը նպատակաուղղված քեմալական ռեֆորմների սրբնթացությունը և հետևողականությունը դժվար կանխատեսելի էր նույնիսկ այդ ռեֆորմների տեսական ակունքներում կանգնած Զիյա Գյոքալփի համար. այսուհան-

<sup>11</sup> Տե՛ս նաև Ալ. Սաֆարյան, Զիյա Գյոքալփը՝ կրթության և դաստիարակության հիմնահարցերի մասին, «Արևելագիտական ժողովածու», հ. 5, (խմբ.՝ Գ. Վ. Մելիքյան), ԵՂՀ, Իրանագիտության կովկասյան կենտրոնի հրատ., Երևան, 2004, էջ 288-309, Alexander Safaryan, Ziya Gokalp On National Education, "Iran and the Caucasus", vol. 8.2, Brill, Leiden- Boston, 2004, pp. 219-229:

<sup>12</sup> Մասնավորապես տե՛ս "Türkçülükün Esasları", s. 124: Թուրքիայի հետագա մոդեռնիզացիայի ուղիների մասին բանավեճերում 21-րդ դարի սկզբին էլ առաջին պլանում են Աթաթուրքի գաղափարական ժառանգության և իսլամի հիմնահարցերը: Ակնհայտ է ինչպես թուրք հասարակության մեջ իսլամամետ ուժերի ազդեցության աճը, այնպես էլ 2002 թվականից առ այսօր իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության և «Աթաթուրքյու» ուժերի դավանած սկզբունքների բախումը: Տե՛ս Բ. Մ. Ягудин, Исламский фактор и его влияние на конституционные процессы в Турции, - Turcica et Ottomanica... Москва, 2006, стр. 395-396:



դերձ ու բնականաբար, Թուրքիայի Հանրապետությունում (հատկապես՝ գավառում) պաշտոնական օրենսդրությունը դեռ երկար տասնամյակներ պարզապես ի գորու չէր լինելու դուրս մղել փաստացի գործող դարավոր կրոնաավանդությանը իրավունքը, որը կանխատեսելիորեն նորովի էր հատնելու իսլամամետ քաղաքական ուժերի իշխանության դարաշրջանում...<sup>13</sup>

Թուրք, արևմտյան ու նախկին Խորհրդային Միության պատմաբանների ու տնտեսագետների աշխատություններում լայնորեն տարածված է այն տեսակետը, որ քեմալական առաջնորդների պետական կապիտալիստական տնտեսվարման խորացման ուղղությամբ եռանդուն գործունեությունը («կոնստրուկտիվ էտատիզմ»), պետական կապիտալ տնտեսության վերակենդանացման համար հրատապ խնդիրների լուծմանն ուղղելը պայմանավորված էր օսմանյան անմիաթար ժառանգությամբ, հետպատերազմյան անհաղթահարելի թվացող սոցիալ-տնտեսական իրողություններով ու մանավանդ քաղաքական մարտահրավերներով: Ինչպես հայտնի է, արդեն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո էտատիզմի դոկտրինը սկսեց դուրս մղվել «խառը էկոնոմիկայի» տեսությամբ, իսկ 60-ական թթ. առաջ քաշվեց «նոր էտատիզմի» կարգախոսը: Տասնամյակներ անց էտատիզմը կարող է գնահատվել որպես թուրք ազգային ձեռներեցության կայացման արագացմանը նպաստակա ուղղված գործիք: Առևտրի և արդյունաբերության ոլորտներում թուրք ազգային ձեռներեցությունը նախապես հենվելու էր ոչ այնքան օտարերկրացիների, որքան Օսմանյան կայսրության տնտեսական կյանքը ավանդաբար վերահսկող<sup>14</sup> կրոնական-

<sup>13</sup> Տե՛ս նաև Ալ. Մաֆարյան, Զիյա Գյոքալիլը՝ Թուրք կանանց իրավունքների մասին, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. 4, (խմբ.՝ Ռ. Հ. Մաֆրաստյան), Երևան, 2006, էջ 13-38, Alexander Safaryan, On the History of Turkish Feminism, "Iran and the Caucasus", vol. 11.1, Brill, Leiden-Boston, 2007, pp. 141-152:

<sup>14</sup> Մանրամասն տե՛ս Հ. Աճառյան, Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ (խմբ.՝ Պ. Մ. Մուրադյան), Երևան, «Զանգակ-97», 1999, էջ 12, 16-19, Զ. Կիրա-

ազգային փոքրամասնությունների՝ հունական ու հայկական հիլեթների ներկայացուցիչների սեփականության վրա: Նախ Օսմանյան կայսրությունում, այնուհետև նաև Թուրքիայի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների՝ պետականորեն իրագործված ունեզրկման անվիճելի իրողությունը բազմիցս արձանագրվել է թե՛ արևմտյան, և թե՛ խորհրդաբարձրական հարաբերությունների պարտադրանքով կաղապարված նախկին Խորհրդային Միության հետազոտողների աշխատություններում. հիշարժան է, մասնավորապես, Դմիտրի Երեմենկի՝ 20-րդ դարակազմի իրողությունների նկարագրությունը. «Զգուշելով դուրս մղել այլազգի գործընկերներին նրանց գրաված շահեկան դիրքերից՝ թուրքական բուրժուազիան ավելի և ավելի հաճախ է դիմում «անթույլատրելի միջոցների»: Չարդերն ու կոտորածը դառնում են թուրքական խանութպանների, մեծագործ մսավաճառների ու կուլակների հիմնական հաղթաբուլլը մրցակցային պայքարում: Անատոլիական բուրժուայի դաժանությունը ծագում է ամենևին էլ ոչ ուժից, ընդհակառակը՝ անկարությունից, թերգարգացածությունից, անլիարժեքության զգացումից: Ժանգոտ նախանձը դեպի հաջողակ հարևան քրիստոնյան, որը տարիներով ծվատել է բուրժուականացած քաղբեռու ներքին էությունը, պայթում է ջարդարարի պաթոլոգիական մոլեռանդությամբ: Մրցակիցների նկատմամբ իր ատելությունը թուրքական բուրժուազիան տեղափոխում էր «այլազգիների և այլադավանների» ամբողջ զանգվածի վրա, հրահրում էր սեփա-

կության, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916թթ., Երևան, 1965, էջ 58-62, Հր. Ռ. Միմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 287-288, Ն. Լ. Գիևոսյան, Հայ վաճառականներն Օսմանյան կայսրությունում (19-րդ դարի երկրորդ կես - 20-րդ դարի սկիզբ), «Օրիենտալիստ», սրակ 7-8, Երևան, 2008, էջ 124-138, Ариадна Тыркова, Старая Турция и младотурки, (Год в Константинополе), П., 1916, стр. 131-132, О. Г. Инджикян, Буржуазия Османской империи, Ереван, 1977, стр. 258:

կան ժողովրդին հայերի, հույների և այլ ազգային փոքրամասնությունների դեմ»<sup>15</sup>:

Զիյա Գյոքալփի պոեզիայում, հրապարակախոսության, կոնկրետ նաև «Թյուրքականության հիմունքները» գրքի մեջ վկայված էթնոկենտրոն տնտեսական զարգացման իդեալը, «ազգային տնտեսության» պաշտպանության դրույթներն առավել կամ պակաս ակտիվությամբ կյանքի են կոչվել ոչ միայն երիտթուրքական կառավարման, այլև Թուրքիայի Հանրապետության պատմության մի քանի տասնամյակների ընթացքում<sup>16</sup>: Գրեթե ողջ 20-րդ դարի ընթացքում թուրքական իշխանությունների ազգային փոքրամասնությունների (հայերի, հույների, ասորիների) ու նրանցից սերված գործարարների դեմ իրականացրած «արտակարգ միջոցառումները» (տեղահանություն, ջարդեր, բռնագրավում, կանխամտածված ունեզրկմանը նպատակաուղղված անհավասար հարկում) ընթանալու էին պետականորեն կազմակերպված ցեղասպանական քաղաքականությանը անբակտելիորեն կապված տնտեսության «թուրքացման» ծիրում<sup>17</sup>:

<sup>15</sup> Д. Е. Еремеев, На стыке Азии и Европы (очерки о Турции и турках), Москва, 1980, стр. 124.

<sup>16</sup> Տե՛ս Ալ. Սաֆարյան, Զիյա Գյոքալփը՝ թուրքական տնտեսության զարգացման մասին, «Հայոց Մեծ Եղեռն – 90, հողվածների ժողովածու», (խմբ.՝ Ա. Հ. Մինոնյան), Երևան, ԵՊՀ հրատ., 2005, էջ 416-431: «Հայկական հարց» հանրագիտարանի համապատասխան հոդվածը բացառապես արձանագրում է այն իրողությունը, որ մեծապես նաև Զիյա Գյոքալփի «հայացքների ազդեցությամբ են երիտթուրքերն որոշել ոչնչացնել հայկական բուրժուազիան, այնուհետև՝ ամբողջ հայ ժողովրդին և յուրացնել նրա ունեցվածքը» (տե՛ս *Армянский вопрос. Энциклопедия, Главная редакция Армянской энциклопедии, Ереван, 1991, стр. 184*), սակայն ընդհանրապես չի անդրադառնում Զիյա Գյոքալփի և քեմալականների առնչություններին:

<sup>17</sup> Մանրամասն տե՛ս Ա. Սաֆարյան, «Տնտեսական թյուրքականությունը», էսսայիզմի քաղաքականությունը Թուրքիայում և տնտեսության «թուրքացումը», ԵՊՀ հրատ., Երևան, 2012:

## ТЮРКИЗМ ЧЕРЕЗ СТО ЛЕТ ПОСЛЕ ЗИИ ГЕКАЛПА

*Александр Сафарян*

(резюме)

В статье рассмотрены проблемы претворения в жизнь «пророчеств» виднейшего идеолога тюркизма Зии Гекалпа (1876-1924) и актуализации гекалповедческой тематики после распада СССР и в условиях переосмысления культурно-языковой политики в «Тюркском мире».

## TÜRKÇÜLÜK HUNDRED YEARS AFTER ZIYA GÖKALP

*Alexander Safaryan*

(summary)

The paper is focused on the problems of implementation of "prophecies" of the famous Türkçülük ideologist Ziya Gökalp (1876-1924) and actualization of Gökalp theme after the collapse of the USSR, under the conditions of reconsideration of cultural and linguistic policy in "Turkic World".

ՀԱՄՇԵՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ՝

**Բանայի բառեր՝ Համշեն, հիշատակարան, գրիչ, ձեռագիր, մշակութային կենտրոն, հայկական իշխանություն**

Համշեն գավառը XV-XVII դարերում եղել է հայոց հոգևոր և գրչության կենտրոններից մեկը, ուր ստեղծվել են բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր: Դրանցից մի քանիսը փրկվել և պահպանվել են մինչ օրս: Ձեռագրերը գտնվում են Երուսաղեմի հայոց պատրիարքարանի մատենադարանում, Վիեննայի Մխիթարյան միաբանության և Լոնդոնի Բրիտանական թանգարանի գրադարաններում և Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի գրապահոցում: Այս մատյանները ժամանակին արժևորել են ակադ. Լ. Խաչիկյանը<sup>2</sup> և Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ հայր Հ. Տաշյանը<sup>3</sup>:

Սույն հոդվածում փորձել ենք ի մի բերել Համշենում գրված ձեռագրերի հիշատակարանները՝ հրատարակելով մեր ձեռքի տակ եղած այն հատվածները, որոնք վերոնշյալ ուսումնասիրողները մասամբ կամ հատվածաբար են ներկայացրել: Հիշատակարաններում տեղ գտած բացառիկ տեղեկությունները ենթարկել ենք պատմաբանասիրական քննության, որը հնարավոր

<sup>4</sup> Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դոցենտ: Էլ. փոստ՝ [lsahakyan@ysu.am](mailto:lsahakyan@ysu.am)

<sup>1</sup> Սույն հոդվածի նյութն ուսումնասիրվել է Գիտական գիտատեխնիկական և գործունեության պայմանագրային թեմայի շրջանակում (Տրապիզոնի նահանգի իսլամացված հայության ներկա վիճակը (ժողովրդագրությունը և ազգային ինքնագիտակցության դրսևորումները), ծածկագիր 15T-6A153 [lsahakyan@ysu.am](mailto:lsahakyan@ysu.am)

<sup>2</sup> Լ. Խաչիկյան, Էջեր համշինահայ պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1969, N 2, էջ 133-134:

<sup>3</sup> Յ. Տաշեան, Տայք, դրացիք եւ Խոտորջուր, Վիեննա, Մխիթարեան տպարան, հ. Բ, 1980, էջ 65-73:

ընթացում է ընձեռել որոշակի պատկերացում կազմել XV-XVI դարերում Համշենի բնակչության զբաղմունքի, լեզվական վիճակի, հոգևոր-մշակութային, քաղաքական կյանքի, մասին:

Համշենում գրված և ընդօրինակված ձեռագրերի հիշատակարանները կարևոր տեղեկություններ են հայտնում XV-XVII դարերում այս գավառում գործող Սուրբ Խաչիկ հոր (կամ Խաչքարի), Խուժկա և Քոշտենց վանքերի, ինչպես նաև Համշենի հայկական իշխանության մասին: Հիշատակարանները, ի տարբերություն անհատ հեղինակների գրած պատմությունների, ունեն առավելություններ, քանի որ հիշատակագիրներն իրենց գրանցած դեպքերի ժամանակակիցն ու ականատեսն են և երանց հաղորդած տեղեկությունները հավաստի են<sup>4</sup>: Այս աղբյուրները երբեմն հաղորդում են այնպիսի տեղեկություններ, որոնք տեղ չեն գտել պատմիչների երկերում: Դարերի ընթացքում մշակված հիշատակարանների շարադրման ձևի համաձայն ձեռագիրն ընդօրինակող գրիչն ավանդաբար նշում է ժամանակը, վայրը, պատվիրատուի, ստացողի և ձեռագրի գրման ու ծաղկման հետ անմիջական առնչություն ունեցող անձնավորությունների անունները, մի հանգամանք, որ ինչպես նկատում է Հ. Փափազյանը, հաճախ կաշկանդել է գրիչներին և հիշատակարանների միօրինակ բովանդակության պատճառ դարձել: Բայց նաև հանդիպում են անվանի գրիչներ, որոնք խախտելով ավանդույթը՝ առանձին դեպքերում, և հատկապես գրչության ժամանակն ու հանգամանքները նկարագրելիս ընդարձակել են հիշատակարանը և թողել չափազանց արժեքավոր մանրամասնություններ՝ անզնահատելի ծառայություն մատուցելով հետագա սերունդներին<sup>5</sup>:

<sup>4</sup> ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս I, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1955, էջ V:

<sup>5</sup> Տե՛ս Հ. Փափազյանի գրախոսականը, «ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ի հատոր Ա, «Հասարակական գիտություններ», ՀՍՍՌ գիտություններն ակադեմիայի տեղեկագիր, Երևան, 1956, էջ 115:

Համշենի տարածքը համընկնում է V-VI դարերում հայ պատմիչների երկերում նշված Խաղտիք գավառի մի մասին: Որպես Համամաշեն այս գավառն առաջին անգամ հիշատակվում է Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմություն»<sup>6</sup> և Ղևոնդի «Պատմություն»<sup>7</sup> գրքերում: Ցավոք, հետագա դարերի պատմագիրները Համշեն գավառի մասին որևէ տեղեկություն չեն թողել: Առհասարակ, Համշեն գավառի վերաբերյալ պատմական տեղեկությունները սակավ են, իսկ XV-XVII դարերի հիշատակարաններում տեղ գտած վկայությունները հնարավորություն են ընձեռում որոշ չափով լրացնելու այդ բացը:

Մեզ հասած առաջին հիշատակարանը գրվել է 1422թ. Համշենի **Քոշտենց** վանքում: Այս ձեռագիրը (N 1617) պահվում է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի գրասանը: Գրիչ Խաչատուրը հայտնում է, որ իր այս ձեռագիրն ընդօրինակում է «ի խնդրո պարոնաց պարոն Առաքելին»՝ Առաքել իշխանի խնդրանքով: Մինևույն ձեռագրի հիշատակարանում 1425 թվականին գրիչ Խաչատուրն ավելացնում է, որ Համշենի իշխանն Առաքելի որդի Դավիթն էր: Ինչպես վկայում է գրիչը, Առաքել իշխանի պատվերով ձեռագրում ընդգրկել է Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրքը», իսկ Դավիթ իշխանի պատվերով նույն ձեռագրում ավելացրել է «Վասն թագաւորելոյ Թէոդոսի» խորագրով առասպելական մի պատմություն<sup>8</sup>:

«Գրեցաւ գիրքս, որ կոչի ասացուածք ձեռամբս մեղաւոր ու անարժան Խաչատուր արեղի, յաղագս խնդրոյ պարոն պարոնաց պարոն Դաւթի, գոր տէր աստվուծ վայել տա իւրեն, ամէն: Գրիս պակասութեանն մի մեղադրէք, զի կար մեր այսչափ էր. զթվական Հայոց ՊՃԴ. (1425): մեհեկի ժԸ, գրեցաւ գիրքս ի դրան սուրբ Աստուածածնին, որ կոչի Քոշտենց վանք ի գավառն ի

<sup>6</sup> Յ. Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 284: Տե՛ս նույնի աշխարհաբար թարգմ. Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Երևան, 1989, էջ 113:

<sup>7</sup> Պատմութիւն Ղևոնդայ մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 167-169:

<sup>8</sup> Լ. Խաչիկյան, Էջեր համշենահայ պատմությունից, էջ 126:

Համշենու, հայրապետութեանն տէր Պաղոսի, թագաւորութեանն Սրանթար պակին, պարոնութեանն պարոն Դաւթի, յեպիսկոպոսութեանն տէր Սարգսին: Տէր աստուած՝ Յիսուս Քրիստոս ողորմեա գրողաց, կարդացողաց և լսողաց, ամէն»<sup>9</sup>:

Երևանի Մաշտոցի անվան մատենադարանում պահվող թիվ N 7263 «Մաշտոցի» հիշատակարանում գրված 1440 թվականին, **Գրիչ** արեղա Աստվածատուրն ընդգծում է, որ ձեռագիրը պատրաստում է Սուրբ Աստվածածնի հովանու ներքո Համշենի **Խուժկա վանքում**, պարոն Դավթի օրոք:

«...Արդ, ի յանկ ելեալ աւարտեցաւ Մաշոցս ձեռամբ անիմաստ և անարհեստ գրչի Աստուածատուր արեղի ի գավառիս, որ կոչի Համշեն, և ի վանքս Խուժկա, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, և կենսակիր աստուածորնգալ սուրբ Նշանացս, ի թուականութեանս յարեթական տումարիս ՊՁԹ. (1440), հոռի ամսոյ Բ (2), ի պարոնութեանն պարոն Դաւթի և դեռաբոյս գաւակին իւրոյ պարոն Վարդին, գոր աստուած ընդ երկայն աւուրս արասցէ, ամէն»<sup>10</sup>:

Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահվող N 3701 ձեռագրի 1460 թվականին գրված մի հիշատակարանում, որի հեղինակի անունն անհայտ է, նկարագրվում է Համշենի իշխանության դժվարին դրությունը, և թե ինչպես իշխան Վարդի երիտասարդ որդի Վեքեն (ըստ Լ. Խաչիկյանի վերականգնման՝ Վիգեն) գերի է ընկնում Շահալի անունով մեկին և հանձնվում Սոֆուին (կըզըլբաշներին)<sup>11</sup>:

<sup>9</sup> Ձեռ. հ<sup>թ</sup> 1617, Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի գրասան (այսուհետ՝ ԵՊՁԳ), տե՛ս նաև՝ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս III, կազմեց՝ Լ. Խաչիկյան, ՀՄՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1967, էջ 365:

<sup>10</sup> ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս I, էջ 510: Ձեռ. հ<sup>թ</sup> 7263, Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյրուսյան, Փ. Անթաբյան, ցանկերը և համեմատական տախտակները՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մուսականյանի, ՀԳԱ հրատ., Երևան, 1970, էջ 495-496: Տե՛ս ձեռ. նկարագրությունը նույն տեղում:

<sup>11</sup> Ձեռ. հ<sup>թ</sup> 3701, ԵՊՁԳ:

«Եւ յայսմ ամի զՎերքե մանուկն, զորդի պարոն Վարդին, գտերն Համշինու ըմբոնեաց Շահալին, եւ ետ ի ձեռն Սօֆուն, որ Շեխ կոչէին»<sup>12</sup>:

Համշենի իշխանության վախճանի մասին է պատմում Երևանի Մաշտոցի անվան մատենադարանում պահվող N 7638 ձեռագիր «Ավետարանի» հիշատակարանը: Համշեն գավառի հարևանությամբ գտնվող Սպեր գավառի Կոնկա գյուղում 1489թ. գրիչ Գրիգորն արձանագրում է հետևյալը.

«...Ձորոյ տեսեալ պայծառութիւն Աւետարանիս այս Գրիգոր երէցս և ետ գեղափարել զսա ի ձեռն քահանայի անարժան Սարկաւագի և փանաքի գրչի, և ժամանակս վերջին, որ էր թուականս Հայոց ՁԼԸ (1489), ի վերադիտողութեան Հայոց տեսոն Մարգսի և Յահաննէսի, և վերակեցութեանն Գրիգոր վարդապետի, և իշխանութեանն պարսն Դաւթի, որ տէր էր Համշենի, զոր եղն պանդխտաւալ նմա և բնակել ի երկիրս Սպերու, ի յազգէն չիթախին»<sup>13</sup>, զոր շատ քրիստոնեա իշխանք և թագաւորք պանդուխտ եղեն ի գաւտարութիւն ի ձեռաց նոցա, զորոց զամբս նոցա աստուած խորտակեցէ ամենագաւր աջովն իւրով, ամէն:

Չոր ես մեղսամած և անիմաստս գրիչս գրեցի զսա ի պանդխտութեան մերում ի երկիրս Սպերու, ի գեաւղս Կորնկանց, ընդ հովանեաւ սրբոյն Դաւթի իշխանութեանն տաճկաց Դատային, և սուլթանութեանն Եաղուպին, որ տիրէր տանս Արնելից: Արդ, խնդրեմք ի ձեզնէ հեղինակէ և արեւնսապատում եկեղեցոյ մանկունք, որք զաստուածային պտղոցն խորհրդիւ գիտէք ճարակել, հորժամ ի ձեռն առել զփափաքելի սուրբ Աւետարանս ի ձեռում անզրբաւելի ուրախութիւնդ, յիշեսջիք զստացող զտրա զԳրիգոր երէց, և զկողակիցն իւր զՇահանուշն, և զմայրն իւր զԳուլիշատն, և զհայրն իւր զտէր Առաքելն, և զղուստրն իմ զՄէլիքն, և

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>13</sup> Հայկական ձեռագրերում, չիթաղ ասելով, նկատի ունենին թուրքերին (Լ. Խաչիկյան, Էջեր համշինահայ պատմությունից, էջ 130):

գաւտերքն իմ զՕերոն, և զԿարապետն, և զԱռաքելն, և զԱլէքսն, և զամենայն արեն մերձաւորքն իմ, ամէն:

Դարձեալ, աղաչեմ յիշատակել զմեղապարտ գրիչս զքահանայ Սարկաւագս, և զծնաւղն իմ ըստ հոգոյ զտէր Յովսէփն, և զմարմնոյ զՌըստագէսն, և զմայրն իմ զԵղիսաբեթն, և զանարիւնաց կատարեալն սրով զհաւրեղբարն իմ զԽաչատուրն, և աստուած զձեզ յիշէ յիւրում զալստեանըն, ամէն:

Բ

Ստացող՝ Գրիգոր

Մի որ իշխեսցէ յորդոց իմոց և ի մերձաւորաց ծախելով կամ գրաւ դնելով կամ ի բաժինք արկանելով, այլ ով որ յորդոց իմոց է ի թոռանց կարգաւոր լիցի՝ ի ձեռս նորա լինի, յիշատակ ինձ և կողակցին իմոյ Շահանուշին»<sup>14</sup>:

Բոլորագիր և մանրանկարներով ծաղկած վերոբերյալ հիշատակարանից տեղեկանում ենք, որ երբ Համշենն անցնում է օսմանցիների ձեռքը, 1489թ. Համշենի տեր պարոն Դավիթը պարտություն է կրում թուրքերից և շատ թվով քրիստոնյա իշխանների հետ ստիպված հեռանում է իր բնօրրանից և հաստատվում Սպերում: Ինչպես գրում է Լ. Խաչիկյանը, 1478-1490-ական թթ., Սպեր գավառը գտնվում էր դեռևս Ակ-Կոյունլու Յաղուբ փառիշահի ձեռքում, սակայն «Համշենի հայկական իշխանությունը, որպես քաղաքական ինքնուրույն միավորում, դադարեց գոյություն ունենալուց 1489 թվականից մեկ-երկու տարի առաջ՝ զրավվելով թուրքերի կողմից, որոնք այդ դեպքն արձանագրող հիշատագրի կողմից կոչված են չիթախ»<sup>15</sup>:

Աղբյուրից պարզվում է, որ այս «Ավետարանը» ստացել է Գրիգոր երեցը<sup>16</sup>: Հիշատակագիրը նույնպես Համշենից հեռացել

<sup>14</sup> Ձեռ. հ<sup>16</sup> 7638, ՄՄ, էջ 314բ, 315ա, 315բ: Տե՛ս նաև՝ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս III, էջ 470-471: Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, էջ 576:

<sup>15</sup> Լ. Խաչիկյան, Էջեր համշինահայ պատմությունից, էջ 130:

<sup>16</sup> Լ. Խաչիկյանն այս հիշատակարանի հրատարակած ծանոթագրության մեջ նշում է, որ շարունակությունը մինչև այս պարբերության վերջը, ինչպես և

և պանդխտության մեջ էր գտնվում Սպեր գավառի Կոնկա գյուղում: Գրիչը հիշում է իր աղջկա և տղաների, ստացող Գրիգոր երեցի կնոջ և ծնողների անունները, լեզվական փաստեր, որոնք որոշակի պատկերացում են տալիս 15-16-րդ դարերում Համշեն գավառում կիրառվող հայկական անձնանունների մասին՝ «...*իշեսջիբ գստացող գտրա* զԳրիգոր երեց, *և զկողակիցն իւր զՇահանուշն, և զմայրն իւր զԳուլիշատն, և զհայրն իւր գտեր Առաքելն, և զղուստրն իմ զՄելիքն, և զուստերքն իմ զՕերոն, և զԿարապետն, և զԱռաքելն, և զԱլեքսն...*», *իմ ըստ հոգոյ գտեր Յովսէփն, և զմարմնոյ զՌըստագէսն, և զմայրն իմ զԵղիսաբէթն* (ընդգծումը մերն է-Լ. Ս.)»<sup>17</sup>: Աղբյուրում նշված *Ռըստագէս* անձնանունն Արիստակես անվան բարբառային տարբերակն է: Հայկական ձեռագրերում այս անձնանունը արձանագրվել է տարբեր ձևերով՝ *Առիստակէս, Առիստագէս, Առաստակէս, Ռստակէս, Ռըստակէս, Ըոստակէս, Ուռուստակէս, Յոխաթագ*<sup>18</sup>:

Ռըստագ և *Շորստագիսն* ձևերով անձնանունը նշվում է նաև Եղնովիտ գյուղում 1500թ. Խաչիկ հոգևորի անապատում գրիչ Կարապետի գրած «Ոսկեփորիկի» հիշատակարանում՝ ...եւ «ըՌըստագենց կալն՝ սարպնովն ու մարագովն...»<sup>19</sup>: Ինչպես պարզ է դառնում այս երկու հիշատակարանների տեղեկություններից, ամենայն հավանականությամբ գրիչ և ծաղկող Կարապետ երեցը Սպեր գավառում պանդխտության մեջ գտնվող վերոնշյալ տողերի գրչի քահանա Սարկավագի եղբայրն էր: Երկու աղբյուրում էլ գրիչները մինևս այն ընտանիքի մասին են խո-

հիշատակարանի սկզբում ստացող Գրիգոր երեցի անունը գրված է այլ ձեռագրով (Տե՛ս ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս 3, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 471):

<sup>17</sup> ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս 3, էջ 471:

<sup>18</sup> Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, ԵՊՀ հրատ., Երևան, 1942, էջ 277-284:

<sup>19</sup> Ձեռ. հ<sup>6</sup> 170, էջ 485-486, Մխիթարյան գրադարան, Վիեննա (այսուհետ՝ ՎՄԳ): Տե՛ս նաև՝ ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս III, էջ 288:

ւում: Սարկավագը նշում է «...*զծնաւղն իմ ըստ հոգոյ գտեր Յովսէփն, և զմարմնոյ զՌըստագէսն, և զմայրն իմ զԵղիսաբէթն...*»: Նույն տեղեկությունը հաղորդում է գրիչ Կարապետ երեցը՝ «... *և Շորստագ իմոց տեր Յովսէփին, և Շորստագիսին, և Եղիսաբէթին...*»<sup>20</sup>: Հովսէփն, ըստ երևույթին, նրանց կնքահայրն էր:

Այս փաստերը ցույց են տալիս, որ Ռստագների ընտանիքն ապրել է Համշենի Եղնովիտ գյուղում «...*զեղիս մերոյ Եղնովստ...*» և Խաչիկ հոր անապատում իրականացրել հոգևոր ծառայություն՝ որպես երեց, քահանա զբաղվել է հայկական ձեռագրերի ծաղկմամբ:

Լ. Խաչիկյանը, հենվելով վերոնշյալ ձեռագրերի հիշատակարանների վրա, կազմել է Համշենի հայկական իշխանության ժառանգությունը՝ Առաքել (1406-1425), Դավիթ առաջին (1425-1440), Կարո (1440-?), Վերե կամ Վիգեն (1460 թվականին գերի է ընկնում), Դավիթ երկրորդ (1489 թ. կորցնում է իշխանությունը)<sup>21</sup>:

Չնայած տարածաշրջանի նոր քաղաքական իրադրությանը 1499-1528 թթ. ընթացքում Համշենում հայ գրիչները շարունակում են իրենց բեղմնավոր գործունեությունը՝ գեղագիր գրչով զբաղվելով և ընդօրինակելով արժեքավոր ձեռագրեր: Այդ ընթացքում Եղնովիտ (Էլեվիտ, այժմ՝ Յայլալար) գյուղի մոտակայքում ճակատ (տեղացիների խոսվածքի համաձայն՝ Ջագաթ) լեռան վրա գտնվող Խաչիկ հոր մենաստանում<sup>22</sup> վերոհիշյալ ծաղկող Կարապետն ընդօրինակում է «Բժշկարան», «Տոնացույց-Ավետարանացույց», Ներսես Շնորհալու «Հիսուս որդի», երկու «Մաշտոց», երեք «Շարակնոց» կից ավելացնելով իր հիշատակարանները:

Հետաքրքրական է Եղնովիտ գյուղում 1499թ. նույն գրիչ Կարապետի գրած բոլորագիր «Ախթարական Բժշկարանը», որը ի-

<sup>20</sup> Ձեռ. հ<sup>6</sup> 170, էջ 487:

<sup>21</sup> Լ. Խաչիկյան, Էջեր համշինահայ պատմությունից, էջ 130:

<sup>22</sup> Լ. Սահակյան, Եղնովիտ բնակավայրի պատմություն և տեղանվան ստուգաբանությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2012, հ. 2-3, էջ 305-315:

րականում ոչ թե գիտական բժշկարան է, այլ զանազան հմայական աղոթքների և բանաձևերի մի ժողովածու, այն հարուստ է հնագույն կախարդական-հմայական բանաձևերով<sup>23</sup>: Ձեռագրի հիշատակարանում գրիչը նկարագրում է հետևյալը.

«Գծագրեցաւ սուրբ Բժշկարանս ի թվին ՋԽԸ (1499), ի կշիռ կենդանակերպի, ձեռամբ անիմայ և մեղսամած գրչի, Կարապետ երիցու, ի յերկիրս Համաշինու, ի գելոս Եղնովիտ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի, և սուրբ Սիովնի, և սուրբ Խաչիկ հաւրն հոգևորի, և սուրբ Վարդանացս, որ աստ կան հաւաքեալ ի պահպանութիւն երկրիս և գաւարիս մերոյ, ամէն:

Գծագրեցաւ սուրբ Բժշկարանս ի վայելումն և ի պահպանութիւն անձին իմոյ Կարապետիս, և զավակաց իմոց, Վարդանին, և Ստեփանոսին, և Յոհանիսին, և եղբարցն իմոց, և ամենայն ընդանեաց. և յշտեմարանաց մերոց լիութիւն նոյնպէս յորժամ: ... .. Յիսկզբանէ արարածոց մինչ ի յայս աւերնութիւն, որ ելեալ ի բերանոյն աստուծոյ վասն սիրողաց իւրոյ հանգիցէ ի վերայ մեր և զաւակաց մերոց, և ըշտեմարանաց մերոց, և խաշանց, և անասնոց, և կաթին, և մայրեաց, և մեղուաց, և անդաստանաց, և արտորէից մերոց, և իբրև զաղբիւրս զարնանային հորդեսցէ և առատացուցէ զամենայն գոյութիւնս մեր...»<sup>24</sup>:

Հիշատակարանից հայտնի են դառնում Համշենում կիրառվող ևս մի քանի անձնանուններ՝ Վարդան, Ստեփանոս, Հովհաննիս, Կարապետ: Համշեն տեղանունը հիշվում է Համշին (ու) ձևով՝ սեռական հոլովի ազդեցությամբ: Աղբյուրից տեղեկանում ենք Համշենի անտառների ու անդաստանների, արտերի ու շտեմարանների, խաշանց և անասունների, կաթի ու մեղունների մա-

<sup>23</sup> Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի, հ. 1, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյրունյան, Փ. Անթաթյան, ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, ՀՍՍՌ ԳԱԱ հրատ., Երևան, 1965, էջ 613:

<sup>24</sup> ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս III, էջ 288: Տե՛ս Ձեռ. հ<sup>տ</sup> 4600, ՍՄ, էջ 107ա, 108ա:

ան, որոնց բերրիության և առատության համար գրիչը Աստուծո պահնությունն է խնդրում:

1500 թ. Կարապետ երեցը «Ոսկեփորիկ» ձեռագրի հիշատակարանում նշում է, որ այն գրված է «ձեռամբ մեղսաներկ եւ անարժան Կարապետի՝ ի յանապատս Խաչիկ հոգևորի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի և Ս. Վարդանանցս»<sup>25</sup>:

«Թվին. ՋԽԹ. (1500), մուտն ի կարճին, փետրվարի ԻԸ (28), բարեկենդանին յետի ուրբաթին աստուածասաստ բարկութիւն տեղեաց ի վրայ գեղիս մերոյ Եղնովտա, գաւառիս Ս. Խաչիկ հաւրն մերոյ մերոյ, զի եկն Ճվկաձորն հուսի եւ աւար եհար զեկեղեցին Ս. Սիոն ժամատնովն, եւ զՌստագենց կալն՝ սարպետովն և մարագովն, եւ զհաց եւ զոզակ ամենայն ցիր եւ ցան արար, և զԴաւիթ որդին ի իւր մէջ կալին եսպան: Եւ զպատրիկ Քաւաքալին զսարպինն հացովն, և զտունն և զգոմն տավրովն, և զկինն, Դ (4) տղովն՝ ի վայր էառ և եսպան եւ մէկ անպիտայն աղայն ապրեցաւ ի մէջ հուսոյն, և Բ (2) ոտքն մսեցաւ ի ծնկանէն ի վայր և բացուաւ, և Ի (20) աւուր յետն մեռաւ: Եւ զհոռոմ Ստեփանոսն և զիւր կինն Դ (4) տղովն, և զտունն, և զտեղն, և զտավարն և զամենեսեան բնաջինջ արար, որ ի Ե (5) աւուր յետն զշունն ողջ գտան և այլքն ամենայն՝ մեռալ: Տեսէք զհրաշքն Աստուծոյ և դարձարուք մեղաց ձերոց:

զ) Տէր աստուած բարեխաւսութեամբ սուրս հայրապետիս Երբեմի ողորմեա ստացողիս գրոցս Կարապետ երիցու, և ծնաւորաց իմոց տէր Յովսէփին. և Ըոստագիսին, և Եղիսաբերթին, և ամենայն արեան մերձաւորաց, ամէն»<sup>26</sup>:

Այս հիշատակարանը չափազանց հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Եղնովիտ գյուղի վերաբերյալ: 1500թ. փետրվարի 28-ին ուրբաթ օրը, Եղնովիտում մեծ աղետ է տեղի

<sup>25</sup> Յ. Տաշեան, Տայք, դրացիք և Խոտորջուր, պատմական-տեղագրական ուսումնասիրութիւն, հ. Բ, Վիեննա, Միլիթարեան տպարան, 1980, էջ 65:

<sup>26</sup> Ձեռ. հ<sup>տ</sup> 170, ՎՄԳ, էջ 49բ, 57ա, 87բ: ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս III, էջ 296-297: Տե՛ս նաև՝ Յ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 65-66:

ունենում. Ճվկաձորից ձնահյուսքերը վնասներ են հասցնում, որի հետևանքով ավերվում են Խաչիկ հոր մենաստանն իր ժամատնով, ավերվում է Ռստագների կալը՝ մարագն ու սարբենը (ամբար), կալի մեջ գոհվում է Ռստագների որդին՝ Դավիթը, ավերվում է պատրիկ Թավաքալու տնտեսությունը՝ սարբենը, գոմը, գոհվում են նրա կինն ու չորս երեխան, իսկ մի տղան դառնում է անդամալույծ երկու ոտքից և քսան օր հետո մահանում: Ջոհվում է հոռոմ Ստեփանոսը, նրա կինն ու չորս տղան, ավերվում նրա ողջ տնտեսությունը:

Նույն Կարապետ երեցը Խաչիկ հոր անապատում 1504թ. Համշենի Քուշիվա գյուղի քահանա Գրիգորի պատվերով ընդօրինակել է մեկ «Տոնացույց-Ավետարանացույց», որի բազմաթիվ հիշատակարաններից մեկում թողել է հետևյալ տեղեկությունները. «Գծագրեցաւ Տաւնացոյցս եւ Աւետարանացոյցս թվն. ԶԾԳ (1504) ձեռամբ անիմա եւ մեղսամած Կարապետ երիցու, ի խնդրոյ մաքրամիտ քահանային Գրիգորի Քուշովեցոյ»<sup>27</sup> ի վայելումն անձին իւրոյ եւ ամենայն արեան մերձաւորաց... Արդ գրեցաւ սա ի յերկրիս Համշինու, ի գիւղս Եղնովտա, ի յանապատս Սր. Խաչիկ հաւրն հոգեւորի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի եւ Սուրբ Միովնի եւ նշխարաց Սրբոց Վարդանանցն, որ աստ կան հաւաքեալ ի պահպանութիւն երկրին մերոյ»<sup>28</sup>:

Նույն ձեռագրի մեկ այլ հիշատակարանում Կարապետը գրում է.

«Փառք... Գծագրեցաւ սուրբ աղաւթամատոյցս ձեռամբ անիմայ եւ մեղսամած գրչի Կարապետ երիցու ի լաւ եւ ընտիր արինակէ, ի թվին ԶԾԳ (1504), նոյեմբեր ԺԳ (14), եւ կենդանակերպն ձուկն է, ի վայելումն մաքրամիտ եւ հեզահոգի Գրիգոր քահանային Քուշիվեցոյ եւ ամենայն արեն մերձաւորաց իւրոց եւ յիշատակ ծնողաց իւրոց ամէն: Արդ գրեցաւ ի յերկիրս Համշենի, ի

<sup>27</sup> Քուշիվա գյուղը գտնվում է ներկայիս Չամլիհեմշինի տարածքում (այժմ՝ Յուլքոյը):

<sup>28</sup> Մույն ձեռագիրն ունի 238 թուղթ, մեծ. 9.X7.5, 118ա, 119ա, բոլորագիր, մագաղաթ (տե՛ս ԅ. Տաշեան, Տայք դրացիք և Խոտորջուր, հ. Բ, էջ 67):

գիւղս Եղնովտի եւ յանապատս Խաչիկ հաւրն հոգեւորի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Միոնի եւ նշխարաց սրբոց Վարդանանցս, որ աստ կան հաւաքեալ ի պահպանութիւն երկրիս եւ գաւգառիս մերոյ ամէն: Ի սուլտանութեանն Հոռոմոց Պայազիտ բակին եւ իւր որդուն Սալիմշահ սուլթանին, որ տիրէր ի Տրապիզոն եւ Հայսն ի Կոստանդինուպոլիս, եւ ի Քավրէզ Սովիշահ Իսմայիլն. աւաղ բազում մեղաց մերոց և կորստեան քրիստոնէից թագաւորութեան, գոր Տէր Աստուածամենակալն զգիւտ նոցին շուտով արասցէ և քաղցրութեամբ ի տառապեալքն հայեցցի, ամէն եւ եղիցի»<sup>29</sup>:

Գրիչը չափազանց հավաստի նկարագրում է այդ ժամանակվա քաղաքական իրավիճակը: Հիշատակարանում նշված Պայազիտ բակը (բեկ) օսմանյան սուլթան Բայազիդ II-ն (1447-1512) է որի կառավարման տարիներին, ինչպես պատմում է Կարապետ երեցը, քրիստոնյաները, այդ թվում և հայերը, բազմաթիվ կորուստներ ու տառապանքներ են կրել: Հիշված Սալիմշահը Բայազիդ II-ի որդի Սելիմ I-ն (1512-1520) է, որը երիտասարդ տարիքում նշանակվել էր Տրապիզոնի կառավարիչ:

1505թ. Կարապետ երեցը ընդօրինակած և ծաղկած բոլորագիր «Շարակնոցի» հիշատակարանում գրում է. «Փառք... գրել գսա մեղսամած գրչի, որ Կարապետ երեց անուն կոչի... գրել գսա յերկիրս Համշենի, ի գիւղս Եղնովտի մերձ յանապատս Խաչիկ հաւրն հոգեւորի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի եւ Սուրբ Միովնի եւ նշխարաց սրբոց Վարդանանցն, որ աստ կան հաւաքեալ... ի լաւ եւ ընտիր արինակէ Խլկցոյ, թվ. ԶԾԴ (1505). ի խոյն կենդանակերպի, ապրիլի ԻԹ, եւ Քրիստոսի փառք, եւն»<sup>30</sup>: շեշտելով Վարդանանց նշխարների գոյությունը Խաչիկ հոր անապատում:

Համշենի բեղմնավոր գրիչ Կարապետ երեցը 1527թ. ընդօրինակել է նաև մեկ «Մաշտոց», որի հիշատակարանում գրեթե վե-

<sup>29</sup> Տե՛ս ԅ. Տաշեան, Տայք, դրացիք և Խոտորջուր, հ. Բ, էջ 68:

<sup>30</sup> Նույն տեղում:



րոնշյալ տողերը կրկնվում են. «Փառք... գծագրեցաւ սուրբ Հայր Մաշտոցս ձեռամբ Կարապետ երիցուն ի լաւ եւ ընտիր արինակէ, ի յանապատս Սուրբ Խաչիկ հաւրս, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի Սրբոց Վարդանանցն որ աստ կան հանգուցեալ ի պահպանութիւն գեղիս Եղովտաւ և երկրիս մերոյ Համշինայ, ի թվին ՋՁԶ (1527) ...»<sup>31</sup>:

Թե՛ երբ է հիմնվել Եղևովտի Խաչիկ հոր անապատը, ստույգ տեղեկություններ չունենք, սակայն ձեռագրերի հիշատակարաններում հաճախ հիշվող այն փաստը, որ Եղևովտի մենաստանում են անթելվել Վարդանանց նշխարները «...և սուրբ Վարդանանցնս, որ աստ կան հաւաքեալ ի պահպանութիւն երկրիս և գաւարիս մերոյ», «...Սրբոց Վարդանանցն, որ աստ կան հանգուցեալ ի պահպանութիւն գեղիս Եղովտաւ և երկրիս մերոյ Համշինայ», կարող ենք եզրակացնել, որ դեռևս V դարից առնվազն մինչև XVIII դար և մինչև Համշենի հայության բռնի իսլամացումն ու դրանից հետո՝ ընդհուպ XX դարը, այս վայրը եղել է կարևոր և հանրահայտ ուխտատեղի: Մինաս վարդապետ Բժշկյանը վկայում է, որ «Խաչիկքար վանքը մեծ ուխտատեղի է Հայոց եւ այլազգեաց: Այս վանքին քով գտան մեծ զանգագ մի. ուր կայ մեծ գերեզման ... հայ և տաճիկ վրան ուխտ կերթան մինչև հիմա»<sup>32</sup>: «Մինչև հիմա» ասելով՝ Բժշկյանը նկատի ունի XIX դ. սկիզբը: Իսկ նրա հիշատակած տաճիկներն իսլամացած/թուրքացած համշենցիներն էին: Այդ է հաստատում փոքրինչ վաղ գրված Ղ. Ինճիճյանի հետևյալ հիշատակությունը, որ թե՛ն XVII-XVIII դդ. Համշենի «ամբողջ շրջակայ գիւղօրէիսք դարձան ի տաճկության, սակա բռնութեան հարկապահանջութեան, բայց գտանին տակաւին ի նոսա և քրիստոնեաք, յորոց գիւղօրէս կանգուն կան տակաւին եկեղեցի իւրեանց ի վաղուց մնացեալ, չունին երեց ի հովուել, միայն քանի մի անգամ յամին

<sup>31</sup> Ձեռ. հ<sup>ո</sup> 32, British Library, Or: 6212, էջ 32.

<sup>32</sup> Մինաս Վարդապետ Բժշկեան, Մինաս Վարդապետ Բժշկեան, Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեաւ ծով, Վենետիկ, 1819, էջ 97:

այս առ նոսա երեց Յեվողիւտ գեղջէ: Իսկ տաճիկք խօսին մինչև ցայժմ հայերէն, ... պահէն պահս և գայլ ծէսս և օրէնս քրիստոնեական հաւատոց, յաճախեն յեկեղեցիս նն. ...»<sup>33</sup>:

Չափազանց արժեքավոր է Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող թիվ 7056 «Շարակնոցը»<sup>34</sup>: Այն Կողոնիայի շրջանում 1506թ. թվականին ընդօրինակել և հրաշագեղ գունավոր մանրանկարներով զարդարել է Հայրապետ գրիչը: Ձեռագրում հոգևոր երգերն ուղեկցվում են խազերով, իսկ հիշատակարանում Հայրապետ կրոնավորը նշում է, որ ինքը Համամաշենի գավառից է՝ «Ի Համամաշեն գավառոյ»: Այս աղբյուրի գեղագրությունը, մանրանկարներն ու խազերը վկայում են Համաշեն գավառի գրչության բարձր մակարդակի մասին:

1517թ. գրիչ Հովհաննես Մալազն ընդօրինակել է «Կիպրիանոսի գիրքը և Ուրբաթագիր» ձեռագիրը, որի հիշատակարանում պատմում է. «Գրեցաւ սուրբ Բժշկարանս ի թվին ՋԿԶ (1517), իայն կենդանակերպի, մայիսի ԺԲ (12) ի լաւ և ընտիր արինակէ ձեռամբ Յոհաննէս Մալզի անարժանի, ի յերկրիս Համշինի, ի յանապատս Ս. Խաչիկ հաւրն հոգեւորի, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի և Սրբոց Վարդանանցս, ի ինդրոյ Ստեփանոսի սարկաւազի Վերին Համշինոյ ի վայելումն իւր եւ յիշատակ իւր ծնողացն Դաւթի և Եղիսաբեթին ի պահպանութիւն անձանց եւ գաւակաց իւրոց»<sup>35</sup>:

1523թ. Հովհաննես Մալազն ընդօրինակել է մի «Ավետարան», որի հիշատակարանում թողել է հետևյալ տեղեկությունները. «Գրեցաւ սուրբ Աւետարանս ի յերկիրս Համամաշինի, ի յանապատս Սր. Խաչիկ հաւրն հոգեւորի, ընդ հովանեաւ Սր. Աստուածածնին և Սր. Վարդանանցս, որ աստ կան հաւաքեալ, ի պահպանութիւն երկիրս եւ գաւարիս մերոյ. ամէն. ի թուաբե-

<sup>33</sup> Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Կ. Ա, Վենետիկ, 1806, էջ 396:

<sup>34</sup> Ձեռ. հ<sup>ո</sup> 7056, ՄՄ:

<sup>35</sup> Ձեռ. հ<sup>ո</sup> 431, ՎՄԳ:

րութեան Հայոց ՉՀԲ (1523) . ամին. ի կենդանակերպն Կոյսն, Յունիս Լ. եղև աւարտ ստորին, ի լաւ եւ ընտիր արինակէ ձեռամբ անարժան եւ մեղսաթաթախ Յոհաննէս արեղայի, հրամանաւն Աստուծոյ, ի վայելումն եւ յիշատակ: Արդ խնդրեմ ի ձեզնէ յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր անարժան Յոհաննէս Մաղագս եւ զմայրն իմ զԲսլիմն եւ զհար իմ զՏեր Աստուածատուրն, եւ ըզՍաւստանէս եւ զկողակիցն իւր Եղսաբեթն, եւ յետին՝ զՍարեմն»<sup>36</sup>:

Լեզվական առումով կարևոր են հիշատակարաններում գրանցված անձնանունները՝ Ստեփանոս, Յոհաննէս (Հովհաննէս), Բսլիմ, Տեր Աստուածատուր (Աստվածատուր), Սաւստանէս (Մոստանէս), Եղսաբեթ (Եղիսաբեթ), Մարեմ (Մարիամ): Աղբյուրում նշված Վերին Համշենն էլ համընկնում է ներկայիս Բաշ Համշենի տարածքին՝ իր Յուքարը քոյ (Վերին գյուղ), Օրթա քոյ (Միջին գյուղ) և Աշաղը քոյ (ներքին գյուղ) գյուղերով: Վերին Համշենի մեջ է մտնում նաև Քալե-ի Բալա կոչվող կիսավեր բերդն իր շրջակա գյուղերով՝ Զիչեքլի, Քալե, Վարոշ, որոնք Եղնովիտից ավելի բարձր դիրքում են: Այսօր այդ գյուղերը վերածվել են արոտավայրերի (Յալա):

Հիշատակարանի առաջաբանում գրված տողերից պարզ է դառնում, որ 1523թ. արդեն Համշենում սկսվել էին օսմանյան իշխանությունների կրոնական հալածանքները՝ «հաւատացելոց հաստատութիւն, թերահաւատից՝ հաւատք եւ ուղղափառութիւն, եւ ի վերայ եկելոց թշնամեաց աւտարաց, վանումն եւ հերքումն եւ քրիստոնէից ի Քրիստոսէ Աստուծոյ խաղաղութիւն եւ փրկութիւն ամէն»<sup>37</sup>: Նշենք, որ 1520թ. Համշենը, որպէս նահիյե, գտնվում էր օսմանյան տիրապետության տակ, և այդ թվականին օսմանյան իշխանությունն այնտեղ անցկացրել էր

<sup>36</sup> Ձեռ. հ<sup>մ</sup> 114, ՎՄԳ:

<sup>37</sup> Յ. Տաշեան, Տայք, դրացիք և Խոտորքուր, հ. Բ, էջ 72: Տե՛ս նաև ձեռ. հ<sup>մ</sup> 114, ՎՄԳ:

իբր առաջին աշխարհագիրը (Tahrir)՝ հարկատու բնակչությանը հաշվառումի տակ վերցնելու նպատակով<sup>38</sup>:

Համշենում գրված մեզ ծանոթ վերջին հիշատակարանը գրել է Կարապետ Ջուղայեցին՝ 1630 թ. ընդօրինակած «Մաղմուսարաւիթ» ձեռագրում: Վերջինս հետապնդվելով Մովսես կաթողիկոսին՝ փախչում և հաստատվում է Համշեն գավառի Եղնովիտ գյուղի Խաչեքարի մենաստանում: Մեկ այլ ձեռագրի հիշատակարանում Կարապետն իր համար օգտագործում է Գրիգոր անունը և նշում, որ եղել է Պոնտոսցի Տեր-Ավետիս եպիսկոպոսի աշակերտը<sup>39</sup>: Այս վկայությունը ցույց է տալիս, որ դեռևս 1630 թ. Խաչիկ հոր մենաստանը շարունակել է գործել որպէս հայոց գրչության կենտրոն:

Այսպիսով, վերոնշյալ ձեռագրերն անհերքելիորեն հաստատում են, որ Համշենը ժամանակին եղել է հայկական իշխանական և հոգևոր ու մշակութային կարևոր կենտրոններից մեկը՝ ռեներալով գրչության բարձր մակարդակ: Այս ձեռագրերը միաժամանակ կարևոր փաստեր են՝ հերքելու Համշենի պատմության ուղղությամբ թուրքական միտումնավոր կեղծարարությունը, որը ամեն գնով ձգտում է մերժել Համշեն գավառի հայկական անցյալը:

<sup>38</sup> 387 Numaralı Muhasebe-i Vilayet-i Karaman ve Rum Defteri (937/1530), Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü, Devter-i hakank Dizisi:III, Ankara, 1997, s. 730-733.

<sup>39</sup> Ձեռ. հ<sup>մ</sup> 52, ՎՄԳ:

Лусине Саакян  
(резюме)

В рамках этой статьи собраны и подвергнуты историко-языковому исследованию колофоны рукописей, написанных в уезде Амшен в XV-XVII веках. Вообще информация об истории Амшена крайне мала, а колофоны дают возможность в какой-то мере восполнить этот пробел. Эти источники передают важные сведения об армянском княжестве Амшена, о политике Османской империи в этот период, о духовной и культурной жизни, о климатических условиях, о языковой ситуации. Колофоны также подтверждают, что уезд Амшен был одним из центров высокого уровня армянской письменности.

HAMSHEN IN ARMENIAN MANUSCRIPTS

Lusine Sahakyan  
(summary)

The present article is aimed to put together and analyse from a historical-linguistic viewpoint colophons of manuscripts written in XV-XVII centuries in the Province of Hamshen. Historical information on Hamshen being rather scanty, the colophons turn out to be important sources to provide valuable information concerning the Armenian reign in Hamshen, its political, spiritual and cultural life, the linguistic situation, as well as the climatic conditions of the region. The colophons, on the other hand, confirm that the Province of Hamshen has been one of the important centres of the Armenian art of writing.

ԲՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ ԲԱՔԻԻ ԴԻՎԱՆՈՒՄ

Բանալի բառեր՝ Բաքի, բնության թեմատիկա, քասիդ, գազել, Օ ծաղիկներ

XVI դարի օսմանյան բանաստեղծ Բաքիի դիվանում առանձնահատուկ տեղ է գրավում բնության թեմատիկան: Մասնավորապես, բնության նկարագրությունն արտահայտված է գազելներում և քասիդների ներածական մասում՝ նեսիբում ու ադոթթ (dua) բաժնում<sup>1</sup>: Ըստ նեսիբի՝ տարանջատվում են զարնանային (Bahariye/Rebiye), ձմեռային (Şitâiye/Berfiye), ամառային (Temmuziye), ծաղիկների (Verdiye), արևի (Şemsiye) և այլ թեմաներով քասիդները<sup>2</sup>: Առհասարակ այդ ժամանակաշրջանի օսմանյան բանաստեղծներին բնորոշ էր մի կողմից համեմատություններով և փոխաբերություններով հարուստ նորանոր պատկերներ ստեղծելը, իսկ մյուս կողմից նույն կարծրացած կաղապարային արտահայտությունների կիրառումը՝ բառերի հերթականության տեղափոխությամբ<sup>3</sup>:

Բաքին, ի տարբերություն վերոհիշյալ պոետների, բնությունը պատկերելու համար զերծ էր մնում տարատեսակ քարացած արտահայտություններից, յուրաքանչյուր տողում փորձում էր կենդանացնել ստամբուլյան գարունն ու ամառը, աշունն ու ձմեռը՝ համեմելով դրանք բազում համեմատություններով ու մակդիրներով: Ինչպես նշում է թուրք գրականագետ Ս. Ֆ. Քյոփրյու-

<sup>1</sup> Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ թյուրքագիտության աւբի-նի ախտենտ: Էլ. փոստ՝ [ani.sargsian@ysu.am](mailto:ani.sargsian@ysu.am)

<sup>2</sup> Pala İ., *Ansiklopedik Divân Şiiri Sözlüğü*, İstanbul, Kapı Yayınları, 2004, s. 56:

<sup>3</sup> Dilcin C., *Örneklerle Türk Şiir Bilgisi*, 8. Baskı, Ankara, Türk Dil Kurumu Yayınları, 2005, s.83:

<sup>4</sup> Levend S., *Divan Edebiyatı (Kelimeler ve remizler mazmunlar ve mefhumlar)*, 4. Basım, İstanbul, Enderun Kitabevi, 1984, s. 567:

լուն, «Բաքիի ստամբուլյան գարունը, լուսնի լույսը, ձմեռային տեսարանները իրական են, անկեղծ և չափազանցությունից շատ հեռու»<sup>4</sup>:

Բաքին իր բանաստեղծություններից մեկում արժևորում է բնության նկարագրության մեջ իր ուրույն ու կատարյալ ոճը. **Reis-i bahr-i nazm- oldun bugün âlemde ey Bâki/ Gazel demek senin tab-i dür-efşânında kalmıştır**<sup>5</sup>. Է՛յ, Բաքի՛, այսօր դարձար պոեզիայի ծովի տիրակալը, / Գազել կոչվածն էլ քո գեղեցիկ նկարագրված բնության մեջ մնաց<sup>6</sup>:

Բաքիի՝ գարնանը վերաբերող բանաստեղծությունների մեծ մասը նվիրված է Սուլթան Սուլեյմանին և վերջինիս գարնանային նվաճումներին ու հաղթանակներին:<sup>7</sup> **Bahâr oldı dem-i seyr ü temâşâdur Hudâvendâ/ Semend-i azmin etsün arsa-i âlemde cevläni/ Yürü Rum illerin seyr et hirâmân eyle yanunca/ Alem gibi sehi-kâmet nigâr-ı pāk-dāmâni.../Nihâl-i serv-i bâğ-asâ nesim-i feth ü nüsratden/ Salmsun naz ile nizen hirâmâni hirâmâni**<sup>8</sup>. Գարուն է եկել, ի՛մ սուլթան, դիտելու և հմայվելու ժամանակն է/ Եվ թող սլանա խայտազորը ձին աշխարհի կենտրոնում: / Քայլիր Ռումի նահանգներում դրոշակի պես մաս-մաքուր, / Ու հպարտ կեցվածքով սիրելիիդ հետ ձեմիր այդ վայրերում: / Ինչպես քամին է փչում և այգիներում նոճիների շիվերն է հեզիկ-նազիկ օրորում, / Այդպես էլ քո նիզակը թո՛ղ հաղթական քամիներով անվերջ ծածանվի:

Գարնանային նկարագրություններով է հարուստ նաև Բաքիի՝ Ալի փաշային ձևոված քասիդը, որի առաջին տողում բնության զարթոնքը նա համեմատում է Հիսուսի՝ մահացածների կենդանացնելու, իսկ երկրորդ տողում՝ կույրերին բուժելու աստվածաշնչյան-դուրանյան պատկերների հետ, որոնք Բաքիի

պոեզիայում գեղարվեստական բնույթ էին կրում և չունեին կրոնական երանգ<sup>9</sup>. **Rûh-bahş oldı Mesihâ-sifat en as-i bahâr / Açıdılar âdelerin Hâb-ı 'ademden ezhâr/ Tâze cin buldı cihân irdi nebâtâta hayât / Ellerinde harekât eyleseler serv ü çenâr / Döşedi yine çemen nat -ı zümür-rüd-famın / Sim-i hâim olmuş iken ferş-i harîm-i gülzâr / Yine ferrâş-ı sabâ sahn-ı ribât-ı çemene / Geldi bir kâfile kondurdu yükü cümle bahâr**<sup>10</sup>. Գարնան շունչը կրկին Հիսուսի պես նոր կյանք ստացավ, / Օտարիկները խորը քնից աչքերը բացեցին: / Ողջ աշխարհը կենդանացավ, բույսերին նոր կյանք սովեց, / Եվ նոճին ու չինարը կարող են օրորվել, որքան ուզեն: / Արծաթանման վարդաստանի գորգի վրա կրկին / Խոտը զմրուխտի գույնով ծածկոցը փռեց, / Եվ երբ զեփյուռը փչեց այգու քարվանսարայում / Բուրումնավետ գարնան քարավանը հիմնադրեց:

Գարնանը նվիրված բանաստեղծությունների մեծ մասում Բաքին անդրադառնում է նոճիներին, որոնք խորհրդանշում են նրա ծննդավայր Ստամբուլը: Նոճիները Բաքիի պոեզիայում հիմնականում հանդիպում են սիրեցյալի հասակը նկարագրելիս. **Serv-kametler iki yanin alurlar yolun/ Râh-ı gülzâra döner yolları İstanbulun**<sup>11</sup>. Ճանապարհի երկու կողմը գրավել են նոճիները, / Որոնք վարդաստանի են վերածել Ստամբուլի ճամփաները: **Bir kadem bas lutf ile gel gülsene ey serv-kad/ Bileler eksüklüğün her serv-i bâlâ semt semt**<sup>12</sup>.- Է՛յ իմ նոճու հասակով սիրեցյալ, բարեհաճիր վարդաստան, / Որ բարձրահասակ նոճիներն իրենց թերությունը հասկանան:

Գարնան նկարագրություններում բանաստեղծը հիշում է նաև հորդառատ անձրևների մասին՝ այն համեմատելով ան-

<sup>4</sup> Köprülü F., *Edebiyat Araştırmaları* N 2, 2. Baskı, Ankara, Akçağ yayınları, 2004, s. 477:

<sup>5</sup> Kudret C., *Divan şiirinde üç büyükle* 2 Baki, 4. Basım, İstanbul, İnkilâp Kitabevi, 1985, s. 14:

<sup>6</sup> Բանաստեղծությունների տողացի թարգմանությունները մերն են՝ Ա. Ս.:

<sup>7</sup> Köprülü F., *Edebiyat Araştırmaları* N 2, էջ 477:

<sup>8</sup> Banarlı N., *Resimli Türk Edebiyatı*, cilt I, İstanbul, Millî Eğitim Basımevi, 2004, s. 590:

<sup>9</sup> Օսմանյան դիվանի պոեզիայում Հիսուսի վերաբերյալ անդրադարձների մասին տե՛ս u Koçin A., *Divan Şiirinde Hz. İsa*, Sakarya Üniversitesi İlahiyat Fakültesi Dergisi 19, Sakarya 2009, s. 69-104.

<sup>10</sup> Çavuşoğlu M., *Bâki ve Divanından Örnekler*, Kitabevi 158, İstanbul, 2001, s. 26-27, ինչպես նաև Levend A., նշվ. աշխ., էջ 572:

<sup>11</sup> Ergun N., *Baki. Hayatı ve şiirleri*, İstanbul, Bozkurd Matbaası, 1935, s. 322.

<sup>12</sup> İpekten H., *Bâki, Hayatı, Sanatı, Eserleri*, Ankara, Akçağ yayınları 3. Baskı, 1998, s.88:

խիղճ թաթար-մոնղոլների գորքի հետ: Վերջինս հարձակվում է մարգագետնի վրա և անընդհատ «հեղեղում է» (թալանում): Բաքիի գարունը գարթոնքի խորհրդանիշ լինելուց բացի նաև բնության սուլթան էր, ով իր բազմերանգ ծաղիկներով կարողացել էր հաղթել ձմեռվա տիրակալին<sup>13</sup>. *Leşger-i ebr çemen mülkine akın saldı.../ Turma yağmada yine niteki bağı Tatar.../ Düşedi mihr-i felek yolları dibâlar ile/ Etdi teşrif çemen mülkini sultân-ı bahâr./ Subh-dem velvele-i nevbet-i şâhî mi degül/ Savt-ı mürgân-i hoş-elhân u sadâ-yı kûhsâ*<sup>14</sup> - Մարգագետնի վրա ամպի գորքը հարձակվեց./ Անխիղճ թաթարների պես անընդմեջ հեղեղեց./ Բախտի արևը ճամփեքը մետաքսով պատեց./ Սուլթան գարունն էլ մարգագետնին շնորհ արեց./ Լեռան արձագանքը, թռչունների զեղեցիկ դալլալը/ Արդյոք նման չեն այգաբացին սուլթանի համար հնչող ձայներին:

Չնայած Բաքիի դիվանում մեծ տեղ է գրավում գարնանային թեման, բայց և հիշատակության են արժանի աշնան թեմայով բանաստեղծությունները: Դրանցից է «Աշնանայինը», որը նույնպես վերաբերում է Սուլթան Սուլեյման Քանունիի ժամանակաշրջանին. *Gülsene altun veraklar zeyn edüb bad-ı hazan/ Gûyya zerkûblar dükkânı oldu gülsitan/ Rîşte-i baran gümüş tel sim-gümüş ebr-i harif/ İki çerha döndüler gûya zemin ü asman/ Rehgüzar-ı bağa dökülmüş serapa berk-i zer / Sandum altun tepsiler konmuş simât-ı husrevân/ Bağda gerdan eder evrakı sanman girdibad/ İndiler seyyareler kılmağa seyr-i bustan/ Perr ü bal açmış yeşil tuti iken berk-i çenar/ Zerd olub ser-pençe-i şehbaze dönmüştür heman/ Râyegân aldım sanurdu lâl ü yâkutu veli/ Şimdi nakd altun saya durmuş nihâl-i ergavan*<sup>15</sup>. - Այգին ոսկերչական խանութ է դարձել./ Պարանի նման տեղացող անձրևը/Արծաթե թելերի պես փալլում է կտուրներին, /Գետինն ու երկինքը կարծես երկու անիվ են դարձել./Այգին ոտքից գլուխ ծածկված է ոսկյա տերևներ:

.../Մաստիկ քամիներն այգում տերևներն են պտտում, /Եվ սաստղերն պարտեզ են իջնում են զբոսներու, /Ես կարծեցի, թե սուլթանի առջև սեղանի ծածկոցն է՝ ոսկյա ամսեներով:/Չինարի տերևները, որ լայնաթև կանաչ թութակ էին, / Այժմ պտտվելով քազեի ճանկեր դարձան:/Եվ կարծես վերևից շնորհվեց մարգաբիտն ու հակինթը, /Իսկ շեփորուկի տունկը ոսկյա պատյանի մեջ շարունակեց փակված մնալ:

Բաքին գազելներից մեկում աշունը նմանեցնում է տարեց ամառը, սեփական ձեռագիր թերթերը՝ համեմատում ցիրուցան եղած տերևների, ինչպես նաև իր ապրած տարիների հետ: Գազելում անդրադառնում է նաև նորատունկին, որն էլ խորհրդանշում է գալիք երիտասարդ սերունդն ու ապագան<sup>16</sup>: *Nâm-u nişâne kalmadı fasl-ı bahârdan/ Düşdi çemende berg-i dirahit itibârdan/ Eşcâr- bâğ hırka-i tecride girdiler/ Bâd-i hazan çemende el aldı çenardan/Her yandan ayağma altun akup gelür/ Eşcâr-ı bâğ himmet umar cûybârdan/ Sahn-ı çemende durma salınsın sabâ ile/ Âzâdedür nihâl bugün berg ü bârdan/ Bâki çemende hayli perîşân imiş varak/ Benzer ki bir şikâyeti var rüzgârdan*<sup>17</sup>- Գարնանից ոչ մի հետք ու բիծ անգամ չմնաց./ Այգիներում ծառերի տերևներն օրորվելով ընկան:/ Այգու ծառերն էլ դերվիշների պես նոր հրքանների մեջ մտան, /Իսկ աշնան քամին ձեռքով ցած նետեց չինարի տերևները:/ Այգու ծառերն աղբյուրից օգնություն խնդրեցին, / Եվ այն ամեն կողմից ոսկիով պատեցին:/ Նորատունկն այսօր ազատ է տերևներից ու պտուղներից./Եվ թո՛ղ նա հանգիստ զբոսնի այգում առավոտյան քամու հետ:/ Է՛յ Բաքի, տերևներն այգում այնպես ցաքուցրիվ եղան,/ Կարծես քամու դեմ մի մեծ բողոք ունեին:

Բաքին առանձնահատուկ ուշադրություն է դարձնում ծաղիկներին: Հայտնի են նրա Հակինթի քասիդը<sup>18</sup>, Վարդի<sup>19</sup>, Կա-

<sup>13</sup> Levend A., նշվ. աշխ., էջ 574:

<sup>14</sup> Çavuşoğlu M., նշվ. աշխ., էջ 27-28:

<sup>15</sup> Ձեռ հ<sup>4</sup> 321 Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան, արաբատար ձեռագրերի ֆոնդ, (այսուհետ՝ ՄՄ ձեռ. հ<sup>4</sup> 321 ), էջ 15բ:

<sup>16</sup> İpekten H., նշվ. աշխ., էջ 128:

<sup>17</sup> Նույն տեղում, 124-128:

<sup>18</sup> Ergun N., նշվ. աշխ., էջ 62-66:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 254:

կաչի<sup>20</sup>, Մելխակի<sup>21</sup> ռեդիֆներով զազելները և այլն: Ծաղիկների արտաքին որոշ հատկություններ Բաքին համեմատում էր տարբեր երևույթների հետ. ծառերը հասակի վեհության իմաստով նմանեցնում է և սուլթանի պահապան զորքին, և սիրեցյալի հասակին ու հեզությանը, սուլթանի բանակը ծաղիկների բազմությանը, որն առաջնորդում էր շուշանը<sup>22</sup>. **Farkına bir nice per takınur altun telli/ Hayl-i ezhâra meğer zanbak oluptur serdar/ Dikti leşgergeh-i ezhâra sanavber tûğun /Haymeler kurdu yine sahn-i çemende eşcâr**<sup>23</sup>.-Շուշանն իր գլխին տարբերվելու համար այնքան ոսկյա փետուրներ կրեց, /Մինչև դարձավ ծաղիկների հրամանատար:/ Ծաղիկներից սուսամբարը բանակատեղին հիմնեց./ Ծառերն էլ այգու կենտրոնում կրկին վրան կապեցին:

Մեկ այլ բեյթում Բաքին շուշանին նմանեցնում է սուլթանի առջև խոնարհված զինվորի. **Mektûbin elde tutmuş zanbak reh-i çemende /'Arz ide tâ ki hâlin sultân-ı kâm-kâre**<sup>24</sup> -Սյգում շուշանը նամակը ձեռքին/Երջանիկ սուլթանին իր դարդն է պատմում:

Բաքիի պոեզիայում հիշարժան են վարդի տարբեր մոտիվները, որոնք արտահայտում են նոր կյանք ու հարատևություն: Վարդը համեմատվում է սիրեցյալի հետ, ում շնորհիվ անկենդան աշխարհը նոր կյանք է ստանում, կամ ընդհակառակը՝ վերածվում կարճատև կյանքի խորհրդանշի: Բաքին վարդի ժամանակը (devr-i gül) ասոցացնում է մարդու կյանքի զարնան հետ, որը հարատև չէ: **Dâ'im olmaz devr-i gül devrân ise bâki degül... /Gel begüm dönsün kadeh bundan yig olmaz devr-i gül**<sup>25</sup> -Հարատև չէ վարդի շրջանը, իսկ ժամանակն էլ մնայուն չէ/Ե կ,

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 156-157:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 251:

<sup>22</sup> Օսմանյան հրամանատարները, վեզիրները, որևէ հերոսություն անելով, գլխանոցի վրա կրում էին կոունկի փետուր, որը Բաքին համեմատում է շուշանի միջի դեղին ցողուններին:

<sup>23</sup> Ergun N., նշվ. աշխ., էջ 40:

<sup>24</sup> Küçük S., նշվ. աշխ., էջ 281:

<sup>25</sup> Küçük S., նշվ. աշխ., էջ 319:

ի՞մ պարոն, վերցրո՛ւ զավաթը, սրանից լավ վարդի ժամանակ չի լինի: **Gül devri 'ays mevsimidür mutribâ bu gün /Bülbül-sıfat çemende biraz gulgul eylesen**<sup>26</sup>-Վարդի ժամանակն է, է՛յ երաժիշտ, խնջույքի պահն է այսօր./Դու էլ սոխակի պես մարգագետնում մի փոքր դայլալի: **Gül gibi olmak dilersen şâd u hurrem ey gönül /Lâle-ves̄ elden düşürme câmı bir dem ey gönül**<sup>27</sup> -Օ, սիրտ իմ, եթե ցանկանում ես լինել վարդի պես ուրախ և զվարթ/ Կա-կաչի պես ձեռքիցդ մի պահ անգամ գավը չզցես, է՛յ սիրտ: **Fürkatünde gönlüm eglerdüm gül-i gül-zâr ile/ Gül de gitdi yalunuz kaldum gamunda zâr ile**<sup>28</sup>-Բաժանման պահին սիրտս խոնարհեցի վարդաստանի վարդի պես./ Վարդն էլ գնաց, միայնակ մնացի ողբացող ցավիս մեջ:

Սուլթան Սուլեյմանին նվիրված քասիդներից մեկում Բաքին աղոթում է սուլթանի կյանքի համար՝ համեմատելով այն վարդի գեղեցկության հարատևության հետ. **Du'â idelüm ruy-ı ikbâl u bahtı /Dem-â-dem ola gül gibi tâze vü ter**<sup>29</sup>-Եկե՛ք աղոթենք ապագայի ու բախտի համար./ Թող դալար վարդի նման հարատև լինի: **Devr-i gül sanman cihânı böyle tezyin eyleyen /Yümn-i ikbâl-i Hudâvend-i cihân-bân eyledi**<sup>30</sup> -Մի կարծիր՝ աշխարհն այսպես զարդարված վարդի շրջան է/Երջանկությունն ու ուրախությունը սուլթանի պատվին է:

Բաքին իր ժամանակակիցներից առաջինն էր, ով ի թիվս այլ ծաղիկների, պոետական համեմատությունների համակարգ է ներգրավում նաև մելխակը: Նշենք, որ մինչ այդ օսմանյան պոեզիայում անդրադառնում ու դրվատում էին վարդն ու կակաչը, և ինչպես նշում է թուրք գրականագետ Բ. Սյվազողլուն, «16-րդ դարում մելխակը Բաքիի շնորհիվ կակաչի հետ միաժամանակ

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 189:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 207:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 257:

<sup>29</sup> Ergun N., նշվ. աշխ., էջ 15:

<sup>30</sup> Küçük S., *Bâki Divânı*, Ankara, Atatürk Kültür Dil ve Tarih Yüksek Kurumu, 1994, s. 17.

նույն գահին բազմեց »<sup>31</sup>: Բաքին իր «Մեխակ» ռեդիֆով զազելում, ծաղկին ներկայացնում է իբրև ինքնամիտոփ, անկախ մի բույս, և այն համեմատում արդյունքի՝ զլիսարաց, ուսաբորիկ թափառող դերվիշների հետ: *Aşkınla kılup kametini dâl karanfül/Arz itti sana müy-i sefid âl karanfül/ Farkında kılup yâsemeni dâgına penbe /'Aşkunda geçer baş açuk abdâl karanfül... Geh şişe gehî kühneseif'al ile kılur 'aış / Bâkî-ves olup 'işrete meyyâl karanfül*<sup>32</sup> - *Իր սիրուց մեխակը ճկվեց կորացավ, / Խոնարհվեց ճերմակ երիզներով շիկակարմիր մեխակը, / Նկատելով լեռան վրա բազմած հասմիկին վարդակարմիր, / Անցավ սիրավառ, բաց գլխով արդավ մեխակը... / Երբեմն շամփուրով, երբեմն էլ կավե ամանով / Բաքիի պես զվարճանում ու խնջույքն էր փառաբանում մեխակը:*

XV դարից սկսած ծաղիկների թեմատիկայում իր ուրույն տեղն է գրավում նաև կակաչը, որին պոետները նմանեցնում էին արյանը, զինուն, ինչպես նաև սիրեցյալի կարմիր այտերին: Այս շրջանում պոետները զովերգում էին միայն կակաչի վայրի տեսակները<sup>33</sup>: Օսմանյան դիվանի բանաստեղծ Նեջաթին գրում է. *Taşradan geldi çemen sahında biçare durur/ Devr-i gül sohbetine lâleyi iletmediler*<sup>34</sup> - *Օտարությունից եկավ, այգում միայնակ մնաց, / Վարդի շրջանի գրույցին էլ կակաչին մասնակից չդարձրին...*

XVI դարում կակաչը կարծես նորաձև է դառնում օսմանյան մշակույթում՝ մասնավորապես պոեզիայում<sup>35</sup>: Բաքին, հետևելով այս նորաձևությանը, *lâle* ռեդիֆով զազելում կակաչը համարում է վարդին հաղթանակած և ծաղիկների մարգագետնում իր ուրույն տեղը գտած ծաղիկ. *Jâlelerden takınur tâcına gevher lâle/ Sâh olupdur çemen iklimine benzer lâle/ Saltanat bâr-gehin kurdi*

<sup>31</sup> Ayvazoğlu B., *Güller Kitabı*, İstanbul, Ötüken Yayınları, 2004, s. 35.

<sup>32</sup> Ergun N., նշվ. աշխ., էջ 251:

<sup>33</sup> Gökyay O., *Divan Edebiyatında Çiçekler III, Güçlük nerede?*, Seçme makaleler 3, 1. Baskı, İstanbul, İletişim Yayınları, 2002, s.61-62, Ayvazoğlu B., նշվ. աշխ., էջ 109, 110:

<sup>34</sup> Erdoğan M., *Bâkî Divânında Bitkiler ve Çiçekler*, Yüksek Lisans Tezi, Elazığ, 2007, s. 81.

<sup>35</sup> Gökyay O., նշվ. աշխ., էջ 62:

*yine fasl-ı bahâr.../ Bûy-ı müşgîn-i bahâr irdi dimâg-ı dehre / Yakalı dâmen-i küh-sârda micmer lâle/ Âl fânûs ile geldi giceden gül-zâra /Virdi sahn-ı çemenün yollarına fer lâle/ Ergavânlar tutuşup hürmen-i gül yanmag için /Gül-sitân milkine âteş kodı yir yir lâle/ Jâle nakdin kadehe koydı çemen bezminde /Cem' idüp saklamadı gonca gibi zer lâle/ Dil-i hûnîni hayâl eyledi katmer lâle/ Zînet-i gülşen-i ikbâle yiter ey Bâkî/ Cihre-i baht-ı şehensâh-ı muzaffer lâle*<sup>36</sup> *Յողերից գոհարազարդ թագ դրեց կակաչը, / Ու այգու շահը դարձավ, / Գարունը կրկին սուլթանություն ստեղծեց, / Գարնան մշկաբույրը քիմքին կպավ, / Լեռան փեշը բուրվատով օծվեց կակաչի, / Գիշերն էլ կարմիր լապտերով վարդաստան եկավ, / Եվ մարգագետնի ճամփաները լուսավորեց: / Շեփորուկներն իրար կպան վարդերին հրդեհելու համար, / Ու վարդաստանում տեղ-տեղ կրակ բարձրացավ: / Յողն իր գավաթով խնջույքին մասնակցեց, / Կակաչն էլ կոկոն չդարձավ ու չթաքնվեց, / Ու երագեց արյունահեղ սիրտը կակաչի: / Է՛յ Բաքի, հերիք է վարդաստանի երգը երգես, / Շահնշահ դարձավ հաղթանակած կակաչը:*

Բաքիի պոեզիայում կակաչը հիմնականում կիրառվում է սիրեցյալի արտաքինի նկարագրություններում. կակաչի գույնը համեմատվում է սիրեցյալի շիկնած, ամոթխած դեմքի, ծաղկի սև սերմերը՝ սև խալի, իսկ ծաղկեբաժակը՝ զինով լի գավի հետ. *Lâleler bezm-i çemende câm-ı 'işret gösterür /Devletinde husrev-i gül 'aışa ruhsat gösterür*<sup>37</sup> - *Կակաչները այգու հավաքին խնջույքի գավաթներ կմեկնեն, / Երբ երկրի արքա վարդը խնջույքի թույլտվություն տա:*

Բաքիի դիվանում անդրադարձներ կան նաև մանուշակին՝ որպես գարնան գալստյան նախանշան: Նա հաճախ մանուշակը համեմատում է օսմանյան արքունիքում կապույտ համազգեստ կրող ծառայողների հետ և կիրառում է սուլթան-վարդ և մանուշակ-ծառու համադրությունը. *Devrinde güle niçün olur bende*

<sup>36</sup> Ergun N., նշվ. աշխ., էջ 156-157:

<sup>37</sup> Küçük S., նշվ. աշխ., էջ 95:

benefşe...<sup>38</sup> -Ժամանակին մանուշակներն ինչո՞ւ վարդի համար ծառա դարձան... Bir gonca benefşe koparup tâcina sokmuş / Taglarda külung atduğı dem başına Ferhâd<sup>39</sup>.-Մի կոկոն մանուշակ ամրացնելով իր թագին, /Ֆերհադը քուլունգով ճեղքեց լեռները:

Հակինթը նույնպես Օսմանյան պեղիայում լայն կիրառություն է ունեցել: Արտաքին տեսքը և յուրահաստուկ բուրմունքը համեմատվել է ամպի, ալիքների, ինչպես նաև սիրեցյալի մազերի հետ: Բաքին Մեհմեդ Չելեբիին ձևված «Հակինթ» քասիդում ծաղկին շնորհում է «այգու տիրակալ» տիտղոսը. *Urnup farkına bir tâc-ı mücevher sünbül / Oldı iklim-i çemen tahtına ser-ver sünbül/ Şeh-levendâne şikest eyledi taraf ı külehin / Gögsinün dügmelerin çözdü ser-â-ser sünbül / Oldı gül-şen yine bir dil-ber-i müşgin mergül / Şol kadar virdi ana zinet ü ziver sünbül / Çihre gül sine semen çeşm-i mükehhâl nergis / Hat çemen gonca dehen ca'd-ı mu'anber sünbül / Yazdurup müşğ ile boynına hamâ'il takdı / Kendüye itmek içün halkı musahhar sünbül / Şahn-ı gül-zâra gelüp eyledi 'arz-ı didâr / Jâlelerden takınup gûşına gevher sünbül/ Benzer ol bûy-ı dil-âviz ile mûy-ı yâre / Başlar üzre n'ola ger eyler ise yir sünbül/ Yine gömgök tere batmış çıka geldi çemene / Nevbahâr irdi diyü virdi haberler sünbül/ Beden-i pâki neden böyle olurdu hûş-bû / Olmasa müşğ ü gül-âb ile muhammer sünbül<sup>40</sup>* - Հակինթը գոհարազարդ թագը դրեց/ Եվ մարգագետնի գահին բազմելով՝ աշխարհի տիրակալը դարձավ: /Ու անամոթաբար գդակը մի կողմ թեքեց, /Եվ կոճակներն էլ ոտքից զուխ արձակեց:/ Այսպես հակինթը այնպես զարդարեց, որ /Օտղկանոցը հյուսերով գեղեցկուհու վերածվեց:/ Դեմքը՝ վարդի պես, կուրծքը՝ հասմիկ, սուրմա աչքը՝ նարզիզ, /Բերանը՝ բողբոջ, իսկ անուշաբույր մազերը՝ հակինթ:/ Հակինթին պարուրեցին մուշկով/ Մի հմայիլ

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 135:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 88:

<sup>40</sup> Չեռ. հ<sup>տ</sup> 321, էջ 17բ-18ա:

վզից կախեցին:/ Ականջին կախեցին մարգարիտ ցողի հատիկներ:/ Ու ծաղկանոց գալով՝ նա իր գեղեցկությունը ցուցադրեց:/ Զարմանալի չէ, որ հակինթը դուրեկան ծաղիկ է, որ /Չոգուն ուրախություն պարզևող սիրահարի մազերն է հիշեցնում: /Այսպես զարնան գալուստն ավետեց հակինթը, /Կասկապույտ քրտինքների մեջ թաթախված, / Եթե նա վարդաջրով ու մուշկով շաղախված չլիներ, արդյոք/ Նրա մարմինն այսպես անուշ կբուրե՞ր...

Այսպիսով, Բաքին պատկերելով զարնանային այգու գեղեցկությունը՝ ծառերն ու ծաղիկները, մեծ վարպետությամբ դրանց համադրում և համեմատում է գինու գավի, արյան, սիրեցյալի ամոթխածության ու չքնադության հետ: Գարունը բանաստեղծի համար վերածվում էր սուլթանի հաղթանակների, խնջույքի և անհոգ զվարճությունների մի շրջանի: Աշնան թեմատիկայով բանաստեղծություններում նա պատկերում էր թշնամու անողորմ գործողությունները և միաժամանակ անդրադառնում իր հիասթափություններին ու կյանքի անիմաստությանը: Բաքին թեպետ հետևում է իր նախորդների օրինակին, բայց նրան հաջողվում է բնության յուրաքանչյուր երևույթի տալ յուրատեսակ պատկերավորություն և կենդանություն, ստեղծել երևակայական մեծ աշխարհ կիրառելով բարդ համեմատություններ ու փոխաբերություններ:



Ани Саргсян  
(резюме)

В статье проанализировано восприятие поэтом времен года и природы. Баки не использовал традиционные шаблоны для изображения природы, а пытался оживить в каждой строке стамбульскую весну и лето, осень и зиму, используя многочисленные сравнения и эпитеты. Описывая природу, Баки часто сопоставляет и сравнивает растения с бокалом вина, с кровью, с очаровательной стеснительностью возлюбленной, а яркие описания пробуждения природы и весенней красоты стараются связать с мастерством побед османских султанов и с последующими царскими пиршествами.

THE THEME OF NATURE IN THE DIVAN OF BAKI

Ani Sargsyan  
(summary)

The article is focused on Baki's perception of nature and seasons. The poet never used traditional patterns for portraying nature, yet, he tried to revive spring and summer, autumn and winter of Istanbul in every line of the poems, using various similes and epithets. Describing the nature Baki often compares plants with a glass of wine, with blood, with charming shyness of the beloved, but the vivid descriptions of blossoming nature and the beauty of the spring tries to associate with the victories of the Ottoman sultans and the subsequent royal feasts.

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ՅԵՂԵՐԻ ԲՈՆԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՅԱՇԱՐ ՔԵՄԱԼԻ «ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻ ՅՈՒԼԵՐԻ ԼԵԳԵՆԴԸ» ՎԵՊՈՒՄ

*Բանալի բառեր՝ թուրքմեններ, յուրյուքներ, բնակեցում, ժողովրդական ավանդույթներ, քոչվոր, նստակյաց, թուրք գրականություն*

Ժամանակակից թուրք գրող Յաշար Քեմալն (1922-2014թթ), ով իր մանկությունն անց էր կացրել Վան-Արճեշ ճանապարհին գտնվող Սուրադիյե նահանգին հարակից Աոնիս կամ Գյունսեքի՝ այսօր Գյոքչեդամ<sup>1</sup> գյուղում, ուր երկարատև թափառումներից հետո հաստատվել էր նրա ընտանիքը։ Քեմալի մայրը քրդական Քըզբան, իսկ հայրը՝ հողագործ Սադրբ Էֆենդին՝ Լուվան ցեղերից էին սերում<sup>2</sup>։ «Կիլիկիան՝ այդ հարթ ու բարեբեր դաշտավայրը, ընկած Միջերկրական ծովի և Տավրոսյան լեռների միջև, այսօր կոչվում է Չուքուրօվա...<sup>3</sup>։ Եթե իսկապես, իմ ծննդավայրը Համիթեն է, ուրեմն այն գտնվում է Միջերկրականից 30 կմ հեռավորության վրա... Այդ ժամանակ մեր գյուղն ուներ 60 տուն։ Գյուղի հիմնական բնակչությունը թուրքմեններ էին. նրանց բռնի վերաբնակեցումը օսմանյան կայսրությունում սկսվել էր դեռևս 1865թ.-ից»<sup>4</sup>։ Ըստ հեղինակի, գյուղի միակ քրդախոս ընտանիքն իրենք էին։ «Որքան ես ինձ հիշում եմ, մեր

\* Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի ասիստենտ։ Էլ. փոստ՝ [siranuysh.galshoyan@ysu.am](mailto:siranuysh.galshoyan@ysu.am)

<sup>1</sup> Özkök E., Ne zamandan beri Kürt oldum, Hürriyet 27, Ağustos, 2011.

<sup>2</sup> Kemal Y., Kendini Anlatıyor, Alain Bosque ile Görüşmeler, Adam Yayınları, İstanbul, 2003, s. 33.

<sup>3</sup> Kemal Y., նշվ. աշխ., էջ 31. Քեմալի մասին կենսագրական տեղեկություններ է գրառել խորհրդային գրականագետ Ռ. Ֆիշը՝ Ստամբուլում նրա հետ ունեցած հանդիպման ժամանակ։

<sup>4</sup> Kemal Y., նշվ. աշխ., էջ 32:

տանը քրդերեն էր խոսվում, իսկ մայրական կողմի բոլոր տղամարդիկ դարձել էին «բարի ավագակներ» և քաշվել լեռները<sup>5</sup>։ Թուրքմենական գյուղում, մեզ որպես քուրդ բոլորովին չէին առանձնացնում, չէին զատում<sup>6</sup>։ Իրենց հարևանությամբ ապրող թուրքմեններին Օսմանիեյում էին հայտնվել՝ Օսմանյան կայսրության քոչվորներին տեղափոխելու, նրանց հողին կապելու երկարատև քաղաքականության արդյունքում և քոչվոր այդ ցեղերը դեմ էին բռնի բնակեցմանը, քանի որ նրանք դառնում էին հարկատու և զինապարտ։ Ըստ պատմական փաստերի թուրքական կանոնավոր բանակը հսկայական զորքով դուրս է գալիս թուրքմենների դեմ։ Քոզան Օղլու բեյն էլ միավորում է թուրքմեններին, կազմակերպում դիմադրություն, սակայն ապստամբների ճնշելուց հետո նրանց մի մասին արքայազն էր կրկին հարավային շրջաններ... հազարավոր թուրքմեններ սովին ու կլիմայական վատ պայմաններին չդիմանալով, մահանում են<sup>7</sup>։

1971թ. Յաշար Քեմալը հրատարակում է «Հազար ու մի ցուլերի լեզենդը» վեպը՝ ուրույն տուրք մատուցելով թուրքմեն ժողովրդին, նրա ավանդույթներին։ Գործողությունների թատերաբեմը տասնիններորդ դարի առաջին կեսի Թուրքիան է. թուրքմեն քոչվորներին հողին կապելու, նրանց նստակյաց դարձնելու ջանքերն ապարդյուն են թվում պետության համար։ Իրադարձությունները տեղի են ունենում Չուքուրօվայում, որն այդ ժամանակ ճահճուտ էր։ Պետությունն իր առաջ խնդիր էր դրել ճահճուտը չորացնելով, դարձնել վարելահող՝ բամբակ և այլ կուլտուրաներ մշակելու համար։ Գրողը՝ 1876թ. օսմանցիների և թուրքմենների միջև տեղի ունեցած կռիվները լուսաբանելով, խոսում է թուրքմենների աղճատված հոգեբանության մասին։ Թուրքմենները, որոնք բռնի վերաբնակեցվել էին Օսմանյան Թուրքիայում, չէին ցանկանում նստակեցության անցնել, հող

<sup>5</sup> Kemal Y., նույն տեղում։

<sup>6</sup> Kemal Y., նշվ. աշխ., էջ 34։ St'u İnanı Seksen Yıldır, Bu adamlar niçin dağlardadırlar, -diye düşünmedik, Radikal Gazetesi, Şubat 28, 2011.

<sup>7</sup> Kemal Y., նշվ. աշխ., էջ 32։

մշակել, տուրքեր տալ և երկրի բանակում ծառայել։ Մեծ զանգվածային ջարդեր են տեղի ունենում թուրքական կանոնավոր բանակի և թուրքմենների միջև։ Ընդհարումներն ավարտվում են թուրքմենների պարտությամբ։ Այս ամենից հետո թուրքական կառավարությունը նրանց բռնի վերաբնակեցնում է՝ տեղափոխելով երկրի տարբեր շրջաններ։ Ինչպես գրում է հեղինակը. «Թուրքմենների համար այդ ցավալի դեպքերը մնացին նրանց հիշողություններում»<sup>8</sup>։ Իրենց հին բարքերին, սովորույթներին համակերպված՝ այդ ժողովուրդն անընդհատ ըմբոստանում էր։ Նրանք կրկին հետ են գնում արոտավայրերը՝ քոչվորական կյանքը շարունակելու նպատակով, սակայն նորից են ընկնում հարվածի տակ, չնայած գիտակցում էին, որ էթե չինտեգրվեն երկրի նոր կյանքին, ապա հիմնավորապես կբնաջնջվեն։ Չարմանալի է, որ Քեմալն այդքան մեծ տեղ է տալիս թուրքմենների ավանդույթների խաթարմանն ու նրանց բնաջնջմանը... Իրականում, քոչվորներին երկրի զարգացման ծրագրի համաձայն, Թուրքիան պարտադրաբար սովորեցնում էր նստակեցության։ Քեմալը գրում է, որ նման գործընթացներն աղճատում էին մարդու և բնության միջև եղած կապը։ Տարօրինակ չէ<sup>9</sup>, որ հեղինակը մեծ հումանիստ լինելով, այնուամենայնիվ, իր ոչ մի ստեղծագործության մեջ բառացիորեն չի դատապարտում մի ողջ ազգի՝ հայերի ցեղասպանությունը, բնաջնջումն ու իրենց պատմական հայրենիքի տարածքներից տեղահանումը։ Չենք կարծում, որ նման հեղինակավոր գրողի աչքից հայոց ցեղասպանության փաստը կարող էր «պատահաբար» աննկատ մնալ։ «Հազար ու մի ցուլերի լեզենդը» վեպում քոչվոր մեկ ազգ մյուս քոչվոր ազգին ստիպողաբար վարժեցնում էր դառնալ քաղաքակիրթ, սովորել հողի հետ աշխատելու կանոնները։ Ահա այս է «քեմալյան ողբերգության» (ընդգծումը-Ս. Գ.) իրական դրդապատճառները։ Ստեղծագործողը հատուկ արտահայտչականությամբ, հերոսների գունեղ նկարագրով, նրանց մարդկային անհատականությ-

<sup>8</sup> St'u İnanı տեղում, էջ 149։

յունները վերհանելով, իր սկզբունքները չի պարտադրում, սակայն դրանց հանգուցալուծումները խիստ զգուշավորությամբ է առաջ քաշում:

Ահա յուրյութները կանգնում են երկրնտրանքի առջև. դիմագրավել Օսմանյան մեծ կայսրության նոր առաջ քաշած մարտահրավերներին, թե՛ ձուլվել իրենց մշակութափոխանակյալ «դեմքը» կորցնելով:

Տավրոսյան լեռներում՝ Ալադաղի շրջանում, յուրյութների Քարաչուրու ցեղը տարիներ առաջ արդեն եկել ու հաստատվել էին Չուրուրովայում: Մակայն ոչ մի թիզ հող չէին կարողացել ձեռք բերել՝ յուրացնել, քանի որ այդ տեղանքում արդեն շատերն էին եկել ու բնակություն հաստատել: Նրանք չէին կարողանում ո՛չ ձմեռել, և ո՛չ էլ հեշտությամբ թողնել ու լքել իրենց արոտավայրերը: Այդ բարդ իրավիճակներում մահանում էին, գնալով ոչնչանում էր նաև թուրքմենների ապրուստի միակ միջոցը՝ անառանների հոտը: Ողջ թուրքմենական օբայի գլխավորը՝ Սուլեյման Քահյան, շատ հեռագրեր է ուղարկում Անկարա ասելով. «Կամ մեզ սպանիր, կամ էլ՝ մեզ մի կտոր հող տուր»<sup>9</sup>: Օբայի ամենանշանավոր անձը վեպի հերոսներից Հայդար Ուստան է, ում նկատմամբ անթաքույց է հեղինակի համակրանքը: Բարձր կամային հատկություններով օժտված այս հերոսին Քեմալը նմանեցնում է իր հարազատ վայրերի ժայռերից պոկված կարծր քարի հետ: Օերունին աննկարագրելի ուժի տեր, ինչպես նաև բարձր բարոյական և մարդկային հատկանիշներով օժտված մարդ էր:

Հայդարը, ինչպես գրում է Գումիլյովը, տիրապետում էր նաև իր նախնիներից իրեն հասած երկաթե սրերի պատրաստման արվեստին<sup>10</sup>: Նա Խորասանից եկած հայտնի արհեստագործների ընտանիքից էր: Հայդարին մարդիկ վերաբերվում էին ինչպես մի սրբի. Նրա հետ էին կապում իրենց ամենանվիրա-

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 42:

<sup>10</sup> Гумилев Л.Н., Древние тюрки, Изд.-во Искусство, Москва, 1993, с.19.

կան ձգտումները: Օերունին նաև հայտնի զինագործ էր: Թանկարժեք ակներով, նախշագարդ սվիններ, թրեր էր կռում, պեռական այրերին որպես կաշառք տալիս, տեղը՝ ոչ թե գումար, այլ թեկուզ և ժամանակավոր հողահատկացում պահանջում: Մակայն թե՛ երկիրը, և թե՛ ժամանակները փոխվել էին... Ըներ Հայդար Ուստայի նվերն արդեն ոչ մեկին չէր հետաքրքրում: Բազմիցս իր ցեղախմբին հանել էր բարդ ու անելանելի վիճակներից, ցուցաբերելով մեծ կամային հատկություններ և մտքի ճշունություն: Այս դարբինն էլ ինչպես «Արարատի լեզենդը» վիզակի հերոս Դարբին Հյուսուն, զերծ էր մարդկային, հողեղեն թերություններից: Իզուր չէ, որ նրանք երկուսն էլ՝ դարբիններ էին. Հայդարն ու Հյուսուն կրակի հետ խոսք ու զրույց անող, կրակից իմաստություն առած մարդիկ են: Նրանք երկուսն էլ ալլահ ու այլ հավատալիքներ չեն ճանաչում: Ապավինում են միմիայն բնության հզոր ուժին: Գրողը նման ծերունի-իմաստունների միջոցով հաճախ է իր սեփական կարծիքը հասցնում ընթերցողին: Յաշարի հերոսն իր գիտակցական կյանքում մտահոգված է եղել միայն մեկ հարցով. ինչպես արոտավայրեր հայթայթի իր օբայի մարդկանց համար, որոնք անասնապահությունից բացի՝ ոչնչով չէին կարողանում զբաղվել: Հայդարի շնորհիվ թուրքմենական օբայի այդ բնակիչները բազմիցս հողեր, արոտավայրեր են նվեր ստացել: Թուրքմեններն անգամ պատրաստ էին իրենց աղջիկներին կնության տալ հարուստ հողատերերի որդիներին. «Հասան աղայի տղան սիրահարված էր Ջերենին»:<sup>11</sup>

Յուրյութների համար տարվա մեջ ամենակարևոր օրը Հըդըրելեզն էր. դա մայիսի հինգի լույս վեցի գիշերն էր: Ըստ ավանդապատումի՝ այդ գիշեր ծովերի սուրբ Բյասսի հետ հանդիպելու էր մութ ուժերի սուրբ Հըզըրը: Ամեն տարի այդ օրը բնության մեջ հանդիպում էին երկու սրբերը. այդ պահին մի աստղ արևմուտքից, մյուսն էլ՝ արևելքից դուրս են գալիս, և «ձեռք են բռնում», նրանք էլ են միանում իրար՝ դառնալով մեկ աստղ: Բլ-

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 47:

յասն ու Հրզրբն էլ կենդանանում են: Երբ այս ամենը կատարվում է, աշխարհում, ամեն ինչ մի պահ անշարժանում է, ոչնչանում, հետո ամեն բան կրկին շունչ է առնում. կյանքը վերսկսվում է: Եթե մի տարի պատահեր, որ նրանք չհանդիպեին, ուրեմն ծովերը ծով, հողերը հող լինելուց կդադարեին. նրանք կդառնային աշխարհի վերջն ազդարարողները: Հենց այդ գիշեր էլ օբայի մարդիկ աստղերը տեսնելու համար, բարձրանում են թումբերի ու լեռների վրա: Այն մարդը, ով կտեսներ աստղերի միանալու պահը, ինչ ցանկանար այդ վայրկյանին, կիրականանար: Աստղերի ընթացքին հետևում էր նաև Հայդար Ուստայի թողը, որն ըստ պայի՝ պետք է տեսներ աստղերի միացման պահը, քանի որ տասներկու տարեկան թողը դեռ մաքուր էր ինչպես հրեշտակը աշխարհի ու մարդկության առջև... Եթե սղան բաց թողներ աստղերի միացման պահը, նրանք անհող կմնային... Վեպի գլխավոր թեման քոչվորների հողահատկացում-հողագավթումն է... հեքիաթային են թե՛ հերոսները, և թե՛ իրավիճակները:

Ինչպես գրում է Քեմալը, Չուքուրովայում չէին սիրում յուրյութներին. վերջիններս անճարակ ու խեղճ էին, իրենց հույսը դրել էին Ջերենի ամուսնությունը Հասան աղայի որդու՝ Օքթայ բեյի հետ, որին աղջիկը չէր սիրում: Նա սիրում էր մեկ ուրիշին՝ Հայիլին: Օբայի ողջ բնակիչները՝ մեծից փոքր, համոզում էին Ջերենին...

Մյուս լուծումն էլ օբայի բնակիչները տեսնում էին Հայդար Ուստայի երեք տարի շարունակ պատրաստվող ոսկե, նախշազարդ սուրը հարուստ պաշտոնյային նվիրելու մեջ: Հայդարն էլ այդ ձևով հող ձեռք բերելուն ասես չէր էլ հավատում: «Անհուսությունը վատ բան է, դժբախտություն է բերում: Անհուսությունը միայն հատուկ է մեռածներին: Քիչ մնաց թրիս ավարտին»<sup>12</sup>: Հայդարը սրեր էր պատրաստել Քեմալ Աթաթուրքի և նրա զինակից Իսմեթ փաշայի համար: Կար ժամանակ, երբ օբայի մեկ

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 37:

աղ վարպետ Ռուսթեմ ուստան հինգ տարի աշխատելուց հետո, ոսկե նախշազարդ մի սուր է պատրաստում, այն նվիրում է փաշային. վերջինս հատկացնում է ձմեռելու տեղը, նրանց գոտեման համար պայմաններ ստեղծում:

Ժամանակներն արդեն փոխվել էին. թուրք պաշտոնյաները չէին հիանում յուրյութների պատրաստված սրերով... անհնազանդ քոչվորները թուրքական հասարակության համար անցանկալի մարդիկ էին, չէին հարմարվում հասարակական նոր օրենքներին: Հայդար Ուստան իր առաջացած տարիքը հաշվի չառնելով, գնում է Ադանա, մարդկանց առաջարկում պատրաստած նախշազարդ թուրք. սակայն ապարդյուն... գտնվեցին մարդիկ, որոնք Հայդարի գրպանում երկու դուրուշ դրեցին ու բարի ճանապարհ մատթեցին: Երկար դեգերումներից հետո, քեմալյան հերոսը հասնում է Աթաթուրքի զինակից Իսմեթ փաշային, ցույց է տալիս աշխատանքը: Փաշան թուրն առնելով ձեռքը, այս ու այն կողմ է շրջում ու շարունակում ճանապարհը: Հայդարի կրած անհաջողությունը ծանր է նստում օբայի բնակիչների վրա: Ծերունին չդիմանալով նման հարվածին, մահանում է:

Շուտով յուրյութները սկսում են գիտակցել, որ աշխարհի խաղերը տարածվում են նաև իրենց նմանների վրա. տավրոսան լեռները հազար ու մի ցուլեր դարձած եկան ու ոտքի տակ առան ողջ Չուքուրովան:

Վեպի դրական հերոսներից է Ջերենի սիրելին, Քարաչուլուի բեյ Հայիլը: Ջերենին ցեղակիցները ստիպում էին ամուսնանալ հարուստ հողատերի որդի՝ Օքթայ բեյի հետ, սակայն ծերունիները՝ իրենց ավանդույթների կրողն ու տարածողները, ամեն կերպ պայքարում էին յուրյութների հողահատկացման համար... չէին կարողանում համակերպվել Ջերենին բռնի ամուսնացնելու մտքի հետ: Քեմալն առավել սուր է ներկայացնում հասարակական և անձնական շահերի բախումը գերակայությունը թողնելով կախման մեջ: Ինչպե՞ս կարող էր գլխավոր հերոսուհին երջանիկ լինել, եթե իր շուրջն այդքան դժբախտ մարդիկ կային: Քեմալն առաջ է քաշում նաև հասարակություն-անհատ կապը:

Քեմալը, լինելով իրապաշտ գրող, հաճախ է պատրանքային՝ ոչ իրական վիճակներ ստեղծում: Հալիլը՝ սիրելիի և իր նկատմամբ անպատվությունը չներելով՝ այրում է գյուղը. բանտ է ընկնում: Այնտեղից էլ փախչելով հասնում է լեռները ու դառնում բարի ավագակ: Քեմալն ավանդույթների հինն ու նորը հակադրում է իրար. Ըստ Խորասանի քոչվոր ցեղերի՝ քարաչուլունների ավանդույթի աղջկան բռնի չի կարելի ամուսնացնել, իսկ Ջերենն ամուսանանում է Օքթայ բեյի հետ. օբան ուրախությամբ տեղավորվում է ձմեռելու Հասան աղայի հողերի վրա, ընդամենը մեկ տարի... խաբված թուրքմենները գիտակցում են, որ հարվածի տակ են դրել աղջկան...

Վիպական գործողությունները ծավալվում են առավել ինտենսիվ, երբ լեռներում ապաստանած Հալիլն ի հայտ է գալիս, ում էլ ցեղակիցները որոշում են հանձնել ժանդարմներին, սակայն արդեն նախագուշացված Հալիլը իր սիրելիի՝ Ջերենի հետ փախչում է լեռները: Երբ կրկին գալիս է թուրքմենների համար ամենակարևոր Հրդրբելեզի սուրբ օրը, Հալիլը, ով կարծում էր, թե ինքը սեփական եսասիրությունից դրդված քանդեց յուրայինների՝ ամբողջ մի օբայի բարեկեցիկ կյանքը, Ջերենի հետ որոշում է վերադառնալ գյուղ, մասնակցել արարողությանը: Սակայն հենց այդ գիշերը վրդովված ցեղակիցները սիրահարներին շրջափակման մեջ են գցում. սկսվում է երկուստեք հրաձգություն: Գրողը զուր չէ, որ վիպական գործողությունների գազաթնակետը բերում և հասցնում է հենց Հրդրբելեզի գիշերը: Նախկինում այդ օրը հաշտվում էին մարդիկ, հիմա այդ սուրբ օրը մարդկային արյուն էր թափվում. զոհվում է Հալիլը: Քեմալը վեպում նման գործողությունների նկարագրությամբ էլ առավել է շեշտադրում աշխարհում մարդկային բարոյական արժեքների, ավանդույթների ոչնչացումը, խիստ մարդկային, ներանձնական (Ջերեն-Հալիլ փոխհարաբերությունները) խնդիրները դարձնում հանրության համընդհանուր քննարկման նյութ: Ջերենը սիրելիին կորցնելուց հետո, ըստ թուրքմենական ավանդույթի՝ սպանում է Հալիլի ձիուն, ձեռքն է առնում նրա գենքն ու բարձրանում լեռները... շատ երիտասարդների նման Ջերենը

նայնպես հետագայում լքում է իր հարագատ միջավայրը, գնում ՝ խառնվում աշխարհի անցուդարձին:

Քեմալյան նկարագրություններում դրական հերոս Հալիլի նկատմամբ վերաբերմունքն այնքան էլ համոզիչ չէ: Հալիլն իր ցեղակիցներին թողնում է և հեռանում լեռները: Նրան չի հետաքրքրում թուրքմենների աղքատ ու ընչազուրկ լինելը, նաև անհաղորդ է մնում ցեղակիցների նկատմամբ իրականացվող բռնություններին. Քեմալն առաջ է քաշում Հալիլ և համագյուղացիներ կոնֆլիկտը: Մի կողմից տղան հանուն իրենց ավանդույթների իր սիրելիի համար պատրաստ էր կովելու, մյուս կողմից էլ նույն Հալիլն, արհամարհելով ամեն ինչ, փորձում է իր կյանքը շարունակել Ջերենից հեռու՝ լեռներում: Չնայած վեպի էպիկական նյութն արտահայտիչ է և խոսուն, այնուամենայնիվ, համոզիչ չէ գրողական մոտեցումը: Վեպը հարուստ է բազմաթիվ կերպարներով: Մյուսժեի հիմքում ընկած է հասարակական լուրջ կոնֆլիկտ. հին ու նոր սերունդների արժեհամակարգերի բախումը, մարդ ու բնություն հարաբերության զուգակցումը, մարդկային բարոյական արժեքների ձևափոխումն ու խեղումը: Քոչվորների և այսպես կոչված նստակյացների միջև ընթացող պայքարն ունի իր վաղ պատմությունը: Քոչվորների հոգեբանության մեջ ամենաթանկ նյութը հողն է, քանի որ այն ծառայում է որպես իրենց ապրուստի միակ միջոց: Քոչվորները չունեն մշտական բնակության վայր, նրանք տեղաշարժվում են այնտեղ, ուր կան կանաչ մարգագետիններ ու հարուստ արոտավայրեր: Եվ ուրեմն նրանք չեն կարող ունենալ հայրենիք, պետություն: Իսկ այդ ժամանակ թուրքական կառավարությունը գիտակցում էր, որ հսկայածավալ կայսրության տարածքային ամբողջականությունը միայն կարող է ապահովվել քոչվորներին նստակեցություն պարտադրելով: Միայն այդ պարագայում պետական այրերը կարող են ստեղծել քոչվորների համար հայրենիք, որը ոչ միայն տարածքային առումով իր գոյությունը կշարունակի, այլև որպես հասկացողություն կդառնա իրական:

Այս ամենին զուգահեռ կար նաև քոչվորների հիշողության դաշտի իսպառ մաքրման, վերաձևակերպման, ձևավորման

գերխնդիր: Նախկին քոչվորներն իրենց հոգու խորքում նախանձով էին վերաբերվում յուրյուքների ազատությանն ու անկախությանը: Հակասական պայքար էր գնում երկու ցեղակիցների՝ թուրքմենների ու օսմանցիների միջև: Այս ամենին հավելվում էր այն, որ թե՛ յուրյուքները, և թե՛ ցուղացիների մի մասը կրոնական առումով շիաներ էին: Հրդրբելեզի արարողությունը հաշվի առնելով կարող ենք ասել, որ նրանք ալեխներ էին: Դա են վկայում Քեմալի հերոսի հետևյալ տողերը. «Շատ ճիշտ եմ ասում, իրականում շատ ճիշտ եմ ասում: Ասածս խոսքը մեր ապուպապերի նետերի պես ուղիղ է: Եվ ուրեմն ջիհադ, ջիհադ, եղբայրներ: Անհավատների դեմ, քրգրբաշների դեմ ջիհադ: Մեր իրավունքները պաշտպանելու համար, ջիհադ...»<sup>13</sup>:

Հարկ է նշել, որ քեմալյան հերոսներն Աստծու գոյությանը հավատում են ոչ միանշանակ: Նրանք Ալլահին դիմում են, երբեմն ինչպես ամենամեծ ուժի, երբեմն էլ նրան մոտենում են եղբայրաբար, հարազատաբար, բողոքում կամ էլ իրենց հարցերը պարզաբանում նրա հետ: Քեմալն այսպես առաջ է բաշում «ժողովրդական իսլամ» հասկացողությունը<sup>14</sup>:

Քեմալը վեպում մեծ տեղ է հատկացնում երիտասարդ սերնդին ու նրա մտածելակերպի ձևավորմանը. յուրյուքները տեսնում էին իրենց պապերի ու հայրերի դժվար պայմանները՝ երազելով ավելի խաղաղ կյանքի, շքեղ ավտոմեքենաների, հինգաստղանի հյուրանոցների մասին նրանք հետզհետե լքում են հարազատ միջավայրը:

Յաշար Քեմալը վեպում առեղծվածայինը միաձուլում է իրական կյանքին, կուռ բառաշերտեր գործածելով, ֆիլմաշարի պես տեսանելի է դարձնում հերոսներին. հոգեվիճակների արագ փոխակերպումները հաճախ խառնաշփոթ են առաջացնում. ընթերցողը չի տարանջատում իրականությունը երազ-միֆից:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 98:

<sup>14</sup> Горбаткина Г. А. Роман Яшара Кемалы Легенда о Тысяче быков, Turcica et Ottomanica, Восточная литература Москва, 2006с. 184.

## НАСИЛЬСТВЕННОЕ ПЕРЕСЕЛЕНИЕ ТУРКМЕНСКИХ ПЛЕМЕН В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ В РОМАНЕ ЯШАРА КЕМАЛЯ “ЛЕГЕНДА О ТЫСЯЧЕ БЫКОВ”

*Сирануйш Галшоян*

(резюме)

Современный турецкий писатель Яшар Кемаль в романе “Легенда о тысяче быков” рассказывает о социально-историческом процессе, оседании туркменских кочевых племен на землю, анализирует эти противоречия, причины развития и дальнейшие трагедии юрюков. Писатель рассказывает, как меняется психология соплеменников, трансформируется их сознание, меняются жизненные ценности. В романе говорится об отношении человека к старым обычаям. Писатель представляет конфликт героических личностей, противопоставляя их всему новому.

## THE FORCED RESETTLEMENT OF TURKMEN TRIBES IN THE OTTOMAN EMPIRE IN THE NOVEL “THE LEGEND OF THE THOUSAND BULLS” BY YASHAR KEMAL

*Siranuysh Galshoyan*

(summary)

The novel “Legend of Thousand Bulls” by modern Turkish writer Yashar Kemal describes the social-historical process and the settlement of Turkmen nomadic tribes. The writer analyses discrepancies, causes of progress and the main future reasons of Yuryuks’ tragedy. Kemal represents the changes of tribesmen, transformation of their consciousness and values of their life. Yashar Kemal embodies conflict in heroic people and divergence to the novelty.

ՀԱՅԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԿՅԱՆՔՈՒՄ

(XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

*Բանալի բառեր՝ տնտեսական կյանք, Օսմանյան կայսրություն, գյուղատնտեսություն, արհեստներ, ոսկերչություն, մեքենայագործություն, շերամապահություն, զինագործություն, գավառ, արտադրանք*

Օսմանյան կայսրության տիրապետող ժողովուրդ հանդիսացող թուրքերի սոցիալ-տնտեսական զարգացումը հետ էր մնում նրանց ճնշման տակ գտնվող ոչ մահմեդական ժողովուրդների զարգացումից: Հայերը, հույները, մյուս ժողովուրդների ներկայացուցիչները, ենթարկվելով կրոնական խտրականության, այնուամենայնիվ, մեծ դեր էին կատարում առևտրի ու արհեստների մեջ՝ ունենալով մշակութային բարձր մակարդակ: Արտասահմանում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացած հայերը, վերադառնալով Օսմանյան կայսրություն, մեծ ներդրում են ունեցել տնտեսության զարգացման մեջ: Այդ մասին վկայում են նաև այլազգի պատմաբաններն ու ուսումնասիրողները:

«Թուրքիայի տնտեսական կյանքում հայերը առաջնային դեր են խաղում, գյուղատնտեսությամբ զբաղվող հայերը առանձնապես են աշխատասիրությամբ, ուշադրությամբ և նպատակալացությամբ: Քաղաքներում ոչ մի կարևոր բնագավառ (տեխնիկա, գիտություն, արվեստ, արհեստներ) առանց հայերի մասնակցության հնարավոր չէ: Լավագույն բժիշկները, փաստա-

\* Պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի դոցենտ: Էլ. փոստ՝ [naira.ginosyan@ysu.am](mailto:naira.ginosyan@ysu.am)

բանները, դասախոսները, ինժեներները, դերասանները, բանասերները, գործարարները, առևտրականները՝ հայերն են»<sup>1</sup>:

«Վաղ ժամանակներից հայերի ընտանեկան և համայնական առևտր կառույցները հենվել են սիրված զբաղմունքների՝ հողագործության, առևտրի ու արհեստագործության, ինչպես նաև գիտության նկատմամբ մեծ սիրո և հարգանքի վրա»<sup>2</sup>:

Մինչև վերջին ժամանակը թուրք քաղաքաբնակը հազվադեպ էր լինում վաճառական... առևտուրը նրանք թողել էին հայերին, հույներին և հրեաներին: ...Տնտեսական կյանքը երկրում ցլիավորապես քրիստոնյաների ձեռքում է: Բանկերն ու ծնունդ առնող արդյունաբերական ձեռնարկությունները կառավարվում են հույների կողմից, իսկ հայերն առևտրական գործերն են առնում: Մինչև վերջերս թուրքերը համարում էին, որ իրենց վայել չէ աշխատելը, արտադրությամբ կամ առևտրով զբաղվելը: Այժմ ցլիսի են ընկել և ուրախ կլինեին մրցակցել և՛ օսմանյան քրիստոնյաների, և՛ եվրոպացիների ու լեանտացիների հետ, բայց դրա համար ոչ հմտություն ունեն, ոչ տոկոսություն, ոչ փող: Նույնիսկ բանվորների, արհեստավորների մեջ թուրքերը քիչ են: Ինժեներները, բժիշկները, փաստաբանները, բոլոր ազատ մասնագիտությունները, որոնք աշխատանք ու լարում են պահանջում, գրեթե ամբողջովին զբաղեցված են առավելապես արևմուտքում կրթություն ստացած քրիստոնյաների կողմից»<sup>3</sup>:

Փորձենք ներկայացնել հայերի դերն Օսմանյան կայսրության մի շարք նահանգների տնտեսական կյանքում:

XIX դարի վերջին, հատկապես 1880-1895 թթ. Խարբերդն իր գավառներով հասել էր տնտեսական զարգացման բարձր մակարդակի: Արհեստները գրեթե ամբողջությամբ հայերի ձեռքում էին: Տարածված արհեստներից էին դերձակությունը, կոշկակարությունը, երկաթագործությունը, դարբնությունը, պղնձագոր-

<sup>1</sup> Голобородько Н., Турция, М., 1913, с. 221.  
<sup>2</sup> Фон Гакстгаузен А., Закавказский край, СПб., 1857, с. 211.  
<sup>3</sup> Тыркова А., Старая Турция и младотурки, (Год в Константинополе), П., 1916, с. 131-132.

ծությունը, կտավագործությունը, կաշեգործությունը, հյուսնությունը, կավագործությունը, բրուտագործությունը, մանածագործությունն ու գորգագործությունը<sup>4</sup>: Արտադրում էին լայն պահանջարկ ունեցող կենցաղային իրեր՝ անոթներ, խեցեղեն կճուճներ<sup>5</sup>:

Ոսկերչությամբ զբաղվում էին միայն հայերը: Խարբերդի ոսկերչությունը մի քանի հայ ընտանիքների ավանդական մենաշնորհն էր և փոխանցվում էր սերնդեսերունդ: Նրանցից էին Սողիկյանների, Ուզունյանների, Տինճյանների, Սարաֆյանների, Սամուրյանների, Բաղնեցյանների գերդաստանները:

Խարբերդի նահանգի Հյուսեյնիկ գյուղում զարգացած էր կտավագործությունը, կային կաշեգործներ, օճառագործներ (Վարդան Վեզմեյան), կահույքագործներ, առաջնակարգ դերձակներ (Հարություն Թաշճյան, Գևորգ Սարյան, Կարապետ Ջուլումյան)<sup>6</sup>, զինագործներ (Բաբա Թեֆենքճյան և նրա որդին՝ Միհրանը), դարբին երկաթագործներ (Սեդրակ Ավագյանը, Նշան Պոյաճյանը, Բարիկյան եղբ., Պողոս Սարգսյանը), շաքար և մոմ պատրաստող վարպետներ (Կորկոտյան): Ժամագործներից հայտնի էին Փիլիպոս Փիլիպոսյանը, Տիգրան Բրուտյանը, Մարտիրոս Թաշճյանը: Հյուսեյնիկցի առաջին լուսանկարիչները Միհրան Թյությունճյանը և Սուրսուրյան եղբայրներն էին: 1915 թ. Թյությունճյանների և Սուրսուրյանների արհեստանոցներն ավերվեցին, իրենք էլ սպանվեցին<sup>7</sup>:

Խարբերդի կլիման և թթաստանների առատությունը նպաստել էին շերամաբուծության զարգացմանը: Խարբերդում այն «միանգամայն նոր ճյուղ է և վերջին 10-20 տարում հասել է նշանակալից հաջողությունների, որը բացատրվում է ինչպես Մեզիբե քաղաքում երկու մետաքսագործական ֆաբրիկաների ստեղծումով,

այնպես էլ Դիարբեքի և Սալաթիա տանող հաղորդակցության միջոցների բարելավմամբ»<sup>8</sup>:

Շերամապահության գլխավոր կենտրոնները Խարբերդի, Սեբաստիայի, Դիարբեքի, Բիթլիսի (հատկապես Սասունի կապալում) վիլայեթներն էին: «Կային անհատներ, որոնք մինչև 100 վար շերամ էին դուրս բերում տարեկան»<sup>9</sup>:

1860-1870-ական թթ., երբ Եվրոպայում շերամաբուծության կարևոր կենտրոններում պղպեղախտը և փտախտը մեծ ավերածություններ պատճառեցին, Խարբերդի շրջանը կարողացավ գերծ մնալ համաճարակից և մեծաքանակ առողջ հումք ստանալ և մատակարարել վնաս կրած երկրներին: Խարբերդը նաև բամբակենու մշակության գլխավոր կենտրոններից էր: Բամբակագործությունն ուներ մեծ նշանակություն և ընդգրկում էր պիտանի հողերի 30-90 տոկոսը<sup>10</sup>: Բամբակի մշակությամբ զբաղվում էին գլխավորապես հայերը, անհամեմատ քիչ՝ թուրքերը և քրդերը<sup>11</sup>:

Խարբերդի նահանգում շերամաբուծության զարգացման հետ էր կապված մետաքսագործության զարգացումը: Այդ արհեստի նախաձեռնողները երկու ընտանիքներ էին՝ Քյուրքչյանները՝ Խարբերդում, Ֆաբրիկատորյան եղբայրները՝ Մեզիբեում: Առաջին մետաքսի գործարանը 1881 թ. կառուցել է Գրիգոր էֆ. Քյուրքչյանը: Նրա որդի Խոսրովն ավարտելով տեղական վարժարանը՝ 1883 թ. Ֆրանսիայում (Լիոն) կատարելագործել էր իր գիտելիքները մետաքսագործության մեջ: 1884 թ. վերադարձել է Խարբերդ՝ իր հետ բերելով նոր անհրաժեշտ սարքավորումներ, վերանորոգել գործարանը և գործածելով շոգեշարժ մեքենաներ՝ արտադրել հազվագյուտ գեղեցկությամբ ու որակով մետաքսյա

<sup>4</sup> Վահե Հայկ, Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը, հուշամատյան (պատմական, մշակութային և ազգագրական), Նյու-Յորք, 1959, էջ 661:

<sup>5</sup> Ճիգմեճյան Մ., Խարբերդ և իր զավակները, ԱՄՆ, 1955, էջ 89:

<sup>6</sup> Վահե Հայկ, նշվ. աշխ., էջ 672:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 674:

<sup>8</sup> Համբարյան Ա., «Արևմտյան Հայաստանի տնտեսությունը 1856-1914 թթ.», Արևմտիք, 2003, էջ 70:

<sup>9</sup> «Մշակ», 1895 թ., մարտի 16, թիվ 31:

<sup>10</sup> Колюбакин А., «Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции», т. 3, ч. 1, отд. 2, Тифлис, 1891, с. 444.

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 138



ապրանքներ, որոնց համբավը տարածվում էր մինչև Կ. Պոլիս: Խոսքովի գործարանի արտադրած կերպասե վարագույրները զարդարում էին սուլթան Համիդի պալատը: Գործարանը գործել է մինչև 1914 թ.<sup>12</sup>: Քյուրքյան գերդաստանը զբաղվել է նաև մուշտակագործությամբ<sup>13</sup>:

Ֆաբրիկատորյանների հայրը 1837 թ. Արաբկիրից գալիս է Խարբերդ, այնուհետև գնում Անգլիա, որտեղ յոթ տարի աշխատում և սովորում է մետաքսագործություն<sup>14</sup>: Վերադառնալով Խարբերդ, 1870 թ. կառուցում է մետաքսի գործարան, որտեղ եվրոպայից և Ամերիկայից բերված մեքենաներով արտադրում էին նաև բամբակի մանած և կտավ<sup>15</sup>: Գործարանում աշխատում էր 200-300 բանվոր: 1884 թ. գործարանի արտադրանքը ներկայացվել է Լիոնի ցուցահանդեսում և արժանացել մրցանակի: 1902 թ. Ֆաբրիկատորյանի մահից հետո գործը շարունակել են զավակները՝ Մանասը, Տիգրանը, Սամվելը, Կարապետը, Ահարոնը<sup>16</sup>: 1915 թ. նրանք զոհ գնացին հայկական կոտորածներին<sup>17</sup>:

Խոյլու գյուղաքաղաքում կենտրոնացված էր կաշվի մշակումն ու արտահանումը, ինչն ամբողջությամբ հայերի ձեռքում էր<sup>18</sup>: Հումք էր ներմուծվում Պարսկաստանից, Ռուսաստանից, Հնդկաստանից և այլ երկրներից: Հիմնական ներմուծողներն էին Գյուլբենկյանները և Դրամփյանները:

1870 թ. Խարբերդի Սինամուտ գյուղում եղբայրներ Աբրահամ, Բարիջան, Մանուկ Բարիկյանները հիմնեցին երկաթաձուլարան<sup>19</sup>: Աբրահամը զինագործ էր, Բարիջանը՝ ոսկերիչ: Խոտայուտ գետի ջրերի հոսքն օգտագործեցին գործարանի մե-

<sup>12</sup> Ճիզմեճյան Մ., նշվ. աշխ., էջ 89-90:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 89:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 92:

<sup>15</sup> Չորմիսյան Լ., նշվ. աշխ., էջ 167:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 641:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 643:

<sup>18</sup> Ճիզմեճյան Մ., նշվ. աշխ., էջ 91:

<sup>19</sup> Վահե Հայկ, նշվ. աշխ., էջ 644:

քենաները աշխատացնելու համար, միաժամանակ կառուցեցին ցաղացներ՝ օգտագործելով ջրի հոսանքի ուժը: 1880 թ. կրտսեր եղբայրը՝ Մանուկը, մեկնում է Ամերիկա՝ կատարելագործվելու և նոր մեքենաներ ձեռք բերելու նպատակով: Նա այնտեղ ծանոթանում է Տիգրան Դերձակյանի (Թերզյանի) հետ, որն այդ բնագավառում մեծ փորձ ուներ: Վերջինս Բարիկյան եղբայրների թելադրանքով, գործիքներով ու սարքավորումներով՝ (ճախաբակ, երկաթ ծակող և ձևավորող մեքենա, շոգեմեքենա, հովհար) գալիս է Խարբերդ: Այդ ժամանակ Ամերիկայից վերադառնում է նաև Մանուկը՝ մեծ փորձ ձեռք բերած<sup>20</sup>: Գործարանը կատարելագործվում է. կառուցում են նոր հնոցներ, արտադրում երկրագործական գործիքներ, որոնք ուղարկվում են Օսմանյան կայսրության զանազան շրջաններ և արտահանվում Պարսկաստան: Նրանց երկաթագործարանում վերանորոգում էին կարի, մսի մեքենաներ, հրացաններ, դաշտամշակման զանազան գործիքներ: Կայսրության բոլոր հրացաններն այդտեղ էին վերանորոգվում:

Խարբերդի նահանգի Լուսատու-Բազմաշեն գյուղաքաղաքը հայտնի էր ձիթհան գործարանով, որի արտադրանքն արտահանում էին Արաբկիր, Բալու, Մալաթիա, Դերսիմ, Տիգրանակերտ և այլ քաղաքներ: Բազմաշենի բոլոր արհեստավորները հայեր էին՝ հյուսներ, կոշկակարներ, ներկարարներ, շաքարագործներ, սափրիչներ: Գյուղը հայտնի էր իր ջորեպաններով: Նրանք ճամփորդում էին բեռնատար կառքերով տարբեր քաղաքներ: Նրանց մեջ հայտնի էր Հաճի Զատուրը (Մաղաքյան): Նա իր բազմաթիվ ջորիներով մեծաքանակ ապրանքներ էր տեղափոխում, մասնավորապես Ադանա: Նա տեղափոխում էր նույնիսկ կանխիկ դրամ<sup>21</sup>:

Քեսիրիկ գյուղում զարգացած էր բանջարամշակությունը, գինեգործությունը, բամբակի մշակումը<sup>22</sup>: Գյուղն ուներ երկու ձա-

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 645:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 844:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 882:

վարի գործարան, որոնք պատկանում էին Փաշոյաններին և Յաղճյաններին:

XIX դարի երկրորդ կեսին Թլկատինի արհեստավորները պատրաստում էին բամբակը՝ կորիզից, ցորենը՝ հարդից մաքրող մեքենաներ, երկրագործական գործիքներ, դոներ, պատուհաններ, որը վաճառում էին տեղում և հեռավոր գյուղերում: Հայտնի էին Մինաս Տեր-Մինասյանը, Գրիգոր Եղոյանը: XIX դ. 80-90-ական թթ. վարպետ որմնադիրներ էին Պետրոս Լաջարյանը, Հովակիմ և Կարապետ Մուշոյան եղբայրները: Նրանք զծագրում էին կամուրջների և շենքերի հատակագծեր, դեկավարում դրանց շինարարությունը: 1880-1890 թթ. Թլկատինը ապահովում էր ամբողջ Խարբերդի նահանգի կաշվի պահանջարկի 2/3-ը: Այս գործով զբաղվում էին 35 ընտանիքներ՝ որոնցից հայտնիներն էին Կոշկակարյանները, Փափագյանները, Մուրադյանները, Կորկոթյանները, Քյույուքյանները<sup>23</sup>:

Նահանգի գյուղերից էր Գումբը, որտեղ զբաղվում էին շերամապահությամբ, մետաքսի արտադրությամբ: Արտադրում էին կաշի, կոշիկ, կտավ, թել, փայտ: Կային հայտնի կաշեգործներ՝ Պոլոյան, Կոշկակարյան<sup>24</sup>:

Բիթլիսում տարածված արհեստներ էին ոսկերչությունը, կոշկակարությունը, զինագործությունը, հյուսնությունը, ժամագործությունը, դերձակությունը և պայտարարությունը<sup>25</sup>: Ջարգացած էր նաև կտավագործությունը, մետաքսագործությունը, գորգագործությունը: Բիթլիսում այնպիսի կտավ էին պատրաստում, իսկ Խարբերդում՝ գորգ գործում, որոնց նմանակը ոչ մի տեղ չկար<sup>26</sup>:

Վանում տարածված էին ոսկերչությունը, փորագրությունը, կավագործությունը, հյուսնությունը, կոշկակարությունը, ժամագործությունը, որմնադրությունը, կտավագործությունը, դերձա-

կարությունը, պղնձագործությունը: Կային վաթսուկին մոտ արհեստանոցներ: Գլխավորապես պատրաստում էին հովանոցի թանակներ, դանակներ, պատառաքաղներ, բաժակներ, ձեռնափայտեր, ծխախոտի տուփեր<sup>27</sup>:

Ոսկերչությունը Վանի ավանդական արհեստներից էր, որը ծաղկում ապրեց 1890-ական թվականներից: Վանը վաղուց հռչակված էր իր ոսկյա և արծաթյա իրերով, որոնք մեծ քանակությամբ արտահանվում էին Եվրոպա և Ամերիկա<sup>28</sup>: Մեծ համբավ ունեին նրանց պատրաստած արծաթյա ծխախոտատուփերը: Տարեկան Վան էր մտնում 100 փութ արծաթ, որից պատրաստված իրերը մեծամասամբ արտահանվում էին: 1902 թ. Վանից արտահանվել է 7000 ծխախոտատուփ<sup>29</sup>: Վանում 1909 թ. կար 60 ոսկերիչ, 8 աստղձագործ, 75 դերձակ, 100 կոշկակար, 200 երկաթագործ դարբին և այլն<sup>30</sup>: Ավանդական արհեստ էր համարվում նաև փորագրությունը, որը ոսկերչության կարևոր ճյուղն էր: Փորագրիչ վարպետների թիվը հասնում էր 25-ի:

Ջարգացած էր նաև մուշտակագործությունը, կոշկակարությունը, դերձակությունը, շալագործությունը. շալը պատրաստում էին այժի մազից: Վանում կար 100-ի չափ կտավի գործարան՝ 300 դազգահով, տարեկան արտադրվում էր 100.000 փութ կտավ: 1880-ական թթ. վանեցիների կենցաղ մուտք գործեց «Ջինզեր» կարի մեքենան, ինչը նպաստեց դերձակության զարգացմանը: Վանում կար 7 կաշվի գործարան, որտեղ աշխատում էին 30-ի չափ վարպետներ<sup>31</sup>:

Վանում գյուղատնտեսության զարգացած ճյուղերից էին այգեգործությունը, երկրագործությունը, խաղողագործությունը: Վիլայեթը հարուստ էր բանջարանոցներով և սեխի այգիներով: Խաղողագործության հետ կապված՝ զարգացած էր զինեգոր-

<sup>23</sup> Վահե Հայկ, նշվ. աշխ., էջ 798:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 916:

<sup>25</sup> Մասիս, 1881, հոկտեմբերի 17:

<sup>26</sup> Սրվանձյանց Գ., Համով-հոսով, էջ 106:

<sup>27</sup> «Армянский вестник», 1916, N 12-13, с. 13.

<sup>28</sup> Նույն տեղում, N 4, p. 14.

<sup>29</sup> «Մուրճ», N 8, Թիֆլիս, 1904, էջ 28:

<sup>30</sup> Ա-Դո, նշվ. աշխ., էջ 18:

<sup>31</sup> «Մուրճ», նշվ. տեղ., էջ 30-33:

ծությունը: Զարգացած էր նաև ծխախոտագործությունը, 1860-1870-ական թթ. հատկապես Հեքեարի սանջակի Ջուլաբերկ ու Շանդինա կազաներում մշակում էին բարձրակարգ ծխախոտ: 1901 թ. սկսած Վանի վիլայեթը յուրաքանչյուր տարի արտադրում էր 200000 կգ ծխախոտ<sup>32</sup>:

Վանա լճի շրջակայքի բնակչության հիմնական զբաղմունքներից մեկը ձկնորսությունն էր: Լճի տառելի ձուկը վաճառվում էր ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտահանվում Ռուսաստան և Եվրոպա: Արտահանվում էր նաև լճի ջրից ստացվող բորակը<sup>33</sup>:

Դիարբեքի (Տիգրանակերտի) վիլայեթում և նրա շրջակայքում զարգացած էին շերամապահությունը, կտավագործությունը, մետաքսագործությունը: Արտադրում էին մանուս, կերպասեղեն, բամբակյա գործվածքներ: Եվրոպական ապրանքներ քիչ էին ներմուծվում, ընդարձակ առևտուրը հիմնվում էր տեղական ապրանքների վրա: Դիարբեքիում «արհեստը և առևտուրը մեծամասամբ քրիստոնեաք կրնեն: Հայերն իբրև արհեստավոր ճարտար են, իբրև վաստակավոր՝ ամեն գործի հետամուտ են...»<sup>34</sup>:

Էրզրումը (Կարինը) ոչ միայն առևտրի, այլև արհեստի կենտրոն էր: Քաղաքի 15.000 հայերից ավելի քան 10000-ը զբաղվում էին արհեստներով՝ դերձակությամբ, կոշկակարությամբ, ոսկերչությամբ, պղնձագործությամբ, հյուսնությամբ, պայտարությամբ, դարբնությամբ, զինագործությամբ, ժամագործությամբ, թիթեղագործությամբ, որմնադրությամբ, գորգագործությամբ<sup>35</sup>: Հայերը հիմնել էին 6 խաղախորդարան, 6 ներկատուն, 3 բրուտագործարան, 4 ապուխտի գործարան: Արհեստավորները պատրաստում էին «պարսկական տապան» կոչվող զենքեր և հրանոթներ<sup>36</sup>, որակյալ կողպեքներ և ամենանուրբ կերպով փորագրում պողպատի վրա: «Թուրքիայում չկար մի այլ քաղաք,

որտեղ պատրաստեին որակով ու թեթև պղնձեղեն, թասեր և այլ տեսեսական ապրանքներ, կարեին գեղեցիկ, էժան ու որակով կոշիկներ, մանավանդ կրկնակոշիկներ, ինչպես արվում էր Էրզրումում»<sup>37</sup>: Էրզրումի վիլայեթի գյուղացիներն զբաղվում էին նաև ձկնորսությամբ, վարպետացած էին քարտաշության մեջ<sup>38</sup>:

Զարգացած արհեստներից էր դերձակությունը: Հայ դերձակները մասնագիտացել էին չարշաֆի պատրաստման մեջ (դա քիկնոցի տեսակ էր, որ հագնում էին մահմեդական կանայք): Ոսկերիչների պատրաստած ոսկեթել և արծաթյա գոտիները հայտնի էին Անգլիայում և Ֆրանսիայում<sup>39</sup>: Կաղզվանից բերված ռեսսաթ հանքանյութից պատրաստում էին բաժակներ, զարդեղեն և այլ առարկաներ, որոնք 1871 թ. բարձր գնահատանքի են արժանացել Վիեննայի ցուցահանդեսում<sup>40</sup>:

XIX դարի վերջին քառորդում Կեսարիան գորգագործական մանուֆակտուրայի կենտրոնն էր: 1880 թ. Նիկողոս Նալբանդյանը հիմնում է գորգի գործարան<sup>41</sup>, որտեղ դազգահների թիվը հասնում էր 7000-8000-ի: 1880 թ. և 1884 թ. հիմնվեց ևս երկու մեծ գործարան: 1897 թ. Կեսարիայում արտադրվել է բրոյա և մետաքսյա 3000 գորգ, 1902 թ.՝ 10000 գորգ<sup>42</sup>: Գլխավոր գործարանատերերն էին Հակոբ Պալյանը, Ռուբեն Եսագույանը, Միհրան Եփրեմյանը, Դանիել Սարաֆյանը: Գորգագործությունը դարձել էր կարիքավոր ընտանիքների ապրուստի միջոց, նույնիսկ տներում ունեին 1-2 դազգահ<sup>43</sup>: Վաղ ժամանակներից կեսարացիները հայտնի ջուլիակներ էին: Հաջի Կարապետ Գասարջյանը 1875 թ. Կեսարիայում հիմնեց գործարան, որն ուներ 500 աշխատող, 400 դազգահ, ուր արտադրում էին սրբիչներ, «ալաջա» կոչվող գունավոր կտավ, ջեջիմ: Նրա արտադրանքը ճանաչված էր

<sup>32</sup> Սրվանձոյանց Գ., Թորոս Աղբար, մաս Բ, Պոլիս, 1884, էջ 211:

<sup>33</sup> Համբարյան Ա., նշվ. աշխ., էջ 126:

<sup>34</sup> Սրվանձոյանց Գ., նշվ. աշխ., էջ 211:

<sup>35</sup> Ա-Դո, նշվ. աշխ., էջ 163:

<sup>36</sup> «Բազմավեպ», նշվ. տեղ., էջ 298:

<sup>37</sup> Փափազյան Վ., Երկերի ժողովածու, հ. 5, Ե., 1959, էջ 378:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 473:

<sup>39</sup> «Բազմավեպ», նշվ. տեղ., էջ 297:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 297:

<sup>41</sup> Ղազարյան Հ., նշվ. աշխ., էջ 303:

<sup>42</sup> Ալպոյաճյան Ա., նշվ. աշխ., էջ 1503:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 1503:

«Գասարջը-Օղլու ալաջասը» անունով: 1890-ական թթ. կեսարացիները յազմայի արտադրությամբ գերագանցում էին բոլոր արտադրողներին. նրանց արտադրանքը վաճառվում էր Օսմանյան կայսրության բոլոր շուկաներում<sup>44</sup>:

Սեբաստիան գորգագործության բնագավառում չէր զիջում Կեսարիային: 1880-ական թվականներին հայտնի էր «Արմենակ Թորգոմյան» գորգագործարանը՝ տեղադրված յոթ ընդարձակ շենքերում<sup>45</sup>: Սեբաստիայի 150 գործարաններից 130-ը պատկանում էր հայերին, 17 700 բանվորներից 14 000-ը հայեր էին<sup>46</sup>:

Սեբաստիայից Ստեփան անունով մի հայ արհեստավոր 1867 թ. Փարիզի ցուցահանդեսում արժանացել է վկայականի՝ վիրաբուժության և մանկաբարձության մեջ կիրառվող գործիքներ պատրաստելու համար, «որոնք ամենակատարյալ դատվեցան»<sup>47</sup>:

Մարաշի գրեթե բոլոր բժիշկները, դեղագործները, փաստաբանները, լուսանկարիչները հայեր էին: Դերձակությամբ, կոշկակարությամբ, հյուսնությամբ, կավագործությամբ, որմնադրությամբ, ոսկերչությամբ, պղնձագործությամբ ամբողջովին զբաղվում էին հայերը: Այստեղի ջուլիակները գործում էին գորգեր, գոտիներ, կարպետներ, ոսկեգոծ թելերով զարդարված ալաջաներ: 1890 թ. 30-ից ավելի կահույքագործ կար<sup>48</sup>:

Ակնում կային 11 մանուսայի, 7 յազմայի, 9 մուշտակի, 7 կաշվի գործարան, 8 ներկատուն:

Խնուսում զարգացած էր կտավագործությունը, գորգագործությունը: Արտադրում էին օճառ, պանիր, մանուսա<sup>49</sup>:

Այնթափում մինչև 1850 թ. բամբակի թել մանուս էին ճախարակով: Եվրոպայից գունավոր և սպիտակ թելեր ներմուծելուց հետո ձեռք բերեցին կատարելագործված դազգահներ, որոնց

<sup>44</sup> «Բյուզանդիոն», Պոլիս, 26 մարտ, 1898:

<sup>45</sup> Ղազարյան Հ., նշվ. աշխ., էջ 305:

<sup>46</sup> Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Ե., 1967, էջ 88:

<sup>47</sup> «Բազմավեպ», նշվ. աշխ., էջ 298:

<sup>48</sup> Տեր-Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 171:

<sup>49</sup> Չորմիսյան Լ., նշվ. աշխ., էջ 169:

վրա պատրաստում էին մանուսա, ալաջա: 1900 թ. քաղաքում 300 ընտանիք աշխատում էին 3000 դազգահներով, բոլոր վարպետները հայեր էին: Այնթափից մանուսան արտահանում էին Վան, Մուշ, Բիթլիս, Կարին, Դիարբեքիր, Ադանա, Կոնիա, Կեսարիա, Իզմիր, Կ. Պոլիս: Մանուսայից բացի գործում էին կարպետներ, շալեր, գոտիներ<sup>50</sup>:

Բուրսայում (Պրուսա) զարգացած էր շերամաբուծությունը<sup>51</sup>: Մինչև 1840 թ. Բուրսայի նահանգում արտադրված խոզակները բնակիչները տանն էին մանում, դրանից հետո կառուցվեցին մանարաններ, որոնց թիվը հասավ 50-ի: 1843 թ. Հակոբ Զելեայի Կուրը Պողոս Բիլեզիլյանի հետ համագործակցելով՝ Իտալիայից բերեց հմուտ մանողներ, ճախարակներ, որոնց թիվը հասցրեց 100-ի<sup>52</sup>: Բուրսայի գործարաններից մետաքսը բոժոժի ձևով ռդարկվում էր նաև Եվրոպա՝ վերամշակման: Գործող 580 դազգահներից 455-ը պատկանում էր հայերին, մնացածը՝ հույներին ու թուրքերին<sup>53</sup>: 1900 թ. նահանգում կար 88 մանարանատուն՝ 4786 ավազանով, 1906 թ.՝ 131՝ 7685 ավազանով: Հայտնի մանարանատերեր էին Քեոյանը (2 մանարան՝ 146 ավազանով), Արթին Էմիրոյանը (2 մանարան՝ 114 ավազանով), Հակոբ Պոտուրյանը (2 մանարան՝ 110 ավազանով)<sup>54</sup>:

Հախճապակու արհեստը Օսմանյան կայսրություն մուտք է գործել XVIII դ.՝ դարձյալ հայերի կողմից, որը հետագայում տարածում գտավ տարբեր քաղաքներում՝ Կուտինա, Կոնիա, Թոքատ<sup>55</sup>: Կուտինայում հախճապակու գործարանների թիվը հասնում էր 300-ի: XIX դ. վերջին քառորդում հախճապակու արհեստը կատարելագործվեց Հաճի Կարապետի, Հաճի Հարություն Մինասյանի և Դավիթ Հովհաննիսյանի շնորհիվ: Կիրառում էին

<sup>50</sup> Նույն տեղում, էջ 170:

<sup>51</sup> Միրունի Հ., նշվ. աշխ., էջ 264:

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 265:

<sup>53</sup> Տեր-Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 234:

<sup>54</sup> Բյուզանդիոն, Պոլիս, 1906, օգոստոսի 30:

<sup>55</sup> Թեոդիկ, Ամենուն տարեցույց, Պոլիս, 1923, էջ 212:

հայկական, չինական, արաբական ծաղկանկարչություն<sup>56</sup>: 1914 թ. Կուտինայում գործում էին երեք հախճապակու մեծ գործարան, որոնց արտադրանքը վաճառվում էր Լոնդոնում և Փարիզում<sup>57</sup>:

Թորատում գլխավոր արհեստներն էին պղնձագործությունը և ներկարարությունը: 1877 թ. կային 150 հայ պղնձագործներ (նրանց պատրաստած պղնձյա ամանեղենն իր նրբությամբ ու որակով մրցակից չունեի), 75 դերձակներից 65-ը, 20 ժամագործներից 17-ը, 20 կոշկակարներից 15-ը, 4 բժիշկներից 2-ը, 3 փաստաբաններից 2-ը հայեր էին, կային 10 քարհատ, 5 ներկարար, 10 ոսկերիչ, 25 մուշտակագործ, 45 հյուսն հայ: Հայ վարպետները պատրաստում էին եկեղեցու վարագույրներ, խաչեր, կանթեղներ, բուրվառներ, արծաթապատ կազմով ավետարաններ, սաղավարներ<sup>58</sup>:

Թորատը ծխախոտի համաշխարհային արտադրության մեջ իր քանակով զբաղեցնում էր յոթերորդ տեղը, բայց որակով առաջինն էր: Թորատում ծխախոտագործությունը բնակչության ապրուստի հիմնական միջոցն էր<sup>59</sup>: Արտահանում էին Ամերիկա, Իտալիա, Հոլանդիա, Հունգարիա, Գերմանիա, Եգիպտոս<sup>60</sup>:

Չարսանձակում զարգացած էր բրուտագործությունը: Բերկրիի արհեստավորները պատրաստում էին զանազան տեսակի նուրբ կավե իրեր, որոնք բացի Չարսանձակից ու Դերսիմից՝ վաճառվում էին Կապան-Մատենում, Մալաթիայում: Նրանք պատրաստում էին սափորներ, կժեր, կարասներ, խնոցիներ, ճրագամաններ, թոնիրներ, «աղի կուժ», որը ամռանը սառեցնում էր ջուրը: Հայտնի բրուտագործներից էին Բաղդասար և Կարապետ Նորոյանները և Հակոբ Մալխասյանը<sup>61</sup>:

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 223:

<sup>57</sup> Տեր-Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 214:

<sup>58</sup> Չորմիսյան Լ., նշվ. աշխ., էջ 180:

<sup>59</sup> Ալպոյաճյան Ա., նշվ. աշխ., էջ 1310:

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 1308:

<sup>61</sup> Երևանյան Գ., Պատմություն Չարսանձակի հայոց, Պեյրուֆ, 1956, էջ 226:

Բերկրիում կարում էին եվրոպական և տեղական ոճի կոշիկներ: Այդ բնագավառում հայտնի էր Գասպար Ուրֆայանը, Հովհաննես Ենովքյանը, Նշան Գզիրյանը, Միմոն Երևանյանը, Մեսրոպ Խաչիկյանը, Ավագ Մշմշյանը: Կոշկակարները որպես երկրորդ մասնագիտություն զբաղվում էին խաղախորդությամբ<sup>62</sup>: Բերկրիում կային բժիշկներ, դեղագործներ, ատամնաբույժներ, փաստաբաններ, լուսանկարիչներ: Բերկրիի քաղաքապետը սովորաբար նշանակվում էր հայերից: Բերկրին ուներ երեք նշանավոր դերձակ՝ Մարգիս և Վիկտոր Թերգյանները, Ղազարոս Ուրֆայանը: Զարգացած էր զինագործությունը: Անվանի վարպետներ էին՝ Մարգիս Չազմաճյանը, Նշան Գզիրյանը, Հակոբ Գոնտոսյանը, Խաչատուր և Սահակ Պանտազյանները և այլք: Հայտնի ոսկերիչներ էին Պետրոս և Բաղդասար Էրմոյանները, Կարապետ Նորոյանը<sup>63</sup>: Բերկրին ուներ 800 հայ տուն, որոնք բոլորը գոհ գնացին 1915 թ. կոտորածներին<sup>64</sup>:

Իզմիթի նահանգի Նիկոմիդիո գավառի հայ բնակչության 70 տոկոսը զբաղվում էր երկրագործությամբ, 20 տոկոսը արհեստներով և 10 տոկոսը փոքր առևտրով կամ վաճառականությամբ: Ժողովրդի գլխավոր զբաղմունքներն էին շերամապահությունը, ծխախոտի մշակությունը, այգեգործությունը, ձիթամշակությունը, պտղամշակությունը, ածխագործությունը, փայտագործությունը, աստղձագործությունը, երկաթագործությունը, ոսկերչությունը, դերձակությունը, կոշկակարությունը<sup>65</sup>: Նահանգում կար 2 կերպասեղենի գործարան, որոնք բանակին ապահովում էին հանդերձանքի կտորով: Առաջինը և ամենահինը սուլթան Աբդուլ Մեջիդի օրոք 1836 թ. Հովհաննես բեյ Տատյանի տնօրինությամբ կառուցված կայսերական գործարանն էր, որի 345 բանվորներից 284-ը հայեր էին: Սյուսը Գարամուսալի մոտ 1893-1894 թթ. հիմնված գործարանն էր, որը արտադրում էր կեր-

<sup>62</sup> Նույն տեղում, էջ 231:

<sup>63</sup> Նույն տեղում, էջ 238-239:

<sup>64</sup> Նույն տեղում, էջ 240-241:

<sup>65</sup> Չորմիսյան Լ., նշվ. աշխ., էջ 172:

պաստեղեն, կարպետ, ֆես, աշխատում էին 100-ից ավել բանվորներ: Այստեղ կար յազմայի գործարան՝ 50 աշխատողներով<sup>66</sup>:

1889 թվականից սկսած մետաքսագործությունը զարգացավ Բուրսայից հարավ գտնվող հայաբնակ Ենիճե գյուղաքաղաքում: Հիմնադիրը Գառնիկ Պենտեյանն էր: 1898 թ. վիճակագրական տվյալների համաձայն կար 41 մետաքսի գործարան, որոնցից 17-ը հայերին էր: Արտադրանքի մի մասը վաճառվում էր Օսմանյան կայսրությունում, մի մասը՝ արտահանվում էր<sup>67</sup>: Կային 570 դագգահներ, արտադրում էին 25 տեսակի մետաքայա գործվածքներ, կերպասներ: Դրանցից 455-ը պատկանում էր հայերին, 115-ը՝ թուրքերին և հույներին<sup>68</sup>:

Երզնկան հայտնի էր իր դերձակներով, կոշկակարներով, ոսկերիչներով, պղնձագործներով: Մանուսայի և մետաքսի արտադրությամբ իրենց ապրուստն էին հայթայթում հարյուրավոր հայ ընտանիքներ: Դրանց նմուշները ներկայացվել են Միլանի ցուցահանդեսում և մեծ քանակով վաճառվում էին Եվրոպայում ու արևելքի բոլոր երկրներում<sup>69</sup>: Երզնկայի զարգացմանը նպաստել էին երեք պայման. նախ՝ գավառն իր բերքատուությամբ հանդիսանում էր քաղաքի ծաղկման առաջին ազդակը: Երկրորդ. այն հանդիսանում էր ռազմական կենտրոն, ուր տեղակայված էր օսմանյան զորքերի 4-րդ զորաբանակը և զինամթերքը: Չորրորդ առկայությունը մեծ զարկ էր տալիս քաղաքի զարգացմանը, ծաղկում էր առնտուրը և արհեստները: Եվ երրորդ՝ Երզնկան բանուկ ճանապարհներով կապված էր Տրապիզոնի, Էրզրումի, Սեբաստիայի և Խարբերդի հետ՝ հանդիսանալով այդ քաղաքների հաղորդակցման հանգուցակետ<sup>70</sup>:

Մալաթիայում կային արհեստներ, որոնք բացառապես հայերի մենաշնորհն էին: Չարգացած էր կոշկակարությունը, հյուսնությունը, ներկարարությունը, պղնձագործությունը, ոսկեր-

չությունը, զինագործությունը, որմնադրությունը, դարբնությունը, երկաթագործությունը, թիթեղագործությունը, բրուտագործությունը, զինեգործությունը, ժամագործությունը, ջուլիակությունը, ձիթհանությունը, դերձակությունը, պայտարարությունը, կաշեգործությունը, շերամաբուծությունը, հացագործությունը և այլն: Արհեստների մեջ ցանկացած նորամուծություն կատարվում էր միմիայն հայերի միջոցով:

Մուշում գլխավոր արհեստներն էին դարբնությունը, ատաղձագործությունը, կոշկակարությունը, դերձակությունը, ոսկերչությունը, երկաթագործությունը, ներկարարությունը, բրուտագործությունը<sup>71</sup>: Մուշում պատրաստում էին կճուճներ, որոնք շատ դիմացկուն էին և զարդարված էին ոսկեգոծ թելիկներով և ջրամաններ, որոնք օժտված էին ջուրը սառը պահելու հասկությամբ<sup>72</sup>: Մուշը հայտնի էր «Մամաուն» տեսակի ծխախոտով<sup>73</sup>:

Կ. Պոլսում հայերի կողմից զարգացրած արհեստներից էր ծնծղաշինությունը: 1633 թ. սկսած Ջիլճյանների ընտանիքը երկու դար սերնդեսերունդ զբաղվել է այդ արհեստով: 1910 թ. գործել է ծնծղա պատրաստող «Ջիլճյան և ընկ.» հաստատությունը: Նրանց պատրաստած ծնծղաներն իրենց հնչողական նրբությամբ գերազանցում էին եվրոպականներին և մի շարք միջազգային ցուցահանդեսներում՝ Լոնդոնի (1851 թ., 1862 թ.), Փարիզի (1867 թ.), Վիեննայի (1873 թ.), Բոստոնի (1883 թ.), Բոլոնիայի (1888 թ.), Չիկագոյի (1893 թ.) արժանացել էին մրցանակների: Այս գերդաստանի վերջին ներկայացուցիչը Քերովբե Ջիլճյանն էր (1828-1910), որի մահից հետո ծնծղաների պատրաստման գաղտնիքը վաճառվեց ամերիկացիներին<sup>74</sup>:

Բարձրորակ արհեստավորներ էին հայ զինագործները: Նրանք պատրաստում էին սուր, հրացանի փող, նորոգում էին զենքի այլևայլ տեսակներ: Չենքին և ռազմական գործողություն-

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 173:

<sup>67</sup> Բյուզանդիոն, Պոլիս, 30 մարտի, 1898:

<sup>68</sup> Տեր-Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 233:

<sup>69</sup> Ա-Դո, նշվ. աշխ., էջ 220:

<sup>70</sup> Նույն տեղում, էջ 220:

<sup>71</sup> Նույն տեղում, էջ 111:

<sup>72</sup> Փափազյան Վ., նշվ. աշխ., հ. 5, էջ 474:

<sup>73</sup> Նույն տեղում, էջ 70:

<sup>74</sup> Սիրունի Հ., Պոլիս և իր դերը, Անթիլիաս, 1988, էջ 221:

ներին, ինչպես և բանակի սպասարկմանն առնչվող արհեստավորները կազմում էին բանակի բաղկացուցիչ մասը և ուղեկցում էին նրան ամբողջ արշավի ընթացքում<sup>75</sup>: Հայ զինագործ վարպետներն էին պատրաստում ենիչերիների զենքերը: Զինագործ վարպետ Սարգիս Աճեմյանը արվեստի մակարդակի էր հասցրել զինագործությունը: Նա էր պատրաստում սուլթան Մահմուդ II-ի (1806-1839) սրերը: Նրա աշխատանքները ցուցադրված են Ստամբուլի Թոփքափրի պալատում, Նյու-Յորքի Մետրոպոլիտեն և Աթենքի Բենաքի թանգարաններում<sup>76</sup>:

Օսմանյան ռազմական վերի վարպետները հիմնականում հայեր և հույներ էին: «Կայսրության նավարանի դարբնապետության պաշտոնը ԺԸ-ԺԹ դդ. սկսած հանձնված էր Տեմիրճիպաշյան ընտանիքին»<sup>77</sup>:

Այսպիսով, Օսմանյան կայսրությունում արհեստի բոլոր ճյուղերին զարկ տվողները հայերն էին: Թուրքական բռնության, հալածանքի, նախանձի և ատելության, տեխնիկական հետամնացության, էլեկտրականության, սարքավորումների բացակայության պայմաններում անգամ նրանք ոչ միայն հանդիսացան որոշ արհեստների առաջնեկները, այլև կարողացան դրանցով զբաղվելու մենաշնորհը հետագայում պահել իրենց ձեռքում և կատարելագործվելով՝ դուրս գալ միջազգային ասպարեզ:

<sup>75</sup> Խառատյան Ա., Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը, (15-17-րդ դդ.), Ե., 2007, էջ 298:

<sup>76</sup> Բախչինյան Ա., Հայագրի գործիչներ հնագույն ժամանակներից մինչև մեր օրեր, Ե., 2002, էջ 145:

<sup>77</sup> Գևորգ Տեմիրճիպաշյանը արքունի նավատորմի նավահարդարապետն էր և թևառնաթարանի վերատեսուչը: Նա է հորինել այժմյան խարիսխը, որը գնահատվել է եվրոպացիների կողմից և դրվել գործածության մեջ: Նրա գերդաստանից Ենոկը զբաղվել է արքունի նավատորմի ցամաքային զորքերի և պալատի հացի մատակարարման գործով, հայտնի էր նաև որպես գերագույն ժողովի, այնուհետև՝ ազգային սահմանադրության հիմնադիրներից մեկը: Տե՛ս՝ Աստոյան Ա., Հայերն Օսմանյան բանակում ԺԴ դարից մինչև 1918 /Ուրվագիծ/, «Հայկազյան հայագիտական հանդես», հ. ԻԸ, Պեյրուք, 2008:

## АРМЯНЕ В ЭКОНОМИЧЕСКОЙ ЖИЗНИ ОСМАНСКОЙ ИМПЕРИИ

(вторая половина XIX века – начало XX века)

Наира Гиносян

(резюме)

Армяне способствовали становлению и развитию большинства отраслей экономики и культуры многонациональной Османской империи.

В статье показаны заслуги армян в развитии торговли и процветании ряда ремесел. Экспорт и импорт товаров находился в руках армянских купцов. Благодаря армянам шелководство в сельском хозяйстве и шелкоткачество в промыслах стали одними из основных отраслей в экономике страны. Такими ремеслами, как обработка меди, полотняное производство, сапожное, кузнечное, гончарное, текстильное дело, портняжничество, кожевничество, столярничество, ковроделие, занимались исключительно армяне. Ювелирное дело было монополией армян.

ARMENIANS IN THE ECONOMIC LIFE OF THE OTTOMAN  
EMPIRE

(second half of XIX- beginning of XX centuries)

Naira Ginosyan

(summary)

The Armenians, having a diversified artesian talents and a great curiosity were the most hardworking and cultural nation among the multi-ethnic Ottoman Empire. This article dedicated to contribution and undeniable role of Armenians in the economic life of Ottoman Empire in the second half of the nineteenth and early twentieth century.

Here are shows the advantages of Armenians in the development of trade and prosperity of a number of crafts. The export and import of goods was mostly in hands of Armenian merchants. Due to Armenians in the sericulture and silk weaving agriculture has become one of the major industries in the economy.

Արա Ազադյան \*

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՅ  
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Բանալի բառեր՝ Պարմագրություն, խորհրդահայ պարմագրություն, սփյուռքահայ պարմագրություն, հեղինակահայ պարմագրություն, բանակցություններ, խորհրդածոյով, պայմանագիր:*

1920 թվականի աշնանը սկսված թուրք-հայկական պատերազմի արդյունքում Հայաստանը պարտվեց, որի հետևանքով կնքվեց Ալեքսանդրապոլի ապօրինի պայմանագիրը: Այն իրականություն դարձավ խորհրդա-քեմալական ռազմաքաղաքական համագործակցության շնորհիվ:

Սեպտեմբերի 23-ին քեմալական զորքերը ներխուժեցին Հայաստան և, թափանցելով երկրի խորքերը, գրավեցին Օլթին, Մարիդամիշը, հոկտեմբերի 30-ին՝ Կարսը, իսկ նոյեմբերի 7-ին մտան Ալեքսանդրապոլ<sup>1</sup>: Նոյեմբերին արդեն թուրք-հայկական պատերազմում ակնհայտ դարձավ Հայաստանի պարտությունը: ՀՀ կառավարությունը հարկադրված էր ընդունել քեմալականների ներկայացրած վերջնագիրը և բանակցությունների մեջ մտնել հաշտություն կնքելու համար: Նոյեմբերի 18-ին կողմերի միջև ստորագրվում է հայ-թուրքական զինադադարը, իսկ հաշտության պայմանագիր կնքելու նպատակով հայկական պատվիրակությունը մեկնում է Ալեքսանդրապոլ: Ալեքսանդրապոլի կոնֆերանսը բացվեց նոյեմբերի 24-ին: ՀՀ կառավարության հաշտության պատվիրակությունը նախագահում էր Ալ. Խատիսյանը, իսկ անդամներն էին ֆինանսների նախարար Ա. Գյուլխանդանյանը, Կարսի նահանգապետ Ս. Ղորղանյանը: Որ-

\* ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտ:

<sup>1</sup> «Հայք», 1990, 26 սեպտեմբեր, № 33:



պես խորհրդականներ պատվիրակության կազմում էին Խորհրդարանի անդամ Վ. Մինախորյանը, բարձրագույն դատական ատյանի անդամ Տ. Հովհաննիսյանը, գեղապետ Աթայանը և կապիտան Խնձորյանը<sup>2</sup>: ԹԱՄԺ կառավարության հաշտության պատվիրակությունը նախագահում էր Ք. Կարաբեքիրը, իսկ անդամներն էին Նեջադի բեյը և Համիդ բեյը<sup>3</sup>: Ալեքսանդրապոլի կոնֆերանսում գումարվել է չորս լիազմար նիստ (նոյեմբերի 25, 27, դեկտեմբերի 1, 2), որից հետո ստորագրվել է հաշտության պայմանագիրը:

Դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը, ժամը 2-ին<sup>4</sup> ստորագրվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որի ստորագրվելուց ժամեր առաջ, կեսօրվա ժամը 4-ին<sup>5</sup> Դրոն և Հ. Տերտերյանը ՌևՖՍՀ ներկայացուցիչ Բ. Լեգրանի հետ Երևանում արդեն իսկ ստորագրել էին իշխանությունը Հայիեդկոմին հանձնելու վերաբերյալ համաձայնագիր: Տվյալ պարագայում Ալեքսանդրապոլի պայմանագիրը հայկական կողմից ստորագրեցին արդեն լիազորությունները վայր դրած կառավարության ներկայացուցիչները, ովքեր իրավասու չէին դա անելու, հետևաբար, այս պայմանագիրը չէր կարող իրավական ուժ ունենալ<sup>6</sup>: Ալեքսանդրապոլի պայմանագրով, փաստորեն, Հայաստանը կախման մեջ էր ընկնում Թուրքիայից:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը հանդիսանում է հայոց նորագույն պատմության վիճելի ու հակասական հիմնահարցերից մեկը, որը պատմագրության մեջ արժանացել է տարաբնույթ գնահատականների: Այս պայմանագրի վերաբերյալ թե՛ սփյուռքում և թե՛ Հայաստանում ստեղծվել է բավականին հարուստ պատմա-

գիտական գրականություն, որոնցում տարբեր կերպ է որակվել և գնահատվել Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Խորհրդահայ պատմագրության մեջ Ալեքսանդրապոլի պայմանագրին տրվել է ստորացուցիչ, ստրկացուցիչ, կողոպտիչ, ապօրինի, դավաճանական, չարաբաստիկ, ոճրագործական, խայտառակ, հանցավոր, ամոթալի ակտ, ազգադավ քաղաքականություն և նմանատիպ որակումներ<sup>7</sup>:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը լայնորեն լուսաբանված է նաև սփյուռքահայ պատմագրության մեջ, թեև պետք է նշել, որ սփյուռքահայ հեղինակների գնահատականները այս հարցում միանշանակ չեն: Այստեղ ևս առկա է կուսակցական պատկանելության գործոնը:

Դաշնակցական հեղինակները հիմնավորում էին, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը «պարտադրված, բռնության, սպառնալիքի և ճնշման տակ ստորագրված պայմանագիր է»<sup>8</sup>: Մ. Վրացյանի համոզմամբ Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումը անխուսափելի էր և պատմական անհրաժեշտություն<sup>9</sup>: «Մենք շատ լաւ գիտակցում էինք, որ ընդունել Ք. Կարաբեքիրի վերջնագիրը, կը նշանակէր ապագային անհուն նաստացումների ենթարկել մեր կուսակցութիւնը եւ սուր զէնք առաջ հակառակորդների ձեռքը... Ալեքսանդրապոլի դաշնագիրը

<sup>2</sup> Խատիսյան Ալ., ՀՀ ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 294:

<sup>3</sup> Հայաստանի Ազգային Արխիվ (այսու՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 636, թ. 47:

<sup>4</sup> Տե՛ս Խատիսյան Ալ., նշվ. աշխ., էջ 311, «Գրական թերթ», 14 դեկտեմբեր, 1990:

<sup>5</sup> Տե՛ս Հ. Տեր-Հակոբյան, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, էջ 124-125:

<sup>6</sup> Տե՛ս Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր., 2014, էջ 121:

<sup>7</sup> Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում 1917-1921թթ., Եր., 1964, էջ 226, 233, Հայաստանը միջազգային շփմանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում 1828-1923թթ., (խմբագրությամբ Ջ. Կիրակոսյանի), Եր., 1972, էջ 770, Ազայան Ս., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., 1976, էջ 799, Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, Եր., 1982, էջ 354, Արզումանյան Ս., Արհավիրքից վերածնունդ, Եր., 1973, էջ 349, 353, Միմոնյան Հ. Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Եր., 1986, էջ 530, Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, ՀՍՍՀ ԳԱ կրատ., Եր., 1967, էջ 111:

<sup>8</sup> Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Մեր եւ Լօզան, Պոսթրն, 1943, էջ 110, Փիրումեան Ռ., Հայաստանը ՀՅԴ-Բոլշեվիկ յարաբերությունների ոլորտում (1917-1921թթ.), Եր., 1997, էջ 295:

<sup>9</sup> Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 536:

ստորագրելով՝ մենք փրկեցինք ժողովուրդը նոր փորձություններից, թեև դրանով ուժեղ հարուած հասցրինք մեր վարկին, գրում է հեղինակը»<sup>10</sup>:

Կ. Սասունին նույնպես կարծում է, որ ՀՀ կառավարությունը և ՀՅԴ-ն հնարավորություն ունենին խուսափելու Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքելուց, քանի որ դեկտեմբերի 2-ին իշխանությունը հանձնվել էր Դրոյին՝ մինչև Հեղկոմի Երևան ժամանելը, սակայն «այդ բոլոր նպաստաւոր պարագաները ժողովուրդին անմիջական շահերէն վար դասուեցաւ ու համաձայնութիւն գոյացաւ, որ Դրոն, որպէս փոխանցող կառավարութեան պետ, հրահանգ տայ Ա. Խատիսեանին ստորագրելու թուրքերու առաջարկած դաշնագիրը»<sup>11</sup>:

Ալեքսանդրապոլի պայմանագրին իրենց աշխատություններում անդրադարձել են նաև սփյուռքի ոչ դաշնակցական հեղինակները, որոնց գնահատականներն այս հարցում բոլորովին այլ են: Նրանք չեն կիսում դաշնակցական հեղինակների կարծիքները, շատ դեպքերում այս հեղինակները խորհրդահայ պատմաբանների նման ծանր գնահատականներ են տվել Ալեքսանդրապոլի պայմանագրին, այն որակելով որպէս «հայոց պատմութեան ամենէն նուաստացուցիչ դաշնագիր»<sup>12</sup>, «հայրենադավ և մաքսանենգ պայմանագիր, հայ արիւնով գրուած ողբերգութեան առաջին արար, արիւնագիր տրամա»<sup>13</sup>, «գերագույն դավաճանություն»<sup>14</sup>, «ծանր և անտանելի, անմարսելի ու խեղճ»<sup>15</sup>:

Նախկին դաշնակցական գործիչ Շ. Նաթալին նշում է, որ «Ալեքսանդրապոլի դաշնագիրը թուրքերուն համար այն թանկագին վավերաթուղթն էր, որ ոչ միայն հողային նվաճումներ կուտար թուրքերուն..., այլ թուրքերը կազատեր մէկ կողմէ Սևրի գաշնագրով եւրոպական պետութիւններու միջնորդողի իրավասութենէն և միւս կողմէ Ռուսիոյ միջնորդութենէն հայ-թրքական որևէ հարցի մեջ»<sup>16</sup>:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը քննարկման առարկա է դարձել նաև հետխորհրդահայ պատմագրության մեջ: Արդեն հետխորհրդային շրջանում պատմաբանների այս խումբը փորձել է Ալեքսանդրապոլի կոնֆերանսը և պայմանագրի ստորագրումը ավելի օբյեկտիվ դիրքերից ներկայացնել: Հետխորհրդային շրջանի պատմաբաններից Ալեքսանդրապոլի պայմանագրին առավել հանգամանորեն անդրադարձել է պրոֆեսոր Ա. Հակոբյանը<sup>17</sup>:

Խորհրդահայ պատմագրության մեջ Ալեքսանդրապոլի պայմանագրի շուրջ ժամանակին զարգացվել է մի շարք թյուր տեսակետներ, որոնք ընդունելի չեն, ուստի ցանկանում ենք անդրադառնալ այդ տեսակետներին և պարզաբանել դրանք:

Անվանի պատմաբան Լեոն Ալեքսանդրապոլի պայմանագիրն անվանում է «դաշնակցության հավիտենական ամոթն ու խայտառակությունը»: Այս առիթով հեղինակը գրում է. «Դաշ-

<sup>10</sup> Վրացեան Ս., Գեանքի ուղիներով. դեպքեր, դեմքեր, ապրումներ, հ. Ե. Պէրոյթ, 1966, էջ 196:

<sup>11</sup> Սասունի Կ., Հայ-թրքական պատերազմը. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1926, №9, էջ 116:

<sup>12</sup> Մարրլեան Ջ., Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի դաշնագիրեր, 1920-1921թթ.), Պէրոյթ, 1979, էջ 82:

<sup>13</sup> Նաթալի Շ., Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի), Պէրոյթ, 1957, էջ 3:

<sup>14</sup> Ավետեան Ս., Հայ ազատագրական ազգային յիսնամեա յուշամատեան և Զօր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 231:

<sup>15</sup> Գանգրունի Հ., Դաշնագիրները դաւեցին հայոց 1918-1923, Պէրոյթ, 1992, էջ 47:

<sup>16</sup> Շահան, Ալեքսանդրապոլի դաշնագրէն. 1930-ի Կովկասեան ապստամբութիւնները (վերագնահատումներ), Մարսէլ, 1934, էջ 41:

<sup>17</sup> Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետություն (1918-20թթ.), Եր., 1992, նույնի 1920թ. Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագրի գիւր, «Երկիր», 15. XII, 2000, նույնի՝ 1920թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը, Եր., 2004, նույնի՝ Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-20թթ.), Եր., 2005, նույնի՝ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի լուսաբանումը հայ պատմագրության մեջ, «Պատմա-բանասիրական հանդէս» № 3, 2006, նույնի՝ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի պատմաիրավական գնահատականը (1920-21թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2007, № 2, նույնի՝ Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010:

նակցականներն այնքան խոր էին զգում իրենց այդ գործի նողկալի տգեղությունը, որ չհամարձակվեցին հրատարակել Ալեքսանդրապոլի դաշնագիրը, և միայն ես էի, որ «Մշակի» մեջ ամբողջությամբ արտատպեցի այն, վերցնելով Կ. Պոլսի ռամկավարական «Ժողովրդի ձայն» թերթից»<sup>18</sup>:

Պատմաբան Ա. Մնացականյանը Ալեքսանդրապոլի պայմանագիրը որակել է որպես «ամոթալի ակտ»<sup>19</sup>, «ազգադավ քաղաքականություն»<sup>20</sup>: Անընդունելի է հեղինակի այն տեսակետը, թե իբր հայկական կողմը ևս ընդդիմացել է բանակցություններին Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի ներկա գտնվելուն, դեռ ավելին, իբրև անտեսել է խորհրդային կառավարության այդ պայմանագրի անօրինական լինելու մասին նախազգուշացումները<sup>21</sup>: Նմանատիպ կարծիք է արտահայտել նաև խորհրդահայ պատմաբան Ս. Կարապետյանը: Վերջինս նշում է, որ «ազգուրաց դաշնակները» Թուրքիայի ներկայացուցիչների հետ Ալեքսանդրապոլում, առանց Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների մասնակցությամբ, ստորագրում են հաշտության պայմանագիր, ինչն էլ հեղինակը համարում է «դաշնակների ազգակործան քաղաքականության և հայ ազգին դավաճանելու բարձրագույն աստիճանը»<sup>22</sup>: Անշուշտ, չի կարելի համաձայնվել խորհրդահայ պատմաբանների արտահայտած վերոնշյալ տեսակետների հետ: ՀՀ պատվիրակությանը հղված Ք. Կարաբեքիրի մի գրությունից պարզվում է, որ ներքին գործերի նախարար Ս. Արարատյանը նույնպես հայտնել է, որ ՀՀ կառավարությունը չի ցանկանում

Մոլդանիի գտնվելը Ալեքսանդրապոլում և այն համարում է ավելորդ<sup>23</sup>, սակայն, հարկ է նշել, որ Ալեքսանդրապոլի հաշտության կոնֆերանսի հենց առաջին նիստի ժամանակ (նոյեմբերի 25) Ալ. Խատիսյանը առաջարկել է կոնֆերանսի նախագահ Ք. Կարաբեքիրին որոշել Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Մոլդանիի կոնֆերանսին մասնակցության հարցը, այնինչ Կարաբեքիրը պատասխանել է, որ Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությունը Տաճկաստանի կառավարությունը անհրաժեշտ չի գտնում<sup>24</sup>, քանի որ նրա՝ որպես միջնորդի դերը սպառվել է, և որ իրենք՝ կողմերը, իրենց կառավարություններով լիազորություն ունեն վարելու բանակցություններ<sup>25</sup>: Մինչդեռ Ալ. Խատիսյանի կողմից Ք. Կարաբեքիրին հղված գրության մեջ ասվում էր. «Իմ կառավարությունը ցանկալի և անհրաժեշտ է համարում, որ այս կոնֆերանսին մասնակցեն Ռուսաստանի ներկայացուցիչները: Ես, պարոն նախագահ, պարտավոր զգացի Ձեզ հասցեագրել ներկա խնդիրս, որովհետև իմ կառավարությունը ժամանակին դիմել էր նույնպես խնդրելով ռուսական կառավարությանը, որը և, ինչպես Դուք ևս գիտեք, տվել էր իր համաձայնությունը, ԹԱՄԺ կառավարության ներկայացուցիչը Մոսկվայում այս խնդրի մասին Խորհրդային կառավարության հետ համաձայնության էր եկել, Ռուսաստանը Տաճկաստանի բարեկամն ու դաշնակիցն է և նրա ներկայացուցչի մասնակցությունը չի կարող որևէ կերպ վնասել բանակցությունների ընթացքին»<sup>26</sup>: Հարկ է նշել, որ Խորհրդային Ռուսաստանի արտգործոժողկոմ Գ. Չիչերինը դեռևս նոյեմբերի 11-ին Ս. Քեմալին, Ք. Կարաբեքիրին և Հայաստանի կառավարության նախագահին հղված գրության մեջ տվել էր իր համաձայնությունը կապված Բ. Մոլդանիի միջնորդության հետ: Այդ գրության մեջ ասվում

<sup>18</sup> Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 454-456:

<sup>19</sup> Մնացականյան Ա., Ռևոլյուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները, Եր., 1961, էջ 270:

<sup>20</sup> Մնացականյան Ա., Հայ ժողովրդի ազատագրումը և վերածնունդը, Եր., 1970, էջ 93:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 92-93:

<sup>22</sup> Կարապետյան Ս., 1920թ. հայ-թուրքական պատերազմը և Մովսեսական Ռուսաստանը, Եր., 1965, էջ 42:

<sup>23</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 636, թ. 59, Туманян М., Дипломатическая история республики Армения 1918-1920гг., Е., 2012, с. 378:

<sup>24</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 636, թ. 48, 62:

<sup>25</sup> «Գրական թերթ», 14 դեկտեմբեր, 1990:

<sup>26</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 97, թ. 17:

եր. «Ի նկատի առնելով հայկական կառավարության դիմումը Խորհրդային Ռուսաստանին միջնորդ հանդիսանալ Հայաստանի և Տաճկաստանի միջև և տաճկական կառավարության համաձայնությունը այդ առթիվ, խորհրդային կառավարությունը հայտնում է Ձեզ, որ վերցնում է իր վրա այդ միջնորդությունը և այդ նպատակով ուղարկում է պատերազմական գործողությունների վայրը իր լիազոր ներկայացուցիչ Մդիվանիին: Խորհրդային կառավարությունը հուսով է, որ հետագա պատերազմական գործողությունները կդադարեցվեն»<sup>27</sup>: Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Չիչերինի այս գրությունը ամենևին էլ իրականություն չդարձավ: Ավելին, առաջին իսկ հանդիպման ժամանակ Կարաբեքիրը Մդիվանիին հայտնեց, որ ինքը Անգորայից հրահանգ ունի բանակցությունները վարել միայն հայերի հետ»<sup>28</sup>:

Ականավոր բոլշևիկ Ա. Կարինյանը, ինչպես նաև պրոֆեսոր Գ. Աբովը ևս անդրադարձել են այս հարցին և, աղավաղելով իրականությունը, փորձել են հիմնավորել, թե իբր Դաշնակցական կառավարությունը հրաժարվել է, որպեսզի Բ. Մդիվանին հանդիսանա միջնորդ հայ-թուրքական բանակցությունների ժամանակ<sup>29</sup>: Իրականում ոչ թե Դաշնակցական կառավարությունն է հրաժարվել, այլ հայկական պատվիրակության նախագահ Ալ. Խատիսյանը նոյեմբերի 29-ին Երևան հղված մի գրության մեջ իրավացիորեն նշում է, որ «Մդիվանիի դերը այստեղ վնասակար է մեր շահերի համար, քանի որ նա այստեղ գործում է բացառապես իբրև կուսակցական Հայաստանը խորհրդայնացնելու նպատակով»<sup>30</sup>: Մինչդեռ Մդիվանին պետք է մեկնել Ալեքսանդրապոլ ռազմական գործողություններին վերջ տալու

<sup>27</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 100, թ. 17:

<sup>28</sup> Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Եր., 2002, էջ 278:

<sup>29</sup> Տե՛ս Կարինյան Ա., Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը, Եր., 1924, էջ 36, Աբով Գ., Դաշնակցությունն անցյալում և այժմ, Եր., 1929, էջ 102:

<sup>30</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 636, թ. 97:

և տարածքային հարցերը վճռելու ժամանակ դերակատարության ունենալու համար, ինչն էլ բնականաբար ձեռնտու չէր Թուրքիային: Հենց սա էր պատճառը Կարաբեքիրի այն հայտարարության, ըստ որի բանակցությունները կարող են տեղի ունենալ միայն հայերի ու թուրքերի միջև՝ առանց որևէ ոռու ներկայացուցչի մասնակցության:

Եթե Մդիվանին որպես միջնորդ մասնակցեր բանակցություններին, ապա այդ դեպքում պետք է Թուրքիայից տարածքներ գահանջեր հոգուտ Հայաստանի, ինչը նախնական պայմանափոխվածության համաձայն չէր եղել Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև<sup>31</sup>: Այստեղից կարելի է հետևություն անել, որ Մդիվանիի մասնակցությունը բանակցություններին ձեռնտու չէր նաև Խորհրդային Ռուսաստանին:

Ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը իրավացիորեն կարծում է, որ Մդիվանին ժամանել էր Ալեքսանդրապոլ թուրքերի միջոցով Հայաստանի վրա ճնշումը ուժեղացնելու, Հայաստանի խորհրդայնացումն արագացնելու և Թուրքիային թույլ չտալու, որ վերջինս տարածքներ զավթի Ռուսաստանին հասանելիք հայկական հողերից<sup>32</sup>: Միանգամայն ընդունելի է հեղինակի այն տեսակետը, որ Մդիվանին ուղարկվել էր Ալեքսանդրապոլ թուրքամետ խմբի հակահայկական ծրագրերն իրականացնելու համար: Հակառակ դեպքում, եթե Մդիվանին այդ նպատակը չէր հետապնդում, ապա Թուրքիայի կողմից Ռուսաստանի միջնորդությունը մերժելուց հետո ինչո՞ւ էր Մդիվանին մնում Ալեքսանդրապոլում: Մի թե նրա նպատակը Հայաստանի նվաճումը դյուրացնելը չէր, մի թե նրա նպատակը ոռու-թուրքական նախօրոք կազմված ծրագիրը տրամաբանական ավարտին հասցնելը չէր:

Այնուամենայնիվ, միջնորդության հարցը պաշտոնապես չհանվեց օրակարգից, ավելին, ինչպես արդեն նշեցինք, կոնֆե-

<sup>31</sup> Տե՛ս Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 280:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 281:

րանսի հենց առաջին նիստի քննարկմանը ներկայացված հարցերի մեջ Խատիսյանի պատվիրակության կողմից առաջնային տեղ էր զբաղեցնում Ալեքսանդրապոլի կոնֆերանսին Մոլիվանու մասնակցության հարցը<sup>33</sup>։ Կարծում ենք՝ Ալ. Խատիսյանը իրավացի էր, երբ պնդում էր, որ Մոլիվանու դերը վնասակար է Ալեքսանդրապոլում, որովհետև եթե Մոլիվանին Կարսի պարագայում աջակցություն չէր ցուցաբերելու Հայաստանին, իսկ ռազմական գործողություններն այդ ժամանակ արդեն դադարել էին, էլ ի՞նչ նպատակ պիտի հետապնդեր նա Ալեքսանդրապոլում։ Սրանից կարելի է ենթադրել, որ Մոլիվանիի Ալեքսանդրապոլում մնալը միայն մեկ նպատակ էր հետապնդում՝ դյուրացնել Հայաստանի խորհրդայնացման գործընթացը։ Փաստորեն, անհիմն էին այս խնդրում խորհրդահայ պատմաբանների քննադատություններն ուղղված ՀՀ կառավարության հասցեին։

Միշտ էլ պատմագրության մեջ շահարկվել է այն հարցը, թե ինչու Ալ. Խատիսյանը ստորագրեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը։ Պայմանագիրը ստորագրելու կապակցությամբ խորհրդահայ պատմագրությունը միակողմանիորեն մեղադրել է Դաշնակցական կառավարությանը, որը, անշուշտ, ուներ մեղքի իր բաժինը, սակայն հարկ է նշել, որ Հայաստանին նման ծանր իրավիճակի մեջ դրեց հենց ինքը՝ Խորհրդային Ռուսաստանը, ով դիվանագիտական, ռազմական ու ֆինանսական հնարավորություններ տվեց քեմալականներին<sup>34</sup>, որոնք էլ պարտության մատնեցին Հայաստանին և ուժի սպառնալիքով նրան պարտադրեցին Ալեքսանդրապոլի պայմանագիրը։

Ա. Կարինյանի համոզմամբ Դաշնակցական կառավարությունը հնարավորություն ուներ չստորագրելու Ալեքսանդրապոլի

պայմանագիրը, «սակայն սեփական ցանկությամբ ու սեփական որոշումով ստորագրում է այդ պայմանագիրը»<sup>35</sup>։ Մեկ այլ խորհրդահայ պատմաբան ավելի ծայրահեղ տեսակետ է արտահայտել՝ Ալեքսանդրապոլի պայմանագիրը համարելով «թուրք-դաշնակցական համագործակցություն խորհրդային իշխանության դեմ»<sup>36</sup>։ Է. Ջոհրաբյանի կարծիքով իշխանությունն ամեն կերպ պահելու ցանկությամբ էր պայմանավորված դաշնակցականների կողմից պայմանագրի ստորագրումը<sup>37</sup>։ Հեղինակի բնութագրմամբ Ալեքսանդրապոլի պայմանագիրը վերջին ամսվա ընթացքում դաշնակցության դեպի Թուրքիա կողմնորոշվելու ընդգծված քաղաքականության արդյունքն էր<sup>38</sup>։

Հայտնի է, որ պայմանագիրը ստորագրելուց առաջ Ալ. Խատիսյանը Հայաստանի խորհրդային իշխանության ժամանակավոր ներկայացուցիչ Դրոյի հետ կապվելով փորձում է նրանից ճշտել պայմանագիրը ստորագրելու հարցը։ Խատիսյանը գրում է. «Երեկոյեան ժամը 6-ին ինձ հրաւիրեց ուղղակի հեռագրաթելի մօտ Դրօն, որը ըսաւ հետեւեալը. «Յեղափոխական կառավարութեան անունից յայտնում եմ Ձեզ, որ Դուք ազատ եք ստորագրել դաշնագիրը կամ ոչ»։ Լաւ գիտակցելով դաշնագիրը ստորագրելու կամ մերժելու ամբողջ պատասխանատուութիւնը, ես երկրորդ անգամ հարցուցի, թե արդեօք կառավարութիւնը ստորագրելու կողմն է, թէ մերժելու։ Մենք սպասում ենք որոշ եւ պարզ հրահանգների։ Դրօն պատասխանեց. «Ես Ձեզ ասացի արդէն։ Գործեցէք համաձայն Ձեր հասկացողութեան։ Ես խոսում եմ ընկեր Սիլինի եւ իմ անունից»<sup>39</sup>։ Այս մեջբերումից պարզվում է, որ Դրոն, ով Սիլինի հետ միասին դեկտեմբերի 2-4-ը փաստացի Հայաստանի խորհրդային իշխանության ներկայացուցիչն էր համարվում, պայմանագիրը ստորագրելու հարցը

<sup>33</sup> Տե՛ս Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 301: Տե՛ս նաև Ջոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, Եր., 1979, էջ 97-98: «Գրական թերթ», 14 դեկտեմբեր, 1990:

<sup>34</sup> Տե՛ս Հակոբյան Ա., Բոլշևիկների օգնությունը քեմալականներին 1920թ., «Դրօշակ», Եր., 2000, № 1, էջ 154-164, Մինասեան Բ., Հայաստան, հայ ժողովուրդ և հայ դատ, Պեյրուք, 1976, էջ 127:

<sup>35</sup> Կարինյան Ա., նշվ. աշխ., էջ 37:

<sup>36</sup> Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 354:

<sup>37</sup> Տե՛ս Է. Ջոհրաբյան Է., նշվ. աշխ., էջ 144:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 142:

<sup>39</sup> Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 310:

թողնելով Ալ. Խատիսյանի հայեցողությանը, փաստորեն չի արգելում, այլ ընդհակառակը, լիագորում է նրան, որ պայմանագիրը ստորագրվի: Դեկտեմբերի 2-ի այս իրադարձությունը պատմաբան Վլ. Ղազախեցյանը համարում է Դրո-Սիլին անդրանիկ հրամանը<sup>40</sup>: Մրանից կարելի է ենթադրել, որ Խատիսյանը իրագործեց Հայաստանի նորահռչակ խորհրդային իշխանության թելադրանքը:

Ակադեմիկոս Գ. Գալոյանը չի ընդունում Դրո-Խատիսյան հեռախոսագրույցի ճշմարտացիությունը: Հեղինակը անզիջական արխիվներից մեջբերում է մի հեռագիր, ըստ որի Դրոն դեկտեմբերի 1-ին հաղորդել է Ալեքսանդրապոլում գտնվող ՀՀ պատվիրակությանը, որ Հայհեղկոմի կողմից Հայաստանում խորհրդային իշխանություն հռչակելուց հետո, դեկտեմբերի 1-ից սկսած հին կառավարության կողմից նշանակված պատվիրակությունը ոչ մի իրավունք և իրավասություն չունի բանակցությունները թուրքերի հետ շարունակելու համար<sup>41</sup>: Կասկածի տեղիք է տալիս հեղինակի կողմից բերված այս մեջբերումը, քանի որ եթե նման հրահանգ Դրոն սոված լիներ Խատիսյանին, էլ ինչու պիտի հաջորդ օրը դարձյալ զանգահարեր Խատիսյանին և հասկացներ, որ պայմանագիրը ստորագրվի:

Է. Զոհրաբյանը Ալեքսանդրապոլի պայմանագրի նկատմամբ Դրոյի ցուցաբերած վարքագիծը համարում է «ուղղակի դավաճանություն», քանի որ կարծում է, որ նման հարցի լուծման համար Դրոն պարտավոր էր նախ և առաջ հարցում անել Հեղկոմին, որն այդ ժամանակ գտնվում էր Դիլիջանում, հակառակ դեպքում Երևանում գտնվող Բ. Լեզրանին և ստանալ համապատասխան ցուցում: Ըստ հեղինակի՝ Դրոյի համար գործելու ամենաօրինական ճանապարհը հենց սա կլիներ, իհարկե հաշվի առնելով այն հանգամանքը, որ կարող էր նաև կարգադրել Խա-

տիսյանին, որ չստորագրի այդ պայմանագիրը: Այնինչ հեղինակը նշում է, որ Դրոն չընտրեց ոչ մի հնարավոր տարբերակ և հարցի լուծումը թողեց պատվիրակությանը, որպեսզի պատվիրակությունը ստորագրի թուրքերի ներկայացրած պայմանագիրը<sup>42</sup>:

Այս տեսակետից տրամագծորեն հակառակ տեսակետ է զարգացնում պատմաբան Բ. Հարությունյանը: Վերջինս ելնելով Խատիսյանի վերոնշյալ վկայությունից ենթադրում է, որ Դրոյի մանվածապատ պատասխանը, որը պայմանավորված էր իր կողքին գտնվող Սիլինի հրահանգներով, անուղղակի հասկացնում էր, որ պայմանագիրը կարող է ստորագրվել: Հեղինակը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դրոն էր զանգահարել Ա. Խատիսյանին, ենթադրում է, որ բոլշևիկյան իշխանությունը խիստ անհանգստացած էր, որ պատվիրակությունը չի ստորագրի պայմանագիրը և աշխատում էր անուղղակի խթանել պայմանագրի ստորագրումը<sup>43</sup>:

Պայմանագիրը ստորագրելուց հետո Խատիսյանը վերադառնում է Երևան և անմիջապես հանդիպում ունենում Դրոյի հետ: Դրոն Խատիսյանին վստահեցնում է, որ պատվիրակությունը ամեն ինչ ճիշտ էր հասկացել և կատարել: Այդ մասին Խատիսյանը հետևյալն է գրում. «Երեւան գալով մենք ամբողջ կազմով գացինք կառավարութեան տունը: Մեզ ընդունեցին Դրօն և Սիլինը: Մենք մանրամասն զեկուցում տւինք: Դրօն մեզի ըսաւ, թէ գործած ենք շատ ճիշդ, ստորագրելով դաշնագիրը, եւ թէ իր խուսափողական պատասխանը ինձ դաշնագիրը ստորագրելու մասին պետք էր հասկանալ այնպէս, ինչպէս որ մենք հասկցած էինք»<sup>44</sup>: Փաստորեն, Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրվեց լիագորությունները վայր դրած կառավարության պատվիրակության կողմից, բայց միևնույն ժամանակ Հայաստանի խորհր-

<sup>40</sup> Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940թթ., Եր., 2006, էջ 13:

<sup>41</sup> Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 378-379:

<sup>42</sup> Տե՛ս Զոհրաբյան Է., նշվ. աշխ., էջ 137-138:

<sup>43</sup> Տե՛ս Զարությունյան Բ., Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերի համադրական քննության շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2011, № 3, էջ 55:

<sup>44</sup> Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 313:

դային իշխանության անդրանիկ ներկայացուցչի բանավոր լիազորությունների շնորհիվ: Թեև պետք է նշել, որ Խատիսյանը կարող էր հրաժարվել պայմանագիրը ստորագրելուց, քանի որ իր պատվիրակությունը տվյալ պարագայում, հայոց պետության արդեն գոյություն չունենալու հանգամանքով պայմանավորված, հանդիսանում էր մասնավոր անձանց խումբ<sup>45</sup>, այսինքն՝ այդ պայմանագիրը ստորագրել էին արդեն իսկ լիազորությունները վայր դրած կառավարության ներկայացուցիչները: Պատմաբան Ե. Մարգարյանի համոզմամբ՝ դաշնակցականները ստորագրեցին Ալեքսանդրապոլի պայմանագիրը՝ ի սկզբանե հույսը դնելով այն բանի վրա, որ այն իրավական ուժ չի ունենա, քանի որ իրենց կառավարությունն արդեն հրաժարական էր տվել ու իշխանությունը հանձնել բոլշևիկներին<sup>46</sup>:

Սվյալոքի որոշ հեղինակներ գտնում են, որ եթե Խատիսյանը չստորագրեր պայմանագիրը, ապա թուրքերը կշարունակեին առաջխաղացումը: Այս տեսակետը ևս համոզիչ չէ: Փորձենք պարզաբանել:

Լեզրանի առաջարկին՝ հետ կանչել պատվիրակությունը Ալեքսանդրապոլից, խզել հարաբերությունները տաճիկների հետ և ռուսական զորք մտցնել Հայաստան, Վրացյանը պատասխանում է հետևյալ կերպ. «Եթե մենք յետ կանչեինք մեր հաշտութեան պատուիրակութիւնը Ալեքսանտրապոլից եւ խզեինք բանակցութիւնները տաճիկների հետ պարզ է, որ մինչեւ կարմիր զորքերը կը հասնէին, տաճիկները կը լինէին Երեւանում ու Դարալագեազում: Դրանից յետոյ ի նչ արժէք կունենար բոլշևիկեան օգնութիւնը»<sup>47</sup>: Ս. Վրացյանի այս մտահոգությունը, անշուշտ, տեղին է, քանի որ Լեզրանը որևէ երաշխիք չէր տալիս, որ թուրքերը առաջ չեն շարժվի, այլ պարզապես պատասխա-

<sup>45</sup> Սահակյան Ս., Ցավալի պայմանագրեր, Եր., 2007, էջ 348:

<sup>46</sup> Саркисян Е., За кулисами. Как родился Московский договор 1921 г., «Литературная Армения», Е., 1991, № 1, с. 79.

<sup>47</sup> Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք» ամսագիր, 1923, նոյեմբեր, № 1, էջ 67:

նում էր, որ «թուրքերը այդպիսի քայլ չեն առնի»<sup>48</sup>, բայց կարծում էր, որ եթե թուրքերը ցանկանային շարունակել պատերազմը, ապա դա կանեին մինչև հաշտության բանակցությունները սկսելը: Մենք այն կարծիքին ենք, որ թուրքը առաջ չէր շարժվի ոչ թե նրա համար, որ դա կնշանակեր պատերազմել Խ. Ռուսաստանի դեմ, ինչպես կարծում են որոշ պատմաբաններ<sup>49</sup>, այլ նրա համար, որ քեմալականներն արդեն գրավել էին «Ազգային Ռիստով» նախատեսված տարածքները, դեռ մի բան էլ ավելին (Սուրմալու), և մնում էր այդ նվաճումները ընդամենը օրինականացվեր պայմանագրի տեսքով, իսկ Կարաբեքիրի շտապողականությունը պայմանավորված էր նրանով, որ նա ցանկանում էր պայմանագիրը կնքել այն իշխանության հետ, ում հետ որ նա պատերազմի մեջ է եղել:

Պատմաբան Ա. Հակոբյանը գտնում է, որ եթե անգամ Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումը թողնվեր բոլշևիկներին, ապա նրա բովանդակությունը էապես չէր փոխվելու, քանզի խորհրդա-թուրքական նախնական համաձայնությամբ արդեն զոված էր հայ-թուրքական սահմանը, իսկ դա այն էր, որ Զ. Կարաբեքիրը թելադրել էր Ալ. Խատիսյանին Ալեքսանդրապոլում: Հեղինակը կարծում է, որ հենց դա էր պատճառը, որ խորհրդային կողմից Լեզրանը, Դրոն չարզելեցին, որ պայմանագիրը ստորագրվի: «Ալեքսանդրապոլի խայտառակությունը թույլատրվեց հավանաբար նրա համար, գրում է հեղինակը, որ խորհրդային կառավարությունը անգամ վերջին պահին ամբողջ պատասխանատվությունը, տարածքային կորուստները զցի կործանվող իշխանության վրա և դրանով էլ ավելի վարկաբեկի ժողովրդի աչքում»<sup>50</sup>:

<sup>48</sup> Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 529:

<sup>49</sup> Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 62, Գաբրիելյան Գ., Ս. Վրացյանի կառավարության բանակցությունները Բ. Լեզրանի հետ և ՀՀ խորհրդայնացումը, «Էջմիածին», ամսագիր, 2011, ապրիլ, էջ 82:

<sup>50</sup> Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները, էջ 331:

Մեր կարծիքով բուլշևիկներին նույնպես ձեռնտու էր, որ պայմանագիրը ստորագրվի դաշնակցական պատվիրակության կողմից, որովհետև եթե նրանք ցանկանային, ապա կպահանջեին պատվիրակության վերադարձը Ալեքսանդրապոլից և նոր պատվիրակություն կուղարկեին բանակցությունները վարելու համար, բայց նրանք չգնացին այդ քայլին, որովհետև, ինչպես Խատիսյանն է ասում «յեղափոխական նոր իշխանությունը կուզեր, որ դաշնագիրը ստորագրուէր, բայց մեր եւ ոչ իր ձեռքով»<sup>51</sup>։

Հայտնի բուլշևիկ Ա. Կարինյանը իր աշխատություններից մեկում առանց աղբյուրը հիշատակելու գրում է, որ դեկտեմբերի 3-ին Դրոյի և Սիլինի ստորագրությամբ Ալեքսանդրապոլի պատվիրակությանն ուղարկել է հեռագիր, ըստ որի հին կառավարության կողմից նշանակված պատվիրակությունը այլևս ոչ մի լիազորություն չունի, իսկ Թուրքիայի հետ այսուհետև բանակցություններ պետք է վարի Հայհեղկոմը<sup>52</sup>։ Կասկածելի թվացող և հավատ չներշնչող այս հեռագիրը, անշուշտ, ուշացած էր Սակայն անհասկանալի է այն հանգամանքը, թե ինչու պիտի Դրոն դիմեր այդ քայլին, չէ՞ որ նա քաջատեղյակ էր, որ պայմանագիրն արդեն իսկ ստորագրված է, հետևաբար ի՞նչ նպատակ պետք է հետապնդեր նրա այս քայլը։

Հայ պատմագրության մեջ սխալ կարծիք է ձևավորվել նաև Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին հասանելիք տարածքի շուրջ։ Խորհրդահայ պատմագրության մեջ զարգացվում էր այն տեսակետը, ըստ որի «Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանի տարածքը հավասարվում է Բաթումի պայմանագրով նախատեսված տարածքին»<sup>53</sup>։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խորհրդային շրջանի գաղափարաքաղաքական մթնոլորտում էր արտահայտվում այս տեսակետը, ինչ

որ տեղ հասկանալի է, բայց որ հետխորհրդային շրջանի որոշ պատմաբաններ ևս պնդում են, որ Հայաստանին Ալեքսանդրապոլի պայմանագրով թողնվում էր ընդամենը 10 հազ. քառ. կմ տարածք<sup>54</sup>, արդեն համարում ենք անընդունելի։ Կարծում ենք, որ միանշանակ կերպով պնդել, թե ինչքան է եղել ՀՀ տարածքը, սխալ կլինի, քանի որ դեռևս հստակեցված չէր Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի հարցը։ Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ կոնկրետ տարածք շեշտել և համեմատություն անել այլ պայմանագրի հետ պարզապես ընդունելի չէ։

Հարկ է նշել, որ պատմագրության մեջ միաձայն կարծիք չի եղել Ալեքսանդրապոլի պայմանագրի հողվածների հստակ թվի վերաբերյալ։ Տարբեր աշխատություններում և փաստաթղթերի ժողովածուներում տարբեր թվեր են նշվել։ Հողվածների ընդհանուր թիվը 18-ն է, բայց խորհրդահայ պատմագրության մեջ հիմնականում 14 հողված է հիշատակվել։ Հողվածների ընդհանուր թվի ճշգրտման հարցը հետխորհրդային պատմագրության մեջ պարզաբանել է Ա. Հակոբյանը<sup>55</sup>։ Հեղինակի ուսումնասիրությունից պարզվում է, որ խորհրդային շրջանի աշխատություններից և փաստաթղթերի ժողովածուներից բացակայել են պայմանագրի 7-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ հողվածները։ Անշուշտ, պետք է համաձայնել հեղինակի այս ճշգրտման հետ, քանի որ պայմանագրի հողվածների թիվը իրոք 18-ն է և այդ պայմանագրի հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով տարբերակների պատճենները պահվում են Հայաստանի Ազգային արխիվի տարբեր ֆոնդերում<sup>56</sup>, իսկ ինչ վերաբերում է այն տեսակետին, թե իբր պայմանագիրը բաղկացած է 14, 15 հողվածից, ապա պետք է

<sup>51</sup> Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 313։

<sup>52</sup> Տե՛ս Կարինյան Ա., Դաշնակցությունը և իր զինակիցները, Եր., 1932, էջ 89։

<sup>53</sup> Արզումանյան Ս., նշվ. աշխ., էջ 350, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 775, ՀԺՊ, հ 7, էջ 111։

<sup>54</sup> Տե՛ս Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 381, Սարգսյան Ե., Դավադիր գործարք. Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա, Եր., 1995, էջ 171։

<sup>55</sup> Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 63-65։

<sup>56</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 636, թ. 132-137, ֆ. 200, ց. 2, գ. 108, թ. 1-6, ֆ. 200, ց. 2, գ. 159, թ. 1-6, ֆ. 113, ց. 3., գ. 56, թ. 93-99, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 14-19։



նշել, որ այդ շփոթը հիմնականում գալիս է խորհրդային շրջանում կազմված փաստաթղթերի ժողովածուներից<sup>57</sup>:

Այսպիսով, ինչպես տեսանք, հայ պատմագրության մեջ բավականին անդրադարձ եղել է հայ ժողովրդի պատմության մեջ վիճելի համարվող Ալեքսանդրապոլի պայմանագրին: Այս պայմանագիրը հայ պատմագրության մեջ միանշանակ չի գնահատվել, այն արժանացել է տարաբնույթ գնահատականների: Խորհրդահայ պատմագրության մեջ այն միանշանակ քննադատվել է, դաշնակցական պատմագրությունը փորձել է հիմնավորել այդ պայմանագիրը ստորագրելու ակտուսափելիությունը, սփյուռքի ոչ դաշնակցական հեղինակները իրենց կոշտ գնահատականներով քիչ են զիջում խորհրդահայ հեղինակներին, իսկ անհա հետխորհրդային շրջանի պատմագրության ներկայացուցիչները հետզհետե վերանայում և վերագնահատում են այս պայմանագրի հետ կապված խնդիրները:

<sup>57</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 216, ք. 1-3, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Եր., 1960, էջ 408-411, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Եր., 1972, էջ 683-687, Ազատյան Լ., Բախտորոշ պայմանագրեր, Եր., 2002, էջ 107-109:

## ОЦЕНКА АЛЕКСАНДРАПОЛЬСКОГО ДОГОВОРА В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

*Արա Ազատյան*

(резюме)

Александропольский договор является одним из основных и спорных и противоречивых вопросов новейшей истории Армении, который в историографии удостоился разнородных оценок. Заключение этого договора стало возможным главным образом благодаря советско-кемалскому политико-стратегическому сотрудничеству, чем фактически Турция поставила Армению в свою зависимость. Договор, который с армянской стороны подписали уже сложившие свои полномочия представители правительства, которые фактически не имели правомочий сделать это, следовательно этот договор не мог иметь правовой силы. Нашей целью было представление и проанализирование взглядов и оценок сформированный в армянской историографии про Александропольский договор.

## THE ALEXANDROPOULOS TREATY RATING IN THE ARMENIAN HISTORIOGRAPHY

*Ara Azatyan*

(summary)

One of the disputable and controversial issues of modern history is Alexandropoulos contract that received various evaluations in historiography. This contract came into force mainly due to Soviet-Kemalist military cooperation, according to which in fact Armenia became dependent on Turkey. A contract was signed by those representatives of Armenian government who had already laid down the powers and who actually were not entitled to do so, therefore the contract cannot have the legal force. Our goal was to introduce and analyze the opinions and assessments formed in Armenian historiography about Alexandropoulos treaty.

**ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ  
1920-1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ.  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ**

**Բանակի բառեր՝ բանակ, ռազմական միջամտություն, ռազմական հեղաշրջում, քաղաքացիական իշխանություններ, կուսակցություններ, իսլամ**

Ռազմական սոցիոլոգիայի<sup>1</sup> ասպարեզում հետազոտությունների կարևորագույն օբյեկտ են բանակ-հասարակություն (քաղաքացիական իշխանություններ) փոխհարաբերությունները, որոնց վերաբերյալ ուսումնասիրությունները հատուկ կարևորություն ստացան հատկապես 20-րդ դարի երկրորդ կեսից Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո զինվորականների դերը պետությունների քաղաքական կյանքում նոր բնույթ և կարևորություն ձեռք բերեց, ինչն էլ հետազոտողների ուշադրությունը սևեռեց այդ թեմայի վրա<sup>2</sup>:

Բանակ-հասարակություն փոխհարաբերությունների վերաբերյալ կատարված հետազոտություններում լայն տարածում է ստացել Էրիկ Նորդլինգերի տեսությունը, ըստ որի՝ այդ փոխհարաբերությունները, երբ զինվորականները ենթարկվում են քաղաքացիական իշխանություններին, կարելի է բաժանել երեք

\* Պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դոցենտ:

<sup>1</sup> Ռազմական սոցիոլոգիայի հետազոտությունների կենտրոնում են բանակը որպես ինստիտուտ, դրա կապը և փոխհարաբերությունները հասարակության այլ ինստիտուտների հետ, բանակի գործառնության արդյունավետության վրա ազդող գործոնները, տե՛ս Ռազմական սոցիոլոգիա. ուսումնական կյուրթերի ժողովածու, Երևան, 2005, էջ 6:

<sup>2</sup> Feaver P. D., The Civil-Military Problematique: Huntington, Janowitz, and the Question of the Civilian Control. - Armed Forces & Society, Vol. 23, No. 2, Winter 1996, pp. 149-178.

խմբի՝ ավանդական (traditional), ազատական (liberal) և ներթափանցող (penetration)<sup>3</sup>: Բանակ-հասարակություն փոխհարաբերությունների ավանդական մոդելի ժամանակ քաղաքացիական և զինվորական իշխանությունն ամբողջական է, գտնվում է մեկ ղեկավարի ձեռքում, ով հիմնականում ազնվական ծագում ունի (Ֆնչպես, օրինակ, միջնադարյան միապետությունները): Ազատական մոդելի դեպքում բանակն ապաքաղաքականացված է, զինվորականներն անվերապահորեն ենթարկվում են քաղաքացիական իշխանություններին՝ անկախ վերջիններիս քաղաքական և գաղափարական ուղղվածությունից (տարածված է արևմտյան երկրներում): Բանակ-հասարակություն փոխհարաբերությունների ներթափանցող մոդելի ժամանակ բանակը սերտորեն փոխկապակցված է իշխանությունների հետ, բանակում տարածված է իշխող կուսակցության գաղափարախոսությունը, բանակը քաղաքականացված է և պայքարում է իշխող ռեժիմի գաղափարախոսության համար<sup>4</sup> (Խորհրդային Միության տարբերակը)<sup>5</sup>:

Բանակ-հասարակություն հարաբերությունները, երբ զինվորականները չեն ենթարկվում քաղաքացիական իշխանություններին և միջամտում են երկրի ներքաղաքական կյանքին, է. Նորդլինգերը բաժանում է 3 խմբի՝ կարգավորող (moderator),

<sup>3</sup> Nordlinger E., Soldiers in Politics: Military Coups and Governments, New Jersey, 1977, pp. 10-19.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 10-19:

<sup>5</sup> Որոշ հետազոտողներ այդ 3 տարբերակներին ավելացնում են ևս մեկը, այն է երբ քաղաքացիական իշխանությունները հանդես են գալիս զինվորականների հետ կռախցիայում: Այդ դեպքում զինվորականները գտնվում են քաղաքացիական իշխանությունների ենթակայության տակ, սակայն քաղաքացիականները պահում են իրենց իշխանությունը զինվորական խմբի կամ անհատի հետ դաշինքի միջոցով: Օրինակ՝ Ալժիրի տարբերակը, երբ երկրի նախագահ Ահմադ Բեն Բելլան պահում էր իր իշխանությունն Ազգային պաշտպանության նախարար Հուարի Բուսեյիեի օգնությամբ, մինչև վերջինիս կողմից իշխանության զավթումը: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Ն., Արարական երկրների պատմություն, հատոր III, Երևան, 2006, էջ 69-77:

խնամակալ (guardian) և իշխող (ruler): *Կարգավորող միջամտությունների* դեպքում զինվորականներն ուղղակիորեն չեն վերցնում իշխանությունը, այլ սպառնալիքների և ճնշումների միջոցով արգելք (veto) են դնում կառավարության որոշման կամ կառավարության գործունեության վրա: Այդ դեպքում հնարավոր է կառավարության փոփոխությունը զինվորականների համար առավել ընդունելի տարբերակով (ինչպես, օրինակ, 1997-1998 թթ. Թուրքիայում զինվորականության ճնշումների արդյունքում Ն. Էրբաքանի կառավարությունը փոխարինվեց Բ. Էջնիթի կառավարությունով)<sup>6</sup>: *Խնամակալ միջամտության* ժամանակ զինվորականներն ուղղակիորեն իրենց ձեռքն են վերցնում իշխանությունը: Այդ մոդելի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ զինվորականները ժամանակավոր են վերցնում իշխանությունը՝ միջամտության պատճառները վերացնելու և իշխանությունը կրկին քաղաքացիական ուժերին վերադարձնելու նպատակով: *Իշխող միջամտությունների* ժամանակ զինվորականներն իշխանությունը վերցնում են իրենց ձեռքում պահելու և արմատական փոփոխություններ իրականացնելու նկատառումներով<sup>7</sup>:

Բանակ-հասարակություն հարաբերությունների ուսումնասիրությունների խոշորագույն տեսաբան Մորիս Յանովիցը նոր (զարգացող) ազգերի մոտ ռազմական հեղաշրջումները, ըստ զինվորական աստիճանակարգության, բաժանում է երկու տեսակի՝ նախաձեռնողական և ըստ հրամանի: *Նախաձեռնողականի* ժամանակ ռազմական հեղաշրջումը կազմակերպում են ցածր աստիճանակարգ ունեցող զինվորականները, առանց հրամանատարության գիտության կամ համաձայնության (այդպիսի հեղաշրջումները հիմնականում ավելի արմատական են

<sup>6</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս Heper M. and Güney A., *The Military and the Consolidation of Democracy: The Recent Turkish Experience*, *Armed Forces & Society*, Vol. 26, No. 4, Summer 2000, pp. 635-657

<sup>7</sup> Nordlinger E., նշվ. աշխ., էջ 21-32:

լինում): *Ըստ հրամանի*՝ հեղաշրջումներն իրականացվում են բանակի հրամանատարության կողմից<sup>8</sup>:

Երկրի քաղաքական կյանքում իշխող զինվորական-քաղաքացիական հարաբերությունների տարբերակը հասկանալու համար պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները՝ սոցիալ-տնտեսական և քաղաքական միջավայրը (երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը, ներքաղաքական դրությունը և այլն), արտաքին գործոնները (տարածաշրջանում պատերազմներ, հեղաշրջումներ, հեղափոխություններ և այլն) և զինվորական համակարգի էությունը<sup>9</sup> (բանակի քաղաքականացվածությունը, քաղաքական գաղափարախոսությունը, զինվորականության սոցիալական վիճակը, զինվորականության քաղաքական կյանքին միջամտության ավանդույթը<sup>10</sup> և այլն):

Քեմալական Թուրքիայում բանակն այն առանցքային ուժն էր, որը կանգնած էր երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման հիմքում: Զինվորականների գերիշխումը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում երկարատև և ուժեղ ավանդույթ ունի, որը կապված է ինչպես Օսմանյան կայսրության բնույթի, այնպես էլ հանրապետական Թուրքիայի ստեղծման և կայացման գործընթացի հետ<sup>11</sup>: Թուրքիայի Հանրապետության հիմնադրման առաջին տարիներից զինվորականներն սկսեցին ակտիվ դեր խաղալ երկրի քաղաքական կյանքում: Թուրքիայի առաջին նախագահ դարձավ ազգայնամուլական շարժման առաջնորդ, մարշալ Մուսթաֆա Քեմալը

<sup>8</sup> Janowitz M., *The Military in the Political Development of New Nations*. Chicago: The University of Chicago, 1965, pp. 68-70.

<sup>9</sup> Karabelias G., *Civil-Military Relations: A comparative analysis of the role of the military in the political transformation of post-war Turkey and Greece: 1980-1985*. – Final Report Submitted to North Atlantic Treaty Organization (NATO) in June 1980, pp. 15-16.

<sup>10</sup> Janowitz M., *Political Conflict, Essays in Political Sociology*, Chicago: Quadrangle Books, 1970, p. 136.

<sup>11</sup> Багдасарян С., Роль армии в процессе модернизации Турции в 1960-1990-х годах. – *Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ XXI*, Երևան, 2002, էջ 28.

(1934 թվականից՝ Աթաթյուրք), վարչապետ՝ գեներալ Իսմեթ փաշան (1934-ից՝ Ինյունյու): Հանրապետության գոյության առաջին տարիները ցույց տվեցին, որ բանակի դերը Թուրքիայի քաղաքական կյանքում միանշանակ չէ: Ընդհանուր առմամբ, բանակը հանդիսանում էր քեմալականների իշխող ռեժիմի հենասյունը, բայց միաժամանակ Մ. Քեմալի իշխանությանն ընդդիմադիր գեներալների (Ք. Քարաբեքիր, Ա. Ջերեսոյ, Ջ. Էդիլմեզ) ակտիվ մասնակցությունը երկրի քաղաքական կյանքին իրական սպառնալիքի տակ էր դնում Քեմալի իշխանությունը և բարեփոխումների իրականացումը<sup>12</sup>: Քեմալականները հաղթանակած դուրս եկան այդ պայքարից, և ընդդիմադիր գեներալները հեռացվեցին բանակից, որից հետո միայն Քեմալը վերջնականապես արգելեց զինվորականներին զբաղվել քաղաքական գործունեությամբ<sup>13</sup>: Այնուհետև քեմալականները սկսեցին, մի կողմից, ապաքաղաքականացնել բանակը՝ փորձելով գերծ պահել այն քաղաքական գործընթացներից, մյուս կողմից էլ բանակը դիտարկել որպես իշխանությունների իրական հենասյուն և քեմալական բարեփոխումների իրականացման գլխավոր երաշխիք: Իշխանություններն սկսեցին նպատակաուղղված քաղաքականություն իրականացնել՝ սպայական կազմին քեմալիզմի ոգով դաստիարակելու ուղղությամբ: Թուրքական բանակի սպայական կազմի դաստիարակության գործընթացում առանցքային նշանակություն ստացան քեմալիզմի սկզբունքները: Անսահման սեր և հարգանք էր սերմանվում Աթաթյուրքի և նրա գաղափարախոսության հանդեպ: Այս գործընթացների մեջ լայնորեն ներգրավված էին ինչպես պետության քարոզչական մարմինները (մամուլ, գրականություն և այլն), այնպես էլ քաղաքական գործիչները: Օրինակ՝ Հանրապետական-ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) գլխավոր քարտուղար Ռ. Փեքերը 1935-1942 թթ.

<sup>12</sup> Harris G. S., The Role of the Military in Turkish Politics, The Middle East Journal, Vol. 19, No. 1, Winter 1965, pp. 56-60.

<sup>13</sup> Նույն տեղում:

երկրի ռազմական բարձրագույն հաստատություններում դասախոսություն էր կարդում «թուրքական հեղափոխության» թեմաներով<sup>14</sup>: Թուրքական իշխանությունների նպատակաուղղված քաղաքականության արդյունքում սպայական անձնակազմը խորապես ընդունեց քեմալիզմի գաղափարախոսությունը: Այն հատկապես խոր արմատներ գցեց երիտասարդ սպաների մեջ, որոնք իրենց համարում էին ոչ միայն քեմալիզմի ակտիվ կրողը, այլև քեմալիզմի գաղափարախոսության առաջամարտիկը<sup>15</sup>: Թուրք հայտնի լրագրող Մեհմեթ Ալի Բիրանը նշում է, որ թուրքական սպայի համար Աթաթյուրքն ամեն ինչ էր<sup>16</sup>:

1930-ական թթ. բանակն ընդհանուր առմամբ չէր խառնվում երկրում տեղի ունեցող քաղաքական գործընթացներին՝ միաժամանակ շարունակելով ամուր հենասյուն հանդիսանալ իշխող ռեժիմի համար: Սակայն արդեն 1940-ական թթ. սպայական կազմը որոշակիորեն սկսեց ներքաշվել քաղաքական գործընթացների մեջ: Դա հատկապես ընդգծվեց, երբ Թուրքիան անցում կատարեց դեպի բազմակուսակցական համակարգ, որի արդյունքում ի հայտ եկան տարբեր քաղաքական ուժեր և գաղափարախոսություններ: Նորահայտ քաղաքական կուսակցություններից ամենաազդեցիկը Դեմոկրատական կուսակցությունն (ԴԿ) էր, որն արդեն 1946 թ. խորհրդարանական ընտրություններում իր ընտրացուցակներում ընդգրկեց 15 բարձրաստիճան սպայի, որոնց թվում էր նաև մարշալ Ֆ. Չաքմաքը<sup>17</sup>:

1946 թ. խորհրդարանական ընտրություններից հետո բանակում սկսեցին կազմավորվել առաջին սպայական խմբավորումները<sup>18</sup>: Արդեն 1940-ական թթ. վերջերին սպայակազմի մի խումբ

<sup>14</sup> Запорожец В., Колесников А., Турция: Общество и армия, том I, Ленинград, 1983, стр. 180.

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Birand M. A., Emret Komutanım, İstanbul, 1986, s. 92.

<sup>17</sup> Запорожец В., Колесников А., бշվ. աշխ., էջ 184.

<sup>18</sup> Հատկանշական է, որ այդ խմբավորումների մեջ էին նաև Ջնդեթ Սունայը (1961-1966 թթ. ՋՈւ Գլխավոր շտաբի պետ, 1966-1973 թթ. հանրապետության

անդամներ՝ գեներալ Ֆ. Բելենի գլխավորությամբ, սկսեցին ռազմական հեղաշրջում նախապատրաստել՝ իշխանությունը ՀՏԿ-ից ԴԿ-ին փոխանցելու նպատակով: ԴԿ ղեկավարների հետ խորհրդակցելուց հետո նրանք որոշեցին սպասել 1950 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքներին<sup>19</sup>: 1950 թ. խորհրդարանական ընտրությունները հաղթանակ բերեցին ԴԿ-ին, որը եկավ փոխարինելու 27 տարի երկրի ղեկն իր ձեռքում պահած ՀՏԿ-ին: Բանակի արձագանքը ԴԿ հաղթանակին միանշանակ չէր. դեմոկրատների կողմնակիցները բավարարված էին ընտրությունների արդյունքներով, վերը նշված Ֆ. Բելենի խմբավորումը դադարեցրեց իր գործունեությունը, սակայն ԴԿ հաղթանակը դժգոհություններ առաջացրեց ՀՏԿ-ին հավատարիմ գեներալների շրջանում, որոնք, հիմնվելով սպայական կազմի որոշակի մասի վրա, պատրաստ էին հեղաշրջում իրականացնել՝ իշխանությունն Աթաթյուրքի հիմնած ՀՏԿ-ին վերադարձնելու նպատակով<sup>20</sup>: Այնուամենայնիվ, ԴԿ-ին հաջողվեց ճնշել բանակում առաջացած դժգոհությունները՝ ստանալով գլխավոր շտաբի պետի աջակցությունը:

ԴԿ իշխանության տարիներին (1950-1960 թթ.) երկրում ակնառու դարձան քաղաքական մրցակիցների դեմ ճնշումները, իսլամական շարժումների ակտիվացումը, որոնք երիտասարդ սպայական կազմի կողմից ընդունվում էին որպես նահանջ քեմալիզմի ուղուց, և առաջացրին նրանց դժգոհությունն իշխանությունների հանդեպ: 1950-ական թթ. կեսերից սպայական մի խումբ երիտասարդ անդամներ ձեռնամուխ եղան ռազմական հեղաշրջում նախապատրաստելուն<sup>21</sup>:

---

նախագահ) և Մեմդուհ Թաղմաչը, ով 1971 թ. մարտի 12-ի ռազմական միջամտության ժամանակ Գլխավոր շտաբի պետն էր, տե՛ս İpekçi A. ve Coşar Ö. S., İhtilalin İcyüzü, İstanbul, 1965, s. 16-19:

<sup>19</sup> Harris G. S., The Role of the Military in Turkish Politics, The Middle East Journal, Vol. 19, No. 1, Winter 1965, pp. 54-66.

<sup>20</sup> Запорожец В., Колесников А., նշվ. աշխ., էջ 186.

<sup>21</sup> Harris G. S., The Causes of the 1960 Revolution in Turkey, The Middle East Journal, Vol. 24, No. 4, Autumn 1970, pp. 438-454.

1960 թ. մայիսի 27-ին Թուրքիայում տեղի ունեցավ առաջին ռազմական հեղաշրջումը: Դրանից հետո երկրի ամբողջ իշխանությունն անցավ նորաստեղծ Ազգային միասնության կոմիտեի (ԱՄԿ, Milli Birlik Komitesi)<sup>22</sup> ձեռքը, որի ղեկավար դարձավ գեներալ Ջեմալ Գյուրսելը: Գործունեության առաջին իսկ ամիսներից լուրջ հակասություններ առաջացան ԱՄԿ անդամների միջև՝ կապված երկիրը ղեկավարելու հետագա ընթացքի հետ: ԱՄԿ-ն ներսում բաժանվեց երկու թևի՝ պահպանողականների և արմատականների: Պահպանողականների խումբը, որի կազմում էին ԱՄԿ անդամ գեներալները՝ Ջ. Գյուրսելի գլխավորությամբ, փորձում էր շուտափույթ ընտրություններ կազմակերպել և իշխանությունը փոխանցել քաղաքական կուսակցություններին: Իսկ ԱՄԿ արմատական թևին հարող անդամները պնդում էին, որ միայն ԴԿ-ին իշխանությունից զրկելով՝ զինվորականության «առաքելությունը» չի ավարտվում, և նրանք պետք է իշխանության ղեկը պահեն իրենց ձեռքում՝ երկրում արմատական բարեփոխումներ իրականացնելու համար: Այդ պայքարում հաղթանակ տարան պահպանողականները, և նոյեմբերի 13-ին արմատականների խմբի բոլոր 14 անդամները հեռացվեցին ԱՄԿ-ից և զինված ուժերից<sup>23</sup>: Արմատականներին իր կազմից հեռացնելով ԱՄԿ-ն որոշեց կազմակերպել ընտրություններ և իշխանությունը փոխանցել քաղաքական կուսակցություններին:

Այսպիսով, ըստ բանակ-հասարակություն փոխհարաբերությունների վերը նշված տեսության «Մայիսի 27-ի» զինվորական հեղաշրջումը, թեև մինչև արմատականներին (14-ի խումբ) ԱՄԿ-ից հեռացնելն ուներ կառավարող հեղաշրջում դառնալու

---

<sup>22</sup> ԱՄԿ-ն բաղկացած էր 38 անդամից (5 գեներալ, 9 գնդապետ, 6 փոխգնդապետ, 11 մայոր, 7 կապիտան), տե՛ս Öztuna Y., Ayvaz Gökdemir, Türkiye’de Askeri Müdahaleler, İstanbul, 1987, s. 50.

<sup>23</sup> Weiker W. F., The Turkish Revolution 1960-1961, Aspects of Military Politics. Washington: Brookings Institution, 1963, pp. 131-136; Seyhan D., Gölgedeki Adam, İstanbul, 1966, s. 117-118.

գրեթե բոլոր նախանշանները, այնուամենայնիվ, կարելի է բնութագրել որպես խնամակալ հեղաշրջում: Զինվորականները երկրի իշխանությունը վերցրին իրենց ձեռքը, ապա որոշ չափով վերացրին հեղաշրջման պատճառները, որից հետո իշխանությունը կրկին վերադարձրին քաղաքական կուսակցություններին:

1960 թ. ռազմական հեղաշրջումը կարելի է բնութագրել նաև որպես նախաձեռնողական հեղաշրջում: Այն չիրականացվեց բանակի ղեկավարության կողմից, ինչպես դա տեղի ունեցավ զինվորականների հետագա «միջամտությունների» (1971 թ. - 1997 թ.) և հեղաշրջման (1980 թ.) ժամանակ: «Մայիսի 27-ը» կազմակերպեցին և իրականացրին գլխավորապես միջին աստիճանակարգ ունեցող և հիմնականում քեմալիզմի սկզբունքներին անսահման նվիրված սպայական կազմի անդամները (Թ. Այդեմիր, Դ. Սեյհան, Օ. Էրքանլը, Ֆ. Գյուլենթյուրք, Ա. Թյուրքեշ, Ս. Քոչաս, Ն. Էսին, Ս. Քարաման և այլն): Հեղաշրջման նախաձեռնողները, իրենց գործողություններին «օրինականություն» հաղորդելու նպատակով միայն, փորձեցին հեղաշրջման իրականացման գործընթացի մեջ ներգրավել բանակի վերնախավի որոշ անդամներ<sup>24</sup>: Քանի որ հեղաշրջումն իրականացրին հիմնականում միջին աստիճանակարգ ունեցող սպաները, ուստի բանակում խախտվեց աստիճանակարգային կարգապահությունը, ինչը քննադատում է «նախաձեռնողական գործողությունները» և պարտադրում գործել «հրամանի սկզբունքով», որն էլ իր հերթին ենթադրում է անքննարկելի ենթակայություն առավել բարձր աստիճան ունեցող սպաների հրամանին, եթե նույնիսկ հրամանի ճիշտ լինելը կասկած է հարուցում:

<sup>24</sup> Հեղաշրջման կազմակերպիչներին 1950-ական թթ. վերջերին հաջողվեց այդ գործընթացների մեջ ներքաշել ցամաքային զորքերի հրամանատար Ջ. Գյուրսելին, որը, սակայն, 1960 թ. մայիսի սկզբին պաշտոնակալ արվեց: Մյուս գեներալը, որը մասնակցում էր հեղաշրջման նախապատրաստմանը, Գլխավոր շտաբի թիկունքի պետ Ջ. Մադանոլլուն էր: Պետք է նշել, որ Մադանոլլուի և Գյուրսելի մասնակցությունը հեղաշրջմանը տեղի ունեցավ վերջնական փուլում, երբ հեղաշրջումն արդեն անխուսափելի էր: St u Koças S., Atatürkten 12 Marta, Anılar, Cilt 1., İstanbul, 1977, s. 401-407, 15-18:

1960 թ. ռազմական հեղաշրջումից հետո զինվորական վերախավը վերստին ձեռնամուխ եղավ բանակում աստիճանակարգության կարգապահության հաստատման գործընթացին: Դրանով բարձրաստիճան զինվորականությունը փորձում էր բացառել ցածր աստիճանակարգային սպայության կողմից կազմակերպվող հեղաշրջումները՝ «նախաձեռնողական հեղաշրջումները», որն, ըստ էության, սպառնում էր նաև իրենց իշխանությանը: Աստիճանակարգության կարգապահությունը վերականգնելու գործընթացում կարևոր դերակատարում ունեցավ Զինված ուժերի միությունը (ԶՈւՄ - Silahlı Kuvvetler Birliği):

1960 թ. հեղաշրջումից հետո բանակը չափազանց քաղաքականացված էր, զորամասերը քաղաքական ակումբներ էին հիշեցնում, որտեղ զինվորականները քննարկում էին այս կամ այն քաղաքական ուղղության առավելություններն ու թերությունները: Այդ կապակցությամբ Շ. Այդեմիրը նշում է, որ զորամասերը վերածվել էին քաղաքական կենտրոնների, որտեղ տեղի էին ունենում ցույցեր և բանավեճեր<sup>25</sup>: Բանակում մեծ հիասթափություն էր առաջացրել ԱՄԿ գործունեությունը, որը հատկապես ընդգծվեց «նոյեմբերի 13-ի» (արմատականների հեռացումից) հետո: Մինչև արմատականներին իր կազմից հեռացնելը ԱՄԿ-ն իրոք ղեկավար մարմին էր, և բանակը նրանից իրական գործողություններ էր սպասում: Սակայն «նոյեմբերի 13-ից» հետո բանակում սկսեցին ակնհայտ ընդգծվել քաղաքական տարբեր հոսանքներ<sup>26</sup>: Այս իրողություններում բանակում ծնվեց նոր քաղաքական միավոր՝ Զինված ուժերի միությունը: ԶՈւՄ կանոնադրության առանցքային կետերից էր հրամանով գործելու անհրաժեշտությունը: ԶՈւՄ-ը սրընթաց կերպով տարածվեց բանակում և ձեռնամուխ եղավ աստիճանակարգության վերականգնման և երիտասարդ սպայական կազմի մեջ «նախաձեռնողական գոր-

<sup>25</sup> Aydemir Ş., İkinci Adam, Cilt 3., İstanbul, 1975, s. 570.

<sup>26</sup> Данилов В., Политическая борьба в Турции: 50-е - начало 80-х годов XX в. (политические партии и армия). Москва, 1985, с. 78.

ծողությունները» բացառելու գործին: Կարող ենք ասել, որ ԶՈւՄ-ը մեծապես նպաստեց բանակի աստիճանակարգության կարգապահության վերականգնմանը<sup>27</sup>:

Թուրքական բանակում աստիճանակարգության վերականգնման գործում նշանակալի դերակատարում ունեցավ նաև Բանակի փոխօգնության կազմակերպությունը՝ Ordu Yardımlaşma Kurulu (OYAK): Հարկ է նշել, որ 1960 թ. ռազմական հեղաշրջմանը խթանող պատճառներից մեկը զինվորականության նյութական անապահովությունն էր, ուստի OYAK-ը ստեղծվեց (1961 թ.) սպայական կազմի սոցիալական դրությունը բարելավելու նպատակով<sup>28</sup>: OYAK ֆոնդը սկզբնական շրջանում ձևավորվում էր անդամավճարներից, սակայն հետագայում, ընդլայնելով իր տնտեսական գործունեության սահմանները, այն վերածվեց խոշոր ձեռնարկատիրական ընկերության<sup>29</sup>: OYAK հիմնադրմամբ նյութական շահերն էլ ավելի համախմբեցին սպայությանը՝ վերացնելով բարձրաստիճան և միջին սպայության միջև 1960 թվականից տիրող լարվածությունը<sup>30</sup>:

Բանակի վերնախավը, փորձելով ցածր աստիճանակարգ ունեցող սպայական կազմին հեռու պահել քաղաքականությունից, իր համար էր ճանապարհ բացում դեպի մեծ քաղաքականություն՝ 1960 թ. սկզբներից ակտիվորեն մասնակցելով երկրի քաղաքական անցուղարձին: Այդ գործընթացին մեծապես նպաստեց 1961 թ. սահմանադրության 111-րդ հոդվածով ստեղծված Ազգային անվտանգության խորհուրդը (ԱԱԽ)<sup>31</sup>, որն իր կազմի

<sup>27</sup> Akyaz D., Askeri Müdahalelerin Orduya Etkisi, Hiyerarşi Dışı Örgütlenmeden Emir Komuta Zincirine, İstanbul, 2002, s. 160-165.

<sup>28</sup> Ավագյան Ա., Բանակի դերը Թուրքիայի տնտեսական համակարգում, Հայկական բանակ, 4 (50), Երևան, 2006, էջ 71:

<sup>29</sup> OYAK-ի մասին առավել մանրամասն տե՛ս Parla T., Türkiye'de Merkantilizm Militarizm 1960-1998. - Bir Parti, Türkiye'de Ordu, İstanbul, 2004, s. 201-224; Akça İ., Kolektif Bir Sermayedar Olarak Türk Silahlı Kuvvetleri. - Bir Parti, Türkiye'de Ordu, İstanbul, 2004, s. 225-270:

<sup>30</sup> Ավագյան Ա, նշվ. հոդ., էջ 71:

<sup>31</sup> T. C. Gerekçeli Anayasa, İstanbul, 1968, s. 105.

մեջ ընդգրկում էր հանրապետության նախագահին, վարչապետին, կառավարության որոշ անդամների և ԶՈւ հրամանատարությանը: ԱԱԽ-ն իր գործունեության առաջին տարիներին ոչ մի դերակատարում չէր ունենում երկրի ներքաղաքական կյանքում, սակայն արդեն 1960-ական թթ. վերջերին այն դարձել էր մարմին, որտեղ որոշվում էին երկրի բոլոր կարևորագույն խնդիրներն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության բնագավառում<sup>32</sup>: 1970 թ. թուրքական «Միլիյեթ» թերթը գրում էր, որ Թուրքիայի սահմանադրության 111-րդ հոդվածով օրինականացվեց թուրքական զինված ուժերի մասնակցությունը երկրի քաղաքական կյանքին<sup>33</sup>: ԱԱԽ-ի միջոցով, փաստորեն, Թուրքիայի բարձրաստիճան զինվորականությունն ուղղակիորեն սկսեց մասնակցություն ունենալ երկրի համար կարևորագույն խնդիրների քննարկմանը, ինչը խթանեց բանակի ղեկավարության քաղաքականացմանը:

Այդպիսով, «Մայիսի 27-ի» հեղաշրջումը և դրան հետևած իրադարձությունները մեծապես նպաստեցին բանակի քաղաքականացման գործընթացին: Արդեն 1960-ական թթ. սկսած՝ բանակը դարձավ քաղաքական պայքարի հավասարազոր մասնակից, ժամանակ առ ժամանակ դուրս գալով առաջին պլան, իր ձեռքը վերցնելով իշխանությունը<sup>34</sup>:

1971 թ. մարտի 12-ին թուրքական բանակը միջամտեց երկրի քաղաքական անցուղարձին, որը պատմության մեջ մտավ «հուշագրային հեղաշրջում» անվանմամբ: Թուրքիայի ԶՈւ հրամանատարությունը հանրապետության նախագահ Ջևդեթ Սունալին ներկայացրեց հուշագիր, որով պահանջվում էր կառավարության հրաժարականը՝ սպառնալով հակառակ դեպքում իր ձեռքը վերցնել երկրի իշխանությունը: Նույն օրը Սուլեյման Դեմիրելի ղեկավարած կառավարությունը հրաժարական տվեց և

<sup>32</sup> Запорожец В., Колесников А., նշվ. աշխ., էջ 242-243:

<sup>33</sup> Milliyet, 30, 08, 1970.

<sup>34</sup> Данилов В., Турция 80-х: от военного режима до "ограниченной демократии", Москва, 1991, стр. 8.

դադարեցրեց գործունեությունը: «Մարտի 12-ի» կազմակերպիչների առաջնային նպատակն էր՝ կանխել ցածր զինվորական աստիճան ունեցող սպաների կողմից նախապատրաստվող ելակաձեռնողական ռազմական հեղաշրջումը<sup>35</sup>:

Նշենք, որ արդեն 1960-ական թթ. վերջերին երկրում սկսել էր գործել գաղտնի կազմակերպություն, որը ռազմական հեղաշրջում էր նախապատրաստում: Այդ կազմակերպության մեջ բաշակի անցած սպաների (1960 թ. հեղաշրջման կազմակերպիչներ Օ. Քյոքսալ, Ն. Քաչար, Ջ. Մադանօղլու) և բանակի արմատական տրամադրված սպայակազմի անդամների (գնդապետ Ա. Քաֆթան) հետ միասին գործում էին նաև ձախ քաղաքական ուղղվածություն ունեցող քաղաքացիական գործիչներ (Դ. Ավջողլու): Կազմակերպության գործունեությունը ղեկավարում էր Ջ. Մադանօղլուն<sup>36</sup>: 1971 թ. սկզբին կազմակերպությունը զգալի ուժ է ունեւորսներ ուներ հեղաշրջում իրականացնելու համար, սակայն զինվորական ղեկավարությանը հայտնի դարձան այդ կառույցի ծրագրերը, և բանակի վերնախավը «Մարտի 12-ի միջամտության» միոցով կարողացավ խոչընդոտել նրանց ծրագրերին: «Մարտի 12-ի միջամտությունից» անմիջապես հետո բանակից հեռացվեցին մեծ թվով սպաներ, սպայական կազմում բազմաթիվ տեղափոխություններ կատարվեցին:

Փաստենք, որ եթե 1960 թ. մայիսի 27-ի հեղաշրջումը կազմակերպված էր հիմնականում արմատականների կողմից, ապա «Մարտի 12-ի միջամտությունը» գլխավորապես ուղղված էր նրանց դեմ: 1971 թ. հեղաշրջում նախապատրաստելը, փաստո-

<sup>35</sup> Karabelias G., The Evolution of Civil-Military Relation of Post-war Turkey 1980-95, Middle Eastern Studies: Oct. 1999, 35, p. 133.

<sup>36</sup> Հատկանշական է, որ արմատական հեղաշրջում նախապատրաստող այդ կազմակերպությունը գլխավորում էր Ջ. Մադանօղլուն, որը 1960 թ. հեղաշրջումից հետո ԱՄԿ-ի աջ պահպանողականների ղեկավարներից էր և ջանք չէր խնայում ԱՄԿ-ի արմատականներին հեռու պահել քաղաքականությունից: Stü u Akyaz D., Askeri Müdahalelerin Orduya Etkisi, Hiyerarşi Dışı Örgütlenmeden Emir Komuta Zincirine, İstanbul, 2002, s. 272-290.

ուն արմատականների վերջին փորձն էր՝ ավարտին հասցնել իրենց գործը՝ սկսված «մայիսի 27-ին»: Թուրքիայի արմատական սպաները, ի տարբերություն արևելյան որոշ երկրների, պատել նմանօրինակ շարժումները հաջողության հասան, չկառուցացան համախմբվել և ուժերի ճիշտ վերադասավորում անել: Թե՛ որ կապիտալը, բանակի ղեկավարությունը և կուսակցությունները կարողացան լուրջ դիմադրություն ցուցաբերել և հաղթանակած դուրս գալ այդ պայքարից<sup>37</sup>:

«Մարտի 12-ի» զինվորականների միջամտությունը, ըստ է. Լորդլինգերի բանակ-հասարակություն փոխհարաբերությունների տեսության, կարելի է բնութագրել որպես կարգավորող միջամտություն: Բանակն իշխանությունը չվերցրեց իր ձեռքը. 1971-73 թթ. ընկած ժամանակահատվածում շարունակում էին գործել խորհրդարանը և քաղաքացիական կառավարությունը, սակայն երկրի ամբողջ իշխանությունը գտնվում էր բանակի ղեկողության ներքո: «Մարտի 12-ի» անցումային շրջանում (1971-73 թթ.) բարձրաստիճան զինվորականության անմիջական հսկողությամբ տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների ժամանակ փոփոխության ենթարկվեց նաև Ազգային անվտանգության խորհրդի մասին դրույթը. ավելացվեցին ԱԱԽ լիազորությունները, որոնք նպատակաուղղված էին ուժեղացնել բանակի վերահսկողական լծակները երկրի քաղաքական կյանքի վրա<sup>38</sup>:

«Մարտի 12-ի վարչակարգի» ժամանակաշրջանն ավարտվեց 1973 թ. հոկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրություններով, որին հաջորդած մի քանի տարիների ընթացքում զինվորականությունը գտնվում էր երկրորդ պլանում և ընդհանուր առմամբ չէր խառնվում երկրի քաղաքական անցուղարձին: Դա պայմանավորված էր հիմնականում երկու հանգամանքով:

<sup>37</sup> Данилов В., Политическая борьба в Турции: 50-е - начало 80-х годов XX в. (политические партии и армия). Москва, 1985, стр. 164.

<sup>38</sup> Bayramoğlu A., Asker ve Siyaset. - Bir Zümre, Bir Parti. Türkiye'de Ordu, İstanbul, 2004, s. 79-80.



Նախ՝ «Մարտի 12-ի վարչակարգը» մեծապես վարկաբեկել էր զինվորականությանը, քանի որ թե՛ նրանց «միջամտությունը» քաղաքական կյանքին և թե՛ դրան հաջորդած պատժամիջոցների գանգվածային ալիքը ձախակողմյան շարժումների նկատմամբ հիմնավորված չէին: Արդյունքում՝ զինվորականությունը մեծապես վարկաբեկվել էր, նվազել էին նրա ուժն ու ազդեցությունը երկրի քաղաքական կյանքում<sup>39</sup>, ինչն էլ արտահայտվեց 1973 թ. մարտին կայացած նախագահական ընտրությունների ժամանակ<sup>40</sup>: 1973 թ. սկզբին Գլխավոր շտաբի (ԳՇ) պետ Ֆարուք Գյուրլերը հրաժարական տվեց և իր թեկնածությունն առաջադրեց նախագահական ընտրություններում: Սակայն երկրի 2 խոշորագույն կուսակցությունները (Արդարություն կուսակցությունը՝ ԱԿ և Հանրապետական-ժողովրդական կուսակցությունը՝ ՀԺԿ) հրաժարվեցին պաշտպանել Գյուրլերի թեկնածությունը, և վերջինիս այդպես էլ չհաջողվեց ԹԱՄԺ-ում հավաքել ձայների անհրաժեշտ քանակ՝ նախագահ ընտրվելու համար<sup>41</sup>: Ֆ. Գյուրլերի նախագահ չընտրվելը փաստում է, որ տվյալ ժամանակահատվածում զինվորականության ազդեցությունը քաղաքական դաշտում թույլ էր, և այդ իրավիճակում բանակը լուրջ ազդեցություն չէր կարող ունենալ 1973 թ. հոկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրությունների վրա: Երկրորդ հանգամանքը կապված էր ԳՇ պետ Սեմիի Սանջարի գործոնի հետ: Դեռ 1973 թ., երբ Ֆ. Գյուրլերը հրաժարական տվեց այդ պաշտոնից, նոր ԳՇ պետ ընտրվելու անհրաժեշտություն ծագեց: Գյուրլե-

<sup>39</sup> Demirel T., *Lessons of Military Regimes and Democracy: The Turkish case in a Comparative Perspective.* - *Armed Forces & Society*, Vol. 31, No. 2, Winter 2005, p. 250.

<sup>40</sup> Batur M., *Anılar ve Görüşler*, İstanbul, 1985, s. 458.

<sup>41</sup> Նախագահական ընտրությունների 15-րդ տուրում հանրապետության նախագահ ընտրվեց ծովակալ Ֆահրի Քորուքտոքը: 1973 թ. նախագահական ընտրությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Данилов В., *Армия и политика в современной Турции.* - *Турция: история. экономика*, Москва, 1978, стр. 21-24; Batur M., նշվ. աշխ., էջ 413-416:

րը ԳՇ պետի երկու գլխավոր թեկնածուների միջև՝ Մուհսին Ֆաթուր և Սեմիի Սանջար, ընտրություն կատարեց հոգուտ երկրորդի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սանջարը ջերմ հարաբերություններ ուներ ԱԿ ղեկավարության հետ: Այդ քայլով Գյուրլերը փորձեց շահել ԱԿ ղեկավարների վստահությունը և ստանալ վերջիններիս աջակցությունը նախագահական ընտրությունների ժամանակ: Սակայն ԱԿ ղեկավար Ս. Դեմիրելը, ռենենալով ամուր հենասյուն ի դեմս Սանջարի, հրաժարվեց պաշտպանել Ֆ. Գյուրլերի թեկնածությունը: Սեմիի Սանջարն իր պաշտոնավարման ժամանակահատվածում (1973-1978 թթ.) լայլ դիրքորոշում ուներ քաղաքացիական իշխանությունների նկատմամբ ընդհանրապես և Դեմիրելի ղեկավարած Ազգայնական ճակատ կռախիցիոն կառավարության (1975-1978 թթ.) նկատմամբ՝ մասնավորապես: Հետևաբար, Սեմիի Սանջարը փորձում էր բանակը հեռու պահել քաղաքական գործընթացներից ուղղակի միջամտելուց: Պատահական չէ, որ 1980 թ. ռազմական հեղաշրջման նախապատրաստման գործընթացները սկսվեցին միայն Սեմիի Սանջարի պաշտոնաթողությունից հետո՝ 1978 թ.:

1977 թ. հունիսի սկզբին պանթյուրքիստական ուժերի հետ միասին ռազմական հեղաշրջում նախապատրաստելու մեղադրանքով բանակից հեռացվեցին ցամաքային զորքերի հրամանատար, բանակի գեներալ Նամըք Քեմալ Էրսունը<sup>42</sup> և մոտ 200 աջ ուղղվածության սպա: Ցամաքային զորքերի հրամանատարի պաշտոնի համար երեք գլխավոր թեկնածու կար՝ առաջին բանակի հրամանատար, բանակի գեներալ Ադնան Էրսոյզը, երկրորդ բանակի հրամանատար, բանակի գեներալ Շյուքրյու Օլջայը և երրորդ բանակի հրամանատար, բանակի գեներալ Ալի Ֆեթիի Էսեները<sup>43</sup>: Ցամաքային զորքերի հրամանատարի թափուր պաշտոնը հատկապես կարևորվում էր այն պատճառով,

<sup>42</sup> Alatlı E., *Müdahale 12 Mart 1971-12 Eylül 1980*, İstanbul, 2004, s. 184-185.

<sup>43</sup> Kenan Evren'in Anıları, Cilt 1, İstanbul, 1990, s. 178.

որ 1976 թ. մարտին լրացել էր ԳՇ պետ Սեմիհ Սանջարի պաշտոնավարման ժամկետը (ԳՇ պետը նշանակվում էր 3 տարի ժամկետով), և այն ամեն տարի մարտի 6-ին երկարացվում էր կառավարության կողմից (կառավարությունն իրավունք ուներ երեք անգամ, մեկ տարի ժամկետով երկարացնելու ԳՇ պետի պաշտոնավարման ժամկետը)<sup>44</sup>, և նոր ցամաքային զորքերի հրամանատարը դիտվում էր որպես հաջորդ Գլխավոր շտաբի պետի հիմնական թեկնածու: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ 1980 թ. ապրիլին ավարտվում էր նախագահ Ֆահրի Քորոթյուրքի պաշտոնավարման ժամկետը, նոր ԳՇ պետը հաջորդ նախագահի ամենահավանական փոխարինողն էր լինելու: Այդ պայքարում վարչապետ Սուլեյման Դեմիրելի նախընտրած թեկնածուն Ալի Ֆեթհի Հսեներն էր<sup>45</sup>, և ԳՇ պետ Սեմիհ Սանջարն առաջարկեց Հսեների թեկնածությունը, սակայն այդ քայլը թե՛ բանակի ներսում և թե՛ նախագահական նստավայրում որոշակի դժգոհություն առաջացրեց: Դժգոհությունների հիմնական պատճառն այն էր, որ Հսեների նշանակումը խախտում էր աստիճանակարգության կարգապահությունը, քանի որ երեք թեկնածուներից ըստ աստիճանակարգի ավելի բարձր էր Ադնան Էրսոյոզի պաշտոնը, երկրորդը Շյուքրյու Օլջայն էր և հետո նոր Հսեներն էր: Նման պայմաններում նախագահ Քորոթյուրքը հրաժարվեց Հսեներին նշանակել այդ պաշտոնում՝ բերելով հետևյալ պատճառաբանությունը. «բանակում աստիճանակարգության կարգ կա, և ես չեմ խախտի այն»<sup>46</sup>: Կառավարության ղեկավար Ս. Դեմիրելն իր հերթին կտրականապես դեմ էր Ադնան Էրսոյոզի թեկնածությանը, քանի որ վերջինս հայտնի էր ՀԺԿ-ի նկատմամբ իր համակրանքով<sup>47</sup>: Հարկ է նշել, որ այս

<sup>44</sup> Birand M. A., 12 Eylül Saat: 04:00, İstanbul, 1984, s. 60.

<sup>45</sup> Ալի Ֆեթհի Հսեները 1983 թ. ստեղծված «Մեծ Թուրքիա» կուսակցության նախագահն էր, որի գործունեությունը զինվորականներն արգելեցին՝ պատճառաբանելով, որ այն ղեկավարվում էր Ս. Դեմիրելի կողմից:

<sup>46</sup> Kenan Evren, նշվ. աշխ., էջ 178.

<sup>47</sup> Birand M. A., նշվ. աշխ., էջ 47.

փուլում ոչ մի կերպ չէր քննարկվում էգեյան բանակի հրամանատար Քենան Էվրենի թեկնածությունը, սակայն իրադրությունը կտրուկ փոխվեց օգոստոսի 30-ին: Այդ օրը լրացավ երեք գլխավոր թեկնածուների (Էրսոյոզի, Օլջայի, Հսեների) պաշտոնավարման ժամկետը, և երեքն էլ զորացրվեցին: Ցամաքային զորքերի հրամանատարի պաշտոնի համար, ըստ աստիճանակարգի, ամենահարմար թեկնածուն դարձավ էգեյան բանակի հրամանատար, բանակի գեներալ Քենան Էվրենը<sup>48</sup>, որն էլ օգոստոսի 31-ին նշանակվեց այդ պաշտոնում<sup>49</sup>:

1978 թ. վարչապետ Բ. Էջնիթը հրաժարվեց ևս մեկ տարով երկարացնել ԳՇ պետ Ս. Սանջարի պաշտոնավարման ժամկետը, և Թուրքիայի ԳՇ պետ նշանակեց ցամաքային զորքերի հրամանատար, բանակի գեներալ Քենան Էվրենին<sup>50</sup>, որն իր հերթին նոր նշանակումներ կատարեց բանակում՝ ամրապնդելով իր դիրքերը: Ցամաքային զորքերի հրամանատար նշանակվեց Լուրեթթին Էրսինը, ռազմաօդային զորքերի հրամանատար՝ Թահսին Շահինքայան, ժանդարմերիայի հրամանատար՝ Սեդաթ Ջելասունը: ԳՇ պետի տեղակալ (այդ պաշտոնի կարևորությունն ընդգծելու նպատակով Թուրքիայում այն անվանում են ԳՇ 2-րդ պետ) նշանակվեց Հայդար Սալթըքը<sup>51</sup>: Առաջին բանակի (Ստամբուլի) հրամանատար նշանակվեց բանակի գեներալ Նեջդեթ Ուրյուղը: Այդպիսով, 1978 թ. ձևավորվեց այն հիմնական ուժը, որը կազմակերպելու էր 1980 թ. ռազմական հե-

<sup>48</sup> Քենան Էվրենը ծնվել է 1918 թ. Ալշեհիր գավառում, 1949 թ. ավարտել է Ստամբուլի ռազմական ակադեմիան և ծառայության անցել թուրքական բանակում: Մինչև ցամաքային զորքերի հրամանատարի պաշտոնում նշանակվելը թուրքական բանակում բարձր պաշտոններ է զբաղեցրել՝ ցամաքային զորքերի շտաբի պետ, ԳՇ 2-րդ պետ, էգեյան բանակի հրամանատար: Ք. Էվրենի կենսագրական մանրամասնությունները տե՛ս թուրքական ՋՈՒ պաշտոնական կայքէջում, [http://www.tsk.mil.tr/genel\\_konular/gnkurbas/kenanevren.htm](http://www.tsk.mil.tr/genel_konular/gnkurbas/kenanevren.htm)

<sup>49</sup> Kenan Evren, նշվ. աշխ., էջ 178-180.

<sup>50</sup> Alati E., նշվ. աշխ., էջ 261.

<sup>51</sup> Birand M. A., նշվ. աշխ., էջ 61-61.

ղաշրջումը: Արդեն 1978 թվականից բանակի վերնախավն սկսեց քննարկել քաղաքական կյանքին միջամտելու անհրաժեշտությունը:

1970-ական թթ. Թուրքիայում ընդգծվեցին սոցիալ-տնտեսական և քաղաքական լուրջ դժվարություններ, որոնք շուտով վերաճեցին խորությամբ նախադեպը չունեցող տնտեսական և քաղաքական ճգնաժամի<sup>52</sup>: 1970-ական թթ. վերջերին երկիրը բաժանվել էր երկու բևեռի՝ աջերի և ձախերի: Ահաբեկչությունն աննախադեպ ծավալներ էր ընդունել, որի հետևանքով օրական մոտ 20 մարդ էր սպանվում: Հաճախակի էին դարձել նաև բախումները կրոնական սուննի և ալևի համայնքների միջև: Թուրքիայում առկա էին հասունացող քաղաքացիական պատերազմին բնորոշ մի շարք նախանշաններ, սակայն իրար անընդհատ փոխարինող էջևիթի և Դեմիրելի կառավարություններն էական փոփոխություն չէին մտցնում երկրի ներքաղաքական կյանքում: Թուրքիայում օրըստօրե խորանում էին ճգնաժամային երևույթները՝ ահաբեկչությունը, սոցիալ-տնտեսական դժվարությունները, բևեռացումը հասարակության միջև, իսկ երկրի քաղաքական ուժերն զբաղված էին ներքաղաքական պայքարով և վճռական քայլեր չէին ձեռնարկում երկրում շրջադարձային փոփոխություններ իրականացնելու համար: Այդ իրավիճակում զինվորական վերնախավն սկսեց նոր ռազմական միջամտություն նախապատրաստելու կոնկրետ քայլեր անել<sup>53</sup>:

1979 թ. դեկտեմբերի 27-ին Գլխավոր շտաբի պետ Քենան Էվրենը նախագահ Ֆահրի Քորոթյուրքին հանձնեց նախազգուշացնող նամակ, որով զինվորականությունն իր մտահոգությունն էր հայտնում երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ և կոչ անում իշխանություններին կատարել իրենց պարտականությունները<sup>54</sup>:

Հաջորդ մի քանի օրերի ընթացքում Ք. Էվրենը, նախագահ Քորոթյուրքի միջնորդությամբ, հանդիպեց քաղաքական կուսակցությունների ղեկավարների հետ և հայտնեց զինվորականության մտահոգությունը երկրում տիրող քաղաքական և տնտեսական անկայունության վերաբերյալ՝ հորդորեցով կտրուկ և կոնկրետ քայլեր ձեռնարկել երկիրը ճգնաժամից դուրս բերելու ուղղությամբ<sup>55</sup>:

1980 թ. բարձրաստիճան զինվորականությունը ևս մի քանի հանդիպումներ ունեցավ քաղաքական կուսակցությունների ղեկավարների հետ: Ջինվորականները փորձում էին քաղաքական համաձայնության դաշտ բերել երկու խոշորագույն կուսակցությունների ղեկավարներին՝ Դեմիրելին և էջևիթին ու նրանց կուսակցությունների դաշինքով կոալիցիոն կառավարություն կազմել՝ երկիրը ճգնաժամային իրավիճակից դուրս բերելու նպատակով: Սակայն այդ երկու կուսակցությունների միջև եղած հակասությունները և անհանդուրժողականության մթնոլորտն ի չիք դարձրին զինվորականների՝ ՇԿԿ և ԱԿ «մեծ կոալիցիա» ստեղծելու և այդպիսով քաղաքական ճգնաժամից դուրս գալու փորձերը<sup>56</sup>:

1980 թ. սեպտեմբերի 12-ին ՋՈւ հրամանատարությունը՝ ԳՇ պետ Քենան Էվրենի ղեկավարությամբ, ռազմական հեղաշրջում իրականացրեց: Բանակ-հասարակություն փոխհարաբերությունների՝ Է. Նորդլինգերի տեսության համաձայն, 1980 թ. ռազմական հեղաշրջումը կարելի է բնութագրել որպես խնամակալ հեղաշրջում. զինվորականներն իրենց ձեռքը վերցրին իշխանությունը՝ հեղաշրջման պատճառները վերացնելու և իշխանությունը կրկին քաղաքական կուսակցություններին փոխանցելու նպատակով:

<sup>52</sup> Моисеев П., Турция: программа экономической стабилизации: 1980 г. Турция—история и современность, сборник статей, Москва, 1988, стр. 211.

<sup>53</sup> Demirel T., The Turkish Military's Decision to Intervene: 12 September 1980. — Armed Forces & Society, Vol. 29, No. 2, 2003, pp. 253-280.

<sup>54</sup> Türk Silahlı Kuvvetleri'nin Görüşü – 27 Aralık 1979 (Uyarı Mektubu) - Alath E., Müdahale 12 Mart 1971-12 Eylül 1980, İstanbul, 2004, s. 456-457.

<sup>55</sup> Kenan Evren, նշվ. աշխ., էջ 332-345.

<sup>56</sup> Դումանյան Ա., Թուրքիայի 1980 թ. ռազմական հեղաշրջման պատճառների շուրջ, Մերձավոր Արևելք, հ. III, Երևան, 2006, էջ 52:

Այսպիսով, արդեն 1960-1970-ական թթ. Թուրքիայում բանակ-հասարակություն փոխհարաբերությունները, ըստ վերը նշված տեսության, կարելի է բնութագրել որպես ներթափանցող մոդել. բանակը Թուրքիայի քաղաքական կյանքում առանցքային նշանակություն ուներ, քաղաքականացված էր, ակտիվորեն մասնակցում էր երկրի քաղաքական անցուղարձին և հանդես էր գալիս որպես երկրի պաշտոնական գաղափարախոսության քենալիզմի հիմնական պաշտպան:

## ARMY'S ROLE IN TURKEY'S POLITICAL LIFE IN 1920-1970 S. OVERALL ESSAY

Arthur Dumanyan

(summary)

In Kemalist Turkey the army was the key power, that stood in the basis of the country's social-economic and political progression. Military's prevalence in Turkey's social-political life has powerful and prolonged tradition, which is related to the Ottoman Empire's sort, creation of the republican Turkey and the process of its establishment. In the first years of the Republic of Turkey's foundation, the military started to play an important role in country's political life.

1960 Թ. ԹՈՒՐԲԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ԱՄՆ-Ի ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր՝ 1960 թ. ռազմական հեղաշրջում, Թուրքիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ադնան Մենդերես, թուրք-ամերիկյան հարաբերություններ

Սառը պատերազմի տարիներին Խորհրդային Միության և Միացյալ Նահանգների հակամարտության հիմնական հարթակը երրորդ աշխարհի երկրներն էին: Այդ լուռ դիմակայության առավել հաճախ կիրառվող գործիքներից մեկը երկկողմ հետաքրքրություն ներկայացնող երկրներում հեղաշրջման կազմակերպումն էր<sup>1</sup>: Հետզհետեային Աֆրիկայում, Ասիայում, Լատինական Ամերիկայում և Մերձավոր Արևելքում տեղի ունեցած հեղաշրջումների մեծամասնությունը միավորվում է նույն տրամաբանությամբ. իշխանության եկած վարչակարգն անմիջապես ճանաչվում էր կա մ ԽՍՀՄ-ի, կա մ ԱՄՆ-ի կողմից<sup>2</sup>:

Թեև վերոգրյալը հիմնականում բնորոշ էր նոր-նոր կայացող պետականություններին, 1960-70-ական թթ. հեղաշրջումներ են տեղի ունեցել նաև Հյուսիսատլանտյան դաշինքի մաս կազմող երկրներում՝ Թուրքիայում (1960 թ.), Հունաստանում (1967 թ.) և Պորտուգալիայում (1974 թ.): Հանդիսանալով ԱՄՆ-ի գլխավորած ռազմական դաշինքի կարևոր օղակ՝ այս երկրները գտնվում էին Վաշինգտոնի քաղաքական ու տնտեսական ազդեցության ծիրում, ուստի բնական է, որ հեղաշրջումների կազմակերպման գործում ամերիկյան հնարավոր դերակատարության

հարցը քննարկման առարկա է դարձել ուսումնասիրող որոշ շրջանակների կողմից<sup>3</sup>:

Թուրքիայում 1960 թ. մայիսի 27-ին տեղի ունեցած հեղաշրջումն, այնուհանդերձ, արժանի է հատուկ ուշադրության՝ հաշվի առնելով այդ երկրում ԱՄՆ-ի ներգրավվածության աստիճանը: Բավական է նշել, որ 1947 թ. Թրումանի դոկտրինի ընդունումից ի վեր Թուրքիային տրամադրվող օգնությունը 1960-ականների սկզբին արդեն գերազանցում էր 3.8 միլիարդ դոլարը (դրա 53 %-ը ռազմական օգնություն)<sup>4</sup>: Բացի դրանից, 1960 թ. դրությամբ Թուրքիայի տարածքում տեղաբաշխված էր 7454 ամերիկացի զինվորական՝ չհաշված զինվորական կոչում կամ պաշտոնական կարգավիճակ չունեցողներին<sup>5</sup>:

Ինչպես Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելուց անմիջապես հետո գրում է Հուրևիցը, այն «մի երկիր է Միջին Արևելքում, որտեղ սառը պատերազմի ընթացքում արևմուտքի հաղթանակը ԽՍՀՄ-ի նկատմամբ կատարյալ էր»<sup>6</sup>: Ուստի առավել քան տարօրինակ է, որ, թեև 1960 թ. թուրքական հեղաշրջումը լրջորեն ուսումնասիրվել է սկսած դեռ 60-70-ականներից<sup>7</sup>, գիտական

<sup>3</sup> Թուրքական հեղաշրջման իրականացման գործում ԱՄՆ-ի դերակատարության մասին տե՛ս, օրինակ, Gunn C., "The 1960 Coup in Turkey: A U.S. Intelligence Failure or a Successful Intervention?", Cold War Studies, vol. 17, no. 2, 2015, pp. 103-139, հունական հեղաշրջման մասին՝ Klarevas L., "Were the Eagle and the Phoenix Birds of a Feather? The United States and the Greek Coup of 1967", Diplomatic History, vol. 30, issue 3, 2006, pp. 471-508, պորտուգալական հեղաշրջման մասին՝ Del Pero M., "Which Chile, Allende? Henry Kissinger and the Portuguese revolution", Cold War History, vol. 11, issue 4, pp. 625-657:

<sup>4</sup> Shorter F., "Military Expenditures and the Allocation of Resources" in Shorter F. (ed.), Four Studies on the Economic Development of Turkey, Frank Cass, 1967, p. 48.

<sup>5</sup> Migdal J., Shifting Sands: The United States in the Middle East, Columbia University Press, 2014, p. 307.

<sup>6</sup> Hurewitz J., Middle East Dilemmas: The Background of US Policy, Harper & Brothers, 1953, p. 206.

<sup>7</sup> Հեղաշրջման պատճառներին անդրադարձած աշխատություններից հատկապես ուշագրավ են Harris G., "The Causes of the 1960 Revolution in Turkey", Middle East Journal, vol. 24, no. 4, 1970, pp. 438-454, Karpat K., "The Military and

\* ԵՂՇ թուրքագիտության ամբիոնի ասպիրանտ:  
<sup>1</sup> 1945-1985 թթ. երրորդ աշխարհի երկրներում իրականացվել է հեղաշրջման 357 փորձ, որից 183-ը պակվել է հաջողությամբ: Տե՛ս Steven D., Third World Coups d'Etat and International Security, Johns Hopkins University Press, 1987, pp. 1-2:  
<sup>2</sup> Luttwak E., Coup d'Etat: A Practical Handbook, Harvard University Press, 1979, p. 174.

ըրջանակներում հիմնականում գերակայում է այն տեսակետը, թե «ԱՄՆ-ի կառավարությունն անգամ չէր կանխատեսել հեղաշրջումը, իսկ այն կազմակերպելու մասին խոսելն անգամ ավելորդ է»<sup>8</sup>:

Հակառակ ավանդական տեսակետին՝ արխիվային փաստաթղթերը վկայում են, որ նախագահ էյզենհաուերի վարչակազմը նվազագույնը քաջատեղյակ է եղել Թուրքիայում 1960 թ. գարնանային դեպքերի նման շրջադարձի հնարավորությանը: Սույն հոդվածն անդրադառնում է «ամենաճշգրիտ, ամենաարդյունավետ ու ամենաարագ»<sup>9</sup> այդ հեղաշրջման նկատմամբ պաշտոնական Վաշինգտոնի դիրքորոշմանը՝ սկսած դրա նախանշաններից մինչև զինվորական վարչակարգի հետ համագործակցություն:

\*\*\*

Հանրապետական Թուրքիայի պատմության առաջին ռազմական հեղաշրջման հաջորդ օրը՝ 1960 թ. մայիսի 28-ին ամերիկյան «Նյու Յորք Թայմս» օրաթերթն անդրադարձել էր տեղի

*Politics in Turkey, 1960-64: A Socio-Cultural Analysis of a Revolution*, The American Historical Review, vol. 75, no. 6, 1970, pp. 1654-1683, Lerner D., Robinson R., "Swords and Ploughshares: The Turkish Army as a Modernizing Force", World Politics, vol. 13, no. 1, 1960, pp. 19-44, Ahmad F., *The Turkish Experiment in Democracy*, Westview Press, 1977, pp. 147-176, Hale W., *Turkish Politics and the Military*, Routledge, 1994, pp. 88-118, Aydemir S., *İhtilâlin Mantığı ve 27 Mayıs İhtilâli*, İstanbul, 1976, Başgil A., *27 Mayıs İhtilali ve Sebepleri: Görüp Yaşadıklarım*, İstanbul, 2011, Данилов В., Базиянц А., *Причины государственного переворота 1960 г.*, Проблемы современной Турции, Москва, 1963:

<sup>8</sup> Hale W., *Turkish Foreign Policy Since 1774*, Routledge, 2013, p. 102.

<sup>9</sup> Հեղաշրջման հաջորդ օրը՝ մայիսի 28-ին Ազգային միասնության կոմիտեի ղեկավար Ջեմալ Գյուրսելի հետ հանդիպման ժամանակ տեղի ունեցածին նման բնորոշում էր տվել Թուրքիայում ԱՄՆ դեսպան Ֆլեթչեր Ուորենը: See LaFantasie G. (ed.), *Foreign relations of the United States, 1958-1960. Eastern Europe; Finland; Greece; Turkey*, vol. X, part 2, U.S. Government Printing Office, 1958-1960, pp. 845-848 (այսուհետ տեքստում՝ FRUS):

ունեցածին՝ հոդվածը վերնագրելով «Թուրքական հեղաշրջումն անակնկալի է բերում Միացյալ Նահանգներին»<sup>10</sup>: Ամերիկյան հասարակության այս մտայնությունը հաստատվում է նաև հեղաշրջման օրը պետքարտուղարության կողմից մամուլի համար արված հայտարարությամբ, թե տեղի ունեցածը «լիակատար անակնկալ» էր Վաշինգտոնի համար<sup>11</sup>:

Թուրք ուսումնասիրող Ջիհաթ Գյոքթեփեն կարծիք է հայտնում, որ ամերիկյան արտաքին քաղաքական գերատեսչության նման արձագանքը մեծամասամբ բացատրվում է Անկարայում ԱՄՆ-ի դեսպան Ֆլեթչեր Ուորենի գործոնով<sup>12</sup>: Վերջինս, պայմանավորված Թուրքիայի վարչապետ Ադնան Մենդերեսի հետ անձնական մտերմությամբ, հաճախ Վաշինգտոն էր ուղարկում թուրքական ներքին զարգացումների վերաբերյալ սուբյեկտիվ, մասամբ ոչ ճշգրիտ տեղեկատվություն: Մասնավորապես, հեղաշրջումից մի քանի օր առաջ՝ մայիսի 23-ին պետքարտուղարություն ուղարկված 2673 թվակիր հեռագրում Ուորենը տեղեկացնում էր, որ ինքն ամենօրյա կապի մեջ է թուրքական ԳՇ պետի<sup>13</sup> հետ՝ հավաստիացնելով, որ բանակը շարունակելու է ապաքաղաքական մնալ և աջակցել Մենդերեսի կառավարությանը<sup>14</sup>: Համեմատության համար՝ Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպան Բեռնարդ Բարոուզը մայիսի 19-ին Լոնդոն ուղարկած հեռագրում տեղեկացնում էր, որ բանակում խժոժությունները շարունակվում են՝ հավելելով, որ երկրում «պտտեն-

<sup>10</sup> The New York Times, 28.05.1960.

<sup>11</sup> Weiker W., *The Turkish Revolution 1960-1961: Aspects of Military Politics*, Brookings Institution, 1963, p. 160.

<sup>12</sup> Göktepe C., *British Foreign Policy towards Turkey, 1959-1965*, Routledge, 2013, p. 66, նույնի *İngiliz Kaynaklarına Göre Türkiye'deki 27 Mayıs Darbesi*, Türkler Ansiklopedisi, c. 17, Ankara, 2002 s. 54:

<sup>13</sup> 1960 թ. ռազմական հեղաշրջման օրերին Թուրքիայի ՋՈՒ ԳՇ պետը բանակի զեներալ Մուսթաֆա Ռյուշթյու էրդեփունն էր:

<sup>14</sup> FRUS, pp. 842-843.

ցիալ հեղափոխական վիճակ» է տիրում<sup>15</sup>։ Թուրք հայտնի լրագրող Մեթին Թոքերը<sup>16</sup> հիշում է, որ Վաշինգտոն ոչ ճշգրիտ տեղեկություններ ուղարկելու պատճառով ԱՄՆ-ի դեսպանը, ով շուրջ 2 մետր հասակ ուներ, Անկարայի վերնախավի շրջանում հայտնի էր իբրև «բարձրահասակ ապուշ»<sup>17</sup>։

Սակայն միամտություն կլինի կարծել, թե ԱՄՆ ղեկավարությունը Թուրքիայի ներքաղաքական վիճակի մասին տեղեկանում էր միայն դեսպանատան հաղորդումներից։ Անկարայում Միացյալ Նահանգների նախկին դեսպան (1952-1953 թթ.) Ջորջ Մըքգին, խոսելով Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու մասին, գրում է. «Այսօր ամերիկյան մոտեցումը նշանակալիորեն փոխվել է։ Թուրքիան իրավամբ համարվում է մեր ամենավստահելի գործընկերներից մեկը, իսկ այս երկրում քիչ ազգեր են նման պատվի արժանացել»<sup>18</sup>։ Բնական է, որ աշխարհաքաղաքական նման կարևորության երկրում դիվանագիտական անձնակազմից բացի ակտիվորեն գործելու էր հատուկ ծառայությունների գործակալական ցանցը։ Հեղաշրջումից 3 օր առաջ մայիսի 24-ին գումարված ԱՄՆ-ի ազգային անվտանգության խորհրդի 445-րդ նիստի արձանագրության մեջ կարդում ենք. «Անդրադառնալով Թուրքիային՝ պն. Դալեսը<sup>19</sup> հաղորդեց, որ կառավարության և ընդդիմության միջև լարվածությունն իրենից շարունակական վտանգ է ներկայացնում։ Ինյոնյուի և վարչապետ Մենդերեսի միջև հակամարտությունն արդեն վերաճել է սահմանադրական ճգնաժամի։ Ուսանողական ցույցերի թիվն

աճել է, և այժմ ոչ ուսանողներն էլ են միանում ապստամբությանը։ Անգամ որոշ զինվորականներ են մասնակցում ցույցերին։ Թուրքական ոստիկանության և զինված ուժերի միջև նշանակալի հակասություններ են դիտվում։ Թուրքական բանակը տրոհված է. ավագ սպայակազմը հակված է հավատարիմ մնալ կառավարությանը, մինչդեռ կրտսեր զինվորականությունը բաժանված է կառավարության և ընդդիմության միջև։ Ակնհայտ է, որ վարչապետ Մենդերեսը չի գիտակցում դժգոհության մասշտաբները։ Պն. Դալեսը վստահ էր, որ Թուրքիայում տիրող վիճակը միայն վատթարանալու է, և անգամ հնարավոր է, որ բանակը վերցնի իշխանությունը [ընդգծումն իմն է, — Ա.Գ.]»<sup>20</sup>։

Թուրքական զարգացումների վրա ամերիկյան հատուկ ծառայությունների ազդեցությունն, ըստ ամենայնի, այնքան նշանակալի է եղել, որ որոշ հեղինակներ հանգել են ծայրահեղական ու գիտական կասկածելի հենք ունեցող եզրակացությունների։ Թուրք ուսումնասիրող Բյուլենթ Գյոքայն, օրինակ, պնդում է, որ թուրքական հատուկ ծառայությունները լիովին վերահսկվել են ԿՀՎ-ի կողմից ու կազմակերպվող հեղաշրջման մասին տեղեկություններն ամերիկյան իշխանություններին հայտնի են եղել անգամ ավելի վաղ, քան Մենդերեսի վարչակազմին հաղորդվելը<sup>21</sup>։ Իսկ շվեցարացի պատմաբան Դանիելե Գասներն իր «ՆԱՏՕ-ի գաղտնի բանակները» աղմկահարույց գրքում կարծիք է հայտնում, որ Ազգային միասնության կոմիտեի անդամ գնդապետ Ալփարսլան Թյուրքեշը<sup>22</sup> ԿՀՎ-ի կոնտակտային անձն էր<sup>23</sup>։

<sup>15</sup> Harris G., *Troubled Alliance: Turkish-American Problems in Historical Perspective, 1945-1971*, American Enterprise for Public Policy Research, 1972, p. 67.

<sup>16</sup> Թոքերը նաև Թուրքիայի երկրորդ նախագահ և վարչապետ Մենդերեսի քաղաքական հակառակորդ Իսմեթ Ինյոնյուի դստեր՝ Օզդենի ամուսինն էր։

<sup>17</sup> Toker M., *Demokrasimizin İsmet Paşa'lı Yılları 1944-1973*, c. 6, *İnönü'nün Son Başbakanlığı*, Ankara, 1992, s. 48.

<sup>18</sup> McGhee G., "Turkey Joins the West", *Foreign Affairs*, vol. 32, no. 4, 1954, p. 617.

<sup>19</sup> Խոսքը ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ, անգլ. CIA) 3-րդ տնօրեն (1953-1961 թթ.) Ալեն Դալեսի մասին է։

<sup>20</sup> *Memorandum of Discussion at the 445th Meeting of the US NSC*, Washington, May 24, 1960, Eisenhower Library, Whitman File, NSC Records, in *FRUS*, p. 843.

<sup>21</sup> Gökay B., *Soviet Eastern Policy and Turkey, 1920-1991: Soviet Foreign Policy, Turkey and Communism*, Routledge, 2006, pp. 86-87.

<sup>22</sup> ԱՄԿ արմատական թևի մյուս անդամների հետ Թյուրքեշը նոր հեղաշրջում պատրաստելու համար 1960թ. նոյեմբերի 13-ին հեռացվել է Ազգային միասնության կոմիտեից ու Թուրքիայի դեսպանատան ռազմական կցորդի կարգավիճակով ուղարկվել Հնդկաստան։ Այս մասին մանրամասն տե՛ս Դанилов В.,

Ամերիկյան հրապարակված արխիվները վկայում են, որ վերոհիշյալ նիստից հետո էլ ԿՀՎ դեկավարը շարունակել է ձեռք պահել թուրքական իրադարձությունների զարկերակին: Հենց հաջորդ օրը՝ մայիսի 25-ին գումարվել է Գործողությունների համակարգման խորհրդի նիստ, որը պետք է Թուրքիայի հարցով գործողությունների ծրագիր հաստատեր<sup>24</sup>: Դրա ընթացքում Դալեսը Անկարայում ԱՄՆ դեսպանատնից պահանջել է իրավիճակի ևս մեկ վերլուծություն՝ հիմնված քաղաքական և տնտեսական կարճաժամկետ և երկարաժամկետ զարգացումների տեսլականի վրա: Ըստ նրա՝ առանձնահատուկ կարևորություն ուներ ճշգրտորեն շոշափել թուրքական բանակի տրամադրությունները:

Անկարայում ԱՄՆ-ի դեսպանատնից ստացված հաջորդ 2743 թվակիր հեռագիրը, սակայն, արդեն տեղեկացնում էր կատարված փաստական իրողության մասին. «Անսովոր լավ կազմակերպված հեղաշրջմամբ Թուրքիայի զինված ուժերը մայիսի 27-ին, ժամը 04:00-ին տապալել են կառավարության իշխանությունը՝ ըստ ամենայնի առանց լուրջ դիմադրության՝ Անկարայում տալով միայն 50 րոպե: Նախագահ Բայարը, ԹԱՄԺ նախագահ Քորալթանը, կառավարության անդամները, ԳՇ պետ Էրդեղիունը ձերբակալված են<sup>25</sup>: Անկարայում, Ստամբուլում, Իզմիրում հանգստություն է տիրում. չկա որևէ կազմակերպված դի-

մադրության նշան: Այս պահին Դեսպանությունը հավատացած է որ ապստամբությունը պայմանավորված է բացառապես ներքին շարժառիթներով. չկա հակաամերիկյան տրամադրությունների որևէ ապացույց: Հակառակը՝ Ռազմական խորհրդի [նկատի ունի Ազգային միասնության կոմիտեն, — Ա.Գ.] անդամներից մեկն այս առավոտյան Դեսպանությանը հավաստիացրել է, որ Թուրքիայի զինված ուժերը բարեկամաբար են տրամադրված ԱՄՆ-ի նկատմամբ և ցանկանում են կատարել Թուրքիայի բռնար միջազգային պարտավորությունները, հատկապես՝ ՆԱՏՕ-ի և ՄԵՆՏՕ-ի մասով<sup>26</sup>: Հասկանալի է, որ նույն պատրաստակամությունը վերահաստատվել է նաև հաջորդ օրը՝ մայիսի 28-ին՝ ԱՄՆ դեսպան Մելիհ Էսենբեյի մակարդակով: Վերջինիս և ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Դուգլաս Դիլոնի հանդիպման ժամանակ ամերիկացի պաշտոնյան տեղեկացրել է, որ «Միացյալ Նահանգները, ինչպես այլ նման դեպքերում, նախընտրում է շարունակել հարաբերություններն իրենց նախկին հունով՝ առանց պաշտոնական հայտարարության»<sup>27</sup>: Թուրքիայի հետհեղափոխական նոր կառավարությունն ԱՄՆ-ի և արևմտյան մյուս դաշնակիցների կողմից դե ֆակտո ճանաչվել է հեղաշրջումից ընդամենը 3 օր անց՝ մայիսի 30-ին<sup>28</sup>: Ամերիկյան քայլերի այս սահունությունը ցույց է տալիս, որ թուրքական զարգացումների վերաբերյալ պատկերացումներն օվկիանոսից այնկողմ, հակառակ ընդունված տեսակետին, բավական իրատեսական են եղել<sup>29</sup>:

Ենթադրությունը, որ դեպքերի կտրուկ շրջադարձը Թուրքիայում ամենևին էլ անակնկալ չէր ամերիկյան իշխանություն-

Политическая борьба в Турции, 50-е начало 80-х годов XX в. : политические партии и армия, Москва, 1985, с. 66-88.

<sup>23</sup> Ganser D., NATO's Secret Armies: Operation GLADIO and Terrorism in Western Europe, Routledge, 2005, p. 227.

<sup>24</sup> Խորհրդի նիստի ոչ պաշտոնական զրազրությունը տե՛ս US Department of State, OCB Files: Lot 61 D 385, M/OP Informal Notes 1960: Տե՛ս նաև նույն տեղում, Lot 62 D 430, Turkey:

<sup>25</sup> Դեսպան Ուորենը ոչինչ չի հաղորդում վարչապետ Մենդերեսի մասին, քանի որ վերջինս ֆինանսների նախարար Հասան Փուլաթթանի հետ ձերբակալվել է մի քանի ժամ անց՝ Էսքիշեհիրից Քյութաիիա տանող ճանապարհին: Տե՛ս Սաֆրաստյան Ռ. (խմբ.), Թուրքիայի Հանրապետության պատմություն, Երևան, 2014, էջ 188:

<sup>26</sup> FRUS, p. 844.

<sup>27</sup> Տե՛ս US Department of State, Central Files, 782.00/5-2860.

<sup>28</sup> Gunn C., նշվ. աշխ., էջ 112:

<sup>29</sup> Հետաքրքիր է, որ, հակառակ արևմտյան պատմագրության մեջ ընդունված տեսակետի, նման եզրակացության է հանգել նաև թուրք ուսումնասիրող Ֆահիր Արմաօղլուն, ով աշխատել է ամերիկյան արխիվների հետ: Տե՛ս Armaoğlu F., "Amerikan Belgelerinde 27 Mayıs Olayı", Belleten, c. XL, sayı 227, 1996, ss. 203-226;



ների համար, հաստատվում է նաև մայիսի 31-ին՝ երկրի Ազգային անվտանգության խորհրդի հաջորդ 446-րդ նիստում: Արձանագրության մեջ կարդում ենք. «Պարոն Հմորին<sup>30</sup> հաղորդեց, որ հեղաշրջումը Թուրքիայում ամիսներ շարունակ ծրագրվել է [ընդգծումն իմն է, - Ա.Գ.] Ստամբուլի ռազմական ուսումնարանում, սակայն գործողությունները մինչև մայիսի 21-ը զարգացել են շատ դանդաղ... Պարոն Հմորին հավատում էր, որ Թուրքիան հավատարիմ կմնա իր դաշնակցային պարտավորություններին»<sup>31</sup>:

Ավելին՝ կարելի է ենթադրել, որ ամերիկյան հատուկ ծառայությունները հեղաշրջման հնարավորությունը դիտարկում էին 1960 թ. մի քանի տարի առաջ: Դեռ 1958 թ. վերջին ԿՀՎ-ի կողմից պատրաստված զեկույցում նշվում է (պարբերություններ 15-16), որ զինվորական միջամտությունը որոշակիորեն հավանական կլինի մինչև 1961 թ. ընտրությունները, եթե երկրում գրանցվի «սոստեսական վիճակի վատթարացում կամ քաղաքական ծայրահեղ սադրանքներ»<sup>32</sup>: Հեղաշրջումից հետո երկիրը գլխավորած Ջեմալ Գյուրսելը կամ, ինչպես նրան անվանում էին զինվորականների շրջանում, Ջեմալ աղան հնարավոր ռազմական միջամտության գաղափարին ծանոթացել է 1959 թ. փետրվարին Գերմանիայում ՆԱՏՕ-ի գորավարժությունների ժամանակ՝ Նրան իբրև թարգմանիչ կցված գնդապետ Սադի Քոչաշը<sup>33</sup>, ով

<sup>30</sup> Խոսքը ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության փոխստեղծ (1952-1962 թթ.) Ռոբերտ Հմորի կրտսերի մասին է:

<sup>31</sup> Memorandum of Discussion at the 446th Meeting of the US NSC, Washington, May 31, 1960, Eisenhower Library, Whitman File, NSC Records, in *FRUS*, pp. 848-849.

<sup>32</sup> Տե՛ս US Department of State, INR-NIE Files, Secret, NIE 33-58, 30.12.1958:

<sup>33</sup> Քոչաշը 1971 թ. մարտի 12-ի զինվորական միջամտությունից հետո ձևավորված Նիհաթ Էրիմի կառավարության մեջ զբաղեցրել է փոխվարչապետի պաշտոնը (մարտի 26-ից դեկտեմբերի 3-ը): Հայ ուսումնասիրողին քաջածանոթ է նրա «Հայերը պատմության մեջ և թուրք-հայկական հարաբերությունները՝ սկսած սելջուկյաններից» աշխատությունը՝ գրված թուրքական ժխտողականության դիրքերից: Տե՛ս Koçaş S., *Tarih Boyunca Ermeniler ve Selçuklular'dan Beri Türk-Ermeni İlişkileri*, Ankara, 1967:

շատ ամենայնի, որոշակի կապեր է ունեցել ՆԱՏՕ-ում ներկայացված ամերիկյան հատուկ ծառայությունների հետ, ամեն օր Կյուրնբերգից գորավարժությունների վայր էր հասնում բանակի գեներալին հատկացված մեքենայով: Այդ ուղևորություններից մեկի ընթացքում էր Գյուրսելը նախնական համաձայնություն է տվել հեղաշրջումը գլխավորելու՝ Քոչաշի առաջարկին<sup>34</sup>:

Այսպիսով, եթե Վաշինգտոնում զիտեին կամ նվազագույնը ենթադրում էին կազմակերպվող հեղաշրջման մասին, ինչո՞ւ էլ գեներալների վարչակազմը որևէ քայլ չի ձեռնարկել՝ կանխելու այն կառավարության տապալումը, որի հետ առկա էին «սերտ բարեկամական հարաբերություններ»<sup>35</sup>: Նման սցենարը ժամանակակիցների կողմից հավանական էր համարվում՝ հաշվի առնելով, որ 1959 թ. գարնանը Թուրքիայի հետ կնքված պայմանագրով ԱՄՆ-ն պարտավորվել էր միջամտել՝ թուրքական կառավարությանը պաշտպանելով «ուղղակի կամ անուղղակի ագրեսիայից»<sup>36</sup>:

Շատ ուսումնասիրողներ 1960 թ. մայիսյան դեպքերի ընթացքում ԱՄՆ որդեգրած դիրքորոշումը կապում են վարչապետ Մենդերեսի՝ նույն տարվա հունիսին ԽՍՀՄ նախատեսվող այցի

<sup>34</sup> İpekçi A., Coşar Ö., *İhtilalin İcyüzü*, İstanbul, 1965, ss. 105-109. Ա. Թյուրքեշի փոխանցմամբ, սակայն, Գյուրսելն այդ հանդիպման ժամանակ այդպես էլ որևէ հստակ պատասխան չի տվել՝ Birand M., Dündar C., Çaplı B., *Demirkırat: Bir Demokrasinin Doğuşu*, İstanbul, 1991, s. 161: Տե՛ս նաև Hale W., *Turkish Politics...*, pp. 102-103.

<sup>35</sup> Հենց այդպիսի ձևակերպում էր տեղ գտել ԱՄՆ-ի նախագահ Դուայթ Էյզենհաուերի 1959 թ. դեկտեմբերի 6-7-ը Թուրքիա կատարած այցի ընթացքում թուրք պաշտոնակցի հետ հանդիպումից հետո հրապարակված համատեղ հայտարարության տեքստում: Տե՛ս *Department of State Bulletin*, vol. 41 no. 1058-1070, US Government Printing Office, 1959, pp. 932-933

<sup>36</sup> Մենդերեսի քաղաքական հակառակորդները վախենում էին հնարավոր ամերիկյան միջամտությունից, քանի որ հիշյալ պայմանագիրը Վաշինգտոնի կողմից կարող էր օգտագործվել Թուրքիայի տարածքում «էյզենհաուերի դոկտրինով» սահմանված գործողություններ իրականացնելու համար: Տե՛ս Karpas K., "Turkish Soviet Relations" in Karpas K. (ed.), *Turkey's Foreign Policy in Transition, 1950-1974*, Brill, 1975, p. 87, Hale W., *Turkish Foreign Policy...*, p. 90.

հետ<sup>37</sup>: 1959-1960 թթ. թուրքական տնտեսությունը դժվար ժամանակներ էր ապրում. 1959 թ. հոկտեմբերին Մենդերեսի Միացյալ Նահանգներ կատարած այցի ընթացքում թուրքական կառավարությունն ակնկալում էր հավելյալ 500-600 միլիոն դոլարի աջակցություն ստանալ իր գլխավոր դաշնակցից<sup>38</sup>: Սակայն Էդենի հատուկ վարչակազմը, որ դժգոհ էր 1958 թ. Թուրքիային տրամադրված աջակցության<sup>39</sup> արդյունքներից, հրաժարվեց անգամ քննարկել ֆինանսների նախարար Փոլաթթանի պատրաստած նախագիծը<sup>40</sup>:

Պատարկաձեռն մնացած Մենդերեսը, ով հայտնի էր սուր հակախորհրդային հռետորաբանությամբ<sup>41</sup>, ստիպված էր աչքը նստրանք փնտրել: Միացյալ Նահանգներից բացի՝ այդ ծավալների աջակցություն կարող էր տրամադրել միայն Խորհրդային Միությունը: Նման պայմաններում Թուրքիայի արտգործնախարար Ֆաթին Ռյուշթյու Ջոդուն 1960 թ. մարտի 27-ից ապրիլի 6-ը հանդիպումներ է ունենում Անկարայում խորհրդային դեսպան Նիկիտա Ռիժովի հետ: Վերջինս թուրքական կողմին հավատիացնում է, որ Մոսկվան պատրաստ է տնտեսական աջակցություն ցուցաբերել Թուրքիային՝ անկախ տիրող քաղաքական

իրավիճակից<sup>42</sup>: Միայն դրանից հետո՝ ապրիլի 11-ին Մենդերեսը հայտարարում է Մոսկվա մեկնելու իր մտադրության մասին: Ընդ որում, ինչպես նշում է թուրք ուսումնասիրող Սուաթ Բիլգեն, պաշտոնական հայտարարությունն, այնուամենայնիվ, չէր հետակեցնում, թե արդյոք Թուրքիան, տնտեսական գործոնով պայմանավորված, պատրաստվում է վերակազմակերպել իր հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ<sup>43</sup>:

Թեն Մենդերեսն իր մտադրության մասին տեղեկացրել էր ամերիկյան կողմին<sup>44</sup>, սակայն հասկանալի է, որ այդ քայլը լուրջ ճշգրտություն էր հարուցելու Անկարայի անդրատլանտյան դաշնակցի ղեկավարության մոտ: Այնուհանդերձ, ԱՄՆ դեսպան Ուորենը, կասկածի տակ չդնելով Թուրքիայի հավատարմությունը, փետրվարի 8-ին հայտարարում է, որ «Թուրքիան որոշելու իրավունք ունի»<sup>45</sup>: Պաշտոնական Վաշինգտոնն, իր հերթին, շեշտում է, որ Թուրքիան չպետք է տրվի «խորհրդային սին խոստումներին»<sup>46</sup>: Առավել ուշագրավ է, որ այս շրջանում ԿՀՎ-ն որևէ կերպ չի անդրադառնում թուրքական զարգացումներին, մինչդեռ 50-ականների կեսերին, երբ թուրք-սովետական մերձեցման հավանականությունն անհամեմատ ավելի փոքր էր, հատուկ ծառայությունները թեման պահում էին ուշադրության կենտրոնում<sup>47</sup>: Տեղեկատվական հոսքի նման կատարյալ բացա-

<sup>37</sup> Տե՛ս, օրինակ, Gunn C., նշվ. աշխ., էջ 133, Aktaş M., 1950-1960 Demokrat Parti Dönemi Türk-Sovyet İlişkilerinde Amerikan Faktörü, İstanbul, 2006, ss. 94-95:

<sup>38</sup> Ahmad F., *The Making of Modern Turkey*, Routledge, 1993, p. 117.

<sup>39</sup> 1958 թ. հուլիսին արևմուտքի նախաձեռնած՝ Թուրքիայի տնտեսությունը «փրկելու» ծրագրի շրջանակներում երկրին տրամադրվել էր 359 միլիոն դոլարի չափով վարկ, ինչպես նաև կատարվել էր շուրջ 422 միլիոն դոլարի հատուկ արտաքին պարտքի կոնսոլիդացիա: Այս միջոցառումները, սակայն, չէին տվել ցանկալի արդյունք, ինչն արևմուտքում պայմանավորում էին Մենդերեսի կառավարության «բարդ որոշումներ ընդունելու անկարողությամբ»: Այս մասին մանրամասն տե՛ս Krueger A., *Foreign Trade Regimes and Economic Development: Turkey*, National Bureau of Economic Research, 1974, pp. 63-85:

<sup>40</sup> Özdemir H., «The Turkish-American Relation Toward 1960 Turkish 'Revolution'», *The Turkish Yearbook of International Relations*, vol. 31, 2000, p. 172.

<sup>41</sup> Տե՛ս Karpat K., «Turkish Soviet Relations», p. 85, Heper M., Sayari S., *Political Leaders and Democracy in Turkey*, Lexington Books, 2002, pp. 79-80, Danforth N., «The Menderes Metaphor», *Turkish Policy Quarterly*, vol. 13, no. 4, p. 102,

<sup>42</sup> Kunal Z., *Sadece Diplomat*, İstanbul, 1981, ss. 108-110.

<sup>43</sup> Bilge S., *Güç Komşuluk*, Ankara, 1992, s. 345.

<sup>44</sup> Այդ հարցն Անկարայում ԱՄՆ դեսպան Ուորենի հետ քննարկել են ն՝ վարչապետ Մենդերեսը (հունվարի 13-ին), ն՝ արտգործնախարար Ջոդուն (հունվարի 30-ին): Özdemir H., նշվ. աշխ., էջ 173: Հասկանալի է, որ գաղտնագրված ամերիկյան արխիվներում Խրուշչովի հետ Մենդերեսի սպալվող հանդիպումը հիշատակվում է միայն մեկ անգամ Eisenhower J., «Memorandum: Turkey», from 2 February 1960, in *Declassified Documents Reference System*: Վերոհիշյալ գրույցների ամերիկյան գրառումները շարունակվում են գաղտնի մնալ:

<sup>45</sup> Özdemir H., նշվ. աշխ., էջ 173:

<sup>46</sup> Տե՛ս FRUS, p. 820.

<sup>47</sup> Տե՛ս, օրինակ, «The Economic Situation in Turkey», 18 January 1955 in CIA/ERR, CIA-RDP91T01172R000300050013-1, «The Economic Situation in Turkey», 22

կայությունը պետք է բացատրել իրադարձությունների զարգացման այլընտրանքային սցենարների նկատմամբ ամերիկյան իշխանությունների կատարյալ վստահությամբ<sup>48</sup>:

Հեղաշրջումից հետո՝ 1960 թ. հունիսի 8-ին գումարված ԱՄՆ-ի Ազգային անվտանգության խորհրդի 447-րդ նիստի ժամանակ ԿՀՎ-ի տնօրենի խոսքերն ընդգծում են թուրքական նոր իշխանությունների արտաքին քաղաքական ուղեգծում ԽՍՀՄ-ի նկատմամբ դիրքորոշման կտրուկ կոշտացման փաստը. «Մոսկվան քաջալերում է թուրքական նոր վարչակազմին՝ բարելավելու ԽՍՀՄ-ի հետ Թուրքիայի հարաբերությունները: Խորհրդային իշխանություններն արդեն իսկ գեներալ Գյուրսելի հրավիրել են այցելել Մոսկվա... Թուրքիայի արտաքին գործերի նախարար Սարփերը դիմել է մեզ՝ խնդրելով խորհրդային քարոզչությանը դիմակայելու համար Թուրքիայի հետ համերաշխության վերաբերյալ հայտարարություն հրապարակել»<sup>49</sup>:

Ամերիկյան իշխանություններն այս խնդրանքին արձագանքում են բարձրագույն մակարդակով: Պետքարտուղար Հերթերի խորհրդով նախագահ Էյզենհաուերը հունիսի 11-ին նամակ է հղում հետհեղափոխական Թուրքիայի ղեկավար Ջեմալ Գյուրսելին: Ուղերձի տեքստն արտահայտում է թուրքական նոր կառավարության որդեգրած արտաքին քաղաքականության նկատմամբ պաշտոնական Վաշինգտոնի ողջ գոհունակությունը. «ՆԱՏՕ-ի և ՄԵՆՏՕ-ի հետ Թուրքիայի կապերը պահպանելու՝ Ձեր կառավարության մտադրությունը մեծ գոհունակության աղբյուր է անձամբ իմ և բոլոր նրանց համար, ովքեր հավաքական անվտանգության այդ կազմակերպություններում ասոցաց-

January 1955, in CIA/ERR, CIARDP91T01172R000300050014-0, "Background—Turkey, 12 March 1957" in CIA/ERR, CIA-RDP79R00890A000800050017-6, "Current Status of Turkey, National Security Council, 11 June 1957" in CIA RDP79R00890A000800080028-1:

<sup>48</sup> Gunn C., նշվ. աշխ., էջ 136:

<sup>49</sup> Memorandum of Discussion at the 447th Meeting of the US NSC, Washington, 8 June, 1960, Eisenhower Library, Whitman File, NSC Records, in FRUS, p. 849.

ված են Թուրքիայի հետ՝ նպատակ ունենալով պահպանել ազատ աշխարհը: Իմ կառավարությունը լիահույս է շարունակել Թուրքիայի հետ ջերմ հարաբերությունները՝ բարեկամության ու համագործակցության այն ավանդույթով, որով միշտ նշանավորվել են թուրք և ամերիկացի ժողովուրդների շփումները»<sup>50</sup>:

\*\*\*

Շատերին է հայտնի հեղաշրջման հաջողությունից հետո պաշտոնազրկված Ադնան Մենդերեսի հնչեցրած՝ ինչ-որ իմաստով հոետորական հարցը. «*ո՞ւմ մտքով է սա անցել*»<sup>51</sup>: Չհավակնելով պատասխանել այդ հարցին՝ սույն հոդվածը փորձ է փաստելու, որ ԱՄՆ իշխանությունները տիրապետում էին բավաբար տեղեկությունների՝ նվազագույնը կանխատեսելու 1960 թ. մայիսյան իրադարձությունների նման շրջադարձը: Ունենալով փրջամտելու բոլոր լծակները՝ Էյզենհաուերի վարչակազմը նախընտրեց պահպանել ակտիվ չեզոքություն՝ փոխարենը Թուրքիայի նոր իշխանություններից ակնկալելով տնտեսական, քաղաքական և ռազմական հավատարմություն:

<sup>50</sup> Department of State, Central Files, 882.47411/6-1160. Տե՛ս նաև FRUS, p. 850:

<sup>51</sup> Թուրք. «*Bunu kim uydurmuş?*»: Տե՛ս Tuna T., Adnan Menderes'in Günlüğü, İstanbul, 2002, s. 333:

## К ВОПРОСУ О ВОВЛЕЧЕННОСТИ США В ТУРЕЦКИЙ ВОЕННЫЙ ПЕРЕВОРОТ 1960 ГОДА

Аршак Геворкян  
(резюме)

Майский переворот 1960 года в Турции стал переломным моментом и в долгосрочной перспективе определяющим фактором для турецкой политики. Примечательно, что лишь незначительное число исследователей задалось вопросом, почему американская демократия столь толерантно отнеслась к данной, по своей сути неконституционной смене режима, и как такое вообще было возможно в НАТО.

Данная статья представляет собой попытку изучения ключевых событий переворота в свете распространенного мнения, что правительство США не имело никаких сведений о близящемся путче. В этой связи утверждается, что проводимая Вашингтоном политика «пассивного вмешательства» была хорошо продумана и обусловлена определенными геостратегическими факторами. В то же время, недостаточно доказательств и для того, чтобы утверждать, что США участвовали в заговоре с целью свержения правительства Мендереса.

## REFLECTIONS AROUND U.S. INVOLVEMENT IN THE TURKISH MILITARY COUP OF 1960

Arshak Gevorgyan  
(summary)

The first of its kind in the history of modern Turkey, the 1960 coup became a breaking point and a longstanding determining factor in Turkish politics. Strange though it may seem, very few scholars have delved into why that extra-constitutional regime change was tolerated by American democracy, or how it was even possible within NATO.

This article attempts to investigate the developments around the Turkish coup of May 27 by closely analyzing the widespread assumption that the U.S. Government had no warning over impending revolt. It argues that Washington's policy of 'passive involvement' was due to certain geostrategic factors. However, there is also not enough evidence to claim that the U.S. was involved in planning or encouraging the plot to overthrow the government of Menderes.

**ԹՈՒՐԻՔԱՅԻ ԽՈՇՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐԻ  
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

**Բանալի բառեր՝ տեղական ինքնակառավարում, Թուրքիա, իշխանության ապակենտրոնացում, քաղաքների մունիցիպալ կառավարում, մեգրոպոլիսներ**

Նոր հազարամյակի սկզբից ի վեր Թուրքիայում տեղական ինքնակառավարման ոլորտում համակարգային զգալի փոփոխություններ են կատարվել: Թուրքական իշխանությունները փորձել և փորձում են զուգահեռել տնտեսական պատճառներով բնակչության տեղաշարժի առաջացրած խնդիրների լուծումն ու տեղական ժողովրդավարության արդյունավետ կենսագործումը:

Ինչպես սահմանված է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով՝ «պետական լիազորությունների իրականացումը, որպես կանոն, պետք է առավելապես դրվի քաղաքացիներին ամենից մոտ կանգնած իշխանության մարմինների վրա»<sup>1</sup>: Թեև այս սահմանումը խոշոր հաշվով համընդունելի է սակայն տարբեր երկրներ տարբեր կերպ են պատկերացնում տնտեսական և ժողովրդագրական պահանջների միջև հավասարակշռություն պահպանելու եղանակները: Թեև կարելի է ասել, որ Թուրքիան, ընդհանուր առմամբ, ընթանում է տեղական ինքնակառավարման մասով իշխանության ապակենտրոնաց-

\* ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի հայցորդ:  
<sup>1</sup> Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի հոդված 4, կետ 3 (տեքստը տե՛ս Եվրոպայի խորհրդի պաշտոնական կայքում <http://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/rms/090000168007a088> [հասանելի էր 22.08.2016]): Փաստաթուղթը Թուրքիայի մասով ուժի մեջ է մտել 1993 թ. ապրիլի 1-ին:

ման ուղղությամբ<sup>2</sup>, սակայն այս հարցում ևս մոտեցումները միանշանակ չեն:

Սույն հոդվածում Թուրքիայում ընդունված որոշ օրենսդրական ակտերի իրավական հիմքի վրա վերլուծության է ենթարկվում երկրի քաղաքային ինքնակառավարման համակարգը:

Ներկայիս Թուրքիայի տարածքում ժամանակակից ընկալմամբ տեղական կառավարման հաստատման առաջին փորձը թվագրվում է դեռ հետթանզիմաթյան շրջանով, երբ արևմտյան կրթություն ստացած օսմանյան պաշտոնյաների նախաձեռնությամբ 1854 թ. օգոստոսի 16-ին ստեղծվեց Ստամբուլի առաջին քաղաքապետարանը<sup>3</sup>: Ուսումնասիրողների մեծ մասի կարծիքով՝ Կայսրության վերջին շրջանում Ստամբուլում հաստատված համակարգը քաղաքային բնակավայրի կառավարման հատուկ ռեժիմի ներդրման առաջին փորձն էր<sup>4</sup>: Հանրապետական Թուրքիայի ստեղծումից հետո քաղաքներում տեղական ինքնակառավարումն իրականացվում էր 1930 թ. ապրիլի 3-ի նընդունված համապատասխան օրենքով (№ 1580<sup>5</sup>), որը սահմանում էր մունիցիպալ կառավարման միաստիճան համակարգ: Դրանում

<sup>2</sup> Թուրքիայի տեղական ինքնակառավարման համակարգում իշխանության ապակենտրոնացման և վերակենտրոնացման մասին մանրամասն տե՛ս Akıllı H., Akıllı H. S., *Decentralization and Recentralization of Local Governments in Turkey*, Procedia - Social and Behavioral Sciences, vol. 140, 2014, pp. 682-686, Özel M., *“Modern Desentralizasyon” Düşüncesinin Temel Dinamikleri ve Yerelleşme Üzerine Etkileri*, Niğde Üniversitesi İktisadi ve İdari Bilimler Fakültesi Dergisi, c. 8, s. 1, 2015, ss. 99-116.

<sup>3</sup> İzci F., Turan M., *Türkiye’de Büyükşehir Belediyesi Sistemi ve 6360 Sayılı Yasa ile Büyükşehir Belediyesi Sisteminde Meydana Gelen Değişimler: Van Örneği*, Süleyman Demirel Üniversitesi İktisadi ve İdari Bilimler Fakültesi Dergisi, c. 18, s. 1, 2013, s.118, Ulusoy A., Akdemir T., *Mahalli İdareler: Teori – Uygulama – Maliye*, 4. baskı, Ankara, 2006, s. 148.

<sup>4</sup> Özgür H., Savaş Yavuzçehre P., *Türkiye’nin Büyükşehir Belediyesi Sistemi: 1982-2015*, Çankırı Karatekin Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, c. 7, s. 1, 2016, s. 908.

<sup>5</sup> Օրենքի տեքստը տե՛ս ԹՀ պաշտոնաթերթի 1471 համարում (14.04.1930, էջ 1-20)՝ <http://www.resmigazete.gov.tr/arsiv/1471.pdf> [հասանելի էր 22.08.2016]:

Ստամբուլի և Անկարայի մասով միայն կառավարման համակարգի որոշ տարբերություններ էին ամրագրված: Երկրորդ աշխարհամարտից հետո ուրբանիզացման և ներքին միգրացիայի տեմպերի աճի հետևանքով քաղաքային բնակչության թռիչքային աճ գրագվեց<sup>6</sup>, ինչի հետևանքով գործող օրենքը գործնականում կորցրեց իր արդյունավետությունը: Արագ ուրբանիզացման հետևանքով առաջացած տնտեսական ու վարչական խնդիրների լուծմանն ուղված քայլերից մեկը մետրոպոլիսների համակարգի ներդրումն էր<sup>8</sup>:

Հստ 1982 թ. ընդունված և մինչ այժմ գործող Թուրքիայի Հանրապետության սահմանադրության 127-րդ հոդվածի՝ տեղական ինքնակառավարման մարմինները «հասարակական իրավական միավորներ են, որոնց ստեղծման սկզբունքները սահմանվում են օրենքով, և որոնց որոշում կայացնող մարմինները կրկին օրենքի համաձայն, ընտրվում են քաղաքացիների կողմից՝ բավարարելու նահանգի, քաղաքի կամ գյուղի բնակիչների տեղական և համընդհանուր պահանջները»<sup>9</sup>: Երկրի մայր օրենքի

տեքստում ամրագրված է, որ «բնակչության տեղակայման խոշոր կենտրոնների» (թուրք. büyük yerleşim merkezleri) համար կարող են սահմանվել հատուկ վարչական միավորներ: 1984 թ. մարտի 23-ին, հենվելով այս վերապահման վրա, ընդունվեց «Խոշոր քաղաքների վարչական մարմինների կառավարման մասին» № 195 ենթաօրենսդրական ակտը<sup>10</sup>, որով շրջանառության մեջ դրվեց քաղաքների մունիցիպալ կառավարման երկաստիճան համակարգի մոդելը: Դրա արդյունքում կառավարման հատուկ կարգավիճակ ստացան 1 միլիոնից ավելի բնակչություն ունեցող Ստամբուլը (ավելի քան 5 մլն.), Անկարան (ավելի քան 2.2 մլն.) և Իզմիրը (շուրջ 1.5 մլն), որոնք դիտարկվում էին իբրև մետրոպոլիսներ (տե՛ս նաև օրենք № 3030<sup>11</sup>): Վերջինների վարչական մարմինները մասնագիտական գրականության մեջ հայտնի են իբրև «ապակենտրոնացված վարչական կազմակերպություններ»<sup>12</sup>, իսկ Թուրքիայի Սահմանադրական դատարանն իր № 2007/35 որոշման մեջ<sup>13</sup> դրանց օգտագործում է «տեղական ինքնակառավարման մարմիններ» (թուրք. yerel yönetimler) ընդհանրական եզրը՝ առանց որոշակի տարբերական:

Վերոհիշյալ № 3030 օրենքը սահմանում էր, որ ինքնակառավարման հատուկ կարգավիճակը կարող է հաստատվել, եթե քաղաքի ներսում ստեղծվել էր առնվազն երկու համայնք: Բացի դրանից, օրենքի գոյության ընթացքում հնչեցվել են տարբեր ա-

<sup>6</sup> 1945-1985 թթ.՝ 40 տարվա ընթացքում միայն Ստամբուլի բնակչությունը օրինակ, ավելացել է ավելի քան 6 անգամ՝ մոտ 860 հազարից հասնելով 5.5 միլիոնի: St u Turan N., *Towards an Ecological Urbanism for Istanbul*, in Sorensen A., Okata J. (eds.), *Megacities: Urban Form, Governance, and Sustainability*, Springer, 2010, p. 224, fig. 10-2:

<sup>7</sup> Մետրոպոլիսը կամ մետրոպոլիտենային արեալը, իր ժամանակակից ընկալմամբ, ընդգրկում է «մայր» քաղաքը, դրա ազդուերացիան, մերձքաղաքային գոտին ու հարակից գյուղական շրջանները, որոնք կապված են տնտեսական և աշխատանքային տեղաշարժի կապերով: Նման շրջանների նկատմամբ սովորաբար սահմանվում է տեղական ինքնակառավարման հատուկ համակարգ: Մանրամասն տե՛ս Berry B. J. L., Goheen P. G., Goldstein H., *Metropolitan Area Definition: a Reevaluation of Concept and Statistical Practice*, U.S. Bureau of the Census, 1968, Ostrom V., Tiebout Ch. M., Warren R., *The Organization of Government in Metropolitan Areas: A Theoretical Inquiry*, American Political Science Review, vol. 55, issue 04, 1961, pp. 831-842:

<sup>8</sup> Genç N., *6360 Sayılı Kanun ve Aydın'a Etkileri*, Adnan Menderes Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, c. 1, özel sayı, 2010, s. 2.

<sup>9</sup> ԹՀ գործող սահմանադրության տեքստը՝ փոփոխություններով ու լրացումներով տե՛ս ԹԱՄԺ պաշտոնական կայքում՝ [https://www.tbmm.gov.tr/anayasa/anayasa\\_2016.pdf](https://www.tbmm.gov.tr/anayasa/anayasa_2016.pdf) [հասանելի էր 22.08.2016]:

<sup>10</sup> Ակտի տեքստը տե՛ս ԹՀ պաշտոնաթերթի 18350 համարում (23.03.1984, էջ 1-7)՝ <http://www.resmigazete.gov.tr/arsiv/18350.pdf> [հասանելի էր 22.08.2016]:

<sup>11</sup> Օրենքի տեքստը տե՛ս ԹԱՄԺ պաշտոնական կայքում՝ <https://www.tbmm.gov.tr/tutanaklar/KANUNLAR/KARARLAR/kanuntbmmc067/kanuntbmmc067/kanuntbmmc06703030.pdf> [հասանելի էր 22.08.2016]:

<sup>12</sup> Savaş Yavuzçehre P., *The Effects of the Law No. 6360 on Metropolitan Municipality System in Turkey*, *European Scientific Journal*, Special edition, August 2016, p. 292.

<sup>13</sup> Որոշման տեքստը տե՛ս Թուրքիայի սահմանադրական դատարանի պաշտոնական կայքում՝ <http://www.kararlaryeni.anayasa.gov.tr/Karar/Content/af373a01-9644-43d8-8f12-092fab50be22?excludeGerekce=False&wordsOnly=False> [հասանելի էր 22.08.2016]:

ուաջարկներ՝ կապված նման քաղաքներին համապատասխան կարգավիճակ շնորհելու համար անհրաժեշտ բնակչության նվազագույն շեմի հետ, սակայն դրանցից ոչ մեկն օրինական կարգավիճակ չի ստացել<sup>14</sup>: Նոր համակարգին անցում կատարելուց 5 տարվա ընթացքում մունիցիպալ կառավարման անցավու 5 (Ադանան՝ 1986 թ., Բուրսան, Գազիանթեփին ու Քոնիան՝ 1987 թ., Կայսերին՝ 1988 թ.), իսկ մինչև 2000 թ. և 8 (Անթալիան, Դիարբեքիրը, Էրզրումը, Էսքիշեհիրը, Քոջաեյին, Մերսինը, Սամսունը՝ 1993 թ., Սաքարիան՝ 2000 թ.) քաղաք<sup>15</sup>:

Չնայած նոր հազարամյակում ոլորտը բարեփոխելու մի շարք փորձերին<sup>16</sup>՝ № 3030 օրենքն ուժի մեջ մնաց երեք տասնամյակ փոխարինվելով միայն 2004 թ. հուլիսի 10-ի № 5216 նոր օրենքով<sup>17</sup>: Դրանով մետրոպոլիտենային արեալի մունիցիպալ կառավարման մարմինը սահմանվում էր իբրև «*հասարակական իրավական միավոր, որ ունի վարչական ու ֆինանսական ինքնավարություն, ընդգրկում է նվազագույնը երեք շրջան կամ առաջին աստիճանի տեղական իշխանություն, համակարգում է վերջիններիս աշխատանքը, իրականացնում օրենքով իր վրա դրված պարտականություն և իրավունքները, և որի որոշում կա-*

<sup>14</sup> Özgür H., Savaş Yavuzçehre P, Çigeroğlu M., *Türkiye'de Orta Ölçekli ve Metropolitan Kentsel Alanların Yönetimi*, Eryılmaz B., Eken M., Şen M. L. (ed.), Kamu Yönetimi Yazıları, Ankara, 2007, ss. 480-481.

<sup>15</sup> Çetin Z. Ö., *The Critical Analysis of Transformation of Turkish Metropolitan Municipality System*,

*Yönetim ve Ekonomi Araştırmaları Dergisi*, c. 13, s. 2, 2015, s. 2, dipnot 2.

<sup>16</sup> «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո Թուրքիայի նախագահ Ահմեթ Նեջդեթ Սեզերը վետո է կիրառել ԹԱՍԺ կողմից ընդունված տեղական ինքնակառավարմանը վերաբերող երեք օրինագծերի նկատմամբ (№ 5019, № 5025, № 5026): Տե՛ս Neval Genç F., Özgür H., *Orta Ölçekli Kentsel Alanların Yönetimi: Kuşadası-Söke ve Aydın Merkez İlçe Örnekleri*, Mustafa Kemal Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, c. 5, s. 9, 2008, s. 199:

<sup>17</sup> Օրենքի տեքստը տե՛ս ԹՀ պաշտոնաթերթի 25531 համարում (23.07.2004)՝ <http://www.resmigazete.gov.tr/eskiler/2004/07/20040723.htm> [հասանելի էր 22.08.2016]:

*թացնող մարմիններն ընտրվում են քաղաքացիների կողմից*»: Նոր օրենքը հստակ սահմանում էր մետրոպոլիսների ինչպես տարածքային, այնպես էլ բնակչության նվազագույն անհրաժեշտ շեմերը (մինչև 1 միլիոն բնակչություն ունեցող տարածքներում վարչական կառավարման նոր համակարգը տարածվում էր 20 կմ շառավղով, 1-ից 2 միլիոն բնակչության դեպքում՝ 30 կմ, իսկ 2 միլիոնից ավելիի դեպքում՝ 50 կմ<sup>18</sup>): Բացառություն էին կազմում միայն Ստամբուլի և Քոջաեյիի մետրոպոլիտենային կառավարման տարածքները, որոնք համընկնում էին նահանգի ողջ տարածքի հետ<sup>19</sup>: Ինչպես նշում են ոլորտի ուսումնասիրողներից ոմանք<sup>20</sup>, մեծամասամբ նաև այդ երկու միավորների հաջողված փորձն էր ընկած քաղաքային ինքնակառավարման ոլորտի հաջորդ օրենսդրական փոփոխության հիմքում: 2012 թ. նոյեմբերի 11-ին ԹԱՍԺ-ի կողմից ընդունվեց № 6360 օրենքը<sup>21</sup>, որի 4-րդ հոդվածը մետրոպոլիտենային կառավարման վարչական մարմինը բնորոշում էր իբրև «*իրավական միավոր, որ սահմանափակված է նահանգային վարչական սահմաններով, համակարգում է իր սահմաններում գտնվող շրջանային իշխանությունների աշխատանքը, կատարում է իր պարտականությունները, օրենքով սահմանված կարգով իրականացնում իր իշխանությունը՝ օգտագործելով վարչական և ֆինանսական անկախությունը, և որի օրենսդիր մարմինն ընտրվում է քաղաքացիների կողմից*»: Նոր օրենքն, ըստ էութ-

<sup>18</sup> Yıldız R., Çıracı H., *5216 Sayılı Yeni Büyükşehir Belediyesi Kanunu'nun Stratejik MekânsalPlanlama Yaklaşımı Açısından Değerlendirilmesi*, İTÜ Dergisia, c. 5, s. 2, 2006, s. 204.

<sup>19</sup> Kayan K., *Görev, Yetki ve Sorumluluklar Açısından 5216 Sayılı Büyükşehir Belediye Kanunu'nun Getirdiği Yenilikler ve Kocaeli Büyükşehir Belediyesi'nin Uygulamaları*, Yalova Sosyal Bilimler Dergisi, c. 5, s. 9, 2015, s. 210.

<sup>20</sup> Zengin O., *Büyükşehir Belediyesi Sisteminin Dönüşümü: Son On Yılın Değerlendirmesi*, Ankara Barosu Dergisi, c. 2, 2014, s. 102.

<sup>21</sup> Օրենքի տեքստը տե՛ս ԹՀ պաշտոնաթերթի 28489 համարում (06.12.2012)՝ <http://www.resmigazete.gov.tr/eskiler/2012/12/20121206-1.htm> [հասանելի էր 22.08.2016]:

յան, Ստամբուլի և Քոջաեյիի նահանգների փորձը տարածում էր մյուս մետրոպոլիսների վրա և միաժամանակ, ավելի պարզեցնելով ընթացակարգը, նպաստում նրանց թվի ավելացմանը<sup>22</sup>: № 6360 օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մետրոպոլիսի կարգավիճակ ստացան միանգամից 14 քաղաք (Այդըն, Բալըքէսիր, Դենիզլի, Հաթայ, Մալաթիա, Մանիսա, Քահրամանմարաշ, Մարդին, Մուղլա, Թեքիրդաղ, Տրապիզոն, Շանլուրֆա, Վան, Օրդու): Աշխարհագրական նման ընդգրկումը նշանակում էր որ մետրոպոլիսները դառնում են նահանգային մասշտաբի քաղաքային վարչություններ<sup>23</sup>: Թեև նոր օրենքի արդյունքում վարչական մարմինների լուրջ կրճատումներ կատարվեցին հատկապես գյուղական օղակում, ինչն, ըստ էության, հակասում է երկրի սահմանադրության տրամաբանությանն ու Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի ոգուն<sup>24</sup>, իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությունն ու անձամբ նախագահ էրդոդանն<sup>25</sup> այն համարում է հանրային կառավարման վերաձևակերպմանն ուղղված շարժման<sup>26</sup> կարևոր հանգրվան:

Ընդհանուր առմամբ, № 6360 օրենքը, հնչեցված տարատեսակ մեկնաբանություններով ու քննադատություններով հանդերձ, հստակ դրսևորումն է այն իրողության, որ ՏԻՄ համակարգը Թուրքիայում շարունակում է գտնվել համակարգային կայացման և կառուցվածքային ձևափոխման փուլում:

<sup>22</sup> Savaş Yavuzçehre P., նշվ. աշխ., էջ 296:

<sup>23</sup> Gül H., Batman S., 6360 Sayılı Kanunun Kent-Bölge Bağlamında Bir Değerlendirmesi, Kentsel ve Neoliberalizm Sonrası Mekânsal Müdahale Biçimleri ve Yansımaları, Bölgesel Araştırmalar Sempozyumu, Bildiri Kitabı, Mersin, 2013, s. .

<sup>24</sup> Derdiman R. C., Türkiye’de Büyükşehir Belediyelerinin ve Bu Belediyelerin Yapılarındaki Yeni Değişikliklerin Anayasa’ya Uyumu Sorunu, S.D.Ü. Hukuk Fakültesi Dergisi, c. 2, s. 1, s. 74.

<sup>25</sup> “Erdoğan Tok: Yerel Yönetimler İçin Önemi Büyük”, Milliyet, 11.09.2014, <http://www.milliyet.com.tr/erdogan-tok-yerel-yonetimler-icin-onemi-samsun-yerelhaber-420053/> [hասանելի էր 22.08.2016]:

<sup>26</sup> Çetin Z. Ö., նշվ. աշխ., էջ 20:

Հավելված 1. Թուրքիայի մետրոպոլիտենային կարգավիճակ ունեցող տարածքները<sup>1</sup>

№	Անվանումը	Ստեղծման ամսաթիվը/ օրենքի կամ ակտի համարը	Մետրոպոլիսի բնակչությունը (2015թ., մարդ)	Տարածքը (կմ <sup>2</sup> )	Երջանների թիվը	Տարածքային ընդգրկումը				Ըստ № 6360 օրենքի (2012 թ.)
						20 կմ	30 կմ	50 կմ	Ողջ նահանգը	
1.	Անկարա	23.03.1984/№ 3030	5.270.575	25.437	25	✓				✓
2.	Ստամբուլ	23.03.1984/№ 3030	14.657.434	5.313	39		✓			✓
3.	Իզմիր	23.03.1984/№ 3030	4.168.415	12.007	30			✓		✓
4.	Ադանա	05.06.1986/№ 3306	2.183.167	14.125	15			✓		✓
5.	Բուրսա	18.06.1987/№ 3391	2.842.547	10.882	17			✓		✓
6.	Գազիանթեփ	20.06.1987/№ 3398	1.931.836	6.887	9	✓				✓
7.	Քոնիա	20.06.1987/№ 3399	2.130.544	41.001	31	✓				✓
8.	Կայսերի	07.12.1988/№ 3509	1.341.056	17.170	16	✓				✓
9.	Անթաթա	09.09.1993/№ 504	2.288.456	20.909	19	✓				✓
10.	Դիարբեքիր	09.09.1993/№ 504	1.654.196	15.272	17	✓				✓
11.	Էրզրում	09.09.1993/№ 504	762.321	25.355	20	✓				✓
12.	Էսֆիզեփ	09.09.1993/№ 504	826.716	13.925	14	✓				✓

<sup>1</sup> Ըստ Թուրքիայի վիճակագրական ինստիտուտի պաշտոնական կայքի տվյալների՝ [http://www.tuik.gov.tr](http://www.tuik.gov.tr/UstMenu.do?method=temelList) [hասանելի էր 22.08.2016]: Տե՛ս նաև Akallı H., Akallı H. S., նշվ. աշխ., էջ 685-686 (այդուսով):



13.	Քոզակել <sup>2</sup>	09.09.1993/№ 504	1.780.055	3.623	12			✓
14.	Մեթսն <sup>3</sup>	09.09.1993/№ 504	1.745.221	15.620	13		✓	✓
15.	Սամսուն	09.09.1993/№ 504	1.279.884	9.352	17		✓	✓
16.	Սաբալիա <sup>4</sup>	06.03.2000/№ 593	953.181	4.878	16		✓	✓
17.	Այրն	31.03.2014 <sup>5</sup> /№ 6360	1.053.506	7.943	17			✓
18.	Քարրքեֆիր	31.03.2014/№ 6360	1.186.688	14.272	20			✓
19.	Դենիզլի	31.03.2014/№ 6360	993.442	11.861	19			✓
20.	Հաթայ	31.03.2014/№ 6360	1.533.507	5.867	15			✓
21.	Սարաբիա	31.03.2014/№ 6360	772.904	12.146	13			✓
22.	Սանիսա	31.03.2014/№ 6360	1.380.366	13.269	17			✓
23.	Քադրաման- մարաշ	31.03.2014/№ 6360	1.096.610	14.525	11			✓
24.	Մարդին	31.03.2014/№ 6360	796.591	8.858	10			✓
25.	Մուլլա	31.03.2014/№ 6360	908.877	12.974	13			✓

<sup>2</sup> Մինչև 2008 թ. կենտրոնական բաղադրի անունով կոչվում էր Իզմիր: 06.03.2008 թ. № 5747 օրենքով վերանվանվել է Քոզակել: Օրենքի տեքստը տե՛ս ԹՀ պաշտոնաթերթի 2008 թ. մարտի 22-ի 26824 համարում <http://www.resmigazete.gov.tr/eskiler/2008/03/20080322M1-1.htm>(հասանելի էր 22.08.2016):

<sup>3</sup> Մինչև 2002 թ. կոչվում էր Բշել: 2002 թ. հունիսի 27-ի № 4764 օրենքով վերանվանվել է Մեդրսին: Օրենքի տեքստը տե՛ս ԹՀ պաշտոնաթերթի 2002 թ. հունիսի 28-ի 24799 համարում՝ <http://www.resmigazete.gov.tr/eskiler/2002/06/20020628.htm#3> (հասանելի էր 22.08.2016):

<sup>4</sup> Մինչև 2008 թ. կենտրոնական բաղադրի անունով կոչվում էր Ադախազարը: 06.03.2008 թ. № 5747 օրենքով վերանվանվել է Սաբաբիա:

<sup>5</sup> № 6360 օրենքն ընդունվել է 2012 թ. նոյեմբերի 12-ին (հրապարակվել է դեկտեմբերի 2-ին), սակայն ամբողջությամբ ուժի մեջ է մտել 2014 թ. մարտի 30-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից հետո: Տե՛ս Zengin O., նշվ. աշխ., էջ 102:

26.	Թեթիլդաղ	31.03.2014/№ 6360	937.910	6.339	11			✓
27.	Տրապիզոն	31.03.2014/№ 6360	768.417	4.662	18			✓
28.	Շանլիուրֆա	31.03.2014/№ 6360	1.892.320	19.451	13			✓
29.	Վան	31.03.2014/№ 6360	1.096.397	21.334	13			✓
30.	Օրդու	31.03.2014/№ 6360	728.949	5.952	19			✓
Σ	30		60.962.088	401.209	519			2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մետրոպոլիսների բնակչությունը կազմում էր Թուրքիայի բնակչության 77,4, իսկ տարածքը՝ երկրի ընդհանուր տարածքի 51,2%-ը:

ОСОБЕННОСТИ МУНИЦИПАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ  
КРУПНЫХ ГОРОДОВ ТУРЦИИ В КОНТЕКСТЕ ИЗМЕНЕНИЙ  
В ЗАКОНОДАТЕЛЬНЫХ АКТАХ СТРАНЫ

*Айк Маргарян*  
(резюме)

С начала нового тысячелетия Турция претерпела значительные структурные трансформации в сфере местного самоуправления. С приходом к власти Партии справедливости и развития (ПСР) процесс реформирования местного правления получил ускоренные темпы: в контексте программы реформ на фоне децентрализации власти муниципальные органы стали значительно ближе к административному аппарату. В этих реалиях границы муниципалитетов крупных городов постепенно стали расширяться; муниципалитеты же малых городов и сел, их правосубъектность была аннулирована, и было установлено много новых крупных муниципалитетов.

Цель данного исследования заключается в изучении развития процессов структурных трансформаций в турецких муниципалитетах больших городов в рамках установок, заданных законами № 3030, 5216 и 6360.

PECULIARITIES OF THE METROPOLITAN MUNICIPALITY  
GOVERNANCE IN TURKEY IN THE CONTEXT OF CHANGES IN  
LEGISLATION OF THE COUNTRY

*Hayk Margaryan*  
(summary)

Since beginning of the new millennium Turkey experienced a significant transformation related to the structure of local administrations. By the coming of the Justice and Development Party (AKP) to the political power, the reform-making process at local government system gained an accelerative trend. Within the context of the reform program, local governments came to the front side at the administrative structure. In this framework, metropolitan municipalities' borders were gradually expanded; small municipalities and villages legal personalities were abrogated, and lots of metropolitan municipalities were established.

The aim of this study is, to examine the developments in Turkish metropolitan municipal structure within the framework of the basic laws № 3030, 5216 and 6360.

**ՌՈՒՍ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ԱՀՄԵԴ ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ՝**

**Բանալի բառեր՝ հուշագրություն, Ջեմալ փաշա, երիտթուրքեր, ռուս-թուրքական հարաբերություններ, Հայկական հարց**

Պատմական իրադարձությունների ուսումնասիրման հենքը կազմում են արխիվային փաստաթղթերն ու նյութերը և խնդրոտ առարկայի շուրջ ավելի վաղ իրականացված պատմագիտական հետազոտությունները: Իրականության օրյեկտիվ պատկերն ամբողջացնելու հարցում այս ամենի հետ մեկտեղ կարևոր դեր ունեն ուսումնասիրվող ժամանակաշրջանի քաղաքական, հասարակական, մշակութային գործիչների հուշերը, որոնք, հավակնելով լինել ճշմարտացի և փաստագրական, ուրույն սկզբնաղբյուր կարող են համարվել: Թեև իրականում օրագրերի, նոթերի, հուշերի տեսքով գրված այս գործերը հաճախ սուբյեկտիվ, միակողմանի մոտեցումներ են պարունակում, սակայն դրանցում հնարավոր է գտնել պաշտոնապես չլուսաբանված, գրագրությունից դուրս մնացած դրվագներ, յուրահատուկ տեղեկություններ, որոշակի մանրամասներ, որոնք թույլ են տալիս առավել մանրակրկիտ վերականգնել պատմական դեպքերի ընթացքը: Իսկ այս կամ այն խնդրի վերաբերյալ քաղաքական գործիչների՝ հուշագրությունների էջերում տեղ գտած կարծիքներն առանձնահատուկ ուշադրության են արժանի:

\* Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ: Էլ. փոստ՝ [nairapoghosyan@ysu.am](mailto:nairapoghosyan@ysu.am)  
Ղեկավարությունն իրականացվել է ՀՀ ԿԳԼ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 15T-6A319 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Հուշագրությունների ժանրը սկզբնավորվել է Ֆրանսիայում: Ժամանակակից հուշագրությունների նախատիպն են համարվում ֆրանսիացի միջնադարյան պատմաբաններ Ժոֆրուա դե Վիլլարդուենի (1150-1212)<sup>2</sup>, Ժան դե Ժուանվիլի (1223-1317)<sup>3</sup>, Ֆիլիպ դե Քոմինի (1447 - 1511)<sup>4</sup> ստեղծագործությունները, որոնցում հեղինակները շեշտում են իրենց մասնակցությունը նկարագրվող դեպքերի ընթացքին:

XIX դարի կեսերից եվրոպականացման և մոդեռնիզացման համատեքստում Օսմանյան կայսրության վերնախավի շրջանում հուշեր գրելը տարածում գտավ: Մեզ են հասել շատ թուրք գործիչների հուշեր, այդ թվում սուլթան Աբդուլ Համիդ II-ի (1842-1918)<sup>5</sup>, երիտթուրք պարագլուխներ Թալեաթի (1874-1921)<sup>6</sup>, Էնվերի (1881-1922)<sup>7</sup> և այլոց հուշերը: Թուրք պաշտոնյաները ներկայացնում են համաշխարհային և ներքին քաղաքական խնդիրների վերաբերյալ իրենց տեսակետներն ու գնահատականները: XIX դարի վերջին և XX դարի կեսերին Թուրքիայի պատմության թոհուրոհում գտնվող քաղաքական և ռազմական գործիչների հուշերում քիչ չեն նաև հայերին վերաբերող ուշագրավ անդրադարձները, որոնց ուսումնասիրությունը հայ-թուրքական հարաբերությունների, Հայոց ցեղասպանության պլանավորման ու կազմակերպման խնդրի ուսումնասիրության համատեքստում կարևոր, թեև դեռևս ողջ խորությամբ չքննարկված թեմա է:

Սույն հոդվածում անդրադառնալու ենք «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից Ահմեդ Ջեմալ փաշայի հուշերին: Երիտթուրքական իշխող եռյակի անդամ, ռազմածովային գործերի նախարար Ջեմալ փաշան հայե-

<sup>2</sup> Виллардуэн Ж, Завоевание Константинополя, Москва, 1993.  
<sup>3</sup> Жуанвиль Ж., Книга благочестивых речений и добрых деяний нашего святого короля Людовика, Санкт-Петербург, 2007.  
<sup>4</sup> Коммин Ф., Мемуары, Москва, 1986.  
<sup>5</sup> Bozdağ İ., Sultan Abdülhamid'in Hatıra Defteri, İstanbul, 1985.  
<sup>6</sup> Bardakçı M., Talat Paşa'nın Evrak-ı Metrukesi, İstanbul, 2008.  
<sup>7</sup> Cengiz H. E., Enver Paşa'nın Anıları (1881-1908), İstanbul, 1991.

րիս պատմության մեջ առանձնահատուկ դերակատարում է ունեցել: Միրիայի նահանգապետի պաշտոնը զբաղեցնելով՝ նա անմիջականորեն տնօրինում էր անապատ արքայազնի հայերի ճակատագրերը: Ջեմալի դաժանության մասին լեգենդներ են հյուսվել: Միրիայում և Լիբանանում ցանկացած անհնազանդություն արյան ծովի մեջ խեղդելու համար արաբները նրան կոչում են «արյունոտ մսագործ»: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան բանակում ծառայած վեներաբելիզի զինվորական Ռաֆայել դե Նոգալեսը, ով անձամբ ճանաչում էր Ջեմալին, գրում է իր հուշերում. «Ջեմալ փաշան առանց չափազանցության դաժան և ստոր մարդ էր: Կարծում եմ, որպես զինվորական նա չէր կարող նույնիսկ բաժանմունք ղեկավարել: Իսկ ծովային գործերում բացարձակ անտաղանդ էր... Ոչ որ հաստատ չգիտի, որտեղից նա հայտնվեց: Առաջին անգամ նրա մասին խոսեցին երիտթուրքական հեղափոխության ժամանակ: Այդ ժամանակ նա թոշակառու փոխգնդապետ էր և Բաղդադի գեներալ-նահանգապետ: Մեկ օր անց նա դարձավ գնդապետ, մեկ շաբաթ անց՝ բրիգադային գեներալ: Պատերազմի սկզբում ինքն իրեն հռչակեց դիվիզոնային գեներալ: Էնվերը չխոչընդոտեց վախենալով, որ նա կանցնի Անտանտի կողմ: ... արաբներին ուղղակի ծաղրում էր հասարակական գլխատումներ կազմակերպելով: Նույնիսկ Մեքքայից Շերիֆ Չուսեյնի որդուն չխնայեց»<sup>8</sup>: Պատերազմում պարտությունից հետո 1919 թ. հուլիսի 5-ին Կ. Պոլսում տեղի ունեցած ռազմական դատարանի որոշմամբ Ջեմալը հեռակա կարգով մահապատժի դատապարտվեց հայերի և արաբների դեմ գործած հանցանքների համար: Հայտնի է սակայն, որ նա էլ Էնվերի ու Թալեաթի հետ միասին ապաստան գտավ Եվրոպայում, որտեղից փորձում էր միջնորդի դեր ստանձնել բուլղարիայի և քեմալիստական կառավարությունների միջև: Այս հարցով մի քանի անգամ եղել է Մոսկվայում և հերթական այցի ժամանակ Թիֆլիսում սպան-

<sup>8</sup> Ногалес Р., Четыре года под полумесяцем, Москва, 2006, стр. 28.

վել հայ վրիժառուներ Պետրոս Տեր-Պողոսյանի, Արտաշես Գևորգյանի և Ստեփան Ծաղիկյանի կողմից:

Ջեմալ փաշան սկսել է հուշեր գրել Եվրոպա տեղափոխվելուց հետո: Ինքն անձամբ շեշտում էր, որ այդ հուշերի նպատակը ռուս դիվանագետ Ա. Մանդելշտամի (1869-1949)<sup>9</sup> և ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի (1891-1967)<sup>10</sup> գրքերին հակադրվելով՝ XX դարի սկզբի թուրքական իրականության և, մասնավորապես, Առաջին համաշխարհային պատերազմի տարիների իրադարձությունների սեփական մեկնաբանության ներկայացումն է եղել:

Հուշերն առաջին անգամ տպագրվել են 1919 թ. Բեռլինում գերմաներենով: 1922 թ. Կ. Պոլսում լույս է տեսել օսմանատառ թուրքերեն, իսկ Թիֆլիսում՝ ռուսերեն տարբերակը: 1933 թ. տպագրվել է լատինատառ օրինակը: Ուշագրավ է, որ Թուրքիայում Ջեմալ փաշայի հուշերը բազմիցս սրբագրվել են, և տարբեր տարիների հրատարակությունները էականորեն տարբերվում են իրարից: Մեր օգտագործած օրինակն առավել ընդգրկուն է ներառում է նույնիսկ հեղինակի կողմից վերջնական ձեռագրում չընդգրկված հատվածներ ու սևագրեր<sup>11</sup>:

Հուշերում Ջեմալ-փաշան անդրադառնում է XX դարի սկզբի մի շարք կարևոր հարցերին՝ ներքին բյուրոկրատական խնդիրներից մինչև արտաքին քաղաքականության հիմնահարցեր: Բնականաբար, ամենից մանրամասն նկարագրված են Միրիայի խնդիրները, Սուեզի ջրանցքի մոտ ունեցած պարտությունը, սակայն քիչ տեղ չի հատկացված նաև Թուրքիա-Անտանտի երկրներ հարաբերություններին և Հայկական հարցին, որոնց համատեքստում ներկայացվում են ռուս-թուրքական հարաբերությունները:

<sup>9</sup> Mandelstam A., Le Sort de L'Empire Ottoman, Paris, 1917.

<sup>10</sup> Morgenthau H., Ambassador Morgenthau's story, New York, 1918.

<sup>11</sup> Kabacalı A., Cemal Paşa: Hatıralar, İstanbul, 2015, s. 10-11.

Չնայած, ինչպես արդեն նշել ենք, Եվրոպա մեկնելուց հետո Ջեմալը ակտիվ կապերի մեջ է եղել բոլշևիկների հետ<sup>12</sup>, իր հուշերում փաշան հանդես է գալիս որպես մոլի ռուսաստայաց: Նա նշում է, որ «Ռուսաստանն անկասկած թուրքիայի գլխավոր թշնամին էր, իսկ Ստամբուլի գրավումը՝ նրա ամենամեծ երազանքը»<sup>13</sup>: Ռուսաստանն, ըստ Ջեմալի, օսմանների բոլոր խնդիրների մեղավորն է երկրի հիմքը սասանած բալկանյան ժողովուրդների ապստամբություններից մինչև Հայկական հարցի օրակարգ գալը: Ընդ որում, նա նշում է, որ Ռուսաստանը բնավ չի մտածում քրիստոնյաների մասին, այլ առաջնորդվում է սոսկ իր շահերով: Ջեմալը ռուսական երկդիմի քաղաքականության վառ օրինակ է համարում Էդիրնեի հանձնումը թուրքերին: Երբ թուրքերը գրեթե պարտասա էին քաղաքից հրաժարվել, ռուսները չուզեցին այն տալ բուլղարացիներին, քանի որ պատրաստվում էին գրավել Ստամբուլի հետ միասին<sup>14</sup>:

Ռուս-թուրքական հարաբերություններին առավել մեծ տեղ է հատկացված Առաջին համաշխարհային պատերազմի և Հայկական հարցի համատեքստում: Խոսելով Համաշխարհային պատերազմի նախօրեին տիրող աշխարհաքաղաքական իրավիճակի մասին՝ Ջեմալը շեշտում է, որ 1878 թ. Բեռլինի կոնգրեսից հետո ուժերի դասավորվածությունը փոխվել է ոչ թուրքիայի օգտին, և մեղադրում մեծ տերություններին թուրքիան մասնատելու նկրտումների համար: Նա նույնիսկ կայսրության հիմնական դաշնակից Գերմանիային դատապարտում է անգործության մեջ: Ջեմալի հակագերմանական դիրքորոշումը պատահական չէր: Թեև թուրքիան և Գերմանիան դաշնակիցներ էին, սակայն անձամբ նա Ֆրանսիայի հետ միության կողմնակից էր, փորձել էր ֆրանսիացիների հետ կապեր հաստատել և միայն մերժում

<sup>12</sup> Խորհրդա-աֆղանական հարաբերությունների բարելավմանն աջակցելու համար անգլիական մամուլը Ջեմալ փաշային նույնիսկ «խորհրդային գործակալ» էր կոչում: Տե՛ս, Kabacalı A., Cemal Paşa: Hatıralar, İstanbul, 2015, s. 7:

<sup>13</sup> Kabacalı A., Cemal Paşa: Hatıralar, İstanbul, 2015, s. 135.

<sup>14</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Kabacalı A., նշվ. աշխ., էջ 59-61:



ատանալուց հետո համաձայնվել Թալեաթի և Էնվերի առաջարկած թուրք-գերմանական համաձայնագրի ստորագրմանը: Սակայն պատերազմի մեջ թուրքիայի ներքաշումը Ջեմալի կարծիքով անիմաստ քայլ էր, որ «Գերմանիային օգուտ չբերեց, բայց թուրքայի համար ինքնասպանությանը հավասարագոր էր»<sup>15</sup>: Հատկանշական է, որ այս տողերը դուրս են մնացել թուրքիայում 1930-ականներին տպագրված լատինատառ տարբերակից, քանի որ ամենայն հավանականությամբ չէին համապատասխանում թուրք-գերմանական մերձեցման ոգուն:

Վերադառնալով ռուս-թուրքական հարաբերությունների արտացոլմանը՝ նշենք, որ Ջեմալ փաշան ռուսներին հայկական կոտորածները սաղրելու մեղադրանք է ներկայացնում: Թեև Հայկական հարցի ջեմալական տարբերակը պետք է դառնա լրիվ առանձին ուսումնասիրության թեմա, սակայն ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում հարկ ենք համարում կանգ առնել փաշայի երկու պնդման վրա: Նախ ըստ Ջեմալի՝ դարեր շարունակ կայսրության հլուհնազանդ հպատակ եղած հայերը XIX դարի կեսերին իբրև թե ամբողջապես ուժացած էին, չէին տիրապետում մայրենի լեզվին, հեռու էին ազգային մշակույթից և թերևս միայն կրոնով էին տարբերվում թուրքերից: Միայն հայաբնակ շրջաններում ռուսների՝ ավելի ճիշտ ռուսական գործակալների, ներդրումից հետո հայերի մոտ սկսեց ձևավորվել ազգային ինքնագիտակցություն և որպես ռուսական սաղրանքների արդյունք՝ անկախության ձգտում: Բոլորին հայտնի պատմական իրողությունները չվերաշարադրելով՝ նշենք միայն, որ հայերը մշտապես փորձել են պայքարել կորցրած պետականությունը վերականգնելու համար: Անշուշտ, այս համատեքստում Ռուսաստանը, լինելով տարածաշրջանում աշխարհաքաղաքական շահեր ունեցող քրիստոնեական պետություն, դիտարկվում էր որպես հայերին և քրիստոնյաներին աջակցող, բայց ոչ երբեք հայ ժողովրդի ինքնությունը ստեղծող

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 141:

ուծ: Ըստ Ջեմալի՝ սակայն քրիստոնյաները պարզապես չէին կարող իրենց կամքով ցանկանալ մտնել Ռուսաստանի կազմի մեջ, քանի որ Օսմանյան պետության շնորհած լայն իրավունքներն այնտեղ չէին ունենալու:

Ուշագրավ է, որ Ջեմալի կարծիքով Օսմանյան կայսրությունում գործող միլլեթների համակարգն աշխարհում ամենաքրոնիականն էր, որի հետ եվրոպական «մարդու իրավունքների» գաղափարախոսությունները չէին էլ կարող մրցակցել և որից եվրոպական տերությունները պետք է օրինակ վերցնեին<sup>16</sup>: Ռուսաստանն այս պարագայում ամեննին շահեկան դերում չէր ցարական տիրապետության տակ ապրող ցյուղացիների դրության հետ համեմատականներ տանելով՝ Ջեմալը նշում է, որ թուրքահպատակ քրիստոնյաներն չէին կարող ուզել հայտնվել նման վիճակում:

Վերացական քննարկումներից կոնկրետ փաստերի անցնելով՝ Ջեմալը պնդում է, որ 1894-96 թթ. համալայն կոտորածները ևս ռուսներն են սադրել, քանի որ ցանկանում էին օրինականացնել կայսրության գործերին իրենց միջամտությունը: Սրան զուգահեռ նա չի մոռանում շեշտել, որ նույն ժամանակաշրջանում հայերի կողմից կոտորվել են մի քանի անգամ շատ քրդեր և թուրքեր: Նույն տրամաբանությամբ Հայոց ցեղասպանության սադրումը ևս ռուսների գործն է համարվում: Սակայն այս համատեքստում առավել հետաքրքրական է այն փաստը, որ Ջեմալը իր պնդմամբ անձամբ դեմ է եղել տեղահանությանը: Ավելին, ինքը փորձել է օգնել հայ կանանց ու որբերին, պատսպարել նրանց: Ջեմալ փաշան սակայն «մոռանում է» նշել, որ իր կողմից ապաստան ստացած բոլոր հայ երեխաները բռնի իսլամացվել են, քանի որ հայ որբերի համար ստեղծված մանկատներում Ջեմալը և նրա հրավերով ժամանած հայտնի գրող Հալիդե Էդիփը հայ երեխաների իսլամացմամբ էին զբաղված:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 363:

Հուշերի վերջում «Ապագայի մասին մտորումներ» վերնագրի ներքո Ջեմալը բացահայտ գոհունակությամբ նշում է, որ ցարական Ռուսաստանն այլևս չկա, այսինքն՝ Թուրքիայի հիմնական թշնամին պարտված է<sup>17</sup>: Միայն Թուրքիայի սահմանների մոտ ձևավորված անկախ Հայաստանը և Ստամբուլում դեռ բնակվող հայ համայնքն են վտանգի աղբյուր հանդիսանում:

Այսպիսով, իր հուշերում Ջեմալ փաշան ռուս-թուրքական հարաբերությունները ներկայացնում է գրեթե բացառապես փոքրամասնությունների և հատկապես հայերի խնդրի համատեքստում: Նա չի կանգնում առանձին դրվագների, պատմական փաստերի վրա՝ սահմանափակվելով ընդհանրական մեկնաբանություններով: Հատկանշական է, որ Ջեմալ փաշան, տալով իրականության խիստ թուրքամետ և ճշմարտությունից բավական հեռու պատկեր, արդեն 1919 թ. ուրվագծում է թուրքական նոր պատմագրության քարոզչության և ժխտողականության հիմնական կետերը, որոնց վրա արդեն 1930-ականներին Թուրքական պատմագիտական ընկերությունը վերախմբագրեց օսմանյան կայսրության պատմությունը:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 414:

РУССКО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В МЕМУАРАХ АХМЕДА  
ДЖЕМАЛЬ-ПАШИ

*Наира Погосян*  
(резюме)

Мемуары являются важным источником исторических исследований. В статье представлены мемуары видного деятеля младотурецкой партии Джемаль-паши. Основной акцент сделан на оценку русско-турецких отношений в контексте Армянского вопроса.

RUSSIAN-TURKISH RELATIONS IN THE MEMOIRS OF AHMED  
CEMAL PASA

*Naira Poghosyan*  
(summary)

Memoirs are among the most important sources for historical research. This paper is focused on the memoirs of the one of the most important members of Young Turks Ahmet Cemal Paşa. The main topic of our research is his attitude to Russian-Turkish relations in the context of Armenian Question.

*Լիլիթ Մովսիսյան\**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ  
ԲՆՈՒՅԹԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ  
ՊԱՏԿԵՐԸ

*Բանալի բառեր՝ մեդիալեզվաբանություն, ադրբեջանական մամուլ, մամուլի լեզու, բառապաշար, հասարակական-քաղաքական բառապաշար, ռազմական բառապաշար, տերմիններ, փոխառություններ:*

Վերջին տասնամյակներում ժամանակակից լեզվաբանության մեջ շրջանառության մեջ է մտել, այսպես կոչված, «մեդիալեզվաբանությունը»: Զանգվածային լրատվամիջոցների լեզվի համար մասնագետներն առանձնացնում են որոշ բնորոշ գծեր.

1. խոսքային հաղորդակցության ոլորտների քանակական և որակական բարդացում (խոսքը նախ և առաջ համացանցի մասին է).
2. առանձին սոցիալական խմբերի խոսքային վարքագծի կանոնների զանազանություն.
3. հրապարակախոսական ոճի լեզվի ժողովրդականացում և զանգվածային հաղորդակցության սահմանների ընդլայնում.
4. խոսքային ժամանակակից նորաձևություն և միտումներ.
5. ՋԼՄ-ների լեզվի «ամերիկանացում»<sup>1</sup>:

Խորհրդային Միության փլուզումից հետո նորանկախ Ադրբեջանում գործող պետական լրատվամիջոցներին զուգահեռ

\* ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դասախոս:

Էլ. փոստ՝ [lilit-movsisyan@ysu.am](mailto:lilit-movsisyan@ysu.am)

<sup>1</sup> Язык СМИ как объект междисциплинарного исследования, Отв. ред: д.ф.н. проф. Володина М.Н., М., 2003, с. 28.

հիմնվում են բազմաթիվ, բազմաբնույթ մասնավոր նոր ՁԼՄ-ներ: Ոլորտի փոփոխությունները չեն շրջանցում աղբբեջաներենի կիրառության ամենատարբեր մակարդակները: Փոփոխություններն ակնառու են հասկապես էլեկտրոնային մամուլի բառապաշարում, որը, ըստ էության, հանդես է գալիս որպես թե՛ որպես փոփոխությունների արտացոլող, և թե՛ դրանց կիրառման առաջամարտիկ<sup>2</sup>:

Ընդհանուր առմամբ, XX դարի վերջին և XXI դարի սկզբին աղբբեջաներենի բառային կազմի մամուլում արտացոլվող փոփոխությունները հասարակական զարգացման տարբեր փուլերում աչքի են ընկել որոշակի առանձնահատկություններով:

1. Հասարակական-քաղաքական բնույթի հրապարակումներ. Ինչպես վկայում է միջազգային փորձը, զանգվածային լրատվամիջոցներում՝ մասնավորապես մամուլում առավել հաճախ և հանգամանակից անդրադարձ է կատարվում հասարակական-քաղաքական իրադարձություններին և դրանց վերլուծությանը<sup>3</sup>:

Ժամանակակից աղբբեջանական մամուլի լեզվի բառային շերտում հասարակական-քաղաքական բառապաշարը ևս ունի առաջատար դիրք: Փաստենք, որ աղբբեջաներենի քաղաքական բառապաշարն համեմատաբար աչքի է ընկնում համակարգվածությամբ, կայունությամբ և հստակ շարադրումներով: Որպես կանոն, քաղաքական տեքստերում լայնորեն չեն կիրառում գեղարվեստական-լեզվական միջոցներ: Քաղաքական նորությունների շարքում ներկայացվում են ինչպես զուտ տեղեկատվություն պարունակող հրապարակումներ, այնպես էլ հարցազրույցներ, վերլուծություններ, քաղաքական կանխատեսումներ, ինչպես նաև ներկայումս լայն տարածում ստացած

<sup>2</sup> Axundov A., Dilimizə dövlət qayğısı.- "Azərbaycan dili və ədəbiyyatı tədrisi", № 3, 2001, s. 9.

<sup>3</sup> Демьянков В.З., Интерпретация политического дискурса в СМИ, <http://www.infolex.ru/POLIT2.HTM>

բլոգներից ուղղորդված հրապարակումներ: Մամուլի էջերում հասարակական-քաղաքական իրադարձությունները լուսաբանվում են դրանք արտացոլող բառերի և տերմինների օգնությամբ: Որոշակի ժամանակահատվածում քաղաքական նոր տերմինները թարգմանված նյութերի հետ միասին ներթափանցում են աղբբեջաներեն: Օրինակ, վերջին տասնամյակում լեզու ներթափանցած հասարակական-քաղաքական բառերից առանձնացնենք մի քանիսը, որոնք ակտիվորեն գործածվում են ժամանակակից աղբբեջանական մամուլում՝ geopolitik-աշխարհաքաղաքական, revanş-ոնանշ, korrupsioner-կոռուպցիոն, chaos-քաոս, konfidensial-զաղտնի, konfliktolog-կոնֆլիկտաբան, media-մամուլ, kollaps-փլուզում, brifinq-ճեպագրույց և այլն:

Որպես կանոն, աղբբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցներում քաղաքական բաժինն ունենում է իր ենթաբաժինները՝ ներքին քաղաքական լրահոս, միջազգային քաղաքական նորություններ, տարածաշրջանային լուրեր, վերլուծություններ, հարցազրույցներ և այլն: Ստորև ներկայացնենք մեջբերումներ աղբբեջանական ժամանակակից մամուլի քաղաքական բաժիններից:

*Արտաքին քաղաքականություն.* արտաքին քաղաքական լրահոսն աղբբեջանական մամուլում բավականաչափ հագեցած է, այն ընդգրկում է ինչպես պաշտոնական լրահոսը, այնպես էլ՝ հասարակական շերտերը: Որպես տեղեկատվության հիմնական աղբբյուր ծառայում են Աղբբեջանի ԱԳՆ-ն, նախագահի աշխատակազմը և այլ պետական կառույցների համապատասխան վարչությունները: Աղբբեջանական տեղեկատվական լրատվամիջոցներում սակավ են պաշտոնական տեսակետից ակնհայտ տարբերվող հրապարակումները, վերլուծությունները, որոնք գտնվում են համապատասխան կառույցների ուշադրության և վերահսկողության ներքո:

Որպես արտաքին քաղաքականության բաղկացուցիչ մաս, մամուլում անդրադարձ է կատարվում նաև ԼՂ հակամարտության շուրջ ընթացող քաղաքական իրադարձություններին և բա-



նակցություններին: Սույն թեմայով հողվածներում կարելի է հանդիպել որոշ անփոփոխ արտահայտությունների՝ «անջատողական իշխանություն», «ԼՂ դրածո նախագահ», «ոչ լեզիտիմ իշխանություններ» և այլն:<sup>4</sup>

*Ներքին քաղաքականություն.* աղբբեջանական մերօրյա էլեկտրոնային մամուլի՝ երկրի ներսում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններին վերաբերող հրապարակումներն ավելի ընդգրկուն են: Մամուլն անդրադառնում է երկրի ներքին քաղաքական կյանքի հիմնական անցուղարձին՝ կրկին իր վրա կրելով գրախոսության դրոշմը:

*Միյուրք.* Աղբբեջանում պետական մակարդակով տարվում է քարոզչություն աղբբեջանցի ժողովրդի՝ հնագույն լինելու մասին «փաստերը» ողջ աշխարհին ներկայացնելու ուղղությամբ: Ի լրումն դրա, ներկայացվում է «աղբբեջանական մեծ և ազդեցիկ սփյուռքը», որն իր «հայրենանվեր» գործունեությամբ ծառայում է «աղբբեջանական ինքնագիտակցության» պահպանմանը երկրի սահմաններից դուրս, պահպանում է կապը հայրենիքի Աղբբեջանի հետ և իր ռեսուրսները ծառայեցնում ի նպաստ Աղբբեջանի պետական շահերի: Որպես այդ քաղաքականության շարունակություն, աղբբեջանական առաջատար կայքերում հատկացված է առանձին տեղեկատվական բաժին: Սույն թեմաներին վերաբերող բառապաշարն ունի լայն ընդգրկում: Աշխատանքները հատկապես ավելի են ակտիվացել Աղբբեջանում սփյուռքի հետ աշխատանքների գծով Պետական կոմիտեի ստեղծումից հետո:

2. *Ռազմական ոլորտ.* ռազմական տերմինաբանությունն ընդգրկում է այն բառերն ու բառակապակցությունները, որոնք արտահայտում են ռազմական հասկացություններն ու հարա-

բերությունները: Ռազմական տերմինաբանությունն իր մեջ ներառում է բոլոր զորատեսակները, զինվորական կոչումները, զենքերի, զինամթերքի ավանդական և նորագույն տեսակների անվանումները, զինվորական տեխնիկան և միջոցները, ռազմական գործողությունների ապահովման օպերատիվ միջոցները, ռազմական-ինժեներական տեխնիկան, համընդհանուր քաղաքացիական և ռազմական տրանսպորտային միջոցները, վառելիքի տեսակները, նյութական, բժշկական ենթակառուցվածքները, էներգամատակարարման և այլ արտադրություններ և այլն:

Աղբբեջանական մամուլում հաճախ անդրադարձ կատարվող ոլորտներից մեկն էլ ռազմականն է: Ռազմական բառապաշարն աղբբեջաներենում ունի ինքնատիպ և կայուն բնութագիր: Աղբբեջաներենի ռազմական բառապաշարը սերտորեն կապված է արաբերենից, պարսկերենից, ռուսերենից և արևմտաեվրոպական լեզուներից փոխառված տերմինների հետ: Տեսական ժամանակ որպես զինվորականների շփման միջոց ծառայել է ռուսերենը, խորհրդային կարգերի փլուզումից հետո պատկերը սկսել է փոխվել: Աստիճանաբար որոշ ռուսերեն բառեր դուրս են գալիս ակտիվ գործածությունից, սակայն մինչև օրս ակնառու է այդ լեզվի հսկայական ազդեցությունը վերոնշյալ ոլորտում: Ժամանակի ընթացքում ռազմական ոլորտին վերաբերող աղբբեջաներենի բառապաշարը զարգացել է ժամանակի պահանջներին համապատասխան՝ հարստանալով նաև ի հաշիվ նոր փոխառությունների: Աղբբեջանի անկախացումից հետո ռազմական տերմինաբանությունը սկսեց հարստանալ նաև ցեղակից լեզուներից փոխառություններ կատարելու շնորհիվ, մասնավորապես՝ թուրքերենից: Մամուլում առավել հաճախ հանդիպող ռազմական փոխառյալ տերմիններից առանձնացնենք, օրինակ, артиллериya - հրետանի, автoмат-ինքնաձիգ, батальон - գումարտակ, бомба-ռումբ, дивизиya - դիվիզիա, командир - հրամանատար, маневр - մանևր, танк - տանկ, лейтенант - լեյտենանտ, майор - մայոր, пистоlet - ատրճանակ, ракет - հրթիռ, serjan - սեր-

<sup>4</sup> «Gec-tez Azərbaycanın ərazi bütövlüyü qəbul edilməş beynəlxalq sərhədlər çərçivəsində bərpə olunacaq və əgər bu tez baş versə region üçün daha yaxşı olacaq.» - «Վաղ թե ուշ Աղբբեջանի տարածքային ամբողջականությունը միջազգային փաստաթղթերի շրջանակներում վերականգնվելու է և, որքան դա վաղ տեղի ունենա, ավելի լավ տարածաշրջանի համար»:

ժանտ, polkovnik - գնդապետ, rota - վաշտ, trivoqa - տազնապ, minomyot - ականանետ, pulemyot - գնդացիք, admiral - ծովակալ և այլն:

ԼՂ հակամարտություն. Հատկանշական է, որ գրեթե բոլոր ադրբեջանական ազդեցիկ էլեկտրոնային լրատվամիջոցներին բնորոշ է ռազմական բաժնին կից կամ առանձին ևս մեկ բաժնի առկայությունը, որը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը: Մասնավորապես, 2014թ. օգոստոսից հետո այդ նորությունների բովանդակությունը ևս նույնատիպ էր կապված Հայաստան-Ադրբեջան պետական սահմանին և Ղարաբաղ-Ադրբեջան զինված ուժերի շփման գծում տեղի ունեցած դեպքերի հետ: Այս թեմաներին վերաբերող լուրերը հիմնականում վերաբերում են զինադադարի ռեժիմի խախտումներին, օգտագործված զինատեսակներին և արձակված կրակոցների քանակին, ներկայացվում են սահմանամերձ գյուղերի անվանումները (եթե կա տեղեկություն, ապա նաև խոսվում է երկուստեք վիրավորների կամ զոհերի մասին), վերջում էլ պարտադիր կերպով նշվում է, որ «ադրբեջանական զինված ստորաբաժանումները տիրապետում են օպերատիվ իրավիճակին և աներաժեշտության դեպքում պատասխան հարված հասցնում հայկական զինված ուժերի կրակակետերին, դիրքերին և խրամատներին»<sup>5</sup>:

Պայմանավորված արդեն 2016թ. ապրիլի սկզբին Ղարաբաղ-ադրբեջանական հակամարտ գորքերի շփման գծում Ադրբեջանի կողմից հրահրված 1994թ. հրադադարից հետո աննախահեղա լայնամասշտաբ ռազմական գործողություններով՝ ադրբեջանական մամուլում ռազմական բնույթի հրապարակումներն ավելացան թե՛ իրենց քանակով, թե՛ ծավալով: Ընդհանրապես, ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին և դրանից տևական

ժամանակ անց ևս ադրբեջանական էլեկտրոնային և ոչ էլեկտրոնային լրատվամիջոցների առանցքում ռազմական գործողություններն էին և դրանց շուրջ ծավալվող իրադարձությունները: Հարկ է նշել, որ սույն ոլորտում ապատեղեկատվությունը գտնվում է «բարձր մակարդակի վրա»:

Բացի զուտ տեղեկատվական բնույթի և ռազմական տերմիններով հագեցած լուրերից, մամուլում կարելի է տեսնել նաև մասնագիտական վերլուծություններ, ռազմական թեմայով հարցազրույցներ, քննարկումներ: Արդյունքում ադրբեջանական մամուլում զետեղված նյութերը հագեցած էին լինում այնպիսի ռազմական տերմիններով և արտահայտություններով, որոնք մինչ այդ այդքան հաճախ չէին գործածվում լրագրողների կողմից. օրինակ, minaatan-ականանետ, qumbaraatan - նոնականետ, təxribat - դիվերսիա, silah növu - զինատեսակ, snayper - դիպուկահար, təmas xətti - շփման գիծ, cəbhə - ռազմաճակատ, atəşkəs - զինադադար, atəş açmaq - կրակ բացել, canlı qüvvə - կենդանի ուժ, hərbi texnika - զինտեխնիկա, tank - հրասայլ, keşfiyyat - հետախուզություն, nəzarət etmək - վերահսկել, hücum - հարձակում, münaqişə - հակամարտություն, münaqişəli qoşunlar - հակամարտող զորքեր, könüllü - կամավոր և այլն:

Ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցների քաղաքական և ռազմական բնույթի տեղեկատվության ավելի քան տասնամյա մշտադիտարկման արդյունքում կարելի է եզրակացնել, որ ընդհանուր առմամբ կայքերը միմյանցից չեն տարբերվում լեզվական, մասնավորապես բառապաշարային առանձնահատկություններով: Գրեթե բոլոր կայքերում համանման պատկեր է՝ նույն բառապաշարը, համանման քերականական կառույցները: Մա, մի կողմից, կարող է վկայել ադրբեջաներենի ոչ հարուստ բառապաշարի, մյուս կողմից՝ լրատվամիջոցների նկատմամբ լուրջ պետական կենտրոնացված վերահսկողություն առկայության մասին: Հավելենք, որ սույն վերահսկողությունը առավել ակնառու է հատկապես ռազմական ոլորտը լուսաբանող լրատվամիջոցների նկատմամբ:

<sup>5</sup> Azərbaycan Ordusu düşmən mövqelərində 120 atəş zərbəsi endirib, <http://az.trend.az/azerbaijan/karabakh/2477962.html>

*Лилит Мовсисян*

(резюме)

В статье представлены основные тенденции и общая картина политического и военного словарного состава азербайджанского языка в современных электронных СМИ. Анализированы внешнеполитические и внутривнутриполитические публикации азербайджанской прессы, особенно отчетливо была рассмотрена карабахская тема. Отметим, что деятельность СМИ в Азербайджане находится под непосредственным контролем азербайджанских властей. В статье рассматривается реакция азербайджанских электронных СМИ на апрельских 4-х дневных военных действий на линии соприкосновения карабахско-азербайджанских вооруженных сил.

THE VOCABULARY OVERVIEW OF MILITARY AND POLITICAL PUBLICATIONS OF MODERN AZERBAIJANI E-MEDIA

*Lilit Movsisyan*

(summary)

The article presents the main trends and the overall picture of political and military vocabulary of Azerbaijan in modern electronic media. Foreign and internal political publications of azerbaijani press have been analyzed, particularly the Karabakh issue has been closely observed. Media activity in Azerbaijan is under the direct control of the authority of Azerbaijan. In the article the response of Azerbaijani media about the April's four-day military operations in the contact line of Nagorno-Karabakh and Azerbaijan's armed forces is separately being treated.

КАЗАХСТАН И АРМЕНИЯ – ОСНОВНЫЕ ВЕКТОРЫ МЕЖГОСУДАРСТВЕННОГО СОТРУДНИЧЕСТВА

**Ключевые слова:** *Армения, Казахстан, сотрудничество, диалог, народы*

Сегодня во внешней политике Казахстана важное значение имеет укрепление и дальнейшее развитие разносторонних отношений с Арменией. Со дня установления дипломатических отношений между нашими странами налажен конструктивный и доверительный диалог на всех уровнях, свидетельством чему является интенсивность встреч, как в двустороннем, так и многостороннем форматах. Во многом, это обусловлено совместным историческим прошлым, наличием опыта мирного сосуществования и взаимного сотрудничества в рамках некогда единого государства.

Как отметил Президент Республики Казахстан Н.А.Назарбаев: «Между нашими странами налажен конструктивный и доверительный диалог на всех уровнях. Мы заинтересованы в углублении и расширении двусторонних торгово-экономических и культурно-гуманитарных отношений с Арменией»<sup>1</sup>.

Если заглянуть в историю наших взаимоотношений, согласно некоторым источникам, волна миграции армян в Центральную Азию в начале XIX века в значительной степени была вызвана неблагоприятными социально-экономическими условиями в

\* ՀՀ-ում Ղազախստանի Հանրապետության դեսպանության դեսպանորդ-խորհրդակցական

<sup>1</sup> [http://www.akorda.kz/ru/page/page\\_215042\\_segodnya-v-akorde-prezident-kazakhstan-a-nursultan-nazarbaev-prinyal-veritelnye-gramoty-ot-vnov-nazn](http://www.akorda.kz/ru/page/page_215042_segodnya-v-akorde-prezident-kazakhstan-a-nursultan-nazarbaev-prinyal-veritelnye-gramoty-ot-vnov-nazn)

Восточной Армении. В этот период на территории Казахстана жили, в основном, армяне-торговцы, которые двигались по Шелковому пути<sup>2</sup>.

Еще один этап миграции армян в Казахстан связан с особенностями политического режима во время СССР: сначала сюда приезжали осужденные в сталинское время, затем целинники, последующие ветки миграции были связаны с новой историей, т.е. с перестройкой, и после этого, в силу обстоятельств, сюда прибыли переселенцы из Закавказья. До распада СССР в Казахстане, по данным последней переписи населения, проживало более 19 тыс. армян<sup>3</sup>.

В Казахстане в бытность СССР армяне занимали высокие должности: посты министров, заместителей министров и др. В начале 1933 году Левон Мирзоян был утвержден секретарем Казахского Краевого Комитета ВКП(б). «Он был направлен в Казахстан в тот период, когда его предыдущее руководство своей абсурдной, догматической хозяйственной и организационной политикой довело население до крайнего обнищания, а экономику – до полного коллапса»<sup>4</sup>. В 1937 году первым секретарем ЦК КП Казахстана был Л.Мирзоян, который был расстрелян с формулировкой "за казахский национализм". Армяне имели достаточно прочные позиции в сфере науки и культуры, которые сохранены и в наше время. Среди выдающихся деятелей республики наиболее известными были: Георгий Аракелов – заместитель министра связи; Артем Вартамян – заместитель

<sup>2</sup> О перспективах армяно-казахстанских отношений, <http://hayer.kz/c-perspektivakh-armyano-kazakhstanskikh-otnoshenij/>. С. Петросян, статья: Две страны - две родины, Posted on 29/08/2014 by Maxim Dallakyan

<sup>3</sup> Дана Муканова-Хуршудян, Эдуард Хуршудян «Армяне в Казахстане: история и современность», [http://www.ca-c.org/journal/2001/journal\\_rus/cac-03/21.khuruu.shtml](http://www.ca-c.org/journal/2001/journal_rus/cac-03/21.khuruu.shtml)

<sup>4</sup> «Левон Мирзоян в Казахстане», сборник документов и материалов «Казахстан», 2001, стр 4.

министра цветной металлургии, первый заместитель председателя Совета Министров Казахской ССР (1966-1975); Евгений Ежиков-Бабаханов – заместитель министра монтажных и специальных строительных работ; Михаил Тер-Вартанов – первый заместитель министра автомобильных дорог<sup>5</sup>.

Поскольку миграция в Казахстан происходила в несколько этапов, внутри самой общины имеется некоторая дифференциация. По мнению экспертов, часть армянской диаспоры, попавшая сюда в период репрессий, быстро русифицировалась. Что касается представителей новой волны мигрантов, то среди них много людей, желающих сохранить свою национальную самобытность. В настоящее время основную часть диаспоры составляют служащие и бизнесмены.

В настоящее время в Казахстане армянская диаспора насчитывает более 40 тысяч человек. В крупных городах зарегистрировано девять армянских национально-культурных центров. Общины проводят мероприятия, посвященные событиям и памятным датам национальной истории. Воскресные армянские школы действуют в Алматы, Актобе, Павлодаре, Костанаяе. Наибольшая по численности община (6-6,5 тысяч человек) проживает в Алматы. Председатели армянских общин Алматы и Костаная являются постоянными представителями в Ассамблее народа Казахстана, которая действует как коллегиально-совещательный орган при Президенте и занимается вопросами реализации интересов всех этнических групп и сохранения национально-культурного многообразия Казахстана<sup>6</sup>.

Еще в 2007 году начат выпуск армянской национальной газеты «Наири» тиражом 5 000 экземпляров в месяц. Хорошим подарком детям стало издание букваря на армянском языке.

<sup>5</sup> Дана Муканова-Хуршудян, Эдуард Хуршудян «Армяне в Казахстане: история и современность», [http://www.ca-c.org/journal/2001/journal\\_rus/cac-03/21.khuruu.shtml](http://www.ca-c.org/journal/2001/journal_rus/cac-03/21.khuruu.shtml)

<sup>6</sup> Газета «Республика Армения», 15 января 2015 года, стр.16

Увидели свет книги об известных армянах. Армянский культурный центр в Алматы ежегодно проводит благотворительные акции, концерты, Дни культуры и заседания “круглых столов”<sup>7</sup>.

Общеизвестно, что армянская диаспора Казахстана является одним из важных факторов дружественных отношений между Астаной и Ереваном, создавая «живой мост» между нашими народами. Анализ исторических связей наших народов дает возможность осознать глубину и прочность взаимоотношений двух государств.

На вопросе развития двусторонних отношений в постсоветский период следует остановиться особо. Со времени обретения независимости Республика Казахстан и Республика Армения развивают двусторонние отношения в духе партнерства и взаимовыгодного сотрудничества. Основными документами, регламентирующими двусторонние отношения, являются Договор об основах отношений между Республикой Казахстан и Республикой Армения (19 января 1993 года) и Договор о дружбе и сотрудничестве между Республикой Казахстан и Республикой Армения, который был подписан в ходе официального визита Президента Армении Р.Кочаряна в Казахстан (1-2 сентября 1999 года)<sup>8</sup>.

Политический диалог поддерживается на международных площадках и через посольства двух стран. Обе страны разделяют общепринятые принципы международного права, занимают схожие позиции по многим международным вопросам. Армению и Казахстан также объединяет то, что наши страны входят в одну систему безопасности - ОДКБ.

Анализ межгосударственного сотрудничества Казахстана и Армении позволяет выделить его основные направления. В первую очередь, это, безусловно, союзные отношения. Важным

направлением как двустороннего, так и многостороннего сотрудничества и взаимодействия в последнее время стали распространение, исследование и продвижение евразийских идей<sup>9</sup>.

Если посмотреть на торгово-экономические отношения двух стран, то можно сделать следующие выводы: анализ показателей взаимной торговли сегодня показывает, что причина продолжившегося спада двусторонней торговли обусловлена уменьшением в ее доле объемов экспорта РК в Армению, связанной с сокращением экспорта проката плоского из железа и нелегированной стали, составлявших в предыдущие годы большую часть товаров, вывозимых из Казахстана в Армению.

При этом с точки зрения продвижения казахстанского экспорта на армянский рынок, имеется достаточный потенциал. Анализ статистических данных по импорту Армении в сравнении с данными по экспорту Казахстана за рубеж, и экспорту Казахстана в Армению показал, что рынок Армении представляет определенный потенциал для экспорта казахстанской обработанной продукции. Это свидетельствует о том, что на рынке Армении имеется ниша, которую, при прочих благоприятных обстоятельствах, может занять казахстанская продукция. Данные свидетельствуют, что товарные позиции экспорта Казахстана на мировой рынок совпадают по многим импортным статьям Армении. Так, к перспективной казахстанской продукции для экспорта на рынок Армении можно отнести:

- продукты животного и растительного происхождения;
- продукция химической промышленности;
- древесина, лесоматериалы и целлюлозно-бумажные изделия;
- текстиль и текстильные изделия;

<sup>9</sup> Сотрудничество Республики Казахстан с Республикой Армения// официальный сайт МИД РК, режим доступа <http://mfa.gov.kz/index.php/ru/vneshnyaya-politika/sotrudnichestvo-kazakhstan/sotrudnichestvo-so-stranami-sng/12-material-orys/425-sotrudnichestvo-respubliki-kazakhstan-s-respublikoj-armeniya>

<sup>7</sup> Там же

<sup>8</sup> А.Сафарян, А.Атаев, статья: «К вопросу о сотрудничестве между Арменией и Казахстаном», журнал «XXI-й Век», №4(33), 2014г., стр.6.

- машины, оборудование, приборы и аппараты.

Что касается сдерживающих факторов, то основным препятствием, не позволяющим наращивать торгово-экономические связи Казахстана с Арменией, остается отсутствие оптимальных транспортных путей между двумя странами.

В настоящее время зарубежные товары поступают в Армению по маршруту «порт Кавказ (Россия, Черное море) – порт Поти (Грузия) – Армения». В ограниченном количестве товары из РК и обратно в страну пребывания поступают через иранские порты на Каспии и далее автомобильным маршрутом в Армению (железнодорожное сообщение между Ираном и Арменией отсутствует). Перевозка грузов по вышеуказанным маршрутам приводит к высоким транспортным издержкам, как на казахстанские товары, так и на армянские, значительно снижая рентабельность импорто-экспортных операций между двумя странами<sup>10</sup>.

По оценкам армянских местных экспертов, определенные подвижки в долгосрочной перспективе возможны в случае строительства железной дороги, соединяющей Армению и Иран, с последующей прокладкой от нее ветки к железной дороге «Узень (Казахстан) – Кызылкая-Берекет-Этрек (Туркменистан) – Горган (Иран)».

Таким образом, положительный импульс оживлению торгово-экономических связей между РК и РА могло бы придать решение вопроса прокладки оптимального маршрута для взаимной доставки грузов, а также установления регулярного авиа-сообщения между деловыми центрами двух стран.

В свою очередь Казахстан является привлекательной зоной для ведения малого и среднего бизнеса гражданами Армении. Этому способствует наличие в Казахстане экономически актив-

<sup>10</sup> Национальная статистическая служба Республики Армения, <http://www.armstat.am/ru>

ной армянской диаспоры и благоприятные условия для предпринимательства<sup>11</sup>.

Еще одним важным вектором межгосударственного сотрудничества является развитие культурно-гуманитарных связей между Казахстаном и Арменией, подкрепленное Соглашением о сотрудничестве в области культуры (ноябрь 2006 г.).

С 2010 года при поддержке Посольства Казахстана в Армении при Кафедре тюркологии Ереванского государственного университета действует Центр казахского языка, культуры и истории<sup>12</sup>.

В 2010 году преподаватели кафедры тюркологии ЕГУ и научные сотрудники Института арменистики ЕГУ Л. Саакян и профессор А. Сафарян начали исследование армяно-кыпчакских рукописей, хранящихся в Институте древних рукописей имени Месропа Маштоца – Матенадаране, был исследован и описан уникальный памятник письменности XVII-го века – «Рукопись Тер-Аветика» (Львов), содержащий данные по фонетике, грамматике и лексике кыпчакского-казахского языка. Как известно, востоковеды не раз указывали на необходимость многостороннего изучения армяно-кыпчакских памятников в сравнении с «Кодекс-Куманикусом» и караимскими источниками, учитывая, что армянская графика лучше отображает фонетику тюркских языков, чем латиница или еврейская письменность<sup>13</sup>.

<sup>11</sup> Торгово-экономическое сотрудничество. Об экономическом сотрудничестве между Республикой Казахстан и Республикой Армения// официальный сайт посольства Республики Казахстан в Республике Армения, режим доступа <http://www.kazembassy.am/?id=63&lng=1>

<sup>12</sup> См. подробнее А. Сафарян, Ж. Адилбаев, Об армяно-казахских культурных связях и научном сотрудничестве между Арменией и Казахстаном, Вестник Евразийского национального университета имени Л.Н. Гумилева, (Научный журнал) №1 (110), Астана, 2016, стр. 114

<sup>13</sup> См. А. Сафарян, Л. Саакян. О филологической ценности армяно-кыпчакских рукописей XVII в., хранящийся в Матенадаране (Ереван), Тезисы международного тюркологического симпозиума «Тюркский мир: история и современность», Евразийский Национальный Университет им. Л.Н. Гумилева, Астана,

В целом, необходимо отметить, что представители культуры и искусства двух стран регулярно проводят встречи на различных международных и региональных конкурсах, концертах и других мероприятиях. Сотрудничество Казахстана и Армении в культурно-гуманитарной сфере содействует укреплению взаимопонимания и дружественных отношений между нашими народами.

Важным направлением культурно-гуманитарного сотрудничества является укрепление взаимодействия двух стран в области науки и образования, которое развивается в рамках Межправительственного Соглашения о сотрудничестве в области образования и науки, подписанного в апреле 2010 г. Сотрудничество между учеными Казахстана и Армении развивается, в основном, в области социально-политических наук, истории, этнологии и осуществляется в форме совместных научных исследований, конференций, семинаров. По состоянию на 2015 год в армянских ВУЗах обучается 25 граждан Республики Казахстан<sup>14</sup>.

Таким образом, накануне 25-летия установления дипломатических отношений можно констатировать наличие многопланового сотрудничества между двумя странами, которое подкреплено соответствующей договорно-правовой базой и высоким уровнем политического диалога. Дальнейшая траектория развития будет зависеть от функционирования Евразийского экономического союза и двустороннего сотрудничества во всех сферах жизнедеятельности братских народов Казахстана и Армении.

Казахстан, 2010, стр. 103, Л. Саакян, Г. Меликян, А. Сафарян, Об историко-филологической ценности рукописи N 3522 Матенадарана (писца XVII века Аветика).- "Иран-намэ – Востоковедческий журнал", т. 44-45, 2012-2013, стр. 48-51, А. Симонян, А. Сафарян, Об изучении вопросов тюрской филологии в Армении, стр. 247-248

<sup>14</sup> См. подробнее А. Сафарян, Ж. Адилбаев, Об армяно-казахских культурных связях и научном сотрудничестве между Арменией и Казахстаном, Вестник Евразийского национального университета имени Л.Н. Гумилева, (Научный журнал) №1 (110), Астана, 2016, стр. 113-118.

ՂԱԶԱԽՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՄԻՋՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժալդաս Ադիլբաև  
(ամփոփում)

Հողվածում ներկայացված են Ղազախստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջպետական համագործակցության հիմնական ուղղությունները: Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման օրվանից սկսած բոլոր մակարդակներում ծավալվել է կառուցողական և վստահելի երկխոսություն, ինչի ապացույցը ինչպես երկկողմանի, այնպես էլ բազմակողմանի հանդիպումների հաճախակիացումն է: Հայ և ղազախ ժողովուրդների պատմական հարաբերությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս հասկանալ ու գնահատել երկու պետությունների փոխհարաբերությունների խորությունն ու ամրությունը: Անկախության 25-ամյակի նախօրեին կարելի է արձանագրել, որ երկու երկրների դիվանագիտական հարաբերություններն աչքի են ընկնում տարբեր ասպարեզներում արդյունավետ փոխհամագործակցությամբ ու քաղաքական երկխոսության բարձր մակարդակով:

KAZAKHSTAN-ARMENIA:  
THE MAIN VECTORS OF CORPORATION BETWEEN  
GOVERNMENTS

*Jalghas Adilbaev*  
(summury)

This article describes the main vectors of interstate cooperation between the two allied countries.

It is common knowledge that since the establishment of diplomatic relations between Kazakhstan and Armenia get going a constructive and trusting dialogue at all levels, as is evident from the intensity of the meetings, just as in bilateral so multilateral formats.

This article analyzes the historical ties between the two nations, which makes it possible to realize the depth and strength of relations between the two states. In recent times, an important area of cooperation and collaboration are extension, research and promotion of Eurasian ideas.

Cooperation between Kazakhstan and Armenia in the cultural sphere assists to strengthen mutual understanding and friendly relations between our nations.

On the eve of the 25th anniversary of establishment of diplomatic relations are possible to ascertain the existence of multifaceted cooperation between the two countries, which is supported by a high- level political dialogue.

Адилбаев, 2010, стр. 103. Л. Садыр, Г. Мамынов, А. Сафаров, Об интеграции-корпорации между странами Казахстана и Армении, 17-е заседание «История Казахстана - Восточноевропейский журнал», г. 44-45, 2011-2013, стр. 40-41. А. Садыр, А. Сафаров, Об интеграции-корпорации между странами Казахстана и Армении, стр. 247-248.

«Ж. Адилбаев, А. Сафаров, Ж. Асылбаев, Об интеграции-корпорации между странами Казахстана и Армении, 17-е заседание «История Казахстана - Восточноевропейский журнал», г. 44-45, 2011-2013, стр. 40-41.

Ի Ր Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն



«ՓԻՅԱԹԱԹԱԽ ՓԻԼԸ ՂԱՆԴԱՂՈՒՄ»  
ԱՐՅԱԽԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՐՍԿԱԿԱՆ  
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

*Բանալի բառեր՝ Արցախ, բարբառ, հայերեն, նոր պարսկերեն, փոխառություն, բառամթերք, հնչյունափոխություն*

Արցախի բարբառը իր հայրենիքում և դրանից դուրս հայերենի ամենալայն տարածում ունեցող և հարուստ տարբերակներից մեկն է, որը պահպանում է բազմաթիվ բնիկ հայկական հնավանդ բառամիավորներ, քերականական ձևեր և պատկերավոր արտահայտչամիջոցներ:

Չնայած սրան, բարբառում վկայված են նաև զգալի թվով պարսկական փոխառություններ, որոնց առկայությունը շատ բնական պետք է համարել, եթե հաշվի առնելու լինենք, որ Արցախ երկրամասը ոչ միայն աշխարհագրական առումով անմիջականորեն հարևան է Իրանի հյուսիսային շրջանների հետ, այլ նաև ապահովելով հայկական պետական ավանդույթի տնակաությունն ու շարունակականությունը, հատկապես մելիքությունների շրջանում ունեցել է բավական ինտենսիվ շփումներ նաև պարսկերենը որպես պաշտոնական գրագրության լեզու գործածող իրանական պետական և վարչական կառույցների հետ: Հենց այս առումով էլ ուշագրավ են Արցախի բարբառում գործած պարսկական այն փոխառությունները, որոնք արտացոլում են պարսից լեզվի նոր շրջանը կամ, այլ խոսքերով փոխառվել են դասական նոր պարսկերենից, ինչի մասին են աներկբայորեն վկայում թե՛ դրանց հնչյունական կազմը, և թե՛ իմաստային առանձնահատկությունները:

\* Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ իրանագիտության ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան: Էլ. փոստ՝ [gmelikian@ysu.am](mailto:gmelikian@ysu.am)

Քննության շրջանակներում կանդրադառնանք մինչև այժմ հետազոտողների ուշադրությանը չարժանացած մի քանի փոխառությունների՝ նպատակ հետապնդելով նաև ակնբախ կերպով ցույց տալու, որ դասական նոր պարսկերեն ծագում ունեցող բառերն ուղղակիորեն մուտք են գործել նաև բարբառի ամենաառօրեական և հաճախ կիրառվող բառապաշարային շերտեր՝ ասվածն ավելի պատկերավոր դարձնելու նպատակով բարբառային բառերն ընդգրկելով նաև այս հոդվածի հենց վերնագրում:

Փի «ճարպ», բարբառում վկայված են նաև փիյաթաթախ «ճարպով թաթախված, ճարպ քսված», փիյախառնը «ճարպի հետ խառնված»,<sup>1</sup> փիյավըտ «ճարպի հոտ»,<sup>2</sup> փիյել «ճարպոտել, ճարպով պատել», փիյվել «ճարպոտվել»,<sup>3</sup> բառաբարդությունները, որոնց բոլորի արմատը փի «ճարպ» բառն է: Այն ուղղակի փոխառություն է նոր պարսկերեն «پِه [pīh] «ճարպ, ճրագու» ձևից՝ դասական պարսկական վաղ գրականության մեջ (Ռուզբեի, Նասեր Խոսրով) ավելի հազվադեպ վկայված նաև հենց փ [pī] հնչյունական տարբերակով:<sup>4</sup> Բառը փոխառվել է կամ ուղղակիորեն պարսկերեն վերջին ձևով, կամ էլ ավելի տարածված պարսկերեն տարբերակից՝ բառավերջի դիրքում նախնական /h/ բաղաձայնի անցումով /j/-ի և սրա վերջնական սղմամբ:

Փիլ «փիղ»,<sup>5</sup> բարբառն ունի նաև զուգահեռ փըղ, փեղ, փիղ տարբերակները,<sup>6</sup> որոնք արտացոլում են գրաբարից ժառանգված համահայկական բառը, որն իր հերթին սերում է միջին

<sup>1</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան (խմբ.՝ Ա. Սարգսյան), Երևան, 2001, հտ. 6, էջ 378:

<sup>2</sup> Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013, էջ 775:

<sup>3</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան (խմբ.՝ Ա. Սարգսյան), Երևան, 2001, հտ. 6, էջ 382:

<sup>4</sup> Եթե հատուկ նշում չկա, ապա հոդվածում բերվող պարսկերեն բոլոր բառերի համար տե՛ս Loyatnāme-ye Dehxodā [Դեհխոդայի բառարան] (Tehran, 1999) 16-հատորանոց պարսից լեզվի բացատրական բառարանի համապատասխան բառահոդվածները:

<sup>5</sup> Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013, էջ 766, 775, Հայոց լեզվի բարբառային բառարան (խմբ.՝ Ա. Սարգսյան), Երևան, 2001, հտ. 6, էջ 379:

<sup>6</sup> Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013, էջ 766:

պարսկերեն նախաձևից,<sup>7</sup> մինչդեռ բարբառում վկայված փիլ ձևը, դատելով լ բաղաձայնի առկայությունից փոխառություն է նոր պարսկերեն ڤیل [pīl] «փիլ» ձևից, որն արձանագրված է նաև դասական պարսկերենի վաղ գրականության մեջ (Ֆիրդուսի Ֆառուխի և այլք): Չպետք է բացառել նաև, որ բարբառային արձևը փոխառված լինի ڤیل [pīl] բառի նոր պարսկերենում ավելի հաճախ գործածական ڤیل [fīl] արաբականացված տարբերակից և Արցախի բարբառում /ֆ/ հնչյունի բացակայության պայմաններում այն արդեն հայկական բարբառային հողի վրա փոխարինվի /փ/ բաղաձայնով:

Ղանդաղ «երկար և խոր փոս»,<sup>8</sup> բարբառում առկա է նաև գուգահեռ խանդակ «հեղեղատ, մեծ փոս» տարբերակը, որն ակնհայտորեն մուտք է գործել գրական լեզվից,<sup>9</sup> մինչդեռ բուն բարբառային առաջին ձևն ուղղակիորեն հանգում է դասական նոր պարսկերեն خنداق [xandaq] «խրամ, խանդակ, երկար և խոր փոս» բառին լայնորեն վկայված պարսից դասական գրականության մեջ (Մուզանի, Խադանի, Նասեր Խոսրով և այլք): Բարբառային ղանդաղ ձևի բառակցքի բաղաձայնի հնչյունական զարգացումը պայմանավորված է բառավերջի /ղ/ բաղաձայնին առնմանության հանգամանքով, ինչը վերջնարդյունքում հանգեցնում է բառակցքի նախնական /խ/-ի լիակատար փոփոխության:

Բարբառային բառամթերքի վերոնշյալ ընդամենը մի քանի գողտրիկ նմուշները հստակորեն ցույց են տալիս, թե Արցախի հարուստ և յուրօրինակ բարբառի նյութը դեռևս սպասում է նաև համակողմանի իրանագիտական մի ուսումնասիրության, որի արդյունքները չափազանց կարևոր կարող են լինել ոչ միայն հայերենի բարբառների, այլև հենց պարսկերենի պատմության և զարգացման փուլերի վրա լրացուցիչ լույս սփռելու առումով:

<sup>7</sup> Տես Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Երևան, 1979, հտ. 4, էջ 503:

<sup>8</sup> Մարգարյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013, էջ 450-451:

<sup>9</sup> Գրական հայերենում այս բառի հին վկայությունների և ստուգաբանության համար տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Երևան, 1973, հտ. 2, էջ 330:

## О НЕСКОЛЬКИХ ПЕРСИДСКИХ ЗАИМСТВОВАНИЯХ В ДИАЛЕКТЕ АРЦАХА

Гурген Меликян  
(резюме)

В статье обсуждаются некоторые локальные слова арцахского диалекта армянского языка, которые заимствованы из новоперсидского языка. Лингвистический анализ данных заимствований ясно показывает, что в армянском диалекте Арцаха имеются несколько эксклюзивных лексических единиц новоперсидского происхождения, которые засвидетельствованы также в ранних памятниках классической персидской литературы.

## ON SOME PERSIAN BORROWINGS IN ARTSAKH DIALECT

Gurgen Melikyan  
(summary)

A few local words of New Persian origin in Artsakh dialect of Armenian language are discussed in this article. The linguistic examination of the given borrowings clearly shows that in Armenian dialect of Artsakh there are some exclusive lexemes loaned from the New Persian language, which are also attested in the early monuments of classical Persian literature.

ՈՐՈՇ ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒՄ

**Բանալի բառեր՝ կովկասյան պարսկերեն, հայերեն, հայ-կաբանություն, փոխառություն, բարբառ, լեզվական շփում, Շիրվան**

Հայ-իրանական լեզվական առնչությունների գիտական ուսումնասիրությունը ավանդաբար կենտրոնացած է եղել հատկապես միջին իրանական լեզուների՝ հայերենի վրա թողած ազդեցության վերհանման և հետազոտման ուղղությամբ, մինչդեռ չափազանց հետաքրքրական արդյունքներ կարող են գրանցվել հատկապես Արևելյան Այսրկովկասի և Ատրպատականի նոր իրանական լեզուների ու բարբառների հետ հայերենի ունեցած պատմական առնչությունների ասպարեզում, երբ հաճախ հենց վերջինս է հանդես գալիս ազդեցություն թողնող լեզվի կարգավիճակում:<sup>1</sup> Ընդ որում, ասվածը վերաբերում է ոչ միայն բառապաշարային փոխառություններին, այլ նաև տարատեսակ ընդհանուր կադապարներով ձևավորված դարձվածաբանական միավորներին և նույնիսկ տիպաբանորեն նույնական քերականական հատկանիշներին, որոնք անկասկած գոյացել են հայերենի և նշված տարածքների իրանական լեզուների միջև տևական սերտ շփումների շնորհիվ:

\* Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դոցենտ, իրանագիտության ամբիոնի վարիչի ժ.պ.: Էլ. փոստ՝ [vardan.voskanian@ysu.am](mailto:vardan.voskanian@ysu.am)

<sup>1</sup> Խոսքը մի կողմից հայերենի, իսկ մյուս կողմից՝ կովկասյան պարսկերենի թալիշերենի և նոր ազարիական լեզուների ու բարբառների ունեցած լեզվական փոխառությունների մասին է՝ ոլորտ, որը մինչև այժմ չի արժանացել գիտնականների պատշաճ ուշադրությանը:

Նույնիսկ նախնական թռուցիկ ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է դառնում, որ այս առումով բավական կարևոր նյութ է պարունակում հատկապես կովկասյան պարսկերենը կամ թաթերենը,<sup>2</sup> որը ժամանակակից պարսկերենի, դարի լեզվի (քաբուլյան պարսկերեն) և տաջիկերենի հետ միասին ժառանգորդը լինելով դասական նոր պարսկերենի, ընդհուպ մինչև XIX դարավերջ նշանակալի և բացառիկ դերակատարություն է ունեցել Շիրվանի երկրամասի մշակութային և հասարակական-քաղաքական կյանքում՝ սկզբնապես Շիրվանշահերի միջնադարյան պալատական և գրական լեզվի վիճակից ի վերջո նաև վերածվելով Ապշերոնյան թերակղզուց մինչև Դերբենտ ընդգրկող տարածքների համընդհանուր խոսակցական տարբերակի: Եթե հաշվի առնելու լինենք այն հանգամանքը, որ հայախոս բնակչությունը ևս դեռևս միջնադարից ի վեր մի քանի ալիքներով մուտք էր գործել և բնակություն հաստատել պատմական Շիրվանի տարածքներում, ապա բնական է, որ երկու լեզուներով խոսող հանրայինների միջև անմիջական շփումները պետք է հանգեցնեին փոխադարձ ազդեցությունների նաև լեզվական մակարդակում: Ուստի՝ հենց կովկասյան պարսկերենի բարբառներում և խոսվածքներում վկայված որոշ հայկական բառային փոխառությունների էլ կանդրադառնանք այս հոդվածի շրջանակներում:<sup>3</sup>

Կովկ. պրս. *saqat* (Ղոնաղբենդ),<sup>4</sup> *saqat* (Մալխամ),<sup>5</sup> *saqot* (Լա-հիջ),<sup>6</sup> *soqot* (Դերբենտ),<sup>7</sup> *saqat* (Մաղրասա), *saqot* (Քիլվար),<sup>8</sup>

<sup>2</sup> Լեզվի անվանման եզրաբանական ճշտման համար տե՛ս Տոնոյան Ա., Կովկասյան պարսկերենի մի քանի բառի ստուգաբանական քննություն, «Բանբեր Երևանի Համալսարանի. Բանասիրություն», 2015, 1(16): 73, ծան. 1:  
<sup>3</sup> Կովկասյան պարսկերենի Մաղրասայի բարբառի վրա հայկական ազդեցության մասին տե՛ս Ղալթախչյան Ա., Հայերենի տարբերը հայ-թաթերեն բարբառում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1970, 3(322): 72-77:  
<sup>4</sup> Hachibev M., Tat dili Gonağkənd ləhcəsi, Bakı, 1971: 151:  
<sup>5</sup> Hüseynova G., Tat dilinin leksikası (Azərbaycan tatlarının dilini materialları əsasında), Bakı, 2013: 100-101:

saqot (առանց բարբառի որոշարկման)<sup>9</sup> «*ցաքատ, էտոց, հատոց, պողպատյա շեղրով և փայտե կոթով գործիք՝ ոչ շատ հաստ ճուղեր կտրելու համար, մեծ դանակ*» փոխառություն է հայերեն բարբառային ցակաթ [c'akat'] (Մեյսարի),<sup>10</sup> հմմտ. ցակատ [c'akat] (Արցախ)<sup>11</sup> «*ցաքատ*» ձևից,<sup>12</sup> կովկասյան պարսկերենում c' > s (հմմտ. կովկ. պրս. bolniskä < ռուս. больница) և k > q (հմմտ. կովկ. պրս. qalxuz < ռուս. колхоз) կանոնավոր անցումներով, ինչպես նաև վերջինիս որոշ բարբառներում ու խոսվածքներում օյախոսության առկայության պայմաններում a > o մասնակի կամ ամբողջական զարգացմամբ: Կովկասյան պարսկերենի այս բառը ոչ մի դեպքում չի կարող ստուգաբանվել իբրև sa «երեք» և qat «շերտ» ձևերից բաղկացած բարդություն,<sup>13</sup> իսկ փոխառության հստակ աղբյուրն, ինչպես արդեն նշվել է վերևում, անկասկած հայերենն է:

Կովկ. պրս. tūrax (Ղոնաղքենդ),<sup>14</sup> tirox (Մալիամ),<sup>15</sup> tirox (Գոմբորի),<sup>16</sup> tirax (Արյուսքյուշ, Ղաղ Ղուշի),<sup>17</sup> tirax (Խալթան),<sup>18</sup>

<sup>9</sup> Hüseynova G., *Lahic tatların dili*, Bakı, 2002: 56, 182; Hüseynova, G., *Tat dilinin leksikası* (Azərbaycan tatlarının dilini materialları əsasında), Bakı, 2013: 100-101:

<sup>7</sup> Дадашев М., *Русско-татский (горско-еврейский) словарь*, Москва, 2006: 31, 250; Authier G., *Grammaire juhuri, ou judéo-tat, langue iranienne du Caucase de l'est*, Wiesbaden, 2012: 110, 319:

<sup>8</sup> Մադրասայի և Քիվարի բարբառների ձևերը հեղինակի դաշտային գրառումներից են:

<sup>9</sup> Hüseynova G., *Tat dili leksik fondunun genealoji təhlili* (Azərbaycan tatlarının dilini materialları əsasında), Bakı, 2013: 174:

<sup>10</sup> Բաղրամյան Ռ., Շամախիի բարբառը, Երևան, 1964: 228:

<sup>11</sup> Մարգարյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013: 746:

<sup>12</sup> Հայերեն բառի կազմության և ստուգաբանության մասին տե՛ս Martirosyan, H., *Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon*, Leiden, 2009: 619-621:

<sup>13</sup> Նման անընդունելի ստուգաբանության փորձը տե՛ս Hüseynova, G., *Tat dilinin leksikası* (Azərbaycan tatlarının dilini materialları əsasında), Bakı, 2013: 100-101:

<sup>14</sup> Гачыџев М., *Тат дилинин Гонагкэнд лəһчəsi*, Бақы, 1971: 151; Гачыџев, М., *Азəрбајчан татларынын дили* (Фонетика, лексика, морфологія, синтаксис), Бақы, 1995: 93:

tiryox (Ղուրա),<sup>19</sup> tirox, tiryox (Դերբենտ),<sup>20</sup> tirax, tūrax (առանց բարբառի որոշարկման)<sup>21</sup> «*տրեխ, կիսամշակ կաշվից կարված անկրունկ ոտնաման*» փոխառություն է հայերեն բարբառային տիրեխ [tirex] (Մեյսարի),<sup>22</sup> հմմտ. տրրեխ [tərex] (Շամախի, Մադրասա),<sup>23</sup> տրրեխ [tərex], տրռըխ [təřəx] (Արցախ) «*տրեխ*»<sup>24</sup> ձևից, կովկասյան պարսկերենում e > a, իսկ օ-յախոսություն ունեցող որոշ բարբառներում ու խոսվածքներում a > o երկրորդական հնչյունական զարգացումով:

Չնայած իմաստային և հնչյունական տեսանկյունից կովկասյան պարսկերենի վերոնշյալ բառամիավորն ակներևաբար ենթադրում է փոխառություն հայերենից, սակայն այն բաղդատելի է նաև հայերենի հետ համեմատվող արաբական ծագման طراق

<sup>15</sup> Гачыџев М., *Азəрбајчан татларынын дили* (Фонетика, лексика, морфологія, синтаксис), Бақы, 1995: 147:

<sup>16</sup> Квачадзе М., *Речь гомборских лаиджей* (диссертация на соискание ученой степени кандидата филологических наук), Тбилиси, 1990: 264: Վրաստանի Գոմբորի գյուղի բնակիչները Լեոնային Շիրվանի Լահիջ բնակավայրից այստեղ տեղափոխված կովկասյան պարսիկներն են, այսինքն՝ տվյալ դեպքում գործ ունենք Լահիջի բարբառի խոսվածքներից մեկի հետ:

<sup>17</sup> Soltanov A., Soltanov, M., *Tatca-azərbaycanca, azərbaycanca-tatca lügət: Ərsküs- Dağ Quşcu ləhcəsi*, Bakı, 2013 (PDF տարբերակ): 58:

<sup>18</sup> Грюнберг А., *Язык североазербайджанских татов*, Ленинград, 1963: 21, 95, 120, 175, 176, 183, 186:

<sup>19</sup> Агарунов Я., Агарунож, М., *Татско (еврейско)-русский словарь*, Москва, 1997: 167:

<sup>20</sup> Дадашев М., *Русско-татский (горско-еврейский) словарь*, Москва, 2006: 98; Authier G., *Grammaire juhuri, ou judéo-tat, langue iranienne du Caucase de l'est*, Wiesbaden, 2012: 167, 321:

<sup>21</sup> Hüseynova G., *Tat dilinin leksikası* (Azərbaycan tatlarının dilini materialları əsasında), Bakı, 2013: 45; Hüseynova G., *Tat dili leksik fondunun genealoji təhlili* (Azərbaycan tatlarının dilini materialları əsasında), Bakı, 2013: 184; Грюнберг А., *Язык североазербайджанских татов*, Ленинград, 1963: 120:

<sup>22</sup> Բաղրամյան Ռ., Շամախիի բարբառը, Երևան, 1964: 228:

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Հայերեն բառի ստուգաբանությունը և բարբառային ձևերը տե՛ս Աճառյան, Հ., *Հայերեն արմատական բառարան*, Երևան, 1979, 4: 435, բարբառային ձևերը՝ Աճառյան Հ., *Հայերեն զավառական բառարան*, Թիֆլիս, 1913: 630:

[tirāq] «կոշիկին գամված կաշվե թերթ» ձևի հետ:<sup>25</sup> Փոխառության աղբյուրն արաբերենը համարելու դեպքում, սակայն, ոչ միայն որոշակիորեն դժվար բացատրելի է մնում իմաստափոխության հանգամանքը, այլ նաև խիստ խնդրահարույց է  $q > x$  հնչյունական անցումը, քանի որ կովկասյան պարսկերենի թե՛ բնիկ իրանական և թե՛ արաբաթյուրքական փոխառյալ ձևերում  $q$  բաղաձայնը բառավերջի դիրքում նույնպես անփոփոխ կերպով պահպանվում է, հմմտ. կովկ. պրս. qālaq «ազոավ» (բնիկ իրան.), battaq (թյուրք.) «ճահիճ», äxmäq (արաբ.) «հիմար» և այլն:

Կովկ. պրս. hālou (Ղոնադբենդ),<sup>26</sup> hālou, hālo (Արյուսքյուշ, Դադ Ղուշի),<sup>27</sup> hālou (Խալթան),<sup>28</sup> hālon (Ղուրա),<sup>29</sup> holov, hālov (Դերբենտ),<sup>30</sup> halov (Մադրասա),<sup>31</sup> halou, hālo (առանց բարբառի որոշարկման)<sup>32</sup> «կարպետ, փալաս, ծածկոց, ներքնակ, անկողին» փոխառություն է հայերեն բարբառային հալավ [halav] (Շամախի)<sup>33</sup> «շապիկ, ներքնաշոր, ծածկոց», հմմտ. հալավ [halav] (Արցախ)<sup>34</sup> նաև «ճախարակի վրա ձգված ծածկոց» ձևից:<sup>35</sup>

<sup>25</sup> Աճառյան, Հ., Հայերեն արմատական բառարան, Երևան, 1979, 4: 435:

<sup>26</sup> Начыјев, М., Тат дилинин Гонагкэнд ләһчәси, Бақы, 1971: 149; Cəfərova, N., Əlifba, Bakı, 1996: 31; Cəfərova, N., Nacıyev, M., Zuhun tati (III sinif üçün dərslik), Bakı, 1996: 78:

<sup>27</sup> Грюнберг, А., Язык североазербайджанских татов, Ленинград, 1963: 104, 139; Soltanov, A., Soltanov, M., Tatca-azərbaycanca, azərbaycanca-tatca lügət: Ərüsükü-Dağ Quşcu ləhcəsi, Bakı, 2013 (PDF տարբերակ): 26:

<sup>28</sup> Грюнберг, А., Язык североазербайджанских татов, Ленинград, 1963: 89, 174:

<sup>29</sup> Агарунов, Я., Агарунож, М., Татско (еврейско)-русский словарь, Москва, 1997: 79:

<sup>30</sup> Дадашев М., Русско-татский (горско-еврейский) словарь, Москва, 2006: 224; Authier G., Grammaire juhuri, ou judéo-tat, langue iranienne du Caucase de l'est, Wiesbaden, 2012: 100, 123, 178, 203, 302, 311:

<sup>31</sup> Այս ձևը հեղինակի դաշտային գրառումներից է:

<sup>32</sup> Грюнберг А., Язык североазербайджанских татов, Ленинград, 1963: 121; Начыјев, М., Азәрбајҹан татларынын дили (Фонетика, лексика, морфолоҹија, синтаксис), Бақы, 1995: 28:

<sup>33</sup> Բաղրամյան Ռ., Շամախիի բարբառը, Երևան, 1964: 208:

<sup>34</sup> Մարգարյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013. 404:

կովկասյան պարսկերենում վերջին վանկի -av > -ou/-on երկհնչյունացմամբ, որոշ դեպքերում երկհնչյունի ավելի ուշ պարզեցմամբ և երկրորդական իմաստային զարգացումներով:

Կովկ. պրս. qurqut<sup>36</sup> (Լահիջ),<sup>37</sup> qurqut (Արյուսքյուշ, Դադ Ղուշի),<sup>38</sup> qurqut (Դերբենտ),<sup>39</sup> qurqot (Մադրասա),<sup>40</sup> qurqut (առանց բարբառի որոշարկման)<sup>41</sup> «կորկոտ, ձավար, հաճար»՝ փոխառություն է հայերեն բարբառային կուրկոտ [kurkot] (Շամախի),<sup>42</sup> հմմտ. կրրկոտ [kərkot] (Քերքենջ),<sup>43</sup> կուրկուտ [kurkut] (Արցախ)<sup>44</sup> «կորկոտ, ծեծած և թեփը հանած ցորեն կամ գարի» ձևից,<sup>45</sup> կովկասյան պարսկերենում արդեն իսկ վերնում քննարկված  $k > q$  կանոնավոր անցմամբ: Ամեննին պարտադիր չէ, որ կովկասյան պարսկերենի փոխառության աղբյուրն անպայմանորեն լիներ այս բառում  $o > u$  անցումն ամբողջությամբ ավարտին հասցրած հայկական որևէ բարբառ, քանի որ նման հնչյունա-

<sup>35</sup> Հայերեն բառի ստուգաբանությունը և բարբառային ձևերը տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Երևան, 1977, 3: 10:

<sup>36</sup> Այս բառի կովկասյան պարսկերենում հայերենից փոխառյալ լինելու մասին առաջինը տե՛ս Տոնոյան Ա. Կովկասյան պարսկերեն. պատմահամեմատական ուսումնասիրություն (բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսություն), Երևան, 2015: 153:

<sup>37</sup> Hüseynova G., Lahic tatların dili, Bakı, 2002: 30, 56, 176:

<sup>38</sup> Soltanov A., Soltanov, M., Tatca-azərbaycanca, azərbaycanca-tatca lügət: Ərüsükü-Dağ Quşcu ləhcəsi, Bakı, 2013 (PDF տարբերակ): 39:

<sup>39</sup> Дадашев М., Русско-татский (горско-еврейский) словарь, Москва, 2006: 95, 161:

<sup>40</sup> Այս ձևը հեղինակի դաշտային գրառումներից է:

<sup>41</sup> Грюнберг А., Язык североазербайджанских татов, Ленинград, 1963: 120; Hüseynova G., Tat dilinin leksikası (Azərbaycan tatlarının dilini materialları əsasında), Bakı, 2013: 160, 211; Hüseynova G., Azərbaycan tatlarının dilinin etnoqrafik leksikasına dair, "Azərbaycan multikulturalizmi: din və dil siyasətinin inkişaf perspektivləri adlı beynəlxalq konfransın materialları", Bakı, 2013: 39:

<sup>42</sup> Բաղրամյան Ռ., Շամախիի բարբառը, Երևան, 1964: 207:

<sup>43</sup> Նույն տեղում:

<sup>44</sup> Մարգարյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013. 394:

<sup>45</sup> Հայերեն բառի ստուգաբանությունը և բարբառային ձևերը տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Երևան, 1973, 2: 650-651:

կան զարգացումը կանոնավորապես բնորոշ է նաև կովկասյան պարսկերենին, հմմտ. կովկ. պրս. գոնժի < աղբբ. գոնժս «հարևան», կովկ. պրս. գոլտագ < աղբբ. գոլտագ «անութ, թևատակ» է այլն:

Կովկ. պրս. **muri** (Ղոնաղբենդ),<sup>46</sup> **müri** (Լահիջ),<sup>47</sup> **müri** (Գոմբորի),<sup>48</sup> **muri** (Արյուսբյուշ, Դաղ Ղուշլի),<sup>49</sup> **muri** (Խալթան),<sup>50</sup> **muri** (Ղուբա),<sup>51</sup> **muri** (Դերբենտ),<sup>52</sup> **muri** (Մաղդասա),<sup>53</sup> **muri**, **müri** (առանց բարբառի որոշարկման),<sup>54</sup> հմմտ. նաև **müri** (աղբբ. Ղուբայի բարբառ)<sup>55</sup> «մորի, ազնվամորի, էլակ»՝ փոխառություն է հայերեն բարբառային մորի [muri] (Մեյսարի, Քերքենջ),<sup>56</sup> հմմտ. մորի [mori] (Մեյսարի).<sup>57</sup> մորե [more], մորի [mori] (Ար-

<sup>46</sup> Cəfərova N., Əlifba, Bakı, 1996: 21, 29; Cəfərova, N., Hacıyev, M., Zuhun tati (III sinif üçün dərslik), Bakı, 1996: 47, 81:

<sup>47</sup> Квацадзе М., Речь гомборских лаиджей (диссертация на соискание ученой степени кандидата филологических наук), Тбилиси, 1990: 245:

<sup>48</sup> Hüseynova G., Lahic tatların dili, Bakı, 2002: 178:

<sup>49</sup> Soltanov A., Soltanov, M., Tatca-azərbaycanca, azərbaycanca-tatca lügət: Ərüşkü-Dağ Qışçı İləhcəsi, Bakı, 2013 (PDF տարբերակ): 42:

<sup>50</sup> Грюнберг А., Язык североазербайджанских татов, Ленинград, 1963: 93, 179:

<sup>51</sup> Агарунов Я., Агарунож, М., Татско (еврейско)-русский словарь, Москва, 1997: 119:

<sup>52</sup> Дадашев М., Русско-татский (горско-еврейский) словарь, Москва, 2006: 74, 86, 103:

<sup>53</sup> Այս ձևը հեղինակի դաշտային գրառումներից է:

<sup>54</sup> Hacıyev M., Azərbaycan tatlarıнын дили (Фонетика, лексика, морфологика, синтаксис), Bakı, 1995: 116; Грюнберг А., Язык североазербайджанских татов, Ленинград, 1963: 118; Hüseynova G., Tat dilinin leksikası (Azərbaycan tatlarının dilini materialları əsasında), Bakı, 2013: 163; Hüseynova G., Tat dili leksik fondunun genealogi təhlili (Azərbaycan tatlarının dilini materialları əsasında), Bakı, 2013: 162-195, 199:

<sup>55</sup> Azərbaycan dilinin dialektoloji lügəti (redaktorlar: Axundov A., Kazimov Q., Behbudov, S.), Bakı, 2007: 365: Բառը կարող է աղբբեջաներենի բարբառ մուտք գործած լինել հենց կովկասյան պարսկերենից, նաև Ղուբայի տարածաշրջանի պարսկախոս բնակչության որոշ հատվածի թյուրքալեզվության անցնելու հետևանքով:

<sup>56</sup> Բաղրամյան Ռ., Շամախիի բարբառը, Երևան, 1964: 214:

<sup>57</sup> Նույն տեղում:

ցախ) <sup>58</sup> «մորի, էլակ» ձևից, <sup>59</sup> կովկասյան պարսկերենի որոշ բարբառներում ձայնավորի *u* > *ü* ծայր աստիճան շրթայնացմամբ:

Այսպիսով՝ եթե հայացք նետենք կովկասյան պարսկերենի բարբառային քարտեզին, ապա ակնհայտ է, որ քննության առարկա հայկական փոխառությունները լայնորեն վկայված են Լեռնային Շիրվանի տարածքում խոսվող բարբառներում և խոսվածքներում՝ ընդգրկելով այս լեզվի բոլոր երեք՝ մահմեդական, հրեական և հայկական տարբերակները,<sup>60</sup> մինչդեռ ծայր հարավային ապշերոնյան բարբառախմբում դրանք կարծես թե լիովին բացակայում են: Եթե այս հանգամանքը բացառապես պայմանավորված չէ վերջինիս լեզվական նյութերն արտացոլող հրատարակությունների սակավությամբ, ապա կարելի է ենթադրել, որ հայերենի և կովկասյան պարսկերենի միջև բառային փոխառությունների ի հայտ գալուն հանգեցրած առավել սերտ շփումների պատմական գործընթացը տեղի է ունեցել հենց Շիրվանի լեռնային հատվածներում, որտեղ էլ այս երկու լեզուները ժամանակին կիսել են միևնույն աշխարհագրական տարածքը:

<sup>58</sup> Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013: 530:

<sup>59</sup> Հայերեն բառի ստուգաբանությունը և բարբառային ձևերը տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Երևան, 1977, 3: 347; Martirosyan H., Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon, Leiden, 2009: 474-478:

<sup>60</sup> Ավանդաբար պատմական Շիրվանում կովկասյան պարսկերենով խոսում էին հենց այս երեք եթնիկ-դավանական հանրությունների ներկայացուցիչները:

НЕКОТОРЫЕ АРМЕНИЗМЫ  
В КАВКАЗСКО-ПЕРСИДСКОМ ЯЗЫКЕ

Вардан Восканян  
(резюме)

В статье обсуждается вопрос лингвистических контактов армянского и кавказско-персидского (татского) языков. На примере анализа нескольких лексических заимствований из армянского, которые имеют широкую аттестацию почти во всех диалектах и говорах кавказского персидского на территории Нагорного Ширвана, делается вывод, что данные арменизмы - результат тесных взаимосвязей и контактов между двумя языками исторически делившими один и тот же географический ареал распространения.

SOME ARMENISMS  
IN CAUCASIAN PERSIAN LANGUAGE

Vardan Voskanian  
(summary)

In the article the issue of linguistic contacts between Armenian and Caucasian Persian (Tati) languages is discussed. By means of sampling and examination of some Armenian loan-words, widely attested almost in all the dialects and patois of the Caucasian Persian in Mountainous Shirvan, it is concluded that the Armenisms in question are consequence of the close correlation and contacts between both languages, which historically shared the common geographical area of spread.

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ԻՐԱՆԱԿԱՆ  
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ իրանական տեղանուններ, բարբառներ, բառապաշար, տեղանվանահիմք, «տեղ» իմաստային դաշտ, հին պարսկերեն

Իրանական տեղանվանական համակարգը, պայմանավորված բարբառային լեզվանյութի ներգրավվածությամբ, բնորոշվում է յուրահատկությամբ և տեղանվանակերտ բառապաշարի հարստությամբ: Տեղանվանահիմքերի ու տեղանվանակերտ ածանցների մեջ իրենց կայուն տեղն ունեն «տեղ» իմաստային դաշտին պատկանող միավորներն ու ցուցիչները՝ «վայր, քաղաք, գյուղ, բնակավայր, ավան» նշանակություններով: Իմաստային այս դաշտին են պատկանում հին պարսկերենում վկայված *vardana-* կամ *vrđana* «քաղաք» բառային բարբառային զարգացումները՝ *barzan*, *varzan*, *golan*, *-verd*, *vālan*, *balan*, որոնք, չնայած ժամանակակից իրանական բարբառներում և լեզուներում լիովին չեն պահպանվել, սակայն շոշափելիորեն վկայվել են տեղանուններում: Հին պարսկերեն այս բառամիավորը, որի ստուգաբանությանը անդրադարձել են մի շարք գիտնականներ<sup>1</sup>, ունի լայն վկայվածություն հին և միջին իրանական լեզու-

\* Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դոցենտ: Էլ. փոստ՝ [hasmik.kirakosian@ysu.am](mailto:hasmik.kirakosian@ysu.am)

<sup>1</sup> Առաջադրվող ստուգաբանությունները ավ. *vəraznə*, հյ-արևմտ. *barzan/berzen*, *varzan* < \**varj*-<հնդեվր. \**uer-ǵ-* ևան հ. պ. *vardanam-*, սանսկրիտ-*vardhanam*, *Vardhamana*-< \**vardh-* <հնդեվր. \**uer-dh-*, տես P. Horn, *Grundriss der neupersischen Etymologie*, Strassburg, 1893, p. 199; Robert A. Hall, Jr., "The Etymology of OP *vardanam*", *Language*, vol. 12, No. 4, 1936, pp. 297-299; ևան M., *Hassandoust, En Etymological Dictionary of the Persian Language*, v. 1, Tehran, 2002, pp. 445-446, էլ:

ներում, հմմտ. <sup>2</sup>h. պ. vardana-<sup>3</sup>, ավ. varəzāna, varəzana-, varəz- «բնակավայր»<sup>4</sup>, մ. պ. wālan<sup>5</sup>, մ. պ. սաղմոսներում gulān<sup>6</sup>, խորեզմ. wāznyk, ժամանակակից իր. բրբռ., հմմտ. ou. (դիզ.) ærwæz (\*vrāza-) «խումբ, հոտ», (իր.) ræez, (դիզ.) iræz «ամառային բնակատեղի»<sup>7</sup>, գազի vārzīn, bārzān «փողոց, թաղամաս»: Հյուսիսարևմտյան vřzana- > barzanի հարավ-արևմտյան vardana- բառակերպ Այլերսը վերագրում է հնդեվրոպական այն բառերի խմբին որոնց մոտ կատարվել է «քաղաք» → «շրջակայք, ցանկապատված տեղ» իմաստային նեղացումը և որը համեմատելի է օրինակ հին իր. dahyu- «երկիր, գետին» → պրսկ. deh «գյուղ» կամ հին իր. xšaθra «թագավորություն» → պրսկ. šahr «քաղաք» և այլ ձևերի հետ<sup>8</sup>: Պարսկերենում հյուսիսարևմտյան barzan միավորը «ավան, փողոց» նշանակությամբ վկայվել է դեռևս դասական գրականության մեջ Ֆիրդուսի, Ռուդաքի կլն («šahr o barzan», «kōy o barzan» կլն) ու միջնադարյան բառարաններում, սակայն տեղանուններում այն պահպանել է իր ավելի լայն «բնակավայր, տեղ» իմաստային տարբերակով:

Իրանի տեղանուններում այս բառակերպ բարբառային ընդգրկվածությունը քննարկենք հետևյալ անուններում<sup>9</sup>:

**Varzan**<sup>10</sup> – գյուղանուն է Ալբորզ նահանգի Ադրան դեհեստանում, Դամեղան շահրեստանի Ռուդբար դեհեստանում, Մազանդերանի Նուր շահրեստանում կլն, նաև Varzān Գիլանի Թավաշ շահրեստանում: Բոլոր այս տեղանուններում քննարկվող բառամիավորն է «բնակավայր, գյուղ» նշանակությամբ:

**Varzana**<sup>11</sup> – այս տեղանունը ևս հաճախադեպ է Ղոմ, Գոլիսահան, Իսֆահան շահրեստաններում, նաև Իսֆահանում Pol-e Varzana (պրսկ. pol «կամուրջ») տեղանվան մեջ: Տեղանունը վերականգնվում է մ. իր. \*varzanak < \*vrzanaka- ձևով և նշանակում է «փոքր գյուղ»:

**Vazvān** – բնակավայրը գտնվում է Իսֆահան նահանգի Մեյմե շահրեստանում՝ Իսֆահան-Թեհրան ճանապարհին: Այս բնականվան համար առաջարկված բացատրությունը vaz- < vazidan «փչել» բայի ներկայի հիմք և -vān < -bān «պահպանող, պահող» ածանցից<sup>12</sup>, կարծում ենք, անընդունելի է: Տեղանունը վերականգնվում է \*warza-wāhana- ձևով, որի առաջին բաղադրիչը քննարկվող բառույթն է «գյուղ» նշանակությամբ, իսկ երկրորդ բաղադրիչը \*wāhana- > \*wah- «մնալ, ապրել» ձևին է հանգում, հմմտ. նորպրսկ. vān, hj. < իր. ավան<sup>13</sup>: varz- > vaz- (-r- ի անկմամբ) շրջան թույլ է տալիս այս համատեքստում քննարկել նաև Vazmiyān (Իլամ), Vazvār (Բեհշահր), Vaznā (Դեմավենդ), Vazeh (Իսֆահան) տեղանունները: Նույն բացատրությամբ, սակայն հավելյալ -aq < -ak վերջածանցավոր ձև է Կենտրոնական նահանգի Դեհլալ շահրեստանի Vazvānaq տեղանունը: Իսֆահան նահանգի Ֆերիդունշահր շահրեստանի Vazvah տեղանունը նույնպես այս շարքին պետք է դասել, որի երկրորդ -vah բաղադրիչը հանգում է մ. պ. weh < հին իր. \*vahyah- «ավելի լավ» > vahu- «լավ» ձևին և քննարկվող անունն էլ ունի «լավ բնակատեղի» նշանակությունը: Այս բառույթով կազմված քննարկվող մյուս տեղանունն է Xvarzan-ը: Այս անունով գյուղեր կան Արաք շահրեստանում:

<sup>2</sup> Հապավումների ցանկ՝ հմմտ. – համեմատի՝ p, h. պ. – հին պարսկերեն, ավ. – Ավեստայի լեզու, մ. պ. – միջին պարսկերեն, խորեզմ. – խորեզմերեն, իր. բրբռ. – իրանական բարբառներ, ou. – օսերեն, հնդեվր. – հնդեվրոպական, հարևան. – հյուսիս-արևմտյան, պրսկ. – պարսկերեն, ժ. պ. – ժամանակակից պարսկերեն, հին իր. – հին իրանական, թալիշ. – թալիշերեն, գիլ. – գիլաներեն, հյ. – հայերեն, սողդ. – սողդերեն, ժ. պ. – ժամանակակից պարսկերեն:

<sup>3</sup> St u R. G. Kent, Old Persian, New Haven, 1953, p. 207; W. Brandenstein- M. Mayrhofer, Handbuch des Altpersischen, Wiesbaden, 1964, p. 151; կլն:

<sup>4</sup> St u Chr., Bartholomae, Altiranisches Wörterbuch, Strassburg, 1904, p. 1424.

<sup>5</sup> St u D., N., Mackenzie, A Concise Pahlavi Dictionary, London, 1971, p. 86.

<sup>6</sup> St u H., W., Bailey, "Armeno-Indo-iranica", Transactions of the Philological society, Oxford, 1956, p. 114.

<sup>7</sup> St u B., И. Абаев, Историко-этимологический словарь осетинского языка, Москва- Ленинград, т. 1, 1958, с. 185; т. 2: 397f.

<sup>8</sup> St u W., Eilers, "Barzan", EI, vol. III, Fasc. 8, 1988, p. 839.

<sup>9</sup> Տեղանունների համար աղբյուր է ծառայել Դեհիստայի բառարանը:

<sup>10</sup> Այս գյուղանունը տես նաև Eilers 1988, նույն տեղում:

<sup>11</sup> Տեղանվան մասին տես G. Asatrian, A Comparative vocabulary of Central Iranian dialects, Tehran, 2011, p. 31

<sup>12</sup> St u M. Mehriyār, Farhang-ejam, nāmehāvaābādhāyeEsfahān, Esfahān, 2001, pp. 845-846. /պրսկ./

<sup>13</sup> St u Asatrian, նույն տեղում:



նի Սարբանդի շրջանում, նաև՝ Բորուջերդ շահրեստանում, իսկ գյուղանվան համար հնարավոր երկու մեկնաբանությունն կա. հանգում է \**hu-warzana*- ձևին, որի \**hu*- նախածանցն ունի «լավ» նշանակությունը, ըստ այդմ, գյուղի անունն էլ նշանակում է «լավ բնակատեղի»: Տեղանվան մյուս բացատրությունը կապվում է \**xwara-warzana*- ձևին, հմմտ. պրսկ. *xwār* «ցածր, ներքև», տեղանունն էլ ունի «ցածրադիր վայրում գտնվող բնակատեղի» նշանակությունը: Արևելյան Ազերբայջանի Քալեյբար շահրեստանի *Barzandiq* տեղանունը մեկնաբանվում է հետևյալ կերպ. *barzan* «տեղ, բնակավայր» և *-diq* < \**diyak* (< \**diḡak* > *dizak*<sup>14</sup>) «ամրոց»: Իսֆահան նահանգում՝ Քաշանից 35 կմ արևմուտք է գտնվում *Valom* լեռը, որի անունը, ըստ ամենայնի, հանգում է \**wrdana*- նախաձևի \**wrdanam* հայցական ձևին<sup>15</sup>: Լեռնանուններից այս համատեքստում քննարկենք նաև Իրանի քարտեզային երկրորդ *Sabalān* լեռան անունը, որի երկրորդ բաղադրիչ *balōn*<sup>16</sup> < \**wrdan*- ձևի մեկնաբանության համար օժանդակող նյութ է նաև հայկական աղբյուրներում բացի Սավալան, Սաբալան, Սավելյան, Սեվլան ձևերից վկայված *Սահվարզան*, *Շահվարզան* անունները<sup>17</sup>: Հյուսիս-արևմտյան \**Sahwarzana*- ձևի առաջին *sah*- բաղադրիչը հնարավոր է հանգում է հին իր. \**say*- «սառել, սառույցով պատվել» նախաձևին > \**si-ta*- > \**sah*- զարգացմամբ<sup>18</sup>, որը հնարավոր անվանադրում է լեռան համար:

<sup>14</sup> W., Eilers, *Der Name Demawend*, Archiv Orientalni, XXII, Praha, 1956, pp. 357-358.

<sup>15</sup> Տե՛ս Asatrian, նույնը:

<sup>16</sup> Վերջին վանկի -ā- հնչյունը կարելի է պայմանավորել -ānhqնակիակերտի ազդեցությամբ, չնայած նման այլ տեղանուններ ևս վկայված են, հմմտ. *Balān* բնականուր Սանադաջ, Ահար շահրեստաններում:

<sup>17</sup> Հայկական աղբյուրների բերած այս ձևերը տես A. Амбарцумян, «Область Пайтакаран и гора Сабалан. Филологические и этимологические очерки». Вестник Арменоведения, Ереван, 2016 N2 (11), сс.11-15: Նույն հոդվածում հեղինակը առաջարկում է այս լեռանվան համար «բարձր քար» նշանակությունը «կազմված երկու բաղադրիչից՝ *sağ* + *barzān*, *burzān*, ինչը նշանակում է «բարձր սալ, բարձր ապարած», որտեղ առաջին բառն է \**sağ* «սալ» (համեմ. թալիշ. *sağ* «սալ», ժամանակ. թալիշ. *səğ* «սալ», *səgin* «սալից», համեմ. -պարս. *sagēn* (*skyn*, *sygyn*) «սալե, սալապատ»), իսկ երկրորդը՝ *barz*, *burz* «բարձր» + տեղի վերջածանց -ān» (նույն տեղում):

<sup>18</sup> Հնչյունական այս զարգացումն ունի հավելյալ փաստարկման կարիք:

*Golan* < \**wrdana*- ձևը՝ <sup>19</sup> \**v-* > *g*- հնչյունական փոփոխությամբ, սահմանափակ քանակությամբ, սակայն նույնպես վկայված է Իրանի տեղանուններում: Այսպես, *Šāhgolan* անունով բնակավայրեր կան Մահաբադ շահրեստանում, Չալդերան դեհեստանում: Այս տեղանվան *-golan* բաղադրիչը կազմության մեջ է մտել *šāh* ձևի հետ, որն այստեղ, կարծում ենք, գործածված է «գլխավոր» իմաստով և գյուղի անունն ունի «գլխավոր գյուղ» նշանակությունը: Քերման նահանգի Ջիրոֆթ շահրեստանի *Golnābad* բնականունը ևս դասվում է այս տեղանունների շարքը, որտեղ \**golan* բառաձևը կազմության մեջ է մտել բավական տարածում ունեցող *-ābad* տեղանվանակերտ ածանցի հետ<sup>20</sup>: *Golankeš* բնականունը Գիլան նահանգի Ռուդբար շահրեստանում կազմված է *golan*- և *-keš* բաղադրիչներից, որից առաջինը քննարկվող ձևն է «տեղ» նշանակությամբ, իսկ *-keš*-ը Իրանի տեղանուններում հանդիպող և տեղանվանակերտ գործառույթ ունեցող «գիրկ» միավորն է, հմմտ. թալիշ. *kaš/keš/kəš* «գիրկ, թնատակ, կողք» < հինիր. \**kaša*-, հմմտ. նաև մ.պ., ժ. պ. *kaš*, սողդ.՝ *pkšy-/əpkaši* «ծոց, կող» (< \**apa-kaša*-)<sup>21</sup>, մանիք. մ. պ. *dast-kaš* «ձեռքով ողջունել»<sup>22</sup>, ևլն:

*Vardana*- ձևի ածանցումներից է նաև *-verd* տեղանվանակերտ ածանցը, որը հանդիպում է մի շարք տեղանուններում, հմմտ. *Saharverd*, *Bāmāverd*, *Ajverd*, *Xormaverd*, ևլն:

Այսպիսով, վերոբերյալ տեղանունների քննությամբ ձեռք է բերվում \**vrdana*-ն *vardana*-բառույթների հնարավոր բարբառային զարգացումների տարբերակները «գյուղ, բնակավայր, տեղ» նշանակություններով:

<sup>19</sup> Տե՛ս Eilers 1988: 840.

<sup>20</sup> Այս տեղանվան մասին տես նաև Eilers 1956: 353.

<sup>21</sup> E. Benveniste, *Essai de Grammaire Sogdienne*, Deuxieme Partie, Glossaire, Paris, 1929, p.208.

<sup>22</sup> D. Durkin-Meistererns, *Dictionary of Manichaean Middle Persian and Partian*, Belgium, 2004, p. 142.

Киракосян Асмик  
(резюме)

Лингвистический материал иранских топонимов является источником для выявления диалектных элементов. В статье обсуждаются топонимы, которые содержат диалектные формы древнеперсидской лексемы *vardana*- «город»: *barzan*, *varzan*, *golan*, *-verd*, *vālan*, *balan*. В топонимах имеем диалектные формы этой лексемы, которые, в целом, в современных иранских диалектах не употребляются.

#### DIALECTICAL LEXEMES IN IRANIAN TOPONYMS

*Kirakosyan Hasmik*  
(summary)

The linguistic material of Iranian toponyms is considered to be a source of analyzing and revealing dialectical elements. The paper is focused on toponyms which concern dialectical forms of Old Persian lexeme: *wardana*- "city", such as *barzan*, *varzan*, *golan*, *-verd*, *vālan*, *balan*. The dialectical derivations of that lexeme existing in the toponymy generally are out of usage in modern Iranian dialects.

#### SOME PERSIAN LOANWORDS IN TATAR LANGUAGE

*Key words: language, New Persian, Tatar language, borrowing, word units, Middle Persian, Parthian, Old Persian, Iranian*

The current article concerns the very important matter on the linguistic communications between Turkic and Iranian language sphere which witness about close cultural collaboration and share of civilizational behaviours of these two worlds. Language transparency is an essential evidence of historical and cultural coexistence.

During different historical periods due to Iranian influence in the region a number of Iranian origin words have been borrowed by the neighbouring languages. This appearance is very acceptable for Armenian language as well. In the case of Armenian-Iranian relations the communications relate to wide spheres concerning culture, civilization, history, linguistics.

The Iranian linguistic borrowings are attested in Tatar language both in the direct and mediated ways. This reality states about ancient roots and, on the other hand, unity of the two worlds which goes back to 9-10 centuries. The word units included in the present article cover more important spheres. The current research aims at finding out a cluster of borrowings which refers to these life fields and, thus, at showing the linguistic interrelations between Persian and Tatar languages.

\* Ք. Միրզոյան՝ ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դոցենտ, էլ. փոստ՝ [knarik.mirzoyan@ysu.am](mailto:knarik.mirzoyan@ysu.am): Թ. Չարչյան՝ բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դոցենտ: էլ. փոստ՝ [tadevos.charchyan@ysu.am](mailto:tadevos.charchyan@ysu.am)

Tat. **мәһәп**<sup>1</sup> “city, town” > N.Pers. šahr > O.Ir. \*xšaθra-, O.Pers. \*xšaθra- < M.Pers., Parth.<sup>2</sup> šahr “country” cf. Ērānšahr – the state name of Sasanian Iran “Iran Land”.

In Tatar language there exists a term as well for indicating the word “city, town” – кала. This word is considered to be an Arabic borrowing (قلعه). According to researches the unit is believed to be originally Armenian – kayak (քաղաք) “city, town”. In Persian the word is used to express the meaning “fortress, castle”.

Tat. **бәхет** “happiness, (good) luck, fortune” > N.Pers. baxt “fate, fortune” > O.Ir. \*baxta-, Av. passive past particle baxta- from Aryan bhag- “to allot”. This form appears as a neuter noun meaning “allotted destiny”. In Middle Iranian period in Parthian language there is attested the word baxtag “divided”, baž- “divide”, which is a Parthian borrowing in Armenian: bažanel (բաժանել) “to divide” and baxt (բախտ) “fate, fortune”. In Middle Persian sources we meet baxt “fate, fortune” and baxtan, baxš- “distribute”, Arm. bašxnel (բաշխել) “distribute”.

The Iranian word accordingly fits the concept of fate as pre-allotted share, held by all nations and expressed in words such as Greek *hē aīsa* and *ho oītos* “destiny” corresponding to the Avesta masculine noun aēta “part”.<sup>3</sup> Russian *доля, долюшка* “share, lot, destiny” nouns relate to the verb form *делить* “to divide, to share”. In

<sup>1</sup> The Tatar words are presented using the following dictionaries: Татарско-русский словарь, Редколлегия: Асылгарев Ш. А., Ганиев М. З., Миннуллин, Рамазанова Д. Б. в двух томах, Казань, 2007; Ганиев Ф. А., Русско-татарский словарь, Москва 1997.

<sup>2</sup> For the Middle Persian and Parthian equivalents see MacKenzie D.N., A Concise Pahlavi Dictionary, London, 1971; Durkin-Meisterernst D., Dictionary of Manichaean Middle Persian and Parthian. (Corpus Fontium Manichaeorum; 3.1). Turnhout: BREPOLs, 2004; Nyberg H.S., A Manual of Pahlavi, v. II, 1974; Boyce M., A Word-List of Manichaean Middle Persian and Parthian, Acta Iranica, 1977.

<sup>3</sup> See Eilers W., Shaked S., Bakt, in: <http://www.iranicaonline.org/articles/bakt-fate-destiny>

Arabic there is practiced a word qismat, Pers. qesmat “fate” from Arab. qesm “part”.<sup>4</sup> From Arabic in Tatar language the word *кисемтә* is used as well for the idea “part, cut, section, segment”. Armenian dialects possess the word *ysmat* (յսմաթ) “fate, luck”.

Syriac likewise has *helqa* “fate” from *ḥəlaq* “to divide, to allot”.<sup>5</sup>

Tat. **рәһәһ** “guilt, sin” > N.Pers. gonāh > M.Pers. vināh, Parth. vinās (Arm. vnas (վնաս)) > O.Ir. preverb \*vi- and vnas- “to disappear, to perish”. In Manichaean M.Pers. religious texts we meet *wyn'h/wināh/* “sin, guilt”.

Tat. **абруй** “authority, honour, reputation, fame” > N.Pers. ābru, āberu<sup>6</sup> “honour, respect, dignity”. Complex noun consisted of two words: āb “water” and ru, ruy “face”; “water of face” which relates to the idea of “fame, authority”. These two words both have Iranian origin: āb “water” > O.Ir. \*apa-, O.Pers. apa-, Av. apa- < M.Pers., Parth. āb; ru, ruy “face” > O.Ir. \*rōda- < M.Pers. rōy, rād. In Armenian dialects the word is attested in a form *abur* (աբուր), which is often compounded with another word indicating the meaning “shame” – *amot* (ամոթ); *amot-abur* (ամոթ-աբուր) “shame and fame”.

Tat. **даруханә** “pharmacy, drug-store” > N.Pers. dāruḫāna > dāruḫāne. This complex word unit includes two elements: dāru “medicine, drug, remedy” and xāne “home, house”. The words are originally Iranian: N.Pers. dāru > M.Pers. dārüg “plant” > O.Ir.

<sup>4</sup> Eilers W., “Schöpfergott,” in: *Ex Orbe Religionum, Studia Geo Widengren Oblata*, Leiden, 1972, II, p. 400

<sup>5</sup> Eilers W., Shaked S., op. cit.

<sup>6</sup> The word has several synonyms in Persian like *eftexār, šohrat, šaraf, hormat*.

In Iranian culture the notion of āberu, among many, constitutes such a concept. It is commonly used by Iranians in their everyday lives and its popular meaning can be expressed encompassing terms like reputation, face or good name, but also personality, social status and prestige. For Iranians āberu is an important element of family, social and professional life. Having it is equivalent to higher status, both in terms of personal and public existences. It involves honour, respect and esteem (See Zabrowska M., A Contribution to the Study of the Persian Concept Āberu, p. 113; Sophia A. Koutlaki, Among Iranians, Boston: Nicholas Brealey Publishing, 2010, p. 31).

\*dārūka-; N.Pers. (classical) xāna > N.Pers. (modern) > xāne > O.Ir. \*xānaka-, O.Pers. xānaka- < M.Pers., Parth. xān, xānag.

It is interesting that the first part of this noun is used in Tatar language for indicating the meaning "medicine, drug" – дару. But concerning the second element of the word Tatar language possesses own Turkic origin unit: йорт, өй, йорт-жир "home".

Tat. фәрештә "angel" > N.Pers. ferešte > O.Ir. \*fraēšta- "envoy, missionary, sent (person)", O.Pers. fraēšta- aka- < M.Pers. frēstag, Parth. frēstag "apostle, angel". Verb form derived from this nominal part is frēstadan "to send", N.Pers. ferestadan. In Armenian the Parthian loanword is used for "angel" - hrštak (հրեշտակ) with fr > hr regular phonetic transition.

Tat. фәрман "order, command" > N.Pers. farmān > O.Ir. \*framānā-,<sup>7</sup> O.Pers. framānā- < M.Pers., Parth. framān. The Parthian loanword with the above mentioned phonetic transition is in use in Armenian hrman (հրաման):

Tat. такта "board, plank" > N.Pers. taxta > taxte "board, desk, screen" > O.Ir. √taxš "to hack, to whittle", past participle \*taxta- < M.Pers. taxtak > taxtag "tablet, plank, (chess) board". The Armenian language has borrowed the word in early Pahlavi period and it sounds in Armenian taxtak (տախտակ). The verbal form in Armenian is tašel (տաշել) "to hack, to hew" which appears to be an early period Iranian loanword as well.

Tat. аждаха "dragon" > N.Pers. aždahā, eždahā > O.Ir. aži-dahāka- < M.Pers. azdahāk > Man. M.Pers. azdahāg "dragon"; used of the nodes of the moon, y, 1, Parth. aždahāk which penetrated into Armenian - aždahak (աճախակ) "dragon, snake".<sup>8</sup>

<sup>7</sup> More details for this word and \*fra- particle see Bartholomae Ch., Altiranisches Wörterbuch, 1904, 987-988.

<sup>8</sup> This creation as a monstrous figure is well attested in Armenian and Iranian epic tradition. "Tigran and Azhdahak" which is also called "Tigran the Great and Azhdahak" is an Armenian epic poem belonging to ancient layers. This epos has been written down by the Armenian historian Moses Khorenatsi. The historical basis of the epos appears to be the war between Armenian (Ervanduni) and Iranian

Tat. дин "religion, faith" > N.Pers. din > O.Ir. \*daēna-, O.Pers. daēna- < M.Pers., Parth. dēn.

Tat. дус "friend" > N.Pers. dost > dust > O.Ir. dauštar- "friend, patron"; √zaoš- "to love, to like" < M.Pers., Parth. dōst. It is worth mentioning that in Armenian dialects and also in Armenian mediaeval literature we face the word dost, dust (դուստ, դուսթ) with the same meaning which is an Iranian borrowing in Armenian as well.

Tat. 1. жан, 2. рух "soul"

1. N.Pers. jān > O.Ir. \*gyāna- < M.Pers. kyān > gyān "soul, ghost", gyānīg "spiritual, vital".

In Armenian there exists late Iranian borrowing jān (ջան) for expressing several meanings: "body, soul" as well warm and heartily handling to people, for instance ynker jan (ընկեր ջան) "dear friend" (cf. N.Pers. jānam = azizam, dust-e azizam). Concerning early Middle Iranian period loanword in Armenian we have k'eank (կեանք) "life".

2. N.Pers. ruh "soul" > Arabic ruh (روح), cf. M.Pers. ruwān "soul".

It is interesting that for expressing the single idea "soul" Tatar language has borrowed two words the first of which is originally Iranian and the second is Arabic but borrowed via Persian.

Tat. дивана "fool" > N.Pers. divāna > divāne "mad" > O.Ir. \*daēva- "demon" and -anaka- particle, O.Pers. daēva- < M.Pers., Parth. dēv "demon, devil", dēvānag "demonic, mad".

Armenian language has borrowed the word dev (դև) "demon, devil", divahar (դիվախար) "mad".

Tat. чатыр "tent, pavilion, mantle, veil, parasol" > N.Pers. čādor > O.Ir. čātra-, Sanskrit čattra-, M.Pers. čātur > čādur.

In Armenian there is a word mentioning the meaning "veil": čadra (Չափրի). This Iranian word is also in use in other Turkic languages in the forms of čādar, čādera, čādir, čādra.<sup>9</sup>

(Achaemenian) dynasties against the Median king Astiages who is identified with the dragon Azhdahak. It appears in "Shahnameh" of Ferdowsi as well.

<sup>9</sup> For the borrowings of this and other words in other Turkic family languages see Tietze A., Lazard G., Persian Loanwords in Anatolian Turkish, Oriens, vol. 20, 1967, pp. 125-168.

Tat. **ЧИШМӘ** "source, spring" > N.Pers. *češme* from *češm* "eye" > O.Ir. \**čašma*- "eye", *čašmaka*- < M.Pers., Parth., *čašm* "eye", *čašmak* > *čašmag* "fountain, source, spring". The word with the same semantic behavior has also penetrated into other Turkic languages in different phonetic variants: *čašma*, *češme*, *tešme*.

Tat. **ИНЖИР** "fig" > N.Pers. *anjir* > O.Ir. \**anačiθra*-<sup>10</sup> "non-blossoming, non-flowering" < M.Pers. *anjīr*, Sogd. Man. *ančēr*, *anjēr*. Beside the wide large abundance of the word in Iranian languages and dialects, this unit with the form *hejir* is attested in other Turkic languages as well.

Tat. **ДАЯ** "nurse, foster-mother, midwife" > N.Pers. *dāye* > O.Ir. \**dāyaka*- < M.Pers. *dāyak*.

Pahlavi word is borrowed by Armenian in early Middle Iranian linguistic development period - *dayak* (*դայակ*) "nurse, midwife". The word exists in a number of other Turkic languages as well in *dāya*, *taya* forms.

Tat. **АВАЗ** "sound, noise" > N.Pers. *āvāz* > M.Pers., Parth. *āvāz*.

Tat. **ЛАКЛАК** "stork" > N.Pers. *laklak*, onomatopoeic word.

In Armenian dialects there exists the same unit *laklak* (*լաքլաք*).

### Conclusion

The above-investigated small amount word units, as it becomes obvious, presents a wide variety and large aspects concerning culture, religion, flora and fauna, administration, everyday life. Naturally, each mentioned word indicates a separate field which includes a group of linguistic units close to each other semantically. This means that the number of Iranian borrowings can be of big abundance in Tatar language which is a subject of multi-profile and detailed research both in phonetic, semantic and etymological spheres. On the other hand, linguistic relations witness about the coherence and mutual communications of the two worlds in different fields.

<sup>10</sup> More detailed see Bläsing U., *Irano-Turcica*, *Studia in Honorem Stanislaw Stachowski Dicata, Folia Orientalia*, vol. XXXVI, Krakow, 2000, p. 36.

## ՈՐՈՇ ՊԱՐԿԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԱԹԱՐԵՐԵՆՈՒՄ

### Քնարիկ Միրզոյան Թադևոս Չարյան (ամփոփում)

Հոդվածում ներկայացված է իրանական և թյուրքական լեզվական ոլորտում փոխառնչակցությունների խնդիրը, որը վկայում է այս երկու աշխարհների միջև պատմական, մշակութային և քաղաքակրթական սերտ կապը: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում, կապված տարածաշրջանում իրանական լայն ազդեցության հետ, բազում իրանական բառեր են փոխառվել հարևան լեզուների կողմից: Թաթարերենում վկայված իրանական փոխառությունները կատարվել են թե՛ ուղղակի, թե՛ միջնորդավորված ճանապարհով: Այս իրողությունը փաստում է իրանական և թյուրքական փոխհարաբերությունները, որոնք առավել շոշափելի արտահայտվել են արդեն IX-X դարերում:

Բառային եզրերը, որոնք տեղ են գտել հոդվածում, ներառում են տարբեր ոլորտների՝ մշակութային, կրոնական, բուսական և կենդանական, վարչական, կենցաղային միավորներ: Վերջիններս քննության են ենթարկվել բազմակողմանի հնչյունաբանական, իմաստաբանական և ստուգաբանական տեսանկյուններից: Բնագավառների բազմազանությունը ենթադրում է, որ իրանական փոխառությունները թաթարերենում մեծ թիվ են կազմում. այս հանգամանքը հիմք է ընձեռում կատարելու հետագա առավել լայն հետազոտություն:

ՇԵՏՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ԱՂՎԱՆՔՈՒՄ «ՔՈՒՐԴ» ԱՆՎԱՆ ՄԻ  
ՔԱՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

**Բանալի բառեր՝ Կուր-արաքսյան միջագետքը, քուրդ, Բաղասականի քրդեր, Պարպավի քրդեր, Քրդերի դուռ, Դասամ իբն Իբրահիմ ալ-Քուրդի, դեյլամցիներ**

Հետմարզպանական Աղվանքում<sup>11</sup> (արաբ. Arrān > al-Rān) «քուրդ» անվան հիշատակությունների մի քանի դեպքեր են առձանագրված արաբագիր պատմիչների և աշխարհագիրների մոտ՝ խնդրո առարկա երկրամասի տարբեր հատվածներում VII դարի կեսերից մինչև X դարի վերջ ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցած պատմական իրադարձությունների նկարագրությունների համաշարում:

Արաբ աշխարհագիրներից ալ-Բալազուրին (մոտ 820-892 թթ.) իր «Երկրների նվաճումը» (Ֆուտուհ ալ-Բուլդան) աշխատությունների մեջ պատմելով Ատրպատականում, Հայաստանում և Աղվանքում արաբական բանալի նոր արշավանքների մասին:

\* *Ս. Տոնյան*՝ բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ իրանագիտության ամբիոնի ասիստենտ, էլ. փոստ՝ [artvom.tonoyan@ysu.am](mailto:artvom.tonoyan@ysu.am): Հ. Սարգսյան՝ ԵՊՀ իրանագիտության ամբիոնի ասպիրանտ:

<sup>11</sup> Սույն հոդվածում «Հետմարզպանական Աղվանք» եզրույթը գործածված է Արաքս և Կուր գետերի միջև ընկած տարածքի վերաբերությամբ, որը հայ մատենագրության և պատմագրության մեջ հայտնի է «Աղուանք Հայք», «Աղուանից Հայք», «Հայոց Աղվանք» տարբերակներով (մանրամասն տե՛ս Սվազյան Հ., «Աղվանք տեղանվան բովանդակային փոփոխությունների և գործածության ոլորտների շուրջ», *Լրաբեր Հասարակական Գիտություններ*, 2008 (2), 258-267 էջեր): Ընտրված եզրույթը նույնական է սույն հոդվածում օգտագործված արաբական սկզբնաղբյուրներում հանդիպող Arrān ձևի հետևուստի սկզբնաղբյուրային հիշատակությունների դեպքում թողնված է երկրանվան Arrān տարբերակը:

հիշատակում է. «Երբ Օսման [խալիֆան] Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլին հրամայեց գնալ Առան, սա գրավեց Բայլական քաղաքը<sup>12</sup> հաշտության պայմանագրով, երաշխավորելով նրանց (բնակիչների) արյունը (կյանքը), ունեցվածքը, քաղաքի պահպանները և պայման դրեց վճարել ջիզիա ու խարաջ: Ապա Սալմանը եկավ Պարտավ<sup>13</sup>, բանակ դրեց Տրտուի (Մարսուր) ափին, որը մի գետ է նրանից մեկ փարսախից պակաս հեռավորության վրա: Բնակիչները [քաղաքի] դռները փակեցին նրա առջև, իսկ նա օրերով պաշարեց ու ասպատակեց նրա գյուղերը, որոնց ցանքերը հանձնվելու էին, հասունացել էին: Նրանք հաշտություն կնքեցին Բայլականի հաշտության պայմաններով, բացեցին քաղաքի դռները, իսկ նա մտավ և այնտեղ կանգ առավ: Նա հեծյալներ ուղարկելով նվաճեց Շակաշեն (Շակաշին), Մեծ Կուենք (Միսկուան), Ուտի (Ուզ), Մեծ Իրանք (Միսրիան), Հարձլանք (Հարջալիան) և Տրի (Տիար)<sup>14</sup> գավառները (ոասատիկ), ապա նվաճեց Առանի այլ մասերը: Կոչ արեց Բաղասականի (Բալասաջան)<sup>15</sup> քրդերին ընդունել մահմեդականությունը, իսկ

<sup>12</sup> Բայլականը նույնական է հայ մատենագրության մեջ հանդիպող Փայտակաբանի հետ, որը գտնվել է Մեծ Հայքի թագավորության ծայր արևելքում և եղել արքունի քաղաք (բնակավայրի տեղադրության տարբեր վարկածների մասին մանրամասն տե՛ս Զարությունյան Բ., «Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը», *ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների»*, 1981 (12), 61 - 76 էջեր):

<sup>13</sup> Պարտավը (արաբ. Bardā' a, վրաց. Bardavi, միջև պրսկ. Pērōzāpāt) Աղվանքի, ապա նաև հետմարզպանական Աղվանքի կամ Առանի գլխավոր քաղաքն էր 4-10-րդ դարերի ընթացքում: Քաղաքն ընկած էր Կուր գետից 2-3 փարասախ դեպի հարավ՝ Տրտու գետի վրա: (մանրամասն տե՛ս Marquart J., *Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i*, Berlin, 1901, ss. 117-118, նաև՝ Bosworth C., "Bardā' a", *Encyclopedia Iranica*, Vol. III, Fasc. 7, pp. 779-780):

<sup>14</sup> Շակաշեն, Մեծ Կուենք, Ուտի, Մեծ Իրանք, Հարձլանք և Տրի բնակավայրերի տեղադրության մասին տե՛ս Արաբական աղբյուրներ Գ, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, թարգմ. բնագրից, ներածությունը Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 321 (ծնթ. 140-145):

<sup>15</sup> Հայկական աղբյուրներում Բաղասական անվամբ հայտնի երկրամասը ալ-Բալազուրիի մոտ հիշատակված է Բալասաջան (بلاسجان) տարբերակով, իսկ իբն Խալդունի մոտ Բալասաջանի քրդերը սխալմամբ նշված են ալ-Բուշանջան

նրանք կռվի դուրս եկան, և նա հաղթեց նրանց, ունաց պարտավորեցնելով ջիզիա վճարել, իսկ այլոց, որոնք փոքրաթիվ էին՝ սաղակա»։<sup>16</sup>

Պատմելով պարտավական գյուղում բալասաջան քրդերի հետ հրամանատար Սալման իբն Ռաբիայի բախման մասին, գրեթե այդ նույն տեղեկությունն են բերում նաև ծագումով բուրգ <sup>17</sup> Իբն ալ-Ասիբը (1160 -1233 թթ.) իր «Լիակատար Պատմություն» (Ալ-Քամիլ ֆի-լ Տարիխ), <sup>18</sup> Իբն ալ-Ֆակիհը (IX-X դար) իր «Գիբթերկրների մասին» (Քիտաբ ալ-Բուլդան),<sup>19</sup> Յակուտ ալ-Համավիին (1178-1229 թթ.) իր «Աշխարհագրական բառգիրք» (Քիտաբ Մաջամ ալ-Բուլդան) գրքում<sup>20</sup>, ավելի ուշ՝ նաև իբն Խալիդունը (XIV դար) <sup>21</sup> և այլք։ <sup>22</sup> Արաբական պատմադրությունները բալաշաջան

ձևով (տե՛ս u Поладян А., *Курды в VII – X веках по арабским источникам*, Ерewan, 1987, стр. 23-24): Արաբական աղբյուրներում երկրամասը հանդիպում է եսե Balāsājān, հունականում՝ Balasagene, միջին պարսկերենում՝ Bl'sk'n, պարսերենում՝ Bl'ska տարբերակներով (տե՛ս u Bosworth C., "BALĀSAGĀN" *Encyclopedia Iranica*, Vol. III, Fasc. 6, pp. 580-582): Գոյություն ունեն Բաղասականի տեղադրության տարբեր վարկածներ (մանրամասն տե՛ս u Խորիկյան Հ., «Բաղասական աշխարհի տարածքը», *Պատմաբանասիրական հանդես*, 2010(2), 150-168 էջեր), այնուամենայնիվ, հաշվի առնելով արաբ հեղինակները մոտ այս երկրամասի՝ Պարտավի հարևանությամբ տեղադրումը, առավել հավանական է թվում դրա՝ Կուրի աջափնյակում գտնված լինելու տարբերակը (Լան նույն արաբ հեղինակների հիշատակությունների մեկնաբանությամբ Կուրի ձախափնյակում է, սակայն, տեղադրում Բաղասականը Հ. Խորիկյանը (Խորիկյան, 2010)):

<sup>16</sup> Արաբական աղբյուրներ Գ, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, թարգմանագրից, ներածությունը Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, 273-274 էջեր:

<sup>17</sup> Blau J., "Written Kurdish literature", in: *Oral Literature of Iranian languages: Kurdish, Pashto, Balochi, Ossetic, Persian & Tajik, Companion Vol. II to A History of Persian Literature* (ed. Kreyenbroek Ph. & Marzolph Ul.), London-New York, 2010, p. 2):

<sup>18</sup> Արաբական աղբյուրներ, Բ, Իբն Ալ-Ասիբ, թարգմանագրից, առաջաբանը և ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 56:

<sup>19</sup> Поладян А., նշվ. աշխ., էջ 24; նաև՝ Արաբական աղբյուրներ, Գ, ... 2005, էջ 499:

<sup>20</sup> Նալբանդյան Հ., *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին: Յակուտ ալ-Համավիի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադդադ*, Երևան, 1965, էջ 10:

<sup>21</sup> Поладян А., նշվ. աշխ., էջ 24:

քրդերին հիշատակել են այն քրդերի մեջ, որոնց անվտանգության վերաբերյալ արաբ հրամանատար իբն ալ - Յամանիի և Ատրպատականի մարզպանի միջև 642/3 թ. կնքվել էր պայմանագիր:<sup>23</sup> Այս համատեքստում հետաքրքիր է հատկապես Յակուտ ալ-Համավիի հիշատակությունը, որտեղ նա, պատմելով իբն ալ-Յամանիի՝ Ատրպատականի վրա կատարած հարձակման և դեպի Արդաբիլ առաջխաղացման մասին, **Բաղասականի քրդերին նշում է Սաբիլանի և Միան Ռուզանի քրդերի հետ միասին: Յակուտ ալ-Համավիին գրում է. «Քաղաքի (Արդաբիլի - Ա.Տ., Հ.Ս.) մարզպանը Բաջարվանից, Մայմազից, ալ-Բադից, Մարայից, Շիզից, Մայանաջից և այլ կողմերից հավաքել էր բազմաթիվ մարդկանց: Մուսուլմանները մեծ կոտորած տվին նրանց: Մի քանի օր անց մարզպանը ամբողջ Ադրբեջանի անունից հաշտություն կնքեց Հուզայֆայի (իբն ալ Յամանիի - Ա.Տ., Հ.Ս.) հետ՝ հանձն առնելով ուլ՝ հազար դիրհեմ վճարել, պայմանով, որ մուսուլմանները ոչ յոթի չսպանեն, երկրի ժողովրդից գեղի չվերցնեն, կրակատուն չքանդեն՝ <sup>24</sup>և ոչ էլ հարձակվեն Բալասաջանի, Սաբիլանի<sup>25</sup> և Միան-Ռուզանի <sup>26</sup> քրդերի վրա և ... »: <sup>27</sup> Սալման իբն Ռաբիայի և Բաղասականի քրդերի բախումը դեռևս VII դարի կեսերին հետմարզպանական Աղվանքում**

<sup>22</sup> Սալման իբն Ռաբիայի դեպի Բաղասական արշավանքի նկարագրությունը տե՛ս u նաև Եղիազարյան Ա., «Հաբիբ իբն Մասլամայի և Սալման իբն Ռաբիայի արշավանքները Հայաստան և այսրկովկասյան երկրներ», *Լրաբեր Հասարակական Գիտությունների*, 2008 (2), էջ 68-77:

<sup>23</sup> Аршак Поладян, նշվ. աշխ., էջ 23-24:

<sup>24</sup> Նալբանդյան Հ., նշվ. աշխ., էջ 10:

<sup>25</sup> Լույսիական է Սաբալանի հետ, որը 4740 մ. բարձրությամբ լեռ է հյուսիսարևմտյան Իրանում՝ ներկայիս Արդաբիլ նահանգում (տե՛ս u Ehlers E., "Sabalan mountain", *Encyclopedia Iranica* 2011, <http://www.iranicaonline.org/articles/sabalan-mountain>): Հայերենում հանդիպում է Սավալան, Սահվարզան, Շահվարզան և այլ տարբերակներով (մանրամասն տե՛ս Амбарцумян А., "Область Пайтакаран и гора Сабалан". Филологические и этимологические очерки, *Բաների Հայագիտության. հայագիտական միջազգային հանդես*, 2016, № 2 (11), էջեր 5-24):

<sup>26</sup> Հավանաբար պետք է լինի Միան-Ռուզան, որ պարսկերենում նշանակում է «միջագետք»:

<sup>27</sup> Նալբանդյան Հ., նշվ. աշխ., էջ 10:

«քուրդ» անվան հիշատակմամբ (արաբական սկզբնաղբյուրներում) առաջին իրադարձությունն է:

Հետագայում «քուրդ» անունն այս երկրամասի հետ առնչվում է արաբալեզու պատմաաշխարհագիրների այլ հիշատակություններում նա: Մասնավորապես, Իբն Միսկավեյիը (933–1030 թթ.) իր «Ճողովորդների փորձերի գիրք» (*Թաջարիբ ալ-Ումամ*) աշխատասիրության մեջ, պատմելով ռուսների՝ 943թ. Կասպից ծովն ու Կուր գետը հասելով Պարտավի վրա կատարած հարձակման մասին, գրում է. «*Նրանք (ռուսները), անցան ծովը (Կասպից ծով – Ա. Տ.), որը սահմանակցում է իրենց երկրի հետ, կտրեցին անցան Կուր անվամբ գետը, որի ջրերը գալիս են Ատրպատականից և Հայաստանից և թափվում ծովը: Այդ գետը Պարտավ քաղաքի գետն է և նրան համեմատում են Տիգրիսի հետ: Երբ նրանք հասան Կուր, նրանց դեմ դուրս եկավ Մարզուբանի ներկայացուցիչը՝ նրա օգնականը Պարտավի կառավարման գործում: Նրա հետ էին երեք հարյուր մարդ դեյլամցիներից և նույնքան էլ թափառաշրջիկներ և քրդեր»:<sup>28</sup>*

Ընդ որում, 943 թ.՝ դեպի Պարտավ ռուսական հարձակումից ընդամենը 7 տարի առաջ այստեղ դրամ էր հատել մայրական արմատներով քուրդ Դայսամ իբն Իբրահիմ ալ-Քուրդին<sup>29</sup>, որը գրավելով Ջիբալը<sup>30</sup> և 934 թ. հայտնվելով Ատրպատականում, 936/7թթ. Պարտավում թողարկել է դրամ իր անունով:<sup>31</sup> Պար-

տավում Իբրահիմ ալ-Քուրդիի անունով դրամահատության փաստը թույլ է տալիս ենթադրել, որ այդ տարիներին վերջինս իր իշխանությունը կարողացել էր տարածել նաև Արաքսից հյուսիս՝ մինչև Կուր գետ՝ իր վերահսկողության տակ առնելով ամբողջ Կուր-արաքսյան միջագետքը:

Աղվանքում ապրող «քրդեր»-ի մասին խոսում է նաև X դարի արաբ աշխարհագիր Իբն Մասուդին (896 – 966 թթ.) իր «Ցուցումների և դիտարկումների գիրք» (*Քիթաբ ատ-տանբիհ վալ-իշրաֆ*) աշխատասիրության մեջ: Թվելով «քրդեր»-ի կողմից բնակեցված վայրերը՝ հեղինակը նշում է. «*Նրանք ապրում էին սփռված Ատրպատականում, Հայաստանում և Առանում, Բայլականում և Բաբ ուլ-Արվաբում (Դերբենդ – Ա.Տ, Հ.Ս.)*»:<sup>32</sup>

Պարտավում «քուրդ» անվան հիշատակություն է պահպանվել նաև ալ-Իսթախրիի (մոտ 850-951 թթ.) «Գիրք թագավորությունների ճանապարհների մասին» (*Քիտաբ Մասալիք ալ-Մամալիք*) գրքում, որտեղ հեղինակը Պարտավ քաղաքը նկարագրելիս հիշատակում է. «*Պարտավի դռան մոտ, որը կոչվում է Բաբ ալ-Աքրադ (քրդերի դուռ), կա մի շուկա, որը կոչվում է ալ-Քուրքի, և տարածությունը փարսախով փարսախ է: Մարդիկ այստեղ հավաքվում են ամեն կիրակի և գալիս են ամեն կողմերից, նույնիսկ Իրաքից: Սա ավելի մեծ է, քան Քուլսարայի շուկան: Քուրքի (քուրաքի)<sup>33</sup> անունը արդեն դարձել է այդ օրվա անունը. ...*»:<sup>34</sup>

<sup>28</sup> Якубовский А., "Ибн-Мискавейх о походе Русов в Бердаа в 332г. - 943/4 г.", *Византийский временник*, т. XXIV, 1926, стр. 65:

<sup>29</sup> Bosworth C., "Daysam b. Ebrāhim Kordī", *Encyclopaedia Iranica*, vol. VII, fasc. 2, pp. 172-173:

<sup>30</sup> Արաբական արշավանքներից հետո Ջիբալը (արաբ. թրգմ. «լեռներ») Իրանական սարահարթի արևմտյան հատվածի անվանումն էր, որն ընդգրկում էր Միջագետքի և Դաշութ-է Քավիթի միջև ընկած լեռնային տարածքները: Հետագայում նշված տարածքի համար ավելի լայն կիրառություն է ձեռք բերում «Իրաքյան Աջամ» անվանումը: (մանրամասն տե՛ս Christensen P., *The Decline of Iranshahr: Irrigation and Environments in the History of the Middle East, 500 B.C. to A.D. 1500*, Copenhagen, 1993, p. 143:

<sup>31</sup> А.А. Быков, "Дайсам ибн Ибрахим ал-Курды и его монеты", *Эпиграфика Востока*, X, 1955, стр. 27-28:

<sup>32</sup> Караулов Н. А., "Сведения арабских географов IX и X веков по Р. Хр. о Кавказе, Армении и Азербейджене", *Сборник материалов для описания местностей и племен Кавказа*, т. 38, Тифлис 1908, стр. 36, նաև՝ *Արև ալ-Հասան Ալի իբն ալ-Հուսայն իբն Ալի ալ-Մասուդի, Ոսկու մարգագետիններ և գոհարների հանքեր* «Մուրուջ ազ-զահաբ վա մաադին ալ-ջավահիր», *Ցուցումների և դիտարկումների գիրք* «Քիթաբ ատ-տանբիհ վալ-իշրաֆ», «հատվածներ Հայաստանի, Կովկասյան լեռների և հարևան երկրների մասին», արաբ. բնագր. թարգման., Մասուդիի կենսագր. և ծանոթագր. Ա.Ս. Եղիազարյանի, Երևան, 2007:

<sup>33</sup> Շուկայի անվանումը՝ «Քուրքի/քուրաքի/քարաքի» (արաբ. الكركى), ըստ Հր. Աճառյանի, հունարենից հայերեն անցած «կիրակի» (կիրակի) բառից է (Աճառյան Հ., *Հայերենի արմատական բառարան*, 2-րդ հրատ., հատ. 2, Երևան, 1973, 598-599 էջեր): Սա թույլ է տալիս ենթադրել, որ հայկական էթնիկ տարրը



Այս հատվածը գրեթե նույնությամբ կրկնել է Իբն Հաուկալն (մոտ 920-977 թթ.) իր «Երկրի պատկերը» (Մուրատ ալ-Արդ) գրքում՝<sup>35</sup> իր ձեռքի տակ ունենալով ալ-Իսթախրիի աշխատանքը, որը փոխանցել էր նրան՝ Իբն Հաուկալին հենց ալ-Իստախրին՝ այն ամբողջացնելու և խմբագրելու համար:<sup>36</sup>

Սույն հոդվածում բերված այն հիշատակությունները, որոնք վերաբերում են 10-րդ դարի իրադարձություններին, մասնավորապես Դեյսամ իբն Իբրահիմ ալ-Քուրդիի կողմից Պարտավում դրամ հատելուն (936 թ.), ռուսների՝ Պարտավի վրա հարձակման ժամանակ քուրդ-դեյլամական համատեղ ջոկատի ջախջախմանը (943 թ.), նաև քաղաքի դարպասներից մեկի՝ «Քրդերի դուռ» անվանվելուն (10-րդ դարի 2-րդ կես), կարելի է դիտարկել որպես «քուրդ» անվան ցեղանվանական նշանակությամբ վաղ արաբական վկայություններ, որոնցում «քուրդ» եզրույթը քուրդ էթնոսի նշանակյալ է: Այս ենթադրությունը հիմնված է այն իրողության վրա, որ 10-րդ դարից սկսած տարածաշրջանում ակտիվանում է իրանական տարրը, որի արդյունքում X-XI դարերում տեղի է ունենում դեյլամցիների,<sup>37</sup> սրանց հետ նաև քրդերի տեղաշարժ իրենց բնակություն գոտիներից դեպի հյուսիս՝ Հայաստան և Աղվանք: X դարի առաջին կեսին քրդերն, իբրև ռազմիկ տարր, կարևոր դեր էին խաղում արդեն Ատրպատականի

---

պետք է կարևոր դերակատարություն ունեցած լինի Աղվանքի՝ այդ շրջանի գլխավոր քաղաքի՝ Պարտավի առնվազն տնտեսական կյանքում:

<sup>34</sup> Արաբական աղբյուրներ Գ, Արաբ մատենագիրներ..., 2005, էջ 573; Карацос H., նշվ. աշխ., էջ 14 – 15:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 628:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 581:

<sup>37</sup> Հայկական աղբյուրներում՝ սկսած VII դարի Անանունի «Աշխահացոյց»-ից մինչև XII դարի Ուոհայեցու «Ժամանակագրություն» բազմիցս հիշատակված իրանական ժողովուրդ է, որը բնակվում էր Կասպից ծովից դեպի հարավ-արևմուտք (ցեղանվան հայ մատենագրային վկայությունների և դեպի Հայաստան արշավանքների մասին տե՛ս Յուզբաշյան Կ., «Դելմիկները Արիստակես Լաստիվերցու «Պատմության» մեջ», *Բանբեր Մատենադարանի*, № 5, 1960, 307-311 էջեր):

ռազմաքաղաքական կյանքում և, աստիճանաբար որպես վարձկան զորք՝ ծառայության անցնելով Սաջյանների, Մալարյանների և նաև Դայսամ իբն Իբրահիմ ալ-Քուրդիի բանակներում<sup>38</sup> դեպի հյուսիս տեղաշարժերի ու արշավանքների արդյունքում հայտնվում են Աղվանքում, այդ թվում նաև երկրամասի գլխավոր քաղաք Պարտավում:

Ալ-Իսթախրին և Իբն Հաուկալն իրենց գրքերում թողել են երկու հիշատակություն X դարում Պարտավում տիրող լեզվական իրավիճակի մասին, որոնք հետաքրքիր են այդ շրջանում այնտեղ քրդական ներկայության խնդրի քննության համատեքստում: Պատմիչը գրում է. «Ատրպատականի, Հայաստանի ու Առանի լեզուն պարսկերենն է: Սակայն Դվինում և շրջակա գավառներում բնակչությունը խոսում է հայերեն (արմանիյա, արմինիյա), իսկ Պարտավի շրջանում բնակչության լեզուն առաներենն (առանիյա) է»: <sup>39</sup> Նույն խնդրի շուրջ ավելի հստակ նկարագրություն է տալիս Իբն Հաուկալը. «Հայաստանում խոսում են հայերեն, Առանում՝ առաներեն (առանիյա), իսկ նրանց խոսած պարսկերենը (ֆարսիյա) հասկանալի է և մոտիկ Խորասանի [բարբառին], իր ձայներով (տառերով)»: <sup>40</sup> Չնայած մեծ է հավանակությունը, որ այս «առաներենը» հենց աղվաներենն է, որն այդ շրջանում հավանաբար դեռևս եղել է հաղորդակցության լեզու, բայց կա նաև տեսական հնարավորություն, որ «առաներեն» բառով պատմիչները նշանակել են տարածքում ենթադրաբար խոսված որևէ հյուսիսարևմտաիրանական լեզու: Այս համաշարում կարևոր կարող է լինել տեսքով իրանական այն բաների քննությունը, որոնք հաղորդում է պատմիչը Պարտավը նկարագրելիս: Դրանք ենք *ռուկալ* (ինչ-որ քաղցրահամ կորիզով պտուղ) և Կուր գետում աճող ձկների երեք անվանումներ՝

---

<sup>38</sup> Փոլադյան Ա., «Քրդերը և ռազմաքաղաքական անցքերը Ատրպատականում X դարի առաջին կեսին (ըստ արաբական աղբյուրների)», *Պատմաբանասիրական հանդես*, 1984 (2), 87 – 92 էջեր:

<sup>39</sup> Արաբական աղբյուրներ Գ, Արաբ մատենագիրներ..., 2005, էջ 577:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 655:

աշուբա, գարակին, <sup>41</sup> սուրմահի: <sup>42</sup> Բերված բառերից որոշներում կարելի է նկատել քրդերենի հետք, մասնավորապես *սուրմահի* <sup>43</sup> բառի առաջին բաղադրիչը իր արտաքին հնչյունական տեսքով հիշեցնում է քրդերենի *sör/sür* «կարմիր» բառը՝ գուցե նշանակելով «կարմրախայտ» կամ պարզապես «կարմրածուկ», իսկ *գարակին* բառը կարող է կապ ունենալ քրդ. *zereke* (անգլ. Capoeta umbra) ձկնանվան հետ:

Ավելի բարդ է VII դարի 40-ական թվականների՝ դեպի Ադվանք արաբական առաջխաղացման ժամանակ հիշատակված «**Բաղասականի քրդեր**» կապակցության բացատրության հարցը, քանի որ X դարին նախորդող շրջանի համար չկան բուն քրդական էթնիկ տարրի դեպի Ադվանք տեղաշարժերի մասին վկայություններ: «**Բաղասականի քուրդ**» եզրույթով արաբ պատմիչները, ամենայն հավանականությամբ պետք է կոչելին կամ հայ մատենագրության մեջ վկայված տեղի *բաղասիճ* <sup>44</sup> (հմմտ.՝ *ատրպատիճ*, *լահիճ* և այլ) ցեղի ներկայացուցիչներին կամ էլ այն իրանական տարրին, որոնք ենթադրաբար սասանեյանների ժամանակ երկրի հյուսիսային սահմանների ամրապնդման նպատակով պարբերաբար Իրանից տեղափոխվել էին Ադվանքի տարբեր հատվածներ: <sup>45</sup> Այստեղ կարևոր է ի նկատի առնել նաև այն հանգամանքը, որ ինչպես մինչիսլամական, այնպես էլ իսլամի տարածման վաղ շրջանում «**քուրդ**» (արաբ. հոգն. «**աքրադ**») անունը ունեցել է ոչ թե էթնիկ խմբի իմաստ,

այլ նշանակել է «քոչվոր», «հովիվ», և կիրառվել որպես լեռնային, նաև իրանական կամ իրանականացած քոչվոր ցեղերի և խմբերի ընդհանրական անվանում: <sup>46</sup> Նշված իմաստներով, ըստ Փոլադյանի, «**քուրդ**» տերմինի գործածում է նկատվում ալ-Ջահիզի, ադ-Դինավարիի, աթ-Թաֆարիի, Իբն ալ-Ասիրի աշխատանքներում: <sup>47</sup> Թերևս նույն կերպ կարելի է մեկնաբանել նաև Մասուդիի՝ Բայլականում հիշատակած քրդերի դեպքը: Ենթադրաբար, արաբալեզու հեղինակներին տերմինի՝ նմանատիպ իմաստային գործածման հիմք է տվել տեղական իրանական ավանդույթը և մասամբ պահպանվելով գրված «Քարնամակ-ի Արտաշիր-ի Պապական» ստեղծագործությունը, որտեղ «**քուրդ**» բառը օգտագործված է «հովիվ», «խաշնարած» իմաստներով: <sup>48</sup> Այս եզրը օգտագործվել է նաև քոչվոր կենսակերպ ունեցող կոնկրետ ցեղերին նշելիս: Այսպես՝ Համգա ալ-Իսֆահանին (10-րդ դար) գրում է, որ պարսիկները դեյլամցիներին անվանում էին «**Թաֆարիստանի քրդեր**», իսկ արաբներին՝ «**Սուրիստանի քրդեր**»: <sup>49</sup> Թերևս այս նույն համաշարում արաբ պատմագիրները կարող էին Բաղասականի բնակիչներին (բաղասիճներին) անվանած լինել «**Բաղասականի քրդեր**»:

Ամփոփելով, պետք է նշել, որ IX-XII դարերի արաբագիր պատմաշխարհագիրների մոտ տարբեր ժամանակաշրջաններում Առանի տարբեր տարածքների վերաբերությամբ հիշատակվող «**քուրդ**» բառը այդ վկայություններում չունի մեկ ընդհանուր իմաստային բովանդակություն և, որպես քուրդ էթնոսին վերաբերող ցեղանուն, կարող է դիտարկվել միայն 10-րդ դարի որոշ իրադարձությունների համատեքստում արված հիշատակությունների դեպքում:

<sup>41</sup> Ալ-Իսթախրիի մոտ հիշատակված *աշուբա* և *գարակին* ձկնանունները Իբն Հաուկայի աշխատասիրության մեջ տրված են *դարակին* և *կուշուբա* հնչյունական տեսքերով:

<sup>42</sup> Արաբական աղբյուրներ Գ, Արաբ մատենագիրներ..., 2005, էջ 573

<sup>43</sup> «Սուրմահի» բառի համար առաջարկվել է նաև այլընտրանքային ընթերցում, այն է՝ «շուր-մահի» (պրսկ. բառ. աղած ձուկ) տարբերակը (, որի դեպքում բառը ստանում է մաքուր պարսկական տեսք (տե՛ս Bosworth C., "Barda' a" . *Encyclopaedia Iranica*, Vol. III, Fasc. 7, 779-780 էջեր):

<sup>44</sup> Փատտոսի *Քիզանդացոյ Պատմութիւն Հայոց*, բնագիրը Ք. Պատկանյանի, Երևան, 1987, էջ 318

<sup>45</sup> Սվազյան Հ., «Ադվանքը և Միհրանյան տոհմը», *Լրաբեր Հասարակական Գիտությունների*, 1980 (9), 91-101 էջեր:

<sup>46</sup> Asatrian G., "Prolegomena to the Study of the Kurds", *Iran and the Caucasus*, 13 (2009): 1-58, Mackenzie D., "The Origin of Kurdish", *Transactions of Philological Society*, 1961: 68-86, "Kurds", in *Encyclopaedia of Islam*. (ed by Bearman P., Bianquis Th., Bosworth C., Van Donzel P. and W.P. Heinrichs, Leiden, 2007):

<sup>47</sup> Поладян А., *նշվ. աշխ.*, 23-24 էջեր:

<sup>48</sup> Asatryan G., *նշվ. աշխ.*, էջ 23:

<sup>49</sup> Minorsky V., "The Gūrān", *Bulletin of the School of Oriental and African Studies*, 11(1943), pp. 75-103:.

ПРОБЛЕМА НЕКОТОРЫХ АРАБСКИХ  
СВИДЕТЕЛЬСТВОВАНИЙ СЛОВА “КУРД” В  
ПОСТМАРЗПАНСКОЙ АЛБАНИИ

Артём Тоноян  
Оганнес Саргсян  
(резюме)

У арабских географов и историков 9-13-го века (Аль-Балазурри, Ибн аль-Факих, Аль-Истахри, Ибн Хаукаль, Аль-Масуди, Ибн Мискавейх, Ибн аль-Асир, Якут аль-Хамави) упоминание слова “курд” засвидетельствовано и в связи с событиями 7-10 веков на территории междуречья Куры и Аракса, и при описании городов указанного региона, принятого у арабских географов под названием Арран. В статье приведены все эти упоминания, рассмотрены семантические поля слова “курд” типичного для Аррана и их изменения в течении вышеуказанного периода.

THE PROBLEM OF SOME ARABIC MENTIONS OF A WORD  
“KURD” IN POST-MARZPANATE ALBANIA

Artyom Tonoyan  
Hovhannes Sargsyan  
(summary)

The Arabic historians and geographers of 9-13<sup>th</sup> centuries (such as Al-Baladhuri, Ibn al-Faqih, Al-Istakhri, Ibn Hawqal, Al-Mas'udi, Ibn-Miskawayh, Ibn al-Athir, Yaqut al-Hamawi and others) have mentioned the word “Kurd” related with the events in Kur-Araxes interfluvial territory at 7-10<sup>th</sup> centuries, as well as in the descriptions of cities of this region, known as Arrān among Arabic historians and geographers. The article includes these evidences, it introduces the semantic fields of the word “Kurd” typical for Arrān and their changes during the above mentioned period.

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ ՆՈՐ ԻՐԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ  
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր. Ղարաբաղի բարբառ, բարբառագիտություն, հայերեն բարբառներ, նոր իրանական փոխառություններ, իրանական բարբառներ

Հայերենում կամ հայկական որևէ բարբառում իրանական լեզուների հետ առնչակցությունը, փոխհարաբերությունները կամ փոխառություններն ուսումնասիրելիս կարևոր է հաշվի առնել մի քանի կարևոր հանգամանք.

Առաջին՝ հայերենի պատմությունը սկսվում է անմիջապես հնդեվրոպական մայր լեզվից անջատվելու շրջանից, իսկ իրանական լեզուներինը՝ հնդիրանական միասնության տրոհումից հետո, այսինքն՝ հայերենինը մոտ Ք.ա. III, իսկ իրանականինը II հազարամյակի սկզբներին:

Երկրորդ՝ ստացվել է այնպես, որ իրանական լեզուների գրավոր հուշարձանները ավանդված են հայկական գրավոր հուշարձաններից ավելի քան մեկ հազարամյակ առաջ<sup>1</sup>:

Երրորդ՝ էթե նոր պարսկերենը սկիզբ է առել IX դարում և գրեթե անփոփոխ հասել է մինչև մեր օրերը, ապա այդ նույն ժամանակաշրջանում հայերենն անցնում է գրավոր զարգացման իր հին շրջանը, թևակոխում միջին, ապա և նոր հայերենի շրջաններ:

Եվ վերջապես՝ պետք է հաշվի առնել, որ հայոց լեզվի հետգրային շրջանի զարգացման պատմության հին շրջանը համընկ-

\* ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դասախոս: Էլ. փոստ՝

[aharon.vardanian@ysu.am](mailto:aharon.vardanian@ysu.am)

<sup>1</sup> Հին պարսկերեն տեքստերը գրի են առնվել Ք.ա. 6-4-րդ դարերում. ավեստան գրի է առնվել համեմատաբար ուշ շրջանում (Սասանյան շրջանում), բայց այն իր հնությանը գերազանցում է հին պարսկերենին:

նում է մասամբ իրանական լեզուների զարգացման հին և միջին շրջանների հետ (V դարից սկսած): Հայերենի և իրանական լեզուների շփումները շարունակվում են մինչև VIII դարը՝ արաբական արշավանքները, և նոր թափով շարունակվում են նոր իրանական լեզվադարաշրջանում:

Հայերենի տեսանկյունից հատկապես հետաքրքիր են արևմտաիրանական լեզուներն ու այդ լեզուներից կատարված փոխառությունները: Մասնավորապես կարևոր են հյուսիսարևմտաիրանական լեզուները (մարերեն, պարթևերեն և Արաքսից հարավ ընկած տեղի իրանական նորագարիական և թալիշական բարբառները), իսկ ավելի ուշ, ի դեմս պարսկերենի, հարավարևմտաիրանական լեզուները:

Ներկա հոդվածում քննության ենք ներկայացրել Ղարաբաղի բարբառում նոր իրանական որոշ փոխառություններ, քանզի հին և միջին իրանական փոխառությունների խնդրին այս բարբառում ժամանակին անդրադարձ է կատարել Լ. Հովհաննիսյանը<sup>2</sup>:

Նոր իրանական փոխառությունների մեծ մասին նպաստել է նաև այն հանգամանքը, որ ներկայումս Արցախի Հանրապետության հարավային՝ այսինքն Իրանի հետ սահմանամերձ շրջաններում հիմնականում բնակվում են Խոյից, Մակուից, Սալմաստից և Ուրմիայից և Ղարաբաղից ներգաղթած բնակիչներ: Ղարաբաղի բարբառում կան այնպիսի իրանիզմներ, որոնք չկան հայկական գրեթե ոչ մի բարբառում: Այստեղ հանդիպում ենք ոչ միայն փոխառված, բառերի, այլև արտահայտությունների կամ որ ավելի հետաքրքիր է բուն պարսկերեն արտահայտությունն ամբողջովին անցել է հայկական շրջան, հայացվել է այնուհետև երկրորդ գործողություն ցույց տվող բաղադրիչ փոխվել է հայկականով, իսկ առաջինը մնացել է իրանականը:

<sup>2</sup>Հովհաննիսյան Լ., «Ղարաբաղի բարբառում իրանական մի քանի փոխառությունների մասին», Լրաբեր հասարակական գիտությունների, հ. 11, էջ 65-70, Երևան 1990

## Բահար

Բահար նշանակում է «գարուն»: Բառը Ղարաբաղի բարբառ փոխառված է նոր իրանական լեզվադարաշրջանում, ավելին, ամենայն հավանականությամբ, այս բառը Ղարաբաղի բարբառ է ներմուծվել Իրանի հյուսիսարևմտյան (Խոյ, Սալմաստ, Մակու, Ուրմիա, Ղարադաղ) շրջաններից ներգաղթած հայերի շնորհիվ: Բառը հանգում է հ. պրսկ.՝ *vāhara*-ձևին (հմմտ. ավ. *vanhri* «գարնանը», պրթև. *vahār*, օս. *valjäg*, ն. ազ. և թալ. *va/ə/hār* «գարուն» և այլն): Ինչպես տեսանք, բառը հանդիպում է գրեթե բոլոր իրանական լեզուներում:

Ղարաբաղի բարբառում բառն արտացոլում է հարավարևմտաիրանական՝ պարսկական ձևը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ղարաբաղի բարբառը անմիջականորեն շփման մեջ է Արաքսից հարավ տարածված հյուսիսարևմտաիրանական լեզուների և բարբառների հետ, ապա բնական կլիներ, եթե պահպանված լիներ ն. ազ կամ թալ. *va/ə/hār* ձևը: Մակայն պարսկական ձևը ցույց է տալիս, որ այն փոխ է առնվել առնվազն այն միջավայրից որտեղ պարսկերենն է եղել տարածված:

## Ռուզի, Շուզի

Ռուզի, *ռոզի*, *ըռուզի*, *ըռոզի* նշանակում է «բարիք, բերք, ապրուստի միջոց, եկամուտ, օրապահիկ»<sup>4</sup>: «Մարդը դանը կըրում, տօն ա քըցում, խըխոնցը ռուզին բուլըցընում»<sup>5</sup>:

Ինչպես վերը նշեցինք, պարսկերեն բառերը երբեմն հանդես են գալիս նաև բառաբարդությունների մեջ: Այսպես՝ «ըռուզավ ըղնել/ինիլ» նշանակում է «բարիքի, հարստության հանդիպել»:

<sup>3</sup> Հասկանալի է, որ հ. պրսկ.՝ *vāhara*- ձևի պարսկերեն, պրթև.-պարթևերեն, օս.-օսերեն, ն.ազ.-նոր ազարիական բարբառներ, թալ.-թալիշերեն, ավ.- Ավեստայի լեզու, քրդ.- քրդերեն, աֆղ.- աֆղաներեն, բել.- բելուջերեն, վախ.- վախա- ներեն, ասոր.- ասորերեն, արաբ.- արաբերեն, սելջ. թրք.- սելջուկյան թուրքերեն, մ.պրսկ.- միջին պարսկերեն, պրսկ.- պարսկերեն

<sup>4</sup> Մարգարյան Յու., «Ղարաբաղի բարբառի բառարան», էջ 172, Երևան 2013

<sup>5</sup> Հայկական ժողովրդական հեքիաթներ, հ. VI, էջ 146, Երևան 1973

Օրինակ՝ «էղ կընէգը տաղատ քընում ա, մին չուբանու ռուգավ ինում»<sup>6</sup>:

Ռուզի բառը պարսկերենում ունի նաև «օրական ուտեստ, պարեն, ուտելիք» իմաստը: Բառը հանգում է հ. պրսկ. raučah- «օր» ձևին. հմմտ՝ ավ. raočah, պրթն. rōč, \*rōčik<sup>7</sup>, քրդ. ruž, աֆղ. vraj, բել. rōč «օր», վալս. rauj «բոց» և այլն: Այս արմատից են նաև ասոր. rōziqā «օրապահիկ», արաբ. rizq «ուտեստ, պարեն», սելջ. քրք. uruzi «օրապահիկ»<sup>8</sup>:

Ինչպես երևում է վերոբերյալից՝ հայերենում նույն իրանական արմատից գրեթե նույն իմաստով երկու բառ ունենք: Սակայն մեկը («ռոճիկ») վկայված է վաղ շրջանում, ունի մատենագրային հարուստ վկայությունը, նույնիսկ խորհրդային ամբողջ շրջանում և դրանից էլ առաջ այն լայնորեն օգտագործվել է և ներկայումս էլ «աշխատավարձ» բառի փոխարեն, թե՛ գրականություն մեջ, թե՛ պետական գրագրությունում: Միայն Խորհրդային Միության փլուզումից հետո, Անկախ Հայաստանում «աշխատավարձ» բառը դիտարկվեց որպես գրական, սակայն ժողովրդի խոսակցական լեզվում «ռոճիկը» դեռ կենդանի է և հոգեհարազատ: Իսկ մյուսը («ռուզի») նոր շրջանի բառ է, մատենագրային վկայություններ չունի, ունի միայն բարբառային վկայություններ և նոր-նոր է մուտք գործում լեզու<sup>9</sup>:

<sup>6</sup> Աճառյան Հր. «Հայերեն արմատական բառարան», հ. 4, էջ 55, Երևան 1979

<sup>7</sup> Ճիշտ է, պրթն. \*rōčik բառը վկայված չէ, բայց պարսկական rōzi, rūzi և հայկական rōčik «աշխատավարձ» բառերը ցույց են տալիս, որ պետք է նախապես եղած լինե՛ր \*rōčik ձևը, որին էլ հանգում են հայկական և պարսկական բառերը:

<sup>8</sup> Horn P., "Grundriss der Neupersischen Etymologie", s. 140, Strassburg 1893

<sup>9</sup> Կարծում ենք տեղին նշել, որ այս բառը միակը չէ իրանական փոխառությունների դեպքում: Նմանօրինակ զարգացումների հիմնական պատճառն այն է, որ նոր պարսկերենը միջինի համեմատությամբ ենթարկվել են զգալի փոփոխությունների, որը խորացրել է հատկապես պարթևերենից նրա ունեցած տարբերությունները: Մասնավորապես, այս համատեքստում տեղին է նշել բառակազմի v > b, g անցումները, Արշակունյաց շրջանի ոչ սկզբնային դիրքի -p-, -t-, -k-, խուլերի միջին պարսկերենում -β-, -δ-, -γ-

## Շրհար, Շահիր

Շրհար Ղարաբաղի բարբառում նշանակում է «քաղաք, երկիր»<sup>10</sup>: «Շատ ա քընամ, խրրեգ ա քընամ, հըսնըմ ա մին շը-հարի»<sup>11</sup>: Հանդես է գալիս նաև բառակապակցություններում՝ շրհարբաշրհար «քաղաքից քաղաք», այսպես՝ «չըրու սօր դադարգուն ընկած շրհարբաշրհար ման ի կամ»<sup>12</sup> < պրսկ. šahr «քաղաք» վաղ նշանակությամբ «երկիր», հմմտ. ավ. xšaθra-, հ. պրսկ. xšaça «թագավորություն, իշխանություն», մ. պրսկ. šahr «երկիր, նահանգ, քաղաք», պրսկ. šahr և այլն:

Բառը վաղ Արշակունյաց շրջանում ունեցել է -xšaθr ձևը, որն էլ, հնչյունական օրինաչափությունների համապատասխան տվել է xšahr<sup>13</sup>, որից էլ հայերենը փոխ է առել բառակազմի օժանդական ձայնավորով (a)xšahr և սրա դրափոխված ašxarh տարբերական էլ այսօր օգտագործում ենք:

Կրկին, ինչպես ruzi բառի դեպքում էր, այստեղ նույնպես մեկ արմատից երկու բառ ունենք՝ մեկը փոխ է առնված դեռևս գրաբարյան շրջանից միջին իրանական լեզվաբառաշրջանում, իսկ մյուսը նոր շրջանում ժամանակակից պարսկերենից: Երկու դեպքում էլ հայերենում ունենք հարավարևմտաիրանական լեզվական ձև: Պարզապես վաղ շրջանում փոխ առնված բառը ներկայումս այնքան է հարազատացել, մերվել հայերենի հետ, որ դարձել է գրական բառ, իսկ նոր շրջանում փոխ առնված բառը

փոխվելը և նոր պարսկերենում ադեն -b-, -d-, -g-, դառնալը, նույն շրջանի ձայնավորահաջորդ -č-ի հյուսիս-արևմտյան խմբում -j-, -ž-ի, ապա նոր պարսկերենում (արդեն հարավ-արևմտյան) -z- փոխվելը և այլն, օրինակները բազմաթիվ են: Ահա այս պատճառով է, որ հայերենը մինևույն բառը փոխ առնելով իրանական լեզուների զարգացման տարբեր շրջաններում և տարբեր բարբառներից դրանք երբեմն պահում է որպես միանգամայն տարբեր բառեր: Ասածի լավագույն օրինակն է «վաճառ» և «բազաբ» բառերը:

<sup>10</sup> Մարգարյան Յու., նշվ. աշխ., էջ 570

<sup>11</sup> Հայկական ժողովրդական հեքիաթներ, հ. V, 556

<sup>12</sup> Մարգարյան Յու., նույն տեղում

<sup>13</sup> Աճառյան Հր., նշվ. աշխ., հ. 1, էջ 218a; Ջահուկյան Գ., «Հայոց լեզվի պատմության, նախագրային ժամանակաշրջան», էջ 514, Երևան 1987

մնացել է բարբառային կարգավիճակով և ներկայումս էլ գործածվում է միայն բարբառներում:

Սակայն Ղարաբաղի բարբառում բառը վկայված է նաև *շահիր* ձևով կրկին նույն իմաստով: Այս բառն ամենայան հավանականությամբ Ղարաբաղի բարբառին է անցել թուրքերենի միջոցով: Հետաքրքիրն այն է, որ «շահիր» ձևը գործածական է եղել և ներկայումս էլ օգտագործվում է Ստեփանակերտի շրջակա գյուղերում, իսկ «շահիր» ձևը Հաղրութում և Հորադիսում: Բացի բառաձևերը և հնչյունական օրենքները՝ սա ևս ապացույց է այն բանի, որ Հաղրութի և Հորադիսի շրջանի բառը փոխ է առնված անմիջական իրանական աղբյուրից, իսկ Ստեփանակերտի շրջանում տարածված ձևը՝ միջևորդավորված փոխառություն է:

### Մարգամուշ

*Մարգամուշ* բառը Ղարաբաղի բարբառում նշանակում է «քնեցնող թույն»: «Մէր հային աղաթըն ա, վեր մուհտա մարգամուշ ինի, յորա կըվազի, հախոէ, նիսյա օրհնանք տա...»<sup>14</sup>, ինչպես նաև ունի «քաղցր, խորը քուն» իմաստը:

Բառացի թարգմանած պարսկերենից նշանակում է «մկան մահ»: Կազմված է պրսկ. marg «մահ» և muš «մուկ» բառերից:

Բառը «մարգամուշ» ձևով վկայված է դեռևս «Հայրուսակում» որպես «մկան ծիրտ» կամ «վայրի նոան ծաղիկ»<sup>15</sup>: Աճառյանը սակայն «վայրի նոան ծաղիկ» իմաստը նույնացնում է «մկնդեղի» հետ: Իրականում սա մկնդեղն է (Arsenicum), պարսկերենում էլ ունի «մկնդեղ» իմաստը<sup>16</sup>:

Ղարաբաղի բարբառում «քնեցնող թույն» իմաստն էլ նույնանում է մկնդեղի հետ, քանզի մկնդեղով թունավորվելու դեպքում մարդու մոտ առաջանում է արյան ճնշման անկում, կենտրոնա-

կան նյարդային համակարգի արգելակում, թուլություն, քնի մշտական զգացում և, համապատասխան բուժումը ժամանակին չստանալու դեպքում, մահ: Հավանաբար «քնի մշտական զգացումն» էլ պատճառ է հանդիսացել, որ Ղարաբաղի բարբառում այն կոչեն նաև «քնեցնող թույն» անվամբ:

Իհարկե, այս մի քանի բառով չի սահմանափակվում նոր իրանական փոխառությունները Ղարաբաղի բարբառում: Դրանք բազմաթիվ են, սակայն հոդվածի ձևաչափը մեզ թույլ չի տալիս ամբողջ ցանկը բերել այստեղ, պարզապես վերոնշյալ մի քանի օրինակներով ցանկացանք ցույց տալ, որ բացի հին և միջին շրջանի իրանական լեզուներից, կան նաև նոր և նորագույն շրջանից կատարված փոփոխություններ, որոնք թե՛ բառային-հնչյունական, և թե՛ իմաստային տեսակետներից պակաս հետաքրքրություն չեն առաջացնում և որոնց ուսումնասիրությունն ու վեր հանումը նույնպես կարևոր է ինչպես հայ, այնպես էլ իրանական լեզվաբանության և բարբառագիտության համար:

<sup>14</sup>Մարգայան Սու., նշվ աշխ., էջեր 494-495

<sup>15</sup>Ալիշան Ղ., «Հայրուսակ կամ հայկական բուսաբանություն», «2008 և 2189», Վենետիկ 1895

<sup>16</sup>Loghatnameh-ye Dehkhoda, j. X s. 378, Tehran

О НЕКОТОРЫХ НОВО ИРАНСКИХ ЗАИМСТВОВАНИЯХ В  
КАРАБАХСКОМ ДИАЛЕКТЕ

Аарон Вардамян  
(резюме)

Карабахский диалект является самым хорошо сохранившимся и в то же время самым трудным армянским диалектом. В данной статье обсуждаются некоторые ново-иранские заимствования в карабахском диалекте, такие лексемы, как *bahar*, *əruzi /ruzi*, *šəhar/ šahir* and *margamuš*. До сих пор были некоторые работы по этой теме, но все они были посвящены ранним и средним иранским заимствованиям.

ON SOME NEW IRANIAN BORROWINGS IN KARABAKH  
DIALECTE

Aharon Vardanian  
(summary)

Karabakh dialect is one of the most archaic, well preserved and, at the same time, the most difficult dialects. The article is devoted to new Iranian loanwords in Karabakh dialect, particularly, *bahar*, *əruzi/ruzi*, *šəhar/ šahir* and *margamuš*. Though there were some articles and papers on Iranian loanwords in this dialect, all of them concerned the Old and Middle Iranian loanwords.

The great part of the new Iranian loanwords are due to the fact that the south lands of nowadays Nagorno-Karabakh Republic, i.e. at the border of Iran, is inhabited by immigrants from Khoy, Maku, Salmast, Urmia and Karadagh.

ՍՈՒՖԻԱԿԱՆ ՍԻՐՈ ԵՎ ԱՐԲԵՑՈՒՄԻ ԳԱՂԱՓԱՐԸ  
ԵԶԴԻԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԻՄՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ եզդիականություն, կրոն, եզր, սուֆիզմ,  
մեկնաբանություն, կրոնական հիմն, սեր, արբեցում

Եզդիականությունը, ձևավորված լինելով Հյուսիսային Իրաքի Լալիշի կիրճում սուֆի Շեյխ Ադի<sup>1</sup> բին Մուսաֆիրի գլխավորած աղավիհա եղբայրակցության հիմքի վրա<sup>2</sup>, պահպանել է բազմաթիվ սուֆիական տարրեր, որոնք ոչ միայն հանդես են գալիս որոշակի ձեւերի ու արարողությունների, այլև աղոթքներում հանդիպող կրոնական եզրերի տեսքով: Ստորև ներկայացվելու են սուֆիական սիրո և արբեցումի հետ առնչվող այն եզրերը, որոնք հանդիպում են եզդիական կրոնական հիմներում:

*Muhabat* (արաբ. *mūhabbat* «սեր») անունն է կրում սուֆիական ինքնակատարելագործման ճանապարհի կանգառներից մեկը: Այն խորհրդանշում է ոչ միայն աստվածային սերը ընդհանրապես, այլև ինքնակատարելագործվող սուֆիի տաճած սերն Աստծո նկատմամբ<sup>3</sup>: Հայտնի է, որ աստվածային էության հանդեպ սիրո գաղափարը սուֆի ճգնակյացների ուսմունքի հիմնա-

\* Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ իրանագիտության ամբիոնի ախյստենտ: Էլ. փոստ՝ [amryantereza@ysu.am](mailto:amryantereza@ysu.am)

<sup>1</sup> Եզդիները Շեյխ Ադիին անվանում են նաև Շեխադի կամ Շիխադի (տե՛ս Ավդալ Ա., Եզդի քրդերի հավատալիքները, Երևան, 2006, էջ 20, 21, 27): Շեյխ Ադիի կերպարը սրբացվել է եզդիական հավատալիքներում:

<sup>2</sup> Տե՛ս Արակելովա Վ., *К истории формирования езидской общины, Иран-наме* № 4, Ереван, 2006, сс. 63-66.

<sup>3</sup> سيد جعفر سجادی، فرهنگ اصطلاحات و تعبيرات عرفانی، انتشارات طهوری، چاپ دهم، ص ۷۰۰، تهران، ۱۳۹۳

կան բաղադրիչներից էր<sup>4</sup>, իսկ միստիկական սերը սուֆիական գաղափարախոսության անկյունաքարը<sup>5</sup>: Եզդիական կրոնական հիմներից մեկում նշվում է.

*Ēzdānē ma bi rahmānī  
Hisn ū jamāl ži ma rā ānī  
Dastūr dā qalamē qudratē  
Am avētīn nāv suřā muhbatē. (Qawlē Āfirinā Dinyāyē)<sup>6</sup>*

Մեր բարեգութ Աստվածը  
Գեղեցկություն ու վեհություն պարզեց մեզ,  
[Նա] հրամայեց գործության գրչին [և]  
Մեզ նեւեց սիրո գաղտնիքի մեջ:

Նշված կրոնական հիմնում *muhbat* եզրը հանդես է գալիս *suř/siř* (արաբ. *sirr* «գաղտնիք», *asrār* «գաղտնիքներ») բառի հետ որը սուֆիզմում կիրառվում է «[աստվածային] գաղտնիք», «[աստվածային] էություն» նշանակություններով<sup>7</sup>: Ծայրահեղ շիայական հանրությունների տիեզերածնության մեջ *siř*-ը աշխարհի արարմանը նախորդող այն վիճակն է, երբ Աստծո էությունը տարրալուծված է ողջ տիեզերքում<sup>8</sup>: Եզդիների կրոնական բանասպաշարում *siř* եզրը չի մեկնաբանվում սուֆիական տե-

սանյունից, այն կիրառվում է «գաղտնիք» նշանակությամբ, երբեմն էլ՝ «սրբազան արարած» իմաստով<sup>9</sup>:

*Aw bū āšē muhbatē  
Barē wī ži haqīqatē  
Āvā wī ya ži ma'rifatē... (Qawlē Āšē Muhbatē)<sup>10</sup>*  
Նա սիրո ջրադաջ դառավ,  
Նրա պտուղը հաղիղաթից է,  
Նրա ջուրը մարիֆատից է:

Կրոնական հիմնի վերը նշված հատվածում հիշատակված են *haqīqat* և *ma'rifat* եզրերը<sup>11</sup>, որոնք եզդի հոգևորականների կողմից ընդհանուր ձևով մեկնաբանվում են որպես «ճշմարտություն» և «իմաստություն»: Դրանք, ըստ էության, սուֆիական եզրեր են. սուֆիզմում *haqīqat* (թարգմ. «ճշմարտություն») կոչվում է ինքնակատարելագործման ճանապարհի վերջին կանգառը<sup>12</sup>: *Ma'rifat*-ը (թարգմ. «իմացություն», «իմաստություն») սուֆիզմում աստվածային էությունն ընկալելու հնարավորությունն է, որը մեկնաբանվում է նաև որպես «Աստծո էության հետ միավորումը ընկալելու կարողություն»<sup>13</sup>: Եզդիականության մեջ *ma'rifat* եզրը կորցրել է իր նախնական նշանակությունը և ունի «նախանձանդրություն», «իմաստություն», «տաղանդ» իմաստները:

<sup>4</sup> Chittick W., *The Sufi Path of Love: The Spiritual Teachings of Rumi*, New York, 1983, pp. 195-205; Фильштинский И., Шидфар Б., *Очерк арабо-мусульманской культуры* (VII-XII вв.), Москва, 1971 с. 156:

<sup>5</sup> Schimmel A., *Mystical Dimensions of Islam*, Chapel Hill, 1975, pp. 11, 125:

<sup>6</sup> Kreymbroek, 1995, p. 184:

<sup>7</sup> Брагинский В., *Символизм суфийского пути в "Поэме о море женщин" и мотиве свадебного корабля // Суфизм в контексте мусульманской культуры*, /Отв. ред. Пригарина Н./, Москва, 1989, с. 177:

<sup>8</sup> Жуковский В., *Секта "Людей истины" – Ahli hakk в Персии, Записки Восточного отделения Императорского Русского археологического общества*, том 2, Выпуск 1 и 2, Санкт-Петербург, 1887, с. 9:

<sup>9</sup> Kreymbroek Ph., *Yezidism: Its Background, Observances and Textual Tradition*, New York, 1995, p. 342:

<sup>10</sup> Bedelē Feqīr Hecī, *Bawerī ū Mitologiya Ēzdīyan, Çendehe tēkst ū Vekolīn, Dihok*, 2002, rúp. 266:

<sup>11</sup> Սուֆիական ինքնակատարելագործման ճանապարհի հիմնական կանգառները կոչվում էին *շարիաթ*, *թարիկաթ*, *մարիֆաթ*, *հաղիղաթ* (Курбонмамадов А., *Эстетическая доктрина суфизма*, Душанбе, 1987, с. 11):

<sup>12</sup> Schimmel, 1975, pp. 16, 98-99:

<sup>13</sup> Фильштинский И., *Концепция единства религиозного опыта у арабских суфиев // Суфизм в контексте мусульманской культуры*, /Отв. ред. Пригарина Н./, Москва, 1989, с. 30:



Ինքնակատարելագործվող սուֆին, ով գտնվում է ճշմարտության փնտրատուքի մեջ և տոգորված է աստվածային էությունը հասկանալու գաղափարով, սուֆիական գրականության անվանվում է սիրահար (ašiq արաբ. «սիրահար»), իսկ սիրեցյալի դերում հանդես է գալիս Աստված<sup>14</sup>: Եզդիական կրոնական հիմներում սիրահարը կոչվում է *ašēq*, իսկ երբեմն՝ *mōheb*<sup>15</sup> (արաբ. محب [mūhib] բոց. «սիրող»):

*Aw zamānakī ži mež bū*  
*Šārē Basrāyē šārē dawreš bū*  
*Dawreš ašiqē kamālī feš bū. (Qawlē dōtā qādiyē Basrāyē)*<sup>16</sup>  
Հինավուրց ժամանակներում  
Բարա քաղաքը դերվիշի<sup>17</sup> քաղաքն էր  
Դերվիշը կատարյալ սիրահար էր:

*Āšiqā aw sur dīya*  
*Āxāvtbū ži mahfalēt waliya*  
*Āšiqō dābidayn madahēt Šēxē Ādīya. (Qawlē qāzī Askar)*<sup>18</sup>  
Սիրահարները տեսել են այդ գաղտնիքը,  
[Նրանք] խոսել են սրբերի հավաքատեղիից.  
«Ո՛վ սիրահարներ, զովաբանե՛ք Շեյխ Ադիին»:

<sup>14</sup> Schimmel, 1975, pp. 125, 129:

<sup>15</sup> Պարսից սուֆիական գրականության նմուշներից մեկում նշվում է.

محب و محبوب اردانی

محب را غیر محبوبش ندانی.

(سید جعفر سجادی، ۱۳۹۳، ص. ۷۰۱)

<sup>16</sup> Bedelē Feqīr Hecī, 2002, rūp. 81:

<sup>17</sup> Եզդիների կրոնական հիմներում հանդիպող *dawreš* եզրը ներկայումս մեկնաբանվում է որպես «սուրբ»: *Dawreš* կոչվող սրբերը, ըստ երևույթին, եզդիական կրոնում սրբացված սուֆի առաջնորդներ են: Միջնադարում դարվիշ կամ դերվիշ էին կոչվում ճամփորդող սուֆիները (Lings M., *What is Sufism?*, California, 1975, 47):

<sup>18</sup> Bedelē Feqīr Hecī, 2002, rūp. 349:

*Āšiq wa dibēžiya*  
*Yā Siltān Ēzī ma ži ta hīviya*  
*Dē Malik Šarfadīn rākay bō ma kaya mahdiya.*  
(*Qawlē Šarfadīn*)<sup>19</sup>

Սիրահարն ասում է.  
«Ո՛վ Սուլթան Եզդի<sup>20</sup>, մեր հույսը դու ես,  
Շարֆադինին<sup>21</sup> հանի՛ր, մեզ համար դարձրու մահդի<sup>22</sup>»:

*Āšiqā aw mīr dīt ū kin nāsa*  
*Žēk vāvārtin muhbata ū kāsa*  
*Kira riknē čandī asāsa. (Qawlē Zabūnī Maksūr)*<sup>23</sup>  
Սիրահարները տեսան թագավորին<sup>24</sup> ու ճանաչեցին  
[Թագավորն] առանձնացրեց սերն ու գավաթը<sup>25</sup>,  
Դրանք դարձրեց հիմնասյուներ<sup>26</sup>:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 101:

<sup>20</sup> Սուլթան Եզդիը (Siltān Ēzīd) եզդիական գլխավոր սրբերից մեկն է, ով հայտնի է նաև Կարմիր Սուլթան Եզդի (Siltān Ēzīdē Sor) անունով:

<sup>21</sup> Եզդիական հավատալիքների համաձայն, Ահեղ դատաստանի օրը Շարֆադինը գալու է երկիր և փրկելու մարդկությանը. այլ կերպ ասած՝ Շարֆադինը եզդիական կրոնական հիմներում հանդես է գալիս որպես մեսիա (Bedelē Feqīr Hecī, 2002, rūp. 105):

<sup>22</sup> *Մահդի* է կոչվում փրկիչ մեսիան: *Մահդիի* գաղափարը եզդիականության մեջ ներմուծվել է իսլամից, որտեղ *մահդի*ն աշխարհի փրկիչն է՝ մեսիան (Ислам: Энциклопедический словарь/Коллектив авторов, ред. Негря Л., Москва, 1991, с. 163):

<sup>23</sup> Kreyenbroek, 1995, p. 170:

<sup>24</sup> Եզդիական կրոնական հիմներում Աստված մեծարվում է *pādšā* (պար. pādīšāh «թագավոր»), *malak* (արաբ. malik «թագավոր»), *mīr* (արաբ. amīr «թագավոր», «իշխան») և այլ պատվանուններով (տե՛ս Առաքելովա Վ., Ամրյան Թ., *Աստծո անունները եզդիական բանահյուսության մեջ*, Օրիենտալիա, պրակ 11, Երևան, 2010, էջ 3-15):

<sup>25</sup> Խոսքը միստիկական սիրո և գիտելիքի գավաթի մասին է:

<sup>26</sup> Եզդիական կրոնական բառապաշարում սյուն (arkān) անվանվում են կրոնական պատվիրանները:

Եզդիական կրոնական հիմներում հանդիպում է *k'ās* (թարգմ. «գավաթ»), երբեմն՝ *t'ās* եզրը: Գավաթի գաղափարը, ընդհանրապես, զուգադրվում է քրիստոնեական «վերջին ընթրիքի» ծիսակատարության գավաթի հետ. այն խորհրդանշում է հոգևոր լույս, հայտնություն, գիտություն<sup>27</sup>: Մուֆիական գեղագիտության մեջ գավաթը հանդես է գալիս որպես խորհրդապաշտական գիտելիքի և սիրո խորհրդանիշ<sup>28</sup>, երբեմն էլ մուֆիական գրականության մեջ այն ներկայացվում է որպես ճգնակյաց մուֆիի սրտի սիմվոլ<sup>29</sup>: Եզդիական կրոնական հիմներում գավաթը հանդես է գալիս որպես.

1. Եզդիական սրբերի ու առաջնորդների կողմից տրված գավաթ:

*Sayīdō tī bin Xidir,*  
*Ta dā dastē min k'āsaka bik'ir (Qawlē Īmānē)*<sup>30</sup>  
 Խղրի<sup>31</sup> որդի սուրբ,  
 Դու մի անարատ գավաթ տվեցիր իմ ձեռքը:

*T'āsak dā min řikānē ā'mē,*  
*Mi vaxarī tamāmē,*  
*Dastūrī Šīxādī nāvā mālā Ša'mē. (Qawlē Xāfilē Bēnāsīn)*<sup>32</sup>  
 [Նա] մի գավաթ տվեց ինձ,  
 Ես խմեցի ամբողջությամբ,

<sup>27</sup> Трессидер Дж., *Словарь символов*, Москва 2001, с. 47:

<sup>28</sup> St u Нурбахш Дж., *Энциклопедия суфийской символики*, <http://nimatullahi.sufism.ru/nashi-izdaniya/sufijskaya-simvolika/entsiklopediya-sufijskikh-simvolov.html> /20.01.2014/; <http://nimatullahi.sufism.ru/nashi-izdaniya/sufijskaya-simvolika/entsiklopediya-sufijskikh-simvolov.html#18b> /20.01.2014/.

<sup>29</sup> سيد جعفر سجادی، ۱۳۹۳، ص. ۲۸۰.

<sup>30</sup> Celil O. ū Celil C., *Zargotina Kurda*, II, Moscow, 1978, р. 49:

<sup>31</sup> Խղր Նավին սիրո հովանավոր համարվող եզդիական սուրբ է:

<sup>32</sup> Celil, Celil, 1978, р. 26:

[Դա] արևմուտքից (բոց. Շամից)<sup>33</sup> [եկած] Շեյխ Ադիի հրամանն է:

*Hāta Bāsōrē xudānē kāšē*  
*Hay riknō ži āsāsē*  
*Siltān Ēzīda bi xō xudānē kāšē. (Qawlē hazār ū ēk nāv)*<sup>34</sup>  
 Եկավ գավաթի Կարմիր տիրակալը,  
 Դա է ամեն ինչի հիմքը,  
 Մուլթան Եզդիք գավաթի տիրակալն է:

2. Երկնքից ուղարկված կամ սրբերի կողմից տրված գավաթ, որից խմում են հավատացյալները, բարեպաշտները, սրբերը, իսկ անհավատներն ու մոլորյալներն այն չեն ընդունում:

*K'āsā trīyē řaša,*  
*Nāzil bīya a'rša,*  
*Xāsā xārīya, xāfila kōrin, pē naxāšin.*  
 (Qawlē Šēxūbak'ir, šāxā 1)<sup>35</sup>

Սև խաղողի գավաթն է,  
 [Այն] ներքև է իջել երկնքից,  
 Սրբերը խմել են, մոլորյալները կույր են,  
 [նրանք] հիվանդացել են դրանով:

*K'āsā na ži trīyē,*  
*Malak' Šīxsin ži xuyā a'nīyā xwa čē kirīyē,*  
*Xāsā xārīya, xāfila kōrin, pē k'ifirīya. (Qawlē Šēxūbak'ir, šāxā 1)*<sup>36</sup>

<sup>33</sup> Շամը (տեքստում՝ Šām) արաբերենում Ասորիքի նշանակյալն է, որ եզդիների լեզվում իմաստային լայնացում է ապրել և նշանակում է «արևմուտք», քանի որ Ասորիքի տարածքը ընկած է եզդիներով բնակեցված Լալիշից ու Սինջարից արևմուտք:

<sup>34</sup> Bedelē Feqīr Hecī, 2002, р. 218:

<sup>35</sup> Celil, Celil, 1978, р. 10:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 10:

Գավաթը խաղողից չէ,  
Շեյխսընը<sup>37</sup> [այն] արարել է իր ճակատի աղից,  
Սրբերը խմել են, մուրոյալները կույր են, դա չեն ընդունել:

*Aw kās dā darwēšī parwardaya*  
*Aw muhibē kāsā xwaya*  
*Malik Šex Sin vaxwār šik tē tunaya...* (*Qawlē hazār ū ek nāv*)<sup>38</sup>  
Այդ գավաթը տվեց դերվիշը,  
Նա իր գավաթի սիրահարն է,  
Շեյխսընը խմեց (դա) անկասկած:

*Suhbatā har haftāna*  
*Taxtē nūr ū šav ū rōž ū hayv li sar dastāna*  
*Šarāb li tihūr kāsā wāna.* (*Qawlē Taxtā*)<sup>39</sup>  
[Ահա] յոթ [սրբերը]<sup>40</sup> զրուցում են,  
Լույսն ու խավարը, արևն ու լուսինը [նրանց] ձեռքում են,  
Գինին լցվում է նրանց գավաթների մեջ:

*Yā darwēš xarqa sitāra*  
*Hinjiyē vaxwar bī kāsā ta'la.* (*Qawlē Āxratē*)<sup>41</sup>  
Քուրձ հազնոդ դերվիշը  
Խմեց դառը գավաթը:

3. Գավաթ, որը մաքրում, վեհացնում ու բարձրացնում է խմողին:

<sup>37</sup> Շեյխսընը եզդիական սրբերից մեկն է:

<sup>38</sup> Bedelē Feqīr Hecī, 2002, rúp. 219:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 338:

<sup>40</sup> Խոսքը եզդիական հավատալիքներում իր ուրույն տեղն ունեցող յոթ սրբերի կամ յոթ հրեշտակների մասին է:

<sup>41</sup> Bedelē Feqīr Hecī, 2002, rúp. 121:

*Aw k'ās dā Šexōbakir*  
*Hay širīnō waka šakir*  
*Padšayī karamak bi ta kir*  
*Law jēy xō li bā takir.* (*Qawlē hazār ū ek nāv*)<sup>42</sup>  
Այդ գավաթը տվեց Շեյխսուբաքիրը,<sup>43</sup>  
[Այն] քաղցր է շաքարի պես.  
Թագավորը բարիք գործեց քեզ համար  
Նա քեզ մոտեցրեց իրեն (բոց. «իր տեղը մոտեցրեց քո տեղին»):

*Ĵik li buhuštē xāštir habū,*  
*K'ās ū bādī yē ma būn.* (*Qawlē Xāfilē Bēnāsīn*)<sup>44</sup>  
Դրախտից լավ մի տեղ կար,  
[Այդտեղ] գավաթները մեզ էին պատկանում:

#### 4. Որպես Ադամին կյանք պարզևող գավաթ:

*Ādam pēyambar ži wē kāsē vadixwār ū pē xōš tē,*  
*Karamatā wē kāsē hāt ū gahištē*  
*Law Ādam pēyambar hilgirt ū bira bahištē.*  
(*Qawlē Zabūnī Maksūr*)<sup>45</sup>

Ադամ մարգարեն<sup>46</sup> այդ գավաթից խմեց,  
և դա նրան դուր եկավ,  
Այդ գավաթի հրաշագործությունը հասավ [նրան],  
Ադամ մարգարեին գրկեց տարավ դրախտ:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 218-219:

<sup>43</sup> Շեյխսուբաքիրը եզդիական սրբերից մեկն է:

<sup>44</sup> Celil, Celil, 1978, rúp. 25:

<sup>45</sup> Kreyenbroek, 1995, p.176:

<sup>46</sup> Եզդիական կրոնական հիմներում և բանահյուսության մեջ առաջին մարդ Ադամը անվանվում է մարգարե:

Āqūb gō: "Saydāyē minō, aw šuxulā Xwadē waku ānī,  
Ruh' nāvā sar ū dast dānī,  
Ew a'zīz Malak Farxadīn bū, k'ās pē ānī". (Qawlē Šēx ū Āqūb)<sup>47</sup>  
Ակուրն<sup>48</sup> սասց. «Ո՛վ ուսուցիչ, Աստված բերեց,  
Հոգին դրեց [Ադամի] մարմնի մեջ

(բոց. «գլխի ու ձեռքերի մեջ»)

Սուրբ Ֆարխադինը<sup>49</sup> գավաթը բերեց Ադամի համար:

Xudāvandē ma rahmānī  
Kāsā surē ži Ādam šā ānī  
Āv ži kāsē vaxār važīyā  
Jrdā mast bū, hažīyā. (Qawlē Āfirinā Dinyāyē)<sup>50</sup>

Մեր բարեգութ տիրակալը  
Ադամին մատուցեց գաղտնիքի գավաթը,  
[Ադամը] գավաթից ջուր խմեց, կյանքով լցվեց

(բոց. «սպրեց»)

Արբեցավ ու տեղից շարժվեց:

Ակնհայտ է, որ եզդիական կրոնական հիմներում հիշատակվող գավաթը սուֆիական ավանդույթից մնացած ժառանգություն է: Եզդի հոգևորականները, սակայն, *k'ās*-ը մեկնաբանում են որպես «զինու գավաթ» դա պարզաբանելով այն հանգամանքով, որ ի տարբերություն մուսուլմանների, եզդիներն օգտագործում են ոգելից խմիչք<sup>51</sup>: Որոշ հոգևորականներ էլ *k'ās*-ը մեկնաբանում են որպես «կենացներ, որ եզդիները խմում են սրբերի ու հրեշտակների պատվին»<sup>52</sup>:

Եզդիական կրոնական հիմներում պահպանված մեկ այլ սուֆիական հասկացություն է արբեցումի (*mast, sarmast, sarxwās* քարգվ. «արբեցած», «հարբած») գաղափարը: Սուֆիական գեղագիտության մեջ այն խորհրդանշում է աստվածային սիրով և իմաստնությամբ արբեցած լինելը<sup>53</sup>: Եզդիական կրոնական հիմներում նշվում է.

Mastim ži qadahē

Lālišē xudānē qubahē

Dē bi Šēšims dayn madahē. (Qawlē Šēšimsē Tawreži)<sup>54</sup>

[Ես] արբեցած եմ գավաթից,

Լալիշում է սրբավայրի տիրակալը,

[Եկեք] գովաբանենք Շեյխ Շամսին:

Av dinyā mastxānaya

Wak xawnā šavāna. (Qawlē Miskīnō Žārō)<sup>55</sup>

Այս աշխարհը արբենալու տեղ է,

Գիշերվա երազի նման է:

Եզդիական կրոնական հիմներում «արբեցած» են անվանվում եզդիական սրբերը կամ այն բարեպաշտ անձինք, ովքեր ձգտում են ընկալել ճշմարտությունը:

<sup>47</sup> Celil, Celil, 1978, rúp. 45:

<sup>48</sup> Ակուրն եզդիական բանահյուսության մեջ և կրոնական հիմներում հիշատակվող սրբերից մեկն է, ով համապատասխանում է հինկտակարանյան Հակոբին:

<sup>49</sup> Եզդիական սրբերից մեկն է: Համարվում է լուսնի սկավառակի տիրակալը (տե՛ս Arakelova V., *Three figures from the Yezidi Folk Pantheon, Iran and the Caucasus*, Vol. 6.1-2, Leiden, 2002, pp. 57-73):

<sup>50</sup> Kreyenbroek, 1995, p. 188.

<sup>51</sup> Sté u Guest J., *The Yezidis: A Study in Survival*, New York, 1987, p. 31.

<sup>52</sup> Սրբերին նվիրված բաժակաճառերը եզդիներն անվանում են *a'sq* (արար. *a'sq* «սեր») (Asatrian G., Arakelova V., *The Yezidi Pantheon, Iran and the Caucasus*, Vol. 8.2, Leiden, 2004, p. 263):

<sup>53</sup> ۷۲۱ ص. ۱۳۹۳، سيد جعفر سجادی،

<sup>54</sup> Kreyenbroek, 1995, p. 258:

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 306:



## ИДЕЯ СУФИЙСКОЙ ЛЮБВИ И ОПЬЯНЕНИЯ В ЕЗИДСКИХ РЕЛИГИОЗНЫХ ГИМНАХ

Тереза Амрян  
(резюме)

Езидизм будучи сформирован в средние века на основе суфийского ордена *Адавия*, сохранил многие суфийские элементы: они представляют собой не только определенные религиозные обряды и церемонии, но и религиозные термины, которые встречаются в езидских религиозных гимнах. В этих гимнах многие езидские святые описываются как "пьяные", "влюбленные", "стремящиеся к божественной любви" и т.д. Тем не менее термины, которые символизируют суфийскую любовь и опьянение, в рамках современного езидского религиозного мировоззрения имеют различные интерпретации.

## THE IDEA OF SUFI LOVE AND DRUNKENNESS IN YEZIDI RELIGIOUS HYMNS

Tereza Amryan  
(summary)

Yezidism being formed in the Middle Ages on the basis of *Adawiya* Sufi order has preserved a lot of Sufi elements which represent not only certain religious rites and ceremonies, but also terms, which are attested in the Yezidi religious hymns. In these hymns many Yezidi saints are described as "drunk", "in love", "thriving to access divine love" etc. However, the Sufi terms denoting Love and Drunkenness have different interpretations in the frames of contemporary Yezidi religious world-outlook.

## ԶՐԱՂԱՇՏԱԿԱՆ ՏՈՆԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ՏՈՆԵՐԸ

Բանալի բառեր՝ զրաղաշտական տոնացույց, Վիսպերեդ, Աֆրինագան, Գահանբար, Բունդահիշն, ծիսական տոնացույց, *խորդե Ավեսպա (Փոքր կամ կրտսեր Ավեսպա)*, Սիռոզահ, *յաշպ, տոմարական-ժամանակային կարգավորվածություն*

«Զրաղաշտական տոն» հասկացությունը բնորոշում է զրաղաշտական կրոնի տոնակատարությունները, այսինքն, ծիսական համալիրները, որոնք իրականացվում էին որոշակի ժամկետներով՝ ըստ ծիսական տոմարի և տոնացույցի: Դրանք պարսկական տոների մի մասն են կազմում, իսկ որոշակի դարաշրջանում այդ տոները, լինելով զրաղաշտականության կարևորագույն ծիսական դրսևորումները, ունեցել են նաև էթնիկազգային խորհրդանիշի բնույթ:

Հնագույն ժամանակներում պարսից տարին կազմված էր ոչ թե 365, այլ 360 օրից, որոնք բաժանվում էին 12 երեսնօրյա ամիսների: Այս տոմարի հիշատակությունները զրաղաշտական գրավոր աղբյուրներում չեն պահպանվել, սակայն որոշ չափով ի հայտ են գալիս Արեւմտյան արքաների արձանագրությունների և պնակիտների մեջ<sup>1</sup>: Այդպիսի տոմարի գոյությունն է վկայում նաև Հերոդոտոսը, համաձայն որի Դարեհը կիլիկիացիներին հարկ է նշանակում 360 սպիտակ ձի՝ տարվա ամեն օրվա համար: Նա պահանջում է նաև 500 տաղանդ արծաթ, որից 140-ը վճարում է հեծելազորին իբրև վարձ, իսկ 360-ը (հավանաբար նորից ի նշան տարվա օրերի) պահում է իրեն<sup>2</sup>:

\* ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դասախոս: Էլ. փոստ՝ [svharutyunyan@ysu.am](mailto:svharutyunyan@ysu.am)

<sup>1</sup> М. Бойс, Зороастрийцы. Верования и обычаи, М., 1987, с.87.

<sup>2</sup> Геродот, Էջվ. հրատ., III-90, էջ 167-168:

Հնագույն տարեշրջանային- եղանակային տոները, որոնք պահպանվել էին մինչև իսլամական շրջանը, գարնանային և աշնանային երկու տոներն էին, որոնցից առաջինը հետագայում կոչվեց Նովոուզ, իսկ երկրորդը՝ Միհրական: Ըստ Մ. Բոյսի, սկզբում իրանցիների ամանորը աշնանն էր, այսինքն, այն տոնը, որը Աքեմենյան շրջանում սվիրվեց Միհրին, սկզբում բուն ամանորն էր<sup>3</sup>: Հավանաբար, հնագույն ծագում ուներ նաև գարնանամուտից 100 օր առաջ նշվող Սադան՝ կրակի տոնը<sup>4</sup>: Մյուս տոները նշում էին տարվա մյուս եղանակների հետևյալ ժամանակահատվածներում.

Մադոյշեմա – ամռան կեսերին,

Մադյարյա – տարվա, կամ ձմռան կեսերին,

Մադոյի գարբմայա – գարնան կեսերին, երբ անասունը տեղափոխվում էր արոտավայրեր,

Փայտիշահյա – հատիկը բերելու,

Այաթրիմա – տուն վերադառնալու, երբ հովիվներն անասունի հետ վերադառնում էին ձմեռային կացարաններ,

Համասպանթմաեդայա – համարվում էր ձմեռվա, կամ տարվա վերջին օրը<sup>5</sup>:

Այս վերջինը ավելի մեծ նշանակություն ստացավ զրադաշտականության օրոք, երբ այն նվիրվեց ֆրավաշներին, որտեղից էլ ավելյաց հնգօրյակի անվանումը՝ Ֆարվարտեկան, և տարվա առաջին ամսվա անունը՝ Ֆարվարդին:

Զրադաշտականությունը որպես նոր կրոն տարածվել է արևելքից, և պարթևների ու մարերի միջոցով հետզհետե տարածվել է Իրանով մեկ: Գրեթե բոլոր մասնագետները համաձայնում

<sup>3</sup> M. Boyce, A History of Zoroastrianism, vol. 1, p. 172: Դժվար է համաձայնել հեղինակի հետ այն հարցում, թե իբր երկու հնագույն տոները նշվում էին օրահավասարների օրերին: Հավանաբար հին իրանցիները նշել են եղանակային անցման գլխավոր ժամանակաշրջանները՝ ըստ բնության նախանշանների և բանավոր ժողովրդական տոմարի:

<sup>4</sup> М.Бойс, Зороастрийцы, с. 174.

<sup>5</sup> M. Boyce, A History of Zoroastrianism, vol. 1, p. 174.

են, որ զրադաշտական տոները սկսել են ժողովրդականություն վայելել Իրանի արևմտյան տարածքներում սկսած մ.թ.ա. 5-րդ դարից, սկզբնական շրջանում համատեղվելով հին տարածաշրջանային տոների հետ, իսկ ավելի ուշ՝ որոշ չափով կլանելով դրանք: Ինչպես տոմարը, այնպես էլ տոնացույցը մշտապես փոփոխվում և կատարելագործվում էր: Հատկապես, եթե հաշվի առնենք Աքեմենյանների տիրապետության տակ գտնվող տարածքների ահռելի չափերը և զրադաշտականության՝ հիմնականում բանավոր տարածվելը, պարզ կդառնա, որ կայսրության տոնական կյանքին բնորոշ էր մեծ բազմազանությունը: Իրենց հարևաններից իրանական ժողովուրդները փոխառում էին, օրինակ, աստվածություններին նվիրված տոները, և երբ ընդունում էին ըստ էության միայն մեկ աստվածություն Ահուրամազդայի պաշտամունքը՝ հանդիսացող զրադաշտականությունը, չէին դադարում պաշտել իրենց հին դիցույթներին, այլ նրանց նվիրված տոները կապում էին զրադաշտական այլևայլ դավանաբանական բացատրությունների հետ, և աստվածները վերածվում էին երկրորդային սրբությունների՝ յազատաների, բայց պահպանում էին իրենց նշանակությունը: Այդպես Զրադաշտի Գատաներին միանգամայն խորթ Տիրը կամ Անահիտը, սրբազան ծառերն ու պուրակները, առավել ևս՝ գետերն ու բարձունքները, պահպանվում էին նոր ձևերի մեջ, կապվելով զրադաշտականության համար ընդունելի տարերքների և երկնային լուսատուների պաշտամունքների հետ: Ըստ այդմ, զրադաշտականությունն էթնիկ կրոն էր և, անկախ փոխադարձ ազդեցություններից, նախատեսված չէր այլ ազգերի համար, ուստի և չէր պարտադրվում օտարներին:

Ի. Ստեբլին-Կամենսկու գնահատականով, Վիսպերեդը Ավեստայի առավել դժգույն և անհետաքրքիր բաժիններից է<sup>6</sup>: Այդուհանդերձ, առավել ամբողջական պատկերացումը զրադաշտական տոնացույցի մասին կարելի է կազմել հենց Վիսպե-

<sup>6</sup> Авеста. Избранные гимны., с.10.

րեղի հիման վրա: Վիսպերեղի տեքստերն արտասանվում էին անմիջապես ծեսի ժամանակ, լրացնելով գատաները: Դրանցում չկան բացատրություններ, թե որ տեքստը որ գործողությանն է ուղեկցում, սակայն որոշ ակնարկներից կարելի է կռահել գոհաբերության կամ հեղումի պահերը:

Տոնական ժամկետները վերստին հիշատակվում են Աֆրինազան-Գահանբարում: Աֆրինազանն օրհնանքների հավաքածու է, որոնք ասվում էին ծիսական խնջույքի ժամանակ, սեղանի մոտ հրավիրելով հանգուցյալներին և սրբություններին (հնարավոր է հրեշտակներին): Աֆրինազանների կատարումը պարտադիր էր բոլոր մագդեզականների համար տարեկան վեց գահանբարների՝ ծիսական տոնացույցի հնգական օր տևող տոների ժամանակ: Բացի տարեկան տոներից, զրադաշտականները նշում էին նաև օրվա հինգ ժամերը, այսինքն, ունեն օրեկան հինգ ժամերգություն («գահ»՝ ժամ անուևով), որոնցում հիշատակում են ինչպես մեծ Ահուրամագդային և «Ընդարձակ արոտավայրերի Միթրային», այնպես էլ Մահյաներին և Յայրյաներին:

Անիմաստ է ծիսական տեքստում, ինչպիսին Ավեստան է փնտրել ժողովրդական տոնակատարության նկարագրությունները: Ըստ էության, մենք ունենք միայն գահանբարների գոյության փաստի արձանագրումը, իսկ թե պատմական Իրանի որ մասերում ինչպես էին նշվում այդ տոները պարզ չէ, քանի որ ոչ Աքեմենյան, ոչ Արշակունյաց թագավորական տոների օրոք տեղական ժողովրդական տոնակատարությունների նկարագրություններ չեն պահպանվել: Զրադաշտական պաշտոնական տոների որոշակի պատմական փոփոխությունների մասին կարելի է դատել մեկ այլ զրադաշտական սրբազան տեքստից՝ Բունդահիշնից: Բունդահիշնի տոնացույցում վկայում է, որ կար զգալի տարբերություն կրոնական և ժողովրդական տոների միջև: Այն, որ այս հին, ըստ էության, հիմնականում անասնապահական տնտեսական զբաղմունքի զլխավոր ժամկետներն արձանագրող տոները իրենց ծագումով ժողովրդական – տումբային են, և անգամ գահանբարները ընդհանուր ճաշկերույթով նշելու մա-

սին գծուծ տեղեկությունները հուշում են, որ դրանք եղել են հավասարության տոնակատարություններ և նշվել են ամբողջ համայնքով, կասկած չի թողնում, որ ճեղքվածքը բուն զրադաշտական և ժողովրդական տոնակատարությունների միջև կապված է ոչ թե դավանաբանության, այլ աշխարհագրական ու մշակութային տարբեր ծագման հետ: Զրադաշտական ծիսական տոնացույցը չի պարունակում որևէ հիշատակի օր: Մակայն Աքեմենյան արքաների տիրապետության օրոք դրանք, ինչպես հայտնի է, նշվել են, և դրանցից բացի նշվել են նաև բազմաթիվ այլ տոներ, որոնք արձանագրված են օտար աղբյուրներում: Այսպես, Վիսպերեղում չի երևում ամանորյա տոնի որևէ հետք, մինչդեռ Բունդահիշնը ոչ միայն հիշատակում է Ֆարվարդինի Օրմուզդ օրը, այլև կոչում է այն ամռան սկիզբ, մինչդեռ Միհր ամսվա Անագրան օրը՝ ձմռան սկիզբ և համապատասխան տեքստը հետևում է հայտնի զրադաշտական տոներին: Այսինքն, այն, ինչը կոչվելու էր Նովորուզ և Միհրական, արդեն միտում ուներ հայտնվել բուն ծիսական տոնացույցի մեջ: Զրադաշտական հին տոնացույցին ծանոթ չէ նաև Կրակի տոնը, որի լայն տարածվածությունը Սասանյանների օրոք հավաստված է կայսրության ինչպես արևմտյան, այնպես էլ արևելյան տարածքներում: Հավանաբար, ամենակարևորը վեց Ամեշա – սպենտաներին<sup>7</sup> նվիրված Համասպանդմայդի(ե)մ տոնն էր, քանի որ տարին նվիրված էր Ահուրամագդային և բաժանվում էր վեց հիմնական մասերի, 1+6՝ 7 սրբազան թվի պաշտամունքով: Այս տոնն իր մեջ ներառում էր նաև հիշատակի օրերի ծիսակարգը:

Այս պաշտամունքը որպես սեփական գահակալման սրբազանության հաստատում, հավանաբար, կիրառել է Դարեհը իր վեց օգնականներին, ում հիշատակում է ինքը՝ Բեհիսթունյան արձանագրության մեջ:

Խորդե Ավեստան (Փոքր կամ Կրտսեր Ավեստա) ստեղծվել է անհամեմատ ավելի ուշ, քան Զրադաշտի Գատաները: Ավան-

<sup>7</sup> M. Boyce, A History of Zoroastrianism, vol. 2, p. 91-93.



դությունը կապում է դրա ստեղծումը մ.թ.ա. IV դ. լեգենդար քահանայապետ Ատրպատ Մարասփենդի անվան հետ<sup>8</sup>: Նախատեսված շարքային հավատացյալի և առօրյա ծիսական գործածման համար այն պարունակում է Ավեստայի առավել կարևոր աղոթքները, օրհներգերը և ծիսակարգի որոշ մասերը՝ բաց թողնելով, մասնավորապես, օրենքների և առասպելաբանության բաժինները: Մյուս կողմից, Խորդե Ավեստայում ավելի հստակ արտահայտություն է ստանում արարողությունների տոմարական-ժամանակային կարգավորվածությունը:

Առավել նշանակալից տեքստ այս առումով Միռոզահն է, որի անվանումը նշանակում է «երեսուն օր»<sup>9</sup> և որը թեև կապված է հոգեհանգստյան արարողության հետ<sup>10</sup> և նախատեսված է հանգուցյալին 30 օրվա ընթացքում դեպի հանդերձյալ աշխարհն ուղեկցելու համար, այդուհանդերձ, կարևոր տեղեկություններ է հաղորդում զրադաշտական տոնացույցի արմատական փոփոխությունների և տոնածիսական արարողությունների վերաբերյալ: Այն ընթերցվել է ոչ միայն հանգուցյալի մահվան 30-րդ օրը, այլև տարվա վեցերորդ և տասներկուերորդ ամիսների 30-րդ օրը, և մահվան տարելիցից հաշված 30-րդ օրը՝ տարեցտարի<sup>11</sup>:

Զրադաշտական տոնակատարությունների վերաբերյալ կարևոր տեղեկություններ կարելի է քաղել նաև յաշտերից, օրհներգություններից: Յուրաքանչյուր յաշտի ընթերցում կամ երգասացություն տեղի էր ունենում որոշակի տոմարական ժամկետում, այն է՝ հատուկ ամսաթվին և օրվա նախատեսված ժամին: Յաշտերի լեզուն համարվում է նոր – ավեստայական, դրանք չեն եղել խիստ զրադաշտական կանոնի մի մասը, թեև դրանցից շատերը իրենց բովանդակությամբ ոչ միայն արխայիկ են, այլև ունեն վկայված խոր հնության որակներ: Այդուհանդերձ, դրանք

<sup>8</sup> Авеста. Хордэ Авеста (Младшая Авеста), пер., пред. и комм. М.В. Чистякова (հետազայում՝ Хордэ Авеста), СПб, 2005, с.10.

<sup>9</sup> The Zend Avesta, Part II (SBE 23), tr.J. Darmesteter, Oxford University Press, 1882, p. 1.

<sup>10</sup> Хордэ Авеста, с.27-28.

<sup>11</sup> The Zend Avesta, Part II, p. 2.

փոխանցվել են առավելապես ֆուլկլորային տեքստերի ձևով և գրառման ժամանակաշրջանում կարող են ունեցած լինել մի շարք տեղական տարբերակներ, որոնք մեզ չեն հասել, բայց որոնց բովանդակային տարբերը նշմարվում են ուշ շրջանի, հատկապես միջնադարի տեքստերում և վկայություններում: Յաշտերի մի մասն ունի խորհրդանշական-դավանաբանական, բուն զրադաշտական կերպարանք, մյուսները մատնում են հին հեթանոսական պաշտամունքի պահպանվածությունը, որոնց զուգահեռները կարելի է գտնել ազգագրական նյութերում:

Հավանաբար, սկսած Դարեհ Մեծից, Իրանի գոնե արևմտյան մասում մեծ կարևորություն է ստանում Միթրայի և Անահիտի պաշտամունքը: Արտաքսերքսեսը սկսում է կառուցել տաճարներ, ինքը և իր կրտսեր եղբայր Քսերքսեսը երդվում էին Միթրայի անունով<sup>12</sup>: Աքեմենյան կայսրության օրոք, երբ կառավարվող երկրի հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր, նորովի կարևորվում էր նաև Տիրի դերը: Միսալ չի լինի ենթադրել, որ հենց այդ ժամանակ Միհրականը և Տիրականը դառնում են սիրված և ճոխ տոներ և, պաշտոնապես մտնում զրադաշտական տոնացույցի մեջ: Հիմնական ավանդական տոները, որոնք ըստ ամենայնի, պետք է տոնվեին տարբեր տեղերում միևնույն ժամանակ բոլոր սրբերի՝ Սպենտա Արմայիտիի օրը, կրակի տոն Սադան Աթար ամսին, տասներորդ ամիսը նվիրվեց Անուրամազդային և, նրան նվիրված չորս օրանունների նմանությամբ կոչվեց Դադվահ, կամ Դեյ, տարվա առաջին ամիսը նվիրվեց ֆրավաշներին, առաջին օրով՝ Նովուզով, մնացած օրերը պահպանվեցին Ամեշա-սպենտաների համար: Վերջապես, ջրի անունը կրող Աբան ամիսը, հավանաբար, այդ շրջանում կապվում էր որքան Ապամ-Նապատի, այնքան էլ Արդվի Սուայի հետ, որին նույնացնում էին Անահիտին: Այս տոմարի համեմատ կատարվում էին տոները և հավաքվում էր պետական հարկը, տուրքերը:

Այսպիսով, տոմար–տոնացույցը, որը հայտնի է իբրև «զրադաշտական» իրանական ժողովրդի երկու պատմության բերումով իրարից միանգամայն հեռացած հատվածների վերամիավորման յուրօրինակ ձև էր, որում հին ավեստայական տարրերի կենդանի կրողները, ամենայն հավանականությամբ, արևելյան իսկ նորագյուտ, հեթանոսությանը հարող տարրերը արևմտյան ճյուղի բնորոշ կրոնական դրսևորումներն էին: Պատմական հետազոտարգացումը ցույց տվեց, որ այս միավորումն այդպես էլ մնաց ամսանունների մակարդակում, քանի որ մեծ տարածության վրա ապրող իրանական տարբեր ժողովուրդները, միևնույն է, նշում էին իրենց բնորոշ տոները իրենց բնորոշ ժամանակին և իրենց տեղական ձևով: Միաժամանակ, արեգակնային տոմարի հիմնական կառուցվածքը և ամսանունների մեծ մասը շատ երկար ժամանակ պահպանվեցին ժողովուրդների հիշողության մեջ:

## ЗОРОАСТРИЙСКИЙ КАЛЕНДАРЬ И ГЛАВНЫЕ ПРАЗДНИКИ

Светлана Арутюнян  
(резюме)

В этой статье кратко описывается празднование зороастрийской религии, то есть ритуальные комплексы, которые проводились в определенные сроки, в соответствии с ритуальным летоисчислением и календарем праздничных дней. О зороастрийских официальных праздниках, определенных исторических изменениях можно судить по зороастрийским священным текстам: Денкард и Бундахишн. В статье упоминается о Хорде Авесте, которая была создана позже, предназначенная для рядовых верующих и повседневного ритуального использования, содержит самые важные молитвы, гимны и некоторые части обрядов, опуская, в частности, разделы законов и мифологии. Важная информация о зороастрийских праздниках можно подчеркнуть из яшт, гимнов.

## THE ZOROASTRIAN CALENDAR AND MAJOR HOLIDAYS

Svetlana Harutyunyan  
(summary)

This article briefly describes the celebration of the Zoroastrian religion, i.e. ritual complexes, which took place on certain dates, according to the chronology and ritual calendar holidays. Zoroastrian official holidays and some historical changes can be judged by the Zoroastrian sacred texts: Denkard and Bundahishn. The article mentions Haarde Avesta, which was created later and was intended for ordinary believers and daily ritual use, contains the most important prayers, hymns and some of the ceremonies, particularly, skipping sections of laws and mythology. Important information about Zoroastrian holidays can be emphasized from yashts, hymns.

**ԻՐԱՆԱԿԱՆ ՎՏԱՐԱՆԴԻ ԿԻՆՈՅԻ ՆՈՐԺԱՄԱՆԱԿՅԱ  
ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ. ՄՈՐԱՆՆԵՆ ՄԱԽՄԱԼԲԱՖ, ՇԻՐԻՆ ՆԵՇԱՏ**

**Քանայի բառեր՝ կինոարվեստ, վարարանդիություն, մշակույթ, սփյուռք, կրոն, այգի, այգեգործություն**

Մշակութաբան Հ. Նաֆիսին սփյուռքի և վտարանդի կինոարվեստի մեջ նշմարվող *accented cinema* եզրույթի մասին գրում է «Կան կարևոր անցումային և անդրազգային վայրեր, տարածություններ, ինչպիսիք են սահմանները, թունելները, նավահանգիստները, օդանավակայանները և հյուրանոցները, տեղաշարժման միջոցները՝ գնացքները, ավտոբուսները, ճամպրուկները, որոնք հաճախ նշվում են շեշտադրված ֆիլմերում»<sup>1</sup>:

Այսպիսով, և՛ վտարանդի, և՛ սփյուռքը ներկայացնող կինոգործիչները վերջինների միջոցով իրականացնում են տան փնտրտուքի, անտուն լինելու և տուն վերադարձի ճամփորդություն, որը ֆիզիկական չէ, այլ հոգևոր և փիլիսոփայական:

Արդի իրանական կինոյի շուրջ ակադեմիական և մշակութաբանական բազում հրապարակումների ծիրում առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում մշակութաբան Հ. Դաբաշիի 2013թ. տպագրված «Իրանական կինոյի ողբերգական ավարտը» հոդվածը, որը բազմաշերտ քննության է ենթարկում արդի Իրանում և նրա սահմաններից դուրս բնակվող իրանական մեծահամբավ կինոգործիչներին:

<sup>1</sup> Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դոցենտ: Էլ. փոստ՝ [lilit.safirstvan@ysu.am](mailto:lilit.safirstvan@ysu.am)

<sup>1</sup> Naficy H., *An Accented Cinema: Exilic and Diasporic Filmmaking*, New Jersey: Princeton Univ. Press, 2001, pp. 5-6.

«Ձաֆար Փանահին»<sup>2</sup> եզակի կինովարպետներից չէ, ով գոհ է դարձել իր քաղաքական համարձակ հայացքների համար: Արդի իրանական կինոյի մեկ այլ մեծանուն վարպետ Մ. Մախամալբաֆը նույնպես կիսում է նրա ճակատագիրը:

Հայրենիքում հարուստ կինոկենսագրությունից տարիներ անց Մախամալբաֆը սկսում է կինոֆիլմեր նկարահանել շրջակա երկրներում՝ Թուրքիա, Աֆղանստան, Պակիստան, Հնդկաստան, Տաջիկստան: Այսօր հարկադրված վտարանդի պոետը և իր կինոստեղծ ընտանիքը երկար դեգերումներից հետո բնակություն են հաստատել Եվրոպայում: Մախամալբաֆի արտերկրում ստեղծած ֆիլմերի շարքում են Մեծ Բրիտանիայում, Հարավային Կորեայում, Իսրայելում, Վրաստանում նկարահանված «Մարդը, որը եկավ ձյան հետ» (2009), «Այգեպան» (2012), «Անվերջ ժպիտ» (2013), «Նախագահը» (2014), «Տնվորը» (2015) փաստագրական և գեղարվեստական ֆիլմերը:

«Տնվորը» ֆիլմը պատմում է Լոնդոնում փախստական երիտասարդ իրանցու դժբախտ ճակատագրի մասին, ով փորձում է միջոցներ հայթայթել՝ վճարելու ծեր կնոջ վարձակալված բնակարանը:

Իրանական վտարանդիության խնդիրներն են բարձրաձայնվում Եվեդիայում բնակվող Ռեզա Ալլամեհզադեի «Մի քանի պարզ նախադասություններ» (1987) և «Աստորիա» հյուրանոցի հյուրերը» (1989) ֆիլմերում: Իրանական ներգաղթյալների մասին է պատմում նաև մեկ այլ վտարանդի կինոգործիչ՝ Քասեմ Էբրահիմյանի «Երկրպագուները» (1989) ֆիլմը<sup>3</sup>:

Մախամալբաֆի վտարանդիության դառը փորձն է կիսում իրանական կինոյի մեկ այլ մեծ կինովարպետ՝ Բահրամ Բեյգա-

<sup>2</sup> Կինովարպետի վերջին ադակահարույց աշխատանքներից են՝ «Մա ֆիլմ չե» (2011), «Փակ վարագույր» (2013)՝ «Արձաթե արջ» մրցանակ Բեռլինի կինոփառատոնում, «Տաքսի» (2015)՝ «Ոսկե արջ» մրցանակ Բեռլինի 65-րդ կինոփառատոնում:

<sup>3</sup> Dabashi H., *Post-Orientalism: Knowledge and Power in Time of Terror*, New Brunswick and London: Transaction Publishers, 2009, pp. 254-255.

յին, որը բնակություն է հաստատում Կալիֆորնիայում՝ բեմադրելով իր հին գործերը, հիմնականում զբաղվելով հետազոտություններով և ստեղծագործական աշխատանքով: Մինչ Մախամալբաֆը և Բեյգային, իրանական կինոյի մեկ այլ հզոր ուժ՝ Ամիր Նադերին լքում է երկիրը՝ հաստատվելով Նյու Յորքում, որտեղ նկարահանում է «Մարաթոն» (1997), «Կտրվածք» (2012) ֆիլմերը, որոնք այսուհետ դժվար է համարել «իրանական կինոյի» մի մաս:

Իրանական կինոյի մեկ այլ մեծանուն վարպետ, «նոր կինոյի» հիմնադիր, «Կուլը» (1969), «Տնվորներ» (1986) գլուխգործոցների հեղինակ Դարիուշ Մերջուհին, որը նախընտրեց մնալ հայրենիքում, տառապում է իր գրական համագործակցի, ընկերոջ՝ Ղոլամ Հոսեյն Սաեդիի վտարանդիության և ողբերգական վախճանի համար: Իրանական կինոյի մեկ այլ հիշատակելի մեծ անուն՝ Մոհրաբ Շահիդ-Սալեսը (1944-1998), երկար տարիներ ապաստանում է Գերմանիայում և անժամանակ հեռանում կյանքից Չիկագոյում: Սալեսը «գերմանական նոր կինոյի» մեջ մեծ ներդրում է ունենում իր լավագույն կինոստեղծագործություններն արարելով հյուրընկալ երկրում:

Մեկ այլ տաղանդավոր կինոգործիչ՝ Փարվիզ Սայադը նույնպես արժանանում է իր գործընկերների վտարանդի ու թափառական ստեղծագործական ճակատագրին՝ հաստատվելով Լոս Անջելեսում: 1996-ին Սայադը հրատարակում է «Կինոն վտարանդիության մեջ» էսսեների ժողովածուն:

Իրանական կինոյի տաղանդաշատ ու խոստումնալից կինո-վարպետ, ազգությամբ քուրդ Բահման Ղոբադին նույնպես արժանանում է վտարանդիության դառը ճակատագրին, որի կինոկենսագրության մեջ անմահ են այնպիսի ֆիլմեր, ինչպիսիք են՝ «Կիսալուսին» (2006), «Կրիաները նույնպես կարող են թռչել» (2004), «Հարբած ձիերի ժամանակը» (2000), «Ոչ ոք չգիտի պարսկական կատուների մասին» (2009), «Իմ Մայր երկրի երգերը» (2002), որոնք արժանացել են համաշխարհային կինոարվեստի լավագույն մրցանակների: Իր գործընկերների նման՝ Ղոբադիի վերջին աշխատանքներից մեկը՝ «Ռեգեդյուրների եղանակը»

(2012), նկարահանվում է Իրանի սահմաններից դուրս՝ Թուրքիայում:

Իրանական կինոյի մեկ այլ հայտնի ներկայացուցիչ՝ Ասդար Ֆարիադին, որի «Պարելով փոշու մեջ» (2003), «Հրշեջի չորեքշաբթին» (2006), «Էլիի մասին» (2009), «Նադեր և Սիմին. ամուսնալուծություն» (2011) ֆիլմերն արժանանում են հեղինակավոր կինոփառատոների ամենաբարձր մրցանակներին, այդ թվում նաև՝ որպես առաջին իրանական կինոռեժիսոր՝ «Օսկար»-ի: Վերջին ֆիլմը՝ «Անցյալ» (2013), նկարահանում է Ֆրանսիայում, այլ թեմատիկ ուղղվածությամբ, թեև պարսիկ հերոսի ներկայությամբ, սակայն ոչ Իրանի մասին:

Համաշխարհային մեծ անուն վայելող կինովարպետ Աբաս Բիառոստամիի (1940-2016) վերջին երկու ֆիլմերը, Տոսկանայում և Ճապոնիայում նկարահանված «Վավերացված պատճեն» (2012), «Ինչ-որ մեկի նման սիրահարված» (2010), ըստ Դաբաշու հազիվ կարող են կոչվել «իրանական ֆիլմ»<sup>4</sup>:

Հարցազրույցներից մեկում Բիառոստամին իրեն հատուկ խորիմաստությամբ և արևելյան մարդուն հատուկ զգուշությամբ խոսում է իր և վտարանդիության մասին. «Պատմություններն իմ մտքում դեռ պարսկերեն են, կերպարները, որ տեսնում եմ, չունեն ազգություն և հատուկ լեզու, նրանք իմ ալտեր էգոներն են», «Աշխարհը իմ արհեստանոցն է, ոչ իմ տունը»: Վտարանդիության մասին երբեմնի արտահայտած իր մտքի նորովի մեկնաբանությամբ Բիառոստամին նշում է. «Այժմ մի փոքր այլ է: Ես Թեհրանի իմ այգու ծառին եմ նման: Երբ հեռացա տնից, մի ամբողջ շաբաթ այն ջրելու համար չկար ոչ ոք: Սակայն նրա արմատներն այնքան խորն են, որ ջրի կարիք չունեն: Նույնը ես եմ»: «...Միրտս ավելի ուժգին կբաբախի այնժամ, երբ ինքնաթիռը վայրէջք կատարի Թեհրանում»<sup>5</sup>:

<sup>4</sup> Dabashi H., The tragic endings of Iranian cinema.-ALJAZEERA, 21 March, 2013, <http://www.aljazeera.com/indepth/opinion/2013/03/2013320175739100357.html>

<sup>5</sup> Brooks X., Cannes 2012: Abbas Kiarostami: "The world is my workshop" - theguardian, Monday 28, May 2012,

<http://www.theguardian.com/film/2012/may/28/cannes-abbas-kiarostami-interview>

Այսօր իրանական ընդհատակյա երաժշտությունն է երկրի ձայնը և բարբախյունը, նույն կենդանությամբ և տրոփյունով, ինչպիսին իրանական կինոն էր մի ժամանակ: Իրանական ընդհատակյա երաժշտության մասին նկարահանված «Լուսության ձայները» (2006) վավերագրական ֆիլմը Գերմանիայում ծնված Ամիր Համզի և Մարկ Լագարզի հեղինակությամբ, արժանացել է բարձր գնահատանքի, մասնավորապես Թրիբեկայի կինոփառատոնի շրջանակներում<sup>6</sup>:

Խոսելով իրանական վտարանդի կինոյի մեկ այլ մեծատաղանդ ներկայացուցչի՝ Շիրին Նեշատի մասին՝ Դաբաշին նշում է. «Նեշատի աշխատանքները մարգարեական են և պոետիկ, ծիսային են և զգայական, և վերջապես, տուն և վտարանդիություն ճնշող գրկախառնության մեջ: Նա անկարելիության մտապատկերող է»<sup>7</sup>:

Նեշատն իր մասին պատմում է. «Հենց դա է պատճառը, թե ինչու ես դարձա արտիստ՝ իմ երևակայությունը դարձավ իմ սրբավայրը, մի վայր, որտեղ կարող եմ հորինված կամուրջ կառուցել իմ և հայրենիքիս միջև՝ վերիմաստավորելով պատմական փաստերը, որոնց ականատես չեմ եղել, սակայն միայն պատկերացրել եմ: Յուրաքանչյուր իրանցի արտիստ այս կամ այն կերպ քաղաքական է: Քաղաքականությունը ձևավորում է մեր կյանքը: Տունը դարձել է մեծ տառապանք: Ես Իրանի մի մասնիկն եմ և միաձուլված եմ նրա ապագային»<sup>8</sup>:

Շ. Նեշատը ծնվել է 1957թ., մինչև 1975-ն ապրել է Իրանում, ուսանել է Բերքլիի համալսարանում: 1990-96-ականներին

պարբերաբար այցելել է հայրենիք, սակայն նրա աշխատանքների համաշխարհային ցուցահանդեսները և մեծ ճանաչումը արգելք են հանդիսացել իսլամական վարչակարգի օրոք Իրան մուտք գործելու համար:

Արտիստին մեծ ճանաչում բերած աշխատանքներից է «Ալլահի կանայք» (1993-97), «Հողմապտույտ» (1998), «Խզում» (1999), «Ավյուն» (2000), «Թռչունների տրամաբանություն» (2002), «Թուրա», «Մահդոխթ» (2004), «Զարին» (2005), «Ֆահգե» (2008), «Մունիս» (2008), «Կանայք առանց տղամարդկանց» (2009) և «Տիրապետում», «Արքաների գիրքը և Մեր տունը կրակի մեջ» (2012, 2013)՝ Իրանական Գանաչ հեղափոխությունը և Արաբական գարունը՝ Միջին Արևելքում լուսաբանող լուսանկարների շարքը:

Մունիսը՝ Փարսիփուրի հայտնի «Կանայք առանց տղամարդկանց» վեպի հերոսուհին, վերափոխումն է նեշատյան տեսլականի ընդվզող ու պայքարող կանացի ոգու, որը բնորոշ է նրա բոլոր կին հերոսուհիներին: «Իմ ֆիլմում նա քաղաքական ակտիվիստ է, նա շատ մետաֆորիկ կերպար է: Ես և Շ. Ազարին կարևոր ենք համարում այս ֆիլմի պատմական համատեքստը, քանզի աշխարհը միայն թվացյալ է հիշում Իրանի պատմությունն իսլամական հեղափոխությունից հետո»: «Կանայք առանց տղամարդկանց» ֆիլմը նկարահանվում է Մարրոկոյում, մասնավորապես՝ Կասաբլանկայում, և Վենետիկի 66-րդ կինոփառատոնում Շիրին Նեշատը ու Շոջա Ազարին արժանանում են «Արծաթե ադյուն» մրցանակին:

Նեշատի «Ալլահի կանայք» շարքը հետաքննում է կնոջ մարմնի և Իրանի քաղաքականության կապը, մարմին, որը ներկայանում է, որպես հոետորություն: Տեքստը դաջված կնոջ մարմնին, ստեղծում է երկակի իմաստային ստարածություն: Պոեզիան դաջված մարդկային մարմնի վրա, հաղորդակցության մետաֆորիկ լեզու է, որը քաղված է Ֆորուդ Ֆարսիզադի, Թահերե Սաֆարզադեի, Մեհդի Ախավան Սալեսի պոեզիայից: «Ալլահի կանայք» շարքում քողարկված կանայք ձեռքին հրացաններ են՝ հեղափոխականամետ տեքստերով դաջված նրանց մարմիններ:

<sup>6</sup> Dabashi H., The tragic endings of Iranian cinema.-ALJAZEERA, 21 March, 2013, <http://www.aljazeera.com/indepth/opinion/2013/03/2013320175739100357.html>

<sup>7</sup> Dabashi H., Bordercrossings: Shirin Neshat's Body of Evident- Verzotti G., Castello di R., Rivoli, Italy: Charta, 2002, pp. 36-38.

<sup>8</sup> Ho M., A State of In-Between: Shirin Neshat's Iran - Ho M., Afkhami M., Shirin Neshat: Facing History, Washington D.C.: Hirshhorn Museum and Sculpture Garden, Smithsonian Institution, 2015, pp. 10-26.

րին: «Այս լուսանկարները նահատակության հայեցակարգի իմ ըմբռնումն ու զգայական ընկալումներն են: Մրանք տեսողական բացահայտումներ են, թե ինչ է նշանակում գաղափարապես փիլիսոփայորեն և գեղագիտորեն լինել մուսուլման կին, զինվորական և նահատակ»<sup>9</sup>:

«Կիրք»-ը Սուրբ գրություններում Չոլեյխայի և Յուսուֆի սիրո պատմության նեշատյան մետաֆորի վերընթերցումն է, որը տեղադրվում է այսօրյա Իրանում կին-տղամարդ հարաբերությունների տարածական ընկալման մեջ:

Իսլամական և պարսկական ավանդույթում այգին գոյի սանձաններից անդին հոգևոր մի տարածք է, ուր մարդ փախուստ է փնտրում, և նրա կենտրոնում դրախտի սուրբ ծառը Թուբան է որին Նեշատը հանդիպում է Շահրնուշ Փարսիփուրի «Թուբան և զիշերվա իմաստը» միստիկական վեպում: Վեպը պատմություն է երկրի, տան, լեզենդար ծառի և կնոջ մասին, որտեղ բոլորն ապրում, մեծանում և տառապում են միասին, հարյուր տարի շարունակ: Թուբա ծառի հիշատակումներ կան նաև Սոհրեվաբդիի «Կարմիր բանականություն» աշխատության մեջ:<sup>10</sup> Դա մեծանուն կին վիպագրի և ճանաչված արտիստի առաջին հանդիպումն էր, որից հետո պետք է այդ ստեղծագործական երկխոսության միջոցով աշխարհին հայտնի դառնային արվեստի առաջատանքներ:

«Միշտ ցանկացել էի վերադառնալ տուն և կինո նկարահանել հորս երբեմնի այգու մասին, որը մեռել էր նրա մահից հետո: Դրախտի և այգու գաղափարն իմ մտքում էին:

Թուբան դրախտի ծառ է, սուրբ ծառ: Իրանական մշակույթի մեջ այն նաև կանացի միջ է: Կին-ծառ: Այն դրախտի, սրբավայրի որոնում է, վտարանդիության մի վայր, փախուստի մի վայր:

<sup>9</sup> Zanganeh L. A., My Sister Guard Your Veil; My Brother Guard Your Eyes: Uncensored Iranian Voices, Boston, Massachusetts: Beacon Press, 2006, p. 45.

<sup>10</sup> Yavari H., Afterword Tuba: A Woman for All Seasons - Tuba and the Meaning of Night, Parsipur Sh., New York: The Feminist Press at City University of New York, 2008, p. 339.

Համայնքի կամ մի ողջ աշխարհի: ...Ես չեմ կարող երբևէ փոխանցել ամբողջական «ճշգրիտ» ազդեցությունը կամ իրողությունը Իրանի մասին, քանզի ես այնտեղ չեմ, ես հեռու եմ ապրում: Դա է պատճառը, որ իմ պատկերները և պատմությունները գունազարդված են տարատեսակ ներշնչանքներով և սեփական փորձառություններով, որ ունեմ»<sup>11</sup>:

### Մ. Մախմալբաֆ, «Բադրան»

*Ոչ որ չի ուզում հավատալ,*

*Որ պարտեզի սիրտը այտուցվել է արևի ներքո,*

*Որ կամաց-կամաց պարտեզի հիշողությունը*

*Դատարկվում է կանաչ հուշերից:*

Ֆ. Ֆարոխզադ, «Միրտս ցավում է պարտեզի համար»<sup>12</sup>

Ամերիկաբնակ նկարչուհի, բանաստեղծուհի Փարինազ Էլիշը իր մտքումներն է կիսում ընթերցողների հետ. «Իմ մանկությունն անց է կացել իրար միահյուսված ծառերի կանաչ հովանոցների ներքո: Լուսաշող ամառային արևի ներքո: Մանուկ հասակում եղբայրներիս, զարմիկներիս հետ բացահայտեցինք այգիները մեր երիտասարդության, որտեղ անվերջանալի պահմտոցի էինք խաղում: Երկու տարի առաջ ես սկսեցի իմ ծառերի շարքը՝ հասկանալու այս ոգևորությունը: Ես միայն հայտնաբերել եմ, որ մինչ այժմ հմայված եմ այդ բնության քանդակների խորհրդավորությամբ:

Իմ իրանական արմատները կարող են բացահայտել այս ոգևորությունը: Պարսիկները պոետիկ կապ ունեն այգիների հետ: Ծառերի ուրվագծերն ամենուր են՝ գրականության, արվեստի մեջ, ամենօրյա կյանքում: Մեր հարաբերությունները լույսի և

<sup>11</sup> Ibid, pp. 49-51.

<sup>12</sup> Ֆարոխզադ Ֆ., Մի այլ ծնունդ, թարգմ. Է. Հախվերդյան, Երևան, «ԱՅՖ ԲԵՆ» հրատարակչություն, 1996, էջ 79-80:

սովերի, մեր խոր ընկալումները՝ այգու նշանների և ձայների, և այն մարդկանց հետ են, ովքեր դարեր շարունակ ստեղծել են պարսկական բերկրանքի այգիները անապատի թշնամական, դաժան կլիմայում»<sup>13</sup>:

Տասը տարի վտարանդիության մեջ բնակվող Մոհսեն Մախմալբաֆը 2012թ. նկարահանում է իր ամենավիճահարույց՝ «Այգեպան» վավերագրական ֆիլմը: Աշխարհի ավելի քան 24 հեղինակավոր կինոփառատոներում ցուցադրված այս ֆիլմը 2012թ. Բեյրութի միջազգային կինոփառատոնում արժանանում է «Ոսկե մրցանակի»: Մա հայր և որդի Մոհսեն և Մեյզամ Մախմալբաֆների ճանապարհորդությունն է դեպի Հայֆա և Ակկա, որտեղ գտնվում են Բահայիզմի<sup>14</sup> կրոնական ամենահայտնի կոթողները, որոնք յուրատիպ պատմական և ֆիզիկական հիշողության փաստացի ապացույցներ են:

Նշենք, որ մինչ օրս ֆիլմը ակադեմիական քաղաքական, գաղափարական բազում բանավեճերի և քննարկումների առիթ է հանդիսանում: Մա պոետիկ վավերագրական կինոպատում է, որտեղ Մախմալբաֆը մեծ կինովարպետին հատուկ մտածողությամբ, վերստեղծում է Մուրբ Երկրի բազմակրոն միջավայրի

և դարեր ի վեր կողք կողքի կանգնած հոգևոր կոթողների լռելյայն պատգամը: Մա ասք է բնության, մարդկության և վտարանդիության ցավի մասին:

«Գաբբեից» հետո կինովարպետի տեսախցիկը պոետիկ նոր երկխոսություն է սկսում Հայֆայում և Ակկայում գտնվող Բահայի գեղատեսիլ այգիների հոգեպարար, աստվածային լուսության հետ: Այգու գաղափարը նոր հոգևոր և տարածական իմաստ է ձևափոխվում: Բնությունը աստվածային կացարան է, և Մախմալբաֆի «Բաղբան»-ում Գյոթեի այն մտքի արտացոլումն է, ըստ որի՝ մարդը ինքնաճանաչման մակարդակին հասած բնությունն է:

Ֆիլմը սկսվում է սիմետրիկ ծառերով կառուցված այգու տեսարանով, որտեղ կարմիր ծաղիկների եզրագծերով տրոհված արահետի վրա քայլող կինովարպետի պոետիկ տեքստի նախաբանն է հնչում. «Ես քրիստոնյա չեմ, ես մուսուլման չեմ, ես բուդդայական չեմ, ես զրադաշտական չեմ, ես հրեա չեմ, ես ազոնիստ կինոռեժիսոր եմ, ով ցանկանում է պատմել բահայիզմի մասին»:

Հորը հակասող որդու տեսախցիկը կենտրոնանում է այգում թևածող երիտասարդ մի կնոջ վրա, ով տալիս է իր պատգամը հավաքված մանչուկներին. «Մենք բոլորս մի այգու ծաղիկներ ենք և մի ծառի տերևներ: ...Ծառի յուրաքանչյուր տերև յուրովի է թեքվում դեպի լույսը, սակայն բոլորս միասին ընդհանրացնում ենք այդ ծառի գեղեցկությունը»:

Կինոտեքստի ներքին պոետիկ զգացողություններով պատկերվում են ուսուցչուհու հետ ծառի կերպարանք ստացած փոքրիկ մանչուկները, որոնք ուսանում են մրգատու ծառի բարության և հավիտենության խորհուրդը. «Երբ մարդիկ քար են նետում մեզ վրա, մենք պետք է պատասխանենք նրանց բարությամբ՝ տալով նրանց մեր պտուղները»: Կարծես կենդանություն է ստանում Գաբբեի լեզուն՝ խնձորի և կանաչ մարգագետնի գունային երկխոսությունը, ինչպես նաև կապույտ ջրավազանի մեջ լողացող նարինջը:

<sup>13</sup> Parinaz Eleish, About my Art, <http://www.eleish.com>

<sup>14</sup> Բաբիզմը կամ բաբիականությունը որպես ուսմունք մեծ տարածում է գտնում Իրանում XIXդ.: Բաբի ուսմունքի հոգևոր ժառանգորդ է դառնում Հոսեյն Ալի Բեհա-Ուլլան (Աստոծ փառք): 1868թ. Բեհա-Ուլլայի Պաղեստին արքայազնուհու հետ բահայիների հոգևոր կենտրոն է դառնում հինավուրց Ակկա պատմական քաղաքն Իսրայելում, որն ընդլայնում է ուսմունքի աշխարհագրական սահմանները: 1899թ. Բեհա-Ուլլան Բաբի մասունքներն Իրանից տեղափոխում է Իսրայել և Հայֆայում՝ Քարմել լեռան ստորոտում, կառուցում է Բաբի շիրիմը, որը հետագայում վերածվում է հոգևոր մեծ համալիրի և դասվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության շարքին: Հարազատ Իրանից բերված ծառերն ու բույսերը Բեհա-Ուլլայի կողմից վերաստնվում են Ռիդվանի այգում: Բաբի շիրիմը շրջապատված է լայնարձակ այգիներով, որտեղ գտնվում են *Կորոզ այգիները*, *Բահայիների միջազգային արխիվը*, *Արդարության համամոլորակային տունը* և այլ կառույցներ:

Ֆիլմի պոեզիայի արքետիպ հերոսը այգեպանն է, ով հոգ է տանում այգու մասին, գրուցում ու խոսում է յուրաքանչյուր ծառի ու ծաղկի հետ: Աղոթքի ծես է այգեպանի համար այգու ինամբը, խոհեմության վարժանք: Կապույտ մանուշակներն այգեպանի ձեռքում վերակենդանանում են:

Այգեպանի կոշտ ու ամուր ավերի մեջ լողացող արևի շողերն են, և անձրևի ուժգին կաթիլները նրա դեմքին: Այգեպանը լուռ աղոթում է՝ ջուր խնդրելով իր ծարավ բնության համար: Եռագույն մանուշակների ինամբն ինքնատիպ ծիսակարգ է այգեպանի համար, որոնք նրա խոսքերով իրենց նուրբ ու գունեղ թերթիկների վրա արտացոլում են մարդկային հոգին: Նորից այգեպանի սուֆիական պատգամն է հնչում, ով մաքրում է այգու հայելապատ հատակի փոշին՝ ասելով. «Մարդկային հոգին նման է հայելու, այն պետք է միշտ մաքուր պահել, որ առկայծի իր ողջ գեղեցկությամբ»:

Այսպիսին են հայելու մեջ արտացոլված կարմիր վարդերի և ալիքվող կապույտ ջրերի հոգիները: Այնուհետև հավերժի կապույտում սլացող թռչունն է, որն իր թևածուժով կյանքի և հավերժության ասքն է հյուսում՝ ավետելով այգեպանի խորիմաստ պատգամը. «Ո՛վ մարդիկ, դուք ունեք տարբեր կրոններ և տարբեր անուններ, սակայն բոլորդ մեկն եք, եթե կրոնը պատերազմ ազդարարելու առիթ է հանդիսանում, այն դադարում է կրոն լինելուց»:

Ֆիլմի ավարտին ավագի մեջ ընկղմված կակտուսներին ավիով ջուր կերակրող հայր Մախմալբաֆն է, որը, ի պատասխան որդու՝ «Բահայի՝ ես դարձել արդյոք, հայրիկ» խոսքերի, լսում է պատասխանը. «Ոչ, ես քրիստոնյա եմ, ես մուսուլման եմ, ես բուդդայական եմ, ես հրեա եմ, ես զրադաշտական եմ, ես բահայի եմ, ես նրանք բոլորն եմ»:

Այգու կենտրոնում վերակենդանանում է Թահերեի<sup>15</sup> տեսիլքը՝ մահապատժից առաջ իր վերջին պատգամով. «Դուք կարող եք ինձ սպանել այնքան շուտ, որքան ձեր իրավունքն է, սակայն կանանց ազատագրումը ոչ»:

Ճարտարապետական լեզվով են թարգմանված Բահայի ինքնատիպ արժեքները, հավատամքներն ու մշակութային ավանդույթները, որոնցից են *ունիվերսալիզմը*, *գեղագիտությունն ու մարդկային հոգին*, *հավասարությունը*, *առաքինությունը*, *համեստությունը* և *Սերը լույսի ու բնության գեղեցկության հանդեպ*<sup>16</sup>: Մախմալբաֆին ուղեկցում է Պապուա Նոր Գվինեայից ժամանած այգեպանը: Ըստ Գիրք Ծննդոցի՝ Բարձրյալը ինքն է առաջին այգեպանը. «Եվ Տէր Աստուած արեւելեան կողմը՝ Եդէմի մեջ՝ պարտեզ տնկեց ու իր շինած մարդը հոն դրաւ» (ՄՆՆԴՈՑ, 1, 2):

Բահայական այգիների կոթողների ճարտարապետական լեզուն մեծ ազդեցություն է գործում, մասնավորապես, ուխտավորների փորձառության զգայական տեսակետների վրա:

Բահայական այգիները, որոնք աղոթքի, հոգևոր անդորրի և տրանսֆորմացիայի կարևոր մեղիում են հանդիսանում, նախագծված են պարսկական այգու նկարագրով, լույսի և ստվերի, ներքինի և արտաքինի, ինչպես նաև երկրաչափական ձևերի՝ շրջանների և ութանկյուն աստղերի ներդաշնակ երկխոսությամբ<sup>17</sup>: Մենք յուրաքանչյուրս մեր հոգու այգեպաններն ենք, որտեղ սիրո, լույսի բարության սերմեր ենք ցանում և վայելում նրա բողբոջները:

Այգիների և այգեգործության պատմությունն ամուր կապված է ազգի պատմության, գիտության, մշակույթի (մանրանկար-

<sup>15</sup> Ֆաթեմե Ֆարադանին կամ Թահերե Ղուրաթ օլ Այնը բաբիական շարժման հայտնի կին ներակայացուցիչն է, ով 1848թ. բեդաշթյան հավաքից հետո ձերբակալվում և 1852թ. մահապատժի է ենթարկվում Թեհրանի՝ Բլխանի այգու:

<sup>16</sup> Hammerman Y., Distinctive Design of the Baha'i Gardens - The Baha'i Gardens, <http://www.ganbahai.org.il/en/learn-more/design-management/>

<sup>17</sup> Ibid.



չություն, ճարտարապետություն, գորգագործություն) և գրականության հետ: Պարսկական այգու հայեցակարգի մեջ են մտնում անձնական, հասարակական, ինչպես նաև արքայական ընկալումները: Այգին արտահայտվում է ժամանակակից և միջին պարսկերենում՝ *բադ*, հին պարսկերենում՝ *փաիրիդահիգա*՝ պատերով պատված տարածք (այստեղից՝ *փարդեգ*), ինչպես նաև *բուստան* և *գոլեստան* անվանումներով: Պարսկական այգու սիմվոլիկ նշանակությունն իր ճանապարհն է գտնում նաև իսլամական մշակույթում:

Բ. Զիամեթիի խոսքերով. «Հոգեպարար հանգստի վայրը և ներքին ներդաշնակությունը մշտապես պատկերվում են որպես այգի... երկրային դրախտ:

Ֆիզիկական կամ մտավոր տարածության մեջ այգիներ կառուցելով մարդն արտահայտում է ոչ միայն այդ բացարձակ վայրը նվաճելու բաղձանքի գաղափարը, այլև իր և բնության փոխհարաբերության զգայական ընկալումը. Տիեզերքի կառուցվածքը և իր տեղը վերջինիս մեջ»<sup>18</sup>:

Իրանի ամենաճանաչված այգին Չհարբադն է: Չհարբադը իրանական քաղաքակրթության ներդրումն է համաշխարհային այգեգործության մեջ<sup>19</sup>: Պարսկական այգին նախագծված էր ոչ միայն դրախտի վերաիմաստավորմամբ, այլև տիեզերքի վերստեղծմամբ, որը բաժանվում էր չորս հատվածի՝ չորս գետի, ինչպես գրում էր Քսենոֆոնը՝ նկարագրելով Կյուրոս Մեծի այգու նախագիծը<sup>20</sup>: Ալեգորիկ այգիներով է ներհյուսված եղել համաշխարհային գրականությունը, հատկապես միջնադարյան իսլամական և արևմտյան գրականությունը, որն արտացոլում է միջնադարյան մտածողության կարևոր և բնութագրական տեսակետները: Այգին միջնադարյան հայեցակարգում մի վայր էր, որ-

տեղ հոգին պետք է ընթերցեր ամենախոր հոգևոր դասերը: Ինչպես նշում է Ջ. Մեյզամին. «Միջնադարյան իսլամական այգին *hortus conclusus* է՝ պատսպարված և պաշտպանված արտաքին աշխարհից»<sup>21</sup>:

Այգեգործությունը խոհեմության մշակում է: Միմվոլիզմն ամենուրեք է իսլամական այգեգործական արվեստում: «Տեսանելի աշխարհն իր արարչի նշանն է: Ամեն ինչ այս աշխարհում՝ մեծ թե փոքր, նշան է, նաև բառերը, այսինքն Ղուրանում: Իսլամական այգի-գորգերը նույնպես ստեղծված են նույն սիմվոլիկ կատևով, որպես իրանական այգիներ, որտեղ նշմարվում է տեսանելիի անտեսանելի գոյությունը»<sup>22</sup>:

Իրանական հեղինակային կինոյի վտարանդի կենսագրության խորահայաց ստեղծագործություններից է «Բադբանը», որտեղ պատկերված այգին ոչ միայն տեքստից և բնապատկերից քաղված բուսաբանական փաստանյութ է, այլև դրախտային մանրանկարչության պատմական սկիզբ:

<sup>18</sup> Meisami J. Scott, Allegorical Gardens in the Persian Poetic Tradition: Nezami, Rumi, Hafez -International Journal of Middle East Studies, Vol. 17, No. 2 (May, 1985), pp. 229-230.

<sup>19</sup> Рандхава М., Сады через века, Москва: Изд. "Знание", 1981, ст. 11.

<sup>20</sup> Ibid, p. 231.

<sup>21</sup> Meisami J. Scott, Allegorical Gardens in the Persian Poetic Tradition: Nezami, Rumi, Hafez -International Journal of Middle East Studies, Vol. 17, No. 2 (May, 1985), p. 231.

<sup>22</sup> Harrison R. P., Gardens: An Essay on the Human Condition, Chicago: The Chicago Univ. Press, 2008, p. 273.

НОВЫЕ ВОСПРИЯТИЕ ИРАНСКОГО КИНО В ИЗГНАНИИ  
МОХСЕН МАХМАЛЬБАФ, ШИРИН НЕШАТ

Лилит Сафрастьян  
(резюме)

Иранское кино стало главным культурным феноменом конца XX - начало XXI вв. Это факт, признанный известными мировыми кинокритиками ведущих международных кинофестивалей. И хотя многие иранские режиссеры работают в разных странах и на разных языках, в их фильмах есть нечто общее, что дает основания называть их "диаспорой в изгнании". Известная иранская фотохудожница и кинорежиссер Ширин Нешат одна из немногих современных художников осмелившаяся воспеть красоту, веру и героизм обратившись к своей национальной и гендерной идентичности. "Садовник" поэтический документальный фильм великого мастера Мохсен Махмальбаф. Снятое в Бахайских садах в Акко и в Хайфе, это фильм о красоте, о религии, о цветах, о философии и о духовных спорах отца и сына, в которых рождается истина.

MODERN PERCEPTIONS OF IRANIAN CINEMA IN EXILE.  
MOHSEN MAKHMALBAF, SHIRIN NESHAT

Lilit Safrastyan  
(summary)

Iranian Cinema in its postrevolutionary phase has received world wide critical attention, winning awards at renowned film festivals around the globe. Despite enormous obstacles exilic Iranian Filmmakers within a few decades have created steady stream of films outside Iran. One of the most famous and representative voices of modern Iranian Art House is visual artist, pothographer and filmmaker Shirin Neshat, who explores dichotomy between religion, politics and feminism in her works. The Gardener is poetic documentary film by the great master Mohsen Makhmalbaf. Filmed in Baha'i gardens in Acre and Haifa, it is an exploration of religion, reflected in a dialogue between father and son.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊԻՑ (ԴԱՍԹԱՆԻՑ) ՊԱՏՄԱՎԵՊ

**Բանալի բառեր՝ ժողովրդական վեպ, դասթան, ռեվայաթ, ղեսսե, հեքայաթ, ասացող, պարմավեպ, ավանդույթ ավանդավեպ, վիպասան, այարական, հերոսական**

Իրանական միջնադարյան գրականությունը հարուստ է ժողովրդական վեպի տարբերակերով, սակայն պարսից մերօրյա գրականագիտությունը դրանց ներժանրային տարանջատման հարցում հստակ մոտեցում չի սահմանել: Արձակ այս ստեղծագործությունները հանդես են գալիս դասթան, ռեվայաթ, աֆսանե, նաղլ, հեքայաթ և այլ անվանումներով:

Ժողովրդական արձակի վերոհիշյալ ժանրերի առաջին ուսումնասիրող Մոհամմադ Չաֆար Մահջուբը գրում է. «Այս պատումները շարունակությունն են մինչիսլամական շրջանի բանահյուսական պատումների և իրանական գրականության ու ազգային դյուցազներգության մաս կազմող գլուխգործոցներ են: Հերոսական, կրոնական, սիրային և այարական-արկածային բովանդակությամբ այս ավանդագրույցների մեծ մասն ունի պատմական հիմք, սակայն պրոֆեսիոնալ ասացողները դրանք պատմել և սերունդներին են փոխանցել առասպելախառն պատմություններով<sup>1</sup>»:

Դասթանը, ղեսսեն, ռեվայաթը և հեքայաթը նույնացնելը, ինչը ներկայում տիրապետող է իրանական գրականագիտության մեջ, ընդունելի չէ բոլոր հետազոտողների կողմից: Այդ մոտեցման քննադատներից է գրականագետ Մոհամմադ Հանիֆին, ով կարծում է, որ նախաիսլամական շրջանի դասթանի և միջնա-

\* ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դասախոս: Էլ. փոստ՝ [garnikgevorgian@ysu.am](mailto:garnikgevorgian@ysu.am)

<sup>1</sup> Mahjub, J. M., Adabiyate amianeye Iran, j. 1,2, Tehran, 1382, s. 127-132.

դարյան ռեվայաթների ու ղեսսեների միջև տարբերությունն այնքան մեծ է, որ համեմատելու եզրեր չկան<sup>2</sup>:

Միջնադարյան դասթանների ասացողները (դասթանգու, ղեսսեխան, նաղղալ) ժողովրդական պատումները բանավոր ներկայացնելիս հարստացրել են սեփական ճաշակի ու երևակայության համապատասխան, և XII դարից սկսած՝ դրանք այնքան են ծավալվել, որ կարիք է եղել շարադրել նաև գրավոր տարբերակներով (Աբու Թահիրի Թարսուսի, Բիդամի և այլն):

Այսպիսով, «եր օրերն են հասել ժողովրդական վեպերի բազմաթիվ գրավոր տարբերակներ, որոնք համեմատելի են ավանդագրույցի, ավանդավեպի կամ ասքի ժանրերի հետ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ հետայսու դրանք բոլորը մեր նյութում կներկայացնենք մեկ դասթան անվանումով:

Ըստ Կալիմուդդին Ահմադիի՝ դասթանները երկարաշունչ, խճճված և բովանդակային առումով գերհագեցած պատմավածքներ են<sup>3</sup>: Դրանց մեծագույն մասը սովորածավալ ստեղծագործություններ են, ինչպես՝ «Ամիր Համզեն»՝ 40 հատոր, իսկ «Մուլուք գոհարը»՝ ընդամենը մի քանի էջ:

Վ. Ազիմին համարում է, որ միջնադարյան դասթաններում թաքնված են մտքի անզին գոհարներ<sup>4</sup>, որոնցում չկան նախաբան և դաստողություններ իրադարձությունների վերաբերյալ, գործողությունները զարգանում են սրընթաց վերելքով, առանց աստիճանական զարգացման<sup>5</sup>:

Դասթաններն առանձնանում են պլոթի բարդությամբ, իրադարձությունների բազմաքանակությամբ, հերոսների բարձրակարգ մարտարվեստի, ընդդեմ թշնամիների ֆանտաստիկ սխրանքների և հանուն արժանապատվության ու իրենց պաշտ-

<sup>2</sup> <http://sarapoem.persiangig.com/link7/amyaneh4.htm> - Hanif M. Vijegihaye qesehaye amianeye farsi (19.03.2016).

<sup>3</sup> Шодиевич Х., Жанр романа урду и его развитие до первой половины XX в., Душанбе, 2015г., ст. 80.

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>5</sup> Баканов А., Г., Современный зарубежный исторический роман, ст. 88-89.

պանյալի (կամ «ամանաթի») ապահովության համար ցուցաբերած անձնվիրության նկարագրությամբ:

Անդրադառնալով պարսից պատմավեպի առանձնահատկություններին՝ գրականագետ Խ. Գ. Քորոդլին նկատում է, որ պարսից պատմավեպի ժանրը ուղղակիորեն ներմուծված կամ փոխառնված չէ արևմտյան գրականությունից, այլ այն իր արմատներով գնում է դեպի միջնադարյան դասթանային գրականություն և չափազանց ինքնատիպ է<sup>6</sup>:

Նույն կարծիքին է նաև վրաց գրականագետ Մ. Բ. Իվանիշվիլին: Մանրակրկիտ ուսումնասիրելով Մոհամմեդ Բադեր Խոսրովի «Շամս և Թողրա» պատմավեպը՝ նա հանգում է այն եզրակացության, որ պարսից պատմավեպի արմատները պետք է փնտրել ժողովրդական դասթանների մեջ<sup>7</sup>:

Եվ իսկապես, XX դարավերջի և XXI դարասկզբի պարսից պատմավեպը զարգանում է միջնադարյան դասթանների հարուստ ավանդույթի հիման վրա՝ դրանց տալով նոր ժամանակներին, պատմական արդի զարգացումներին ու խնդիրներին համապատասխան երանգավորում:

Հավատարիմ մնալով միջնադարյան դասթանագրության ավանդույթներին՝ պարսից պատմավեպը դարձել է ինքնօրինակ և ազգային երևույթ՝ բավական հեռանալով պատմավեպի մասին Արևմուտքում ընդունված ընկալումներից<sup>8</sup>: Երբեմն բանը հասնում է նրան, որ ժողովրդական դասթանի և ժամանակակից պատմավեպի որոշ նմուշների միջև նկատվում է հայելային կրկնություն:

Ասվածի համատեքստում «Մամաքե այար» դասթանի հերոսի՝ Մամաքի արկածային պատմությունների կրկնությունը կարելի է տեսնել Հոսեյնյալի Մոսթաանի «Ֆեթնեյե Շադյախ» վեպի

հերոս՝ խորեզմշահ Թեքքեշի համհարգ-այյարի և Ֆավադե Ֆարուդիի «Անթագ ու անգահ արքան» վեպի հերոսուհի այյար Ախթարի արկածներում:

Ուշադրությունը հետևելով դասթանների և պարսից պատմավեպերի նմանություններին ու տարբերություններին՝ պարզորոշ նկատում ենք ժողովրդական վեպից ժամանակակից պատմավեպին անցման ուրվագիծը: Այս հանգամանքը գալիս է ևս մեկ անգամ հավաստելու, որ, ճիշտ է, պատմավեպի ժանրը համարվում է պարսից գրականության մեջ փոխառություն արևմտյան գրականությունից, սակայն այն գնացել է զարգացման ուրույն ճանապարհով՝ սերտաճելով բազմադարյա ավանդույթներ ունեցող պարսից ժողովրդական վեպի հետ:

Պարսից պատմավեպերում նկատվում է նաև դասթանների պոետիկայի փոխառում: Ջորջինակ շրջանակային արձակի ավանդույթը, որի կիրառման ականատեսն ենք լինում «Փիշգամանե էսթեղլալե Իրան», «Թայխ», և այլ պատմավեպերում: Մշակութային ընդհանուր ժառանգության հանգամանքով պայմանավորված՝ պատմվածք պատմածքի մեջ մեթոդը նկատում ենք ինչպես պարսից, այնպես էլ տաջիկական XX դարի պատմավիպական ստեղծագործություններում<sup>9</sup>:

Դասթանների պոետիկայի ազդեցությունը պատմավեպի վրա ցույց է տալիս, որ գեղարվեստական գրականությունն իր գոյության բոլոր էտապներում էլ զարգանում է որպես մեկ շղթա, իսկ նրա օղակները մշտապես փոխկապակցված են:

Տաջիկ գրականագետ Յու. Սալիմովը միջնադարյան դասթանների մասին խոսելիս նկատում է, որ դրանցում գործող անձինք, հսկառակ առասպելի, ոչ թե հերոս ծնվում, այլ հերոսանում են իրենց գործունեության ընթացքում: Այսպես՝ Մամաքը

<sup>6</sup> Короглы Х. Г., Современная персидская литература, Курс лекций, М., 1965.

<sup>7</sup> Иванишвили М. Н., Исторический роман Мухаммед Багера Хосрови «Шамс и Тогра», - Автореферат канд. филолог. наук, Тбилиси, 1973.

<sup>8</sup> Литература социалистических стран, итоги, тенденции развития, задачи изучения// Вопросы лит. 1986, № 1, ст. 32-33.

<sup>9</sup> Ульмасова З., Истоки формирования таджикского исторического романа, (Журнал - Ученые записки Худжандского государственного университета им. академика Б. Гафурова. Гуманитарные науки) № 3 / 2011 ст. 4, (<http://cyberleninka.ru/article/n/istoki-formirovaniya-tadzhikskogo-istoricheskogo-romana>) (19.03.2016)

«Մամաքե այյար» դասթանում շահի և վեզիրի հետ ունեցած յուրաքանչյուր բախումից հետո է միայն, որ իմաստնանում, ճարպկանում և հասնում է հերոսի աստիճանի<sup>10</sup>։ Այս հատկանիշով նա պատկերվում է առավել իրական՝ մոտենալով ժամանակակից վեպերում կերտվող հերոսներին։

Այնուամենայնիվ, դասթանի ժանրում փնտրել ներկա վեպում և պատմվածքում գործող հերոսների հետ լրիվ նույնական ֆիգուրներ անտրամաբանական է։ Շնորհիվ առեղծվածային և կախարդական մթնոլորտի, շարադրման գեղախոսության և կերպարաստեղծման առանձնահատկությունների՝ դասթանը համարվում է ներկա վիպագրության և ընդհանրապես գրականության համար անգերազանցելի աղբյուր<sup>11</sup>։

Այստեղ, ըստ ասացողների ճաշակի, իրադարձությունները ներկայացվում են հնարավորինս հետաքրքրաշարժ, իսկ կոմպոզիցիոն հանգույցները կառուցվում և հանգուցալուծվում են անսպասելի, մինչդեռ վեպերում դա անթույլատրելի է։

Եթե դասթաններում իրադարձությունների պատճառահետևանքային կապը խիստ թույլ է, իսկ սյուժետային գիծը հաճախ խախտվում է կամ կրկնություններ են նկատվում, ապա ժամանակակից արձակագրության մեջ այն անհրաժեշտ պայման է։ Առաջիններում ճակատագրի դեմ մարդը միշտ անգոր է, և ենթակա է նախախնամությանն ու ի վերուստ սահմանված կարգին։ Այստեղ կերպարները կերտված են սևի ու սպիտակի հստակ հակադրումով կամ հերոս-հակահերոս սկզբունքով, մինչդեռ այսօրվա պարսից արձակագրության հերոսը կրում է իր նախատիպերի բոլոր հատկանիշները միասին վերցրած։

Դասթաններում կերպարների փոխաբեն մեծ մասամբ ստեղծված են տիպեր։ Բոլոր հերոսների բառապաշարը գրեթե նույնն է՝ սկսած արքայից մինչև հասարակ գյուղացի։ Սակայն ժամանակակից վեպերում յուրաքանչյուր հերոսի խոսքը կա-

ռուցվում է համաձայն հասարակությունում գրաված նրա դիրքի, իսկ տիպականացման նոր տարակերպ մոտեցումներով մերօրյա հեղինակներին հաջողվում է կիսաառասպելական հերոսին վերափոխել ռեալ անձի<sup>12</sup>։

Պատմավեպում սյուժետային կառուցվածքը մոտենում է ռեալ պատմական իրադարձությունների կենտրոնին, ընդարձակվում են պատմական համայնապատկերի մասշտաբները, ինչը արձակագիրներին թույլ է տալիս դուրս գալ դասթանի ավանդական շրջանակներից և պատմական խոշոր անձանց ցույց տալ ամբողջ հասակով, պատմական իրականության հետ բազմազան կապերով։ Անցյալի ողջ ինքնատիպությունը վեր է հանվում առավել գիտակցված պատմականությամբ, հյութեղ և խորիմաստ կերպով։

Պատմավեպերում նախընտրելի է համարվում դասթաններից փոխառնված այարական-արկածային թեմատիկան՝ պատված սուֆիական-միստիկական ստվերաքողով։ Մրան ավելանում է տասներկուիմամական-շիական գաղափարաբանությունը, ինչը համապատասխանում է այսօրվա Իրանի՝ թե՛ ներքին, թե՛ արտաքին կրոնական-քաղաքական առաջնայնություններին։

Նոր թեմատիկան ներկայացնելիս պարսից պատմավեպերի մեծ մասը շարունակում է գրվել դասթանի ժանրի կանոնների առատ օգտագործմամբ։ Այս մեթոդն արդեն ընթերցողին տրամադրում է հայրենիքի ճակատագրին առնչվող վիպական իրադարձություններին մոտենալ առավել պատասխանատվությամբ, դրանք ընկալել հերոսականության կամ առասպելացված փառլանական-այարական սխարանքների լույսի ներքո։ Դասթանի ոճական հնարքները, առավել քան գրական որևէ այլ միջոց, գորու են շոյել իրանցիների հայրենասիրական զգացումները։

Պատմական իրականությունն ու հայտնի անձանց պատկերելիս պարսից պատմավիպասանները միախուսում են ռեալ

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում։

<sup>11</sup> Шодиевич Х., Жанр романа урду и его развитие до первой половины XX в., стр. 35.

<sup>12</sup> <http://sarapoem.persiangig.com/link7/amyaneh4.htm> - Hanif M. Vijegihaye gesehaye amianeye farsi (19.03.2016).

պատմականը, դասթանին բնորոշ կիսահեքիաթայինը, հերոսական-ռոմանտիկականը՝ մասամբ մոտենալով ասացողին, ով ջանում է հնարավորինս հեռանալ իրականությունից և հերոսների կերպարների կերտման մեջ միախառնել մարդկայինն ու հեքիաթայինը<sup>13</sup>:

Հենց դասթանի ավանդույթների շարունակման շնորհիվ է, որ ժամանակակից պատմավեպը վայելում է մեծ ժողովրդականություն<sup>14</sup>:

Դասթանը վեպի հեղինակին օգնում է ընթերցողին փոխանցել պատկերվող ժամանակների հասարակական իրավիճակը, սովորույթները, հագուստը, շփման ձևերը, իշխանություն-ժողովուրդ հարաբերությունների նրբությունները, կրոնական պատերազմները և այլն:

Վիպասանների մեծ մասը վարպետորեն հաղթահարում է դասթանի և պատմավեպի ևս մեկ տարբերություն՝ պատմավեպում ժողովրդին կամ մասսաներին տալով հնարավորինս լայն դերակատարություն, ինչը բացակայում էր դասթանում:

Միջնադարյան վեպում նկատվող պատերազմ և խաղաղություն, անհատ և հասարակություն, մարդ և իշխանություն, բռնություն և անարդարություն երևույթների փոխադարձ կապի առեղծվածի լուծման նպատակով վիպասանները փորձում են ընդհանրացնել պատմական փորձը: Այս դեպքում կարևորվում է նաև պատմավեպում ազգային մտածողությանը բնորոշ տարրերի ներմուծումը, ինչը ժողովրդական դասթաններում պատկերված անցյալի փահլանների և այարների սխրագործության վերհուշը վերակենդանացնում են նոր մակարդակով:

Ընդհանուր առմամբ, լեգենդների, միֆերի և ժողովրդական վեպի առանձնահատկությունների օգտագործումը պատմավեպում ծառայում է հեղինակների առաջադրած նպատակներին հասնելուն: Դրանց օգտագործման նպատակը պատմավիպա-

սանի ապրած ժամանակաշրջանի իրականության պատկերման հրատապության և պատմականության մեջ է...<sup>15</sup>», ինչը, կարելի է ասել, մեծ մասամբ հաջողված է:

Այսպիսի օրինակներով լեցուն է «Արուսե Բոխարա», «Ֆեթնեյե շադյախ», «Անթագ ու գահ տիրակալը» և այլ վեպեր:

Պատմավեպում, ճիշտ է, կոնկրետ է կոնֆլիկտների թե՛ աշխարհագրությունը, թե՛ թեմատիկան, սակայն երբեմն միտումնավոր անորոշացվում են նաև ժամանակն ու աշխարհագրությունը՝ հարելով դասթանի ավանդույթին: Հենց այսպիսի կառուցվածքն է, որ պատմավեպերում խտացնում է գեղարվեստական ժամանակը և թույլ տալիս կոմպակտ տեքստի մեջ զետեղել ժամանակագրական առումով ընդարձակ մոտիվներ:

Դասթանի առանձնահատկությունների օգտագործման կարևորության մասին պատմավիպասան Ջ. Ռահնեման ասում է. «Երբեմն լեգենդից ավելի օգտակար ինֆորմացիա ենք քաղում, քան պատմական փաստաթղթից: Լեգենդը մեզ ցույց է տալիս ժողովրդական մտածելակերպը, նրա հոգին և սիրտը, այնինչ պատմական փաստաթուղթը միայն դեպքերի ժլատ սղագրություն է<sup>16</sup>»:

Դասթանների և ժամանակակից պատմավեպերի կապի ամենացայտուն ցուցիչներից մեկն էլ այն է, որ երկուսն էլ հյուսված են պատմական հայտնի անձանց կյանքի և գործունեության շուրջ:

Անցյալում ապրած և փառաբանված հերոսների կիսապատմական և կիսաառասպելական կերպարներն իրենց դրսևորած մեծահոգությամբ, առատաձեռնությամբ, հյուրասիրությամբ, անձնվիրությամբ, արդարության հաստատման նկատմամբ առանձնահատուկ մղումով առանցքային տեղ են զբաղեցրել հասարակ ժողովրդի ստեղծագործության մեջ: Հենց այս պատճա-

<sup>13</sup> Шодиевич Х., Жанр романа урду и его развитие до первой половины XX в., ст. 32.

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 34-35.

<sup>15</sup> Gunkel H., Genesis. Gottingen, 1910. s. LXXX.

<sup>16</sup> Рахнема 3., Пророк, т. 1, ст. 34-35.

ումով էլ ժամանակակից հեղինակները իրենց ստեղծագործություններում օգտագործում են հերոսի այս տիպը<sup>17</sup>:

Դասթանների օրինակով պատմավեպերում նկատում ենք նաև քաջ կանանց կերպարներ: Նրանք բնորոշվում են հավատարմությամբ, հայրենասիրությամբ, սղամարդկանց կողքին իրենց ոչ պակաս «ջավանմարդության»<sup>18</sup>: Հենց այդպիսին է Ախթարը «Անթագ ու գահ արքան» վեպում:

Պատահական չէ, որ վիպասաններն ընթերցողների հայրենասիրական զգացմունքները խրախուսելու նպատակով իրենց հերոսներին կերտում են այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք ունեցել են Աբու Մուսլիմը, Մուկաննան և Բաբարը, այսինքն որպես ազգային ազատագրական ապստամբությունների առաջնորդներ:

Համեմատելով վեպերի այսպիսի հերոսներին դասթանների հերոսների հետ՝ նկատում ենք, որ առաջինները երբեմն անցյալի «մեծահոգի, արժանապատիվ կամ նույնիսկ խաբեբա, ճարպիկ» այսինքնի հայելային կրկնությունն են:

Սակայն դասթանագրության ավանդույթներին հավատարիմ մնալը բնավ չի խանգարում պարսից XX դարավերջի և XXI դարասկզբի վիպասաններին հետևելու համաշխարհային գրական տենդենցներին:

Կարևոր խնդիր է հեղինակների կողմից պատմագիտության նվաճումների օգտագործումը, ինչը, ցավոք, միշտ չէ, որ գտնվում է անհրաժեշտ մակարդակի վրա: Իրանցի ոչ բոլոր պատմավիպասաններին է հաջողվում հենվել պատմագիտության նոր հայտնագործությունների վրա և դրանք ներառել շարադրանքի մեջ՝ պատմավեպը դարձնելով ավելի հավաստի: Այս

<sup>17</sup> Ульмасова З., Истоки формирования таджикского исторического романа, (Журнал - Ученые записки Худжандского государственного университета им. академика Б. Гафурова. Гуманитарные науки) № 3 / 2011 ст. 5, (<http://cyberleninka.ru/article/n/istoki-formirovaniya-tadzhikskogo-istoricheskogo-romana>). (19.03.2016)

<sup>18</sup> Մեծահոգություն, ազնվամտություն, քաջություն:

հանգամանքը թույլ է տալիս դատելու, որ պարսից պատմավեպի որոշ նմուշներ մնացել են նույն դասթանի հարթության վրա:

Որոշ հեղինակներ ջանում են այդ խնդիրը լուծել ուղղակի մեջբերումներ կատարելով պատմական նյութից կամ հղում կատարելով դրանց: Միշտ չէ, որ նման մեթոդը օգնում է լրացնել բացը: Վիպասանը պետք է զինված լինի հետազոտական միջոցներով, այլ ոչ թե պատմավեպը վերածի պատմության չոր վերաշարադրման, ինչը ևս վերն ասված խնդիրը հաղթահարել չկարողանալու ցուցիչ է:

Եզրակացնելով կարելի է ասել, որ համաշխարհային գրական նոր տենդենցներին հետևելու ջանքերով հանդերձ՝ ժամանակակից պատմավեպերի ոգին շարունակում է մոտ մնալ ժողովրդական դասթանների էպիկական ոգուն, որտեղ հիմնականում պատկերվում են ռազմական սխրանքներ, թալանի, առևանգման տեսարաններ, անհատական բարի կամքի դրսևորումներ:

Գարնիկ Գեւորգյան  
(резюме)

Иранская средневековая литература богата вариантами народного романа (дастана). Персидский исторический роман, конца XX и начала XXI вв., развивался на богатых традициях средневековых дастанов, которые окрашены элементами и проблемами новых времён. Исторический роман заимствовал поэтику, айарско-плутовскую тематику народного романа, которая окрашена суфийскими и мистическими темами. И дастаны, и исторические романы созданы вокруг жизнедеятельности исторических лиц. Сохранение традиций средневековых дастанов не мешало иранским беллетристам конца XX и начала XXI вв. следовать мировым литературным традициям.

FROM FOLK NOVEL (DĀSTĀN) TO HISTORICAL NOVEL

Garnik Gevorgyan  
(summary)

The Iranian medieval literature is rich with samples of the folk novel, *dāstān*. Starting from the late 20<sup>th</sup> and early 21<sup>st</sup> centuries the Persian historical novel evolves on the basis of the rich traditions of medieval *dāstāns*, by giving them a new color, corresponding to the new times and the modern historical developments and problems. The historical novel has borrowed the folk novel's poetics, its *ayyārī* and adventure thematics, covered with a Sufi and mystical veil. Both the *dāstāns* and the modern historical novels are composed on the activity of historical celebrities. Adhering to the traditions in composing *dāstāns* has never prevented the Iranian novelists of the late 20<sup>th</sup> and early 21<sup>st</sup> centuries to follow the world literary tendencies.

ԿԱՐԻԱՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բանալի բառեր. Հերոդոտոս, սափրապություն, տեղեկություններ, Կարիա, կարիացիներ, կարիական քաղաքներ, Հալիկաոնասոս, Աքեմենյան Պարսկաստան

Աքեմենյան Պարսկաստանի սատրապությունների մասին Հերոդոտոսի տեղեկություններից պարզվում է, որ Կարիան մտնում էր I սատրապության կազմի մեջ: Հերոդոտոսը հայտնում է, որ «Հնիացիներից, Ասիայի մագնեսյաններից, էոյաններից, կարիացիներից, լուկիացիներից և միլյուացիներից և պամփոլիացիներից, քանի որ նրանց բոլորի համար սահմանվել էր մեկ ընդհանուր հարկ, ստացվում էր չորս հարյուր տաղանդ արծաթ: Այս էլ Դարեհը հաստատեց որպես առաջին ևսահանգ»<sup>1</sup>: Հերոդոտոսը Կարիայի և կարիացիների մասին հաղորդում է նաև այլ տեղեկություններ, որոնք կքննենք հին աղբյուրների համադրության լույսի ներքո:

Դասական աղբյուրների Կարիան մասնագիտական գրականության մեջ լեզվաբանական տեսանկյունից նույնացվել է ինթական աղբյուրների Կարկիա-Կարկիսա երկրի հետ, ինչը սակայն որոշակի դժվարություններ է ներկայացնում աշխարհագրական առումով<sup>2</sup>: Հոմերոսի «Իլիական»-ում կարիացիները

<sup>1</sup> Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, Իրանի բաժնի ավագ գիտաշխատող, Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ:

<sup>2</sup> Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի (այսուհետև՝ Հերոդոտոս), Երևան, 1986, III, 90:

<sup>3</sup> Adiego J. I., *The Carian Language*, Brill, Leiden, Boston, 2007, p. 1; Garstang J., Gurney O. R., *The Geography of the Hittite Empire*, London, 1959, p. 108; Herda A.,



Նառտեսի գլխավորությամբ տրոյացիների կողմից կովում են հեղենների դեմ: Հետաքրքիր է, որ հույն հեղինակը միաժամանակ ուրվագծում է կարիացիների բնակության տարածքը՝ երանց տեղադրելով Մեանդրոս գետի հովտում, Միլետում, Ֆրիգիոսում ու հյուսիսում մինչև Միկալե<sup>3</sup>: «Բարբարոս կարիացիների»<sup>4</sup> բնակության նման սահմանները հավանաբար խոսում են, այսպես կոչված, նախնական Կարիայի մասին, որտեղից կարիացիները, որոնց Ստրաբոնը կա՛մ նույնացնում է լելեզների հետ, կա՛մ համարում տարբեր ցեղեր, հոնիացիների ճնշման տակ հեռացել էին<sup>5</sup> դեպի հարավ-արևելք: Հումերոսը կարիացիներին և լելեզներին հիշատակում է առանձին-առանձին<sup>6</sup>, այսինքն՝ չի նույնացնում երկու ժողովուրդներին:

Հեկատեսու Միլետացին հիշատակում է բազմաթիվ կարիական քաղաքներ, ընդ որում՝ Միլետը տեղադրում է հոնիական

Greek (and our) views on the Karians, *Luwian Identities: Culture, Language and Religion Between Anatolia and the Aegean*, Brill, Leiden, Boston, 2013, p. 433. Կարիացիների լեզուն պատկանել է անատոլիական լեզուների հնդեվրոպական ընտանիքին, ավելի ճիշտ՝ այսպես կոչված լուվիական խմբին (Adiego J. I., *The Carian Language*, pp. 4-5; Yakubovich I., *The Carian Language*, by Ignacio J. Adiego, «*Journal of Near Eastern Studies*», Vol. 71, № 1, 2012, p. 131):

<sup>3</sup> Հումերոս, Բիլական, հին հունարեն բնագրից թարգմանեց Հ. Համբարձումյան, Երևան, 1955, II, 870: Հմմտ. Տրաբոն, *География в 17 книгах, перевод, статья и комментарии Г. А. Стратановского, Ленинград, 1964, с. 592*. Ֆրիգիոսը հավանաբար նույնանուն է Պլինիոս Ավագի Ֆյուրիթեսին (տե՛ս Pliny, *Natural History*, Vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library, XXXI, 115, p. 306) կամ էլ Լաթոնսին, չնայած Ստրաբոնը նույնացնում է Լաթոնսին զուգահեռ ընկած Գրիոս անունով լեռներին (տե՛ս Տրաբոն, с. 595; «*Dictionary of Greek and Roman Geography*», ed. by W. Smith, Vol. II, Boston, 1857, p. 625): Թուկիդիդեսը Մեանդրոսի հովիտը ևս տեղադրում է Կարիայում (տե՛ս Фукидид, *История*, пер. Ф. Мищенко, Москва, 2012, с. 136): Ֆրիգիոսը նույնանուն է ներկայիս Բեշպարմակին (տե՛ս Herda A., *Greek (and our) views on the Karians*, p. 430):

<sup>4</sup> Herda A., *Greek (and our) views on the Karians*, pp. 429, 471.

<sup>5</sup> Տրաբոն, с. 68, 293, 536. Լելեզների անունը, թերևս, կապված է խեթական լուվիսիի «*ошарական*» բառի հետ (տե՛ս Дьяконов И. М., *Предыстория армянского народа*, Ер., 1968, с. 118):

<sup>6</sup> Հումերոս, X, 429-430:

Կարիայում<sup>7</sup>, ինչը նշանակում է, որ հոնիացիների ճնշման տակ կարիացիները շարժվել էին դեպի հարավ: Սկիլաքս Կարիանդացին Կարիայի մեջ է մտցնում ոչ միայն Միլետը և բազում այլ քաղաքներ, այլև Հերակլեան՝ ներկայիս Քալի-Քերենի ավերակները: Ընդ որում, դատելով պատմիչի տեղեկություններից, կարելի է ենթադրել, որ Հոռոդոսը վարչական առումով մտել է Կարիայի մեջ<sup>8</sup>: Լաթոնս լեռը (թուրքերեն Բեթչեկ Փարմակ<sup>9</sup>) և Լաթոնսյան Հերակլեան՝ Միլետից արևմուտք<sup>10</sup> կարիական բարբառի սահմանների մեջ է մտցնում Պլինիոս Ավագը<sup>11</sup>:

Հերոդոտոսի տեղեկություններից պարզվում է, որ կարիացիները մինչև Աքեմենյանների տիրապետությունը մտնում էին Կրետոսի տերության մեջ<sup>12</sup>: Հերոդոտոսը նաև հայտնում է, որ կարիացիները, որոնք կոչվում էին լելեզներ, Փոքր Ասիա են եկել կղզիներից և հնում նրանք հպատակ էին Կրետեի կիսապատմական-կիսաառասպելական թագավոր Մինոսին<sup>13</sup>: Համաձայն պատմիչի հաջորդ տեղեկությունների՝ դորիացիների և հոնիացիների ճնշման հետևանքով կարիացիները տեղահանվում են կղզիներից և գալիս մայրցամաք՝ Փոքր Ասիա: Այդուհանդերձ Հերոդոտոսը նաև հայտնում է, որ կարիացիները իրենց համարում են մայրցամաքի տեղաբնիկներ և իրենց եղբայրակից են համարում մյուսիացիներին և լուդիացիներին՝ մատնացույց անելով Սյուլասայում՝ ներկայիս Միլաս քաղաքում<sup>14</sup> գտնվող

<sup>7</sup> Müller C., *Fragmenta Historicorum Graecorum*, Vol. I, Parisiis, 1841, fr. 225-239, pp. 15-16.

<sup>8</sup> Скилак Кариандский, *Перипл обитаемого моря, "Вестник древней истории"*, 1988, № 2, с. 262.

<sup>9</sup> Cramer J. A., *A Geographical and Historical Description of Asia Minor*, Vol. I, Oxford, 1832, p. 394.

<sup>10</sup> Bryce T., *The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia*, London, New York, 2009, p. 307.

<sup>11</sup> Pliny, *Natural History*, XXXI, 113, p. 304.

<sup>12</sup> Հերոդոտոս, I, 28:

<sup>13</sup> Հմմտ. Տրաբոն, с. 618.

<sup>14</sup> Bryce T., *The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia*, p. 487.

Կարյան Ջևսի հնամենի սրբավայրը<sup>15</sup>: Կարիացիների երկիրը նվաճում է Հարպագոսը<sup>16</sup>: Վերջինս նվաճում է նաև կնիդոսցիների երկիրը՝ Կնիդիան կամ Տրիոպիոնը, ներկայիս Թալփանիչայի գետաբերանի շրջանում, ու Հալիկաոնասոսից ներկայիս Բողրումից<sup>17</sup> հյուսիս-արևելք գտնվող պեղասացիներին<sup>18</sup>: Հույն հեղինակի տեղեկություններից երևում է, որ կնիդոսցիները և պեղասացիները գտնվել են Կարիայում: Պատահական չէ, որ Հերոդոտոսը և Քսենոփոնը Կերամիկոս ծոցը՝ ներկայիս Քերմեն, համարում են Կարիայի մասը<sup>19</sup>: Կարիացիների համար պարսիկների գերիշխանությունը բավականին մեղմ է եղել, քանի որ վերջիններս հարգում էին տեղական ավանդույթները և ինքնավարությունը<sup>20</sup>:

Քսենոփոնը գրում է, որ կարիացիներին նվաճել է Կյուրոսի մեկ այլ զորավարը՝ Ադուսիոսը, որին ավելի ուշ Կյուրոսը բնակիչների խնդրանքով նշանակում է Կարիայի սատրապ<sup>21</sup>:

Հերոդոտոսի մի տեղեկությունից էլ պարզվում է, որ կարիացիներն ապրել են Եգիպտոսում<sup>22</sup>, ինչը վկայում է Եգիպտոսում կարիացիներից կազմված ռազմական գաղութի մասին: Կարիացիներն ավելի ուշ հաստատվում են Մեմփիսում, որտեղ

<sup>15</sup> Հերոդոտոս, I, 171: Պլինիոս Ավագը Մյուլասան նշում է որպես ազատ քաղաք (տե՛ս Pliny, Natural History, XXIX, 108, p. 300):

<sup>16</sup> Հերոդոտոս, I, 174:

<sup>17</sup> Bryce T., The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia, p. 278.

<sup>18</sup> Հերոդոտոս, I, 175; VII, 104; Страбон, с. 573. Կնիդիան, Տրիոպիան և կարիական բազմաթիվ քաղաքներ հիշատակվում են Պլինիոս Ավագի կողմից (տե՛ս Pliny, Natural History, XXIX, 104, p. 298):

<sup>19</sup> Հերոդոտոս, I, 174; Ксенофонт, Греческая история, пер. С. Лурье, Москва, 2010, с. 276.

<sup>20</sup> Ефремов Н. В., Династия Гекатомнидов в современных им греческих надписях, «Вопросы эпиграфики», вып. IV, Москва, 2010, с. 82-165.

<sup>21</sup> Քսենոփոն, Կյուրոպեդիա, թարգմ. Ս. Կրկյաշարյանի (այսուհետև՝ Կյուրոպեդիա), Երևան, 2000, էջ 5, 284, 355:

<sup>22</sup> Հերոդոտոս, II, 61:

հայտնի էր նրանց թաղամասը<sup>23</sup>: Եգիպտոսում հելլենները և կարիացիները՝ որպես վարձկաններ, կովում են պարսիկների դեմ<sup>24</sup>: Արիանոսը Գավգամելայի ճակատամարտին պարսկական բանակի կազմում բաբելոնացիների և սիտակենների հետ միասին հիշատակում է «գաղթական» կամ «արտաքսված» կոչված կարիացիներին<sup>25</sup>, որոնց անվան տակ հեղինակը նկատի ունի Հարավային Միջագետքում Աքեմենյանների կողմից վաղուց վերաբնակեցված կարիացիներին<sup>26</sup>:

Քսերքսեսի հունական արշավանքին կարիացիները տրամադրել էին յոթանասուն նավ, և հոնիական ու կարիական նավատորմը զլխավորում էր Արիաբիզեսը՝ Դարեհի որդին Գոբրյուսաի դստրից<sup>27</sup>:

Հույն-պարսկական պատերազմների ժամանակ կարիացիները ապստամբում են պարսիկների դեմ և համառ դիմադրություն ցույց տալիս: Ապստամբ կարիացիները հավաքվում են Սալիտակ սյուներ կոչված վայրում՝ Մարսիաս գետի մոտ, որը, հոսելով Իդրիաս երկրի միջով, թափվում էր Մեանդրոս գետը: Պարսիկներն անցնում են Մեանդրոս գետը և Մարսիաս գետի մոտ ջախջախում կարիացիներին, որոնք ապաստան էին գտնում Միլետից 48 կմ հարավ-արևելք տեղադրվող<sup>28</sup> Լաբրաունդայում՝ Ջևս Ստրատիոսի (բառացի՝ ռազմատենչ) սրբավայրում<sup>29</sup>: Տեղե-

<sup>23</sup> Adiego J. I., The Carian Language, p. 2.

<sup>24</sup> Հերոդոտոս, III, 11:

<sup>25</sup> Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը, «Ալեքսանդր Սակեդոնացի» (այսուհետև՝ Արիանոս), Երևան, 1987, էջ 97, 101, 103:

<sup>26</sup> Herzfeld E., The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Wiesbaden, 1968, p. 9; Дандамаев М. А., Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э.: Социальные институты и идеология, Санкт-Петербург, 2009, с. 362.

<sup>27</sup> Հերոդոտոս, VII, 93, 97:

<sup>28</sup> Bryce T., The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia, p. 401.

<sup>29</sup> Հերոդոտոս, V, 118-119: Լաբրաունդան Հեկատոմնոսյանների կրոնական կենտրոնն էր (տե՛ս Williamson Ch., Labraunda as Memory Theatre for Hellenistic Mylasa, “Herom”, Journal on Hellenistic and Roman Material Culture, 2013, Vol. 2, p. 144):

կություննից պարզվում է, որ Մեանդրոս գետը Կարիայի վարչական սահմանն էր, ինչի մասին ավելի ուշ ժամանակների համար հաղորդում է նաև Ստրաբոնը<sup>30</sup>:

Հերոդոտոսը հիշատակում է նաև Կարիայի Ալաբանդա, Միոս և Պրիենե քաղաքները<sup>31</sup>: Վերջին երկու քաղաքները գտնվել են համապատասխանաբար Մեանդրոս գետի ստորին հոսանքի ձախ և աջ ափերին, հետևաբար Հերոդոտոսը Կարիան աշխարհագրական առումով տարածում է նաև գետից հյուսիս, ինչն արդեն չի համապատասխանում Կարիայի վարչական սահմաններին: Ալաբանդա քաղաքը՝ ինթական աղբյուրների Վալիվանդան<sup>32</sup>, տեղադրվում է ժամանակակից Զինեից 11 կմ արևմուտք<sup>33</sup> և, հավանաբար, նույնանում է Հերոդոտոսի հիշատակած փոյուզիական Ալաբանդա քաղաքին<sup>34</sup>, ինչը խոսում է այն մասին, որ Ալաբանդան անցել էր կամ Փոյուզիական սատրապությանը, կամ էլ աշխարհագրական առումով համարվում էր Փոյուզիայի մաս: Հերոդոտոսը Կարիայի հարավարևելյան անկյունում հիշատակում է Կավնոս քաղաքը ներկայիս Դայան գյուղի մոտ, Կալբիսի՝ Դայան գետի ստորին հոսանքի շրջանում<sup>35</sup>, որը գրավում է Հարպագոսը<sup>36</sup>: Ստրաբոնը

<sup>30</sup> Страбон, с. 541.

<sup>31</sup> Հերոդոտոս, VII, 195: Պրինիոս Ավագն Ալաբանդան հիշատակում է որպես ազատ քաղաք (տե՛ս Pliny, Natural History, XXIX, 109, p. 302):

<sup>32</sup> Garstang J., Gurney O. R., The Geography of the Hittite Empire, p. 79.

<sup>33</sup> Bryce T., The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia, p. 20.

<sup>34</sup> Հերոդոտոս, VIII, 136:

<sup>35</sup> Bryce T., The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia, p. 155; Konuk K., Erbbina in Caria?, Ancient History, Numismatics and Epigraphy in the Mediterranean World. Studies in Memory of Clemens E. Bosch and Sabahat Atlan and in honour of Nezahat Baydur, Istanbul, 2009, p. 194; Страбон, с. 609. Կալբիսի նույնացումը Բնոս գետի՝ ներկայիս Դալամանի հետ սխալ է (տե՛ս «Dictionary of Greek and Roman Geography», ed. by W. Smith, Vol. I, Boston, 1854, p. 576):

<sup>36</sup> Հերոդոտոս, I, 176: Կավնոս քաղաքը Կարիայում հիշատակում են Դիոդորոս Միկլիդացին (տե՛ս Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. II, Lipsiae, 1826, XIV, 79, 10, p. 375), Ստրաբոնը (տե՛ս Страбон, с. 609):

Կարիայի սահմանը Փոյուզիայի ուղղությամբ համարում է Կարուրը<sup>37</sup> ներկայիս Դենիզլիից հյուսիս-արևմուտք<sup>38</sup>:

Արիանոսը նույնպես աշխարհագրական առումով ընդարձակ տարածք է հասկացնում Կարիային՝ Մեանդրոս գետի հարթավայրը մինչև Միլետ համարելով Կարիայի տարածք, բայց միևնույն ժամանակ գետի աջափնյակին գտնվող Տրալես քաղաքը՝ ժամանակակից Այդինը<sup>39</sup>, չի տեղադրում Կարիայում<sup>40</sup>: Քսենոփոնը գրում է, որ Կարիան Տիսսափեոնեսի՝ մերձծովյան շրջանի կառավարչի<sup>41</sup> բուն տիրույթն էր<sup>42</sup>, այսինքն՝ սատրապությունը: Հյուդաոնեսի սերունդ<sup>43</sup> Տիսսափեոնեսի մահից հետո Կարիան կառավարում է Արիեսոսը<sup>44</sup>: Արամեերեն, լիկիերեն և հունարեն լեզուներով հայտնաբերված մի արձանագրության մեջ, որը թվագրվում է Արտաքսերքսես Գ-ի թագավորության առաջին տարով (մ. թ. ա. 359/358 թվական) կամ ավելի ստույգ Արշեսի թագավորության սկզբներին՝ 337 թվականին, հիշատակվում է Կարիայի և Լիկիայի սատրապ Պիկտոդարոսը, որին էլ հենց պատկանել է արձանագրությունը<sup>45</sup>, ինչը վկայում է

<sup>37</sup> Страбон, с. 620.

<sup>38</sup> «Dictionary of Greek and Roman Geography», ed. by W. Smith, Vol. I, p. 554.

<sup>39</sup> Bryce T., The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia, p. 713.

<sup>40</sup> Արիանոս, էջ 35, 178:

<sup>41</sup> Фукидид, История, с. 402.

<sup>42</sup> Ксенофонт, Греческая история, с. 313, 323. Տե՛ս նաև Xenophon, Scripta Minora, with an English translation by E. C. Marchant, Cambridge, Massachusetts, London, 1946, Loeb Classical Library, Agesilaus, I, 15, p. 66; Рунг Э. В., Греция и Ахеменидская держава: История дипломатических отношений в VI-IV вв. до н. э., Санкт-Петербург, 2008, с. 267, 291.

<sup>43</sup> Рунг Э. В., Тиссаферн и Гидарниды в контексте политической истории Ахеменидской державы в V в. до н. э., «Вестник древней истории», 2012, № 1, с. 16-39.

<sup>44</sup> Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, Москва, 1985, с. 235.

<sup>45</sup> Дандамаев М. А., Луконин В. Г., Культура и экономика древнего Ирана, Москва, 1980, с. 288; Weiskopf M., The so-called «great Satrap's revolt»: 366-360

այն մասին, որ Պիկտոդարոսը ստացել էր նաև Լիկիայի կառավարումը:

Կարիայի մայրաքաղաք Հալիկաոնաստը համառ դիմադրություն է ցույց տալիս Ալեքսանդր Մակեդոնացուն, որին միայն երկարատև պաշարումից հետո է հաջողվում գրավել ու կործանել քաղաքը<sup>46</sup>: Կարիան գրավելուց հետո Ալեքսանդրը Կարիայի տիրուհի է նշանակում Ադային՝ Հեկատոմնոսի դստերը, որին հաջողվել էր պահել միայն Ալինդոսը՝ կարիական մայր ամրոցը, իսկ մինչ այդ Կարիան կառավարում էր Օրոնտոբատը<sup>47</sup>: Հին աղբյուրների տեղեկություններից երևում է, որ Կարիայում պահպանվել էր սեփական արքայատոհմը, որի ներկայացուցիչները հիմնականում նաև պարսից արքունիքի կողմից ընդունվում էին որպես կառավարիչներ<sup>48</sup>, հատելով սեփական դրամները<sup>49</sup>: Օրինակ, Դիոդորոս Միկիլիացին հիշատակում է Կարիայի դինաստ Իդրիոսին, որը, սկսած իր նախնիներից, պարսից թագավորի դաշնակիցն ու բարեկամն էր<sup>50</sup>: Մ.թ.ա. մոտ 392 թվականին Կարիան կառավարում է տեղական դինաստ Զե-

կատոմնոսը (մ. թ. ա. 395-377 թվականներ), որը փորձում է ստեղծել իր անկախ պետությունը<sup>51</sup>:

Հեկատոմնոսի որդու՝ Մավսոլոսի կառավարման տարիներին (մ.թ.ա. 377-353 թվականներ) հունական մշակույթը Կարիայում մեծ տարածում ու ազդեցություն է ձեռքբերում, իսկ մայրաքաղաքն էլ Մյուլասայից տեղափոխվում է Հալիկաոնաստ՝ չնայած Մյուլասան մնում է որպես սատրապական կենտրոն<sup>52</sup>: Սատրապների մեծ ապստամբության ժամանակ Մավսոլոսը, բացահայտ չհարելով ասպտամբներին, կարողանում է ճկուն քաղաքականության շնորհիվ ընդլայնել իր երկրի սահմանները և նվաճել Հռոդոսը: Դիոդորոս Միկիլիացին Մավսոլոսին անվանում է ապստամբ<sup>53</sup>, ինչը խոսում է այն մասին, որ Հալիկաոնաստի դինաստը պարսից արքայի և սատրապների հակամարտության ժամանակ, կախված ուժերի հարաբերակցությունից, փոխում էր իր դիրքորոշումն այս կամ այն կողմի նկատմամբ<sup>54</sup>: Վարելով նաև ակտիվ ռազմական գործողություններ Լյուդիայում, Լիկիայում, Հոնիայում<sup>55</sup>: Ապստամբության ժամանակ, ունենալով բավականին ուժեղ նավատորմ<sup>56</sup>, Մավսոլոսի շահագրգռությունների կենտրոնում էին Լիկիան և Էգեյան ծովի կղզիները<sup>57</sup>: Օգտվելով քաղաքացիական պատերազմից՝ Մավսոլոսին հաջողվում է Հռոդոսից, Քիոսից, Կոսից, Էրիտրեայից և Բյուզանդիոնից ստեղծել միություն, որն էլ գլխավորում է՝ Նույ-

B.C., "Historia", Heft 63, Stuttgart, 1989, p. 65. Արձանագրության տեքստը տե՛ս u Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, Copenhagen, 1986, pp. 92-93; Briant P., From Cyrus to Alexander. A History of the Persian Empire, translated by P. T. Daniels, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2002, pp. 706, 708.

<sup>46</sup> Արիանոս, էջ 39-44: Հալիկաոնաստից արևմուտք հիշատակվում է Մինդոս քաղաքը ներկայիս Բողդոսի թերակղզու արևմտյան ծովափին, իսկ հյուսիս՝ Մյուլասան (անդ, էջ 40-41):

<sup>47</sup> Անդ, էջ 44: Ալինդոսը նույնացվում է խեթական աղբյուրների Բյալանդային ներկայիս Դեմիրչի-դերեսիի տեղում (տե՛ս u Garstang J., Gurney O. R., The Geography of the Hittite Empire, p. 78):

<sup>48</sup> Հմմտ. Դիոդորոս Միկիլիացի, Պատմական գրադարան, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1985, էջ 71, 75; Дандамаев М. А., Луконин В. Г., Եզվ. աշխ., էջ 117; Э. В. Рунг, Ранние греческие тираны и персы, «История: Мир прошлого в современном освещении», Санкт-Петербург, 2008, с. 89.

<sup>49</sup> Дандамаев М. А., Луконин В. Г., Եզվ. աշխ., էջ 205; Olmstead A. T., History of the Persian Empire, Chicago, 1960, p. 390.

<sup>50</sup> Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. III, Lipsiae, 1826, XVI, 42, 20, p. 46; XVI, 45, 30, p. 50.

<sup>51</sup> Дандамаев М. А., Եզվ. աշխ., էջ 238, 241, 245; Konuk K., The Coinage of Hyssaldomos, Dynast of Mylasa, Zurück zum Gegenstand. Festschrift für Andreas E. Furtwängler, Band II, Beier & Beran Langenweißbach, 2009, p. 357.

<sup>52</sup> «The Cambridge Ancient History», Vol. VI, Cambridge University Press, 1994, p. 217.

<sup>53</sup> Diodori Bibliotheca Historica, Vol. II, XV, 90, 20, p. 499; Briant P., From Cyrus to Alexander, pp. 667-668.

<sup>54</sup> Քսենոփոնը հաղորդում է, որ Մավսոլոսը ոսկով օգնում էր Ագեսիլայոսին (տե՛ս u Xenophon, Scripta Minora, Agesilaus, II, 27, p. 96):

<sup>55</sup> Olmstead A. T., History of the Persian Empire, pp. 425-426; Олмстед А., История Персидской империи, Москва, 2012, с. 458.

<sup>56</sup> Xenophon, Scripta Minora, Agesilaus, II, 26, p. 96.

<sup>57</sup> Weiskopf M., The so-called "great Satrap's revolt": 366-360 B.C., pp. 16, 38, 68; Рунг Э. В., Греция и Ахеменидская держава, с. 386-387.

նիսկ Կրետեն շեկատումնոսյանների դիվանագիտության ծիրում էր, ինչը թույլ է տալիս Կարիան համարել փոքր կայսրություն<sup>58</sup>: Քիոսում հաստատված դրամների վրա Մավսոլոսը պատկերված է Հերակլեսի կերպարանքով, ինչից էլ սկսվում է նրա աստվածացումը<sup>59</sup>: Մավսոլոսը ուժեղ հելլենացված արևելյան կառավարչի լավագույն օրինակ է, որը ոչ միայն հունարենը դարձրեց պաշտոնական արձանագրությունների լեզուն, այլև զբաղվեց քաղաքաշինությամբ, ինչի համար պահանջվող հսկայական գումարները ձեռք բերելու համար խաբեությամբ թալանում էր իր ենթակայության տակ գտնվող ժողովուրդներին<sup>60</sup>:

Մավսոլոսին հաջորդում է կինը և միաժամանակ քույրը՝ Արտեմիսիան (մ. թ. ա. 353-350 թվականներ), այնուհետև շեկատումնոսի երկրորդ որդին՝ Գիդրեոսը, և դուստրը՝ Ադան, իսկ մ. թ. ա. 340-ից 335 թվականներին շեկատումնոսի կրտսեր որդին՝ Պիկտոդարոսը<sup>61</sup>: Ալեքսանդրի մահից հետո Կարիան կառավարում է Կասանդրոսը<sup>62</sup> կամ Ասանդրոսը<sup>63</sup>:

Մ.թ.ա. V դարի սկզբին շատ կարիացիներ արդեն երկլեզվախոս էին և գիտեին հունարեն: Կարիայի մայրաքաղաք Հալիկաոնաստը կիսով հունիական, կիսով կարիական քաղաք էր: Հալիկաոնաստում տարածված էին խառն ամուսնությունները, երբ նույն ընտանիքում հանդիպում են կարիական և հունական անուններ: Հույները հիմնականում բնակվում էին Կարիայի ծովափնյա շրջաններում՝ հետագայում դառնալով երկլեզվա-

խոս<sup>64</sup>: Դիոդորոս Միլիիացու վկայությամբ Փոքր Ասիայի քաղաքների բնակչությունը երկլեզվախոս էր և խոսում էր ինչպես հունարեն, այնպես էլ տեղական լեզուներից որևէ մեկով<sup>65</sup>:

Ըստ Պլուտարքոսի և Ստրաբոնի՝ կարիացիների անունը նշանակում է աքաղաղ և կապված է նրանց սաղավարտներին ամրացված փետրափնջերի հետ, որոնք կոչվել են *karika*<sup>66</sup>, ինչը ժողովրդական ստուգաբանություն է: Կարիան հին պարսկական սեպագիր արձանագրություններում հիշատակվում է Կարկա, Հին Կտակարանում՝ Կար կամ Քար, աքքաղերենում Կարսա անվանաձևերով<sup>67</sup>: Հին պարսկերեն *Karkā*-ն բաբելոներեն թարգմանվում է *Karsāja*, և *Bannēšāja*, որոնցից առաջինը փոխառություն է եգիպտերենից և նշանակել է Կամբյուսեսի նվաճումից հետո Եգիպտոսից տեղափոխված, «եգիպտականացման» ենթարկված կարիացիներին, իսկ երկրորդը՝ փոքրասիական կարիացիներին<sup>68</sup>: Գոյություն է ունեցել նաև կարիացիների Բանեշու անունով գյուղը՝ որպես նավակայան Շաթ ալ-Արաբ գետի վրա՝ ներկայիս Մուխամմարայի մոտ<sup>69</sup>, այսինքն՝ խոսքը վերաբերում է «արտաքսված կամ գաղթական» կարիացիներին: Բեհիսթունի արձանագրությունում Կարիան չի հիշատակվում,

<sup>58</sup> Дандамаев М. А., Луконин В. Г., Եզվ. աշխ., էջ 286-287:

<sup>59</sup> Diodori Bibliotheca Historica, Vol. II, XI, 60, 3-5, p. 61.

<sup>60</sup> Plutarch's Lives, with an English translation by B. Perrin, vol. XI, Cambridge, Massachusetts, London, 1954, Loeb Classical Library, Artaxerxes, X, I, p. 148; Страбон, с. 618; Strabonis Geographica, ed. C. Müller, Parisiis, 1853, XIV, II, 27, p. 564; Herda A., Greek (and our) views on the Karians, p. 446.

<sup>61</sup> Herzfeld E., The Persian Empire, pp. 43-44; "A Commentary on Herodotus Books I-IV", ed. by O. Murray, A. Moreno, Oxford University Press. Inc., New York, 2007, p. 192; Simon Z., Against the Identification of Karkiša with Carians, in Nostoi: indigenous culture, migration + integration in the Aegean Islands + Western Anatolia during the late bronze + early iron ages, ed. by N. Chr. Stampolidis, C. Maner, K. Kopanias, Koç University Press, 2015, pp. 794-795. Վերջինս գտնում է, որ *Karkiša/Karkiya*-ն լեզվական, գուցե նաև աշխարհագրական առումով կապված չէ Կարիայի և կարիացիների հետ (անդ. էջ 802-803), ինչը հավանական չէ:

<sup>62</sup> Waerzeggers C., The Carians of Borsippa, Iraq, 68, 2006, pp. 4, 7-8.

<sup>63</sup> Herzfeld E., նշվ. աշխ., էջ 43, 277:

<sup>58</sup> «The Cambridge Ancient History», Vol. VI, pp. 226-227.

<sup>59</sup> Олмстед А., История Персидской империи, с. 458-459.

<sup>60</sup> Անդ. էջ 459-460; Tuplin Ch., The Administration of the Achaemenid Empire, in Coinage and Administration in the Athenian and Persian Empires: The Ninth Oxford Symposium on Coinage and Monetary History, Oxford, 1987, p. 146.

<sup>61</sup> Olmstead A. T., History of the Persian Empire, pp. 433-436; Дандамаев М. А., Եզվ. աշխ., էջ 246-248.

<sup>62</sup> Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, «Ալեքսանդր Մակեդոնացի», Երևան, 1987, էջ 596:

<sup>63</sup> Դիոդորոս Միլիիացի, էջ 110, 113: Si u tuus Diodori Bibliotheca Historica, Vol. III, XVIII, 3, 10, p. 228.

և միայն Դարեհ Ա-ի Նաբշե Ռոստամի արձանագրության մեջ կարիացիներն արդեն նշված են<sup>70</sup>: Հնարավոր է ենթադրել, որ Բեհիսթունի արձանագրությունում կարիացիները լյուկիացիների, պամփյուլիացիների, կիլիկիացիների, կիպրոսցիների հետ ներառված են «այն երկրները, որ ծովի մոտ են» աշխարհագրական սահմանման մեջ<sup>71</sup>: Հին պարսկական արձանագրություններից մեկում էլ հաղորդվում է, որ կարիացիները հոնիացիների հետ լիբանանյան մայրին Բաբելոնից տեղափոխում են Սուգա<sup>72</sup>: Դիոդորոս Միկիլիացին էլ Սուգայի մոտ հիշատակում է կարիական գյուղերի մասին<sup>73</sup>, այսինքն՝ կարելի է նկատել, որ գործ ունենք կարիական վերաբնակիչների հետ:

Այսպիսով, ամփոփելով կատարված քննությունը, կարող ենք եզրակացնել, որ կարիացիների հետ Աքեմենյանները հաստատել էին վարչական կառավարման այնպիսի համակարգ, որը պայմանավորված էր ոչ միայն պարսիկների քաղաքականությամբ, այլ նաև Կարիայի ներքին առանձնահատկությամբ: Կարիան I սատրապության կազմում ուներ ռազմավարական կարևոր նշանակություն և բավականին ընդարձակ տարածք, որը կառավարվում էր պարսիկ սատրապի կամ էլ տեղական կառավարիչների՝ հատկապես Հալիկաոնասոսի դինաստների կողմից:

<sup>70</sup> Kent R., Old Persian. Grammar. Texts. Lexicon. 2nd ed., New Haven, 1953, pp. 137, 141, 151, 156.

<sup>71</sup> Անդ, էջ 117: Հմմտ. Рунг Э. В., Тиссаферн и Гидарниды..., с. 22-23.

<sup>72</sup> Kent R., Old Persian. Grammar. Texts. Lexicon. 2nd ed., New Haven, 1953, p. 143.

<sup>73</sup> Diodori Bibliotheca Historica, vol. III, XVII, 110, 20-30, p. 212.

## КАРИЯ В АДМИНИСТРАТИВНОЙ СИСТЕМЕ АХЕМЕНИДСКОЙ ПЕРСИИ

Оганнес Хорикян  
(резюме)

Исследование древних источников показывает, что в VI-IV вв. до н. э. Кария имела обширную территорию, где было множество городов. Входящая в состав I сатрапии Ахеменидской Персии Кария имела важное стратегическое значение, так как власть персов над народами и странами входящими в I сатрапию осуществлялась сатрапом Кари, который иногда был персом по происхождению. С городами Кари персы имели «личные унии», но административным центром страны был Галикарнас, чьи династии в основном в IV в. до н. э. управляли Карией, иногда расширяя её границы за счёт соседних стран.

## CARIA IN THE ADMINISTRATIVE SYSTEM OF ACHAEMENID PERSIA

Hovhannes Khorikyan  
(summary)

The examination of ancient sources shows that Caria had a vast territory and there were many towns there in the VI-IV centuries B. C.. Caria, being in the territory of the Achaemenid Persia's I Satrapy had a significant strategic importance, as the Persian power was being realized towards the peoples and countries entering into the satrapy by the Caria's satrap who was sometimes the Persian by the origin. The Persians had "personal union" with the towns of Caria, but the administrative centre of the country was Halicarnassus, and its dynasts governed Caria especially in the IV century B. C. sometimes enlarging its territories on the account of the neighbouring countries.

**ԻՐԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ  
ՄՊԱՌՆԱՅՈՂ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐՆ ԻՍԼԱՄԱԿԱՆ  
ՇԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՇԵՏՈ**

**Բանալի բառեր՝ Իրան, անջարտողական, թյուրքախոս, էթնիկական, ազարի, Ադրբեջան, Քրդստան, Բելուջիստան, Խուզիստան**

Աշխարհագրական բարենպաստ դիրքով և էթնիկական կազմով պայմանավորված տարածքային ամբողջականության հարցն ինչպես շահի օրոք, այնպես էլ իսլամական հեղափոխությունից հետո եղել է Իրանի ներքին և արտաքին քաղաքականության առանցքային հարցերից մեկը:

Անջատողականությունը սպառնում է Իրանի 31 նահանգներից առնվազն 5-ին, հյուսիսում՝ Արևելյան և Արևմտյան Ատրպատական նահանգներին, հյուսիս-արևմուտքում՝ Քրդստան, հարավ-արևմուտքում՝ Խուզիստան, հարավ-արևելքում՝ Միստան և Բելուջիստան նահանգներին, իսկ հարավում մասնատման վտանգ է սպառնում Պարսից ծոցում գտնվող Աբու Մուսա, Մեծ Թուրք և Փոքր Թուրք կղզիներին:

Տարածքային ամբողջականության սպառնալիքը ոչ այնքան պայմանավորված էնշված նահանգներում բնակվող էթնիկական խմբերի անջատողական պահանջներով, որքան որ այդ հարցը փորձում են շահարկել Իրանի անկայունությամբ շահագրգռված արտաքին դերակատարները:

Իրանում բնակվող թյուրքախոս սազարիները, քրդերը, արաբներն ու բելուջները հանդիսանում են այն թիրախները, որոնց

\* Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դասախոս: Էլ. փոստ՝ [armen.israyelyan@ysu.am](mailto:armen.israyelyan@ysu.am)

միջոցով իսլամական հեղափոխությունից հետո Միացյալ Նահանգները, Սաուդյան Արաբիան, Թուրքիան, Ադրբեջանն ու Արաբական Միացյալ Էմիրությունները փորձում են տարածքային ամբողջականության և երկրի ապակայունացման սպառնալիքով նվազեցնել տարածաշրջանում Իրանի ազդեցությունը:

Նշված երկրների մի մասն Իրանի տարածքի որոշակի հատվածների նկատմամբ իր տարածքային նկրտումների վերաբերյալ բարձրաձայնում է պաշտոնապես, մյուս մասը միջնորդավորված այլ օղակների միջոցով, իսկ մի մասն էլ գործում է քողարկված:

Արևելյան և Արևմտյան Ատրպատական նահանգներում անջատողական գործողությունները համակարգվում են Թուրքիայի և Ադրբեջանի ուղղակի և անուղղակի աջակցությամբ<sup>1</sup>, որոնց գործողությունների ակտիվությունն ուղիղ համեմատական է Իրանի հետ այդ երկրների ունեցած հարաբերություններին, և որքան լարվում են նրանց հարաբերությունները, Իրանում գործող անջատողական խմբավորումներին Բաքվի և Անկարայի ցուցաբերած աջակցությունն ավելի է մեծանում, իսկ եթե ժամանակավորապես նկատվում է հարաբերությունների կարգավորում, ապա հակաիրանական գործողություններն իրականացվում են քողարկված:

Ատրպատականում գործող անջատողական կառույցներն իրենց քարոզչությունն իրականացնում են արտերկրից հեռարձակվող հեռուստաալիքների, ռադիոյի, տարատեսակ կայքերի ու սոցիալական ցանցերի միջոցով՝ որպես քարոզչության հարթակ օգտագործելով նաև մարզական և մշակութային միջոցառումները:

Նշված կառույցներից հատկապես աչքի է ընկնում «Հարավային Ադրբեջանի ազգային ազատագրության ճակատ» (GAMAC) անվամբ կազմակերպությունը: Բաքվում գրանցված այդ կազ-

<sup>1</sup> Stu` Ahmadi Hossein, Jomhuriy Azerbaijan, 23 sal takapu baraye doulat o melat sazi, Moaseseye motaleate tarixe Iran, Tehran, 1394 (2015), p. 343.

մակերպության նպատակն Իրանի հյուսիսային թյուրքախոս իրանցիներով բնակեցված նահանգներն Իրանից անկախ հռչակելն ու Ադրբեջանին միացնելն է:

Այդ համատեքստում 2010-2013թթ., երբ Իրան-Ադրբեջան հարաբերությունները գտնվում էին լարվածության զագաթնակետին, Ադրբեջանի խորհրդարանում մի խումբ պատգամավորների կողմից շրջանառության մեջ դրվեց մի առաջարկություն, որը նախատեսում էր երկիրը վերանվանել «Հյուսիսային Ադրբեջան», այն պատճառաբանությամբ, թե Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո Ադրբեջանը կիսվել է երկու մասի, իսկ այսպես կոչված «Հարավային Ադրբեջանը» մնացել է Արաքսի մյուս կողմում՝ Իրանի տարածքում:<sup>2</sup>

Իսլամական հեղափոխությունից հետո անջատողականության սպառնալիքին դիմագրավելու նպատակով իրականացվող կանխարգելիչ միջոցառումների շրջանակներում Ադրբեջանի հետ ընդհանուր ցամաքային սահմանը փոքրացնելու նպատակով 1994թ. Իրանի Արևելյան Ատրպատական նահանգի տարածքում Արդաբիլ անվամբ նոր նահանգ կազմավորվեց:<sup>3</sup>

Շուրջ երկու տասնամյակ անց Իրանի հյուսիսային նահանգների նկատմամբ Ադրբեջանի հավակնությունները սահմանափակելու նպատակով 2015թ. Իրանի Մեջլիսում քննարկման ներկայացվեց մի նախաձեռնություն, համաձայն որի՝ Արևելյան Ատրպատական նահանգը նախատեսվում էր կրկին ենթարկել վարչական բաժանման և կազմավորել նոր նահանգ՝ Արասբարան անվամբ:

Մինչև միջուկային համաձայնությունը, երբ Իրանի միջուկային խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու հարցը դեռևս գտնվում էր Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական

ություն օրակարգում, որպես Թեհրանի վրա ճնշում գործադրելու միջոց, ԱՄՆ Կոնգրեսում քննարկվում էր Ատրպատականի անկախացման հարցը, և որպես դրան աջակցող հանգամանք էր նշվում Ադրբեջանի և Իսրայելի ռազմական համագործակցությունն ու Բաքվի կողմից Իրանին ներկայացվող տարածքային պահանջները:<sup>4</sup>

Ի դեպ, այդ շրջանում բացի Ատրպատականից՝ Միացյալ Նահանգներն ակտիվ աշխատում էին նաև Սիստան և Բելուջիստան նահանգի ուղղությամբ՝ տարբեր հարթակներում բարձրացնելով տեղի բնակչության իրավունքների պաշտպանության հարցը:<sup>5</sup>

Հավելենք, որ Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո բելուջները պահանջեցին ինքնավարություն՝ Իրանի Իսլամական Հանրապետության կազմում: Սակայն Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) արագ և կոշտ հակազդեցության հետևանքով բելուջների անջատողական շարժումն անմիջապես մարեց:<sup>6</sup>

Ինչպես Թուրքիայի, Իրաքի, Միհիայի քրդաբնակ տարածքները, այնպես էլ Իրանի համանուն Քուրդիստան նահանգն ընդգրկված է Մեծ Քուրդիստանի ձևավորման նախագծում, և տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներով պայմանավորված Իրանի քրդերի հարցը մշտապես շահարկվել է արտաքին ուժերի կողմից, որոնք փորձել են Իրանում միջերկրկան բախումներ հրահրել:

Եթե թյուրքախոսազարիների վերաբերյալ շահարկումներն Իրանի իշխանություններն ինչ-որ չափով կարողանում են կա-

<sup>2</sup> Sku՝ Азербайджан или Северный Азербайджан? <http://echo.az/article.php?aid=19047>

<sup>3</sup> Gozāreš-e markaz-e pežuhešhāye majles [http://rc.majlis.ir/fa/news/print\\_version/764661](http://rc.majlis.ir/fa/news/print_version/764661)

<sup>4</sup>Rep. Rohrabacher Urges Secretary Clinton to Back Freedom From Iran for Azeris [http://www.mashreghnews.ir/files/fa/news/1391/5/16/195512\\_167.pdf](http://www.mashreghnews.ir/files/fa/news/1391/5/16/195512_167.pdf)

<sup>5</sup>US congressman tables bill for Baloch right to independence <http://tribune.com.pk/story/338079/us-congressman-tables-resolution-calling-for-independence-of-baloch/>

<sup>6</sup>Ушаков В. А., Иран и мусульманский мир 1979-1998гг., Институт изучения Ираиля и Ближнего Востока, Москва 1999г., стр 58.



նավարել և Ատրպատական նահանգը զերծ պահել զինված բախումներից, ապա Քրդստանում խնդիրն ավելի բարդ է, քանի որ ի տարբերություն Ատրպատականի անջատողական հակումներ ունեցող քրդական խմբավորումները որպես նպատակին հասնելու միջոց հաճախ ընտրում են զինված պայքարը, որն էլ իր հերթին հանդիպում է ԻԻՀ անվտանգության ուժերի կոշտ դիմադրությանը:<sup>7</sup>

Իրանի Քրդստան նահանգում ընդհատակյա գործունեություն ծավալող կառույցներից մեկը՝ Քրդական աշխատավորական կուսակցության (PKK) իրանական ճյուղը հանդիսացող Քրդստանի ազատ կյանք կուսակցությունն է, որն առավել շատ հայտնի է (PJAK) անվամբ, իսկ մյուսը՝ Իրանի կոմունիստական կուսակցության Քրդստանի կազմակերպությունն է (KOMALA), որի գործողությունները համակարգվում են Իրաքի Քրդստանում տեղակայված կենտրոնական կառույցի կողմից: Այս երկու կուսակցությունների նպատակն անկախ Քրդստանի ձևավորումն է՝ Ֆեդերատիվ Իրանի կազմում:

Տարածաշրջանում ժամանակ առ ժամանակ ինքնավարության ձգտող քրդական շարժումների ակտիվացումն իր ազդեցությունն է ունենում նաև Իրանում քննարկման առարկա դառնալով նաև ԻԻՀ քաղաքական շրջանակներում. մասնավորապես 2014թ. ԻԻՀ Մեջլիսի պատգամավոր Օսման Ահմադին խորհրդարանի քննարկմանը ներկայացրեց Արևմտյան Ատրպատականի մի հատվածում Հյուսիսային Քրդստան նահանգ կազմավորելու մասին նախաձեռնությունը:<sup>8</sup>

Ինչ վերաբերում է Խուզիստանին, ապա 1956թ. Իրանում անցկացված մարդահամարի արդյունքների համաձայն՝ Խուզիստանի բնակչության թիվը կազմում էր շուրջ 2 միլիոն, որից

<sup>7</sup> Stu՝ The US-Saudi Plan to Prompt an Iranian Pullback from Syria  
<http://www.globalresearch.ca/the-us-saudi-plan-to-prompt-an-iranian-pullback-from-syria/5537777>

<sup>8</sup> 'Northern Kurdistan' Gets Icy Response In Iran's West Azerbaijan Province  
<http://www.rferl.org/content/iran-provinces-kurds-azeris/25226139.html>

470 հազարն արաբներ էին, որոնց մի մասը Խուզիստանում է հայտնվել արաբական արշավանքների ժամանակ և տարիների ընթացքում ամբողջությամբ ձուլվել պարսկախոս բնակչության հետ, իսկ մի մասն էլ ներգաղթել է Իրաքից՝ Սադդամ Հուսեյնի բռնաճնշումներից խուսափելու նպատակով:<sup>9</sup>

Դեռ 19-րդ դարի վերջից սկսած Խուզիստանի անկախացման վերաբերյալ մի քանի նախագիծ է դրվել շրջանառության մեջ:

Իրաքը Խուզիստանը գրավելու փորձեր է կատարել 1874թ., 1924թ., երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին. ի վերջո իրանաիրաքյան պատերազմի ընթացքում Իրաքի զինված ուժերին հաջողվեց գրավել Խուզիստան նահանգի մի մասը, որը սակայն զգալի կորուստների միջոցով Իրանը կարողացավ ազատագրել:<sup>10</sup>

Ներկայում Խուզիստանում անջատողական գործողություններ կազմակերպելու նպատակով ընդհատակյա գործունեություն է ծավալում «Անվազի ազատագրության արաբական շարժում» կազմակերպությունը:

1979թ. Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությունից հետո, երբ նույն թվականին Իրաքի նախագահ դարձավ Սադդամ Հուսեյնը, իրանաիրաքյան հարաբերությունները շիական գործոնով, ինչպես նաև տարածքային խնդիրներով պայմանավորված լարվեցին, որն ի վերջո հանգեցրեց լայնածավալ պատերազմի:

Բացի Շատ ալ-Արաբ գետի խնդրի շուրջ տարաձայնություններից Իրաքը պահանջում էր նաև արաբներին վերադարձնել Պարսից ծոցում գտնվող Մեծ Թումբ, Փոքր Թումբ և Աբու Մուսա կղզիները:

<sup>9</sup> Stu՝ Б. Балаян, Арабы Хузистана, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ Է. Յ. Երևան, 1967, էջ 208-212:

<sup>10</sup> Jafari Asvar, Tarhāye tajzīeye Xuzestān, Etelāat-e siāsi va eqtesādi, No. 211-212, p. 33-40:

Եթե իրանաիրաքյան պատերազմի ավարտից հետո Բաղդադի և Թեհրանի միջև տարածքային-սահմանային հակասությունները կարգավորվեցին,<sup>11</sup> ապա դրան հաջորդած տարիներին Պարսից ծոցի տարածաշրջանում Իրանի մրցակից երկրները, առաջնորդվելով աշխարհաքաղաքական կոնյունկտուրայով, տարածքային ամբողջականության գործոնն օգտագործելով, փորձում են Իրանի վրա ճնշում գործադրել՝ զսպելով նրա տարածաշրջանային նկրտումները:

ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի պաշտոնավարման տարիներին (2005-2013թթ.) Իրանի և Պարսից ծոցի արաբական երկրների հարաբերությունները գտնվում էին չափազանց լարված իրավիճակում: Այդ ժամանակաշրջանում Իրանի դիրքերը զգալիորեն թուլացել էին տարածաշրջանում, երկիրը գտնվում էր պատժամիջոցների ծանր ճնշման ներքո: Չափազանց մեծ էր ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից Իրանի վրա ռազմական հարձակում գործելու հավանականությունը:

Եթե վերը թվարկված նահանգներում արտաքին ուժերն Իրանի տարածքային ամբողջականության հարցը շահարկում են տեղի շահագրգիռ խմբերի միջոցով, ապա Պարսից ծոցի արաբական երկրները բացահայտ տարածքային պահանջներ են ներկայացնում Իրանին. Արաբական միապետությունները Պարսից ծոցն անվանում են Արաբական ծոց կամ պարզապես Ծոց, իսկ Արաբական Միացյալ Էմիրությունները Մեծ Թումբ, Փոքր Թումբ և Աբու Մուսա կղզիների պատկանելիության շուրջ պաշտոնապես իր անհամաձայնությունն է հայտնում Իրանին:<sup>12</sup>

Ինչպես թյուրքախոս, արաբախոս և քրդախոս նահանգներում, այնպես էլ Պարսից ծոցի պարագայում, Իրանի իշխանությունները ձեռնարկում են կանխարգելիչ քայլեր՝ երկրի ներքին

<sup>11</sup> Տես՝ Գ. Գևորգյան, Իրաք-իրանյան տարածքային-սահմանային հակասությունների հարցի շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ 2, 24. Երևան, 2005, էջ 97:

<sup>12</sup> Տես՝ Ушаков В. А., Иран и мусульманский мир 1979-1998гг., Институт изучения Израиля и Ближнего Востока, Москва 1999г., стр 109-110:

խնդիրներին արտաքին դերակատարների միջամտությունը բացառելու նպատակով: Մասնավորապես Իրանի Մեջլիսում շրջանառության մեջ է դրված օրենքի մի նախագիծ, համաձայն որի՝ նախատեսվում է Մեծ Թումբ, Փոքր Թումբ և Աբու Մուսա կղզիները միավորել մեկ նահանգի մեջ՝ Պարսից ծոց անվամբ:<sup>13</sup>

Իրանի Իսլամական Հանրապետության իշխանություններն իսլամական հեղափոխությունից հետո ԻՀՊԿ միջոցով ուժեղացված հսկողություն են իրականացնում՝ անմիջապես վերացնելով նշված տարածքներում անջատողականությանը միտված ցանկացած դրսևորում՝ բացառելով 1940-ական թվականներին Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության և Մեհաբադի Հանրապետության հռչակման կրկնությունը:<sup>14</sup>

Իրանի անվտանգության ուժերի իրականացրած կանխարգելիչ միջոցառումներին զուգահեռ տարածքային ամբողջականության պահպանման ուղղությամբ ակտիվ դերակատարություն է կատարում նաև Իրանի պանիրանիստանական կուսակցությունը, որը, թեև իսլամական հեղափոխությունից հետո անմիջական մասնակցություն չունի Իրանի ներքաղաքական կյանքում ընթացող քաղաքական գործընթացներին, սակայն որպես ազգայնական գաղափարախոսություն կրող կուսակցություն՝ գործում է ընդդրիմության դաշտում, բայց իր գործունեությունն ուղղված է ոչ միայն Իրանի տարածքային ամբողջականության պահպանմանը, այլև նրանց ծրագրում ընդգրկված է այսպես կոչված «Մեծ Իրանը» վերականգնելու գաղափարը:

Աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումներով պայմանավորված տարիների ընթացքում փոխվել են նաև ժամանակյին Իրանի նկատմամբ թշնամական դիրքորոշում ունեցող երկրների դիրքորոշումները:

<sup>13</sup> Ostān-e Xalij-e Fārs taškil mi šavad

<http://www.farsnews.com/newstext.php?nn=13910204000821>

<sup>14</sup> Տես՝ Farideh Koohi-Kamali, The Political Development of the kurds in Iran, Department of Social Sciences, New School University, New York, p. 89:

Եթե իսլամական հեղափոխությունից հետո Իրաքը դարձավ Իրանի գլխավոր հակառակորդը, ապա Սադդամ Հուսեյնի իշխանության տապալումից հետո Բաղդադի և Թեհրանի հարաբերությունները կարգավորվեցին, և այսօր Իրանը համարվում է Իրաքի տարածքային ամբողջականության պաշտպանությանն աջակցող շահագրգիռ երկրներից մեկը:

Իրանի և «5+1 խմբի» միջև ձեռք բերված համաձայնությունից հետո Միացյալ Նահանգները ևս կասեցրեց Իրանի անջատողական խմբերին աջակցելու ծրագիրը, սակայն դա ամենին էլ չի նշանակում, որ այն դուրս է եկել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության օրակարգից: Ինչ վերաբերում է Թուրքիային և Ադրբեջանին, ապա եթե Իրանի թյուրքախոս տարածքները ներքին և արտաքին խնդիրներով պայմանավորված ժամանակավորապես դուրս են մնացել Անկարայի ուշադրության կենտրոնից, երբեք չի կարելի պնդել Բաքվի պարագայում, քանի որ ինչպես անցած երկու տասնամյակի ընթացքում, այնպես էլ ներկայում Ադրբեջանի հանրակրթական դպրոցների համար նախատեսված պատմության դասագրքերում Իրանի հյուսիսային շրջանները ներկայացվում են որպես «պատմական Ադրբեջանի անբաժանելի մաս»:

Իրանի էթնիկական խմբերին առնչվող ցանկացած իրադարձություն անմիջապես շահարկվում է արտաքին դերակատարների կողմից, մինևույն ժամանակ դրսից կազմակերպվող որևէ գործողություն ազդում է Իրանի ներքին զարգացումների վրա, որը կարող է ամբողջությամբ ապակայունացնել երկիրը: Հետևաբար, Իրանն իր արտաքին քաղաքականությունը մշակելիս անպայման հաշվի է առնում տարածքային ամբողջականության գործոնը և խուսափում է այնպիսի քայլեր կատարել, որոնք անջատողականության գործիք կդառնան ինչպես երկրի ներսում գործող խմբավորումների, այնպես էլ արտաքին դերակատարների ձեռքին:

## ВЫЗОВЫ УГРОЖАЮЩИЕ ТЕРРИТОРИАЛЬНОЙ ЦЕЛОСТНОСТИ ИРАНА ПОСЛЕ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ

*Армен Израелян*  
(резюме)

Статья касается внутренних и внешних вызовов, угрожающих территориальной целостности Исламской Республики Иран после исламской революции. Эти вызовы представляют угрозу для 5 провинций ИРИ. В частности, в провинциях Исламской Республики Ирана - Восточный Атрпатакан, Западный Атрпатакан, Курдистан, Хузестан, Систан и Белуджистан угроза сепаратизма обусловлена не столько сепаратистскими требованиями живущих тут этнических групп, сколько этой проблемой пытаются манипулировать внешние субъекты - Турция, Азербайджан, Саудовская Аравия, Объединенные Арабские Эмираты.

Как в тюркоязычных, арабоязычных и курдоязычных провинциях, так и в случае Персидского залива, власти Ирана предпринимают превентивные меры, чтобы исключить вмешательство внешних субъектов в внутренние дела страны.

Внешние субъекты манипулируют любым событием, связанным с этническими группами Ирана, в то же время любое действие организованное вне страны влияет на внутреннюю ситуацию, что может дестабилизировать страну. Соответственно, Иран разрабатывая свою внешнюю политику, обязательно учитывает фактор территориальной целостности и избегает таких шагов, которые могут стать инструментом как в руках сепаратистов, так и в руках внешних субъектов.

## THE CHALLENGES POSED TO IRAN'S TERRITORIAL INTEGRITY AFTER THE ISLAMIC REVOLUTION

*Armen Israyelyan*  
(summary)

The article touches upon the internal and external challenges posed to the territorial integrity of 5 of the 31 provinces of the Islamic Republic of Iran after the Islamic revolution. Particularly, the threat of separatism in Iran's East Azerbaijan, West Azerbaijan, Kurdistan, Khuzestan and Sistan and Baluchistan provinces is conditioned not as much by the separatist demands of the ethnic groups living in those areas, as by the speculations of the issue by external actors like Turkey, Azerbaijan, Saudi Arabia, United Arab Emirates interested in Iran's instability.

Like in Turkic, Arabic and Kurdish-speaking provinces, as well as in case of the Persian Gulf, the Iranian authorities are taking preventive measures to eliminate the interference of external actors in the internal problems of the country.

Any event related to the ethnic groups in Iran is immediately speculated by external actors. At the same time, any activity organized by the external forces affects the internal situation in Iran, which is likely to destabilize the whole country. Therefore, developing its foreign policy Iran takes into account the factor of territorial integrity and avoids taking any steps, which may become a tool in the hands of both the separatist groups operating in the country and external actors.

## ԳՈՒՐԳԵՆ ՎՐԵԺԻ ՄԵԼԻՔՅԱՆ

Գուրգեն Մելիքյանը ծնվել է 1936 թ. դեկտեմբերի 14-ին Իրանի Արաղան քաղաքում: Մկրտչական կրթությունը ստացել է «Թեհրանի Քուշեշ-Դավթյան» և ապա «Արաղանի «Ադաբ» հայկական դպրոցներում: Ծննդավայրում ավարտել է «Ռազի» տասներկուամյա դպրոցը: 1958 թ. հոր և քրոջ հետ տեղափոխվել է Հայրենիք և ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության բաժնի երկրորդ կուրս: Սովորել է գերազանց առաջադիմությամբ և եղել անվանական կրթաթոշակառու: Ավարտելով համալսարանը՝ 1963 թ. ընդունվել է ասպիրանտուրա: 1984 թ. Թբիլիսիում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հարադիր բառակապակցությունները ժամանակակից պարսկերենում» թեմայով, 2004 թ. ստացել դոցենտի, իսկ 2009 թ.՝ պրոֆեսորի գիտամանկավարժական կոչում՝ «լեզվաբանություն» մասնագիտությամբ: Տասնամյակներ շարունակ ԵՂՀ-ում դասավանդում է «պարսից լեզու» և «թարգմանության տեսություն» առարկաները: Զբաղվում է ժամանակակից պարսկերենի քերականության, պարսից բնագիտության և գաղտնալեզուների ուսումնասիրության խնդիրներով: Այս ուղղություններով հրատարակել է մի քանի կարևոր աշխատություններ, որոնց թվում են՝ «Հարադիր բառակապակցություններ պարսկերենում» (ռուսերեն, 1996 թ.), «Հրեական պարսկերեն-քրդերեն որոշ բառային գուգադիպումներ» (անգլերեն, Curzon press հրատ., 1994 թ.), «Մենդոց գրքի հնագույն պարսկերեն թարգմանության բնագիրը» (հայերեն և պարսկերեն, 2001 թ.), «Իրանում գաղտնալեզուների հարցի շուրջ» (անգլերեն, 2002 թ.), «Երգ երգոցի հնագույն հրեական-պարսկերեն թարգմանությունը» (հայերեն-պարսկերեն, 2003 թ.): Զբաղվում է նաև հայերենի և պարսկերենի լեզվական փոխառնչությունների, հայ արևելագիտության պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ:

1988 թվականից մասնակցել է արցախյան ազատագրական շարժմանը: 1996 թ. ԼՂՀ Քաշաթաղի շրջանում հիմնել է «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը», որը մշտական օգնություն է ցույց տալիս բազմազավակ ընտանիքներին, մտավորականությանը, սոցիալապես առաջադեմ ուսանողներին՝ վճարելով երանց ուսման վարձերը:

Պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով (1999 թ.), ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալով (1999 թ.), «Գարեգին Նժդեհ» մեդալով (2006 թ.), ՀՀ ԿԳՆ ոսկե հուշամեդալով (2008 թ.), «Իրաստամատ Կանայան» մեդալով (2009 թ.), ԼՂՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (2011 թ.):

2012 թ. Գուրգեն Մելիքյանին շնորհվել է ՀՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

1992 թվականից առ այսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանն է:

## ՊՐՈՖԵՍՈՐ ԳՈՒՐԳԵՆ ՎՐԵԺԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

### Ղասագիրք, ձեռնարկ

1. Պարսից լեզվի ընթերցարան, հատոր 1-ին, Երևան, ԻԿԿ, 1999 (համահեղինակներ՝ Լ. Շեխոյան, Վ. Ղուկասյան, Վ. Բոյաջյան, Ե. Խաչատրյան):
2. Պարսից լեզվի ընթերցարան, հատոր 2-րդ, Երևան, ԻԿԿ, 1999 (համահեղինակներ՝ Լ. Շեխոյան, Վ. Ղուկասյան, Վ. Բոյաջյան, Ե. Խաչատրյան):
3. Պարսից լեզվի բուհական դասագիրք, Իրանագիտության Կովկասյան կենտրոն, Երևան, 2011 (համահեղինակներ՝ Լ. Ղազարյան, Հ. Բիանջյան, Ն. Առաքելյան):

### Մենագրություններ

1. Парные словосочотания в новоперсидском языке, ИЗД., КЦИ, 1996.
2. Kitab-e mould- Մննդոց գրքի հրեական պարսկերենի բնագրի հրատարակությունը, Երևան, ԻԿԿ հրատ., 2001:
3. «Ghazal-e Ghazalha Երգ երգոց» (պարսկերեն թարգմանության ամենավաղ բնագիրը), Երևան, ԻԿԿ հրատ., 2005:
4. Կրկնավոր և հարադրավոր բարդությունների և զուգորդությունների պարսկերեն-հայերեն բառարան, Երևան, Իրանագիտության Կովկասյան կենտրոն, 2008:

### Հոդվածներ

5. Պարսկերեն լեզվի հարադիր բառակապակցությունների ուսումնասիրության

- շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի» N2, 1975, էջ 210-216:
6. Պարսկերեն լեզվի հարադրությունների իմաստաբանական կառուցվածքի հարցի ուսումնասիրությունից, «Բանբեր Երևանի համալսարանի» N3, 1976, էջ 149-153:
  7. Պարսից լեզվի հարադիր բառակապակցությունների բառաբերականական բնութագրության շուրջ, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիա, «Իրանագիտության հարցեր» N 1, 1978, էջ 105-113:
  8. К истории изучения парных словосочетаний персидского языка, Вестник ЕГУ, N 2, 1981, стр. 205-208.
  9. Редупликация как способ образования бинарных словосочетаний в персидском языке, Вестник ЕГУ, N 3, 1983, стр. 206-209.
  10. История преподавания персидского языка в Лазаревском институте восточных языков, Вестник ЕГУ, N 1, 1989, стр. 188-197 (համահեղինակ՝ Ա. Խրոմով)։
  11. «Զարգարի» լեզուն Իրանում, «Բանբեր Երևանի համալսարանի» N 1, 1990, էջ 52-61 (համահեղինակ՝ Ա. Խրոմով)։
  12. Ժամանակակից պարսկերենի հարադիր բառակապակցությունների և բարդ բառերի պրոբլեմի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի» N 1, 1988, էջ 137-143:
  13. Armeno-Iranian lexicological Notes, Acta Kurdica, Curzon Press, London, 1994, pp.149-155.
  14. Հայ իրանագիտության երախտավորը, Բանասիրության հարցեր. Հոդվածների և հաղորդումների ժողովածու՝ նվիրված պրոֆ. Գ. Նալբանդյանի ծննդյան 70-ամյակին (խմբ. Գ. Մելիքյան), Երևան, 1996, էջ 3-6:
  15. Արևելագիտության օջախը (ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի պատմությունից), ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի 30-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումների թեզիսների ժողովածու (խմբ. Գ. Մելիքյան), Երևան, 1998, էջ 3-5:

16. Заметки по микро топонимике Арцаха, Iran & Caucasus. vol. 2, Wiesbaden 1998, pp. 131-132.
17. Արցախի տեղանունները, Иад-е дуст Кавказский центр иранистики кафедра иранистики, ЕГУ, 1999, էջ 7-8:
18. Պրոֆ. Ջոն Կիրակոսյանի գիտամանկավարժական գործունեությունը (համառոտ ակնարկ), պրոֆ. Ջոն Կիրակոսյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումների թեզիսների ժողովածու (խմբ. Գ. Մելիքյան), Երևան, 1999, էջ 3-6 (համահեղինակ՝ Ալ. Սաֆարյան)։
19. Apology of Sufism in Divan by Yunus Emre, XXXVI Ith, International Congress of Asian and North African Studies, Book of Abstracts, Universite de Montreal, Montreal, Canada, 2000, p. 157 (համահեղինակ՝ Ալ. Սաֆարյան)։
20. Lexical gleanings from Machkalashen, Iran & Caucas vol. 3-4, Wiesbaden (1999-2000), pp. 329-332.
21. On the problem of secret languages and slangs in Iran, «Iran & Caucasus» vol. 6, 2002, pp. 181-188.
22. Հայերեն «Ճաղատ» բառը, «Իրան-Նամե», h. 37, Երևան, 2001, էջ 8:
23. Հայերեն «Անջուգ», «Իրան-Նամե», h. 38, Երևան, 2003, էջ 26:
24. Պրոֆեսոր Մ. Հ. Քոչարի կյանքի ու գիտամանկավարժական գործունեության մասին, «Արևելագիտության հարցեր», հատոր V, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ, Իրանագիտության Կովկասյան կենտրոնի հրատարակչություն (պատ. խմբ.՝ Գ. Վ. Մելիքյան), Երևան, 2004, էջ 3-8 (համահեղինակ՝ Ալ. Սաֆարյան)։
25. «Երգ երգոցի» դասական պարսկերեն հնագույն թարգմանությունը (լուսանցքային նոթեր նոր հրատարակության առիթով), «Արևելագիտության հարցեր», հատոր V, Իրանագիտության Կովկասյան կենտրոնի հրատարակչություն (պատ. խմբ.՝ Գ. Վ. Մելիքյան), Երևան, 2004:

26. Ցեղասպանության արտացոլումը Մուշեղ Գալշոյանի ստեղծագործություններում, «Հայոց Մեծ Եղեռն-90» (հոդվածների ժողովածու, պատ. խմբ.՝ Ա. Հ. Միմոնյան), ԵՊՀ հրատ., Երևան, 2005 (համահեղինակ՝ Ս. Գալշոյան):
27. Մոնթե Մելքոնյան (Ավո) (1957-1993), «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդես, հ. 4, Երևան, 2011, էջ 2-9:
28. Համալսարանականները՝ Արցախյան գոյապայքարում, Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում, խմբ.՝ Ա. Միմոնյան, ԵՊՀ հրատ., Երևան, 2011, էջ 80-83:
29. Բաքիի՝ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-մատենադարանում պահվող թիվ 321 ձեռագիրը, «Լրագրեր» հասարակական գիտությունների, հ. 2-3 /634-635/, Երևան, 2012, էջ 442-446 (համահեղինակներ՝ Ա. Սարգսյան, Ալ. Սաֆարյան):
30. 17-րդ դարի գրիչ Ավետիքի՝ մատենադարանի թիվ 3522 ձեռագրի պատմաբանասիրական արժեքը, «Իրան նամե» արևելագիտական հանդես, հատոր 44-45, Երևան, 2012-2013, էջ 48-51 (համահեղինակներ՝ Լ. Սահակյան, Ալ. Սաֆարյան):
31. Ակադեմիկոս Վլադիմիր Գորդլևսկին՝ հայագիտական հիմնահարցերի մասին, Արևելագիտության հարցեր, հ. 7, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 148-165 (համահեղինակ՝ Ալ. Սաֆարյան):
32. О переводах туркменской литературы на армянский язык, Рукописи-первичный источник изучения национального наследия, Ашхабад, 2013, /տպյնր՝ անգլ., էջ 248, նունր՝ թուրքմեներեն, էջ 77-78/ (համահեղինակ՝ Ալ. Սաֆարյան):
33. Գրախոսություն. Ալ.Սաֆարյան. Զիյա Գյոբալվիը և «Թյուրքականության հիմունքները», «Երևան, ԵՊՀ հրատ., 2012թ., Հայագիտության հարցեր» թիվ 1 /խմբ.՝ Ա. Հ.

- Միմոնյան/, ԵՊՀ, Երևան, 2014, էջ 173-175 (համահեղինակ՝ Բ. Միրզոյան):
34. Ռուբեն Սաֆրասոյան. գիտնականն ու մանկավարժը, Արևելագիտության հարցեր /գիտական հոդվածների պարբերական ժողովածու/ թիվ 10, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 14-16:
35. Խորհրդային և ռուսաստանյան արևելագետները՝ թուրքիզմի և պանթուրքիզմի մասին, Ժամանակակից լեզվաբանությունը միջգիտակարգայնության լույսի ներքո /միջազգային գիտաժողով-4/, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 49 (համահեղինակ՝ Ալ. Սաֆարյան):

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐԱՍ ՍԻՄՈՆՅԱՆԻ  
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ ՊՐՈՑԵՍՈՐ  
ԳՈՒՐԳԵՆ ՍԵԼԻՔՅԱՆԻ 80-ԱՄՅԱ  
ՀՈՒՑԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ ..... 5

ԳՈՒՐԳԵՆ ՍԵԼԻՔՅԱՆԸ 80 ՏԱՐԵԿԱՆ Է ..... 8

**ԱՐԱԲԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ՍԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

*Դավիթ Հովհաննիսյան*  
ՖԱԹԻՍԱՆ՝ ՈՐՊԵՍ ՇԻԱՅԱԿԱՆ  
ԿՐՈՆԱԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԿԵՐՊԱՐ ..... 12

*Հայկ Քոչարյան*  
ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՍԵՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԻԲՆ ԲԱԶԱ ..... 20

*Գ. Գևորգյան*  
*Է. Ասատրյան*  
ՍՈՒԵԶԻ ՃԳՆԱԺԱՍԸ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ  
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ  
ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԱԲԱԿԱՆ  
ԱՇԽԱՐՀՈՒՄ ..... 30

*Է. Ասատրյան*  
ՆԱՍԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԳՈՐԾԱՌՈՒՅԹ ..... 45

**ԹՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ՕՍՄԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

*Ռուբեն Մելքոնյան*  
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ 1961 Թ.  
ԹՈՒՐՔԻԱ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԻ ՈՐՈՇ  
ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ ՇՈՒՐՋ (ԱՐԽԻՎԱՅԻՆ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ)..... 58

*Ալեքսանդր Սաֆարյան*  
ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՉԻՅԱ  
ԳՅՈՔԱԼՓԻՅ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՐԻ ԱՆՅ ..... 67

*Լուսինե Մահակյան*  
ՀԱՄՇԵՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ ..... 80

*Անի Սարգսյան*  
ԲՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ ԲԱՔԻԻ ԴԻՎԱՆՈՒՄ .... 97

*Միրանույշ Գալշոյան*  
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԹՈՒՐՔՍԵՆԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ԲՈՆԻ  
ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՆԴՐԱԴԱՐԶԸ  
ՅԱՇԱՐ ՔԵՄԱԼԻ «ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻ ՑՈՒԼԵՐԻ  
ԼԵԳԵՆԴԸ» ՎԵՊՈՒՄ ..... 109

*Նաիրա Գինոսյան*  
ՀԱՅԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԿՅԱՆՔՈՒՄ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ -  
XX ԴԱՐԻ ՄԿԻԶԲ) ..... 120

*Արա Ազատյան*  
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՅ  
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ..... 139



Արթուր Դուվանյան  
 ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
 ԿՅԱՆՔՈՒՄ 1920-1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ.  
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎՆԱՐԿ ..... 158

Արշակ Գևորգյան  
 1960 Թ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ  
 ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ԱՄՆ-Ի ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ  
 ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ..... 180

Հայկ Մարգարյան  
 ԹՈՒՐՔԻԱՅԻ ԽՈՇՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ  
 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
 ԵՐԿՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԿԱՍԱՐՎԱԾ  
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ..... 196

Նաիրա Պողոսյան  
 ՌՈՒՄ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
 ԱՐՏԱՅՈՂՈՒՄԸ ԱՀՄԵԴ ՋԵՄԱԼ ՓՈՇԱՅԻ  
 ՀՈՒՇԵՐՈՒՄ ..... 208

Լիլիթ Մովսիսյան  
 ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ  
 ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ՝  
 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ  
 ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ  
 ՊԱՏԿԵՐԸ ..... 217

Շալիսա Աղիբաև  
 ՂԱԶԱԽՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ. ՄԻՋՊԵՏԱԿԱՆ  
 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
 ՌԻՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ռուսերեն) ..... 225

ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
 Գուրգեն Մելիքյան  
 «ՓԻՅԱԹԱԹԱՆ ՓԻԼԸ ՂԱՆՂԱՂՈՒՄ» ԱՐՑԱԽԻ  
 ԲԱՐԲԱՌՈՒՄ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՐՄԿԱԿԱՆ  
 ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ ..... 236

Վարդան Ոսկանյան  
 ՈՐՈՇ ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
 ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ ..... 240

Հասմիկ Կիրակոսյան  
 ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ԻՐԱՆԱԿԱՆ  
 ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ ..... 249

Քնարիկ Միրզոյան  
 Թաղևոս Չարյան  
 ՈՐՈՇ ՊԱՐԿԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
 ԹԱԹԱՐԵՐԵՆՈՒՄ (անգլերեն) ..... 255

Արայում Տոնոյան,  
 Հովհաննես Մարգարյան  
 ՀԵՏԱՐՋՊԱՆԱԿԱՆ ԱՂՎԱՆՔՈՒՄ «ՔՈՒՐԴ»  
 ԱՆՎԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ  
 ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ..... 262

Ահարոն Վարդանյան  
 ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ ՆՈՐ ԻՐԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ  
 ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ ..... 273

**Թերեզա Ամրյան**

ՍՈՒՖԻԱԿԱՆ ՍԻՐՈՒ ԵՎ ԱՐԲԵՑՈՒՄԻ ԳԱՂԱՓԱՐԸ  
ԵԶՂԻԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԻՄՆԵՐՈՒՄ..... 281

**Սվետլանա Հարությունյան**

ԶՐԱՂԱՇՏԱԿԱՆ ՏՈՆԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ  
ՏՈՆԵՐԸ ..... 295

**Լիլիթ Սաֆրաստյան**

ԻՐԱՆԱԿԱՆ ՎՏԱՐԱՆԴԻ ԿԻՆՈՅԻ ՆՈՐԺԱՄԱՆԱԿՅԱ  
ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ. ՍՈՀՍԵՆ ՍԱԽՍԱԼԲԱՖ, ՇԻՐԻՆ  
ՆԵՇԱՏ ..... 304

**Գառնիկ Գեորգյան**

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊԻՑ (ԴԱՍԹԱՆԻՑ)  
ՊԱՏՄԱՎԵՊ ..... 320

**Հովհաննես Խորհիկյան**


ԿԱՐԻԱՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳՈՒՄ ..... 331

**Արմեն Իսրայելյան**

ԻՐԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ  
ՍՊԱՌՆԱՑՈՂ ՍԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐՆ ԻՍԼԱՄԱԿԱՆ  
ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ..... 344

ԳՈՒՐԳԵՆ ՎՐԵԺԻ ՄԵԼԻՔՅԱՆ ..... 355

ՊՐՈՑԵՍՈՐ ԳՈՒՐԳԵՆ ՎՐԵԺԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ ..... 367



## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 12

Էջադրող՝

Ա. Վարդանյան

Սրբագրիչ՝

Ա. Վարդանյան

Կազմի

ձևավորող՝

Հ. Վարդանյան

Չափսը՝ 60x84, 1/16: Ծավալը՝ 23 տպ. մամուլ:

Թուղթը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 100 օրինակ:

Տպագրվել է «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատարակչության տպարանում  
Հասցեն՝ Ազատության 24/11, հեռ. 28 54 28

E-mail: [vmv\\_print@yahoo.com](mailto:vmv_print@yahoo.com)

[www.vmv-print.am](http://www.vmv-print.am)